Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԵՐԻՏՊՈՒՐԲԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀՈԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1908—1914)

6/7415 Ա 61875

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1979

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. С. АМБАРЯН

НАЦИОНАЛЬНАЯ И ЗЕМЕЛЬНАЯ ПОЛИТИКА МЛАДОТУРОК И ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (1908—1914)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1979

9 (Ա) 32 (Ա5 Թուրքիա)
Հ 20

Աշխատության մեջ վերլուծվում է երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում 1908—1914 թթ., ցույց է տրվում աշխատավոր զանգվածների կացության վատթարացումը, լուսաբանվում են նրանց ազատագրական շարժումները։ Միաժամանակ բացահայտվում է հայ հասարակական-քաղաքական տարբեր ուժերի դիրքորոշումը այդ շարժումների նկատմամբ։ Հատուկ ուշադրություն է դարձվում երիտթուրքերի վարչակարգի դեմ մղվող պայքարում Արևմտյան Հայաստանի աշխատավորների համագործակցության հարցին։

Պատ. խմբագիր պատմական գիտությունների դոկտոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել պրոֆեսորներ պատմական գիտությունների դոկտոր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆԸ և պատմական գիտությունների թեկնածու
Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

10601
Հ 703/02/—79 31—78

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովետական պատմաբանները մի շարք արժեքավոր աշխատություններ են գրել երիտթուրքերի մասին և ցույց տվել նրանց դասակարգային էությունը, կատարած հեղաշրջման սահմանափակ բնույթը, շովինիստական գործունեությունը, այլապիների ու թուրք աշխատավորների հանդեպ կիրառած բռնությունները և ճնշումները, արկածախնդրական արտաքին քաղաքականությունը և այլն։ Նրանք հատուկ ուշադրություն են դարձրել «Իթթիհատ վե Թերաքի» («Միության և առաջադիմության») կուսակցության կամ իթթիհատի հակահայկական գործունեությանը և մերկացրել նրա հայատյաց քաղաքականությունը[1]։

---

[1] *Տե՛ս В. А. Гурко-Кряжин,* История революции в Турции, М., 1923. *И. Бутаев,* Проблемы Турции, Л., 1925. *Б. А. Борян,* Армения, Международная дипломатия и СССР, М.—Л., ч. I, 1928, ч. 2, 1929. *Х. З. Габидуллин,* Младотурецкая революция, М., 1936. *А. Ф. Миллер,* Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948, *его же,* 50-летие младотурецкой революции, М., 1958. *Б. Данциг,* Турция, М., 1949. *Н. В. Карапетян,* Армянский вопрос в Турции и политика империалистических держав накануне первой мировой войны (1908—1914), М., 1950 (автореферат). *А. С. Тверитинова,* Младотурки и пантюркизм («Краткие сообщения Института востоковедения», М., 1956, т. XXII). *Е. К. Саркисян,* Экспансионистская политика османской империи в Закавказье, Ереван, 1962, *его же,* Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начала XX вв., Ереван, 1972. *М. С. Лазарев,* Курдистан и курдская проблема, М., 1964. «Геноцид армян в Османской империи», Ереван, 1966. *С. М. Акопян,* Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967. *Ю. А. Петросян,* Младотурецкое движение, М., 1971. *А. О. Арутюнян,* Кавказский фронт (1914—1917), Ереван, 1971, *Г. З. Алиев,* Турция в период правления младотурок, М., 1972. *С. С. Степанян,* Армения в политике империалистической Германии, Ереван, 1975. *О. Г. Инджикян,* Буржуазия Османской империи, Ереван, 1977. *В. И. Шпилькова,* Младотурецкая революция, 1908—1909 гг., М., 1977. Վ. Ա. Պարսամյան, *Հայ ժողովրդի պատմություն (1801—1917), Երևան, 1967։* Ա. Ն. Մեսրոպյան,

երիտթուրքերի հակաժողովրդական ու հայատյաց քաղաքականության մասին բազմաթիվ գրքեր ու հոդվածներ են հրատարակվել նաև սփյուռքում։

Սակայն մինչև այժմ անբավարար են ուսումնասիրված կամ սուվրում են թողնված այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են՝ երիտթուրքերի հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, Արևմտյան Հայաստանի քաղաքային աշխատավորության նկույթները, դյուղացիական շարժումները, գինվորական հուզումները, քաղաքական շրջանների դիրքորոշումը 1908—1914 թթ. և այլն։ Ներկա աշխատության մեջ մենք փորձում ենք լուսաբանել այդ հարցերը։ Միաժամանակ ջանում ենք ավելի հանդամանորեն վերլուծել իթթիհատի վարած ազգային քաղաքականությունը և դյուղացիության դժնդակ կացությունը նրա կառավարման տարիներին։ Ուսումնասիրելով երիտթուրքերի քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի ժողովուրդների նկատմամբ, ինչպես և այդ ժողովուրդների պայքարը նրանց դեմ առանձին-առանձին, մենք ցույց ենք տալիս այդ պայքարի դասակարգային բովանդակությունը, շեշտելով, որ մի կողմում կանգնած էին Արևմտյան Հայաստանի

Հայ ժողովրդի ազատագրությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965։ Զ. Ս. Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965։ Ս. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965։ Հ. Մ. Պողոսյան, Չեյթունի պատմությունը, Երևան, 1969։ Կ. Ն. Քաբամյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի օրինաչափության հարցի շուրջը, Երևան, 1969։ Նույնի Արևմտահայերի դրությունը, «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը XIX դ. վերջին քառորդին և XX դ. սկզբին, Երևան, 1972 (դիսերտացիա)։ Մ. Վ. Առզումանյան, Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Երևան, 1972։ Ջալալ Ջալիլ, «Մոժն քուրդ» ամսագիրը որպես XX դարի սկզբի քրդական հասարակական-քաղաքական մտքի ուսումնասիրման աղբյուր։ Կարլեն Ջաշանի, Արժեքավոր վավերագրեր հայ-քրդական բարեկամական կապերի պատմությունից («Միհրձավոր և Միջին Արևելքի երկրները և ժողովուրդները», հատ. VII, Քրդագիտություն, Երևան, 1975, էջ 168—192, 226—249)։ Ս. Պ. Աղաջան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», Երևան, 1972։

Սովետական պատմաբաններից բացառություն է կազմում Ա. Դ. Նովիչևը, որը խոսելով երիտթուրքերի շովինիզմի մասին 1908—1914 թթ., գոնե մի նախադասությամբ չի դատապարտում նրանց հակահայկական, հայաջինջ քաղաքականությունը։ Դրա փոխարեն նա հարկ է համարել վեհաղել իր աշխատության մեջ թուրքական սուլթանների, երիտթուրքերի և նման ոճրագործների նկարները (տե՛ս А. Д. Новичев. Турция, краткая история, М.. 1965).

ժողովուրդների շահագործող վերնաշերտերը՝ իրենց հովանավոր ու պաշտպան իբրև հետ միասին, իսկ մյուսում՝ կեղեքվող ու հարստահարվող աղգությունների աշխատավոր զանգվածները։ Հատուկ ուշադրություն ենք դարձնում նաև Արևմտյան Հայաստանի ժողովուրդների համագործակցության հարցին և վեր հանում նրանց համագործակցության առանձին դեպքերը։

Երիտթուրքերի տիրապետության ժամանակաշրջանի արևմտահայ ազգային-աղատագրական ու սոցիալական շարժումները անցյալում նաև շարժումների օրգանական շարունակությունն էին։ Եվ չէր կարող այլ կերպ լինել, քանի որ 1908 թ. թեև Թուրքիայում կատարվել էր հեղաշրջում, կապիտալիստական հարաբերությունները XX դարի սկզբին XIX դարի երկրորդ կեսի համեմատությամբ որոշ չափով առաջադիմել էին, սակայն դեռ պահպանվել էին թուրքական բռնապետությունն ու ֆեոդալական կարգերի տիրապետությունը։

Արևմտահայ աշխատավորության ազատագրական պայքարը ինչպես անցյալում, այնպես էլ երիտթուրքերի կառավարման տարիներին, իր բովանդակությամբ բուրժուա-դեմոկրատական էր և ընթանում էր երկու թևերով՝ լիբերալ-բուրժուական ու դեմոկրատական[2]։ Առաջինը ղեկավարում էին բուրժուական կուսակցությունները, որոնք ձգտում էին հաստատել Արևմտյան Հայաստանում ինքնավարություն՝ իրենց դասակարգի գերիշխանությամբ, իսկ երկրորդը՝ դեմոկրատական մտավորականները կամ ժողովրդական շարժումների բովից ծնված, աշխատավոր զանգվածների դասակարգային շահերն արտահայտող անհատները, որոնք ձգտում էին վերացնել բռնապետական կարգերը, ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները և հասնել արմատական դեմոկրատական վերակառուցումների։ Չնայած նշված տարբերություններին, այդ երկու շարժումներն էլ առաջադիմական էին, որովհետև դրանք ճնշված ազգի ելույթներն էին գերիշխող ու կեղեքող վարչակարգի դեմ։ Վ. Ի. Լենինը 1914 թ. փետրվարին գրում էր. «Ճնշված ազգի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման, և հենց այդ բովանդակությունն է, որ մենք անպայման պաշտպանում ենք...»[3]։

---

[2] Արևմտահայ ազատագրական շարժումների այդ երկու հոսանքների մասին մանրամասն տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 256—258։ „История СССР", т. V, М., 1968, стр. 382.

[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 513։

Սակայն արևմտահայ ազատագրական շարժումներն անցյալի համեմատությամբ երիտթուրքերի կառավարման տարիներին ունեին որոշ տարբերություններ: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման և 1908 թ. հեղափոխության հետևանքով քաղաքային բնակչության շարժումներն ավելի ակտիվ դրսևորվեցին, իսկ գյուղացիական հուզումներն ավելի մասսայական բնույթ ընդունեցին, քան XIX դարի 50—70-ական թվականներին: Աշխուժացան Արևմտյան Հայաստանի ժողովուրդների համագործակցության փորձերը: Արևմտահայ բուրժուազիան այժմ ուներ ավելի շեշտված ռուսական կողմնորոշում: Դա պայմանավորված էր նրանով, որ Ռուսաստանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին վերաբացեց Հայկական հարցը և այն դարձրեց միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Եթե XIX դարի 60—70-ական թվականներին արևմտահայ բարձր հոգևորականության որոշ մասը նախապատրաստում էր ժողովրդի ապստամբական ելույթներ, ապա երիտթուրքերի կառավարման տարիներին այդ հոգևորականությունը համարյա ամբողջապես միրված էր լիբերալ-բուրժուազիայի հետ, կանգնելով նրա աջ թևում և աշխատում էր բարելավել արևմտահայության վիճակը իթթիհատի հետ բանակցություններ վարելու ճանապարհով:

Թուրքական պատմագրությունն անհիմն կերպով պնդում է, թե իբր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած շարժումները հղել են ցարական կառավարության կամ դաշնակցական կուսակցության բացահայտ ու գաղտնի գործունեության արգասիքը[4]: Փաստական հարուստ տվյալներով ցույց ենք տալիս, որ այդ շարժումներն առաջացել են մեծ մասամբ տարերայնորեն՝ թուրքական կառավարության հակաժողովրդական ու հայահալած քաղաքականության հետևանքով: Հանրահայտ է, որ ցարիզմը դեմ էր արևմտահայ ազատագրական շարժումներին, իսկ դաշնակցությունը չէր կարող կազմակերպել հակաիթթիհատական ելույթներ, որովհետև 1908—1911 թթ. համագործակցում էր երիտթուրքերի հետ, խաբվելով նրանց կեղծ խոստումներից: Իրավ է, 1912—1914 թթ. նա, երբ խզից հարաբերությունները իթթիհատի հետ՝ ժողովրդական մասսաների մեջ հեղինակություն ձեռք բերելու համար կազմակերպեց ցուցադրական որոշ գործողություններ, բայց դրանք սոսկ կաթիլներ էին ժողովրդական շարժումների ծովում:

---

[4] Տե՛ս Ն. Վարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ննդապատմությունը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 8—9:

Ներկա ուսումնասիրության մեջ առաջ քաշված խնդիրների լուծման համար օգտագործել ենք Երևանի, Թբիլիսիի, Մոսկվայի ու Լենինգրադի պետական արխիվների ու դրադարանների բազմաթիվ աղբյուրներն ու դրականությունը, փաստաթղթերի ժողովածուներ ու հուշագրություններ, ցուցաբերելով, իհարկե, դրանց նկատմամբ քննադատական մոտեցում։ Արխիվային նյութերից ամենից առաջ պետք է հիշատակել ռուսական դիվանագիտական աշխատողների (Կ. Պոլսի դեսպանի, Էրզրումի գլխավոր հյուպատոսի, Բիթլիսի հյուպատոսի, Վանի փոխհյուպատոսի), ինչպես նաև հատուկ հանձնարարություններով Թուրքիա ու Արևմտյան Հայաստան դործուղված առանձին պաշտոնյաների զեկուցագրերը, որոնք գտնվում են Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական, Ռուսաստանի արտաքին քաղաքականության, ՍՍՀՄ պետական ռազմա-պատմական և Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվներում։ Այդ զեկուցագրերը հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Արևմտյան Հայաստանի թե՛ սոցիալ-տնտեսական դրության և թե՛ հասարակական-քաղաքական շարժումների մասին։ Հրատարակված նյութերից արժեքավոր են ժամանակի թերթերում ու ամսագրերում լույս տեսած բազմաթիվ հաղորդումներն ու հոդվածները։ Հարուստ տեղեկություններ են տալիս հատկապես «Բյուզանդիոնը», «Մշակը», «Ազատամարտը», «Հորիզոնը», որոնք լույս էին տեսնում Կ. Պոլսում ու Թիֆլիսում և հրապարակում Արևմտյան Հայաստանից ստացած թղթակցություններ։

Հրատարակված աղբյուրներից արժեքավոր են նաև փաստաթղթերի ժողովածուները, որոնք կազմվել են ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ՝ ցարական պաշտոնյաների, այնպես էլ հետո՝ սովետական պատմաբանների կողմից։ Դրանցից պետք է հիշատակել՝ «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, «Геноцид армян в Османской империи», Ереван, 1966, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», Երևան, 1972։ Առաջին ժողովածուն բաղկացած է բացառապես ցարական պաշտոնական փաստաթղթերից, երկրորդը՝ այդ փաստաթղթերից զատ պարունակում է նաև ուրիշ նյութեր (բոլշևիկյան գործիչների հոդվածներ ու ճառեր, դեմոկրատական-առաջադիմական անհատների հուշեր ու աշխատություններ, հայ հոգևորականների զեկուցագրեր ու հաղորդումներ, քաղաքի ու գյուղի աշխատավորների բողքներ և այլն)։ Երրորդ ժո-

դովածուի մնջ գետնղված փաստաթղթերը գրեթե ամբողջապես վերցված են պաշտոնական հրատարակություններից: Այդ փաստաթղթերը պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր, դեսպանների և դիվանագիտական այլ պաշտոնատար անձանց գեկուցագրեր են, դրագրություններ, նոթագրություններ, արձանագրություններ և այլն:

Մեր թեմայի վերաբերյալ հարուստ նյութեր ենք քաղել նաև այն հեղինակների աշխատություններից, որոնք ապրել կամ եղել են Արևմտյան Հայաստանում և տեսել են դեպքերն ու իրադարձությունները: Դրանցից պետք է հիշատակել Ա-Դոյին (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), որը 1909 թ. հուլիս-օգոստոսին շրջագայելով Արևմտյան Հայաստանում, հայոց առաջնորդարաններից ու գյուղական քահանաներից նյութեր հավաքեց և իր տպավորությունների հետ միասին 1912 թ. հրատարակեց «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» ուսումնասիրությունը: Նման գործ կատարեց նաև Ռ. Բեկգուլյանցը, որն այցելել էր Արևմտյան Հայաստան 1914 թ. աշնանը[5]:

Արժեքավոր են, այնուհետև, Գեղամ Տեր-Կարապետյանի (Գեղամ և Տաւրակ կեղծանուններով) աշխատությունները. նա Մուշի հայոց առաջնորդարանի քարտուղարն էր, իսկ 1908 թ. հեղաշրջումից հետո տարոնահայության կողմից ընտրվեց օսմանյան պալատի պատգամավոր և մայրաքաղաքում աշխատում էր ամոքել իր հայրենակիցների ցավերը: Մամուլում նա հրապարակեց գյուղի իրական կյանքից վերցրած մի շարք պատմվածքներ[6], իսկ 1911 թ. լույս ընծայեց արժեքավոր մի գրքույկ, որի մեջ փաստական ու վիճակագրական հարուստ տվյալներով ցույց տվեց արևմտահայ գյուղացիության ժխտական կացությունը Թուրքիայի տիրապետության պայմաններում[7]:

Արևմտյան Հայաստանի հասարակական հարաբերությունների և ժողովրդական շարժումների մասին հետաքրքիր տեղեկություններ ենք քաղել նաև սփյուռքահայ մտավորականների հուշերից, որոնք լույս են ընծայվել արտասահմանում՝ հայրենակցական զանազան միությունների կողմից:

---

[5] *Տե՛ս* Р. Бекгульянц, По Турецкой Армении, впечатления от поездки летом в 1914 году, Ростов-на-Дону, 1914.

[6] Գեղամ Տեր-Կարապետյան, *Տարոնի աշխարհ, պատկերներ, պատմվածքներ, Փարիզ, 1931:*

[7] Գեղամ Տեր-Կարապետյան, *Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ, Կ. Պոլիս, 1911:*

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի սկզբին սոցիալական ու ազգային հակասությունները Թուրքիայում սրվելով հասել էին մեծ չափերի: Աշխատավոր զանգվածները տառապում էին թե՛ ֆեոդալական, թե՛ կապիտալիստական և թե՛ կիսագաղութային ճնշումներից: Առանձնապես ծանր էր ոչ թուրք ժողովուրդների պրուբյունը, որոնք սոցիալական հարստահարումների հետ միասին ենթարկվում էին նաև ազգային ու կրոնական հալածանքների: Սուլթանական բռնապետությունը ատելի էր դարձել նաև թուրքական երիտասարդ բուրժուազիայի ու բուրժուական ուղի բռնած կալվածատերերի համար, որոնք անձի և գույքի անապահովության պայմաններում անկարող էին ծավալել կապիտալիստական լայն գործունեություն: Այն անտանելի էր դարձել անգամ մանր պաշտոնյաների ու վինվորականների համար, որոնք ամիսներ շարունակ աշխատավարձ չէին ստանում: Մի խոսքով, համիդյան բռնակալության սոցիալական հենարանը խիստ նեղացել էր ու դարձել խախուտ: Առիթ էր պետք քաղաքական ահեղ ցնցումների ու տիրակալի գահավիժման համար: Այդ առիթը եղավ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որը մեծ ազդեցություն ունեցավ Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովուրդների հեղափոխական պայքարի վերելքի վրա: Վ. Ի. Լենինը նշում էր. «1905 թվականի ռուսական շարժումից հետո դեմոկրատական հեղափոխությունն ընդգրկել է ողջ Ասիան՝ Թուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը: Ամեն է խմորումն անգլիական Հնդկաստանում»[1]:

[1] Վ. Ի. Լենին, *երկեր*, հ. 19, էջ 83:

Իմանալով Պետերբուրգի իրագործությունների մասին, Աբդուլ Համիդը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որպեսզի հեղափոխական տրամադրությունները Ռուսաստանից չթափանցեն Թուրքիա։ Անձնական բարեուղարի վկայությամբ՝ սուլթանը կորցրեց քունը, երբ իմացավ, որ «Իշխան Պոտյոմկին-Տավրիչեսկի» զրահանավը կարմիր դրոշ պարզած լողում է Սև ծովում։ Սուլթանը կարզադրեց թույլ չտալ, որ «խռովարարները» մոտենան Թուրքական ափերին, մանավանդ անցնեն Բոսֆոր-Դարդանելով[2]։ Բայց հակառակ նրա ցանկության ռուսական հեղափոխությունը ներթափանցում էր Թուրքիա և ակտիվացնում բռնակալության դեմ պայքարող ուժերի գործողությունները։

1907 թ. դեկտեմբերի վերջին Փարիզում երիտթուրքական կազմակերպությունների ու այլ ընդդիմադիր ուժերի մասնակցությամբ կայացած կոնգրեսում ընդունվեց դեկլարացիա, որի մեջ նշվում էին սուլթանական վարչակարգի ավերիչ հետևանքները կայսրության ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական բնակչության համար և նրա տապալման անհրաժեշտությունը։ «Այսօր,— ասվում էր դեկլարացիայում,— ամեն ոք, որ ընդունակ է մտածելու, պարզ կը հասկանա, թե իշխող կառավարության մեջ անմիջական փոփոխություն մը միայն կրնա արդիլել կայսրության վերջնական մեծ աղետը և քայքայումը, պետք է ուրեմն անհապաղ ու բոլոր հնարավոր միջոցներով տապալել բռնիմ մը, որ այսքան աղետներու պատճառ եղավ»։ Ապա դեկլարացիայում նշվում էր, որ Աբդուլ Համիդի գահազրկումից հետո երկրում պետք է ստեղծել ներկայացուցչական վարչակարգ (պառլամենտ)։ Կոնգրեսի մասնակիցները աղդարարում էին. «Մենք կը միանանք ընդհանուր պայքարի մը համար, հարգելով միանգամայն յուրաքանչյուր կազմակերպության ինքնավարությունը, կը միանանք անկեղծորեն, եղբայրորեն և նախքան կռիվ սկսելը՝ խոստում կուտանք չի թուլանալ, ու կը հայտարարենք սուլթանին՝ թե մեր զենքերը վար չենք դներ, մինչև որ Թուրքիոյ համար նոր գարագլուխ մը չը բանանք»[3]։

Երիտթուրքական կազմակերպությունները որոշել էին ապստամբեվել 1909 թ. աշնանը, բայց տեսնելով, որ Անգլիան ու Ռուսաստանն իրենց Ռևելյան համաձայնությամբ (1908 թ. ապրիլ) անդամահատում են Թուրքիան, արագացրին որոշման իրագործումը։

---

[2] *Տե՛ս Ю. А. Петросян*, Младотурецкое движение, М., 1971, стр. 217.

[3] «Դրոշակ», 1908, № 1, էջ 3։

1908 թ. գարնանը երիտթուրքերի փարիզյան խմբի ղեկավարները առաջարկեցին Թուրքիայի իրենց գինակիցներին անցնել ակտիվ գործողությունների։ Թուրքական բանակի մի խումբ սպաներ՝ Նիազի, Էնվեր ու Թալեաթ բեյերի գլխավորությամբ, հուլիսին Ռեսնայում ու Սալոնիկում (Մակեդոնիա) ապստամբություն բարձրացրին։ Բանակալը փորձեց խեղդել շարժումն իր բնում, բայց նրա ուղարկած բանակներն անցան ապստամբների կողմը[4]։

Երիտթուրքական զորամասերը ուղղվեցին դեպի մայրաքաղաք, ճանապարհին իրենց միացնելով Համիդյան կարգերից դժգոհ բազմաթիվ բրիտանյա ու մահմեդական զանգվածներ։ Շարժումը գնալով աճեց, ընդունելով սպառնալի բնույթ։ Ապստամբության ղեկավարները, վախենալով դեմոկրատական պայքարի ծավալումից, շտապեցին գործարքի մեջ մտնել սուլթանի հետ ու լիկվիդացնել ստեղծված իրավիճակը։ Այդ նպատակով հուլիսի 23-ին նրանք պահանջեցին Աբդուլ Համիդից՝ վերականգնել 1876 թ. սահմանադրությունը։ Չգտնելով ուրիշ ելք, արյունոտ բռնակալը կատարեց նրանց պահանջը։ Հուլիսի 24-ին Ելդըզ Քյոշկի հրապարակում հավաքված ամբոխին նա կեղծավորաբար հայտարարեց. «Իմ որդիներ, ես միշտ էլ սահմանադրական եմ եղել։ Ինձ շրջապատող տգետ խորհրդականների մեղքով է, որ սահմանադրությունն ուշացել է»[5]։ Երիտթուրքերը բավարարվեցին սահմանադրության հռչակումով և հեղափոխությունը համարեցին ավարտված։ Նրանք Թուրքիան համարեցին սահմանադրական միապետության երկիր և սուլթանին ու նրա բազմաթիվ պաշտոնյաներին թողեցին անձեռնմխելի։

1908 թ. աշնանը տեղի ունեցան իթթիհատական պառլամենտի ընտրությունները, ուր թուրքերը կազմեցին հարաբերական մեծամասնությունը (պառլամենտի 266 պատգամավորներից 125-ը թուրքեր էին, 70-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ՝ 10-ը՝ հայեր, 4-ը՝ բուլղարներ, 4-ը՝ հրեաներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ ուլահ)[6], այն դեպքում,

---

[4] Երիտթուրքեր անունը առաջացավ տակավին XIX դարի առաջին կեսին եվրոպական դիվանագիտական ու հասարակական շրջաններում և օգտագործվում էր բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կողմնակից էին Օսմանյան կայսրության առաջադիմական վերակառուցումներին։ Իսկ Թուրքիայում այն գտացավ լայն տարածում 1908 թ. հեղափոխությունից հետո՝ ֆրանսիերենի արտասանությամբ և թուրքերենի հոգնակիով «ժեռն թուրքլեր», կրճատ՝ «ժեռն»։

[5] *В. А. Гурко-Кряжин*, նշված աշխ., էջ 33։

[6] Տե՛ս Վ. Փափազյան, Իմ հուշեր, հ. 2, Պեյրութ, 1952, էջ 90—91։

Երբ Թուրքիայի 27 միլիոն բնակչությունից թուրքերը կազմում էին 8—10 միլիոն[7]։

Օսմանյան պառլամենտում ապահովվեց նաև շահագործող վերնաշերտերի մեծամասնությունը։ Պառլամենտի պատգամավորների 35%-ը կրոնավորներ էին, այսինքն՝ մահմեդական բարձրաստիճան հոգևորականներ, 30%-ը՝ կալվածատերեր, 20%-ը՝ համիդյան պաշտոնյաներ, 10%-ը՝ ազատ արհեստի և 5%-ը՝ անորոշ մասնագիտության անձինք[8]։ Պառլամենտում աննշան էր աշխատավոր բնակչության ներկայացուցիչների թիվը։

Ինչ վերաբերում է կուսակցություններին, ապա պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20—25-ը՝ լիբերալներ (Ահրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կլուբիստներ, 1-ը՝ սոցիալ-դեմոկրատ և 70-ը՝ անկուսակցականներ[9]։

Պառլամենտի նախագահ ընտրվեց երիտթուրքերի գաղափարական ու տեսական ղեկավար Ահմեդ Ռիզա բեյը[10], իսկ իթթիհատի մյուս դործիչները չմտան կառավարության կազմի մեջ։ Նրանք հրամայողի ու հսկողի ֆունկցիաներն իրացրին դրսից։ Այդպիսով կազմվեց յուրատեսակ երկիշխանություն[11]։

---

[7] *П. И. Аверьянов,* Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912, стр. 3—4.

[8] *Տե՛ս* Վ. Փափազյան, *նշված աշխ., էջ 90—91։*

[9] *Նույն տեղում, էջ 93։*

[10] *Համիդյան կառավարության գաղտնի ոստիկանապետ Զիյա բեյը իր հուշերում պատմում էր, որ սուլթանն այն կարծիքին էր, թե կաշառել կարելի է ամեն մեկին, սակայն զայրանում էր, որ Ահմեդ Ռիզա բեյը չի կաշառվում ոչ ոսկով և ոչ էլ պաշտոնով։ Երբ կատարվեց 1908 թ. հեղափոխությունը և այդ «անկաշառ մարդը դարձավ պառլամենտի նախագահ, ո՞վ զարմանք, նա համբուրեց իր համար ատելի ու այնքան ընդամի սուլթանի ձեռքը։ «Ցավոք, բլերը ականատես եղան այդ հանդիսավոր հանդիպմանը։ Համիդը քիչ մնաց անզգայանար, երբ Փարիզյան վտարանդին հայտարարեց, որ նրա անձնավորությունը անձեռնմխելի է և որ նա առաջվա պես կմնա օսմանցիների տերն ու իրրև ապացույց լիզեց դեռ երեկվա իր բշնամու ձեռքը։ Շուտով այդ մասին թուրքական թերթերը շեփորեցին ամբողջ աշխարհին։ Հին թուրքերը հուզված թափահարեցին գլուխները, իսկ երիտասարդ թուրքերը գաղտագողի ժպտացին»։ *М. Б. Хаджетлаше,* Убийца на троне (записка начальника тайной полиции в Турции). Пг., 1918, стр. 230.*

Մի այլ առիթով Զիյա բեյը հիշում էր. «Երբ ես հետագայում կարդացի, որ սուլթանը անձամբ ընդունել է Ահմեդ Ռիզային և սեղմել նրա ձեռքը, ինձ թվաց, թե ես հնքիաթ եմ կարդում։ Դա անշափ դժվար էր պատկերացնել» (նույն տեղում, էջ 169)։

[11] *Տե՛ս В. И. Шпилькова,* Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977, стр. 127, 262.

1908 թ. հոկտեմբերին «Միություն և առաջադիմությունը» հրապարակեց իր ծրագիրը, որի հիմքում ընկած էր 1876 թ. սահմանադրությունը։ Բայց իթթիհատի ծրագիրը որոշ չափով տարբերվում էր այդ սահմանադրությունից։ 1876 թ. սահմանադրությամբ սուլթանն էր նշանակում մեծ վեզիրին ու մինիստրներին։ Եթե պատգամավորների պալատը ներկայացնում էր մեղադրանք, ապա նրանք կարող էին ազատվել կամ դատվել միայն սուլթանի կամքով։ Մինչդեռ երիտթուրքերի ծրագրով մինիստրները պատասխանատու էին պալատի առաջ և նրա վստահությունը կորցնելու դեպքում պարտավոր էին հրաժարական տալ։

1876 թ. սահմանադրությամբ սենատի նախագահն ու անդամները նշանակվում էին սուլթանի կողմից, սենատորներն անփոխարինելի էին և նրանց թիվը չպետք է գերազանցեր պատգամավորների պալատի անդամների թվից։ Երիտթուրքերի ծրագրով սենատորների թիվը անսահմանափակ էր և միայն նրանց $^1/_3$-ն էր նշանակում սուլթանը, իսկ $^2/_3$-ը ընտրվում էր պալատի պատգամավորների կողմից։

1876 թ. սահմանադրությամբ ընտրական իրավունք ունեին 25 և դրանից բարձր տարիք ունեցողները, իսկ երիտթուրքերի ծրագրով այդ իրավունքը տրվում էր 21 և ավելի տարիք ունեցողներին։

Եթե 1876 թ. սահմանադրությունը թույլատրում էր բնակիչներին ընտրել պատգամավորներ միայն իրենց պրովինցիաներից, երիտթուրքերի ծրագիրը սահմանում էր, որ նրանք կարող են ընտրել պատգամավորներ նաև ուրիշ պրովինցիաներից։

1876 թ. սահմանադրությամբ մինիստրությունները նախապատրաստում էին օրինագծերը, իսկ սուլթանը հաստատում էր, մինչդեռ երիտթուրքերը սահմանում էին, որ ամեն մի օրինագիծ, թեկուզև այն ներկայացվի 10 պատգամավորների կողմից, ենթակա է պալատի քննարկմանը։

1876 թ. սահմանադրությունը պաշարողական վիճակ էր հայտարարում այն վայրերում, որոնք կարող էին հղի լինել «խռովություններով», իսկ երիտթուրքերի ծրագիրը մերժում էր այդ թեզը, միաժամանակ առաջարկում, որ պետք է ընդարձակել տեղական մարմինների իրավունքները, վերակառուցել ռազմական ուժերը, կապիտուլիսաների ու բանվորների միջև սահմանել օրենքներ և այլն[12]։

---

[12] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՐՊԱ, ֆ. 2000, գ. 6849, թթ. 87—88, տե՛ս նաև Х. З. Габидуллин, նշված աշխ., էջ 106—107։

Այդպիսով, երիտթուրքերի ծրագիրը, հեղափոխական շարժումների ճնշման տակ, փոքր-ինչ ընդլայնում էր 1876 թ. կամ Միդհատի խիստ սահմանափակ բուրժուական սահմանադրությունը, սակայն երկրի համար արմատական վերակառուցումներ չէր նախատեսում:

Աբդուլ Համիդը իր գահին մնաց մինչև 1909 թ. գարունը: Նա փորձեց իրացնել հնատիմական հեղաշրջում, բայց անհաջողության մատնվեց և նույն թվականի ապրիլի 26-ին արտաբաժնվեց Սալոնիկ[13]: Դրանից հետո երիտթուրքերը իրենց «Միության և առաջադիմության» կոմիտեն անվանական թագավորական կուսակցության, վերջ դրեցին երկիշխանությանը և դարձան երկրի լիակատար տերն ու տնօրինը: Նրանք նոր սուլթան նշանակեցին Աբդուլ Համիդի եղբորը՝ Ռեշադի Մեհմեդ V Ռեշադին (1844—1918) և առաջարկեցին նրան գահակալել, բայց ոչ կառավարել:

Երիտթուրքերի հեղափոխությունը նեղ, բուրժուական հեղափոխություն էր և ունենալով մակերեսային բնույթ, արմատապես չէր կարող լուծել ժողովրդական-դեմոկրատական խնդիրները: Վ. Ի. Լենինը տարբեր առիթներով ընդգծառնալով երիտթուրքերի հեղափոխությանը, ցույց տվեց, որ այն ազատություն չբերեց Թուրքական բռնակալության ճիրաններում տառապող աշխատավորներին: Դեռ 1908 թ. հոկտեմբերին «Իրադարձությունները Բալկաններում և Պարսկաստանում» հոդվածում նա գրում էր, որ երիտթուրքերի հեղափոխությունը «Թույլ է... չի արթնացնում ժողովրդի ստորին խավերը, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնությունը... Թշնամի է օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին...»[14]: 1917 թ. նոյեմբերին Վ. Ի. Լենինը նշում էր. «Սթն օրինակի համար վերցնենք XX դարի հեղափոխությունները, ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու Թուրքական հեղափոխություններն էլ բուրժուական համարել: Բայց նրանցից ո՞չ մեկը, ո՞չ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական անտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ հեղափոխությունից և ոչ մեկի մեջ»[15]:

Երիտթուրքական հեղափոխությունը չբավարարեց անգամ Թուրքիայի բուրժուական ու մանրբուրժուական որոշակի շրջաններին և

---

[13] Տե՛ս «Մշակ», 1909, № 78, ապրիլի 17:

[14] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 268—269:

[15] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 537:

Ա 11/6187

իթթիհատական կուսակցության անդամների մի զգալի մասին։ Այդ պատճառով էլ նրանք շուտով ստեղծեցին իրենց առանձին կազմակերպություններն ու կուսակցությունները և իթթիհատի հանդեպ բռնեցին օպոզիցիոն դիրք։ Այսպես, 1908 թ. կազմակերպվեց «Օսմանյան դեմոկրատական կուսակցությունը» («Ժողովրդի խումբ»), 1909 թ. «Լիբերալների» («Ահրար»), «Մեղմ լիբերալների» («Մյուֆեդիլ հյուրիեթ-փերվերան ֆրղկասի»), «Ռեֆորմների օսմանյան կուսակցությունը» («Իսլահաթի էսասիե օսմանիե ֆրղկասի»), 1910 թ.՝ «Ժողովրդական» («Ահրար ֆրղկասի») կուսակցություններն ու կազմակերպությունները։ 1911 թ. աշնանը անգլիական դիվանագիտության խորհրդով ու պաշտպանությամբ դրանք բոլորը միացան ու ստեղծեցին «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթթիլաֆ») կուսակցությունը, որը համագործակցության մեջ մտավ իթթիհատական վարչակարգից զժգոհ մի շարք ոչ խոշոր ժողովուրդների բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների հետ[16]։ 1911 թ. դեկտեմբերին «Ազատություն և համաձայնություն» հրապարակեց իր ծրագիրը, որով պահանջում էր՝ պաշտպանել սահմանադրությունը, ամրապնդել լիբերալ կարգերը, իրագործել ապակենտրոնացման սկզբունքները և այլն։ Սակայն այդ ելևէջը առաջ էին քաշվում մասսաների մեջ համակրանք շահելու, բայց ոչ երբեք կենսագործվելու նպատակով։

«Հյուրիեթ վե իթթիլաֆը» ձգտում էր տապալել երիտթուրքերի իշխանությունը և հաստատել իր դիկտատուրան։ Եվ ահա օգտագործելով արիպոլիտանական պատերազմում (1911—1912) իթթիհատականների անհաջողությունները, 1912 թ. հուլիսին իշխանությունը վերցրեց իր ձեռքը։ Սակայն չլուծելով երկրի ներքին ու արտաքին առաջնահերթ խնդիրները և պարտվելով Բալկանյան պատերազմում, այդ կուսակցությունը շուտով հեղինակազրկվեց։ Երիտթուրքերը 1913 թ. հունվարի 23-ին կազմակերպեցին պետական հեղաշրջում ու կրկին նվաճեցին իշխանությունը։ 1914 թ. կազմվեց եռապետություն (տրիումվիրատ)՝ իշխանությունը կենտրոնացավ Էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաների ձեռքում։ Առաջինը զբաղվեց ռազմական, երկրորդը՝ ներքին, իսկ երրորդը՝ ծովային գործերի մինիստրի պաշտոնը։ Օսմանյան պառլամենտը կորցրեց իր նշանակությունը, իսկ 70-ամյա սուլթան Մեհմեդ V-ը վերածվեց խրտվիլակի։

---

16 Տե՛ս Г. З. Алиев, նշված աշխ., էջ 212։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ամրապնդելով իրենց դիրքերը, իթթիհատի պարագլուխները սկսեցին վարել մոլի շովինիստական քաղաքականություն։ Դա բացատրվում էր նրանով, որ «Միության և առաջադիմության» կուսակցության անդամները, հատկապես նրա ղեկավարները, ֆեոդալական-բյուրոկրատական միջավայրից դուրս եկած մասնավորականներ, սպաներ, պաշտոնյաներ և կուլտածատերեր էին ու արտահայտում էին թուրքական ռևակցիոն կղերականության, կալվածատիրության և մոլի ազգայնական բուրժուազիայի շահերը։ Երիտթուրքերը նպատակ դրեցին երկրում հաստատել թուրքական բուրժուազիայի դիրիշխանություն[17]։ Չթավարարվելով դրանով, նրանք խնդիր դրեցին նաև թուրքացնել օսմանյան լծի տակ ընկած բոլոր ժողովուրդներին և առաջ քաշեցին պանօսմանիզմի դաղափարախոսությունը, քարոզելով, որ Թուրքիայում այսուհետև չկան մահմեդականներ, քրիստոնյաներ կամ այլ ժողովուրդներ, այլ կա միայն մեկ ազգ՝ օսմանյան ժողովուրդ։ Իթթիհատի պարագլուխները գտնում էին, որ այլազգիների ձուլման համար անբավարար է միայն համոզման եղանակը, «հարկ եղած դեպքում պետք է վնաս գործածել»[18]։

Սակայն տեսնելով, որ պանօսմանիզմի դաղափարախոսությունը անհաջողության է մատնվում, երիտթուրքերը 1912—1913 թթ. անցան պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի կամ պանթուրանիզմի պրոպագանդմանը, կամենալով Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի բոլոր մահմեդականներին ու թյուրքալեզու ժողովուրդներին համախմբել Թուրքիայի ղեկավարության տակ։ Նրանք քարոզում էին, որ մահմեդականները ոչ արաբներ են, ոչ թուրքեր, ոչ քրդեր, ոչ չերքեզներ և ոչ լազեր, այլ «միասնական իսլամական համայնքի անդամներ են»[19]։ «Սերիլ ուռհշադ» («Ճշմարիտ ուղղության ճանապարհը») ամսագրի խմբագիր Մեհմեդ-Ակիֆը զուրանի անունից այդ ժողովուրդներին առաջարկում էր հրաժարվել իրենց ազգային պահանջներից և ասատնում, որ համաոելու դեպքում կպատժվեն ալլահի կողմից։ Պանիսլամիզմի կողմնակիցները հայտարարում էին, որ եթե հաջողվի համախմբել Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի մահմեդականներին, «մենք, անկասկած, կդառնանք աշխարհի վրա դիրիշխող ազգություն»[20]։

---

[17] Օսմանյան կայսրության բուրժուազիայի մասին մանրամասն տե՛ս Հ. Գ. Ինճիկյանի նշված աշխատությունում։

[18] «Մշակ», 1912, № 84, ապրիլի 22։

[19] А. С. Тверитинова, Младотурки и пантюркизм («Краткие сообщения Института востоковедения», М., 1956, т. XXII, стр. 67).

[20] Նույն տեղում, էջ 68։

Պանթյուրքիստները պրոպագանդում էին, որ բոլոր թյուրքալեզու ժողովուրդները՝ սկսած Չինաստանից մինչև Դանուբ պատկանում են մի միասնական ազգի և պետք է համախմբվեն Թուրքական մեծ պետությունը ներկայացնող Օսմանյան Թուրքիայի ղեկավարության տակ: 1911 թ. նրանք ստեղծեցին «Թուրքական օջախ» («Թյուրք օջախը») ընկերությունը և սկսեցին հրատարակել «Թուրքական հայրենիք» («Թյուրք յուրդու») ամսագիրը, որի ճակատին գրվում էր՝ «Աշխատել Թուրքի օջախին» գիտը[21]:

Պանթյուրքիստները կազմեցին իրենց մինիմում և մաքսիմում ծրագրերը: Համաձայն մինիմում ծրագրի, պետք էր ստեղծել «Փոքր կամ Նոր Թուրանը», որի սահմանները հասնելու էին Կ. Պոլսից մինչև Բայկալ լիճը և Մոնղոլիայից մինչև Կազան, իսկ մաքսիմում ծրագրով պետք էր ստեղծել «Մեծ Թուրանը», որի սահմանները տարածվելու էին Ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները և Սառուցյալ օվկիանոսից մինչև Տիբեթի բարձրավանդակը: Պանթյուրքիստները գտնում էին, որ «Մեծ Թուրանի» ստեղծումը պետք է կատարվի «հրով ու սրով»[22]:

Երիտասարդ թուրքերն այնուհետև անհրաժեշտ էին համարում միացնել պանթյուրքիզմը պանիսլամիզմին և աշխատում էին ապացուցել, թե իբր մահմեդականության հիմքում ընկած են «հասարակական կառուցվածքի ամենադեմոկրատական սկզբունքները»՝ հավասարությունն ու եղբայրությունը: Երիտթուրքական գաղափարախոս Զեմալ Նուրի բեյը գտնում էր, որ ապագա համաթուրանական պետության մեջ ղեկավար դերը պետք է պատկանի թուրքերին, քանի որ նրանք իբր ավելի բազմամարդ են ու քաղաքակիրթ, արաբերենը լինելու էր բոլոր մահմեդականների կրոնական լեզուն, իսկ թուրքերենը՝ պաշտոնական ու խոսակցական լեզուն[23]: Իրենց այդ ցնորամիտ պլանների իրագործման համար երիտասարդ թուրքերը կողմնորոշվեցին դեպի կայզերական Գերմանիան և փորձեր կատարեցին մերձենալ նաև Ճապոնիային:

Սակայն իթթիհատական կառավարությունը ոչ միայն չկարողացավ իրագործել իր երազանքները, այլև կրելով պարտություն պարտության հետևից, զրկվեց մի շարք տիրույթներից: 1911 թ. սեպտեմբերի 29-ին

---

[21] Նույն տեղում:

[22] Նույն տեղում, էջ 69:

[23] Տե՛ս նույն տեղում:

Թուրքիան պատերազմի մեջ մտավ Իտալիայի հետ, որի հետևանքով, 1912 թ. հոկտեմբերին Լոզանի պայմանագրով, հարկադրված եղավ Իտալիային զիջել Տրիպոլիտանիան ու Կիրենաիկան և վերջնականապես վտարվեց Աֆրիկայից։

Դեռ չէր ավարտվել այդ պատերազմը, երբ 1912 թ. հոկտեմբերին Բալկանյան երկրները՝ Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան ու Չեռնոգորիան ազատագրական պայքար ծավալեցին Թուրքական պավիշների դեմ և ջախջախիչ հարված հասցնելով, վռնդեցին Բալկաններից։ 1913 թ. ապրիլին Լոնդոնում կնքած պայմանագրով Թուրքիան կորցրեց իր եվրոպական բոլոր տիրույթները, բացառությամբ Կ. Պոլսից և Արևելյան Թրակիայի փոքր մասից։ Օգտագործելով Բալկանյան երկրների ներհակությունները, 1913 թ. հուլիսի 23-ին երիտթուրքերը խախտեցին Լոնդոնի պայմանագիրը և պատերազմը վերսկսելով՝ Կ. Պոլսի 1913 թ. օգոստոսի 13-ի պայմանագրով Բուլղարիայից նա ստացան Ադրիանապոլիսը։

* * *

Երիթուրքերը սահմանադրության հռչակումից անմիջապես հետո մեղմեցին հակահայկական քաղաքականությունը։ Ձգտելով ամրապնդել իրենց դիրքերն արևմտահայերի մեջ և կանխել նրանց ազատագրական պայքարը, նրանք արևմտահայության օգին անցկացրին որոշ բարեվումներ՝ վերացրին սուլթանի կողմից ստեղծված արտակարգ ևժիմը, որն արգելում էր հայերին տեղափոխել գավառից գավառ, գյուղից քաղաք կամ մեկնել արտասահման[24], Բույլատուներին կոտորածների ու հալածանքների հետևանքով արտասահման փախած հայերին նա վերադառնալ, որի շնորհիվ Ամերիկայում, Բուլղարիայում, Ռումինիայում և հատկապես Կովկասում հանդրվանած տարագիրներից շատերը եկան հայրենիք։ 1908 թ. հոկտեմբերին «Գործը» գրում էր, որ «Թուրքիայում սահմանադրության հայտարարելուց մինչև այժմ վերադարձել են մոտ 180 հազ. գաղթական»[25]։ 1909 թ. սկզբներին Տարոն վերադարձան մոտ 5000 մարդ, իսկ հետագայում նրանց թիվն ավելի մեծացավ։ 1909 թ. սեպտեմբերի 16-ին Բիթլիսի ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը գրում

---

[24] Տե՛ս Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 71, գ. 43, թթ. 163—168, ֆ. 15, ց. 1, գ. 67, թ. 243։

[25] «Գործ», 1908, № 30, հոկտեմբերի 16։

էր, որ Ռուսաստանից Թուրքիա վերադարձող հայերի քանակը «գնալով մեծանում է»[26]:

Երիթթուրքերի կառավարման սկզբնական շրջանում բանտերից ու աքսորավայրերից արձակվեցին բազմաթիվ հայ կալանավորներ[27], առժամանակ արգելվեց հակահայկական պրոպագանդան: Մի շարք գավառներում կազմակերպվեց մահմեդականների ու քրիստոնյաների եղբայրացում, մեծարվեցին բանապետության դեմ ակտիվ պայքարողները և հարգանք մատուցվեց այդ պայքարում զոհվածների հիշատակին: 1908 թ. ամռանը Բիթլիսում քրիստոնյաների և մահմեդականների միտինգում փառաբանվեցին հայ ֆիդայիները, ապա հայերը, թուրքերն ու քրդերը պատկ դրին Աղբյուր Սերոբի գերեզմանին[28]:

Վանում թուրքերն ու հայերը զինվորական նվագախմբի ուղեկցությամբ գնացին Արարուց եկեղեցին և ծաղիկներով զարդարեցին համիդյան բռնապետության դեմ մղած պայքարում ընկածների շիրիմները[29]:

Կարինում մահմեդականներն ու քրիստոնյաները հավաքվելով միտինգի, մեծարեցին 1907 թ. հակակառավարական շարժման զնկավարներին: Ապա այցելեցին հայոց գերեզմանատունը և հոգեհանգիստ կատարեցին այդ շարժման օրերին զոհվածների հիշատակին[30]:

Երիթթուրքերը միաժամանակ զգուշացրին հայտնիների հետապնդումը, որի շնորհիվ շատերը դուրս եկան թաքստոցներից և տուն վերադարձան: Նրանք միեղեցին նաև կրոնական հալածանքները: Երկրի մի շարք շրջաններում դավանափոխված հայերը վերադարձան քրիստոնեական հավատին: 1909 թ. հոկտեմբերի 20-ին «Բյուզանդիոնը» գրում էր, որ Մուշի կինեմ գավառակի Բիշնր գյուղախմբի 105 ընտանիք նորից «Հայաստանյայց ս. եկեղեցվոյ դիրկը դարձած են: Անոնք 1895-ի ջարդերուն առեն բյուրա պիչիրու կողմի բոնի իսլամցուցված էին և իբրև

---

26 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), ֆ. «Վաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 52:

27 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 1644, թ. 58—59, ՍՍՀՄ Կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ (այսուհետև՝ ԿՊՌՊԱ), ֆ. 2000, գ. 6862, թ. 29:

28 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3732, հունվարի 15:

29 Տե՛ս Աւետակ Պարթիկյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 177—178:

30 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 1644, թ. 58—59, «Բյուզանդիոն», 1909, № 3732, հունվարի 15:

դերի կ'դործածվելին։ Այժմ բյուրաւերն վախ չունենալով դարձած են իրենց մայր եկեղեցին ծոցը»[31]։

Ինարաշ է, որ բռնությամբ մահմեդականացված հայ տիները նույնպես փորձեցին վերադառնալ իրենց հարազատների մոտ։ Միայն Կ. Պոլսում 1909 թ. օգոստոսի սկզբին նման խնդրագրերով դիմեցին պատրիարքարան 10 հայուհիներ[32]։

Իթթիհատական կառավարությունը ցրից սուլթանի կողմից հայերին հալածելու և բնաջնջելու համար հավաքագրված «Մևյար», «Ջանբեդար», «Վաիանփեվվեր» ոճրագործ բանդաները, ինչպես նաև վերացրեց Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում հայկական շարժումները ճնշելու նպատակով հատատված դորանոցները և ֆիդայիների դեմ պայքարելու համար ստեղծված դիվիզիայի հրամանատարի պաշտոնը[33]։

Նոր կառավարիչները բացեցին իրենց ադմինիստրացիայի դռները հայերի առջև ու նրանց պաշտոններ տվին։ Թուրքական ոստիկանության կողմից դեռ նրևկ հալածված հայերը նշանակվեցին մյուդիր, մութասարիֆ և կայմակամ։ 1912—1913 թթ. էրզրումի վիլայեթում արդեն կար 32, իսկ Վանի վիլայեթում՝ 30 հայ պաշտոնյա[34]։

1908 թ. հեղափոխությունից հետո արևմտահայերը իրավունք ստացան ունենալ իրենց ներկայացուցիչներն օսմանյան պառլամենտում։ 1908 թ. պառլամենտում ընտրվեցին 10 պատգամավորներ, որոնցից 2-ը՝ իթթիհատական, 4-ը՝ դաշնակցական, 1-ը՝ լիբերալ («Ահրար» կուսակցության անդամ), 1-ը՝ հնչակյան, 2-ը՝ անկուսակցական[35]։

1908 թ. սեպտեմբերին վերսկսեց գործել արևմտահայ ազգային ասիմանագրությունը և վերաբացվեց Ազգային ժողովը, որոնք արգելված էին սուլթան Աբդուլ Համիդի կողմից 1891 թ.[36]։

Աշխուժացավ նաև արևմտահայության մշակութային կյանքը։ Երկրի մի շարք վայրերում բացվեցին ազգային դպրոցներ, գրադարաններ և կուլտուր-լուսավորական այլ հաստատություններ։ 1909 թ. վանում կառուցվեց Երամյան վարժարանի նոր շինքը, Մուշում՝ 5 դպրոց։ Դպրոցներ բացվեցին նաև գյուղերում։ Միայն Մուշի դաշտում 1—2

---

31 «Բյուզանդիոն», 1909, № 3949, հոկտեմբերի 20։

32 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3886, օգոստոսի 5։

33 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1909, ց. 482, գ. 543, թթ. 65—66։

34 Տե՛ս նույն տեղում, գ. 719, թ. 247։

35 Տե՛ս Վ. Փափազյան, նշված աշխ., էջ 96։

36 Տե՛ս նույն տեղում, էջ 70։

տարվա ընթացքում գործնեին մոտ 20 նոր դպրոցներ։ 1909 թ. նոյեմբերի 17-ին վ. Շիրվովը գրում էր. «Դպրոցների բացումը շարունակվում է Մուշի դաշտի ու Սասունի բոլոր գյուղերում»[37]։ 1912 թ. նոյեմբերին Վանի ռուսական փոխհյուպատոս Ս. Պ. Օլֆերևը հաղորդում էր. «Դպրոցական գործը հայերի մոտ... տարեցտարի առաջադիմում է»[38]։ Բացվեցին ակումբներ ու գրադարաններ, հրատարակվեցին թերթեր ու ամսագրեր։ Վանում կառուցվեցին «Աղատության լույս» և «Մ. Ավետիսյան» գրադարան-ընթերցարանները, հրատարակվեցին «Աշխատանք», «Վան-Տոսպ» թերթերը, կարճում լույս տեսավ «Հառաջը», Խարբերդում՝ «Եփրատը» և այլն։ Հրատարակվեցին համիդյան ռեժիմը քննադատող բազմաթիվ աշխատություններ։ Հարստացավ նաև թատերական խաղացանկը. բնամշարթակ բարձրացան ազատասիրական ու հայրենասիրական մի շարք պիեսներ, որոնք մերկացնում էին Աբդուլ Համիդի արյունոտ ռեժիմը և պրոպագանդում դեմոկրատական գաղափարներ, խարազանում շովինիզմը և փառաբանում հումանիզմը[39]։

Այս բարեփոխությունները երիտթուրքերը կատարեցին արևմտահայերի ազատագրական շարժումները կանխելու, իրենց դիրքերն ամրապնդելու և հեղինակություն ձեռք բերելու համար, իսկ երբ հասան նպատակին, ցույց տվին իրենց իսկական դեմքը։ Դիմենք փաստերին.

1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը երկրի որոշ շրջաններում վերացրին ավազակությունը, որի շնորհիվ հայ գյուղացիները կարողացան փոքր-ինչ շունչ քաշել։ 1908 թ. սեպտեմբերի 28-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը հաղորդում էր, որ Թուրքական կառավարությունն օգոստոսի վերջերից վճռական միջոցների դիմեց քրդերի ավազակությունները ահմանափակելու և վերացնելու ուղղությամբ։ Այդ նպատակով նա Մուշից պատժիչ ջոկատներ ուղարկեց Բուլանըխի և Վարդոյի կապանները[40]։ Իսկ 1909 թ. մարտի 1-ին ռուսական հյուպատոս Ակիմովիչը Բիթլիսից գրում էր, որ իշխանությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ «վերջին ամիսներին քրդերն անճանաչելի են դարձել։ Նրանք բոլորովին դադարեցրել են իրենց կողոպուտները ու սպանությունները հայկական գյուղերում, մի բան, որ դժվար էր նրանցից սպասել»[41]։

---

[37] ՌՍԴԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 69։

[38] Նույն տեղում, 1912, գ. 719, թ. 247։

[39] Տե՛ս Առաքել Դարբինյան, նշված աշխ., էջ 216։

[40] Տե՛ս ՌՍԴԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 1644, թ. 83։

[41] Նույն տեղում, գ. 543, թ. 8։

Բայց հեղհեղն անցավ, և ջուրը նորից իր հունով գնաց։ Երիտթուրքերը նրբ սկսեցին հավանավորել ազանների, սրանց ավազակախմբերը կրկին գործի անցան։ Թալանչիական հարձակումներից առաջվա պես ամենից շատ տուժում էին հայ գյուղացիները։ Արդեն 1910 թ. երկրի համարյա բոլոր վայրերից սաստվեցին բազմաթիվ բողոքագրեր, որոնք պատմում էին հայերի նկատմամբ բռնությունների, թալանի ու առևանգումների մասին[42]։ Հինգ ամսվա ընթացքում (1911 թ. հունվար—մայիս) երկրի միայն երկու վիլայեթներում սպանվել ու վիրավորվել են 89 հայ, առևանգվել ու մահմեդականացվել են 18 հայուհի[43]։ 1912 թ. Ս. Պ. Օլֆերսը նշում էր, որ թուրքական պաշտոնական ավյալներով վանի վիլայեթում սպանվել է 50 հայ, հայերից հափշտակվել է 3040 անասուն, սակա ավելացնում, որ իրականում այդ թվերն ավելի մեծ են[44]։

Արևմտահայերի սպանությունները ու կողոպուտները շարունակվեցին նաև իթթիհադի կառավարման ամիսներին, իսկ որոշ հեղինակների վկայությամբ՝ նույնիսկ շատացան։ Հենվելով Թուրքիայի հայաբնակ վայրերից ստացած տեղեկությունների վրա, 1912 թ. «Մշակը» գրում էր. «Հարստահարությունները, կեղեքումները, մասնակի կոտորածները, սպանությունները բազմացել էին վերջին տարիներին, բայց նրանք ավելի մեծ ծավալ ստացան անմիջապես այն օրից ի վեր, երբ տապալվեց իթթիհատական սիրապետությունը, դադարի պլուս անցավ իթթիհադի կուսակցությունը»[45]։

Արևմտահայության նկատմամբ գործադրվող բռնություններն ու առևանգումները, սպանությունները ու կողոպուտները նոր թափ ստացան 1913 թ., երբ իշխանությունը իթթիհադիստներից կրկին անցավ իթթիհատականների ձեռքը։ Բավական է նշել, որ միայն վեց ամսվա ընթացքում (1913 թ. հունվար—հունիս) սպանվեց 106, վիրավորվեց 88 մարդ, առևանգվեց 59 հայուհի, կատարվեց 484 դիմված հարձակում հայկական գյուղերի վրա և հափշտակվեցին բազմաթիվ անասուններ[46]։ «Մշակը» նշում էր, որ 1913 թ. գարնանից մինչև հուլիսի կեսերը «Բիթլիսի կուսակալության մեջն եղած սպանությունները ու կողոպուտ-

---

[42] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1910, գ. 544, թ. 72։

[43] Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4451, հունիսի 17։

[44] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1913, գ. 482, գ. 719, թ. 279։

[45] «Մշակ», 1912, № 195, սեպտեմբերի 4։

[46] Տե՛ս «Մշակ», 1913, № 193, սեպտեմբերի 3։

նները կհավասարվին անցած 1908-ի կեսին մինչև 1912-ի մեջ եղածներուն»[47]։

Անձն ու գույքը անապահով էին նաև Արևմտյան Հայաստանի քրդական գյուղերում։ Օգտվելով նոր կառավարիչների թույլավությունից, աղայական հորդանները կոտորում ու թալանում էին նաև բուրդ աշխատավորներին, տանում նրանց անասունները։ 1912 թ. սեպտեմբերին Միր Մհեի և Սեիդի բանդանները հարձակվելով քրդական Ակրակ, Կաշկա, Քյուրդվան և էրմանց գյուղերի վրա, ավերեցին դրանք ու տարան անասունները[48]։ Մի շարք տեղերում նրանք այնպես թալանեցին բնակիչներին (օրինակ՝ Ջխուրում), որ վերջիններս դերադասեցին լքել իրենց բնակավայրերը և տեղափոխվել այլ գավառ[49]։

Աղանները և ցեղապետները առևանգում էին նաև քրդերի կանանց ու աղջիկներին։ Դրա հետևանքով նրանք հարկադրված էին թողնել գյուղերը և հեռանալ[50]։ Սակայն ավազակները հայկական գյուղերն ավելի շատ էին ավերում, քան քրդական կամ թուրքական գյուղերը։ 1913 թ. հունիսի 13-ին վ. Շիրվոլը նշում էր, որ Բիթլիսի վիլայեթում ավազակությունից «թուրքերն ու քրդերը այնպես չեն տուժում, ինչպես հայերը»[51]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին կոտորվում ու կողոպտվում էին նաև ասորիները, հատկապես հարթավայրային շրջաններում։ Այսպես, 1911 թ. Ջուլամերիկում քրդական հրոսակախմբերը հարձակվեցին նեստորական Աշուտա գյուղի վրա, սպանեցին 10, վիրավորեցին 8 մարդու և տարան 7000 գլուխ անասուն[52]։ Նման փաստեր շատ կարելի է բերել։

Երիտթուրքերը լսել անգամ չուզեցին Օսմանյան կայսրության տիրապետության տակ ընկած ժողովուրդների ազգային ինքնորոշման կամ ինքնավարության մասին։ Դիտելով Արևմտյան Հայաստանը որպես Թուրքիայի անբաժան մասը, նրանք այդ երկրամասի վարչական բաժանումը պահպանեցին այնպես, ինչպես Աբդուլ Համիդի կառավարման տարիներին՝ Արևմտյան Հայաստանը բաժանված էր Վանի, Բիթլիսի,

---

47 «Մշակ», 1913, № 165. Տուլիսը 30.

48 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 43—90, էջ 8։

49 Տե՛ս «Մշակ», 1913, № 113, մայիսի 26։

50 Տե՛ս ՌԱՔՍ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, պ. 546, թ. 144։

51 Նույն տեղում, թ. 143։

52 Տե՛ս նույն տեղում, պ. 719, թ. 77։

Դիարբեքիրի, Խարբերդի, Սըվազի և Էրզրումի վիլայեթների կամ կուսակալությունների, որոնցից յուրաքանչյուրը՝ սանջակների (գավառների), սանջակները՝ կազաների (գավառակների), իսկ կազաները՝ նահիեների կամ գյուղախմբերի: Միակ փոփոխությունը մի երկու կազաների առանձին շրջանների անջատումն ու միացումն էր հարևան գավառներին:

Երիտթուրքերը պահպանեցին նաև Արևմտյան Հայաստանի վիլայեթների կառավարման նախկին վարչաձևը: Վիլայեթի գլուխ կանգնած էր կուսակալը կամ վալին, սանջակինը՝ գավառապետը կամ մութասարիֆը, կազայինը՝ գավառակապետը կամ կայմակամը, նահիեինը՝ անդամասի պետը կամ մյուդիրը, իսկ գյուղինը՝ գյուղապետը կամ մուխթարը, ինչպես Կուսակալի, գավառապետի իրավասության տակ գործում էին մշտական խորհուրդներ (մեջլիսներ), որոնք ունեին խորհրդակցական նշանակություն և բնորոշում էին տեղական բնակիչներից կամ նշանակվում վերադաս պաշտոնյաների կողմից: Մեջլիսի անդամները կարող էին լինել և՛ քրիստոնյաները, և՛ մահմեդականները: Եթե գավառում գերիշխում էին մահմեդականները, ապա մեջլիսում պետք է զբաղեցնեին նրանց պատգամավորները: Այդպիսի իրավունք ունեին նաև քրիստոնյաները:

1908—1909 թթ. Համիդյան հին ռեժիմի կողքին կայսրության ինչպես այլ շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում կազմակերպվեց նոր՝ երիտթուրքական ռեժիմը: Առաջինը, ինչպես ասվեց, կառավարում էր, իսկ երկրորդը՝ վերահսկում և հսկում էր նրա գործունեությունը: Երիտթուրքերի մարտական շտաբը «իթթիհատական ակումբներն» էին, որոնք դանվում էին մի քանի մարդկանց, կամ ինչպես նրանց անվանում էին՝ «փաթթոցավորների» ձեռքում, որոնցից ամենօրյա խորհուրդներ ու հրահանգներ էին ստանում կուսակալը, զինվորական հրամանատարն ու այլ պետեր: Այդ «փաթթոցավորները» հաճախ մասնակցում էին համիդյան իշխանությունների խորհրդակցություններին և մեկ-երկու խոսքով կամ գլխի շարժումներով վճռում քննարկվող հարցերը: Ականատեսներից մեկն իր հուշերում գրել է. «Բոլոր կառավարական ճյուղերում մի անկյունում նստած էր մի իթթիհատական... պետական պաշտոնատարները գործերը վճռելիս՝ հոնքերի ռեակից կը նայեին վախով ու ակնածանքով անկյունը քաշված կոմիտեի ներկայացուցիչին, և նրա գլխի շարժումներին և կամ «օլուր»-«օլմազին» («կը լինի-չի լինիր»)[53]:

[53] Թուրեն Տեր-Միհասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Լոս-Անճելոս, Կալիֆորնիա, 1952, հ. 2, էջ 91—92:

1908—1909 թթ. Արևմտյան Հայաստանում բավականին շատացան երիտթուրքական ակումբները, քաղաքներից թափանցելով նաև գավառները։ 1909 թ. մարտի 21-ի արխիվային մի փաստաթղթում նշվում էր. «Միության և առաջադիմության» կոմիտեի վանի ակումբը կարողացավ իր բաժանմունքներն ստեղծել Շատախում, Սարայում և Արճեշում[54]։ Տարբեր շրջաններում այդ ակումբները տարբեր անվանում ունեին. Մուշում, օրինակ, կոչվում էին «Մուհամմեդիե», Էրզրումում՝ «Ջերիեղի իթիհադ» («Լուսավորություն») և այլն[55]։ Երիտթուրքերը հայտարարում էին, որ ակումբների նպատակը քրիստոնյաների ու մահմեդականների փոխհարաբերությունների կանոնավորումն ու մերձեցումն է և մասսաներին հավատացնելու համար նրանց մեջ ընդգրկում էին նույնիսկ շարքային հայեր ու թուրքեր[56]։ Սակայն հետագայում նրանք հավաքարձնին բացատրում բնչերին, մահմեդական մոլեռանդ հոգևորականներին, պինվորներին, համիդիական քրդերին, որոնք անցյալում աչքի էին ընկել իրենց բռնություններով ու ոճրագործություններով։ 1912 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ Մուշի դաշտում երիտթուրքական ակումբներում ընդգրկված են «կառավարական այն բոլոր պաշտոնյաները, որոնք հանցանք մը ունեին և անցյալին մեջ գեղումներ գործած էին, այսպես ամրացնելու համար իրենց դիրքը, պաշտոնը, իրենց բռնությունները...»[57]։ Երիտթուրքական ակումբները զինավարվելով իթթիհատական կառավարության ցուցումներով, իսկորեն հետևում էին բնակչության և անհրաժեշտության դեպքում գործադրում վճռական միջոցներ[58]։

Պահպանելով հին պետական մերենան, իթթիհատի պարագլուխները հովանավորեցին իրենց վայրագություններով ու ոճրագործություններով ճանաչված համիդյան պաշտոնյաներին[59]։ Ջբավարարվելով դրա-

---

[54] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊՄԱ, ֆ. 2000, գ. 6948, թ. 132։

[55] Տե՛ս նույն տեղում, գ. 7716, թ. 51, ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 1647, թ. 3։

[56] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 1644, թ 65, 76։

[57] «Բյուզանդիոն», 1912, № 4817, օգոստոսի 30։ Տե՛ս նաև Վ. Փափազյան, նշված աշխ., էջ 81, 154։

[58] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 542, թ. 68—69, գ. 1644, թ. 78։

[59] «Բյուզանդիոնը» գրում էր, որ Բիթլիսի վիլայեթի մի շարք գավառներում «կառավարական գործերը կը գտնվին էլազասինեու, տերեքյնեու և աշիրեթներու գլխավորներուն ձեռքը, նույնիսկ այս սահմանադրական կառավարության օրով» («Բյուզանդիոն», 1913, № 5016, ապրիլի 23)։

նով, նրանք Համիդյան պաշտոնյաներից շատերին առաջ քաշեցին և չնորհեցին ավելի բարձր աստիճաններ: Օրինակ, Մուշի մութասարիֆ Հյուսեին բեյը, որ, Բիթլիսի ռուսական հյուպատոսի վկայությամբ, դեռ 1904 թ. «կուրծքին կատարում էր Կ. Պոլսից ևկած հրամաններն ու հետապնդում հայերին»[60], 1909 թ. մայիսին նշանակվեց Բիթլիսի կուսակալ և շարունակելով իր նախկին ձերբակալությունները, միայն մեկերիս ամսվա ընթացքում ազատեց 16 հայ[61]:

Ալի փաշան դեռ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին Տարոնում հռչակվել էր իր դաժրելի արարքներով: 1898 թ. նա բնաջնջեց Սասունի Սպաղանք գյուղը, որի համար առաջ քաշվելով սուլթանի կողմից, նշանակվեց Բիթլիսի վիլայեթի ժամանակավոր կառավարիչ ու զորքերի հրամանատար: Բայց մեկ տարի անց՝ 1899 թ. Փափշնում (կամ Բաշկենում) հայկակաների դեմ վարած կռվում խայտառակ պարտություն կրեց և հեղինակազրկվեց: Բանակալը նրան տեղափոխեց Երզնկա և նշանակեց զորամասերից մեկի հրամանատար: 1901 թ. Բիթլիսում բնակվող իր բարեկամներից մեկին գրած նամակում նա գանգատվել էր, որ տիրապետող անձիմը չի նպաստում իր վերելքին: Լրտեսներն այդ նամակը ուղարկեցին մայրաքաղաք, և սուլթանը հրամայեց պաշտոնազրկել ու ձերբակալել նրան: 1908 թ. ապատվելով Երզնկայի բանտից, Ալի փաշան իթթիհատի կառավարության կողմից նշանակվեց ոստիկանության մինիստր, իսկ 1912 թ.՝ Բիթլիսի կուսակալ և, շարունակելով իր կիսատ թողած գործը, բաջալերեց բրդական ազանեերին՝ «մաքրազարդել երկրամասը հայերից»[62]:

Ժամանակակիցներից մեկը թվարկելով այդ ոճրագործների անունները և բնութագրելով նրանց անցյալն ու ներկան, հիշում էր. «Սրա՞նք պիտի խաղաղություն ու ապահովություն վերահաստատեն... վա՛յ մեզ և վայ մեր երկրին»[63]: Իրադարձությունների դառն ընթացքը ցույց էր տալիս, որ այո՛, դրանք էին հաստատելու «ապահովություն, կարգ ու կանոն»: Իթթիհատականները բնակչության զայրույթը մեղմելու համար հաճախ հանում էին իրենց ոճրագործ պաշտոնյաներին: Սակայն ազատելով մի տեղից, նշանակում էին մի այլ տեղ, իսկ իրերի վիճակը թող-

---

60 ՌԱՔՍ, ֆ. «Քաղաթիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 29:

61 Տե՛ս նույն տեղում:

62 Նույն տեղում, 1914, ց. 482, գ. 546, թ. 56—141:

63 «Աշխատանք», 1912, № 39—92, էջ 2:

նում անփոփոխ։ Ջորս տարվա ընթացքում (1908—1912 թթ.) միայն Վանի ու Բիթլիսի վիլայեթներում նրանք փոխեցին մի քանի վալի[64]։

Հեղափոխությունից անմիջապես հետո թուրքական կառավարությունը, ինչպես ասվեց, պետական պաշտոններում նաև հայեր նշանակեց։ Սակայն հայ պաշտոնյաների թիվը շատ քիչ էր. 1912 թ. Վանում կար 246 պաշտոնյա, որից 216-ը մահմեդական (թուրք ու քուրդ), իսկ 30-ը՝ քրիստոնյա (գերազանցապես հայ)։ 1913 թ. էրզրումի վիլայեթում կար 2193 պաշտոնյա, որից 2161-ը՝ մահմեդական, 32-ը՝ քրիստոնյա[65]։ Մահմեդական պաշտոնյաները գերիշխում էին անգամ հայաշատ գավառներում։ Որոշ ժամանակ անց իթթիհատական կառավարությունը սկսեց պաշտոնազրկել հայերին և նրանց փոխարեն նշանակել մահմեդականներ։ 1911 թ. ապրիլի 26-ին վ. Շիրկովը Բիթլիսից հաղորդում էր. երիտթուրքերը «մահուղի տակ դնելով իրենց հրատարակած հավասարության ու եղբայրության սկզբունքները, ամենուրեք արտամղում են քրիստոնյաներին և ձգտում նրանց տեղը նշանակել իրենց կողմնակիցներին»[66]։

Խախտելով իրենց իսկ հռչակած սահմանադրությունը, իթթիհատի պարագլուխները աշխատում էին որքան հնարավոր է կրճատել հայ պատգամավորների թիվը օսմանյան պառլամենտում։ Նրանց սահմանադրության համաձայն «100.000 անձ առ յուրաքանչյուր ցեղի՝ պիտի ընտրեր մեկ երեսփոխան»[67]։ Ուրեմն 2 միլիոն հայերը օսմանյան պառլամենտում պետք է ունենային 20 պատգամավոր, մինչդեռ նրանք ունեին 10 պատգամավոր։

Երիտթուրքերը կոպիտ կերպով խախտում էին նաև տեղական մնջլիսների ընտրությունների կանոնադրությունը։ Շատ հաճախ նրանք մնջլիսների պատգամավորներին ընտրում էին իրենց հայեցողությամբ և այդ նպատակին հասնելու համար կամ ընտրություններից դուրս էին հողնում բնակչության «անհուսալի» մասին, կամ զանց առնում բոլորին։ Այդ պատճառով երբեմն հայերը բոյկոտի էին ենթարկում երիտթուրքական ընտրությունները։ Օրինակ, Վանի վիլայեթում, ըստ Օլֆերևի

---

64 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 546, թ. 131։ «Աշխատանք», 1513, № 31, էջ 2—4, 1912, № 38—91, էջ 1։

65 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912, ց. 482, գ. 719, թ. 247, «Մշակ», 1913, № 116։

66 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 545, թ. 26—27։

67 Համբարձում Երամյան, Հուշարձան, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 105։

1913 թ. մայիսի 31-ի հաղորդման, «բոլոր հայերը ցուցադրական կերպով հրաժարվեցին ընտրություններից և հնազանդեցին նիստից», պատճառաբանելով, որ հայերին արված են պատգամավորների քիչ տեղեր, քան նրանք պետք է ունենային ըստ սահմանադրության։ «Թուրքական իշխանությունները երկար համոզեցին հայերին նա կենալ իրենց վարքագծից, սակայն իզուր, ընտրությունները դեռևս տեղի չեն ունեցում»[68]։

Երկրի մի շարք շրջաններում երիտթուրքերը ոտնահարում էին նաև լրկերի իրավունքները։ Խնուսում, Գևնջում և Վարուչայում նրանք թրքերին մասնակից չդարձրին ընտրություններին։

Կառավարիչներն ու գավառապետերը անտեսում էին մեջլիսները, հարկ չհամարելով հրավիրել զոնե սահմանադրությամբ նախատեսված տարեկան ժողովները։

Իթթիհատի պարագլուխները համարյա անփոփոխ թողեցին համիդյան պատասխանատուներին ու ոստիկաններին, անձանց, որոնք տարիներ շարունակ տանջել ու խոշտանգել, ղրկել ու լլկել էին աշխատավոր զանգվածներին։ Միակ փոփոխությունը, որ կատարեցին նորելուկ կառավարիչները՝ այդ նրանց տեղափոխումն էր մի տեղից մի այլ տեղ[69]։ Դատավորներն ու ոստիկանները այժմ ծառայելով նոր տերերին և կատարելով նրանց կամքը, շարունակում էին նախկին անարդարությունները ու բռնությունները, վայրագությունները ու սանձարձակությունները և բնակչությանը ենթարկում նորանոր աղետների։ 1912 թ. հոկտեմբերի 13-ին Տարոնի հոգևոր առաջնորդը Մուշից գրում էր ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ին. «Թուրքական ոստիկան զինվորները (ժանդարմա), որոնց պաշտոնը գլխավորապես գավառի ապահովության հսկելն է, չարագործները հալածելով և ձերբակալելով, սակայն իրենք ավազակներին ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զոր կը ծեծեն, կը խոշտանգեն, կը կեղեքեն, որոնցմե ձրի կը ստանան իրենց և ձիերու կերակուրը. ասոնք սովորական գործերնին է, մանավանդ, երբ հայ զինվորացուները ժողովելու կերթան ու զանոնք պատրաստ չեն գտներ, կրակ ու բոց կը դառնան անոնց աղգականներու գլխուն։ Ասոնց բարբարոսական և օրինազանց վարմունքի դեմ քանիցս հնազգիրներով բողոք բարձրացուցի, իբր թե քննություն բացվեցավ, ժողովուրդներեն ոմանք հրավիրվեցան, բայց քննիչներու բոլոր ջանքն

68 ՌԱՔՍ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 329։

69 Տե՛ս «Մշակ», 1913, № 153, հուլիսի 14։ «Դրոշակ», 1909, № 2—3, էջ 21։

նղակ ճշմարտությունը ծածկել և ոսոխական վինվորները արդարացնել, ու անոնք, իրենց պետերու և կառավարության այս հայտնի պաշտպանությունեն քաջալերված, կը շարունակին իրենց բռնությունները և վայրագություննները անօգնական ժողովրդյան հանդեպ»[70]:

Երիտթուրքերը շարունակեցին Աբդուլ Համիդի ոչ միայն հայահալած, այլև հայաջինջ քաղաքականությունը ու հասցրին այն ահավոր չափերի: Դեռ 1908 թ. հեղափոխությունից անմիջապես հետո նրանց ներսեան Ահմեդ Ռիզա բեյը հայտարարեց. «Եթե հայերը շարունակեն իրենց ըրածները (այսինքն՝ պայքարեն իրենց ազգային ու սոցիալական խնդիրների լուծման համար—Ա. Հ.), մենք նոր կոտորածներ կառաջացնենք»[71]: *Նախապատրաստվեցին հայկական ջարդերը: Երիտթուրքերը ամենուրեք սկսեցին դրդել մահմեդական խաժամուժն ու վինվորներին հայերի դեմ, հայտարարելով, որ հայերը ոչ միայն «բեյլիկ (իշխանություն) կուզեն», այլև ցանկանում են ոտնատակ անել շարիաթը, բռնագրավել իսլամների ունեցվածքը: Այդ պրոպագանդայի հետևանքով մահմեդական բնակչությունը երկրի մի շարք շրջաններում հանդես եկավ հակահայկական սպառնալիքներով: Դեռ 1908 թ. օգոստոսին Բիթլիսի մահմեդականները հայտարարեցին, թե իրենք «թույլ չեն տա, որ հայերը, որոնք մինչև այժմ եղել են իրենց ծառաները, այսուհետև դառնան իրենց հավասար»*[72]: *1908 թ. հոկտեմբերին Թոքատում թուրքերը հարձակվեցին հայերի վրա և ընդհարման հետևանքով երկու կողմերից վիրավորվեցին ու սպանվեցին մոտ 40 հոգի: Նույն թվականի դեկտեմբերին ազգամիջյան խժդժություններ հրահրվեցին նաև Սրզնկայում, Բաբերդում և Էրզրումում*[73]:

1909 թ. հունվարի 9-ին Ն. Սկրյաբինը հաղորդում էր, որ Էրզրումում մահմեդականների ատելությունը հայերի նկատմամբ աճում է ոչ թե օրերով, այլ ժամերով: Երիտթուրքերից նույնիսկ նրանք, «որոնք վերջերս բացահայտորեն ազդարարում էին իրենց երախտապարտությունը հայերին՝ Թուրքիայի սահմանադրական շարժման մեջ նրանց ցուցաբերած նախաձեռնության համար... այժմ սահմանել են հայերի վրա գաղտնի հսկումներ և առաջարկել են գավառների իրենց գործակալներին՝ անհրաժեշտության դեպքում կանգ չառնել ոչ մի նոանդուն

---

[70] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 41:

[71] «Աշխատանք», 1911, № 27, էջ 1:

[72] ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 542, թ. 58:

[73] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, գ. 6862, թ. 58, 65:

միջոցի առաջ»[74]: 1909 թ. հունվարի վերջին և փետրվարի սկզբին Ամասիայում ու Մարզվանում բուրք դինվորները հարձակվեցին խաղաղ ու անզեն հայերի վրա և կոտորեցին շուրջ 200—300 մարդ: Այն հարցին, թե ինչո՞ւ նր սպանում հայերին, դինվորները պատասխանում էին. «Մեզի հրամանն այս է»[75]:

1909 թ. փետրվար-մարտ ամիսներին երիտթուրքերը ավելի բորբոքեցին հակահայկական պրոպագանդան: Նրանք ամենուրեք դինում էին մահմեդական խաժամուժին, հատկապես դպրոցներին (պարսկերեն՝ եղրայր, կարիճ երիտասարդ), որոնք նրանց քաղաքականության կենսագործման առաջամարտիկներն էին, ոչքի էին ընկնում հայերի նկատմամբ ցուցաբերած ատելությամբ ու դաժանությամբ: Նույն թվականի մարտի 2-ին Ն. Սկրյաբինը զեկուցում էր իր դեսպանին, որ բացի Էրզրումից մահմեդականների թշնամությունը հայերի հանդեպ աճում է նաև Բիթլիսի, Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում. «դրությունն այնպիսին է,— եզրափակում էր ռուսական դլխավոր հյուպատոսը,— որ կայծեր են պահանջում հրդեհ առաջացնելու համար»[76]:

Եվ այդ հրդեհը առաջացավ Ադանայում՝ 1909 թ. մարտի 31-ին (կամ ապրիլի 13-ին), որը մի քանի օրվա ընթացքում այրեց ու ավերի վերածեց Կիլիկյան Հայաստանի այդ բազմահայ ու շեն քաղաքը և նրա շրջակա մի շարք դյուղեր[77]:

---

[74] ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1909, գ. 2677, թ. 17—18:

[75] «Բյուզանդիոն», 1909, № 3765, փետրվարի 26:

[76] ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1909, գ. 2677, թ. 31: Տե՛ս նաև Ծ. Պ. Ալդայան, նշված աշխ., էջ 265:

[77] Ադանայի եղեռնի մասին հանգամանորեն տե՛ս «Կիլիկիոյ ազետը (պատկերազարդ) ականատեսի նկարագրություններ, վավերաթղթեր, պաշտոնական տեղեկագրեր, լրմբակցություններ, վիճակագրություններ, ամենեն կարևոր պատկերներով, Հակոբ Հ. Թերզյան», Կ. Պոլիս, 1912: Ա. Ադոսթիես, Հայերն ու երիտթուրքերը, Փարիզ, 1910: Սա ազդեցյամբ հույն էր և ֆրանսիացի ժուռնալիստ: Իր գիրքը գրել է ֆրանսերեն, հենվելով օտարերկրացի հյուպատոսների հաշվետվությունների, կաթոլիկ միսիոներների պաշտոնական տեղեկությունների, հուշագրերի ու նամակների, ինչպես նաև ականատեսների պատմածների վրա: Նրա գրքից որոշ հատվածներ թարգմանված են ռուսերեն (տե՛ս „Геноцид армян в Османской империи", Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, стр. 181—196), С. З., Аданские черные дни, Баку, 1909 և այլն: Ադանայի ջարդերը ավելի կամ պակաս չափով լուսաբանվել են սովետահայ մի շարք պատմաբանների աշխատություններում (տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1967: Հ. Մ. Պողոսյան, Ձեյթունի պատմությունը, Երևան, 1969: «Հայաստանը միջազգային դիվանագիտու-

Դեռ 1909 թ. մարտի վերջերից Ադանայում մահմեդականները պաշտպանի խորհրդակցություններ էին անցկացնում և մշակում հայկական նոր ջարդերի ծրագիրը։ Նրանք սկսում են վիրավորել ու անարգել հայերին, ձգտելով ստեղծել կոտորածների առիթ։ Բայց արդյունքի չհասնելով, մարտի 30-ին Ադանայի փողոցներից մեկում սպանում են երկու հայի, հաջորդ օրը՝ երրորդին ու լուր տարածում, թե գյավուրները վիրավորել են մի թրքուհու, սպանել ամուսնուն և պատրաստվում են կոտորել իսլամներին։ Մարտի 31-ի երեկոյան Ադանայի կուսակալը և մի շարք այլ պաշտոնյաներ ու հոգևորականներ, իմանալով մայրաքաղաքում կատարված հեղաշրջման մասին, որոշում են իրագործել հայկական ջարդերի ծրագիրը։ Ապրիլի 1-ի վաղ առավոտյան Ադանայի արվարձաններից մեկում դահիճները սկսում են իրենց սեւ գործը։ Առավոտյան ժամը 7-ին նրանք ներխուժում են քաղաք և, միանալով տեղի մահմեդականներին, հարձակվում են շուկայի վրա, սպանում հայերին ու թալանում նրանց։ Այնուհետև շարժվում են դեպի հայկական թաղամասը, սակայն նա են շպրտվում մի խումբ երիտասարդների ու պատանիների հակահարվածից։ Ժամը 11-ին խաժամուժը կատաղի հարձակման է անցնում, գոչելով՝ «կոտորեցնք, կոտորեցնք գյավուրներին»։ Նվ ջարդարարները հրացաններով ու կացիններով, փայտերով ու երկաթներով գետին են տապալում անզեն ու անպաշտպան հայերին, թալանում նրանց ունեցվածքը։ Երեկոյան հրդեհում են հայկական թաղամասը, այրելով նաև կենդանի մարդկանց։ Ովքեր փորձում էին աղատվել բոցերի լեզուներից, ընկնում էին թշնամու սպրդակներից[78]։

Հանկարծակիի եկած հայերն այդուհանդերձ կարողացան կազմակերպվել ու դիմադրել։ Երեք կետերում նրանք եւ շպրտեցին հակառակորդին, պատճառելով լուրջ վնասներ։ Երեկոն մի քանի հոգով փախուստի էին մատնում ոճրագործների ամբողջ ոհմակներ և օգնության հասնում պաշարվածներին։ Հայերի այս վարքագիծը ավելի էր կատա-

---

թյան... փաստաթղթերում», Երևան, 1972, Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972. *«Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ պրոֆ. Մ. Պ. Ներսիսյանի, Երևան, 1972, Ծ. Պ. Ադայան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմություն, Երևան, 1976, Շ. Տ. Թորոսյան. Կիլիկիայի հայերի հասարակական-քաղաքական կյանքը (1919—1920 թթ.), Երևան, 1969 (դիսերտացիա) և այլն։*

[78] *Տե՛ս* «Геноцид армян...», стр. 184.

ղեկնում ջարդարարներին, որոնք համալրվելով բարմ ուժերով, անցնում էին նոր հարձակման։ Ապրիլի 12-ին երիտթուրքական զորամասերը, մտնելով Ադանա, շարունակեցին ջարդերը և այրեցին այն եկեղեցիները, դպրոցներն ու հիվանդանոցները, ուր պատսպարվել էին հաղարավոր ծերեր, երեխաներ ու կանայք։ «Ազատության դինվորները» հրճվում էին իրենց գոհերի լացուկոծից, գնդակահարում փոխուսաի դիմողներին։ Նրանք սպանվածների դիակները շպրտում էին գետը, որը տանում էր դրանք դեպի Միջերկրական ծովը։ Ականատեսներից մեկը գրում է. «Ալեքսանդրետի ծովածոցը երբեք չէր տեսել շնաձկների ներխուժում։ Սպանները օրեր շարունակ դիտելով այդ տեսարանը, կատաղեցին բազմաթիվ փաստական նկարահանումներ»[79]։ Ապրիլի 15-ին Ադանայում դադարեցին հայկական կոտորածները, սակայն արվարձաններում դրանք շարունակվեցին նաև ապրիլի երկրորդ կեսին։ «Ազատության դինվորները» խուժանի հետ միասին բնաջնջեցին ու ավերեցին Ինջիրլիկ, Խրիստիան Կեյ, Աբդի-Օղլուն, Տարսոն, Կոզլուկ, Խառնի, Կենեն, Հասան Բեյլիկ, Բախչե, Լափաջլի, Հայաստա և այլ հայկական գյուղեր։

Թուրքական դահիճները 10—15 օրվա ընթացքում հրկիզեցին ու ոչնչացրին Ադանայում 1190 հայկական տուն, 5 դպրոց, 6 եկեղեցի և շուկան, Տարսոնում՝ 800 տուն, Հասան Բեյլիկում՝ 416, Բախչեում՝ 115, Լափաջլիում՝ 120, Ինջիրլիկում՝ 145, Օսմանիեում՝ 200, Ջևրիլ-Բերեքեթի շրջանում՝ 915 տուն, 6 եկեղեցի, 12 դպրոց, բազմաթիվ խանութներ ու արտադրական ձեռնարկություններ։ Ընդհանուր առմ-ը Կիլիկիայում կոտորվեց շուրջ 30.000 հայ և ավերվեց 5189 տուն[80]։ Հալեպի Ֆրանսիական հյուպատոսը, որ ականատես էր 1895 թ. էրզրումի ջարդերին, վկա լինելով նաև Ադանայի սպանդին, գրում էր. «Ես կը կարծեի այն աստեն, որ մարդկային ամենամեծ սարսափները տեսած էի, բայց այս անգամ Կիլիկիո մեջ կատարվածները գերազանցեցին առաջիններըն»[81]։

Կիլիկիայի մի շարք շրջաններում հայերը կարողացան կազմակերպվել և, հակահարված հասցնելով ջարդարարներին, պահպանել իրենց գոյությունը։ Այդպիսի շրջաններից էին Հաճընը, Սիսը, Զոր-Մարավանը, Հասան Բեյլիկը, Շարդիրը և այլն։ Թուրքական բանդաները

---

79 Նույն տեղում, էջ 188—189։

80 Տե՛ս նույն տեղում, էջ 195։ Տե՛ս նաև Ս. Պ. Աղայան, նշված աշխ., էջ 274։

81 «Դրոշակ», 1909, № 6, էջ 65։

Հաճընի վրա կազմակերպեցին մի քանի գրոհ, սակայն ամեն անգամ նա շպրտվեցին և ստիպված դադարեցրին հարձակումները։ Բնակչության դիմադրության շնորհիվ նրանք չկարողացան ներխուժել նաև Սիս։ Հասան Բեյլիկն ու Շարդերը թշնամին նվաճեց մեծ զոհերի գնով, բայց չկարողացավ ոչնչացնել բնակիչներին, որովհետև նրանք ինքնապաշտպանական համար մարտերից հետո կազմակերպված հեռացել էին[82]։

1909 թ. գարնանը ջարդերի ուրվականը սև ամպի նման կախվեց նաև Արևմտյան Հայաստանի վրա։ Մարտի 31-ին Էրզրումի մոլեռանդ մահմեդականները իրենց մյուֆթիի առաջնորդությամբ դուրս եկան մզկիթից և հայերին կոտորելու մտադրությամբ շարժվեցին դեպի հայկական թաղերը։ Սակայն հայերը խուսափեցին ընդհարումից, փակեցին կրպակներն ու արհեստանոցները և քաշվեցին տները։ Մի քանի իթթիհատականներ ներխուժեցին Սանասարյան դպրոց և «Հառաջ» ընթերի խմբագրությունից պահանջեցին հանձնել թաքցրած ռումբերը։ Նրանք խուզարկեցին շենքը և հեռացան ձեռնունայն։ Ապրիլի 8-ին մոլեռանդ մահմեդականները հայկական ջարդեր կազմակերպելու նոր փորձ կատարեցին։ Յուսուֆ փաշայի գլխավորությամբ դուրս եկան ցույցի, գոռալով. «Շատ ապրի փադիշահն ու շարիաթը» և սկսեցին ջարդել հայերի դռներն ու լուսամուտները։ Հայերն այս անգամ էլ խուսափեցին ընդհարումից։ Վայրագությունները կրկնվեցին նաև ապրիլի 9-ին, սակայն հետադիմական ուժերը Էրզրումում չկարողացան հասնել իրենց նպատակին[83]։

Վանում սուլթանի կողմնակիցները, լսելով մայրաքաղաքի հեղաշրջման և Ադանայի կոտորածների մասին, 70 դինվորով շարժվեցին Այգեստանով՝ «Կեցցե՛ սուլթանը, կորչի՛ սահմանադրությունը», «Կորչի՛ աղատությունը, մենք ցանկանում ենք միայն շարիաթ» աղաղակներով[84]։ Ապրիլի 21-ին նրանք, միանալով քրդական ցեղապետներին (Քյոռ Հյուսեին, Շաքիր աղա, Միր Մհե, Սեիդ Ալի և ուրիշներ), պատրաստվեցին կոտորածների։ Սակայն շուրջ 7000 հայեր, հավաքվելով կուսակալի բնակարանի առջև, պահանջեցին կանխել իրենց գլխին կախված վտանգը։ Յավեր փաշան փորձեց խոստումներով հանդստացնել, բայց

---

82 Տե՛ս Հակոբ Թերզյան, նշված աշխ.։ Ս. Զավարյան, նշված աշխ.։ Ե. Ղ. Սարգսյան, նշված աշխ., էջ 262—266։

83 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1909, գ. 2677, թ. 46, 53—54։

84 Նույն տեղում, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 717, թ. 19։

նրանք պատասխանեցին. «խոսումները չեն կարող վատահություն ներշնչել, քանի որ Աստանայի կուսակալին ըրած խոսումներուն հակառակ՝ դարձյալ հայերը խաբվելով կը կոտորվին»[85]: Կուսակալը ձերբակալեց 40—50 «խռովարար», ապա հայտարարեց, որ պրանց կպատժի այն ժամանակ, երբ վաննցիները հայտնեն, թե իրենք «ըստ ամենայնի գոհ են իրենց վիճակեն»[86]:

Խարբերդում 1909 թ. մարտի 31-ին մահմեդական հոգևորականներն ու համիդյան նախկին պաշտոնյաները հետապրնցին սուլթանին, որ իրենք պատրաստ են կռվել գահի համար, մնոնել հանուն նրան[87]: Դիարբեքիրում ու Մուշում մթնոլորտը այնպես էր շիկացած, որ «բոպն առ բոպն սպասվում էին կոտորածներ»[88]: Երզնկայում մարտի 31-ին առաջացավ ահավոր խուճապ. կոտորածների սարսափից փախչում էին և՛ մահմեդականները, և՛ քրիստոնյանները: Սակայն մոլլանները, անցնելով փինվորների դլուխ, սկսեցին գոչել. «շարիաթ ենք ուզում»[89]: Համարյա ամենուրեք հետադիմական ուժերը մոլեռանդ մահմեդական բնակչության մեջ պրոպագանդում էին, թե հայերն են խաթարել իսլամիզմը, թե հայերն ու սահմանադրությունը մի հասկացողություն են և նրանք բնաջնջվեն, սահմանադրությունը կվերանա: Սակայն հայերի խոհեմության և դդուշության շնորհիվ 1909 թ. Արևմտյան Հայաստանում զանգվածային կոտորածներ չծավալվեցին:

Երիտթուրքերը հետագայում ամեն կերպ աշխատում էին հետացնել իրենցից Ադանայի ոճրագործությունը: Սկզբում նրանք փորձեցին այն բարդել Աբդուլ Համիդի վրա, օդտագործելով այն հանգամանքը, որ Ադանայի ջարդերը համընկան մայրաքաղաքում սուլթանի կազմակերպած պետական հեղաշրջմանը: Սակայն այդ նրանց չհաջողվեց: 1909 թ. հուլիսի 15-ին Կովկասի ռազմական օկրուգի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ-մայոր Յուդենիչը, որ քաջատեղյակ էր իրադարձություններին, իր զեկուցագրերից մեկում նշում էր. «Երիտասարդ թուրքերը իրենք էլ գիտակցում են, որ չհաջողվեց ապացուցել Աբդուլ Համիդի մասնակցությունը այդ (Ադանայի—Ս. Հ.) սպանդին»[90]:

---

[85] «Ազատամարտ», 1909, № 42, օգոստոսի 12:

[86] Նույն տեղում, տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1909, № 3878, հուլիսի 27:

[87] Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 20, հուլիսի 15:

[88] «Մշակ», 1909, № 96, մայիսի 9:

[89] Գ. Այտընեան, Երզնկա, Գահիրե, 1947, էջ 66:

[90] «Геноцид армян...», стр. 172—173.

Ապա իթթիհատականները սկսեցին մեղքը գցել հայ քաղաքական կուսակցությունների վրա, տարածելով այն հերյուրանքը, որ իբր նրանք նախապատրաստվել էին ապստամբվել՝ քաղաքական անկախություն ձեռք բերելու նպատակով և սանձահարվել են տեղական իշխանությունների, զորամասերի ու մահմեդական բնակչության կողմից[91]: Բայց քչերը հավատացին դրան, որովհետև հայտնի էր, որ դաշնակցականները Ադանայի օրերին դեռ ողջագուրվում էին երիտթուրքերի հետ, համոզված, որ վերակառուցում են Թուրքիան, ստեղծում մի երկիր, ուր լինելու էր ազգերի համագործակցություն ու բարեկամություն, իսկ հնչակյանները 1908 թ. հեղափոխությունից հետո, սպասելով հասարակական վերակառուցումների, հրաժարվեցին Հայաստանի անկախության մասին իրենց ծրագրից:

Երիտթուրքերը, այնուհետև, փորձեցին ջարդերի պատճառը որոնել Ադանայում: Այդ նպատակով 1909 թ. մայիսին կազմեցին հանձնաժողով: Սակայն, երբ պարզվեց, որ հանձնաժողովը եկել է այն եզրակացության, թե Ադանայի ջարդերի կազմակերպիչներն ու իրագործողները երիտթուրքերն են, թունավորեցին հանձնաժողովի նախագահ, իթթիհատական կուսակցության անդամ Հակոբ Պապիկյանին ու ոչնչացրին նրա կազմած «Տեղեկագիրը»: Բարեբախտաբար, այդ «Տեղեկագրի» սևագրությունը պահպանվել էր և դեռ Պապիկյանի կենդանության օրոք տարածվել հայկական շրջաններում (1913 թ. ապրիլի 25-ին Պապիկյանի «Տեղեկագիրը» թարգմանվեց ֆրանսերեն և հրատարակվեց Փարիզում «Ֆրանսիա դը փրեսանսեն» պարբերականում): Տեղեկագրում ասված էր. «Իթթիհատ վե թեռաֆը կուսակցության անդամները Ստանայի վայրագ եղերերգության կազմակերպման և գործադրության մասնակցած են: Այս իրողությունը հաստատված է նահանգին զանազան տարրերուն կողմե, հյուպատոսներե, ամերիկացի միսիոներներե և լատին քահանաներե»[92]:

Վերջապես, երիտթուրքերը, ջանալով շեղել հասարակայնության ուշադրությունը, պաշտոնապես հայտարարեցին, որ Ադանայի ջարդերի հանցագործները 15 տեղացիներ են, որոնցից 9-ը մահմեդական, 6-ը հայ: Ապա բանտարկեցին ևս 362 մարդ (213 հայ և 149 թուրք) ու հանձնեցին զինվորական դատարանին: Դատարանը, որ բաղկացած էր Ադա-

---

[91] Նույն տեղում, էջ 173: Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1909, № 3872, հուլիսի 19:

[92] «Ատանայի եղեռնը: Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի օսմանյան երեսփոխան էֆիրնիի», Կ. Պոլիս, 1919, էջ 42: Ե. Ղ. Սարգսյան, նշված աշխ., էջ 269:

նայի ջարդերի ակտիվ մասնակիցներից ու մեղսակիցներից, ձերբակալվածների մի մասին ազատից, իսկ մյուսին դատապարտից բանտարկության՝ տարբեր ժամանակներով։ Բանտարկվածների մեծամասնությունը հայեր էին, որովհետև դատավարության ժամանակ հայոց «մեղքերն ապացուցողները» թուրքերն էին։

Գևևերալ-մայոր Յուղնիչը այդ դատավարության մասին գրում էր. «Իսկական մեղավորներն ու մարդասպանները, այսինքն՝ իշխանությունները ու մահմեդական (երիտթուրքական) զորքը չեն էլ մտածում բարնվել, որա կարիքը նրանք չեն զգում, քանի որ հենց իրենք են ոաղմական դատարանների և հետաքննչական հանձնաժողովների անդամները, հենց իրենք էլ այժմ պաշտպանում են կարգն այն երկրում, որտեղ իրենց ձեռքերով կոտորվեցին մինչև 25—30 հազ. քրիստոնյա։ Այն, ինչ կատարվում է ռազմական դատարանում, հատկապես Ադանայում, արդարադատության պատրվակի տակ, հանդիսանում է չարագույն զավեշտ արդարության նկատմամբ... Սոսկալի է այնպիսի տպավորության, կարծես թե հայերն են ջարդել 30 հազ. անզեն մահմեդական և հիմա դրա համար պատժում են նրանց»[93]։

1910 թ. ապրիլին նոր սուլթանն իր գահակալության տարեդարձի առթիվ ներում շնորհեց ձերբակալվածներին և այդպիսով ավարտվեց Ադանայի դործը[94]։

Երիտթուրքերը չհապշտացան Ադանայի արյունով։ Պահելով Դամոկլեսյան սուրը հայերի գլխին, մշակում էին ջարդերի նորանոր ծրագրեր։ 1910 թ. օգոստոսի 28-ին ախթահուչակ Բալհաթ բեյը Սիլանիկում իր կուսակցության տեղական կոմիտեի գաղտնի խորհրդակցություններից մեկում հայտարարեց. «Սահմանադրության համաձայն, բոլոր թուրք հպատակները, քրիստոնյա թե մահմեդական, հավասար են օրենքի առաջ։ Բայց դուք ինքներդ պիտի հասկանաք, թե՝ ատիկա անկարելի է։ Նախ և առաջ շերիաթը կը հակառակի այդ հավասարության, մեր ամբողջ անցյալը, հարյուր հազարավոր հավատացյալներու զգացումները հավասարության դեմ կարտահայտվին։ Մյուս կողմե, և այս ավելի կարևոր է, քրիստոնյաները իրենք նոյնպես կը հակառակին սոսը, որովհետև ոչ մեկ գինով կուզեն օսմանցի դառնալ... Հավասարության խոսք չի կրնար ըլլալ Թուրքիո մեջ մինչև այն օրը, որ բոլոր տարրերուն օսմանցիությունը կատարված իողություն մը չէ դարձած, իսկ այս

---

93 «Геноцид армян...», стр. 172.

94 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4108, ապրիլի 27։

աշխատանքը երկար և ծանր պիտի ըլլա։ Տարակոյս չկա, սակայն, որ մենք պիտի հաջողինք այդ ծրագիրին մեջ. անհրաժեշտ է միայն մեր ղրացիները հանգստացնել»[95]։

Ղեկավարվելով իբրեւ հատ պարագլուխների նման ցուցումներով, թուրքական պաշտոնյաները սկսեցին ավելի բացահայտորեն դրսևորել իրենց հակահայկական վարքագիծը և հրահրել մահմեդականներին քրիստոնյաների դեմ։ 1910 թ. նոյեմբերին «Բյուզանդիոնը» գրում էր, որ Արաբկիրի Անջրդին նահիւի մյուդիրը «թուրք տարրը կ՚զրգռե հայերուն դեմ և նույնիսկ հրաման ալած է, որ թուրքերը զենք առնեն և ջարդի սկսին»[96]։ Իսկ 1911 թ. նոյեմբերին նույն թերթը հաղորդում էր, որ Գուրուչայում մահմեդական հոգևորականները «թուրք և քուրդ գյուղերը երթալով բռնականա կ՚ընեն և ժողովուրդն ընդհանուր ջարդի կը պատրաստեն...»[97]։ Երիտթուրքական պաշտոնյաները նման վարքագիծ էին դրսևորում նաև Շատախում, Տարոնում և երկրի այլ վայրերում[98]։

Հակահայկական կոչով աչքի ընկավ երիտթուրքական բանակի ռազմական 4-րդ օկրուգի հրամանատիչ Օսման փաշան, որը 1911 թ. հունիսի 22-ին Մուշի սանջակի խասգյուղում արտասանած ճառում արդարացնում էր հայկական ջարդերի կազմակերպիչներին և մեղադրում հայերին, որոնք պայքարել են հին ռեժիմի դեմ, ցանկացել ստեղծել իրենց ազգային պետությունը։ Օսման փաշան լկտիաբար հայտարարեց. «Ծող հանդիստ մնայիք, որ չսպանվեիք»[99]։ Ապա ավելացրեց, որ կառավարությունը ոչ միայն չի ցրելու համիդիական գնդերը, այլև ապառնում է հայերի պատճառով բանտարկված քրդերին[100]։

Թուրքական իշխանությունները զինեցին մահմեդականներին և ազգամիջյան կռիվներ առաջացնելու նպատակով որոշ տեղերում զենքեր տվեցին նաև հայերին։ Մահմեդական ամեն մի ընտանիքի տալիս էին կատարելագործված երեք, իսկ քրիստոնյա ընտանիքին՝ հնամաշ երկու հրացան[101]։ 1913 թ. աշնանը Արևմտյան Հայաստանի

---

95 «Երիտասարդ Հայաստան», 1914, № 1, հոկտեմբերի 5։

96 «Բյուզանդիոն», 1910, № 4268, նոյեմբերի 8։

97 «Բյուզանդիոն», 1911, № 4595, դեկտեմբերի 6։

98 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 7—103, էջ 8։

99 «Բյուզանդիոն», 1911, № 4485, հուլիսի 27։

100 Տե՛ս ՌԱՔՍ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 719, թ. 88—90, գ. 545, թ. 89։

101 Տե՛ս նույն տեղում, 1913, ց. 482, գ. 719, թ. 348, «Աշխատանք», 1912, № 28—75, էջ 8։

մի շարք շրջաններում բաժանվել էին ավելի քան 150.000 հրացան ու անթիվ փամփուշտ[102]։

Թուրքական կառավարությունը 1913 թ. միաժամանակ մեծացրեց ոստիկանության թվաքանակը, Վանի վիլայեթում հասցնելով 1265-ից 1345-ի, Դիարբեքիրի վիլայեթում՝ 1180-ից 1260-ի, էրզրումի վիլայեթում՝ 1115-ից 1465-ի, Խարբերդի վիլայեթում՝ 980-ից 1330-ի, Սըվազի վիլայեթում՝ 1235-ից 1555-ի, Բիթլիսի վիլայեթում՝ 1290-ից 1490-ի[103]։ Կառավարությունը հայտարարում էր, թե ոստիկանության բանակը ավելացնում է բնակչության անձն ու գույքը պաշտպանելու և, հետևաբար, ոճրագործներին հետապնդելու նպատակով։ Բայց իրականում այդ բանը կատարում էր նույնպես հայկական հալածանքները սաստկացնելու, շարժումները ճնշելու համար։ Եվ պատահական չէ, որ ոստիկանները հանցագործներին «հետապնդում» էին այն ժամանակ, երբ հաստատապես գիտեին, որ արդեն անհետացել են, կամ հանդիպելիս խուսափում էին ընդհարվելուց, հաճախ էլ նրանց հետ մտնում էին «սիրալիր հարաբերությունների մեջ»[104]։ Ոստիկանները ավազակներ փնտրելու պատրվակով ներխուժում էին հայկական գյուղերը, գործադրում էին զանազան բռնություններ ու թալանում բնակիչներին։ Զայրացած գյուղացիները ասում էին. «Եթե անոնք մեր պաշտպանության համար են, լավագույնն է, որ մեզի թալանճիներուն հետ միևնույն թողուն. թող մեր տավարները հափշտակվին, քան թե ամեն օր անհանգստության պատճառն ըլլալ... ալ չենք հիշեր զանազան գործություններ, պատվոյ դեմ հայտնի ու դաղտնի արարքներ»[105]։

Երիտթուրքերը ստեղծեցին հակահայկական տեռորիստական ու չարդարարական կազմակերպություններ։ 1914 թ. հունվարի սկզբներին էրզրումում հիմնեցին «Թուրքերի ուժը» («Թուրք գյուչի») ռևակցիոն միությունը, որի գլուխ կանգնեց Համիդյան նախկին դինվորական Համիդ փաշան։ Կարճ ժամանակամիջոցում միության անդամների թիվը հասավ 200-ի։ Միությունը զանազան ճանապարհներով զենք էր հայթայթում ու զինում մահմեդականներին ու տեռորի ենթարկում հայերին։ Էրզրումի զլխավոր հյուպատոս Ադամովը «Թուրքերի ուժի» գործունեության մասին 1914 թ. փետրվարի 15-ին գրում էր, թե նրա նպա-

---

102 Տե՛ս «Մշակ», 1913, № 129, հունիսի 14։

103 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5073, հուլիսի 1։

104 «Բյուզանդիոն», 1912, № 4641, հունվարի 30։

105 «Բյուզանդիոն», 1913, № 5131, սեպտեմբերի 9։

տակն է պաշտպանել հայրենիքը արտաքին ու ներքին թշնամիներից, վերջիններիս տակ «նկատի ունենալով գլխավորապես հայերին»[106]։

Երիտթուրքերը լայնացրին նաև լրտեսական ցանցը։ Նրանց գործակալները ամենուրեք հետևում էին հայերին, նրանց մասին հորինում զանազան հերյուրանքներ և բանտարկում։ Նույն Ադամովը գրում էր. «Բավական է մեկը հայհոյի կուսակալին, թե այսինչը անհարգալից արտահայտվեց իթթիհատի մասին, ձերբակալում են ու փակում բանտում իբրև քաղաքական հանցագործ»[107]։

Իթթիհատի պարագլուխները հայկական հալածանքներ սկսելին նաև մամուլի միջոցով։ Մայրաքաղաքում լույս տեսնող նրանց «Թանին» («Արձագանք»), «Թասֆիրի էֆքյար» («Մտքերի նկարագրություն»), «Իկդամ» («Առաջադիմություն») և այլ թերթերն ու ամսագրերը հրատարակում էին հակահայկական թունոտ հոդվածներ, որտեղ հայերին համարում էին օսմանյան հայրենիքի դժբախտության պատճառը, անվանում դավաճաններ և այլն։ Հայկական թերթերին երիտթուրքերը արդելեցին տպագրել պատասխան հոդվածներ և պարզել ճշմարտությունը։ Անհնազանդության դեպքում պատժում էին խմբագրին և փակում թերթը։

Թուրքական կառավարությունը խստացրեց նաև հայերի մշակույթի դեմ ուղղված հալածանքները՝ խոչընդոտում էր հայկական դպրոցների հիմնադրմանը, հայերից հավաքած գումարները որամադրում մահմեդական դպրոցներին, հսկողության տակ դնում ուսուցիչներին ու աշակերտներին, հայկական դպրոցներում նշանակում թուրք դաստատուներ, առաջարկում խույս տալ մայրենի լեզվից և կարդալ թուրքերեն գրականություն։ Իթթիհատական կառավարությունն այնուհետև լրագրողներից պահանջում էր հայկականի փոխարեն հրատարակել թուրքերեն թերթեր ու ամսագրեր, ձգտում էր իր հայեցողությամբ ընտրել կամ ձևնպատրել հայ հոգևորականներին, արգելել լուսավորչական եկեղեցու արարողություններն ու ծիսակատարությունները, փորձում էր հայոց եկեղեցին ծառայեցնել օսմանացման կամ թուրանական նպատակներին։ 1911 թ. ապրիլի 15-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը գրում էր, որ թուրքական պաշտոնյաների միջամտությունները հայոց հոգևոր գործերին սովորական բան է։ Այդ հողի վրա Էրզրումի հոգևոր առաջնորդը հարկադրված էր անդիջում կռիվներ վարել նրանց դեմ[108]։

---

[106] ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, գ. 1648, թ. 189—190։ Տե՛ս նաև Геноцид армян..., стр. 239։ Ս. Պ. Ադալյան, Նշված աշխ., էջ 335։

[107] ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, գ. 1648, թ. 16։

[108] Տե՛ս նույն տեղում, 1912, ց. 482, գ. 1647, թ. 64։

Երիտթուրքերի ազգային քաղաքականությունը դառն հիասթափություն ու բողոք առաջացրեց հայ բնակչության մեջ։ Դեռ 1908 թ. աշնանից երկրի տարբեր շրջաններից արդեն լսվում էին արդարացի արտունջներ ու դանդաղներ։ Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը Հոկտեմբերին հաղորդում էր, որ Սըվազի ու Դիարբեքիրի վիլայեթների հայերի մեջ արթնանում է բացասական վերաբերմունք սահմանադրության հանդեպ, որից սպասում էին իրենց կացության բարելավում[109]։

Ազանայի դեպքերը ավելի հիասթափեցրին հայերին, որոնք սթափվելով հեղափոխական պատրանքներից, պարզորոշ տեսան իրենց հիմքը։ 1910 թ. հունիսի 22-ին Վանի ռուսական հյուպատոսը հաղորդում էր, որ հայերը խոսվելով իրենց ակնկալություններից, գայրույթով են արտահայտվում Թուրքական կառավարության ու սահմանադրության հասցեին[110]։

Արևմտահայերի դառնությունն ու գայրույթը ավելի շեշտակի արտահայտվեցին 3000 վասպուրականցիների դիմումում։ Նրանք 1912 թ. դեկտեմբերի 11-ին դրում էին կաթողիկոսին. օսմանյան կառավարիչները «համիսլամության ծրագիր մըն ալ մշակելով և երկրի ուրիշ տարրերու, մանավանդ քրիստոնեից հանդեպ թշնամական ընթացք բռնելով ցույց ավին, որ իրենք ալ կատարյալ հետևողներն են սուլթան Համիդի քաղաքականության, և որ առաջ բերավ սահմանադրության վրա կատարյալ հիասթափություն թե երկրին և թե Եվրոպային մեջ»[111]։

Չդիմանալով Թուրքական կառավարության հալածանքներին, արևմտահայերից ոմանք մահմեդականություն ընդունեցին։ 1911 թ. Էրզրումի «Հառաջ» թերթը գրում էր, որ Կարնո և Բաբերդի գավառների մի շարք գյուղերի բնակիչներ հետապնդումներից ազատվելու համար «իսլամության դիմած են, իբրև վերջին միջոց»[112]։

Էրզրումի, Մուշի, Ախլաթի, Բայազետի և Զարսանջակի գավառների մի շարք գյուղերի բնակիչներ փորձեցին ընդունել կաթոլիկ կամ ուղ-

---

[109] Տե՛ս նույն տեղում, 1908, գ. 1644, թ. 132։

[110] Տե՛ս Վրացական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 234։

[111] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 45։

[112] «Աշխատանք», 1911, № 27, էջ 14։

զափտո բրիտանիոյուն, մեծ տերությունների հովանավորության տակ մանելու նպատակով[113]։

Արևմտահայության մի մասն էլ հարկադրված կրկին բռնեց արտագաղթի ճամփան։ Արտագաղթողների թիվն այժմ ավելի մեծ էր, քան Աբդուլ Համիդի կառավարման վերջին տարիներին[114].

1900 թ.	մեկնել է	982	մարդ.	1907 թ. մեկնել է	2644 մարդ.
1901 թ.	»	1855	»	1908 թ. »	3209 »
1902 թ.	»	1151	»	1909 թ. »	3108 »
1903 թ.	»	1759	»	1910 թ. »	5508 »
1904 թ.	»	1745	»	1911 թ. »	3092 »
1905 թ.	»	1878	»	1912 թ. »	5222 »
1906 թ.	»	1895	»	1913 թ. »	6988 »

Այս տեղեկությունները թերի են, որովհետև նշված են միայն Ամերիկա մեկնողները։ Այդուհանդերձ դրանք ցույց են տալիս, որ 13 տարվա ընթացքում արևմտահայերի արտագաղթը աճել է ավելի քան յոթ անգամ, ընդ որում եթե Աբդուլ Համիդի կառավարման վերջին ութ տարիներին մեկնել են ընդհանուր թվով 13.909, ապա երիտթուրքերի իշխանության միայն հինգ տարիներին՝ 27.127 մարդ։ Դա, իհարկե, չի նշանակում, որ բռնակալի օրոք հայ բնակչության դրությունն ավելի լավ էր, քան հեղափոխությունից հետո։ Արևմտահայերի արտագաղթի ուժեղացումը պայմանավորված էր նրանով, որ հեղափոխությունից հետո հայերը, ինչպես ասվեց, քիչ թե շատ ապատ երթևեկության իրավունք ստացան։ Այժմ նրանք կարող էին մեկնել ոչ միայն գյուղից-գյուղ կամ քաղաք, այլև արտասահման[115]։

Հայերը արտագաղթում էին իրենց հայրենիքի բոլոր գավառներից։ Ահա մի քանի վկայություններ. Սեբաստիայի վիլայեթից նրանք սկսել են «մեծ բազմություններով մեկնել արտասահման կամ մայրաքաղաք։ Երեքի ամեն շաբաթ մոտավորապես 20 կառք գաղթողներ անպակաս են»[116]։ Խարբերդի վիլայեթից «արտագաղթը զարհուրելի համեմատու-

---

[113] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 545, թ. 75, «Աշխատանք», 1911, № 29, էջ 15։

[114] Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 576, մայիսի 14։ «Հորիզոն», 1913, № 149, հուլիսի 7։ Մ. Ճիվանյան, Խարբերդը և նրա զավակները, Կալիֆորնիա, 1955, էջ 361։

[115] Տե՛ս «Մշակ», 1912, № 123, հունիսի 8։

[116] «Ազատամարտ», 1909, № 16, հուլիսի 10։

թյուններ ստացած է։ Ոչ ոք կրնա առաջն առնել»[117]։ *Մալաթիայի սանջակից միայն մեկ ամսվա ընթացքում մեկնեցին «470 ընտանիք»*[118]։ *Դիարբեքիրի վիլայեթից պարբերաբար գաղթողներն այնքան բազմաթիվ են, որ եթե այդպես շարունակվի, «հայ բոլորովին չի մնա»*[119]։ *Էրզրումի վիլայեթում տարագնացությունը սկսվում է վաղ գարնանը և ավարտվում ուշ աշնանը, երբ ձյունը փակում է երթևեկությունը։ Ճանապարհածախսի համար շատերը վաճառում են իրենց ունեցվածքը*[120]։ *Վանի վիլայեթներից «գաղթի հոսանքը օր օրի աճում է»*[121]։

Արևմտահայերը մեկնում էին Ամերիկա, Աֆրիկա, Եվրոպա՝ հատկապես Ռուսաստան։ Արտագաղթողների շուրջ 45 տոկոսը գնում էր Ամերիկա, 40 տոկոսը՝ Ռուսաստան և 15 տոկոսը՝ Եգիպտոս ու եվրոպական երկրներ[122]։ *Դեպի Ամերիկա էին մեկնում գերազանցապես Խարբերդի, Դիարբեքիրի և Սըվազի, իսկ Ռուսաստան՝ Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներից։ Արտագաղթողների մեծ մասը, թերևս 70 տոկոսը, 16—35 տարեկան երիտասարդներ էին*[123]։ *Մեկնում էին սովորաբար տղամարդիկ, բայց 1908 թ. հետո սկսեցին մեկնել նաև կանայք։ 1908 թ. Ամերիկա գնացած 3209-ից 1202-ը կամ ավելի քան 35 տոկոսը կանայք էին*[124]։

Արևմտահայերի արտագաղթը բնակչության սովորական տեղաշարժ չէր, այլ կատարյալ աղետ, ավեր ու բնաջնջում։ Այդ արտագաղթի հետևանքով քայքայվում էին երկրի արտադրողական ուժերը, կաշկանդվում հասարակական առաջընթացը, թուլանում էր ժողովրդի դիմադրական ճակատը և ավելի դժվարանում նրա ազատագրության գործը։ Բուրք կառավարիչների հայաջինջ քաղաքականության հետևանքով ինչպես XIX դարի վերջին, այնպես էլ XX դարի սկզբին արևմտահայերի թիվը նվազեց, 1876 թ. 3 միլիոնից 1912 թ. իջնելով 2—2,5 միլիոնի։ Սակայն դավանափոխից ու արտագաղթից արևմտահայության սոսկ փոքր մասը, իսկ մեծ մասը մնաց իր հայրենիքում ու շարունակեց պայքարել սոցիալական ու ազգային ազատագրության համար։

---

117 «Ազատամարտ», 1909, № 20, հուլիսի 15։

118 Տե՛ս «Մշակ», 1913, № 110, մայիսի 22։

119 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, թ. 68։

120 Տե՛ս «Մշակ», 1913, № 100, մայիսի 10, № 109, մայիսի 21։

121 «Աշխատանք», 1912, № 38—92, էջ 4։

122 Տե՛ս «Մշակ», 1913, № 172, օգոստոսի 2։

123 Տե՛ս նույն տեղում։

124 Տե՛ս «Հորիզոն», 1910, № 38, փետրվարի 18։

* * *

Իլթիհատի կառավարությունը ազգային հալածանքների էր ենթարկում նաև բուրդ աշխատավորներին։ Ղևկավարվելով օսմանիզմի գաղափարներով, երիտթուրքերն աշխատում էին ձուլել քրդերին և թուրքացնել, այդ նպատակով օգտագործելով նրանց մահմեդական զավանանքը։ Իլթիհատի պրոպագանդիստներից մեկը՝ Սուլեյման Նազիֆ էֆենդին 1912 թ. «Հակկը» («Ճշմարտություն») ԹերԹում տպագրած «Արևելյան Անատոլիի բարեկարգումը» հոդվածում կշտամբում էր սուլթաններին այն բանի համար, որ նրանք դարերի ընթացքում չեն կարողացել ձուլել քրդերին։ Նա գրում էր. «Մեծ քյուրդերը թուրքերին չեն խոսիր, հանցանքն իրենցը չէ, այլ օսմանյան տերությանը, որ չորս հարյուր տարին ի վեր ԹևրացաԾ է իր գլխավոր պարտականությանց մեջ»։ Ապա՝ անհապաղ «պետք է կրթել զանոնք»[125], այսինքն՝ թուրքացնել։

Քրդերին ձուլելու նպատակով երիտթուրքերը նրանց գյուղերում բնակեցնում էին թուրք մուհաջիրներ, բացում դպրոցներ, դասավանդումը վարում թուրքերեն լեզվով։ Բավական է նշել, որ 1914 թ. վանի վիլայեթում կար 40 քրդական նախնական դպրոց, սակայն ոչ մեկում երեխաները քրդերեն չէին սովորում[126]։ «Աշխատանքը» գրում էր. քրդական դպրոցներում «քրդական լեզուն, գրականությունը, պատմությունը, հայրենագիտությունը... տեղ չունին»[127]։

Իլթիհատի կառավարությունը վայրագ հալածանքի էր ենթարկում հատկապես եզիդիներին[128], ազգային ճնշումները զուգակցելով նրանց կրոնական հետապնդումներով։ Նա ձգտում էր ոչ միայն թուրքացնել, այլև մահմեդականացնել եզիդիներին, բնաջնջել դարերից ի վեր գոյատևող և իր ինքնատիպությունն արիաբար պահպանող քրդական այդ զանգվածը։

Օգտագործելով քուրդ աշխատավորության հետամնացությունն ու կրոնական ղեգամոնները, երիտթուրքերը աշխատում էին նրա սոցիալական ու ազգային-ազատագրական շարժումներին տալ կրոնական բնույթ և ուղղել քրիստոնյաների, մասնավորապես հայերի դեմ։ Այդ նպատակով նրանք պրոպագանդիստներ էին ուղարկում հատկապես քրդաբնակ շրջաններ։ Իլթիհատական պրոպագանդիստները սահ-

---

[125] «Բյուզանդիոն», 1912, № 4696, ապրիլի 5։

[126] Տե՛ս «Աշխատանք», 1914, № 24—170, էջ 2։

[127] Նույն տեղում։

[128] Քրդերը մահմեդականացվեցին VII դ., բայց նրանց մի մասը մնաց հեթանոս և հայտնի է եզիդի անունով։

մանագրությունը մեկնաբանում էին իսլամիզմի (այսինքն՝ շովինիստական) ոգով և ամենուրեք զրգռում բրդերին հայերի դեմ։ Օրինակ, Շեյխ Աբդուլ-Բաքին ու մոլլա Սելիմը 1912 թ. Նոյեմբերին շրջում էին Վանի ու Բայազետի շրջաններում և բնակչության մեջ տարածում հակահայկական ու հակառուսական բովանդակությամբ գրքույկներ[129], թռուցիկներ, որոնցով բորբոքում էին բրդերի ընչաքաղցությունը հայերի ունեցվածքի հանդեպ։ «Բիրժևայա վեդոմոստի» ընթերակից Օլդենբուրգ, Արևմտյան Հայաստանում շրջագայելուց հետո, 1913 թ. մայիսին Թիֆլիսում կարդացած իր դասախոսության մեջ հայտարարում էր. «Ես իմ աչքով տեսա, թե ինչպես թյուրքական երկրորդ պատգամավորներ շրջում էին բրդերի մեջ և մղում հակաքրիստոնեական շարժում։ Ես ձեռքիս տակ ունեմ մի թռուցիկ, որի մեջ այդ քաջարի ասպետները թալանի գործածքներով պրովոկացիա են անում հայերի մասին, առհասարակ քրիստոնյաների դեմ գրգռելով թյուրքական խուժանների կրքերը... և այդ «գործիչները» վարվում են միանգամայն որոշ ծրագրով, որովհետև գիտակցում են բրդական շարժման բովանդակ սպառնալիքները»[130]։

1913 թ. հոկտեմբերի 26-ին Էրզրումի գլխավոր հյուպատոս Ադամովը գրում էր, թե իթթիհատը միջոցներ է ձեռնարկում, որ բրդական շարժման «սուր ծայրն ուղղի հայերի դեմ» և հայկական ջարդեր կազմակերպելու նպատակով միայն Վանում 1913 թ. առաջին կեսին բրդերին բաժանել է շուրջ 800 հրացան[131]։

Երիտթուրքերը ազդային դաժան հալածանքների ու ճնշումների էին ենթարկում նաև ասորիներին։ Նրանց նպատակն էր Արևմտյան Հայաստանի մյուս ժողովուրդների հետ միասին ձուլել կամ արտաքսել նաև ասորիներին և այդ հղանակներով հասնել թուրքական միատարրության։ Իրենց նպատակի իրագործման համար իթթիհատի պաշտոնյաները, բռնությունների հետ միասին, փորձում էին ասորիներին հալածատափոխել նաև դրամի միջոցով։ 1910 թ. օգոստոսի 25-ին Օլֆերևը հաղորդում էր իր դեսպանին, թե վանի կուսակալը «իբրև գաղտնիք ինձ հայտնեց, որ հույս ունի փողի օգնությամբ դարձնել նրանց (ասորիներին—Ա. Հ.) մահմեդականներ և միջնորդել է (կառավարության առաջ) այդ նպատակով բաց թողնել... շուրջ 2000 լիրա»[132]։

129 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Դեսպանությունը Կ. Պոլսում», գ. 1603, թ. 64։

130 «Մշակ», 1913, № 115, մայիսի 29։

131 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 348։

132 Նույն տեղում, 1911, ց. 482, գ. 719, թ. 77։

Սակայն կուսակալի այդ փորձը, ինչպես և պետք էր սպասել, անհաջողության մատնվեց: Ասորիների մեծ մասը շարունակեց պայքարել իր լեզվի ու հավատի համար նաև երիտթուրքերի կառավարման տարիներին: Բայց ասորիների մի փոքր մասը հարկադրված եղավ ընդունել բողոքականություն ու հատկապես կաթոլիկություն, հուսով, որ Եվրոպական տերությունները կիրևիևացնեն իրենց կացությունը: Սակայն նրանց հույսերը չարդարացան: Ասորիների մի մասն էլ բռնեց արտագաղթի ճամփան՝ դեպի Ամերիկա, Եվրոպա, մասնավորապես Ռուսաստան, անգամ Իրանի ռուսական ազդեցության տակ գտնվող շրջանները[133]:

Երիտթուրքերը ձուլման քաղաքականություն էին վարում նաև լազերի, չեչեններ, չերքեզների, ինգուշների և Կովկասից Թուրքիա գաղթած ու Արևմտյան Հայաստանի այլ ժողովուրդների նկատմամբ: Իրենց նպատակին հասնելու համար նրանք օգտագործում էին այդ ժողովուրդների կրոնական զգացմունքները, խրախուսում նյութական որոշ հատկացումներով, չէին բացում ազգային դպրոցներ, կուլտուրլուսավորական այլ հաստատություններ և պահելով խավարի ու տգիտության մեջ, նրանց կրոնական մոլեռանդությունն ուղղում էին բրիստոնյաների, մասնավորապես հայերի դեմ: Սերմանելով ազգամիջյան թշնամություն, երիտթուրքերն աշխատում էին շեղել նրանց ուշադրությունը դասակարգային պայքարից:

Ժողովուրդներին երբեմն ազատություն ու հավասարություն, ապահովություն ու զարգացում, տնտեսական ու քաղաքական բարելավում խոստացող իթթիհատականները գործնականում նրանց նկատմամբ շատ ավելի դաժան ու արնախում էին, քան իրենց նախորդ կարմիր սուլթանը: 1912 թ. հուլիսի 27-ին «Պրավդան» գրում էր, որ երիտթուրքերն առաջին իսկ քայլից վանեցիներից կայսրության ժողովուրդների համակրանքը և դրսևորեցին լիբերալ բուրժուազիայի բոլոր արատներն ու թուլությունները: Հայտարարելով իրենց ազատամիտներ, գործով հանդես եկան որպես ամենաթունդ անհարյուրակային նացիոնալիստներ, բուրժուական խոտասիրտ հասարներ: Սլավոններին, հայերին, հույներին և այլոց թուրքացնելու նրանց ձգտումը «ընդունից ավելի կոպիտ ու համառ բնույթ, քան Աբդուլ Համիդի օրոք»[134]:

---

[133] *Տե՛ս նույն տեղում, թ. 141:*

[134] «Геноцид армян...», стр. 222.

2. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՅՈՒՂԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Աբդուլհամիդյան բռնապետության դեմ պայքարելիս, երիտթուրքական առանձին գործիչներ ժողովրդական զանգվածների համակրանքը նվաճելու համար հայտարարում էին, թե ովքեր այս կամ այն կերպ զրկվել են իրենց հողատարածություններից, նա կառավարության անվճար, անգամ այն դեպքում, երբ դրանց վրա հաստատվել են Բալկաններից ու Կովկասից ներգաղթած մահմեդականները (մուհաջիրները)[135]։ Բայց անցնելով իշխանության ղեկին, նրանք հրաժարվեցին իրենց խոստումներից։

Դեռ 1908 թ. սեպտեմբերին երիտթուրքերը հայտարարեցին, որ գյուղացիներին հողով պետք է բավարարել վարկավորման եղանակով[136], այսինքն՝ պետական միջոցներից վարկ բաց թողնել գյուղացիներին, որ փրկագնեն իրենց հողամասերը կամ ձեռք բերեն նոր տարածություններ, հետո վարկը մաս-մաս վերադարձնեն արքունիք։ Սկզբում նրանք վարկաչափը որոշեցին 60.000, ապա բարձրացրին 100.000 ոսկու[137]։ Սակայն աղաները ու մահմեդական գյուղացիները հայերին հողամաս չէին վաճառում։ Հայերը ցանկանում էին նա ստանալ իրենց հողերը և ոչ թե փողային հատուցում։ Այդ ժամանակ երիտթուրքերը առաջ քաշեցին այնպիսի պայմաններ, որոնք հազիվ թե կարողանային հաղթահարվել հայերի կողմից։ Այսպես, օրենքներից մեկով սահմանում էին, թե այն հայերը, որոնք լքել են իրենց հողամասերը կամ ղիջել պարտքի դիմաց, այլևս իրավունք չունեն նա պահանջելու դրանք, լավագույն դեպքում կարող են ստանալ գինը։ Եթե նրանց հողերի վրա հիմնվել են մուհաջիրների գյուղերը, ապա չի կարելի զրկել այդ գյուղերը։ Հայերը կարող են պահանջել իրենց հողերի արժեքը, այն էլ նոր գներով, անհամաձայնության դեպքում կարող են դիմել դատարան[138]։ Ակնհայտ է, որ իթթիհատականների նպատակը հայերին իրենց թանկարժեք հողամասերից զրկելն էր։

Մի այլ օրենքով արգելվում էր ձեռք տալ նրանց, ովքեր հայերի հողերի վրա արդեն կառուցել կամ վերանորոգել էին տներ, վարել ու ցանել

135 *Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1907, պ. 1643, թ. 239—243։*

136 *Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, պ. 6849, թ. 88։*

137 *Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, պ. 39, թ. 33, «Բյուզանդիոն», 1912, № 4724, մայիսի 10, № 4834, սեպտեմբերի 19։*

138 *Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4140, հունիսի 7։*

այդ հողերը կամ հատուցում կառավարության բողովքյամբ։ Այդպիսի դեպքերում հայերին առաջարկվում էին դրամական հատուցումներ կամ նոր վայրեր։ Չհամաձայնվողները կարող էին դիմել դատարան։ Օրենքով վարձակալողները (այսինքն՝ սուլարաթիլ մարաբաները) իրավունք չունեին աղաներից հող պահանջել։ Բայց նրա վերջիններս հափշտակել են նրանց հանդակները, իշխանությունները պարտավոր են քննել նրանց վեճը։ Դժգոհ մնացողները կարող են դիմել պետական խորհուրդ, բայց միայն այն դեպքում, երբ իրենց իրավացիությունը հաստատեն լրացուցիչ փաստաթղթերով։ Բողոքարկման համար սահմանվում էր կոնկրետ ժամկետ, որից հետո դիմումները չէին ընդունվում։ Իշխանությունները իրենց որոշումները կենսագործում էին ոստիկանության միջոցով, անհնազանդների համար նախատեսվում էին դանդաղ պատիժներ[139]։ Մի խոսքով, իթթիհատականները ձգտում էին անխախտ թողնել ստեղծված իրավիճակը, ստիպելով հայերին՝ ընդմիշտ հրաժարվել իրենց հողային պահանջներից։

Երիտասարդ թուրքերը մի ուրիշ օրենքով սահմանեցին վարչական կարգով լուծել հողային հարցը։ Այդ օրենքը հրատարակելիս նրանք ճեպնում էին, թե իբր կատարում են հայ գյուղացիության մասսայական պահանջը, որը, հասկանալով նոր կառավարիչների խաղերն ու դավերը, արդեն խնդիր էր դնում՝ բռնությամբ վերադարձնել աղաների կողմից հափշտակված իրենց հողերը։ Սակայն իթթիհատականները այդ օրենքի հետ մեկտեղ հանձնարարում էին պաշտոնյաներին հաշվի առնել հետևյալ հանգամանքները. 1. Եթե վիճող կողմերը կներկայացնեն հավասարազոր փաստաթղթեր միևնույն հողամասի համար, ապա նրանց գործը քննել դատարանում։ 2. Եթե կողմերից մեկը ունի փաստաթուղթ, իսկ մյուսը չունի, ապա հողամասը տալ ունեցողին։ 3. Եթե երկու կողմերն էլ չունեն փաստաթուղթ, ապա հողամասը թողնել նրան, ով դրա համար տուրք է վճարում։ 4. Այն հողամասերը, որոնք բռնագրավված են 1908 թ. անմիջապես հետո, անհապաղ, առանց դատարանի, վերադարձնել տերերին։ Եվ, վերջապես, 5. Խուսափել Աբդուլ Համիդի կառավարման տարիներին առաջացած հողային վեճերի քննարկումներից[140]։

Հասկանալի է, որ իթթիհատականները, երբ առաջարկում էին խուսափել հին ռեժիմի ժամանակ ծագած վեճերից և զբաղվել միայն

[139] Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5026, մայիսի 7։

[140] Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4753, հունիսի 14։ «Հորիզոն», 1910, № 131։

նորերով, ձգտում էին մի կողմից օրինականացնել աղանների բռնապրավումները, իսկ մյուս կողմից՝ նրանց վերադարձնել անգամ այն հանդակները, որոնք նա էին խլել գյուղացիները հեղափոխությունից հետո։ Ինչ վերաբերում է փաստաթղթերին, որոնց մասին ակնարկում էին նոր կառավարիչները, ապա համոզված էին, որ աղանները անպայման կունենան դրանք, իսկ եթե չունենն, դժվար չէր ձեռք բերել և գործը վճռել իրենց օգտին։

1913 թ. փետրվարին երիտթուրքերը հրատարակեցին հողային մի շարք նոր օրենքներ, որոնցով, իբր, փորձում էին լուծել ագրարային հարցը։ Փետրվարի 5-ի օրենքով ամբողջ երկրում պետք է անցկացվեր յուրաքանչյուր հողամասի հաշվեհամար, հանձնելով տերերին համապատասխան փաստաթուղթ։ Փետրվարի 16-ի օրենքով իրավունք էր տրվում անշարժ գույքը ժառանգելու ինչպես ամուսիններին, այնպես էլ հարազատների երրորդ պորտին կամ սերնդին։ Դրանով զգալիորեն ընդարձակվում էին պետական (միրի) ու մահմեդական հոգևոր (վակֆային) հողերի ժառանգության շրջանակները։ Փետրվարի 21-ի օրենքով թույլատրվում էր բոլոր այն պաշտոնական հիմնարկություններին, առևտրական, արդյունաբերական, շինարարական ու գյուղատնտեսական ընկերություններին, որոնց անդամները թուրքահպատակներ էին, ձեռք բերել հողային տարածքներ նաև իրենց բնակավայրերից հեռու ընկած շրջաններում։ Փետրվարի 25-ի օրենքով երիտթուրքերը իրավունք էին տալիս բանկերին ու ընկերություններին՝ ծավալելու հիպոթեկային (գրավդրման) գործունեություն ինչպես քաղաքներում, այնպես էլ առևտրական կետերում։ Վարկ վերցնող պարտապանը կարող էր գրավ դնել իր տունն ու հողամասը։ Այս օրենքը տարածվում էր գերազանցապես մեծ քաղաքների շրջակայքում ապրող բնակչության վրա։ 1914 թ. մարտի 30-ի օրենքով երիտթուրքերը թույլատրում էին միրիների ու վակֆերի տերերին՝ վաճառել դրանք, գրավ դնել, վարձակալության տալ, նվիրել և այլն[141]։ Այդ օրենքների իրագործումը կարող էր որոշ չափով նպաստել գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Սակայն դրանք իթթիհատական կառավարության անվճռականության, իսկ հետո նաև առաջին համաշխարհային պատերազմի պատճառով մնացին հիմնականում թղթի վրա։

---

[141] *Տե՛ս Х. З. Габидуллин, նշված աշխ., էջ 134։ Г. З. Алиев, նշված աշխ., էջ 163—164։*

Երիտթուրքերը գյուղացիական զանգվածներին խաբելու համար հրատարակում էին նաև հողային հարցի լուծման նախագծեր։ Դրանք վերաբերում էին հատկապես այն գյուղացիներին, որոնք փախել էին համիդյան ջարդերից, իսկ հեղափոխությունից հետո վերադարձել հայրենիք։ Նախագծերից մեկում այդ գյուղացիները բաժանվում էին երեք մասի՝ 1. օսմանյան հպատակությունից կամավոր հեռացողներ, 2. համիդյան իշխանությունների կողմից օսմանյան հպատակությունից հանվածներ, 3. արտագաղթածներ կամ փախստականներ, բայց իրավաբանորեն թուրքական քաղաքացիներ։ Առաջինները իրավունք չունեին պահանջելու իրենց հողերը, իսկ երկրորդներն ու երրորդները կարող էին պահանջել, բայց կառավարին դրանք միայն այն դեպքում, եթե ներկայացնեին թափու (գնման կայքագիր)։ Ընդ որում, եթե նոր տերերը հայրենիք վերադարձող հայ գյուղացիների հողերի վրա կառուցել են տներ, ապա վերջիններս պարտավոր են վճարել դրանց արժեքը, իսկ եթե կառուցել են գործարաններ, ջրանցքներ ու նրանց հողերից քանկ արժեցող շինություններ, ապա նոր տերերը կարող են մերժել հայրենադարձների պահանջները և առաջարկել նրանց հողերի գինը։ Նախագիծը մերժում էր հայերի հողերի վերադարձումը նաև այն դեպքում, եթե նրանց հանդակները տրվել են մուհաջիրներին կառավարության որոշումով, եթե տարագիրները իրենց հողամասերը թողել են հարազատներին և այլն։ Նախագծի վերջում ասվում էր, որ դժգոհները կարող են դիմել դատարան[142]։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս նախագիծը նույնպես բխում էր աղանների ու մահմեդական բնակչության շահերից և նպատակ ուներ ամրապնդել հայ աշխատավոր գյուղացիության իրավունքները։ Խնդիրը ոչ միայն այն էր, որ աղաներն ու մահմեդականները զանազան հնարավորներով կարող էին ապացուցել իրենց կառույցների թանկարժեքությունը, այլև այն, որ հայ գյուղացիները, փախչելով համիդյան յաթաղանից, կորցրել էին իրենց թափուները կամ զայրույթից պատռել դեն էին շպրտել դրանք՝ իբրև թուրքական արյունոտ ռեժիմը հիշեցնող մի բան։

Երիտասարդ թուրքերը իրենց մի այլ նախագծով ծրագրում էին հավաքել հողազուրկ ու սակավահող հայերին, տեղափոխել և բնակեցնել Միջագետքի խամ ու խոպան վայրերում։ Իրենց հակամարդկային այդ պլանը փորձում էին արդարացնել նրանով, որ իբր ուզում են այդ եղա-

---

[142] Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4329, հունվարի 5։

նակով պահպանել Արևմտյան Հայաստանում բնակչության խաղաղությունը, որ բղխի, ավելի ճիշտ՝ քուրդ աղանների ու հայերի միջ «ատելության ու թշնամության ոգի չծնի»[143]: Իթթիհատի ղեկավարները, կամենալով իրագործել այդ պլանը, հանդես էին գալիս նման հայտարարություններով ու պնդումներով արդեն կառավարական բարձրպաշտոն հաստատություններում: 1911 թ. Բուրքիայի նպարքոս Հակկը փաշան օսմանյան դահլիճում ուղղակի հայտարարեց. «Հողազուրկ հայերին կարելի է հող տալ ուրիշ վիլայեթներու մեջ, մանավանդ Միջագետքի արգավանդ դաշտերուն վրա»[144]:

Երիտթուրքերի հողային հանձնաժողովները կազմվում էին բարձրաստիճան պաշտոնյաների նախագահությամբ և մահմեդական ու քրիստոնյա երևելիների անդամակցությամբ, իսկ գյուղացիները, որոնք ավելի շատ էին շահագրգռված հողային խնդրի լուծումով, անտեսվում էին:

1910 թ. կազմված հանձնաժողովներից մեկին երիտթուրքերը հանձնարարեցին քննել հայերից բռնագրավված հողերի հարցը: Հանձնաժողովը խնդրի «ուսումնասիրությունից» հետո 1911 թ. կառավարությանը ներկայացրած զեկուցագրում Թուրքիայից տարագրված հայերի հողերը բաժանում էր երեք կարգի՝ ա) հարազատներին կամ մերձավորներին հանձնված, բ) վաճառված՝ առանց պաշտոնապես վավերացման, գ) տերերի կողմից լքված և իբրև անտեր՝ հափշտակված աղանների կողմից: Հանձնաժողովը գտնում էր, որ հողային վեճերի լուծման համար անհրաժեշտ է ամենից առաջ բարելավել հայաբնակ վիլայեթների դատարանների աշխատանքները[145]: Սակայն երիտթուրքերը շուտով ցրեցին այդ հանձնաժողովը, չտալով նրա աշխատանքներին որևէ կարևորություն:

1912 թ. նրանք ստեղծեցին նոր հանձնաժողով և հայտարարեցին, թե հողային հարցի լուծման համար այն օժտված է լայն իրավունքներով: Բայց իթթիհատի պարագլուխները այդ հանձնաժողովը շուտով ցրեցին այնպիսի պայմաններում, որ այն չկարողացավ դուրս գալ Կ. Պոլսից և որևէ գործնական քայլ չանելով ցրվեց[146]:

Այդ նույն թվականի աշնանը երիտթուրքերը կազմեցին մի ուրիշ

---

143 «Բյուզանդիոն», 1910, № 4235, սեպտեմբերի 30:

144 «Բյուզանդիոն», 1914, № 5261, փետրվարի 10:

145 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4250, հոկտեմբերի 18:

146 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 560, ց. 28, գ. 475, թ. 11:

հանձնաժողով, որի նախագահ նշանակեցին Կ. Պոլսի հայոց նախկին պատրիարք Մ. Օրմանյանին։ Սակայն վերջինս նկատելով նոր կառավարիչների խարդախությունները, մի կողմ քաշվեց, որի հետևանքով հանձնաժողովը անգործության մատնվեց և դադարեց գոյություն ունենալուց[147]։

Շուտով հողային հանձնաժողովներ ստեղծվեցին նաև Արևմտյան Հայաստանի առանձին վիլայեթներում, ուր նույնպես նախագահ նշանակվում էին բարձրաստիճան պաշտոնյաներն ու կուսակալները, իսկ անդամներ՝ մայրաքաղաքի ու տեղի երևելիները։ Սակայն այդ հանձնաժողովներն էլ ձևական էին և գործնական քայլեր կատարելիս պաշտպանում էին աղանների ու մահմեդականների շահերը։ Այսպես, 1910 թ. Բիթլիսահայականները հիմնեցին Բիթլիսի վիլայեթի հողային վեճերը քննող հանձնաժողով, որի նախագահն ու անդամների մի մասը մայրաքաղաքից էին։ Հանձնաժողովը, քննելով վեճերը, հայոց հողամասերը թողնց աղաներին ու մուհաջիրներին։ Բիթլիսի ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ հանձնաժողովը խաղաղ ճաղնց աղմկոտ հողային հարցը և ուրախությամբ մեկնեց մայրաքաղաք[148]։ Նույն թվականին նման հանձնաժողով կազմվեց Դիարբեքիրի, իսկ 1912 թ.՝ Խարբերդի վիլայեթներում։ Սակայն այդ հանձնաժողովները նույնպես լուծարքի ենթարկվեցին, չթողնելով որևէ հետք[149]։

Բիթլիսահայ պարագլուխները հողային հանձնաժողովներ ավելի հաճախ էին ստեղծում Վանի վիլայեթում, որը դասակարգային ու ազգային հակասությունների դրսևորումների նշանավոր վայրերից մեկն էր։ Այստեղ առաջին անդամ հանձնաժողով հիմնեցին 1908 թ. սեպտեմբերին, որը որևէ բան չարեց։ 1909 թ. սեպտեմբերին երիտթուրքերը Վան ուղարկեցին հայտնի Ուբեյդ Ուլլայի որդի սենատոր Աբդուլ Կադիրին, որ «հարթի» հայերի ու քրդերի միջև եղած հողային վեճերը։ Աբդուլ Կադիրը, հրավիրելով Վանում հայ ու քուրդ հոդևոր և աշխարհիկ ներկայացուցիչների խորհրդակցություն, սակայն չկարողացավ լուծել իրեն հանձնարարված խնդիրը։ Գործին միջամտեց Վանի կուսակալ Յավեր փաշան, որը դիմելով դեմագոգիայի, առաջարկեց հայերին՝ հանուն երկու ժողովուրդների «եղբայրության», ետ կանգնել իրենց պահանջներից։ Բայց տեսնելով, որ հայերը չեն նահանջում, պահանջից

---

147 Տե՛ս «Մշակ», 1912, № 279, դեկտեմբերի 15։

148 Տե՛ս ՌԱՔԻ, ֆ. «Քաղարխիվ», 1910, ց. 482, գ. 544, թ. 119։

149 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4230, սեպտեմբերի 23, № 4897, դեկտեմբերի 3։

երկու կողմերից՝ սաորագրել դեկլարացիա հողային հարցի արդար լուծման մասին։ Բնական դեկլարացիան սաորագրվեց, և խորհրդակցությունը ավարտվեց, բայց հարցը մնաց չլուծված։ Բուսական փոխհատուցաաասը, հիմնվով այդ դեկլարացիան, դրում էր, որ Աբդուլ Կադիրը այժմ կարող էր դեկուցել Կ. Պոլսի իր դեկավարներին, որ «բարեհաջող լուծեց Անատոլիայի ամենադժվար հարցը», ապա ավելացնում, որ հայերը խիստ դժգոհ են կառավարությունից այն բանի համար, որ ազգաբային խնդրի լուծման գործը ժողովրդական ներկայացուցիչների փոխարեն հանձնաբարել է բրդական աղանների ու բեյերին[150]։

Այնուհետև, երիտասարդ Թուրքերը 1912 թ. գարնանը վանում կազմեցին մի նոր հանձնաժողով, ընդգրկելով նրա մեջ հայ հայտնի վաճառականներ Պետրոս Գափամաճյանին, Գևորգ Ճիտեճյանին և մյուս պաշտոնյա Հիլմի էֆենդիին ու մյուֆթիին։ Բայց հանձնաժողովը դեռ չէր սկսել իր գործը, երբ անսպասելիորեն ցրվեց և նրա փոխարեն նույն թվականի դեկտեմբերին ստեղծվեց մի այլ հանձնաժողով՝ կուսակալի նախագահությամբ, հայոց հոգևոր առաջնորդի, Թուրքերի մյուֆթիի և մահմեդական ու քրիստոնյա երեսփոխանների անդամակցությամբ։ Այս հանձնաժողովը պետք է տեղում ուսումնասիրեր հարցը և արդյունքներն ու նյութակացություններն ուղարկեր Կ. Պոլիս՝ «վերաքննության ու լուծման համար»[151]։

Սակայն իթթիհատականները, չսպասելով հանձնաժողովի աշխատանքի արդյունքներին, 1913 թ. նոյեմբերին կազմեցին նոր հանձնաժողով, որի մեջ մտցրին երկու հայ, երկու Թուրք և մեկ հույն, պարտավորեցնելով քննել վիլայեթի հողային վեճերը և հասնել այն բանին, որ հայերին «հողերի փոխարեն դրամական վարձատրություն տրվի»[152]։

Ինչպե՞ս վերջացան այս հանձնաժողովի աշխատանքները, հայտնի չէ, սակայն կարծում ենք, որ նորկուկ կառավարիչները հավիվ թե դրանց կարևորություն տային։ Բնորոշ է, որ երիտթուրքերը դիտելով հանձնաժողովներն իբրև ձևականության, հաճախ չէին ուղևորում նրանց անելիքները։ 1913 թ. հունվարի 8-ին վանի կուսակալ Խալիթ բեյը հայտարարում էր. «Պետությունն տակավին հիմնական որոշումներ ձեռքի տակ չունենալու համար, Բ. Դռան ծանուցման համաձայն հարկ տեսնված է սպասել, այս պատճառով ան նորակազմ հանձնախումբի

150 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, պ. 717, թ. 52—53։

151 Տե՛ս «Հորիզոն», 1913, № 23, հունվարի 30, «Մշակ», 1913, № 14, հունվարի 20։

152 «Հորիզոն», 1913, № 268, նոյեմբերի 28։

աշխատանքները առժամապես պիտի դադարին ցնոր անօրինությյուն»[153]։

Իբրիհատականները ընդհանուր ու նահանգական հանձնաժողովներից զատ հողային հանձնաժողովներ էին ստեղծում նաև գավառներում։ Այսպես, դեռ 1909 թ. գարնանը Վանի կուսակալի ցուցումով հողային հանձնաժողովներ կազմվեցին Արճակի, Ալջավազի և Սարայի գավառներում, որոնք անցնելով իրենց պարտականությունների կատարմանը, գյուղացիների ճնշման տակ ստիպված եղան վերադարձնել կուսակալին, որ Քյոռ Հյուսեին փաշան, Սեիդ բեյը և ուրիշ աղաներ 15 տարուց ի վեր բռնագրավել են հայերի հողերը և մի մասին դարձնելով մարաբա, մյուսներին քշել Կովկաս[154]։ Սակայն կուսակալը անուշադրության մատնեց հանձնաժողովների վերացագրերը։

1910 թ. օգոստոսին Բիթլիսի վալիի առաջարկությամբ ստեղծվեց գավառական մի այլ հանձնաժողով, որին առաջարկվեց՝ քննել Մուշի դաշտի, հատկապես վարդենիսցիների ու մուհաջիրների հողային վեճերը։ Այդ հանձնաժողովը, ինչպես և պետք էր սպասել, եկավ այն եզրակացության, որ վիճելի տարածությունները պետք է թողնել մուհաջիրներին, այսինքն՝ չերքիզներին, իսկ հայերին հող առաջարկել այլ վայրերում[155]։

1913 թ. Վանի կուսակալը հանձնաժողով ստեղծեց նաև Աղբակում, որը պետք է զբաղվեր միայն բռնագրավված հողերի հարցով։ Նա միաժամանակ պատվիրեց հանձնաժողովի անդամներին՝ հաղորդել գյուղացիներին, որ իրենց հողերը ետ ստանալիս պարտավոր են վճարել քսան տարվա պետական տուրքերը[156]։

Այդ նույն թվականին հանձնաժողով ստեղծվեց Բաշկալեում՝ հայտնի հայատյաց, ազգությամբ հույն Կոզմա Էֆենդու նախագահությամբ, որին կուսակալը պարտավորեցրեց նույնը հաղորդել նաև այս գավառի գյուղացիներին[157]։

Երիտասարդ Թուրքերը խաբում էին գյուղացիներին նաև շրջուն դատարանների ստեղծումով։ Այդ դատարաններն իբր ունեին արտակարգ լիազորություններ և, շրջելով Արևելյան Անատոլիայում, արագո-

---

153 «Աշխատանք», 1913, № 11—107, էջ 7։

154 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 15, հուլիսի 9։

155 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1910, ց. 482, գ. 544, թ. 119։

156 Տե՛ս «Բյուզանդիոն», 1914, № 5251, հունվարի 29։

157 Տե՛ս «Մշակ», 1914, № 23, փետրվարի 1։

րեն պետք է լուծեին հողային վիճակը։ Սակայն այդ դատարանները երբեք չեղան Արևմտյան Հայաստանում և չվճռեցին որևէ խնդիր։ 1910 թ. Արխիմեդ կնճռծանունով մի բղթակից հետևյալով հարցնում էր. «Հետաքրքիր է, ո՞ւր մնաց այն քննիչ հանձնախումբը, որը բացատապես պիտի շրջեր արևելյան նահանգները և ղբաղվեր հողային խընդրով»[158]։

Երիտասարդ Թուրքերը գործնականորեն շարունակում էին արևմտահայերի հողերի բռնագրավման քաղաքականությունը։ Հետևելով Աբդուլ Համիդի օրինակին, նրանք հափշտակում էին հայերի հողերը տարբեր ճանապարհներով, ավելի հաճախ՝ երկրագործական բանկի միջոցով։ Հայտնի է, որ դեռ Աբդուլ Համիդի իշխանության տարիներին բազմաթիվ շինականներ, հնարավորություն չունենալով վճարել պետական հարկերն ու վաշխառուական պարտքերը, ստիպված էին փող վերցնել այդ բանկից, գրավ դնելով իրենց հողակտորները։ Հեղափոխությունից հետո նոր կառավարիչները չվերադարձրին նրանց հողերը և վաճառեցին[159], ապա շարունակեցին վարկավորել հայ գյուղացիներին նրանց հողերը գրավ վերցնելու պայմանով։ Միայն մեկ տարվա ընթացքում (1911—1912) նրանք վարկ տվին Էրզրումի վիլայեթում՝ 3.403 հոգ., Բիթլիսի վիլայեթում՝ 216 հոգ., Դիարբեքիրի վիլայեթում՝ 1.752 հոգ., Սըվազի վիլայեթում՝ 4.641 հոգ., Խարբերդի վիլայեթում՝ 1.643 հոգ., և, վերջապես, Վանի վիլայեթում՝ 137 հոգ. դուրուշ[160]։

Վարկի դիմաց բռնագրավված հողակտորները սովորաբար աճուրդի էին հանվում, իսկ գնողները աղանեներն էին, քանի որ հայ գյուղացիները չէին համարձակվում մասնակցել աճուրդին։ 1909 թ. «Ազատամարտը» գրում էր. «Երկրագործական պանքան չնչին փոխատվություններ կընե, գրավի տակ առնելով արժեքավոր հողեր։ Փոխատվությունը բաղադրյալ տոկոսով երթալով կը հասնի խոշոր գումարներու։ Գյուղացին չկրնար վճարել և կը զրկվի իր հողերեն։ Պանքան կը գրավե զանոնք և կը դնե աճուրդի։ Հայերը, եթե ուժ ալ ունենան, չեն կրնար մուտենալ աճուրդին, որովհետև ազդեցիկ Թուրքեր ամեն արգելք կը հանեն անոնց առջև, նույնիսկ կը սպառնան»[161]։

Երկրագործական բանկի միջոցով երիտԹուրքերը կարճ ժամա-

---

158 «Ազատամարտ», 1910, № 289, հունիսի 4։

159 Տե՛ս «Բյուզանդիոն», 1908, № 3690, նոյեմբերի 26։

160 Տե՛ս «Ազատամարտ», 1914, № 1539, հունիսի 28 (թվերը կլորացրել ենք)։

161 «Ազատամարտ», 1909, № 136, դեկտեմբերի 1։

նակամիջոցում կարողացան իրենց ձեռքը դնել հայ գյուղացիների հողերի ղղալի մասը, իսկ մի շարք գավառներում նույնիսկ կեսից ավելին։ 1913 թ. «Մշակը» գրում էր, որ նշված բանկը գրավ է վերցրել Բուլանըխում գյուղացիական հողերի 75, Մալաթիայում՝ 87, Ախլաթում՝ 97 տոկոսը և այլն[162]։ Հնարավոր է, որ այդ տվյալները չափազանցված են, սակայն աղբյուրները միաբերան վկայում են վարկի դիմաց հողերը գրավ դնելու մասսայական տարածման մասին։

Ի՞նչ քաղաքականություն էին վարում երիտթուրքերը հայոց վանական կալվածքների հանդեպ։ Հեղափոխությունից հետո նրանք երկար ժամանակ անտարբերության մատնեցին հայոց վանական կալվածքների հարցը։ 1913 թ. փետրվարի 16-ին պատրիարքարանի համառ ու հետևողական պահանջների շնորհիվ նրանք, վերջապես, չեղյալ հայտարարեցին հին վարչակարգի ժամանակ գործող այն սովորույթը, որի համաձայն հայոց կրոնական հաստատությունները չէին կարող լինել հողատերեր, այդ հողերը պաշտոնական մատյաններում պետք է գրանցվեին այս կամ այն հոգևորականի կամ անհատի անունով։ Իրրև հաստատականների հրատարակած նոր օրենքի համաձայն այդ հողերը այսուհետև պետք է գրանցվեին տվյալ վանքի կամ եկեղեցու անունով որպես նրանց սեփականություն[163]։ Նոր օրենքը ի կատար պետք է ածվեր վեց ամսվա ընթացքում, սակայն այն լուռ էր աղանների կողմից բռնագրավված վանական հողերը վերադարձնելու մասին։ Օրենքում նշված էր, որ կալվածքները կարող են գրանցվել վանքերի և եկեղեցիների անուններով միայն այն դեպքում, եթե մինչ այդ նրանց իրավական տեր անհատները ներկայանան իշխանություններին և հաստատեն, որ «իրանց անունով արձանագրված կալվածք իրանցը չէ, այլ պատկանում է այսինչ կամ այնինչ եկեղեցուն կամ դպրոցին»[164]։ Դրանով իշխանությունները նոր չարաշահումների դուռ էին բացում։

Թեպետ 1913 թ. ամռանը լրացավ ու անցավ օրենքի սահմանած ժամկետը, բայց անհատներից որևէ մեկը չներկայացավ իշխանությանը։ Դա մասամբ հասկանալի էր. անհատների մի մասը մահացել էր, փոխանցելով կալվածքները իր ժառանգներին, որոնք իրենց համարում էին կալվածքների օրինական տերեր, մի մասն էլ մեռնելով ան-

---

162 Տե՛ս «Մշակ», 1913, № 129, հունիսի 14։

163 Տե՛ս «Աշխատանք», 1913, № 24—120, էջ 7, «Բյուզանդիոն», 1913, № 4981, մարտի 13, № 5001, ապրիլի 5, № 5018, ապրիլի 26։

164 «Մշակ», 1914, № 36, փետրվարի 19։

ժառանգ, թողել էր կալվածքները անտեր և բաժին դարձրել այս կամ այն հափշտակիչին։ Կենդանի մնացողներից ոմանք առաջնորդարաններին պահանջով ներկայացան իշխանություններին, սակայն պայմանով, որ կալվածքների մի մասը չվերցնեն իրենցից։ Այդպես վարվեց, օրինակ, Արճեշի տեր Խորեն քահանան, ասելով. «Հանձն կառնեմ ստորագրել այն պարագային, եթե անոնց կեսը թողնվի իմ զավակիս»[165]։

Երիտթուրքական կառավարությունը պատրիարքարանի պահանջով վեց ամսով երկարաձգեց վանական կալվածքների մասին օրենքի կատարման ժամկետը, սակայն արդյունքը մեզ անհայտ է։ Վրա հասած համաշխարհային պատերազմը և հայկական եղեռնը այլ կերպ լուծեցին հարցը։

Իթթիհատի պարագլուխները, խոսելով վանական կալվածքների վերադարձման մասին, իրականում շարունակում էին դրանց բռնագրավումը։ Նրանք զանազան պատրվակներով հափշտակեցին Ջնքուշի ու Աղրակի վանքապատկան մի շարք տարածություններ, ինչպես նաև Մեղրեի վանական ընդարձակ կալվածքներից մեկը[166]։ Իրենց այդ վարքագիծը երիտթուրքերը փորձում էին արդարացնել նրանով, թե իբր կալվածքների տեր համարվող անհատները տարիներ շարունակ չեն վճարել պետական տուրքերը։ Նրանք սեփականացնում էին անգամ վանական այն տարածությունները, որոնք կառավարական ֆերմաններով հարկման ենթակա չեն եղել, իսկ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի բողոքները կա՛մ զանց էին առնում, կա՛մ մերժում՝ հայտարարելով, թե իբր այդ տարածությունների վրա հայկական վանքերից ու եկեղեցիներից առաջ կառուցված են եղել մահմեդական մզկիթներ։

Սակայն հայ ժողովուրդը համառ ու հետևողական պայքարի շնորհիվ որոշ տեղերում կարողացավ ետ ստանալ իր վանքապատկան կալվածքները։ Այսպես, նա ետ ստացավ Հայդարանցի քրդերի կողմից ղավթված Արճեշի Մեծոփա վանքի հողերը, ուր բնակեցվեցին 40—50 հայ հողագործ ընտանիքներ։ Որոշ ժամանակ անց ետ վերադարձվեցին նաև Բալուի Քաղցրահայեաց վանքի, ինչպես և Վասպուրականի ու Տարոնի եկեղեցապատկան ու վանքապատկան մի քանի հողակտորները[167]։

---

165 «Բյուզանդիոն», 1913, № 5131, սեպտեմբերի 9։

166 Տե՛ս «Մշակ», 1912, № 130, հունիսի 17։ «Բյուզանդիոն», 1909, № 4009, դեկտեմբերի 29։ «Եփրատ», 1914, № 4, էջ 116—117։

167 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4340, փետրվարի 2։

* * *

Հեղափոխությունից հետո իթթիհատի պարագլուխները, ինչպես ասվից, ժողովրդական մասսաների ճնշման տակ և նրանց մեջ իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով, ձերբակալեցին մի շարք քուրդ աղաների։ Բայց շուտով ոչ միայն աղատ արձակեցին, այլև վերցրեցին իրենց պաշտպանության տակ և նրանց բռունցքն ուղղեցին տեղական ժողովուրդների ազգային ու սոցիալական շարժման դեմ։ Իթթիհատականների վարած դասակարգային քաղաքականության հետևանքով կանդուն մնացին Խիզանում Սեիդ Ալիի, Շամդինանում՝ Մեհմեդ Սըդըքի, Ալջավազում՝ Քյոռ Հյուսեին փաշայի, Արճեշում՝ Էմին փաշայի, Էրունում՝ Մեհմեդ Էմինի, Ջխուրում՝ Մուսա և Կասըմ բեյերի, Սղերդում՝ Բշարի Ջաֆոյի, Աբազայի դաշտում՝ Հյուսեին աղայի, Բերկրիում՝ Կոփ Մեհմեդ և Մուսթաֆա բեյերի, Դերսիմում՝ Տիապ աղայի, Ջարսանջակում՝ Օսման ու Իսա՝ բեկերի, Կարահիսարում՝ Ալիշան-զադեի և շատ ու շատ ուրիշ միրակալների լայնածավալ կալվածքները։

Երիտթուրքերի կառավարման տարիներին պահպանվեցին ու բազմացան այդ աղաների նաև բազմահազարանոց հոտերը։ Ա.-Դոն գրում էր. Հյուսեին փաշան ուներ «մեծ քանակությամբ ձիեր, տավարներ, ոչխարներ և ահագին տարածությամբ հողեր ու կալվածքներ»[168]։ Շարքեր աղան դարձել էր «ահագին հարստության տեր» և զանազան վայրագություններով ձեռք էր բերել ոչխարի հոտեր[169]։ Էմին փաշան սեփականացնելով «անտեր մնացած հողերը, նախիրներն ու հոտերը», կուտակել էր «ահագին հարստություն, մեծ քանակությամբ տավարներ ու ոչխարներ և լայնատարած հողեր ու կալվածքներ»[170]։ Մամադ բեկը «ուներ 2000 ոչխար, 70—80 հատ եզ, կով, գոմեշ, 20-ի չափ ձիեր և մոտ 10.000 ոսկի կանխիկ դրամ, որը տալիս է ժողովրդին տոկոսով»[171]։ Դարվիշ աղան այնքան հոտեր ուներ, որ մի մասը չկարողանալով պահել սեփական միջոցներով, կշռակության էր տալիս իրեն ենթակա պյուղացիներին[172]։

Երիտթուրքերը պահպանեցին աղաների ռազմական ուժը, որով նրանք, ի թիվս այլ ոճրագործությունների, ճնշում էին նաև աշխատավոր գյուղացիության սոցիալական ու ազգային շարժումները։ Ըստ

---

168 Ա.-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 358։

169 Տե՛ս նույն տեղում, էջ 356։

170 Նույն տեղում, էջ 360։

171 Նույն տեղում, էջ 365։

172 Տե՛ս նույն տեղում, էջ 366։

Վանի ռուսական փոխհյուպատոսի տեղեկություններին, 1913 թ. էրզրումի վիլայեթի Խոզաթ և Բոլոմեր գավառներում քրդական ցեղապետներն ունեին. Խալիլ աղան՝ 2000, Մուսթաֆա բեյը՝ 500, Դոդո օղլին՝ 500, Սեիդ-Խամանը՝ 200 վինվոր (զոլամ) և այլն[173]։ Կային մինչև 10.000 ռազմիկներ ունեցող աղաներ։ Անհրաժեշտության դեպքում նրանք կարող էին ոտքի հանել նաև ամբողջ ցեղը և ի սպաս դնել կառավարության պահանջներին։ Այդ իսկ պատճառով իթթիհատի պարագլուխները ամենուրեք ձգտում էին պահպանել ու ամրապնդել ցեղապետների իշխանությունը իրենց հպատակների վրա։ 1913 թ. Վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր, որ Սբվաղի վիլայեթի քրդերի մոտ «ցեղի առաջնորդի իշխանությունը զգալիորեն արդեն թուլացել է և այժմ պահվում է ոչ այնքան նրա հպատակների նվիրվածությամբ, որքան թուրքական իշխանությունների օժանդակությամբ»[174]։

Պահպանելով աղաների տիրույթները, երիտթուրքերը միաժամանակ նպաստեցին նրանց բանաձրաված հողերի օրինականացմանը և բոլորին թափու տվեցին։ Բողոքող գյուղացիներին ուղարկեցին դատարան, որն ամբողջապես ծառայում էր ֆեոդալական վերնախավի շահերին։ 1910 թ. ականատեսներից մեկը գրում էր, որ աղաները «գրամի ուժով փաստաբաններ կբռնեն և իրենց անիրավ գործողություններուն օրինավորությունը պաշտպանել կուտան, մինչ խեղճ գյուղացին իր արդար դատը պաշտպանելու միջոց չունի, ոչ լեզու ունի, որ իր դատը պաշտպանի և ոչ ալ գրամ ունի, որ փաստաբան վարձե։ Կալվածներ կան, որոնց վրա ոչ մեկ իրավունք կրնան հաստատել այդ աղաները, ընդհակառակը, անոնք արձանագրված են իրենց բուն տերերուն, հայ գյուղացիներուն անունով, որք թափու ալ ունին, բայց կառավարությունը չուզեց զանոնք խլել և հանձնել իրենց ճշմարիտ տերերուն։ Երբ այս կարգի հողերն իսկ չեն կրնար խլվիլ, ուր կմնա ետ առնել այն հողերը, որոնք գոնե կերպով մը փոխանցված են աղաներուն անվան»[175]։

Միաժամանակ հրիտասարդ թուրքերը հայ-քրդական հակասությունները սրելու նպատակով խրախուսեցին քրդական աղաներին՝ շարունակել հայ շինականների հողերի բռնագրավումները։ Եվ աղաները, օգտվելով կառավարության պաշտպանությունից ու հովանավորությունից, շարունակեցին ընդարձակել իրենց կալվածքները։ Նրանց

---

173 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 95, թ. 3—4։

174 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 118, թ. 180։

175 «Հորիզոն», 1910, № 60, մարտի 18։

հափշտակումները մասսայական բնույթ ընդունեցին հատկապես 1910 թ. հետո, երբ իթթիհատականները ավելի պարզ դրսևորեցին իրենց հակահայկական դիրքորոշումը։

Քուրդ աղաները սկսեցին խլել նույնիսկ այն հողերը, որոնք գյուղացիները կարողացել էին նա սահանալ սահմանադրության հետո։ 1913 թ. «Աշխատանքի» թղթակիցը գրում էր. «Քյուրա տերևակյուլյունը չէր ունեցած ավելի պատեհ առիթ մը ուժգնորեն և վճռականորեն տիրապետելու իրենց բռնագրաված հողերը, քան այս տարին. շատերը նույնիսկ կառավարության աչառու քաղաքականութենեն նպաստավորվելով ձեռք զարկին վերստին գրավելու այն հողերը, որոնք վերջին սահմանադրական չորս տարիներու մեջ իրենցմե նա առնված էին. այսպիսի դեպքեր տեղի ունեցած են ավելի Շատախի, Կարճկանի և Ալջավազի շրջաններուն մեջ»[176]։

Քուրդ աղաները հայ գյուղացիներին սկսեցին արտաքսել իրենց կալվածքներից, վախենալով, որ նրանք, օգտվելով հարմար առիթից, կարող են նա վերցնել իրենց հողերը։ 1908—1909 թթ. աղաները Ջարանջակում և Սլիվանում առաջարկեցին մարաբաններին հեռանալ իրենց կալվածքներից[177]։ Սակայն վստահ չլինելով իշխանությունների աջակցության վրա և հրկյուղ կրելով գյուղացիական ղանդվածների հեղափոխական արամադրություններից, նա քաշվեցին այդ առաջարկություններից և առայժմ բավարարվեցին ֆեոդալական պարտավորություններ մեծացումով։ Բայց 1910 թ. աղաները հայերին աներկյուղ դուրս էին քշում իրենց կալվածքներից և նրանց տեղը բնակեցնում էին քուրդ հողագործներ կամ մահմեդական այլ տարրեր։ 1910 թ. հայ շինականները վտարվեցին Բիթլիսի սանջակի Կորվու գյուղից։ Դեպքերի ականատեսը գրում էր. «Սրտաճմլիկ տեսարան մըն էր, որ պարզվեցավ։ Հայ գյուղացիները իրենց սերունդներու արյունով ու քրտինքով ոռոգված հողերու վրա փուվեցան պառկեցան, խնդրելով ձիավոր զորքին, որ նախ ձիերու սմբակներուն տակ ղիրենք կոխկռտեն, ապա ուրիշներու հանձնեն հողերը»[178]։

1911 թ. հայերն արտաքսվեցին իրենց կալվածքներից նաև Վանի վիլայեթի Չնչխս գյուղից։ Պատճառը եղավ այն, որ հայերը հրաժարվեցին ֆեոդալական պարտավորություններից և ներկայանալով իշխա-

---

176 «Աշխատանք», 1913, № 10—106, էջ 5։

177 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 142, դեկտեմբերի 8։

178 «Ազատամարտ», 1910, № 207, փետրվարի 24։

սություններին, ցանկացան ապացուցել, որ հողերն իրենց են պատկանում։

Հեղափոխությունից հետո քուրդ աղաները իրենց ձեռքում պահեցին նաև հայոց վանքապատկան ու եկեղեցապատկան կալվածքները և օգտվելով երիտթուրքերի հովանավորությունից, հաշվի չէին առնում հայ հոգևոր հաստատությունների իրավացի պահանջներն ու բողոքները։ Ավելին, նրանք որոշ վայրերում շարունակեցին վանքապատկան կալվածքների բռնագրավումը։ 1913 թ. «Վան-Տոսպը» գրում էր. «Զոռպանները դեռ մինչև այսօր էլ կը շարունակեն գրավել և յուրացնել մեր վանական կալվածներու բնաբնակության մասերը—վարելահողերը, մարգագետինները, արոտավայրերը, անտառները և բարհանները»[179]։

Երիտասարդ Թուրքերի հողային քաղաքականությունն այլ էր քուրդ դյուղացիների նկատմամբ։ Հայտնի է, որ Աբդուլ Համիդի վարած ազգային քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում քրդերը նվաճել էին հայերի հողերը և անիվականացնելով, հաստատվել դրանց վրա։ Մյուս կողմից՝ քուրդ աղաները, ընդառաջելով իրենց սիրուչներին, հափշտակել էին ոչ միայն հայ, այլև քուրդ դյուղացիների հողերը։ 1911 թ. Գևղամ Տեր-Կարապետյանը, անդրադառնալով Թուրքիայի արևելյան նահանգների հողային հարցին, մատնանշում էր. «Անարդար գրավումներու դեմ մինակ հայերը չեն, մեր իսլամ հայրենակիցներն ալ կը բողոքեն։ Զափ գրավումներու իրրև 60.000 օրավար»[180]։ Դժբախտաբար, հեղինակը չի նշում, թե այդ տարածության ո՞ր մասն էր պատկանում քրդերին։ Սակայն կարելի է ենթադրել մեծ մասը, քանի որ ավելի դյուրին էր հափշտակել քրդերի, քան Թուրքերի կամ Կովկասից ներգաղթած ռազմաշունչ մուհաջիրների հողերը։

Անցնելով իշխանության ղլուխ, իթթիհատականները քուրդ աշխատավոր դյուղացիությանը չբավարարեցին հողով։ Օգտագործելով հողային հարցը, նրանք ավելի սրեցին հայ-քրդական հակասությունները, դրդելով քրդերին չվերադարձնել հայերից բռնագրաված հողերը։ Եվ քրդերը, որոնք հեղափոխությունից անմիջապես հետո երկրի մի շարք շրջաններում թողնում էին իրենց գավթած հողերն ու հեռանում, տեսնելով նոր կառավարիչների՝ քրիստոնյաների շահերը ոտնահարող վար-

---

179 «Վան-Տոսպ», 1913, ապրիլի 6, էջ 117։ Տե՛ս նաև «Ազատամարտ», 1909, № 132. նոյեմբերի 26։ «Ամենապրոլիյունը ազգային ժողովոյ», 1910, էջ 260։

180 «Ազատամարտ», 1911, № 489, հունվարի 28։

քաղիծը, վերադարձան և կրկին տիրացան հայերի հողերին։ 1908 թ. հոկտեմբերին «Բյուզանդիոնը» գրում էր, որ Արճեշում քրդերը «նորեն նետ կը դառնան և կը գրավեն հայ գյուղերը, միանգամայն խիստ սպառնալիքներ ընելով հայերուն, կը փախցնեն նորեն։ Նույնիսկ կառավարական պաշտոնյաները խորհուրդ տված են բողոքող հայերուն, ըսելով, թե ալար տեղը չբողոքեն քրդերուն դեմ և պանոնք Բշնամացնեն իրենց, քանի որ իրենք ստիպված են պաշտպանել պանոնք»[181]։

Իսկ «Հորիզոնի» թղթակիցը 1913 թ. գրում էր. «Սահմանադրության հռչակման առաջին տարում շատ քրդեր կամովին հետացան իրենց բռնագրաված հողերից, բայց երբ տեսան, որ կառավարությունը առաջվա հայահալած քաղաքականության է հետևում, հովանավորում է նրանց, որոնք շարունակում են տիրել հայերից խլած հողերին՝ իրենք էլ նորից եկան և գրավեցին լքած հողերը»[182]։ Քրդերը վերստին հափշտակեցին նաև հայոց վանքապատկան հողերը։

Երիտթուրքերը շտապեցին օրինականացնել քրդերի հողային հափշտակումները և թափուներ տալ նրանց։ 1912 թ. գարնանը Բաբերդի Պոսնիք գյուղի մուխթարը հետագրում էր մայրաքաղաք՝ հայոց պատրիարքին՝ «Գայմագամը մեր օրինավոր թափուով ունեցած հողերը՝ բռնի վաչկատուն քյուրտերու կուտա։ Սահմանադրության համաձա՞յն է աս։ Իմացուցեք»[183]։ Սակայն հայ շինականների բողոքները մնում էին անպատասխան։

Երիտասարդ թուրքերը հայ-քրդական հակասությունները սրելու նպատակով այնուհետև խրախուսում էին քրդերին՝ շարունակել հայերի հողերի բռնագրավումները։ Եվ քուրդ գյուղացիները, ընկնելով նրանց պրոպագանդայի ազդեցության տակ, երկրի մի շարք վայրերում շարունակեցին հայկական հողերի զավթումները նաև 1908 թ. հեղափոխությունից հետո։ 1912 թ. նոյեմբերի 26-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանը հաղորդում էր, որ Արևմտյան Հայաստանում «Ագրարային հարցը օրեցօր սրվում է, հողերի մեծ մասը հափշտակված է ու հափշտակվում է քրդերի կողմից, իսկ իշխանությունները ոչ միայն չեն խոչընդոտում, այլև հովանավորում և ընդառաջում են այդ հափշտակումները»[184]։

---

181 «Բյուզանդիոն», 1908, № 3660, հոկտեմբերի 9։

182 «Հորիզոն», 1913, № 240, հոկտեմբերի 25։

183 «Ազատամարտ», 1912, № 894, մայիսի 25։

184 „Сборник дипломатических документов. Реформы в Армении", П. 1915, стр. 3; տե՛ս նաև Ն. Գ. Սարգսյան, նշված աշխ., էջ 153։

* * *

Իթթիհատի պարագլուխները չխախտեցին Բուրք հողատերերի դիրքերը, ընդհակառակը, սիրաշահեցին նրանց ու ներգրավեցին իրենց կուսակցության մեջ։ 1912 թ. Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր, որ Սըվազի վիլայեթի Շար-Ղշլաղ ավանում հավաքված են «կողոպտող, ավարող, դողեր պահող, ժողովրդի արյունը ծծող բոլոր բեկերը, աղաները, էշրաֆները»։ Նրանք «լայն կյանք են վարում, երկրի տերը իսկապես իրենք են. կառավարություն, վարչություն՝ ամեն ինչ իրենց ձեռքն է, ամեն բան կարգադրող, անօրինողը իրենք են... բոլորն էլ Բունդ իթթիհատականներ են»[185]։

Իթթիհատականները Բուրք բեկերին իրենց հենասյուները դարձրին նաև Արևմտյան Հայաստանի մյուս վայրերում։ Տարոնում, օրինակ, այդ բեկերը, օգտվելով նոր կառավարիչների հովանավորությունից, «սկսան ձեռնամուխ հեղափոխական, մասնավորապես իթթիհատի շարքերը և անոր միջոցով ջանացին պահել իրենց դիրքերը սահմանադրական դրոշին ներքև։ Անոնք ոչ միայն դիմ չկնացին սահմանադրության, այլև անոր պաշտպան հանդիսացան, անոր դիկտատուրայի մեջ դիրք դրավեցին և սահմանադրական կարգերը այնպես դասավորեցին, որ իբր «հեղափոխական և սահմանադրության միակ հավատարիմ հենարաններ» անսահման իրավունքներ ավելցուցին իրենց արդեն ունեցածին վրա»[186]։

Պահպանելով Բուրք աղաների ֆեոդալական սիրույթները և քաղաքական արտոնությունները, նոր կառավարիչները չլուծեցին նաև Բուրք գյուղացիների հողային հարցը։ Զգուշով սրել հայ-թուրքական հարաբերությունները, նրանք Բուրք գյուղացիներին նույնպես խրախուսում էին բռնագրավելու հայերի հողերը։ Թուրքերի կողմից հայերի հողերի զավթումը երկրի մի շարք շրջաններում առաջ էր բերում ազգամիջյան ընդհարումներ, որոնք հաճախ վերջանում էին արյունահեղությամբ։ 1911 թ. հունիսի 10-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսը հաղորդում էր, որ Մուշի դաշտում շարունակվում են հայերի ու թուրքերի վեճերը։ Օրը ցերեկով թուրքերը սպանեցին 8 հայ։ Վալին չմիջամտեց կռվին, միայն առաջարկեց տուժածներին դիմել դատարան[187]։

Այդ նույն թվականին Ս. Սապահ-Գյուլյանը, լինելով Սըվազի

---

185 Ս. Սապահ-Գյուլյան. *Փոքր-Հայքի հիշատակները*, Զիկագո, հ. 1, մասն Ա, 1917, էջ 346։

186 Թուրքեն Տեր-Միհայան. նշված աշխ., հ. Զ, էջ 87—88։

187 *Տե՛ս* ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1911, գ. 2680, թ. 67—68։

վիլայեթի հայաբնակ վայրերում, արձանագրում էր, որ գյուղացիների «վարելահողերը, արոտավայրերը մի համառ հետևողականությամբ հափշտակվում, տրվում են իրենց հարևան թուրք գյուղացիներին և այդ մասին իրենց արած գանգատներին ոչ լսող կա, ոչ էլ որևէ հետևանք ավող»։ Գյուղացիները վկայում են, որ «Սահմանադրությունից հետո մեր հողերը ավելի են հափշտակվում, քան առաջ»[188]։

Թուրք գյուղացիները Արևմտյան Հայաստանի որոշ վայրերում կառավարության հովանավորությամբ բռնագրավում էին նաև քուրդ գյուղացիների հողերը, որի հետևանքով ազգային հակասություններն ավելի էին խճճվում։

* * *

Երիտթուրքերը ավելի խորացրին հայերի ու մուհաջիրների հողային վեճերը։ Հայտնի է, որ դեռ Աբդուլ Համիդի իշխանության տարիներին Բալկաններից ու Կովկասից մահմեդական զանազան տարրեր ներգաղթեցին Թուրքիա ու Արևմտյան Հայաստան և կառավարության մույլուվությամբ հաստատվեցին հայերի հողերի վրա։ Հույս ունենալով, որ սահմանադրությունը կլուծի իրենց հողային հարցը, հայերը հեղափոխությունից հետո բարձրացրին այն կառավարության առաջ։ Սակայն իթթիհատի պաշտոնյաները պատասխանեցին. «Այսօր հավասարություն է, բոլոր ցեղերն ալ օրենքի առաջ հավասար աչքով կդիտվին, խեղճ մուհաջիրները հանենք ո՞ւր ղրկենք, գյուղերու մեջ՝ հայերու անբնակ տուներ, հողեր շատ կան, թող երթան գոնեն, հոն բնակին»[189]։

Երիտթուրքերը հեղափոխությունից հետո մեծացրին մուհաջիրների թիվը Արևմտյան Հայաստանում և ավելի ծանրաբեռնեցին նրանց գյուղերը նկվորներով։ Մուհաջիրները գալիս էին Կովկասից, Բալկաններից և Պարսկաստանից՝ Թուրքիայի դեմ Սերբիայի ու Բուլղարիայի տարած հաղթանակի հետևանքով և նորելուկ կառավարիչների մղած պանիսլամական պրոպագանդայի ազդեցության տակ։ Իթթիհատականները, ինչպես Աբդուլ Համիդը, նկածներին բնակեցնում էին ոչ թե աղատ ու անմարդաբնակ վայրերում, այլ հայկական գյուղերում ու հողերում։ 1909 թ. Ա. Շարիկյանը գրում էր. «Տարոնոյ, Պուլանըխի և Խնուսի սահմաններուն միջավայրին մեջ բավական տարածությամբ

---

188 Ս. Սապահ-Գյուլյան, նշված աշխ., էջ 279։

189 Սարգիս և Միսակ Բղնյան, Հարազատ պատմություն Տարոնոյ, Գահիրե, 1962, էջ 231։

պետական ազատ հողեր կան, որոնք կը մնան անմշակ ու խոպան։ Սակայն ղարմանալի և նույնիսկ անհասկանալի է կառավարության այն վարմունքը, որ թուրք ու չերքիզ գաղթականները չի բնակեցներ այդ ազատ հողերու վրա և թույլ կուտա, որ հայ գյուղացին շինություններն ու կալվածները դրավվին»[190]։

Հայ գյուղացիները համառորեն դիմադրավում էին կառավարության այդ քաղաքականությանը, սակայն ապարդյուն։

Երիտասարդ թուրքերը ոանահարեցին նաև ասորի գյուղացիության կենսական շահերը. նրանք չվերադարձրին քուրդ աղաների կողմից սուլթան Համիդի կառավարման տարիներին ասորիներից բռնագրավված հողերը, ընդհակառակը, նպաստեցին այդ աղաներին, որ սահմանադրությունից հետո էլ շարունակեն ասորական հողերի հափշտակումները։

Արևմտյան Հայաստանի որոշ վայրերում, մասնավորապես Վանի ու Դիարբեքիրի լեռնային շրջաններում ասորի գյուղացիները ինչպես հին, այնպես էլ նոր վարշակարգի ժամանակ շարունակում էին դիմադրավել թուրքական իշխանություններին և պահպանել իրենց քիչ թե շատ տանելի կացությունը։ Նպատակ ունենալով ուժեղացնել նրանց մոտ իրենց իշխանությունը և հնարավորին չափ վերացնել մարշիմոնի (ասորիների հոգևոր պետի) որոշ ինքնուրույնություն, երիտասարդ թուրքերը առաջարկեցին այդ ասորիներին՝ իջնել լեռներից և բնակվել հարթավայրային շրջաններում։ Սակայն մարշիմոնը հասկանալով նրանց մտադրությունը, կտրականապես մերժեց։ 1910 թ. մարշիմոնը Վանի ռուսական փոխհյուպատոսին ասում էր. «Դե, ընդհանրապես մենք չենք հավատում թուրքերի բարի մտադրություններին և նրանց սահմանադրությանը։ Մենք դրանից (սահմանադրությունից —Ս. Հ.) չունենք որևէ օգուտ»[191]։

* * *

Երիտթուրքերի ագրարային քաղաքականության հետևանքով Թուրքիայում պահպանվեց միջնադարյան ֆեոդալական հողատիրությունը։ Երկրի հողային հարստության մեծ մասը մնաց կալվածատերերի ձեռքում, իսկ գյուղացիության ճնշող մեծամասնությունը շարունակեց տառապել սակավահողությունից ու հողազրկությունից (տե՛ս աղյուսակը

---

190 «Աղատամարտ», 1909, № 89, հոկտեմբերի 7։

191 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 250։

առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակի տվյալներով)[192]։

№	Գյուղական բնակչության կատեգորիաները	Տնտեսությունների քանակը	Տոկոսային հարաբերությամբ	Մշակելի հողատարածությունները (դյոնումներով)*	Տոկոսային հարաբերությամբ
1	Խոշոր հողատերեր կամ չիֆթլիկչիներ	10.000	1	30.000	39,3
2	Հարուստ և կուլակային տնտեսություններ	40.000	4	20.000	26,2
3	Աշխատավոր գյուղացիներ (միջակներ ու չուներներ)	870.000	87	27.300	34,5
4	Բատրակներ	80.000	8	—	—

Այսպիսով, բնակչության հինգ տոկոսը կազմող կալվածատերերն ու գյուղական ունևորները տիրում էին երկրի մշակվող տարածության 65,5 տոկոսին, իսկ 95 տոկոս կազմող աշխատավոր զանգվածները՝ 34,5 տոկոսին[193]։

Դժբախտաբար, մենք չունենք վիճակագրական տեղեկություններ, թե Արևմտյան Հայաստանում ինչպես էին բաշխված հողային տարածությունները հասարակական տարբեր խավերի միջև։ Սակայն անկասկած է, որ այստեղ նույնպես դրանց մեծ մասը պոնվում էր աղանների ձեռքում։ 1910 թ. Ատոմը գրում էր. «Ես վիճակագրություն չունեմ, կպարզվեր, որ «100 տուն բնակիչ ունեցող գյուղի աշխատավոր դասակարգը 100 տեռնյում հող, 100 ընտանի անասուն ունի, նույն 100 տան աշխատանքով ապրող նույն գյուղի աղան, պեկը, բեռունը, աշրաֆը՝ որոնք ամենաշատը 5—10 տուն չեն կազմեր, կտիրապետեին 100—200 տեռնյում հողի և մեկ քանի հարյուր, մեկ քանի հազար ընտանի անասուններու»[194]։ *Այնուհետև՝ «ավատականներ կան՝ որոնք իրենց ապրնցության սահմաններուն մեջ ունին ստոր աստիճաններու վրա գտնվող ուրիշ ավատականներ, և կը տիրապետեն ոչ միայն մեկ՝ այլ*

[192] *Տե՛ս Н. Бугаев, նշված աշխ., էջ 45—46։*

* *1 դյոնումը=919,3 քառ. մետրի կամ 0,82 դեսյատինի։*

[193] *Ուշագրավ է, որ երբ սոցիալիստ Վլախովը օսմանյան պառլամենտի նիստերից մեկում առաջարկություն մտցրեց մեծացնել գյուղացիների բաժնեհողերը, ներքին գործերի մինիստրը պատգամավորների ծափերի տարափի տակ հայտարարեց, որ չի կարելի այդ առաջարկությունը անդամ քննարկման դնել, քանի որ շարիաթն արգելում է միջամտել հողատիրոջ և գյուղացու հարաբերություններին (В. А. Гурко-Кряжин, նշված աշխ., էջ 54)։*

[194] *Ատոմ. Պետական վերանորոգություն ու հողային հարցը, Կ. Պոլիս, 1910, էջ 34։*

մեկ քանի բաղմաթիվ գյուղերու և այս կամ այն գավառակի կամ գավառակներու, երբեմն ամբողջ գավառի»[195]:

Ֆեոդալական հողատիրությունը և գյուղացիական հողերի նոր բռնագրավումները ավելի սաստկացրին Արևմտյան Հայաստանի գյուղացիության սակավահողությունն ու հողազրկությունը[196]: 1909—1910 թթ. Արևմտյան Հայաստանում գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն, անկախ ազգությունից, միջին հաշվով ուներ 3,6 հեկ. վարելահող, ընդ որում՝ Սեբաստիայի կուսակալությունում՝ 2,4, Խարբերդի՝ 1,9, Կարնո՝ 1,5, Վանի՝ 3,3, Տիգրանակերտի 4,0 և, վերջապես, Բաղեշի կուսակալությունում՝ 8,3 հեկտար[197]:

Հայերի հողատարածությունները տարբեր վայրերում տարբեր էին. այսպես, 1909 թ. Վանի կուսակալության Արճակ և Թիմար գավառների 24 գյուղերում հաշվվում էին 1526 գերազանցապես հայկական տնտեսություններ, որոնք ունեին 12130 չափ կամ յուրաքանչյուր ընտանիք՝ մոտ 8 չափ վարելահող[198]: Եթե նկատի ունենանք, որ մեկ չափը հավասար է 4 փթի և յուրաքանչյուր հեկտարի վրա ցանվում էր շուրջ 8—9 փութ, ապա ամեն մի ընտանիք ուներ մոտ 4 հեկտար վարելահող: Սակայն ոչ միայն 8-ը, այլ 10 չափն էլ անբավարար էր «ահագին մեծամասնություն կազմող աղքատ գյուղացիության երկրագործական կարիքներուն համար»[199], քանի որ 8 կամ 10 չափից գյուղացին կարող էր ցանել միայն 5—6 չափը, իսկ մնացածը պետք է բողներ հանգստանալու:

Այդ նույն թվականին Վանի կուսակալության Հայոց Ձոր գավառակի 15 գյուղերում հաշվվում էր 823 տնտեսություն կամ 4691 անձ, որոնք ունեին 6198 օրավար (4090,68 հեկտ.) հող[200]: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով ընկնում էր 7,4 օրավար (4,9 հեկտ.), իսկ յուրաքանչյուր անձի՝ 1,3 օրավար (0,8 հեկտ.) վարելահող: Այս գավառակում գյուղացիները թեև ավելի հող ունեին, քան Արճակում ու Թիմարում, այնուամենայնիվ, նրանց ունեցածն էլ անբավարար էր:

---

195 Նույն տեղում:

196 Տե՛ս Գ. Տեր-Կաբրիելյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ, Կ. Պոլիս, 1911, էջ 43—44:

197 Տե՛ս А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937, стр. 268.

198 Տե՛ս Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909, էջ 109:

199 Նույն տեղում, էջ 110—111:

200 Տե՛ս «Հորիզոն», 1913, № 17, հունվարի 23:

1911 թ. «Աշխատանքը» գրում էր, որ Հայոց Ձորի նշված գյուղերի վարելահողերն անբերրի են ու մշակվում են երեք տարին մեկ անգամ։ «Հողերի մեկ մասը աղայական, վանքապատկան, մեկ մասը գիտի անկանոն հոսանքի պատճառով ճահիճ դարձած, մի մասն ալ ծովը առած է։ Այժմ յուրաքանչյուր անձի գլուխ հաղիվ մեկ ու կես օրվա հող կիյնա, որը երեք տարին մի անգամ մշակելով, հաղիվ թե 5—6 չափ հացահատիկ կարտադրե, որը պիտի հաշվել մեկ անձի երեք տարվա պարենը»[201]։

Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների մասին նման վիճակագրական տվյալներ չունենք, բայց կան բազմաթիվ վկայություններ, որոնք հաստատում են, թե հայ գյուղացիների մեծ մասը երիտթուրքերի կառավարման տարիներին այդ շրջաններում նույնպես սակավահող կամ հողազուրկ էր։ Ս. Սապահ-Գյուլյանը նշում էր, որ 1911 թ. Սրվադի վիլայեթի հայաբնակ մի շարք վայրերում «գյուղացիները դանգատվում են նաև իրենց հողի սակավության մասին»[202]։

1913 թ. «Բյուզանդիոնը» գրում էր. Սասունի Փսանք գավառի հայերը «հող չունին և այս պատճառով շատեր ստիպված են պանդխտել Հալեպի կողմերը»[203]։ 1914 թ. «Աշխատանքի» վկայությամբ Գավաշի և Մոխրաբերդի գյուղերում բնակչության 1/3-ը հողազուրկ էր, իսկ մնացածը՝ սակավահող։ Յուրաքանչյուր շնչին երկու չափ տեղ էր ընկնում[204]։ Կարելի էր շարունակել վկայությունները, բայց սրանք էլ բավական են հիրքելու այն կարծիքը, թե արևմտահայ գյուղացին իբր բավարարված էր հողով, չուներ միայն անձի ու գույքի ապահովություն։

1908 թ. հեղաշրջումից դեռ առաջ արևմտահայ գյուղացիության մի մասը իրավապես ձևակերպել էր իր հողաբաժինը և ձեռք էր բերել թափու, բայց մի մասը, ոչ այնքան չքավորության, որքան թուրքական պաշտոնյաների անտարբերության ու սանձարձակությունների, ինչպես նաև աղաների սպառնալիքների հետևանքով դեռ չուներ այդ փաստաթուղթը։ Եվ չնայած երիտթուրքերը երբեմն ազդարարում էին հողաբաժինների իրավական ձևակերպումների արագացման մասին, այնուամենայնիվ գործը տեղից համարյա չէր շարժվում։ 1910 թ. «Ազատամարտը» իր առաջնորդողում գրում էր. «Տեղ-տեղ՝ լեռնային գավառ-

---

201 «Աշխատանք», 1911, № 22, էջ 11։

202 Ս. Սապահ-Գյուլյան, նշված աշխ., էջ 279։

203 «Բյուզանդիոն», 1913, № 5140, սեպտեմբերի 19։

204 Տե՛ս «Աշխատանք», 1914, № 22—168, էջ 5։

ներու մեջ՝ քրոնիք ապստամբական վիճակին հետևանքով՝ թափուն մուտք չէ գործում ցարտ»[205]: Նույնն էին հաստատում նաև Կ. Պոլսի Ազգային ժողովի պատգամավորները, ասելով. «Հողեր կան, որոնց տերերին ոմանք թափու ունին, ոմանք չունին»[206]: Բայց ի՞նչ նշանակություն ուներ թափուն, երբ աղաներն ու պաշտոնյաները, օգտվելով տիրող վիճակից կարող էին բռնագրավել ու սեփականացնել իրենց ցանկացած հանգակները: Ա.-Դոն գրում էր. «...այդ երկրում իրավունքը ուժն է. ուժը գալիս է խորտակելու Հակոբարի ավանդական սեփականության իրավունքը. ուժը գալիս է խորտակելու նաև թափությով հաստատված սեփականության իրավունքը: Ինչ խոսք կարող է լինել օրինական իրավունքի մասին այնտեղ, ուր կոպիտ ուժը, նոմադ քուրդը, ժողովրդին կեղեքող բեկերն ու էֆենդիները հանդիսանում են երկրի բախտը անօրինող և միևնույն ժամանակ երկրի պաշտոնեությունը: Եվ ահա շնորհիվ ուժեղի գերագույն իրավունքի, բռնի կերպով գրավվում են երկրագործ ժողովրդի սերնդից սերունդ սրբապատած և թափուններով հաստատված մեծաքանակ հողերը, շնորհիվ ուժեղի այդ գերագույն իրավունքի, խաղաղ աշխատասեր գյուղացիությունը արագ կերպով և խոշոր չափերով զրկվում է հողից, ապրուստի միջոցներից և դառնում հողազուրկ... Շնորհիվ այդպիսի կարգերի ու ուժեղի գերագույն իրավունքի, հողատեր հայ գյուղացիության մի ահավոր մասը դարձել է հողազուրկ տարր»*[207]:

Երիտթուրքերի դասակարգային ու շովինիստական քաղաքականությունն արտահայտվում էր նաև ջրատիրության ասպարեզում: Դեռ հեղափոխությունից առաջ աղաները տարբեր ճանապարհներով տեր էին դարձել բազմաթիվ ջրանցքների ու զրկել գյուղացիներին ոռոգող ջրից: Մի շարք վայրերում էլ այդ ջրանցքները անցել էին մահմեդական գյուղերի ձեռքը, որի հետևանքով քրիստոնյաների դրությունն ավելի էր վատացել:

Անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերը ջրային խնդիրն էլ օգտագործեցին ազգամիջյան ներհակությունները սրելու համար, հատցընելով դրանք շատ հաճախ արյունահեղություններին: Այսպես, Տարոնի հայաբնակ Ավրան ու քրդաբնակ Բաղչն գյուղերի բնակիչները դեռ հեղափոխությունից առաջ տևական վեճերից ու կռիվներից հետո վեր-

---

[205] «Ազատամարտ», 1910, № 205, փետրվարի 22:

[206] «Ատենագրություններ ազգային ժողովոյ», 1910, մայիսի 28, էջ 260:

[207] Ա.-Դո, նշված աշխ., էջ 273—274:

ջապես լևզու էին դալ միմյանց հետ և համաձայնվել, որ «կիսովի կօդովին ջուրն ու անասունն»[208]: Բայց սահմանադրությունից հետո չրդերը նոր կառավարիչների հակահայկական պրոպագանդայի ազդեցությամբ կտրեցին հայերի ջուրը և մեծ վնաս պատճառեցին նրանց: Միայն 1913 թ. ամռանը այն կազմեց 500 լիրա: Ավրանցիք դիմեցին իշխանություններին, սակայն նրանց բողոքը անհետևանք մնաց:

Տառապելով սակավահողությունից ու ջրապրկությունից, արևմտահայ գյուղացիության ճնշող մեծամասնությունը չէր կարողանում ավելացնել անասունների գլխաքանակը և կազմակերպել քիչ թե շատ բավարար տնտեսություն: Նրանց ունեցած քաշող անասունների գլխաքանակի մասին կարելի է որոշ պատկերացում կազմել հետևյալ աղյուսակից (1909—1914 թթ. տվյալներով)[209]:

Գավառները	Գյուղերի թիվը	Տնտեսությունների թիվը	Եզների գլխաքանակը	Յուրաքանչյուր տնտեսության եզների թիվը (միջինը)
Էրզրումի	18	2001	2313	1,2
Բըղրի	43	4669	4968	1,0
Արմաանի (երկնկայի գավառ)	3	480	980	2,0
Մոկսի	18	256	201	0,7
Ալջավազի	23	761	1270	1,6
Մուշի	9	282	160	0,5
Բաբերդի	—	2199	7656	3,4
Բևմախի	—	1225	1276	1,0
Ընդամենը	—	11873	19024	1,6

Աղյուսակը ցույց է տալիս, որ նշված գավառներից միայն մեկում՝ Բաբերդում, գյուղացիական տնտեսություններն ունեին 3, 4 գլուխ բանող անասուն, մնացած գավառների մեծ մասը ունեին 1—2 անասուն: Իրականում գյուղացիների դրությունը ավելի վատ էր: Հաշվում-

---

208 «Մշակ», 1913, № 144, հուլիսի 3:

209 Աղյուսակը կազմված է մեր կողմից: Տվյալները 1909 թ. համար վերցված են Ա.-Դոյի նշված աշխատությունից (էջ 352—354), իսկ 1913—1914 թթ. համար՝ Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ-ից (տե՛ս ֆ. 227, ց. 1, մ. 1, գ. 475, 456, 483, ֆ. 57, գ. 742):

ները ցույց են տալիս, որ 1912 թ. Դերջանի և Քղիի գավառներում, օրինակ, գյուղացիության 43,4%-ը բանող անասուն չուներ, իսկ 25,7%-ը ուներ 1—2, 25,8%-ը՝ 3—4 և միայն 5,1%-ը, 5 և ավելի բանող անասուն[210]:

* * *

1908 թ. Թուրքական բուրժուական հեղափոխությունը չբարելավեց նաև քուրդ գյուղացիների դրությունը: Իրավ է, քրդերը հայերի համեմատությամբ ավելի հող ունեին: Մալխասը խոսելով հայ և քուրդ գյուղացիության հողային բավարարվածության մասին, 1909 թ. նշում էր, որ Վասպուրականի հայկական գավառներում 1 կմ²-ի վրա ապրում է 24 մարդ, իսկ քրդաբնակ գավառներում՝ 6,5 մարդ: Այդ թվերը «ինքնին բավական են արտահայտելու քրդերու հողային հսկա հարստությունը և հայերու համեմատական աղքատությունը»[211]: *Բայց, այդուհանդերձ, երիտթուրքերի տիրապետության պայմաններում քուրդ գյուղացիները նույնպես չէին կարողանում կազմակերպել բավարար արտադրություն, որի պատճառով էլ նրանց անասունների պլխաքանակը ևս քիչ էր: (Տես աղյուսակը՝ 1909 թ. Մոկսի քրդաբնակ գյուղերի անասնաքանակը)*[212]:

Գյուղերը	Տնտեսությունների քանակը	Եզների պլխաքանակը	Կովերի պլխաքանակը	Ոչխարների պլխաքանակը	Բուրաքանչյուր արտադրության (միջին հաշվով)		
					եզ	կով	ոչ խոր
Հըլվալի	12	12	13	238	1,0	1,0	19,8
Բևրդ	3	3	4	50	1,0	1,3	16,6
Գաբենց	14	10	22	160	0,7	1,5	11,4
Ծում	20	19	30	500	0,9	1,5	25,0
Հաուանց	41	21	48	390	0,5	1,1	9,5
Հավթանց	39	27	34	500	0,7	0,8	12,8
Վերս	14	7	21	280	0,5	1,5	20,0
Ընդամենը	143	99	172	2118	0,6	1,2	14,8

[210] *Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 733 (հաշվումները կատարված են մեր կողմից)*:

[211] Մալխաս, *Ներկա սովը և իր պատճառները, էջ 32*:

[212] *Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 352*:

Աղյուսակը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր քրդական գյուղացիական տնտեսություն ուներ միջին հաշվով 0,6 եզ, 1,2 կով և 14,8 ոչխար։

Հետաքրքիր է համեմատել հայ և քուրդ գյուղացիների անասունների գլխաքանակը։ Դրա համար նպատակահարմար է վերցնել ոչ թե երկրի բնակլիմայական տարբեր, այլ միևնույն շրջաններում գտնվող գյուղերը։

1909 թ. Մոկսի հայարնակ գյուղերի անասնաքանակը[213]

Գյուղերը	Տնտեսությունների քանակը	Եզների գլխաքանակը	Կովերի գլխաքանակը	Ոչխարների-գլխաքանակը	Յուրաքանչյուր տնտեսություն ունի (միջին հաշվով)		
					եզ	կով	ոչխար
Սեպ	19	20	28	120	1,0	1,4	6,3
Գիտրիս	18	16	23	322	0,9	1,2	17,9
Մարտիկանց	13	10	18	30	0,7	1,4	2,3
Հեր	5	6	10	60	1,2	2,0	12,0
Գոմեր	20	15	23	81	0,7	1,1	4,0
Հազլվան	11	10	15	300	0,9	1,3	27,2
Սըպկանց	15	22	25	419	1,4	1,6	27,9
Ընդամենը	101	99	142	1332	0,9	1,4	13,1

Աղյուսակից երևում է, որ հայ գյուղացիական յուրաքանչյուր տնտեսություն միջին հաշվով ուներ 0,9 եզ, 1,4 կով և 13,1 ոչխար։

Երկու աղյուսակները համեմատելիս, դժվար չէ տեսնել, որ Մոկսի հայ ու քուրդ գյուղացիները ունեին համարյա նույն քանակությամբ անասուններ։ Հայերը իբրև դարավոր երկրագործներ, աննշան չափով ավելի ունեին եզներ ու կովեր, իսկ քրդերը իբրև խաշնարածներ՝ ոչխարներ։ Այս տվյալների հիման վրա չի կարելի եզրակացնել, որ հայ ու քուրդ գյուղացիների անասնաքանակի հարաբերությունը այդպիսին էր Արևմտյան Հայաստանի բոլոր շրջաններում։ Սակայն կասկածից վեր է, որ խաշնարած քրդերն ավելի շատ ոչխարներ ունեին և ավելի քիչ եզներ ու կովեր, քան նստակյաց հայերն ու քրդերը։

Թուրք, չիչեն, չերքեզ և ասորի գյուղացիների մասին մենք տեղեկություններ չունենք, բայց հավանական է, որ նրանք նույնպես ավելի

213 Տե՛ս նույն տեղում։

կամ պակաս չափով տառապում էին հողազրկությունից ու սակավահողությունից, աղքատությունից ու ծշվառությունից։

* * *

Արևմտահայ գյուղացիության մեծ մասը, ինչպես անցյալում, այնպես էլ երիտթուրքերի կառավարման տարիներին դոնվում էր կալվածատերերի իշխանության տակ, ենթարկվելով տարբեր աստիճանի շահագործման ու բռնություններին։ Իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ այդ գյուղացիները բաժանվում էին մարաբա[214] (որոնք երկրի որոշ շրջաններում կոչվում էին օրթակչի կամ կիսարար), խաֆիրատու[215], կապալային[216] և կշլակային[217] գյուղացիների։

Ցավոք, մենք չունենք վիճակագրական ստույգ տվյալներ մարաբաների թվաբանակի մասին, բայց հավանական է, որ նրանք կազմում էին կախյալ գյուղացիության ճնշող մեծամասնությունը։ Այսպես, 1910 թ. Տարոնի գյուղացիության 100-ից 60-ը մարաբա էր[218]։ Միսակ և Սարգիս Բզնյանները նշում էին, որ Մուշի դաշտում «գյուղացիները, մեծամասնությամբ, միրապա էին...»[219]։

Երկրի մի շարք շրջաններում առաջվա պես մեծամասնություն էին կազմում արտադրության միջոցներից բոլորովին զրկված կամ ընչազուրկ, իսկ այլ վայրերում՝ բանող անասուն և գյուղատնտեսական գործիքներ ունեցող մարաբաները, բայց ընդհանուր առմամբ գերակշռողը ընչազուրկներն էին։

Իշխիհատի կառավարությունը օրենք չհրատարակեց հողերի վարձակալական պայմանների մասին։ Նվ աղաները, ինչպես առաջ, շահագործում էին մարաբա գյուղացիներին։ Իրավ է, հեղափոխությունից անմիջապես հետո, վախենալով գյուղացիական ելույթներից, որոշ վայրերում նրանք իջեցրին վարձակալական գները, բայց կարճ ժամանակ անց նորից բարձրացրին։ Մարաբաների շահագործման մասին որոշ պատկերացում տալու համար բերենք հետևյալ վկայությունները։

---

214 Մարաբա — արաբերեն՝ քառորդ։

215 Խաֆիր կամ դաֆիր — արաբերեն՝ պահապան։

216 Կապալ — թուրքերեն՝ շրջապատում, պաշարում։

217 Կշլակ — թուրքերեն՝ ձմեռանոց։

218 Տե՛ս «Գյուղանդիոն», 1910, № 4127, մայիսի 23։

219 Սարգիս և Միսակ Բզեյան, նշված աշխ., էջ 262։

1910 թ. Մուշի դաշտի Շեյխպրիմ գյուղում մարաբաները, վերցնելով աղաներից հող ու սերմացու, տալիս էին նրանց բերքի կեսը և կատարում դաշտային ու տնային բոլոր աշխատանքները։ Գյուղացիները ասում էին «մեր ինը մասը աղային, մեկը նոր մեղի կաշխատի»[220]։ Համարյա այդ վիճակում էին նաև նույն դաշտի Խարտոս գյուղի բնակիչները, որոնց մասին ականատեսը գրում է. «Գրիքի օր չանցնիր, որ աննն մեկ մարդ աղայի ծառայության մեջ չգտնվի»[221]։

Խարբերդի դաշտի Բլկատին գյուղում մարաբաները աղային տալիս էին բերքի կեսը, փոխադրում էին այն քաղաք, մշակում պարտեզն ու այգին, իրենց սայլերով ու գործիքներով մասնակցում կառուցումներին ու կատարում այլ աշխատանքներ՝ «առանց վարձի»[222]։

Երկրի որոշ շրջաններում մարաբաների շահագործումը համեմատաբար մեղմ էր։ Օրինակ՝ Էրզրումի դաշտում նրանք միայն իրենց միջոցներով տեղափոխում էին աղայի բաժինը քաղաք և պարարտացնում հողամասը»[223]։

Ֆեոդալական կախյալ գյուղացիության երկրորդ զանգվածը կազմում էին խաֆիրատուները։ Հեղափոխությունից հետո երիտթուրքերը փոխարինեցին խաֆիրությունը վարձակալությամբ և հայտարարեցին, որ աղաներն այսուհետև չպետք է խաֆիրության հարկ հավաքեն գյուղացիներից։ Սակայն նրանց օրենքը մնաց թղթի վրա։ 1911 թ. «Ազատամարտը» գրում էր, որ քուրդ-աղաները «խաֆիրական տուրքն ալ սկսած են ավելի խստությամբ դանձել, մանավանդ Սասունի լեռնային մասին մեջ»[225]։

Օգտվելով իթթիհատական կառավարության հովանավորությունից, աղաները չբավարարվեցին միայն խաֆիրության տուրքի գանձումով. ձգտեցին սեփականացնել նաև խաֆիրատու գյուղացիների հողերը։ Փաստերը ցույց են տալիս, որ XIX դարի վերջում և XX դարի սկզբին

---

220 «Ազատամարտ», 1910, № 264, մայիսի 5։

221 «Հորիզոն», 1910, № 49, մարտի 5։

222 Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկի դաշտը, Հուշամատյան պատմական, մշակութային և ազգագրական, Նյու-Յորք, 1959, էջ 796։

223 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 276։

224 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4533, սեպտեմբերի 23։

225 «Ազատամարտ», 1911, № 572, մայիսի 10։

դեռ կային վայրեր, ուր աղաները գյուղացիներից հավաքում էին միայն խաֆիրության տուրքը, իսկ հողը տակավին գյուղացիների սեփականությունն էր։ Հեղափոխությունից հետո այդ տուրքի գանձումը հիմնավորելու համար աղաները սկսեցին բռնագրավել գյուղացիների հողերը և օրինականացնել Թիֆլիսի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խարախանյանը այդ մասին գրում էր. «Բռնավորական շրջանին Սասնո, Խոյթի, Մոտկանու և ուրիշ շատ մը տեղերու գյուղերը, հայերը իրենց բայա (ճորտ) նկատելով, խաֆիրություն անունով տուրքեր կառնեին. բայ ատոր, հայերը պարտական էին իրենց աղաներու ամեն ծառայություն ընել՝ խոտ, ցորեն, կորեկ հնձել, տերև կտրել։ Սահմանադրությունեն վերջ հայերը մերժեցին այդ տուրքերը տալ ու չուզեցին ծառայություններ ընել, սակայն ենթադիր թուրք պաշտոնեից թելադրությամբ գյուղերը սկսան դատարանը դիմել և տուտ վկաներով հաստատել, թե խաֆիրության անունով տուրքերը հայերու ձեռք գտնված իրենց հողերու վարձ է, ու այդպես դատավորները, առանց աչ ու ձախ նայելու, առանց օրինավոր ու արդար քննության, օգտվելով այդ կողմերու ճնշված, աղքատ հայերու տգիտությենեն, անոնց հողերն ու տունները գյուղերու սեփականություն ըրին, մինչդեռ հայերը ի նախնյաց անտի այն հողերու վրա կը բնակեին, ունեին իրենց հինավուրց եկեղեցիները, գերեզմանատունները»[226]։

Կ. Պոլսի հայոց պատրիարքը պահանջից Թուրքիայի արդարադատության մինիստրից՝ «վերադարձնել խաֆիրության անունով գրավված հայ գյուղերու հողերը, որ դարավոր սեփականություն են հայերու (Պիթլիս և Տիարպեքիրի վիլայեթները)»[227]։ Սակայն երիտթուրքական իշխանությունները ոչ միայն չբավարարեցին պատրիարքի պահանջները, այլև խրախուսեցին աղաներին շարունակելու գալթումները։ Աղաները, ոգևորված, ամենուրեք գյուղացիներից սկսեցին պահանջել թե՛ ընթացիկ և թե՛ նախորդ տարիների խաֆիրության տուրքերը։ 1912 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ քրդական ցեղապետները «թրթռուի նման լցվեր են հայ գյուղերը (Սասուն), չորս տարիէ ի վեր ապառիկ մնացած խաֆիրությունը գանձելու համար»[228]։ Դիմադրավելու դեպքում նրանք

---

[226] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 39։

[227] Նույն տեղում, էջ 51։

[228] «Բյուզանդիոն», 1912, № 4893, նոյեմբերի 28։

դործադրում էին բանուԹյուններ, ծեծում ու անգամ սպանում էին դյուղացիներին, ինչպես Շիրվան պավառի Մադան դյուղում[229]։

Աղաները խաֆիրութ յան տուրքը հավաքում էին գերազանցապես արդյունավճարով ու աշխատավճարով և միայն բացառիկ դեպքերում՝ դրամավճարով։ Այդ ապրանքադրամական հարաբերութ յունների Թույլ զարգացման հետևանք էր։

Մենք վիճակագրական տվյալներ չունենք պարզելու, Թե խաֆիրութ յան տուրքի որ մասն էր կազմում արդյունավճարը և որը՝ աշխատավճարը կամ դրամավճարը։ Մեր ձեռքի տակ եղած հատուկենտ տեղեկութ յունները ցույց են տալիս, որ որոշ վայրերում գերիշխում էր արդյունավճարը կամ մԹերավճարը։ 1910 Թ. Սասունի Արծվիկ դյուղի 23 տընտեսութ յուններից բդրջիների ցեղապետ Նադիր աղան հավաքել էր 50 քիլե ցորեն կամ 1000 ղուրուշ (1 քիլեն=20 ղուրուշ), 60 քիլեն սպիտակ ղլղիլ կամ 840 ղուրուշ (1 քիլեն=14 ղուրուշ), 40 քիլե կորեկ կամ 480 ղուրուշ (1 քիլեն=12 ղուրուշ), 230 մշակ կամ 1150 ղուրուշ (1 մշակի աշխատանքը=5 ղուրուշ)։ Բացի դրանից նաև՝ ոչխար, բուրդ, յուղ, մեղր՝ 1380 ղուրուշի արժողութ յամբ։ Այդ բոլորը միասին կազմում էր 4850 ղուրուշ[230], տոկոսներով՝ 76,3 տոկոս մԹերավճար և 23,7 տոկոս աշխատավճար ունեցա։

«Ազատամարտը» գրում էր. «ԵԹե մենք կարողանայինք ավելի մանրամասն կազմել տեղեկագիրը, այս Թիվը կրկնապատկված պիտի լիներ, որովհետև այդ աղան յուրաքանչյուր գյուղի մեջ իր գործակատար փոքրիկ աղաներն ունի, որոնք իրենց պետեն ետ չեն մնար։ Մենք մեր ցանկին մեջ չմտցուցինք աղային յուրաքանչյուր գյուղի կողմեն տրվելիք 10 ղույդ տրեխ (իր խոլամաններուն հագցնելու), 5 ղույդ միղարի Թել և այլն։ Աւոր վրա ավելցնենք այն, որ յուրաքանչյուր ամուսնացող աղջիկ և աղա պաղշիշով մը պարտավոր են աղային հավանութ յունը առնել»[231]։

Կային շրջաններ, ուր աշխատավճարը կազմում էր խաֆիրութ յան տուրքի համարյա կեսը։ Օրինակ, Բիթլիսի սանջակի Փարխանդի գավառակի Կորվու գյուղում բնակիչները վճարում էին տարեկան 800 կոտ ցորեն կամ 12000 ղուրուշ (1 կոտը=15 ղուրուշ), 1000 բանդակ առ-

229 Տե՛ս «Մշակ», 1913, № 217, հոկտեմբերի 2։

230 Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 607, հունիսի 20։

231 Նույն տեղում։

վույտ կամ 5000 ղուրուշ (1 բանդակը = 5 ղուրուշ), մշակ, նվերներ, տուգանք և այլն 15000 ղուրուշ (1 մշակը = 5 ղուրուշ)[232]։

Այսպիսով, աղան գյուղացիներից տարեկան հավաքում էր 32000 ղուրուշի խաֆիրության տուրք, որից 17000-ը մթերավճար, իսկ 15000-ը՝ աշխատավճար։ Այլ կերպ ասած՝ մթերավճարը կազմում էր խաֆիրության տուրքի մոտ 53, իսկ աշխատավճարը՝ 47 տոկոսը։ Հաշվումները ցույց են տալիս, որ աղաները 1910 թ. Սասունի Բաղավանք գյուղում յուրաքանչյուր հարուստ տնտեսությունից տարեկան վերցնում էին միջին հաշվով 72—80 ռուբլի, իսկ միջակ տնտեսությունից՝ 24 ռուբ.[233]։ Դա մի պատկառելի գումար էր, որ կազմում էր գյուղացիների վաստակի մեծ մասը։

Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում (մասնավորապես Շատախում, Կարկառում, Գավաշում, Մամրտանքում, Խլզանում, Սպարկերտում, Կարնկանում, Մոկսում և այլուր) ֆեոդալական տուրքը կամ ռենտան կոչվում էր կապալ։ Խաֆիրությունը համարվում էր գյուղացիների իբր թե պաշտպանության, իսկ կապալը՝ նրանց հպատակության, հնազանդության տուրք։ 1912 թ. «Մշակը» կապալը բնութագրում էր որպես «Ճորտատիրական մի տուրք», որ վճարում էին հայ երկրագործները քուրդ աղաներին «իբրև նշան ստրկության»[234]։ Համարյա նույնն էր հաստատում նաև «Բյուզանդիոնը». «Կապալը որոշյալ տուրք մըն է, զոր սահմանադրութիւնեն առաջ յուրաքանչյուր հայ ռայա կվճարեր իր աղային իբրև հպատակության տուրք»[235]։

1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը հայտարարեցին, որ խաֆիրության հետ միասին վերանում է նաև կապալը։ Բայց կարճ ժամանակից հետո կապալը վերականգնվեց։ 1912 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ վանի կուսակալ Իզզեթ բեյը, շրջագայելով գավառները, համոզում էր գյուղացիներին, որ նրանք վճարեն աղաների «խոշոր կապալները, գյուղարաները, անկարեաները, իֆրամները և այլն, և այլն»[236] (գյուղարա—պարհակ, անկարեա—կոռ, իքրամ—նվեր)։

---

232 Տե՛ս «Ազատամարտ», 1910, № 207, փետրվարի 24։

233 Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 613, հունիսին 27, № 646, օգոստոսի 4, № 607, հունիսի 20։ Գեղամ Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ, Ֆ. Պոլիս, 1911, էջ 32։ 1 ղուրուշը 1910 թ.=էր 8 կոպեկի։

234 «Մշակ», 1912, № 144, հուլիսի 5։

235 «Բյուզանդիոն», 1912, № 4871, նոյեմբերի 2։

236 Նույն տեղում։

Հովանավորվելով երիտթուրքերի կողմից, աղանները համարյա ամենուրեք վերստին սկսեցին հավաքել կապալը: «Մշակը» հաղորդում էր. «...անցյալ տարի բնիկները ոստիկանների օժանդակությամբ Սպարկիրտ, Խիզան, Կարկառ և Մամրատանք գավառների հայերից բռնի հավաքեցին կապալի չորս տարվա բարդված տուրքերը, իսկ հայերի բողոքները մնացին անհետևանք»[237]: «Աշխատանքը» գրում էր. «Մոկսի քուրդ ավատապետները, օգտվելով ներկա խառն վիճակին, սկսած են հին ու նոր անուղղակի կապալները հավաքել հայ գյուղացիներեն»[238]:

Իբրև կապալ գյուղացիներից վերցնում էին ցորեն, գրամ, մշակ, ընկույզ, ասանձի չիր, վոշիկ (կամ ոըշիկ—մի տեսակ տրեխ՝ կաննիփից ու մալից պատրաստված) և այլն: Այդ դանձումները գյուղացիների համար անասելի ծանր էին, մանավանդ որ նրանք կալվածատիրական հարկերի հետ միասին վճարում էին նաև պետական տուրքերը:

Արևմտահայ կալվածատիրական գյուղացիության մի մասն էլ շահագործվում էր կշռակության եղանակով, այսինքն կիսաքոչվոր ու քոչվոր աղանները իրենց ղինակիցներով, ցեղակիցներով ու անասուններով իջնում էին սարերից, ձմեռում հայկական գյուղերում, ապրում նրանց հաշվին:

Անցնելով իշխանության գլուխ, երիտթուրքերը հայտարարեցին նաև կշռակության վերացման մասին: Բայց շատ չանցած այդ էլ անուշադրության մատնեցին, և աղանները շարունակեցին գյուղացիության կշռակային շահագործումը:

1909 թ. Գեղամ Տեր-Կարապետյանը գրում էր, որ Տարոնում վրանաբնակ քրդերից «շատերը աշնան առնն՝ իրենց վրաններով, տավարի, ոչխարի հոտերով, ընտանիքով ու ծառաներով հայ գեղերը կը խուժեին, հայոց տները կը տեղավորվեին ու կը ձմեռնեին: Այս բռնի և անտանելի բնակակցություն գըշլաք կը կոչվեր: Քյուրտ վրանաբնակներու պատմական մեկ պատուհասն էր գըշլաքը, զոր՝ հայ գյուղացին ամեն տարի հոկտեմբերեն մինչև ապրիլի վերջերը դատապարտված էր կրելու ու վրդովվելով իր առխաղ առիքին տակ ունեցած խաղաղությունը, ստրկորեն մատուցանել անորակելի ծառայություններ իր սուրբ թոնիրին կուշտը տեղավորված անօպա վրանաբնակին: Պետք է հոգար անոնց հացը, պաշարը, անոնց տավար-ոչխարը, պետք է տաներ

---

237 «Մշակ», 1912, № 144, հունիսի 20:

238 «Աշխատանք», 1912, № 6—102, էջ 7:

ամենն բիրտ քմահաճույքին, ջանալով փրկել կյանքը, փրկել իր պատիվը, եթե հնար է»: Հայ գյուղացիները, իհարկե, բողոքում էին այդ բռնություններին դեմ, բայց «ո՞վ կը լսեր այդ ձայնը, հնծնծանքին: Գետինը կարծր էր, երկինքը բարձր էր և աղաղակը անարձագանք կը մնար»[239]:

1913 թ. «Աշխատանքը» գրում էր, որ Վասպուրականի մի շարք գյուղերում աղանների գործակալները աշնանը նրանց անասուններին բաժանում են հայկական գյուղերի վրա՝ ձմռանը կերակրելու ու պահելու համար: Զբաղարարվելով գրանով, նրանք հայերին կշտակության էին տալիս նաև իրենց ցեղակիցների անասուններին[240]:

Նյութերի բացակայության պատճառով անհնարին է ստույգ որոշել, թե կշտակության ժամանակ աղանները և նրանց գինակիցները գյուղացիներից որքան աշխատավճար և արդյունավճար ունեցա էին վերցնում, բայց կասկածից վեր է, որ նրանք ծանրաբեռնում էին նրանց այդ պարտություններով և, որ ամենաանտանելին էր, ոտնահարում էին նրանց մարդկային արժանապատվությունը, գործադրելով անձնարձակ բռնություններ ու կամայականություններ:

Երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայ գյուղացիության ֆեոդալական հարստահարումը ընթանում էր նրա քաղաքական իրավազրկության ֆոնի վրա: Օգտվելով նոր կառավարիչների հովանավորությունից ու թողտվությունից, աղանները շարունակում էին գործադրել անձնական իշխանություն թե՛ մարաբանների ու օրթաղչիների, թե՛ խաֆիրատուների ու կապալատուների և թե՛ կշտակության եղանակով շահագործվող գյուղացիների հանդեպ: Ճիշտ է, 1908 թ. հեղափոխությունից անմիջապես հետո երիտթուրքերը վերացրին սուլթանի սահմանած այն օրենքները, որոնցով արգելվում էր հայ գյուղացիների տեղաշարժը գյուղից-գյուղ, գյուղից-քաղաք և գավառից-գավառ. նրանք իրավապես աղատեցին հայերին այդ կապանքներից և թույլատրեցին մեկնել անգամ արտասահման[241]: *Սակայն նոր կառավարիչները շուտով անտեսեցին իրենց իսկ հրատարակած այդ օրենքը: Եվ աղա-*

---

[239] *«Աղատամարտ», 1909, № 47, օգոստոսի 17:*

[240] *«Աշխատանք», 1913, № 22—118, էջ 4:*

[241] *Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Վիշնևսկին 1910 թ. հաղորդում էր, որ հեղափոխությունից հետո «հայերը տեղաշարժվելու աղատություն սատացան, որը առաջ չունեին» (ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 43, թ. 162, 163):*

նները, օգտագործելով այդ հանգամանքը, առաջվա նման արգելակում էին գյուղացիների տեղաշարժերը[242]։

Գյուղացիները հաճախ դիմում էին փախուստի։ Բայց այդ ճանապարհով էլ չէին փրկվում, քանզի տերերի պահանջով իշխանությունները փնտրում և վերադարձնում էին նրանց։ 1913 թ. «Աշխատանքը» գրում էր, որ Սեիդ Ալիի կալվածքից փախել է 18 հայ, որոնց այժմ «կառավարությունը շղթի ցուցումներով կը պահանջէ»[243]։

Աղաները միջամտում էին գյուղացիների նաև անձնական գործերին՝ պսակում և ամուսնալուծում էին աղաներին ու աղջիկներին, վերցնում «նվերներ», ավերում էին դիմադրավողների տունն ու տեղը, հափշտակում ու սեփականացնում նրանց ունեցվածքը, մարդկանց վաճառում ու դնում էին իբրև ապրանք։ «Աղատամարտը» գրում էր, որ Մոոկանում «Ճորտատեր աղան այսօր ալ կրնա «իր հայերը» ծախել ուրիշի մը, կամ նվեր տալ իր մեկ զավակին, իր մեկ փեսին՝ տնով, տեղով, հողով, օդով, ջրով»[244]։ 1914 թ. նույն թերթը հաղորդում էր. «Մամրատանքի մեջ ներկա սահմանադրական վարչության օրով իսկ անլսելի բռնություններ կը կատարվին և գյուղացիք իբրև պարզ ապրանք կը ծախվին։ Այսպես, Ճեմիլ աղան 800 ղուրուշով Հաքիմ աղային կը ծախե Աբդո Ավոյանի տունը ընտանիքով հանդերձ։ Գյուղենց գյուղին Սաֆարի տունը ընտանիքով մեկտեղ կը ծախվի 900 ղրշի»[245]։

Այդ փաստերը ցույց են տալիս, որ հեղափոխությունից առաջ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող ճորտատիրությունը շարունակվում էր նաև երիտթուրքերի կառավարման տարիներին՝ գերազանցապես Բիթլիսի, Դիարբեքիրի ու Վանի վիլայեթներում, ինչպես նաև մյուս վիլայեթների մի քանի գավառներում։ Ինչպես նախորդ ժամանակաշրջանում, այնպես էլ հեղափոխությունից հետո ճորտատիրությունը փաստական էր Արևմտյան Հայաստանում։ Բայց, ի տարբերություն նախորդ շրջանի, երբ պաշտոնապես արգելված էր հայ գյուղացիների տեղաշարժը, երիտթուրքերի կառավարման տարիներին այդ արգելքը իրավապես վերացված էր։ Այնուամենայնիվ, Արևմտյան Հա-

---

242 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, սեպտեմբերի 14։ «Աղաւամարտ», 1910, № 264, մայիսի 5։

243 «Աշխատանք», 1913, № 22—118, էջ 6։

244 «Աղաւամարտ», 1909, № 171, հունվարի 11։

245 «Աշխատանք», 1913, № 22—118, էջ 6։

յաստանում գյուղացիության մեծամասնությունը կախյալներն էին, իսկ ճորտերը համեմատաբար քիչ էին։

Ի դեպ, Ե. Սարգսյանը նկատի ունենալով մեզ, գրում է. «...մեր որոշ հետազոտողներ սխալ եզրակացության են հանում, իբր թե Արևմտյան Հայաստանում գոյություն են ունեցել ճորտատիրական հարաբերություններ, ճորտատիրական իրավունք»[246]։ Ապա անմիջապես շարունակում է. «Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, որտեղ տիրապետում էին քրդական աշիրաթները (այսինքն՝ աշիրևթները—Ա. Հ.), հայ հողագործ բնակչությունը գտնվում էր ամենածանր պայմաններում։ Այստեղ ձևավորված հարաբերությունները հաճախ ոչնչով չէին տարբերվում ճորտատիրական իրավունքից։ Սակայն անիրավացի է կատարել նման ընդհանրացում ամբողջ Արևմտյան Հայաստանի նկատմամբ»[247]։

Նախ՝ հիղինակը, հիշատակելով մեր «Ագրարային հարաբերությունները...» աշխատությունը, ոչ միայն չի բերում մեր ուղղակի խոսքը, այլև չի նշում աշխատության կոնկրետ էջը, որոնք անհրաժեշտ են գիտական բանավիճերի ժամանակ։ Երկրորդ՝ նյութերի բազմակողմանի ուսումնասիրությունը մեզ ևս բերել է այն հայտնի եզրակացության, որ XIX դարի վերջին ու XX դարի սկզբին ճորտատիրական վիճակում էր գտնվում Արևմտյան Հայաստանի ոչ թե ամբողջ գյուղացիությունը, այլ նրա մի մասը, կամ, որ նույնն է, ճորտատիրությունը տարածված էր Արևմտյան Հայաստանի սոսկ առանձին շրջաններում։ Այսպես, մենք գրել ենք, որ սուլթանն ու աղաները «գյուղացիների մի մասին կոտորում էին, իսկ մյուսին արտաքսում իրենց հողերից»[248]։ Այդ արտաքսվածներին նրանք նորից էին ամրացնում հողին և շահագործում՝ մի մասին որպես կիսարարներ, իսկ մյուս մասին «որպես ճորտեր»[249]։ Մենք նշել ենք, որ ճորտատիրությունը «տարածված էր գլխավորապես Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի վիլայեթներում ու մնացած վիլայեթների մի շարք շրջաններում»[250]։ Ինչպես տեսնում ենք, Ե. Սարգսյանի՝ մեր հասցեին ուղղված քննադատությունը հիմնազուրկ է։

Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում XIX դարում համատա-

---

246 Ե. Ղ. Սարգսյան, նշված աշխ., էջ 207։

247 Նույն տեղում։

248 Ա. Ս. Համբարյան, *Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914)*, Երևան, 1965, էջ 216։

249 Նույն տեղում, էջ 218։

250 Նույն տեղում, էջ 75։

բած ճորտատիրության առկայության թեզը պատկանում է ոչ թե Ա. Համբարյանին, այլ Ե. Սարգսյանին։ Դեռ 1957 թ. նա գրում էր. «Այսպիսով, Օսմանյան կայսրության մեջ գյուղացիությունը այնպիսի ճորտական վիճակում էր, ինչպես Բյուզանդական կայսրության ժամանակվա գյուղացիությունը։ Թեև Թանզիմաթի ռեֆորմները հռչակում էին ճորտ գյուղացիների ազատագրությունը և տալիս էին նրանց իրավունք թափուր սիստեմով հող ձեռք բերել, այնուամենայնիվ մինչթանզիմաթյան շրջանում գոյություն ունեցող գյուղացիների դրությունը չփոխվեց նաև Թանզիմաթյան ռեֆորմներից հետո»[251]։ Ե. Սարգսյանը կարող էր իր սխալն ուղղել ինքնաքննադատության ճանապարհով։

Հետազոտությունները մեզ բերել են այն համոզման, որ 90-ական թվականների հայկական կոտորածներից հետո Արևմտյան Հայաստանում մեծացավ ֆեոդալական կախյալ, թերևս նաև ճորտ գյուղացիների թվաքանակը։ Այդ գյուղացիների թիվը որոշ չափով ածեց նաև երիտթուրքական հեղափոխությունից հետո։ Այսպես, 1913 թ. «Մշակը» գրում էր. «Խաֆիրությունը, որ առաջ ավելի սահմանափակված էր Սասունի, Խոյթի, Մոտկանի և Փսանանց գավառի կողմերը, այժմ ընդհանուր սարսափի շնորհիվ երթալով կընդհանրանա նաև Մուշի դաշտին մեջ»[252]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին ոչ միայն մեծացավ կալվածատիրական գյուղացիների թիվը, այլև ավելի սաստկացավ նրանց շահագործումը։ «Ազատամարտը» գրում էր, որ Սասունի Թաղվու գյուղում աղաները «կրկնակի խստությամբ ու քանակությամբ կը գանձեն «վլային» վերապահված տուրքերն ու աշխատանքները»[253], իսկ «Աշխատանքը» հաղորդում էր, որ Շատախում ու Նորդուզում «Օլամները այժմ քան երբևիցե շատցեր են»[254]։

XX դարի սկզբին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում դեռ գոյատևում էր քաղաքակիրթ աշխարհին ամոթաբեր ստրկությունը։ Շահագործելով գերազանցապես տնային աշխատանքներում, տիրապետող վերնախավը շարունակում էր վաճառել ստրուկներին, դարձնելով դա հարստության աղբյուր։ 1909 թ. երիտթուրքերը հատուկ օրենք

---

251 *Е. К. Саркисян,* Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957, стр. 45, *տե՛ս նաև էջ 42, 43, 44։*

252 *«Մշակ», 1913, № 213, սեպտեմբերի 27։*

253 *«Ազատամարտ», 1911, № 650, օգոստոսի 9։*

254 *«Աշխատանք», 1913, № 22—118, էջ 4։*

հրատարակեցին սարկույան վերացման մասին[255], բայց այն չկիրառվեց կյանքում։

* * *

Հայտնի է, որ սուլթան Աբդուլ Համիդի տիրապետության տարիներին, Արևմտյան Հայաստանում գոյություն չուներ հայ հողատերերի դասակարգ։ Բայց կային առանձին կալվածատերեր, որոնք ապրում էին դերազանցապես քաղաքներում և տնտեսական ու քաղաքական ինքնուրույն ուժ չէին ներկայացնում։ Այդ վիճակը համարյա անփոփոխ մնաց նաև երիտթուրքերի կառավարման ժամանակաշրջանում։ Հայ կալվածատերերը չէին վարում սեփական տնտեսություն, տալիս էին իրենց հողերը վարձակալությամբ և ստանում բերքի մի մասը կամ փող։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ռ. Բեկզուլյանցը, շրջելով Վասպուրականում ու Տարոնում, գրել է, որ Շահդելդի գյուղի բնակիչների հողը «պատկանում է վանի հարուստ հայերից մեկին։ Այդ պատճառով էլ նրանք շահագրգռված չեն բարելավել հողի մշակումը. այնքան են վաստակում, որ իրենք կերակրվեն և վճարեն տիրոջ վարձակալական փողը»[256]։

Արևմտյան Հայաստանի վանքերն ու եկեղեցիները շարունակում էին իրենց ձեռքում պահել հողային որոշ տարածություններ։ Նրանք իրենց կալվածքները մշակում էին համարյա բացառապես ֆեոդալական եղանակներով. երբեմն տիրույթներում բնակեցնում էին հողազուրկ հայ գյուղացիներին և շահագործում իբրև մարաբաններ[257], հաճախ էլ կալվածքները տալիս էին շրջապատի սակավահող գյուղացիներին կիսաբերքի սկզբունքով և ստանում բերքի որոշ մասը[258]։

Արևմտահայ վանական գյուղացիների շահագործումը համեմատաբար մեղմ էր։ Նրանք ազատ էին ազգային ու կրոնական հալածանքներից և հնարավորության դեպքում կարող էին տեղափոխվել։ Վանական հողատիրությունը արևմտահայ կրոնական վերնաշերտերի եկամտի աղբյուրներից մեկն էր։ Սակայն նրանք եկամուտներ էին ստանում նաև հայ բնակչության հարկման միջոցով։ Կ. Պոլսի հայոց պատրիարքու-

---

255 Տե՛ս В. А. Гурко-Кряжин, նշված աշխ., էջ 38։

256 Ռ. Բեկզուլյանց, նշված աշխ., էջ 11։

257 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 4—51, էջ 7։

258 Տե՛ս Ա.-Դռ, նշված աշխ., էջ 25, 56, «Աշխատանք», 1911, № 1—48, էջ 9, 1914, № 34—180, էջ 4։

Բյունը, 1909 թ. ավյալներով, յուրաքանչյուր ընտանիքից տարեկան հավաքում էր 25 ղուրուշ աղջային տուրք։ Եվ որովհետև շատերն անկարող էին վճարել այն կամ ուղղակի խուսափում էին վճարումից, ուստի կուտակվել էին ապառքներ։ 1910 թ. պատրիարքարանի տնտեսական խորհուրդը որոշում ընդունեց՝ հավաքել վերջին տասը տարվա ընթացքում կուտակված ապառքները։ Եվ չնայած բնակչությունը ի վիճակի չէր այդ վճարումներին և խնդիր բարձրացվեց սահմանափակվել միայն վերջին երկու տարվա ապառքների դանձումով, այնուամենայնիվ, տնտեսական խորհուրդը հաստատ մնաց իր որոշմանը[259]։

Պատրիարքարանից զատ վանական գյուղացիությունը ենթարկվում էր նաև հոգևորականների հարստահարմանը։ Նրանք գյուղացիներից հավաքում էին զանազան «նվիրներ»։ «Հորիզոնը» գրում էր. «Յուրաքանչյուր տարի վանքի նվիրակը՝ անցնում է գյուղից գյուղ, գավառից գավառ, նահանգից նահանգ, այցելում է բոլոր վայրերը և հանգանակում ժողովրդի նվիրները։ Իբրև մատաղ տալիս են ոչխար ու գառ, իբրև հոգեթաժին՝ կով, ևզ, հրինջ ու արջառ, իբրև պաղի՝ ցորեն, գարի, բրինձ, պանիր, ձեթ, յուղ, հավ, հավկիթ, մրգ, ռուփ, շորևզեն, ամանեղեն և իբրև աջհամբյուր՝ դրամ[260]։

Չարաշահելով բնակչության կրոնական զգացմունքները և օգտագործելով նրա խավարամտությունը, հոգևորականները կուտակում էին զգալի միջոցներ։ Այսպես, Ալջավազի Սբանշելագործ վանքի միաբանները 45 ամսվա ընթացքում (1908—1911 թթ.) հավաքեցին 51951 ռուբ. 20 կոպ.[261]։ Այդպես իրենց նկամտությունները մեծացնում էին նաև մյուս վանքերի միաբանները։ Ականատեսներից մեկը նշում էր, որ Մուշի ս. Կարապետ վանքը 1911 թ. ուներ հարյուրավոր թեմական գյուղեր և յուրաքանչյուրից տարեկան առնվազն 50, 100, 150, 200 ռուբլու «նվեր» էր ստանում[262]։

Արևմտահայ գյուղացիությանը հարստահարում էին նաև գավառական հոգևոր առաջնորդները, վարդապետներն ու քահանաները։ Նրանք «նվերներ» էին վերցնում յուրաքանչյուր ծննդի և կնունքի, օրհնանքի և պսակադրման, հիվանդության ու թաղման և այլ ծիսակա-

---

259 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4200, օգոստոսի 18։

260 «Հորիզոն», 1911, № 91, մայիսի 1։

261 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 12—59, էջ 9։

262 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 1—48, էջ 9, 1914, № 24—180, էջ 4։

տարութիւնների համար։ Կրոնական հաստատութիւնների հավաքած հարկերի մի մասը դնում էր ժողովրդի կուլտուր-կրթական գործի օգտին։ Մյուս մասը իբրև հարկ տրվում էր Բուրբական պետութիւնը, քանի որ վանքերը, ինչպես հեղափոխութիւնից առաջ, այնպես էլ հետո կառավարութեան կողմից դրված էին հարկերի տակ, որոնք տարեցտարի մեծանում էին[263]։ Վանական միջոցների մի մասն էլ հափշտակվում էր աղանների կողմից (հեղափոխութիւնից հետո էլ նրանք շարունակում էին հարկ վերցնել հայոց վանքերից և հետևողականորեն հավաքել իրենց սահմանած գումարները)։

Վերջապես, վանական միջոցների մի մասն էլ յուրացնում էին հայոց հոգևորականները՝ գերազանցապես տեղական առաջնորդները, եպիսկոպոսներն ու քահանաները։ «Հորիզոնը» գրում էր. ս. Հովհաննու վանքը «ունի մի օղիի տակառ վարդապետ, որի ձեռքումն է վանքի ամբողջ տնտեսութիւնը։ Եվ այդ Բաբոսի որդուն առնվազն տարեկան 600 ռուբ. օղու ծախ է լինում», իսկ ս. Աղբևրիկ վանքում «բամու բերածը քամին կտանի, այսինքն՝ ով որ շուտ հասնի վանքը, նա էլ կուտե»[264]։

* * *

Երիտթուրքերի կառավարման տարիներին ֆեոդալական շահագործման էր ենթարկվում նաև մահմեդական աշխատավոր գյուղացիութիւնը։ Օգտվելով քրդերի սակավահողութիւնից և հողազրկութիւնից, աղանները նրանց հող էին տալիս կապալով և շահագործում իբրև մարաբաններ կամ օրթաղչիներ։ Մի տեղում նրանք վերցնում էին բերքի $^1/_3$-ը, մյուսում՝ $^1/_2$-ը, երրորդում՝ ավելին։

Չբավարարվելով դրանով, նրանք գանձում էին քուրդ գյուղացիներից նաև այլ մթերքներ, ինչպես և ստիպում էին կատարել պահպանի պարհակներ։ Եթե հայկական գյուղերում ապրում էին նաև քրդեր, աղանները նրանց շահագործման մեջ խտրութիւն համարյա չէին դնում։ «Հորիզոնը» հաղորդում էր, որ Բուլանըխում շեյխը շահագործելով Գյապղան գյուղի հայ և քուրդ բնակիչներին իբրև մարաբաններ, վերցնում է 8 եզ ու կով, 25 ոչխար, 10 հավ, 40 թիվ ցորեն, 30 բարդ խոտ (1 բարդը = 30—40 և 100 խրձի և կազմում էր մի սայլի բեռ), 1 արոր 1 տան դուռ, 6 անդամ կթում է նրանց ոչխարը, պահանջում է նաև

263 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 4—51, էջ 8, 1914, № 34—180, էջ 4, № 36—182, էջ 5։

264 «Հորիզոն», 1911, № 91, մայիսի 1։

200 մշակ իրենց եղներով ու սայլերով և 60 օր աշխատեցնում իր տնտեսության մեջ[265]։

Աղաները քուրդ գյուղացիությանը հարստահարում էին նաև խաֆիրության միջոցով, որը տակավին պահպանվում էր «քրդերի մեջ»[266]։ Ա.-Դոն գրում էր, որ խաֆիրության իրավունքը երկրի մի շարք վայրերում «ստացել է քաղաքացիություն», որի հետևանքով Փսանանց գավառի սահմանամերձ «մի խումբ հայաբնակ ու քրդաբնակ գյուղեր... յուրաքանչյուր տարի կանոնավոր կերպով Հալոյի ժառանգներին (իմա՝ աղաներին—Ա. Հ.) վճարում են որոշ տուրք»[267]։

Նույն հեղինակն այնուհետև նշում էր, որ Նորդուզում աղան քրդաբնակ Պաղտաղի Սքունս գյուղից հավաքում էր 3 չափ ցորեն, 24 սարակ կամ բանվոր, Վերին Շամաքաոից՝ 1,5 չափ ցորեն, 18 սարակ և 10 ոչխար, Արղից՝ 5 ոսկի, 6 չափ ցորեն, 32 սարակ և 32 ոչխար, Բապանից՝ 3 չափ ցորեն, 30 սարակ, 30 ոչխար, 1 ձի և այլն[268]։

Ինչպես տեսնում ենք, աղաները քրդաբնակ գյուղերից խաֆիրության տուրքերը վերցնում էին համարյա բնավճարով՝ կտավով ու բահրայով, որը բնափակ տնտեսության հետևանք էր։

Երիտթուրքերի կառավարման տարիներին աղաները շարունակում էին շահագործել քուրդ գյուղացիներին նաև կշռակության եղանակով։ Աշնանը իրենց վինակիցներով, ցեղակիցներով ու անասնահոտերով իջնում էին սարերից, ձմեռում գյուղերում և հարկադրում քուրդ ռայաներին կատարել այն բոլոր պարտականությունները, ինչ հայերին։ Որոշ վայրերում նրանք ստիպում էին քրդերին բադ պահել, այսինքն՝ բաժանելով իրենց անասունները քրդական առանձին տնտեսությունների վրա, հարկադրում էին նրանց խնամել մինչև գարուն։ Գյուղացիները պարտավոր էին անկորուստ վերադարձնել աղաների անասունները, պակասելու դեպքում փոխարինը պետք է տային իրենցը, անկախ այն բանից, թե անասունը ավազակներն էին տարել, թե սատկել էր։

Տնտեսական կեղեքման հետ մեկտեղ քուրդ ռայաները ենթարկվում էին նաև անձնական բռնությունների ու անարգումների։ Աղաները արգելակում էին նաև քրդերի տեղաշարժերը, վաճառում ու գնում էին,

---

265 Տե՛ս «Հորիզոն», 1914, № 30, փետրվարի 8։

266 Ռ. Բեկզուլյանց, նշված աշխ., էջ 77։

267 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 300։

268 Տե՛ս նույն տեղում, էջ 302։

միջամտում անձնական գործերին, օգտվում առաջին դիշերվա իրավունքից, ծեծում ու սպանում էին[269]։ Ֆեոդալական հարաբերությունները, այդպիսով, խորանալով որոշ տեղերում, փաստական ճորտության էին հասել նաև քրդերի մեջ ու պահպանվել անգամ սահմանադրության հետո։

Երիտթուրքերի կառավարման տարիներին քուրդ գյուղացիները կեղեքվում ու հարստահարվում էին նաև մահմեդական հոգևորականության կողմից։ Մոլլաները շրջում էին գավառները և զանազան պատրվակներով հարկեր հավաքում, որոնց մի մասը տալիս էին շեյխերին, մի մասն իրենք էին յուրացնում, մի մասն էլ տրամադրում կուլտուր-լուսավորական նպատակների։

Երիտթուրքերի հեղափոխությունից հետո շարունակվեց նաև ասորի գյուղացիության ֆեոդալական շահագործումը։ Լեռնային շրջաններում ասորիների ներքին հարաբերությունները մնացին անփոփոխ։ Իսկ հարթավայրային շրջաններում բռնությունների ուժեղացման հետևանքով ավելի սաստկացավ երկրագործ ասորիների շահագործումը։ Քուրդ աղաների գործակալները շրջում էին ասորական գյուղերը և խլում ոչ միայն բնակիչների ունեցվածքը, այլև անասունների անհրաժեշտ կերը, աղաների անասունները տալիս էին ասորիներին կերակրելու և խնամելու ամբողջ ձմռանը, հավաքում էին զանազան հարկեր ու «նվերներ», հարկադրում կատարել բազմաթիվ պարհակներ։ Ասորիները երիտթուրքերի կառավարման տարիներին հայերի նման դառնում էին դժնդակ պայմաններում։ 1913 թ. «Աշխատանքը» դրում էր. «Այսօր Նորագույի հայ և ասորի տարրը գերիներ ու ճորտեր են գյուղերում»[270]։ Ապա խոսելով աղաների կողմից ասորիների նկատմամբ գործադրվող հարստահարությունների ու բռնությունների մասին, շարունակում էր. «Ինչքան տուներ այս պատճառով իսկ կը քայքայվին կը ճորտանան գյուղերուն, դրկվելով տնտեսական բոլոր միջոցներե»[271]։

Արևմտյան Հայաստանի գյուղացիները տնքում էին նաև կառավարության հարկային քաղաքականության ծանրության տակ։ Երիտթուրքերը իրենց դիրքերը ամրապնդելու նպատակով 1908—1909 թթ. փորձեցին բարեփոխել պետության հարկային քաղաքականությունը։

---

269 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4625, դեկտեմբերի 28, 1913, № 5218, դեկտեմբերի 20, «Ռահվիրա», 1912, № 3, «Մշակ», 1913, № 282, դեկտեմբերի 19, В. Гордлевский. Мусульманский мир, Пг., 1917, стр. 33.

270 «Աշխատանք», 1913, № 22—118, էջ 4։

271 Նույն տեղում։

Նրանք հայտարարեցին, որ այսուհետև քրիստոնյաներից, մասնավորապես հայերից, չպետք է վերցնել բեդելի-ասկերին կամ պինվորական հարկ[272]։ Ապա առաջարկեցին տեղական իշխանություններին՝ աշարի հավաքման իրավունքը վարձակալությամբ այլևս չտալ այն անձանց, որոնք հին վարչակարգի տարիներին աչքի էին ընկել իրենց չարագործություններով ու ոճրագործություններով[273]։

Այնուհետև կարգադրեցին բնակչությունից հավաքել ապառքների միայն 20%-ը[274]։ Երիտթուրքերը ակնարկեցին նաև այն մասին, որ աշարը պետք է փոխարինել դրամահարկով[275] և այլն։

Սակայն իթթիհատի պարագլուխները հենց որ հասան իրենց նպատակին, ոչ միայն շարունակեցին, այլև ավելի սաստկացրին Աբդուլ Համիդի հարկային քաղաքականությունը։

Արևմտյան Հայաստանի նախապատերազմյան շրջանի հարկերի ուսումնասիրության լավագույն աղբյուրներից մեկը, մեր կարծիքով, Ա-Դոյի հետազոտությունն է, ուր նշված է, որ 1909 թ. ամռանը կառավարությունը հավաքում էր հետևյալ ուղղակի հարկերը. աշար, պինվորական հարկ կամ բեդելի-ասկերին, կալվածական հարկ (որը բաժանվում էր երկու մասի՝ ա) շինությունների հարկ կամ էմլակ և բ) հողային հարկ կամ արազի), ռազմական հարկ կամ թնջիղաձ ասկերին, կրթական հարկ կամ մուաարֆ հիսասի, ձանապարհների հարկ (որը բաժանվում է երկու մասի՝ ա) դրամական կամ թնքելիֆ-սայիրին և բ) օրամական կամ մուքելիֆ-էմալին), ղբաղմունքի հարկ կամ թեմեթուհաթ և ոչխարի հարկ կամ խամչուռ[276]։ Ա-Դոն չի նշում, թե կառավարությունը ինչ անուղղակի հարկեր էր հավաքում բնակչությունից, սակայն մեր ձեռքի տակ եղած ուրիշ աղբյուրներ լրացնում են այդ բացը։ Այսպես, «Ազատամարտի» էջերում տպագրված են վիճակագրական տեղեկություններ, թե 1910—1911 թթ. Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Վանի վիլայեթներում կառավարությունը ինչ քանակությամբ և ինչ հարկեր է հավաքել բնակչությունից։ Պարզվում է, որ բացի վերոհիշյալ ուղղակի հարկերից,

---

272 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 35։

273 Տե՛ս նույն տեղում, թ. 53։

274 Տե՛ս նույն տեղում, թ. 60։

275 Աշարի փոխարինումը դրամահարկով, ինչպես և նրա կապալառության վերացումը տեղի ունեցավ միայն 1925 թ. փետրվարի 17-ին Մուսթաֆա Քեմալի կառավարության կողմից (տե՛ս А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948, стр. 151)։

276 Տե՛ս Ա-Դո, նշված աշխ., էջ 282։

գանձվել են նաև հետևյալ անուղղակի հարկերը՝ ոգելից խմիչքների ու ծխախոտի վաճառքի, որսորդության ու ձկնորսության, աղի ու վառոդի վաճառքի, հեռագրի ու դրոշմանիշի, առողջապահության ու դատական ծախսերի և այլն[277]:

Երբ համեմատում ենք այս հարկացուցակը սուլթան Համիդի կառավարության տարիների հարկացուցակի հետ[278], փոփոխություն չենք տեսնում: Ուրեմն, 1908 թ. բուրժուական հեղափոխությունը Արևմտյան Հայաստանում հարկերը և հարկանունները բողից անփոփոխ, բացառությամբ միակ ուղղակի հարկի, որի մասին կասվի ստորև:

Ինչպե՞ս էին գանձվում հարկերը: Աշարը պետք է գանձվեր հետևյալ կերպ. յուրաքանչյուր տարի բերքահավաքի ժամանակ կառավարության ներկայացուցիչը պետք է գնար գյուղերը, մասնավորապես կալատեղերը, չափեր հացահատիկը և վերցներ պետության բաժինը. շրջեր խոտատեղերը, հաշվեր խուրձերը, առանձնացներ պետության հասանելիքը և այլն: Բայց գործնականում կառավարությունը իր խնդիրը հեշտ էր լուծում. աշարի գանձման իրավունքը կամ աճուրդի էր հանում, կամ աշարի գինը վերցնում էր տեղական պաշտոնյաներից՝ գավառապետից, մյուդիրից, գյուղապետից, իսկ սրանք իրենց դումարը հավաքում էին գյուղացիներից[279]:

Կալվածատիրական գյուղի տասանորդի հավաքման իրավունքը վարձակալում էր սովորաբար ավյալ գյուղի տիրակալը:

Այդպես էր սուլթան Համիդի կառավարման տարիներին: Այդպես մնաց նաև հեղափոխությունից հետո:

Կալվածական տուրքը, ինչպես ասվեց, բաժանվում էր երկու մասի՝ էմլակ կամ շինությունների հարկ, որին ենթակա էին քաղաքների ու գյուղերի տները, խանութները, ջրաղացները և ձիհանքերը և արտի կամ հողային հարկ, որին ենթակա էին արտերը, այգիները, խոտատեղերը, կալատեղերը, արոտավայրերն ու մարգագետինները: Շինությունների հարկը որոշվում էր մամուր վերզբսիի կամ հարկային տեսուչի կողմից՝ մուխթարի մասնակցությամբ, իսկ հողային հարկը՝ պարձալ նույն տեսուչի կողմից, թափուներում գնահատված արժեքների հիման վրա[280]: Չինովորական հարկը գանձվում էր միայն քրիստոնյա տղամարդկանցից՝ ծնված օրից մինչև մահ: Կառավարությունը երկու

---

277 Տե՛ս «Աղատամարտ», 1914, № 1511, մայիսի 27:

278 Տե՛ս «Աշխատանք», 1913, № 9—155, էջ 6:

279 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 283, «Աղատամարտ», 1909, № 66, սեպտեմբերի 9:

280 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 286:

նկատառումով քրիստոնյաներին չէր զորակոչում. նախ՝ անարժան էր համարում զենք կրելու և երկրորդ՝ վախենում էր, թե մի օր այդ զենքը շուռ կգա իր դեմ: Թեպետև օրենքով յուրաքանչյուր քրիստոնյա ընտանիք պետք է զինվորական հարկ վճարեր համաձայն տղամարդկանց թվի, սակայն կառավարությունը այդ հարկը գանձում էր համապարտ երաշխավորության սկզբունքով՝ ամբողջ համայնքից: Ամեն մի գյուղում ծերակույտը կամ հիմքը կազմում էր տղամարդկանց ցուցակը, բաժանում ամբողջ զինվորական հարկը «համայնքի ընտանիքների վրա ըստ կարողության և ցուցակը հանձնում թահսիլդարին՝ գանձելու համար»[281]:

Այդպես էր զինվորական հարկի գանձման եղանակը սահմանադրությունից առաջ, այդպես մնաց նաև հեղափոխության առաջին տարիներին: 1909 թ. հունիսի 25-ին Երիտթուրքերի կառավարությունը օրենք ընդունեց քրիստոնյաների զինվորական հարկի վերացման և նրանց մահմեդականների հետ հավասարապես բանակ զորակոչելու մասին[282]: Զորակոչման ենթակա չէին ուսուցիչները, սովորողները, ծառայակրացինները, հիվանդները, ինչպես նաև «անպաշտպան կանանց ու երեխաների նեցուկ եղողները»[283]: Օրենքը հասավ Արևմտյան Հայաստան 1909 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, կենսագործվեց 1910 թ. մարտին[284]:

Ռազմական հարկը (բեդելյաղ ասկերի) վճարում էին բոլոր այն հպատակները, որոնք կալվածք ունեին և վճարում էին կալվածական հարկ: Քանի որ հարկի չափը որոշվում էր կալվածահարկի չափերով, ուստի ռազմական հարկը որոշելու համար առանձին մարմիններ չէին ստեղծվում: «Որքան մեկ հարկատու կալվածահարկ է վճարում, նրա համեմատական չափով էլ ռազմական հարկ է վճարում»[285]:

Զրաղմունքի հարկը (թեմեթուհաթը) տարածվում էր տարագնացների, արհեստավորների, առևտրականների և նման զբաղմունքի անձանց վրա՝ համաձայն վաստակի: Իսկ այդ վաստակը որոշվում էր հարկային տեսուչից, մուխտարից և ժողովրդից ընտրված չորս ներկայացուցիչներից կազմված հատուկ մարմնի կողմից[286]: Դեռ 1907 թ. կառա-

---

281 Նույն տեղում, էջ 285:

282 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊՄ, ֆ. 2000, գ. 1015, թ. 134:

283 «Մշակ», 1914, № 13:

284 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊՄ, ֆ. 2000, գ. 1015, թ. 137:

285 Ա.-Պո, նշված աշխ., էջ 288:

286 Տե՛ս նույն տեղում, էջ 290:

վարությունը փորձեց այս հարկը տարածել նաև օտարերկրացիների վրա, բայց հանդիպեց եվրոպական տերությունների դիմադրության։ 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը կրկին առաջ քաշեցին այդ հարցը, վերստին բախվեցին եվրոպական տերությունների դիմադրությանը և տեղի տվին, որի շնորհիվ օտարահպատակները ազատ մնացին թեմեթուհաթից։ Այս հարկը չէր տարածվում թուրքական պետական պաշտոնյաների, մտավորականների, բանվորների, գյուղացիների, նավաստիների վրա[287]։

Ճանապարհների հարկը (յոլ փարասին) հավաքվում էր դրամով (թնքելիֆ-սայիրին) և օլամով՝ աշխատավճարով (մուքելիֆ-էմալին)։ Դրամական հարկը վերցվում էր այն քաղաքացիներից, որոնք «ունեին կալվածքներ և վճարում էին կալվածահարկ»[288], իսկ օլամը տարածվում էր 20-ից բարձր տարիքի բոլոր տղամարդկանց վրա։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երիտթուրքերը այս հարկը վերանայեցին և օլամը տարածեցին նաև 18 տարին լրացած տղամարդկանց վրա[289]։

Ոչխարի հարկը (խամչուռ կամ աղնամ-րեսմի) վերցվում էր ըստ ոչխարների գլխաքանակի։ Հատուկ պաշտոնյան, որը կոչվում էր խամչուռ-մեմուրի, գնո փետրվար-մարտ ամիսներին զապտիեի ուղեկցությամբ հայտնվում էր գյուղերում ու ձմեռանոցներում, հաշվում յուրաքանչյուր գյուղի կամ տնտեսության ոչխարները և ցուցակները հանձնում շրջանային հաշվապահին կամ մուհասեբայի դայրեին, որը կազմում էր հարկացուցակը, հանձնում հարկահավաքին, սա էլ շրջում էր գյուղից-գյուղ, հավաքում հարկը ու բնակիչներին տալիս քոչան կամ ատացադիր[290]։

Կրթական հարկը (մուարըֆ հիսասի) տարածվում էր բոլոր այն հպատակների վրա, որոնք ունեին կալվածքներ և վճարում էին կալվածահարկ[291]։ Կրթական հարկը նույնպես հավաքվում էր թահսիլդարների կամ հարկահավաքների կողմից։

Անուղղակի հարկերը ինչպես սուլթան Համիդի, այնպես էլ երիտթուրքերի կառավարման տարիներին հավաքվում էին պետության կող-

287 Տե՛ս «Բյուզանդիոն», 1914, № 5249, հունվարի 27։

288 Ա.-Դո, նշված աշխ., էջ 289։

289 Տե՛ս «Աշխատանք», 1914, № 21—167, էջ 7։

290 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 291—292։

291 Տե՛ս նույն տեղում, էջ 298։

մից՝ բնակիչների գնած շաքարից, նավթից, սպիրտային խմիչքներից, լուցկուց և այլ առարկաներից։ Կառավարությունը հարկի տակ էր դնում այդ ապրանքները և գանձում վաճառողներից, իսկ վերջիններս, պարզ է, վերցնում էին գնորդներից։ Բնականաբար, անուղղակի հարկերը իրենց ամբողջ ծանրությամբ նույնպես ընկնում էին աշխատավոր զանգվածների վրա։

Այժմ տեսնենք, թե որքա՞ն էր յուրաքանչյուր հարկի չափը։ Երիտ-Թուրքերի կառավարման տարիներին աշարը վերցվում էր հացահատիկներից բնավճարով, իսկ խոտից, առվույտից, խաղողից, մրգերից, ծխախոտից և այլ մթերքներից՝ դրամով։ Չափը պաշտոնապես 8-ից մինչև էր[292], բայց իրականում անկայուն էր, քանի որ կախված էր ոչ միայն բերքատվությունից, այլև կապալառուների քմահաճույքից։

Կալվածական հարկը 1000 ղուրուշ գնահատվող կառույցից գանձվում էր 5 ղուրուշ, արտից ու խոտատեղից՝ 4 ղուրուշ, իսկ արոտատեղիներից ու կշլակներից՝ 10 ղուրուշ։ Վերջիններս բարձր էին հարկվում, որովհետև դրանք «կոնկրետ բերք չունենալով, ազատ էին տասանորդի հարկից»[293]։ Կառավարությունը խանութներից գանձում էր սովորական կառույցների հարկի կրկնակին, հիմնավորելով, որ «խանութը համարվում է եկամուտ բերող շենք»[294]։

Ջինվորական հարկը յուրաքանչյուր քրիստոնյա տղամարդուց գանձվում էր կես ոսկու կամ 4 ռուբ. 20 կոպ. չափով[295]։ Երիտթուրքերը, ինչպես արդեն ասվեց, 1909 թ. պաշտոնապես վերացրին այդ հարկը, բայց շուտով սահմանեցին, որ քրիստոնյաները կարող են ազատվել զինվորական ծառայությունից, եթե վճարեն 30 ոսկի[296]։ Թեմեթուհաթի կամ զբաղմունքի հարկը վերցվում էր 1000 ոսկու վաստակից 5 ոսկի կամ 0,5 տոկոսը[297]։

Ճանապարհահարկը, ինչպես ասվեց, գանձվում էր դրամով և աշխատավճարով։ Դրամով գանձվում էր կալվածահարկի մոտ 3%-ը, իսկ աշխատավճարով հարկադրվում էր յուրաքանչյուր 20 տաքիկանից բար-

---

292 Տե՛ս նույն տեղում, էջ 283։

293 Նույն տեղում, էջ 286։

294 Նույն տեղում։

295 Տե՛ս նույն տեղում։

296 Տե՛ս «Մշակ», 1914, № 168, օգոստոսի 2։

297 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 290։

ձըր տղամարդը՝ տարեկան 3 օրով։ Համաձախ կառավարությունը աշխատավճարի փոխարեն վերցնում էր դրամ, գնահատելով օրը 4—5 ղուրուշ[298]։

Ոչխարի հարկը հավաքվում էր յուրաքանչյուր ոչխարի համար տարեկան 4 ղուրուշ 10 փարա կամ 34 կոպեկ, իսկ այծի համար՝ 4 ղուրուշ, անգորյան այծի համար՝ 4 ղուրուշ 20 փարա[299]։

Կրթական հարկը գանձվում էր կալվածական հարկին համապատասխան, մոտ նրա 4%-ը[300]։

Ռազմական հարկը նույնպես վերցվում էր կալվածական հարկին համապատասխան՝ շուրջ 20%-ը[301]։

Աղայական գյուղերում պետական պաշտոնյաները հարկացուցակներն ու հարկաչափերը կազմում և սահմանում էին միայն տիրակալների կամքով։ «Ազատամարտը» գրում էր, որ աղնամը «միայն աշիրեթապետ աղաներու հետ տեսնվելով և անոնց ներկայացուցած հաշվով կը պատրաստեն ամբողջ գյուղերու ոչխարահամարի ցանկը, իսկ գոյացած տուրքի գումարն ալ աղայի բարյացկամութենեն կը ստանան և հետո աղան իր մարդիկներով իր հաշվուն և իր ուզած չափով ղայն կը գանձե գյուղացիներեն»[302]։

Երիտթուրքերի, ինչպես և Աբդուլ Համիդի կառավարման տարիներին հարկերը անհավասար էին բաշխվում բնակչության տարբեր շերտերի մեջ։ Օրենքներով թեպետ հարկվում էին հասարակության բոլոր խավերը, բայց ըստ էության կալվածատերերը անհամեմատ քիչ հարկ էին վճարում, քան գյուղացիները։ Այսպես. 1912 թ. «Ազատամարտը» իր խմբագրականում նշում էր, որ կալվածատերերը պետությանը իբրև հարկ տալիս են իրենց մաքուր եկամտի 12%-ը, վաճառականները՝ 3%-ը, իսկ գյուղացիները՝ իրենց համախառն եկամտի 50—60%-ը։ Թերթը այնուհետև նշում էր, որ վաճառականի մաքուր եկամուտը կազմում է տարեկան 400 ոսկի, իսկ հարկը՝ 12 ոսկի, մինչդեռ գյուղացունը՝ համապատասխանաբար 80 և 35 ոսկի[303]։

Բացի այդ, Արևմտյան Հայաստանում կային բազմաթիվ հարուստ և ազդեցիկ աղաներ, որոնք թե՛ սուլթան Համիդի և թե՛ երիտթուրքերի

---

298 Տե՛ս նույն տեղում, էջ 289, տե՛ս նաև «Հորիզոն», 1911, № 47։

299 Տե՛ս Ա-Դո, նշված աշխ., էջ 291։

300 Տե՛ս նույն տեղում, էջ 288։

301 Տե՛ս նույն տեղում։

302 «Ազատամարտ», 1914, № 1508։

303 Տե՛ս «Ազատամարտ», 1913, № 930, հունիսի 23։

կառավարման տարիներին ազատված էին բոլոր հարկերից։ 1911 թ. «Ազատամարտը» գրում էր. «Կա աղաղակող անարդարություն մը ևս։ Անատոլուի գյուղական տունը այսօր միջին հաշվով 4—5 ոչխար ունի և ամեն տարի տուրք կը վճարե, իսկ ազդեցիկ էշրաֆ-աղա դասակարգը հազարավոր ոչխարներու հոտեր ունի, բայց տուրք չի վճարեր ընդհանուր առումով։ Ավատապետներ ու ավազակապետներ կան, որոնք 20—30000 ոչխար ունին, օրինակ՝ Վանի համբավավոր Քյոռ Հյուսեյին փաշան, Բաղեշ-Խիզանի շեյխ Սեիդ Ալին և բնավ աղնամի տուրք չեն վճարեր...։ Թուրք-պարսկական սահմանագլխի պեկերը, որոնցմե յուրաքանչյուրը 2—5000 ոչխար ունի, ոչխարահամարի ատեն հոտերը կանցնեն պարսից սահմանը և տուրքե ղերծ կը մնան։ Սահմանագլխի պաշտոնյաները արգելք չըլլալեն զատ կ'օգնեն, որովհետև անոնց վիզը ոչ թե օրենքին, այլ ավատական պեկերուն առջև կը ծռի»[304]։

Երիտթուրքերի հարկային քաղաքականության անարդարացիությունը ստիպված էին խոստովանել անգամ որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ։ 1912 թ. պառլամենտի նիստերից մեկում ֆինանսների մինիստր Ճավիտ բեյը հայտարարեց. «Պետության գլխավոր տուրքերը շատ անարդար կերպով բաշխված են ... տուրքերուն բեռը դրված է ժողովրդի այն մասին վրա, որ ամենեն ավելի չի կրնար դիմանալ անոր»[305]։ Սակայն փորձելով արդարացնել իր կառավարության վարքագիծը, նա ավելացրեց. «Այս վիճակը արդյունք է երկար տարիներե ի վեր գոյություն ունեցող դրության մը, զոր կարելի չէ 4—5 տարվան մեջ փոխել, մանավանդ անհավասարակշիռ պյուճե մը ունեցող երկրի մը համար»[306]։

Շարունակելով սուլթանի շովինիստական քաղաքականությունը, իթթիհատի պարագլուխները քրիստոնյաներից, մասնավորապես հայերից, ավելի շատ հարկեր էին պահանջում, քան մահմեդականներից՝ թուրքերից կամ քրդերից։ 1912 թ. Ս. Սապահ-Գյուլյանը նշում էր, որ Սեբաստիայի վիլայեթում «միևնույն տարածության հողի համար՝ հայը տալիս է 26 ղուրուշ, իսկ թուրքը՝ 3, թեև այս վերջինիս հողը էլ ավելի բերրի է»[307]։ Նույնն էր հաստատում նաև Ի. Ի. Գոլոբորոդկոն Էրզրումի վերաբերյալ, գրելով, որ այստեղ իշխանությունները 2000

---

304 «Ազատամարտ», 1911, № 649, հունիսի 21։

305 «Ազատամարտ», 1912, № 929, հունիսի 22։

306 Նույն տեղում։

307 Ս. Սապահ-Գյուլյան, նշված աշխ., էջ 279։

քրիստոնյա (այսինքն՝ հայ) տնտեսություններից հավաքել են 430000, իսկ 8000 մահմեդական տնտեսություններից (գերազանցապես թուրք)՝ 395000 ղուրուշ հարկ[308], այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր քրիստոնյա տնտեսությունից նրանք գանձել են 215 ղուրուշ, իսկ մահմեդական տնտեսությունից՝ մոտ 50 ղուրուշ հարկ։ Կառավարության չովինիստական վարքագիծը դրսևորվում էր նաև աշարի հավաքման ժամանակ։ 1909 թ. իշխանությունները Մուշի դաշտի 50 տնտեսությունից բաղկացած չերքեզաբնակ Ախպուար գյուղի աշարը վաճառեցին 31 ոսկու, իսկ 100 տնտեսությունից բաղկացած հայաբնակ Սիսկա գյուղի աշարը՝ 250 ոսկու և 50 քիլո դարու (1 քիլո դարին Մուշի դաշտում հավասար էր 7,5 փթի)[309]։

Ի՜ն որքան պետական հարկ էին վճարում գյուղացիական տարբեր խմբերը, բավարար տվյալներ չունենք։ Մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները կցկտուր են և վերաբերում են միայն հայերին։ Ա.-Դոն նշում էր, որ 1909 թ. Բայազետի կազայի Մուսուն գյուղի հարուստ բնակիչներից մեկը պետությանը տարեկան վճարում էր մոտ 5 ոսկի կամ 50 ռուբլի, որից՝

դիմելորական հարկ	251 ղուրուշ	—	
կալվածական »	103 »	20	փարա
ռազմական »	3 »	10	»
կրթական »	21 »	10	»
ճանապարհների »	4 »	5	»
թեսքերեի կամ թղթի փող	1 »	—	
բոստանի բերքի 1/8-ը	15 »	—	
խոտի բերքի մի մասը	90 »	—	
ոչխարի հարկ	106 »	10	փարա[310]։

Ա.-Դոն չի նշում, թե քանի՞ ոսկի կամ ռուբլի էր կազմում այդ գյուղացու վճարած հացահատիկի աշարը։ Այդ բացը կարելի է լրացնել հետևյալ անուղղակի տվյալներից։ «Ազատամարտը» գրում էր, որ 1911 թ. Էրզրումի վիլայեթում հավաքվել է 35.507.845 ղուրուշի պետական ուղղակի հարկ, որից 23.079.640 ղուրուշը՝ տասնորդից[311]։ Ուրիմն, տասանորդը կազմում էր բոլոր ուղղակի հարկերի շուրջ 70%-ը։ Հաշվի առնելով, որ տասանորդի մեջ գերակշռում էին հացահատիկները, իսկ

---

308 Տե՛ս *И. И. Голобородько*, Турция, М., 1912, стр. 222.

309 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 322—323։

310 Տե՛ս նույն տեղում, էջ 293—294։

311 Տե՛ս «Ազատամարտ», 1914, № 1511, մայիսի 27։

բանջարեղենը, խոտը և այլն կազմում էին հավիվ 1/4-ը, կարելի է ենթադրել, որ հացահատիկների տասանորդը կազմում էր բոլոր ուղղակի հարկերի առնվազն 50%-ը։ Հետևաբար, վերոհիշյալ հարուստ գյուղացին կառավարությանը տալիս էր ոչ թե 50, այլ դրա կրկնակին՝ 100 ռուբլի ուղղակի հարկ։

Ա.-Դոյի հետևյալ տեղեկություններից կարելի է մոտավոր գաղափար կազմել նաև միջակ տնտեսությունների հարկաչափի մասին։ 1909 թ. Բայազետի կազայի 120 տնտեսությամբ Արծափ գյուղը տարեկան տալիս էր 442 ոսկի կամ 3750 ռուբլի պետական հարկ, որից՝

դինվորական հարկ		125 ոսկի
կալվածական	»	212 ոսկի
ռազմական	»	
կրթական	»	
ճանապարհների	»	
վրաղմունքի	»	
ոչխարի	»	22 ոսկի
բոստանի, խոտի	»	83 ոսկի[312]
ասլուչի	»	

Ա.-Դոն այստեղ էլ չի նշում, թե Արծափը քանի ոսկու հացահատիկի աշար էր վճարում պետությանը։ Ելնելով մեր վերոհիշյալ հաշվումներից, պետք է ընդունենք, որ այդ գյուղը կառավարությանը տալիս էր համարյա այնքան ռուբլու հացահատիկի աշար, որքան մնացած ուղղակի հարկերը։ Ուրեմն, գյուղի բոլոր ուղղակի հարկերը կազմում էին 7500 ռուբլի։ Եթե բաժանենք այդ գումարը տնտեսությունների ընդհանուր թվի վրա, կտեսնենք, որ յուրաքանչյուր տնտեսություն պետությանը վճարել է տարեկան միջին հաշվով 62,5 ռուբլու հարկ։

Բայց դա դեռ բոլորը չէ։ Գյուղացիները ուղղակի հարկերի հետ միասին, ինչպես արդեն ասվեց, վճարում էին նաև բազմաթիվ անուղղակի հարկեր։ Թե ինչքան էին կազմում յուրաքանչյուր տնտեսության համար այդ հարկերը, հայտնի չէ։ Սակայն եթե 1911 թ. Էրզրումի վիլայեթի բնակիչներից հավաքվել էր 48324825 ղուրուշի ուղղակի և անուղղակի հարկեր, որոնցից 35507845 ղուրուշը ուղղակի հարկ էր[313], ապա անուղղակի հարկերը կազմում էին վիլայեթի բոլոր հարկերի շուրջ

---

312 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 294—295։

313 Տե՛ս «Ազատամարտ», 1914, № 1511, մայիսի 27։

1/4-ը։ Եթե ընդունենք, որ գյուղացիները նույն հարաբերությամբ են վճարել ուղղակի և անուղղակի հարկերը, ապա կտեսնենք, որ ունևորի բոլոր հարկերը հասնում են շուրջ 125 ռուբլու, իսկ միջակինը՝ 77—78 ռուբլու։

Իթթիհատի կառավարությունը գյուղացիներին հարկելիս հաշվի չէր առնում նրանց եկամուտները։ Դրա հետևանքով գյուղացիները վճարում էին իրենց եկամուտներին գերազանցող հարկեր։ 1913 թ. Ալաշկերտի Չիլքանի գյուղի բնակիչները գանգատվում էին, որ կառավարությունը իրենց 20 ռուբլու եկամուտ տվող բանջարանոցից պահանջում է 60 ռուբլու հարկ, «նույնն էլ Հողից։ 15000 ոտնաչափ երկարություն և 10000 էլ լայնություն ունեցող դաշտից պահանջում են 25 լիրա։ Ախր ո՞րտեղից վերցնենք... այժմ... պահանջում են ամբողջ գյուղից այնքան դրամ, որքան տասը տարում մենք չենք կարող վաստակել»[314]։

Անտեսելով գյուղացիների բողոքները, երիտթուրքերը ոչ միայն պահանջում էին պետական հարկերը, այլև օր-օրի ավելացնում էին դրանք։ Այսպես, աշարը, որ գանձվում էր 10-ից մեկը, այժմ դարձավ 8-ից մեկը[315], իսկ որոշ տեղերում նույնիսկ՝ 6-ից մեկը[316]։

Երիտթուրքերն այնուհետև մեծացրին աղնամ-րեսմին կամ ոչխարի հարկը, յուրաքանչյուր գլխի համար գանձելով ոչ թե 4, այլ 5 ղուրուշ[317]։ Բարձրացրին նաև կալվածական հարկը. ինչպես հաղորդում էր էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը, 1913 թ. կալվածական հարկը բարձրացրին «երեք անգամ»[318], թեմեթուհաթը կամ զբաղմունքի հարկը՝ 20%-ով, դատական-անձնագրային, փոստ-հեռագրատան ծախսերը՝ երկու անգամ[319]։ Չինովորական ծառայության փոխարեն վճարվող հարկը բարձրացրին՝ նորակոչիկինը 50 լիրայի փոխարեն 60 լիրայի, իսկ պահեստայինինը՝ 30 լիրայի փոխարեն՝ 40 լիրայի։ Այնուհետև, երիտասարդ թուրքերը վերափոխեցին և վերախմբագրեցին հարկային մի շարք օրենքներ ու տարածեցին բնակչության ավելի մեծ զանգված-

314 «Մշակ», 1913, № 61, մարտի 20։

315 Տե՛ս Ա.-Դո, նշված աշխ., էջ 283։

316 Տե՛ս «Հորիզոն», 1914, № 193, սեպտեմբերի 3։

317 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, գ. 546, թ. 270—271։

318 Տե՛ս նույն տեղում, 1912—1914, գ. 1648, թ. 184, տե՛ս նաև ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 560, ց. 28, գ. 475, թ. 1։

319 Տե՛ս նույն տեղում, 1914, գ. 546, թ. 270—271, 1912—1914, գ. 1648, թ. 184, «Աշխատանք», 1914, № 16—162, էջ 6։

նների վրա։ Այսպես, Բեմենիսաթին այսուհետև պետք է վերցվեր քաղաք նեղմուծվող բոլոր ապրանքներից։ Դրանով նրանք առևտրականներից ու արհեստավորներից զատ այդ հարկին ենթարկեցին նաև կարիքից ստիպված իրենց անհրաժեշտ մթերքները վաճառքի հանող գյուղացիներին։ 1913 թ. նոյեմբերի 12-ին «Հորիզոնի» թղթակիցը վանից հաղորդում էր. «Կառավարությունը նոր-նոր տուրքեր ստեղծելու անօրինակ մարտկություն մը ունի։ Այսուհետև արվարձաններեն ու գյուղերեն քաղաք մտնող որևէ ծախու ապրանքի համար տալեն 40, եզան բեռն 29, իշարեռն 10 փարա պիտի վճարվի։ Այդ տուրքը կառավարությունը աճուրդի հանելով ծախեց Այդեստան 60 ու քաղաք՝ 50 լիրայի»[320]։

Իթթիհատի կառավարությունը հարկի տակ դրեց նաև մտավորականներին, որոնք, ինչպես նշում է Բ. Քիչյանը, «առաջ ապահարկ էին»։ Երիտթուրքերը սահմանեցին նոր հարկեր։ Դրանցից մեկն էլ իբրև Բալկանյան ռազմաճակատին օգնելու համար գյուղացիներից հավաքված նոր գումարներն էին։ Միայն Բիթլիսի, Մանազկերտի և Սղերդի սանջակներում 1912 թ. աշնանը նրանք գոփեցին 3150 լիրա[321]։ Երիտթուրքերը պարտադրեցին մահմեդականներին կուրբան-բայրամի տոնակատարության ժամանակ մորթած բոլոր անասունների կաշիներն ու մորթիները իբրև հարկ հանձնել կառավարությանը, դրանց արժեքը թուրքական նավատորմի կարիքներին հատկացնելու նպատակով, իսկ ամեն տարի կարող էր հավաքվել շուրջ մեկ միլիոն մորթի ու կաշի, որոնցից յուրաքանչյուրի արժեքը կազմում էր միջին հաշվով 10 ղուրուշ[322]։ Ուրեմն, իշխանությունները մահմեդական բնակչությունից հավաքում էին տարեկան 10 միլիոն ղուրուշի նոր հարկ և տրամադրում ռազմական նպատակներին։

Նոր կառավարիչները բաց թողեցին ներքին փոխառություն 5 տարի ժամկետով, որը բնակչության մեջ իրացրին մտրակով։ «Հորիզոնը» գրում էր. «Պուլանգի մեջ էլ ձեռնարկվեց այդ փոխառությունը. յուրաքանչյուր գյուղի վրա պարտադրվեց որոշ գումար, իբրև ի հաշիվ իրենց հետագա տարիների տուրքի. հավաքիչները՝ ոստիկաններով ու զինվորներով բաժանվեցան գյուղերը. ala-Թուրքիա միջոցներ իհարկե չէին պակսեր, ծեծ, հայհոյանք, ամանների ջարդ, պարեհների վաճառում և... հավաքիչ մամուրները (մեմուրները՝ պաշտոնյաները—Ա. Հ.)

320 «Հորիզոն», 1913, № 255, նոյեմբերի 12։

321 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 546, թ. 80—83։

322 Տե՛ս ՍՍՀՄ ԿՈՊԱ, ֆ. 130, ց. 29, գ. 55, թ. 6։

մոլուքները շփելով, պոհունակությամբ, կլորիկ գումարնելով վերադարձան և... գովեստի էլ արժանացան»[323]: Իթթիհատի կառավարությունը բնակչության վրա սահմանից նաև այլ հարկեր[324]:

Արևմտյան Հայաստանի գյուղացիության հարստահարումը սաստկանում էր ոչ միայն հարկերի բարձրացումով, այլև դրանց հավաքման ժամանակ գործադրած չարաշահումներով: Թուրքական պաշտոնյաներն ու կապալառուները անդորրագիր չէին տալիս գյուղացիներին, հավաքում էին սահմանվածից ավելին, քաղաքային որոշ հարկեր տարածում էին գյուղերի վրա և բալանում բնակիչներին:

Մի շարք վայրերում պաշտոնյաները պատերազմի պատրվակով խլում էին գյուղացիների անասուններ: «Հորիզոնը» գրում էր. «Զինվորական պետքերի համար հավաքում են մասնավոր անհատների ունեցած բոլոր ձիերը և որոշ դին նշանակելով, պետական սեփականություն հռչակում: Եվ փաստերը ցույց են տալիս, որ հայ ու թուրք սեփականատերերի վրա հավասար աչքով չեն նայում: Մինչ թուրքերի ձիերը ընդունում են այն գնով, որ պահանջում է տերը, հայերինը առնում են իսկականից շատ ցածր գնով, առանց հարցնելու տիրոջ կարծիքը»[325]: Այդ գումարն էլ պաշտոնյաները կանխիկ չէին տալիս, այլ խոստանում էին վճարել, «երբ լինի»[326]:

Երիտթուրքական պաշտոնյաները հարկահանության ընթացքում ապրում էին գյուղացիների հաշվին (թեև օրենքով չունեին այդ իրավունքը), վիրավորում էին նրանց արժանապատվությունը և գործադրում այլ բռնություններ: Իրենց չարաշահումներով թուրքական պաշտոնյաներից ետ չէին մնում, իսկ հաճախ նույնիսկ գերազանցում էին կապալառուները: Նրանք խաբում էին գյուղացիներին, բարձր էին գնահատում բերքը, ամբողջ հարկահանության ժամանակ ապրում էին նրանց հաշվին, գործադրում էին ահավոր բռնություններ և նույնիսկ՝ սպրանգործություններ: Ա-Դոն գրում էր, որ կապալառուն կամ մյուլթեզիմը «ինքնըստինքյան մի զապտիե է, մի կեղեքիչ, մի բռնավոր, մի հրեշ, որի ներկայությունը միայն խաղաղ ժողովրդի վրա սարսափ է

---

323 «Հորիզոն», 1914, № 44, փետրվարի 28:

324 Տե՛ս «Վան-Տոսպ», 1914, հունիսի 7, էջ 259, «Բյուզանդիոն», 1909, հուլիսի 27, «Աշխատանք», 1912, № 6—102, էջ 7, № 12—59, էջ 8, «Ընդարձակ տարեցույց ս. փ. ազգային հիվանդանոցի», նոր շրջան, 6 տարի, 1931, էջ 64:

325 «Հորիզոն», 1913, № 69, մարտի 28:

326 Նույն տեղում:

ապդում. «Ահա այդ հրեշը իր ձեռքով չափում վերցնում է տասանորդը համրում է խոտը և նշանակում գին յուրաքանչյուր խուրձի համար կրկնակի չափով, գնահատում է բոստանը, այգին, պարտեզը ինչպես իր քեֆն ու խիղճն է թելադրում և վերցնում է գյուղացուց ոչ թե օրենքով սահմանված 8-ից մեկը, կամ 8 արժեքից մի արժեքը, այլ 8-ից 2-ը և 8 արժեքից 2, հաճախ երեք արժեք։ Բողոքել դրա դեմ անմտություն է, մուլթևզիմը կը կնքի և կալում կը թողնի օրերով մաքրած ցորենը, թույլ չի տա տուն բերելու դաշտում թափված խոտը, կը կանգնեցնի այգու, պարտեզի և բոստանի բերքի հավաքումը և դրպարտելով բերքը գողանալու և թաքցնելու մեջ, այնպիսի տուգանքների ու ճնշումների կը ենթարկի, որ բողոքավորը հավիտյան չի մոռանա»[327]։

Կապալառուների չարաշահումները սոսկալի բնույթ էին ընդունում հատկապես այն պատճառով, որ նրանց մեծ մասը խոշոր և ազդեցիկ ազաններ էին։ Նրանք լիակատար ազատություն էին տալիս իրենց ցանկություններին ու կրքերին, իսկ իշխանությունները չէին արգելում։ Նրանք սովորաբար վարձակալում էին իրենց գյուղերի աշարի կամ այլ հարկերի հավաքման իրավունքը, ձգտում էին վարձակալել նաև այն գյուղերի հարկերի հավաքման իրավունքը, որոնք ազատ էին ֆեոդալական կախումից։ Հաճախ վարձակալած աշարի իրավունքը վերապրներով տալիս էին իրենց սատրապներին, որի հետևանքով ինչպես սուլթան Աբդուլ Համիդի, այնպես էլ երիտթուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանի գյուղերում առաջ էր գալիս կապալառուների մի ամբողջ սատրակարգություն[328]։

«Ազատամարտը» գրում էր, որ Քըղիում աշարը «վերջին քանի մը տարվան մեջ 7000-են 14000 լիրայի բարձրացավ»։ Եվ դա «կարդ մը անխիղճ մյուլթեզիմներու երեսեն, որոնք ժողովրդական ցույց ու սպառնալիքն ալ բանի տեղ չդնելով լոկ իրենց շահը կը մտածեին»[329]։

Մի շարք տեղերում կապալառու ազանները տեսնելով, որ գյուղացիներն արդեն ղրկված են վճարունակությունից, մեծացնում էին իրենց հարստությունը պետական բաժնի հաշվին՝ գյուղացիների աշարը, անասունների գլխաքանակը և այլ կարողությունները քիչ ցույց տալու ճանապարհով։ Համապատասխան վիճակագրական տվյալների բացակա-

---

327 Ա.-Գ, նշված աշխ., էջ 296։

328 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 12—59, էջ 8։

329 «Ազատամարտ», 1909, № 88, հոկտեմբերի 6։

յության պատճառով անհնարին է համեմատել ազանների ֆեոդալական հարստահարումը պետության հարկային հարստահարումների հետ և եզրակացություն հանել ամբողջ երկրի համար: Սակայն վերևում բերված օրինակներից պարզվեց, որ հարուստ գյուղացու կալվածատիրական վճարումները կազմում էին շուրջ 70—80 ռուբ., պետական գյուղացու միայն ուղղակի հարկերը՝ 100 ռուբ., իսկ միջակինը՝ համապատասխանաբար 24 և 62,5 ռուբլի: Այդ տվյալներից, իհարկե, չպետք է եզրակացնել, որ պետական գյուղացիների հարստահարումն ավելի ուժեղ էր, քան կալվածատիրական գյուղացիներինը: Ընդհակառակը՝ կալվածատիրական գյուղացիներն ավելի էին հարստահարվում, քանի որ նրանք բացի աղայական վճարումներից, կատարում էին նաև պետական վճարումներ: Բազմաթիվ շրջաններում գյուղացիները ուղղակի չէին կարողանում վճարել պետական ու աղայական հարկերը, որի հետևանքով նրանց վրա կուտակվում էին ապառքներ և հասնում ահռելի չափերի: Չնայած դրան, երիտթուրքական կառավարությունը հարկերի ու ապառքների հավաքման համար միջոցների մեջ խտրություն չէր դնում: Պաշտոնյաներն ու հարկահանները գյուղացիներին ծեծում էին, խոշտանգում, բանտարկում, բռնագրավում շարժական ու անշարժ ունեցվածքը, ղրկում տնից ու տեղից, գործադրում համիդյան բոլոր բռնությունները, կանգ չառնելով նաև սպանությունների առաջ: Աղբյուրների ու գրականության մեջ բյուրավոր փաստեր կան հարկահանության ժամանակ երիտթուրքերի գործադրած սանձարձակությունների մասին: Բերենք դրանցից մի քանիսը:

«Բյուզանդիոնը» գրում էր. «Հակառակ սահմանադրության տված ազատության և լրագիրներու մեջ երբեմն երևցող հոդվածներու, թե «տուրքերը պետք է օրինաց սահմանին մեջ գանձվին կարող անձերուն», հիշտ հին ոճիմի ձևով բռնությամբ հայհոյություններով կը գանձվին տուրքերն ոչ միայն հարուստներեն, այլ աղքատներեն»[330]:

Նույն թվականի Հունիսին «Ազատամարտը» հաղորդում էր. «Մանավանդ գյուղերու մեջ դինովորական տուրքերը կգանձվին խստիվ, վաճառելով գյուղացիներու անասուններն ու ինչքերը. եղած բողոքները կը մնան անլսելի...»[331]: Տուրքերը «խստությամբ կը գանձվին», որ այդ առթիվ «բանտարկություններ ալ տեղի կունենան: Ժողովուրդը երեք տարիէ ի

---

330 «Բյուզանդիոն», 1909, № 3746, փետրվարի 3:

331 «Ազատամարտ», 1909, № 15, հուլիսի 9:

վիր անընդհատ թշվառության մեջ ապրելով վճարելու կարողություն չունի»[332]։

1911 թ. վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր, որ «Մուշի սանջակում տեղական իշխանությունները վերջին ժամանակներս մեծ դժվարությամբ հայ բնակչությունից հավաքում են ապառքները և ընդհանրապես բոլոր տնտակ պարհակները։ Չունևնալու դեպքում անհապաղ աճուրդի են հանում նրանց ունեցվածքը, տունը և այլն։ Այդ հողի վրա եղել է նույնիսկ սպանության դեպք՝ Զուքուր գյուղում ժանդարմի կողմից»[333]։ «Եվ՛ հայերը, և՛ մահմեդականները հավասարապես տուժում են կառավարության այդ խստությունից ու հավասարապես դատապարտում այն»[334]։

Ի՞նչ նպատակների էին ծառայեցնում երիտթուրքերը այդչափ դաժան եղանակներով բնակչությունից հավաքած հարկերն ու տուրքերը։ Այդ հարցին պատասխանելու համար բերենք հետևյալ փաստաթուղթը. 1910—1911 թթ. Բիթլիսի վիլայեթից հավաքած պետական եկամուտները հատկացվել են[335].

Կենսաթոշակներին	142.140	ղրշ.
Հանրային պարտքի վարչությանը	1.171.348	»
Ելևմտական նախարարությանը	3.160.684	»
Դեֆթերհանեի վարչությանը	144.966	»
Ներքին գործերի նախարարությանը	1.299.849	»
Հանրային ապահովությանը	543.195	»
Պատերազմի նախարարությանը	4.997.189	»
Ժանդարմերիային	3.822.095	»
Ծովային նախարարությանը	1.110	»
Շեյխ-ուլ-իսլամին	714.853	»
Դատական նախարարությանը	1.320.805	»
Կրթական նախարարությանը	549.857	»
Հանրային շինությունների նախարարությանը	385.924	»
Երկրագործական նախարարությանը	53.597	»
Հիճազի երկաթուղու հանգստականության վարչությանը	9.222	»

---

[332] «Ազատամարտ», 1910, № 221, մարտի 13։

[333] Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 58, թ. 12։

[334] Նույն տեղում, թ. 18։

[335] Տե՛ս «Ազատամարտ», 1914, № 1512, մայիսի 28։

Այդ թվերը ցույց են տալիս, որ Թիֆլիսի պարագլուխները, պատրաստվելով արկածախնդրական պատերազմի, ժողովրդից քամած միջոցների ավելի քան 25 տոկոսը հատկացնում էին ռազմական նպատակներին։ Թվերը միաժամանակ ցույց են տալիս, որ նրանք այդ միջոցներից համարյա նույնչափ էլ բաժին էին հանում ոստիկանությանը, ժանդարմերիային և դատական օրգաններին, որոնք անհրաժեշտ էին աշխատավորներին հպատակության մեջ պահելու, նրանց ազատագրական շարժումները ճնշելու համար։ Կառավարությունը կրթության և երկրագործության համար տրամադրում էր չնչին գումար, որը չէր կազմում ամբողջի նույնիսկ 3,5 տոկոսը։ Ավելի աննշան էր հանրային շինարարության առանձնացրած բաժինը։ Նրանք ամեն տարի բնակչությունից հսկայական միջոցներ էին քամում ճանապարհների ու կամուրջների կառուցման համար, բայց այդ միջոցները խժռում էին զանազան պատրվակներով, թողնելով հաղորդակցության միջոցներն իրենց նախնադարյան, ամենաանմխիթար վիճակում։

Կառավարության հակաժողովրդական բաղաքականության պատճառով աշխատավորներն ընկել էին աղքատության ու թշվառության մեջ և տառապում էին դեռ հեղափոխությունից առաջ մոլեգնող սովի ճիրաններում։ Երկրի տարբեր գավառներից բազմաթիվ խնդրագրեր էին հղվում Թուրքական պաշտոնյաներին։ Մուշից և Բիթլիսի գավառից հաղորդում էին, որ սոված ու բոկոտն բազմությունը, հավաքված առաջնորդարանի առաջ, ուտելիք է աղերսում։ Մայրերը, սեղմած երեխաներին իրենց կրծքերին, փողոցներում «Հաց, հաց կաղաղակեն»[336]։ «Դործը» այսպես էր նկարագրում Կարճկանի գյուղացիության թշվառ կացությունը. «Չարմանալի չի լինի, եթե ասենք, որ 60—70 տուն ունեցող մի գյուղում 2—3 վիրմակ ճարել չի կարելի։ Ընդհանրապես իրեև անկողին ծառայող մազն և բրդե կապերտները դարձյալ քիչ բախտավորներն ունեն. ժողովրդի մեծ մասը քնում է չոր գետնին, բացի Ընտանիքի անդամներից մի քանիսն ունեն ընդհանուր շոր (որևէ լաթի կտոր), որ տանից դուրս գալիս հերթով հագնում են»[337]։ Որոշ տեղերում մարդիկ սովից ինքնասպանություն էին գործում, իսկ երեխաներին վաճառում կամ նվիրում էին[338]։

---

336 «Մշակ», 1909, № 24, փետրվարի 3։

337 «Դործ», 1908, № 88, դեկտեմբերի 26։

338 Տե՛ս «Մշակ», 1909, № 24, փետրվարի 3։

Այսպիսով, երիտթուրքական վարչակարգը սաստկացրեց Արևմտյան Հայաստանի աշխատավորության ոչ միայն ազգային հալածանքները, այլև սոցիալ-տնտեսական կեղեքումները։ Իթթիհատականները չստեղծեցին անձի ու գույքի ապահովություն, չլուծեցին ագրարային հարցը և պաշտպանելով աղանների շահերը, ավելի ուժեղացրին գյուղացիության սակավահողությունն ու հողազրկումը։ Նրանք նպաստեցին ֆեոդալների իշխանության տարածմանը գյուղացիական նոր զանգվածների վրա, օժանդակեցին այդ իշխանության հզորացմանը և, հրևշավոր չափերի հասցնելով հարկային կեղեքումը, կանգնեցրին աշխատավորներին ֆիզիկական բնաջնջման առաջ։ Երիտթուրքական հեղափոխությունը իթթիհատի վարած դասակարգային քաղաքականության հետևանքով ծառայից Թուրքիայի ամենաուսակելիոն շերտերի շահերին և մղձավանջային կացության մեջ դրեց ազատության համար մաքառող բազմահազար զանգվածներին։

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԻԲԵՐԱԼ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1908 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

1908 թ. հեղաշրջումը Թուրքիայում չլուծեց ո՛չ ազգային և ո՛չ էլ սոցիալական հարցերը։ Եվ Օսմանյան կայսրության ճնշվող ու կեղեքվող ժողովուրդները դրությունից դուրս գալու համար կրկին բռնեցին ազատագրական պայքարի ուղին։

Երիթուրքական ռեժիմի դեմ ըմբոստացան արաբները, որոնց շարժման գլուխ կանգնեց դեռատանդատես բուրժուա-դեմոկրատական մտավորականությունը։ Դեռ 1909 թ. վերջին։ արաբ մեծ լուսավորիչ Աբդ-ալ-Քերիմ Խալիլի և թուրքական բանակի գլխավոր շտաբի մի քանի արաբ սպանների նախաձեռնությամբ Կ. Պոլսում հիմնվեց գաղտնի ընկերություն, որը արաբական առասպելական հերոսի անունով կոչվեց «Ալ-Կախտանիա» և իր բաժանմունքները ստեղծեց Սիրիայում, Իրաքում ու Լիբանանում։ Այդ ընկերությունը մերժում էր պանիսլամիզմի սկզբունքները և ձգտում էր կազմել Ավստրո-Հունգարական տիպի արաբա-թուրքական պետություն, շնորհելով թուրքական սուլթանին նաև «արաբական խալիֆա» տիտղոսը։ Սակայն «Ալ-Կախտանիան» 1910 թ. իր ներհակությունների ու երիթուրքերի հետապնդումների պատճառով վախվեց[1]։

1912 թ. աշնանը Կահիրեում կազմակերպվեց արաբական «վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցությունը», որի նպատակն էր ընդարձակել արաբների իրավունքները թուրքական պետական

[1] *Տե՛ս Г. З. Алиев. նշված աշխ., էջ 184։*

ապարատում, ճանաչել արաբական լեզուն որպես պետական լեզու և դասավանդել այն արաբական դպրոցներում։ Կուսակցությունը ծրագրում էր եվրոպական տերությունների օգնությամբ կամ միջամտությամբ վերակառուցել Օսմանյան կայսրությունը՝ սահմանադրական միապետության վարչական լայն ապակենտրոնացման սկզբունքներով։

Արաբների խնդրով հանդես էին գալիս նաև օսմանյան պառլամենտի արաբ պատգամավորները։ Արտահայտելով բուրժուազիայի շահերը, նրանց մի մասը գտնում էր, որ արաբական երկրները պետք է ստանան ինքնավարություն, արաբական լեզուն պիտի ճանաչվի թուրքերենին հավասար թե՛ պառլամենտում և թե՛ պետական այլ հաստատություններում։ Պատգամավորների մյուս մասի նպատակը եվրոպական տերությունների օգնությամբ Միջերկրական ծովից Պարսից ծոցը տարածվող արաբական անկախ պետություն ստեղծելն էր[2]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին արաբական երկրներում ծավալվում էին աշխատավորների տարերային ելույթներ։ 1913 թ. դյուզացիական մասսայական հուզումներ տեղի ունեցան Սիրիայում, Բասրայում և հատկապես Իրաքում՝ ուղղված թուրքական իշխանությունների հարկային հարստահարումների, պաշտոնյանների չարաշահումների, կալվածատիրական հողատիրության և ֆեոդալական այլ տարրերի դեմ։ Երիտթուրքերը խոստացան բավարարել դյուզացիների պահանջները, բայց երբ ճնշեցին նրանց շարժումները, «մոռացան» իրենց խոստումները[3]։

Ինքնիշխանական կարգերի դեմ ոտքի էլան նաև հույները։ Դեռ 1908 թ. սեպտեմբերի 24-ին կրետացիները որոշեցին միանալ մայր Հայրենիքին և հոկտեմբերի 13-ին դիմեցին մեծ տերություններին՝ ճանաչելու իրենց սուվերեն իրավունքները, դուրս բերելու օտար զորամասերը կղզուց։ Սակայն Թուրքիան դեմ դուրս եկավ։ Կրետացիները շարունակեցին պայքարը և 1912 թ. հոկտեմբերի 14-ին Կրետեն միացրին Հունաստանին։

Մակեդոնացիները 1908 թ. հեղափոխությունից հետո առժամանակ դադարեցրին պայքարել, սպասելով, որ նոր կառավարիչները կլուծեն իրենց ազգային ու սոցիալական խնդիրները։ Բայց երբ տեսան, որ իրերի դրությունը ոչ միայն մնում է անիսոիոս, այլև գնալով ավելի է

---

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 183։

[3] Տե՛ս М. С. Лазарев, Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960, стр. 36—38.

վատանում, նրանք կրկին վնաս էին տեսնում: Անհավասար կռվում մակեդոնացիները պարտվեցին, իսկ 1913 թ. Բուխարեստի պայմանագրով Մակեդոնիան մասնատվեց ընկնելով Հունաստանի, Սերբիայի և Բուլղարիայի միրապետության տակ:

Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո ալբանական ազատագրական շարժման ղեկավարները պահանջեցին իլիրիստից՝ պաշտոնապես ճանաչել ալբան ժողովրդի ինքնուրույնությունը, մայրենի լեզվով բացել ազգային դպրոցներ ու կուլտուր-լուսավորական այլ հաստատություններ, փոխարինել թուրք պաշտոնյաներին ալբանացիներով, Ալբանիայից ստացած նկամուտների 80 տոկոսը թողնել տեղում և այլն:

Երբ երիտթուրքերը մերժեցին այդ պահանջները, ալբանացիները կրկին պայքարի դիմեցին, 1913 թ. մայիսի 30-ին թոթափեցին թուրքական լուծը և հռչակեցին իրենց հայրենիքի անկախությունը[4]:

Երիտթուրքական վարչակարգի դեմ ըմբոստացան նաև արևմտահայերը: Նրանց պայքարը ծավալվեց իր երկու՝ լիբերալ-բուրժուական և արմատական-դեմոկրատական ուղղություններով: Արևմտահայերի լիբերալ-բուրժուական շարժումները պրատհայտվում էին բուրժուական կուսակցությունների և լիբերալ շրջանների գործունեությամբ: 1908 թ. հեղափոխությունից հետո նրանք վերանայեցին իրենց ծրագրերը և, փորձելով հարմարվել ստեղծված պայմաններին, մտցրին որոշակի փոփոխություն:

«Հայ հեղափոխական դաշնակցությունը» 1908 թ. հեղաշրջումը Օսմանյան կայսրության կյանքում համարեց խոշոր իրադարձություն և հայտարարեց, որ վերջ է դնում հեղափոխական գործունեությանը և շարունակում է համագործակցությունն իթթիհատի հետ: Նա ազդարարում էր, որ բռնապետությունը, իբր թե, արդեն տապալված է և պայմաններ են ստեղծված Թուրքիայի ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու ազգային խնդիրների լուծման համար: 1908 թ. հուլիսին, այսինքն՝ սահմանադրության հռչակումից անմիջապես հետո, դաշնակցության օրգան «Դրոշակը» գրում էր. «Հայ հեղափոխական դաշնակցությունը... ներշնչված ազգերի համերաշխության մեծ սկզբունքով, կը շարունակե իր աշխատանքը, թև թևի տված «երիտասարդ Թուրքիայի» ռազմիկների հետ, մինչև որ կատարվի ռամիկավարական սահմանադրության հաստատուն հաշխիքներ...»[5]:

[4] Տե՛ս Г. З. Алиев, նշված աշխ., էջ 197—198, 201—202:

[5] «Դրոշակ», 1908, № 7, էջ 98:

Ինչպե՞ս էր պատկերացնում դաշնակցությունը արևմտահայության ազգային ու հողային հարցերի լուծումը։ Ամենից առաջ նա հայտարարեց, որ հայկական հարցը եթե մինչև հիմա միջազգային դիվանագիտության առարկա էր, այժմ դառնում է Թուրքիայի ներքին խնդիր։ Ուստի նրա լուծումը պետք է սպասել ոչ թե խոշոր տերություններից, այլ Համաօսմանյան պառլամենտից։ Կուսակցությունը նշում էր, որ ինքը չունի անջատողական «սին ծրագրեր» և գտնում էր, որ հայկական հարցի լուծման ամենաճիշտ եղանակը ազգային ինքնավարության կամ վարչական ապակենտրոնացման ստեղծումն է։ «Մենք պետք է համերաշխ ընթանանք այն տարրերի հետ,—գրում էր «Դրոշակը»,—որոնք պաշտպան են ապակենտրոնացման սիստեմի, շրջանային ու տեղական ամենալայն ինքնավարության... Միմիայն վարչական ապակենտրոնացման և կուլտուրական ինքնօրինության սիստեմի մեջ հայ ժողովուրդը հնարավորություն կունենա ազատորեն, առանց վերուստ տեղացող ճնշումների զարգացնել իր ազգային քաղաքակրթությունը, ապահովել իր ուրույն անհատականությունը, իր տնտեսական-սոցիալական բարօրությունը»[6]։ Այնուհետև, օսմանյան պետությունը, պահպանելով իր ամբողջականությունն ու միությունը, «պիտի թույլ տա առանձին շրջաններին կառավարելու՝ համաձայն իրենց հատուկ կարիքների ու պայմանների։ Նվ անհրաժեշտ է սահմանել վարչական նոր կազմակերպություն՝ ազգագրական (էթնոգրաֆիկ) խարիսխի վրա»։

Դաշնակցությունը պահանջում էր վերացնել սուլթանի սահմանած հայահալած միջոցառումները, ստեղծել անկաշկանդ երթևեկություն հայկական նահանգներում, ազատել քաղաքական բանտարկյալներին, թույլատրել հայրենիք վերադառնալու բազմահազար փախստականներին ու տարագիրներին և վերադարձնել հայ գյուղացիներից բռնագրաված հողերը[7]։

Արևմտահայության ազգային ու հողային խնդիրների լուծման այդ տեսակետները դաշնակցությունը պահպանեց նաև հետագայում։ Այսպես, 1908 թ. սեպտեմբերի 1-ին օսմանյան պառլամենտին ներկայացրած Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի վերակառուցման մասին ծրագրում դաշնակցության ներկայացուցիչների խորհուրդը գտնում էր, որ անհրաժեշտ է պահպանել կայսրության ամբողջականությունն ու անկախությունը, Արևմտյան Հայաստանը համարելով նրա բաղկացու-

[6] «Դրոշակ», 1908, № 8, էջ 115։

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 124։

ցիչ մասերից մեկը։ Ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում պետք է ստեղծել ապակենտրոնացված սիստեմ կամ ինքնավարություն՝ բոլոր ազգերի հավասար իրավունքներով։ Տեղական մարմիններն ընտրում է բնակչությունը, բացառությամբ կուսակալներից, մութասարիֆներից ու ռեսներից, որոնք նշանակվում են կառավարության կողմից։ Վիլայեթներն ու համայնքները ստանում են ինքնակառավարման լայն իրավունքներ, նկամուտների 20—25 տոկոսը պահում են իրենց ձեռքում և ծախսում տեղական կուլտուր-լուսավորական ու շինարարական նպատակների համար։ Ազգությունների դերիշխման սկզբունքով պետք է անցկացվի երկրի վարչական նոր բաժանում, բնակչությունը ստանա խոսքի, մամուլի, դավանանքի, խղճի, ժողովների ու գործադուլների ազատություն, ուսումը պետք է դառնա ընդհանուր, ձրի ու պարտադիր, դասավանդումը՝ մայրենի լեզվով, իսկ թուրքերենը՝ պարտադիր։ Անհրաժեշտ է հավասարություն սահմանել նաև դատավարության, զինվորական ծառայության և այլ բնագավառներում։ Սակավահող ու հողազուրկ գյուղացիներին ապահովել հողով՝ պետության հաշվին։ Շրջանցելով շահագործող ազանների, դաշնակցության ներկայացուցիչների խորհուրդը գտնում էր, թե «յուրաքանչյուր աշխատավոր իրավունք ունի այն չափով հող մշակելու, որ կարողանա առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բավարարություն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներուն»[8]։ Բնական հարստությունները պետք է համարել պետական սեփականություն, իսկ տեղական անտառները, արոտավայրերն ու ջրերը՝ համայնական։ Համայնքի ղեկավարությունը դրանից ստացած եկամուտները պետք է ծառայեցնի տեղական շինարարական ու կուլտուրական նպատակներին, պետք է իջեցնել աշարի ու աղնամ-ռնամիի չափերը, վերացնել օլամը, անկարիան և մյուս պարհակները, ընչազուրկներին ազատել հարկերից, գյուղացիական տնտեսություններին օժանդակելու համար բաց թողնել մասչելի վարկ և ապահովագրել նրանց ունեցվածքը երաշտից, կարկուտից, հեղեղներից ու բնական այլ աղետներից[9]։

Դաշնակցականների այդ ծրագիրը, անշուշտ, բուրժուազիայի շահերի սահմաններից ու պահանջներից չէր անցնում։

Դաշնակցությունը շարունակեց իթթիհատի հետ համագործակցության իր սխալ քաղաքականությունը նույնիսկ Ադանայի հրեշավոր

[8] «Դրոշակ», 1908, № 9—10, էջ 130—131։

[9] Տե՛ս նույն տեղում։

ջարդից հետո։ 1909 թ. օգոստոսին երկու կուսակցությունները կնքեցին համաձայնագիր, որի մեջ ասվում էր, թե հայրենիքի աղատությունն ու տերիտորիալ ամբողջությունը պահպանելու, ինչպես և օսմանյան տիրապետության տակ գտնվող բնակչության մեջ լավագույն հարաբերություններ հաստատելու համար իթթիհատն ու դաշնակցությունը պարտավորվում են կենսագործել սահմանադրությունը, հակահարված տալ հետադիմական տարրերին, ցրել «բռնակալ րէժիմէն ժառանգ մնացած այն սուտ զրույցները, թե հայերը անկախութեան կը ձգտին», հասնել նահանգական իրավունքների ընդարձակմանը և այլն[10]։ Երրորդ գրում էր, որ երկու կուսակցությունները ղդում են իրենց վրա ընկած պատասխանատվության ամբողջ ծանրությունը, «կը կանգնին կողք կողքի, խոսք կուտան միասին աշխատիլ, միասին պայքարիլ և միասին ճակատ տալ քաղաքական փորձութեանց»[11]։

Իթթիհատի ձեռքին խաղալիք դառնալով, դաշնակցությունը գնալով նահանջում էր իր ծրագրից և ունկնդրում երիտթուրքերի թելադրանքներին։ 1911 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրենց VI համագումարում դաշնակցականները որոշեցին, թե անհրաժեշտ է ձգտել օրենքի միջոցով «ընդլայնել Թուրքիոյ հայոց ազգային սահմանադրութեամբ ճանաչված ինքնավարութիւնը»[12]։ Այլ կերպ ասած՝ դաշնակցականները այժմ բավարարվում էին 1863 թ. ազգային խղճուկ սահմանադրության մասնակի դարգացումով, շրջանցելով կամ անտեսելով դեռ երեկ իրենց կողմից ազդարարված մի շարք բուրժուա-դեմոկրատական թեզերը։ Հողային հարցի մասին դաշնակցականների VI համագումարի որոշումներում ասված էր. «Հողավեճը լուծել վարչական եղանակով և խառն հանձնաժողովների միջոցով, հենվելով օսմանյան հողային օրենքներուն և անոնցմե բխող լրացուցիչ լուսաբանութիւններուն։ Վիճելի հողերու և ջրերու նկատմամբ սեփականության իրավունքը ճանչնալ հին վավերաթուղթեր ներկայացնողին, համաձայն 1909 թ. օգոստոսի 27-ի պետական խորհրդի որոշման»[13]։ Կամ՝ «Հայ գյուղերեն հեռացնել բոլոր այն բռնակալները, որոնք առնելիք գանձելու կամ այլ պատրվակներով 1890-են ի վեր բնակություն հաստատած են հոն։ Անոնց պահանջներուն օրինավորությունը վերապահել քննելու

---

10 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 63, օգոստոսի 24։

11 Նույն տեղում։

12 «Դրոշակ», 1911, № 7—12, էջ 84։

13 Նույն տեղում, էջ 82։

դատարաններու կամ խառն հանձնախումբերու առջև»[14]: Շատ տարօրինակ էր դաշնակցականների որոշումը նաև ազանների հողային բռնագրավումների մասին: Փոխանակ խնդիր դնելու, որ պետք է ոչ միայն անհապաղ վերադարձնել ազանների կողմից հափշտակված գյուղացիական հողերը, այլև վերացնել ֆեոդալական հողատիրությունը հօգուտ գյուղացիության, նրանք պահանջում էին. «վերաքննել 1890-ն ասոին ավատականներու և հարստահարիչներու կատարած հողային իրացումները: Օրինավորության պարագային՝ այդպիսիներու հողերը (փոխանակության կամ մասնավոր հատուցման մը միջոցով) միացնել մնկ կտորի մեջ, իր բնական սահմաններով»[15]:

Ա.Ղալիսով, նահանջելով 1907 թ. իրենց ծրագրից, ուր նշված էր, որ անհրաժեշտ է վերացնել հողի մասնավոր սեփականությունը և հաստատել ինչպես արքունական, այնպես էլ կալվածատիրական ու վանական հողերի համայնական սեփականություն, դաշնակցականները այժմ ընդունում էին երիտթուրքերի ագրարային ծրագիրը և բռնակալությունից տուժած գյուղացիներին ուղարկում հարստահարողների ու կնքողների շահերը պաշտպանող թուրքական պաշտոնատուն կամ դատարան:

Անդրադառնալով իր կուսակցության նոսահմանադրական շրջանի քաղաքականությանը, Ռ. Տեր-Մինասյանը ստիպված էր խոստովանել, որ դաշնակցականները խոսքով արտահայտելով հայ աշխատավորության շահերը, գործով դարձել էին երիտթուրքերի «քաղաքականության ամենէն հավատարիմ կողմնակիցները»: Դաղափարապես պահանջելով կայսրության վարչական և քաղաքական ապակենտրոնացում, «իրական կյանքի մեջ մենք ձուլված էինք իթթիհատի հետ... հակառակ էինք... այլազգիներու, մակեդոնացի և արաբ ժողովուրդներու ձգտումներուն... Դա հակասություն էր, և՛ բացահայտ հակասություն: Մեր հոդին ու մեր մարմինը բաժանված էին»[16]:

Երիտթուրքերը գնալով ավելի ու ավելի էին արտամղում դաշնակցականներին քաղաքական ասպարեզից: Իթթիհատի պարագլուխները տարեցտարի կրճատում էին օսմանյան պառլամենտում հայ պատգամավորների թիվը և դաշնակցական պաշտոնյաների թվաքանակը: Նրանք լքում էին իրենց երեկվա դաշնակիցներին և մերձենում քուրդ

[14] Նույն տեղում, էջ 83:

[15] Նույն տեղում:

[16] Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. 2, էջ 42:

աղաններին։ 1911 թ. օգոստոսի 5-ին վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերևը իր դեսպանին հաղորդում էր, որ այժմ երիտթուրքերի ու դաշնակցականների հարաբերությունների «պատկերը բոլորովին փոխվել է, կյանքը մտել է իր սովորական նորմալ հունի մեջ, կրկին հարություն են առել հին հաշիվները և հատուկ սրությամբ զգացվում է առևտրություն պյավուրների հանդեպ»[17]։

Տեսնելով իթթիհատի այդ քաղաքականությունը, դաշնակցականները փորձեցին ճնշման միջոցով որոշ զիջումներ պոկել։ Նրանք որոշեցին խզել բարեկամության ու համագործակցության հարաբերությունները երիտթուրքերի հետ և առաջին քայլը այդ ուղղությամբ կատարեցին 1911 թ. սկզբներին։ Օլֆերևը նույն թվի փետրվարի 20-ին գրում էր. «Դաշնակցականները կտրելով իրենց հարաբերությունները տեղի իթթիհատականների հետ, որոնցից սպասում էին բարեկարգում, այժմ հատուկ եռանդով քննադատում են թուրքական կառավարության միջոցառումները, նպատակ ունենալով վերադարձնել հայերի՝ իրենց կուսակցության նկատմամբ ունեցած համակրանքը»[18]։ Երկրորդ քայլը կատարեցին 1912 թ. մայիսի 5-ին և այդ որոշումը վերջնականապես հաստատեցին 1913 թ. օգոստոսի 17-ին կուսակցության VII համագումարում։ 1913 թ. «Դրոշակը» իր առաջնորդողում արդեն գրում էր. «Ցրենք վերջապես մահաբեր պատրանքը։ Ժամանակն է նողկանքով երես դարձնենք թուրք պաշտոնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամենեն վտանգավոր դավերն եղան մեր ժողովրդի դոյության դեմ»։ Երիտթուրքերի կառավարությունը «այս չորս տարում հայ ժողովրդի արյունը ծծեց վամպիրի պես, նրա անդարձ կորստյան վիհը փորից և մենք՝ աղնվորեն դյուրահավատներ, պատրանքներով աչքերնիս շլացած՝ անզգալիորեն քայլ առ քայլ դեպի այդ ճակատագրական անդունդը դիմեցինք։ Ցրենք, վերջապես, այդ մահաբեր պատրանքը։ Չխաբենք մեզ և չխաբվինք ուրիշներից»։ Կուսակցության օրգանը շարունակում էր. «Չենք հավատում ձեզ, չենք կարող այսուհետև ձեզ վստահիլ հայ ժողովրդի ապագան և նրա փրկությունը փնտրելու ենք միմիայն Եվրոպայի խոստացած իրական հրաշխիքների մեջ»[19]։

Այնուհետև դաշնակցականները կազմակերպեցին հակակառավարական որոշ ելույթներ։ Նրանք ստեղծեցին հայդուկային խմբեր, ար-

[17] ՌԱՔՍ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 719, թ. 99։
[18] ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1300, ց. 29, գ. 56, թ. 58։
[19] «Դրոշակ», 1913, № 4, էջ 49, 51։

տասահմանից ու կայսրության եվրոպական մասից դևնք տեղափոխեցին Արևմտյան Հայաստան, ձևնամուխ եղան ուժանակի արտադրությանը և 1913 թ. մարտի 31-ին Երզնկայում կատարեցին առաջին փորձը[20]։

Սակայն դաշնակցականները չկարողացան ներդործել երիտասարդների վրա և հասնել իրենց նպատակին։

Ազգային կյանքում գերիշխանություն ձեռք բերելու համար դաշնակցականները սուր պայքար ծավալեցին ինչպես Հայ Հոգևորականության, այնպես էլ քաղաքական կուսակցությունների դեմ։ Հոգևորականներին չեզոքացնելու համար դաշնակցականները հայտարարում էին, որ «ազգային քաղաքական գործերով քաղաքական կուսակցությունները միայն պետք է զբաղվեն... Պատրիարքարանը պետք է սահմանափակվի իր կրոնական հանգամանքին ու գործերուն մեջ»[21]։ Պատրիարքարանի առարկմանը, թե կուսակցությունները չեն կարող զևկավարել ամբողջ ազգը, քանզի արտահայտում և պաշտպանում են նրա մի մասի շահերը, դաշնակցականները պատասխանեցին, որ այդ բնորոշ է հոգևորականությանը, որովհետև նրանք պաշտպանելով միայն լուսավորչականների շահերը, անտեսում են կաթոլիկներին ու բողոքականներին, մինչդեռ իրենք արտահայտում են ամբողջ ազգի շահերը[22]։

Երկրի մի շարք շրջաններում դաշնակցականները հոգևորականներին ուղղակի քշում էին ասպարեզից և ազգի կառավարման օղակները վերցնում իրենց ձեռքը։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Շաբաթ օրը Պայազետեն հեռագիր հասավ պատրիարքարան, թե խումբ մը դաշնակցականներ առաջնորդարանի բոլոր պաշտոնական մարմինները դուրս հանած և ըսած են, որ այլևս իրենք պիտի կառավարեն ազգային գործերը»[23]։

Չբավարարվելով դրանով, դաշնակցականները փորձեցին տնօրինել եկեղեցական գույքը։ Ակնում նրանք առաջարկեցին քահանաներին

---

[20] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքխիվ, 1912, դ. 719, թ. 243, «Բյուզանդիոն», 1913, № 5033, 5025, «Մշակ, 1913, № 110—111։ Ուժանակը անապասելի պայթեց։ Իթթիհատական իշխանությունները, օգտագործելով այդ առիթը, մասսայական խուզարկումներ կատարեցին և հայտնաբերեցին ու բռնագրավեցին դաշնակցականների կուտակած զինամթերքները։

[21] «Բյուզանդիոն», 1912, № 4652, փետրվարի 12։

[22] Տե՛ս նույն տեղում։

[23] «Բյուզանդիոն», 1910, № 4279, նոյեմբերի 21։

վաճառել եկեղեցու սակեղենն ու արծաթեղենը և դրամը հանձնել իրենց[24], Այնքանում փորձեցին ուղղակի խլել եկեղեցին և այն վերածել ժողովատեղիի[25], նույնը կրկնեցին նաև Ջմյուռնիայում, ուր հոգևորականության դիմադրության հետևանքով առաջացավ արյունահեղություն[26]: Վասպուրականում նրանք տիրացան Աղթամարի վանքի կալվածքներին, դրանք ավելցին վարձակալության ու եկամուտը յուրացրին[27]:

Հայ հոգևորականության դեմ մղվող պայքարում դաշնակցականներն օգտագործում էին «նոր սերնդականներին»: Այս հոսանքն անարխիստական, մանրբուրժուական հոսանք էր և հանդես գալով արևմտահայ իրականության մեջ դեռ 1906 թ., շարունակվում էր նաև 1908 թ. հեղաշրջումից հետո: Իրավացիորեն քննադատելով հոգևորականության մռայլ ու ռեակցիոն էությունը, այդ հոսանքի ներկայացուցիչները ընկնում էին ծայրահեղություններ մեջ: Նրանք վիրավորում էին ժողովրդի կրոնական ղգացմունքները, փորձում ոտնատակ անել նրա ավանդական բարքերն ու սովորույթները: 1909 թ. «նոր սերնդականները» հրատարակեցին «Հորձանք» թերթը, որի մեջ քննադատում էին ոչ միայն եկեղեցում, այլև ընտանիքում տիրող բարոյական նորմերը, քարոզում ազատ սեր, ընտանիքի վերացում և այլն: Նրանք հեղափոխությունը հասկանում էին առանց սահմանի ու արգելքի, առանց նպատակի ու հեղինակության: «Նոր սերնդականների» կարծիքով պետական, կրոնական ու ընտանեկան սահմանները շղթաներ են, որոնք պետք է ոչնչացնել[28]:

Շատ հաճախ «նոր սերնդականները» խոսքից անցնում էին գործի: Նրանք 1909 թ. ապրիլին Աղթամարում արգելեցին քահանաների ձեռնադրումը, հայտարարելով՝ «մեզի ո՛չ եկեղեցի և ո՛չ եկեղեցական պետք է»: Ապա ծաղրուծանակի ենթարկեցին եպիսկոպոսին, որը «չըկարենալով անոնց դիմացն առնել, լալով իր խուցը քաշված է և ընծայացուներն առանց ձեռնադրվելու քաղաք եկած են»[29]: Արճակում «նոր սերնդականները» ներխուժեցին դպրոց և վարեցին իրենց գռեհիկ

---

[24] Տե՛ս «Մշակ», 1909, № 250, նոյեմբերի 11:

[25] Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 4007, դեկտեմբերի 27:

[26] Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 2000, գ. 6881, թ. 10:

[27] Տե՛ս «Աշխատանք», 1912, № 7—54, էջ 8, № 8—55, էջ 11:

[28] Տե՛ս Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. ե, էջ 242:

[29] «Բյուզանդիոն», 1909, № 3798, ապրիլի 6:

պրոպագանդան։ Սրամ Մանուկյանը «Նոր սերնդականներին» անվանում էր «լավ տղաներ», «հավանած էր և կըսեր, թե կրնան նկատվիլ վստահելի հեղափոխության»[30], հայտարարում էր. «Երիտասարդության վրա հույս կարելի է ունենալ»[31]։ Իսկ Ռուբեն Տեր-Մինասյանը հաճախ հիանում էր «Նոր սերնդականներով», մանավանդ այն բանից հետո, երբ նրանցից մեկը՝ Տաճատը սպանեց մատնիչ Դավոյին[32]։

«Նոր սերնդականները» չկարողացան ձևավորվել որպես կուսակցություն, չկարողացան ներգործել հասարակական զանգվածների վրա և տանել իրենց ետևից որոշակի մասսա։

Բիրտ ուժի ու տեռորի շնորհիվ դաշնակցականներն ու «Նոր սերնդականները» հասան այն բանին, որ պատրիարքարանը թույլատրեց նրանց եկեղեցիներում գումարելու ժողովներ ու միտինգներ, պայմանով, որ հանդես չգան լուսավորչական կրոնի դեմ։

Հայ մարքսիստները դեռ իր ժամանակին քննադատում էին նրանց վարքագիծը և ցույց տալիս, որ այն չունի որևէ առնչություն իսկական ազատության ու առաջադիմության հետ։ 1910 թ. ապրիլի 24-ին Ս. Սպանդարյանը իր «Ուրվագրեր հայկական կյանքից» հոդվածում գրում էր, թե Կ. Պոլսի հայոց պատրիարքին կից խորհուրդը որոշել է թույլատրել «ամեն տեսակ ժողովներ եկեղեցիներում, միայն մի պայմանով՝ այդ ժողովներում ելույթներ չունենալ հայոց եկեղեցու դեմ»։ Այդ որոշման հետևանքով «եկեղեցին մի այնպիսի սովորական շենքի է վերածվում, որտեղ կարող են տեղի ունենալ և՛ միտինգներ, և՛ համերգներ, և՛ դասախոսություններ, և՛ թատերական ներկայացումներ...

Մենք ամենաջերմ ու ամենահետևողական կողմնակիցներ ենք ժողովների և խոսքի ազատության և ամեն կերպ պիտի ողջունենք այդ և աջակցենք դրա կենսագործմանը։ Սակայն բողոքելու ենք այդ ազատության կենսագործման այնպիսի միջոցների դեմ, որոնք վիրավորում են բնակչության մեծ մասի զգացմունքները... Մեզ մոտ, Արևելքում, եկեղեցին սրբազան մի վայր է հանդիսանում, և ամեն ոք, ով եկեղեցի է մտնում, պետք է միաժամանակ հրաժարվի այն ամենից, ինչ որ աշխարհիկ է... Սրանով մենք չենք ուզում ասել, թե չի կարելի գիտական պայքար մղել կրոնական սիստեմների դեմ և այլն։ Սակայն սրանով մենք ուզում ենք ընդգծել, որ հարկավոր է զգույշ լինել կրո-

30 Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. ե, էջ 240։

31 Նույն տեղում, էջ 243։

32 Տե՛ս նույն տեղում։

նական հարցերում։ Իսկ առավել ևս խղճի հարցերում անթույլատրելի և ուղղակի խայտառակ ու.ամոթալի են կաղմակերպված փոքրամասնության բռնությունները անկաղմակերպ մեծամասնության վրա...

Մի՞թե ողջ սահմանադրական Կոստանդնուպոլսում չէր կարող մի տեղ գտնվել ժողովների համար, այլ հարկավոր էր դրանք կաղմակերպել եկեղեցիներում։ Եկեղեցին պետք է մնա մի կողմ. կարիք չկա քաղաքական ելույթների ասպարեզի վերածելու այն։ Հարձակվեցնք նրա վրա, եթե այդ ձեզ հաճելի է, բայց նրա պատերից դուրս, նրա տաճարը—հավատացյալների համար սրբազան համարվող վայրը—չդարձնելով հռետորական ամբիոն, և մի՛ զայրացեք, երբ հավատացյալները դիմադրություն են ցույց տալիս ձեզ, պայքարում են իրենց իրավունքների համար, մի ճչացեք «կղերականության», «խավարապաշտության» և այլ սարսափելի բառերի մասին, որովհետև ձեր արարքները շատ քիչ առնչություն ունեն իսկական ազատության և պրոգրեսի հետ և ավելի շուտ սահմանակից են «խուլիգանության»[33]։

1908 թ. հեղափոխությունից հետո դաշնակցականները արևմտահայ քաղաքական մյուս կուսակցությունների նկատմամբ հանդես եկան փոխադարձ համերաշխության ու համագործակցության կոչերով։ Նրանց այդ վարքագիծը դրական ընդունվեց հայ հասարակության լիբերալ շրջանների կողմից։ 1909 թ. ապրիլին «Բյուզանդիոնը» գրում էր, որ դաշնակցությունը «Տորդոր կը կարդա հայ քաղաքական կուսակցություններուն ձեռք ձեռքի տալու և հանրության կենսական շահերուն ի պաշտպանություն միաբանությամբ գործելու, որուն նախաձեռնությունն ինքն իր վրա կառնե Հ. Հ. դաշնակցությունը։ Այս չորեքշաբթի օրը նույն մառք ավելի մանրամասն կոչ մը ալ ստացանք փոքր Հայոց հընչակյան նահանգային վարչութենեն (Մարսելան), որ բոլոր հայ կուսակցությունները կը հրավիրե միանալու, ձուլելու կամ գեթ համերաշխություն հաստատելու իրենց մեջ։ Այս հրավերներն այնքան համաձայն են առաջին օրեն ի վեր Բյուզանդիոնի արտահայտած իղձերուն, որ սիրով կարձագանքենք զանոնք»[34]։

Սակայն կուսակցությունների ծրագրերի տարբերությունը մի կողմից, յուրաքանչյուրի բացառիկության նկրտումը (ստեղծել այնպիսի համագործակցություն ու համերաշխություն, որոնք ապահովին իր գերիշխանությունը մյուսի հանդեպ) մյուս կողմից՝ ոչ միայն բացառեցին

[33] Ս. Սպանդարյան, Երկեր, հ. I, Երևան, 1959, էջ 235—237։

[34] «Բյուզանդիոն», 1909, ապրիլի 9։

միավորումը, այլև նոր ուժով բորբոքեին ներկուսակցական պայքարը։ Դաշնակցականները մեղադրում էին Հնչակյաններին ազգային ուժերի ջլատման մեջ, իսկ Հնչակյանները նրանց համարում էին ազգի դավաճաններ, որովհետև դաշնակցականները շարունակում են համագործակցել Աղանայի սպանդը կազմակերպող կրիմոլորների հետ։ Դաշնակցականները պայքարում էին նաև ռամկավարների դեմ, հասցրնելով այդ պայքարը նույնիսկ մարդասպանության։

1913 թ. մարտին Օլֆերևը, հաշվի առնելով, որ Ռուսաստանը արդեն զբաղվում է արևմտահայության հարցով, փորձեց հաշտեցնել բաղաքական կուսակցություններին[35]։ Կուսակցությունները ընդունեցին նրա առաջարկությունը, դանելով, որ համատեղ ուժերով կարելի կլինի հայկական հարցի լուծմանը։ Նույն թվականի հոկտեմբերին Կ. Պոլսում դաշնակցության Արևմտահայ բյուրոն, Հնչակյան կուսակցության տաճկական կենտրոնական վարչական մարմինը, Սահմանադիր ռամկավար կենտրոնական ակումբը և վերակազմված Հնչակյան կենտրոնական վարչությունը միասեղ հայտարարեցին, որ այսուհետև միասնաբար կգործեն հայկական բարենորոգումների իրականացման համար, համերաշխորեն կկառավարեն ազգային կյանքը և համատեղ հանդես կգան օսմանյան կուսակցությունների ընտրություններում և պառլամենտում, նշելով, որ պետք է վերջ տալ տարիներ շարունակ ձգձգվող, ազգի ուժերը պառակտող սին ու դատարկ վեճերին և համերաշխորեն գործել հայկական հարցի լուծման համար։ Նրանք շեշտում էին. «Միջկուսակցական այս համերաշխության կետ նպատակն է՝ բոլոր ուժերը ի սպաս դնել հայկական բարենորոգումներուն...»[36]։

Չնայած այդ հայտարարությանը, 1914 թ. սկզբից, երբ հրապարակ եկավ օսմանյան պառլամենտի հայ պատգամավորների ընտրության հարցը, հայ բաղաքական կուսակցությունները վերսկսեցին իրար դեմ մղվող պայքարը, յուրաքանչյուրը ձգտելով իր կուսակցության կողմից առաջադրել ավելի շատ պատգամավոր։ Բայց նպատակին հասնելու համար դաշնակցականները դիմեցին ծեծի ու ահաբեկումների, իսկ Հնչակյաններն ու ռամկավարները 1914 թ. ապրիլին նրանց վերջնագիր ներկայացրին, պահանջելով դադարեցնել այդ ամենը, սպառ-

---

35 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 302—308.

36 «Դրոշակ», 1913, № 11—12, էջ 188—189։

նալով, որ հակառակ դեպքում 24 ժամ հետո կվտլեն բարեկամական հարաբերությունները և դարձյալ կկանգնեն քշնամական դիրքերում[37]: Սակայն այդ վերջնագիրը անուշադրության մատնվեց:

Դաշնակցականները որոշ գործունեություն ծավալեցին գյուղում, պրոպագանդելով ստեղծել կոոպերացիաներ կամ գյուղացիական միություններ՝ նրանք համոզում էին գյուղացիներին, թե այդ ճանապարհով կարելի է ազատվել աղքատությունից ու թշվառությունից: Դաշնակցության գործիչ Ե. Թումչյանը հայտարարում էր. «Կոոպերատիվն-փոխադարձ օգնության ու համերաշխության վրա հիմնված միություն, գործակցություն—դա իսկապես մի փրկարար ուժ է գյուղացիների վիճակը բարվոքելու համար»[38]: Բայց դաշնակցականների այդ ձեռնարկումը, ինչպես և պետք էր սպասել, արդյունք չտվեց:

Դաշնակցականները շրջում էին գյուղերը և հարկ էին պահանջում գյուղացիներից իբր ազգի կրթության ու լուսավորության, պետման ու ինքնապաշտպանության նպատակների համար: Բայց հավաքած գումարը նրանք հաճախ յուրացնում էին: «Բյուզանդիոնը» գրում էր, որ վանի սանջակում «դաշնակցականները գյուղացիական տուրքի անվան տակ ժողովրդեն մարդ գլուխ 20—100 ղուրուշ դրամ կպահանջեն և անծանոթ նպատակներու կը գործադրեն»[39]: Հարկից խուսափող գյուղացիներին նրանք պատժում էին, անգամ ծեծում:

Դաշնակցականներից ոմանք մերձենում էին թուրք կամ քուրդ կառավարիչներին և նրանց հետ միասին գոտում գյուղացիներին: Նրանց այդ սխալ ու ազգամոլական քաղաքականությունը հանդիպում էր աշխատավոր զանգվածների ակտիվ դիմադրությանը: Երկրի մի շարք շրջաններում գյուղացիները հրաժարվում էին դաշնակցականներին հարկ վճարելուց և նույնիսկ քշում նրանց: Այսպես. 1909 թ. դեկտեմբերին Գավաշի Խորոմ գյուղի բնակիչները մերժեցին դաշնակցականների հարկային պահանջները և հետագիր ուղարկեցին պատրիարքարան, խնդրելով, որ «փրկենք ազատեն այդ կեղեքումներեն»[40]: 1910 թ. գարնանը Մուշի գյուղերից մեկում շինականները վռնդեցին

---

37 Տե՛ս «Մշակ», 1914, № 94, մայիսի 3:

38 «Ազատամարտ», 1909, № 27, հուլիսի 23:

39 «Բյուզանդիոն», 1911, № 4459, հունիսի 27:

40 «Բյուզանդիոն», 1910, հունվարի 8:

դաշնակցական հարկահավաքին[41]։ Նրանց դեմ ըմբոստացան նաև Այնթափի, Դիարբեքիրի, Ուրֆայի և այլ շրջանների բնակիչները[42]։

Հատկանշական է, որ արևմտահայ աշխատավորները դիմագրավում էին դաշնակցականներին նաև ընտրությունների ժամանակ և տապալելով նրանց թեկնածուներին, անց էին կացնում իրենց ներկայացուցիչներին։ 1909 թ. հունվարին «Բյուզանդիոնը» գրում էր, որ Վանում «Հ. Հ. Դաշնակցությունը վերջերս տեղի ունեցած զանազան ակնեղեցիներու թաղականության վերընտրության մասին չունեցավ այն հաջողությունը, զոր ունեցած էր ասկե առաջ... ժողովուրդը փոխանակ իր անտարբերության մեջ անդամ շատ մը ակնեղեցիներու թաղականներն իր ուզածներեն ընտրեցավ»[43]։ Արևմտահայ աշխատավորները տապալում էին նույնիսկ օսմանյան պառլամենտի համար դաշնակցականների առաջադրած թեկնածուներին և ընտրում իրենցը։ Այդպես վարվեցին, օրինակ, Տարոնի բնակիչները, երբ 1912 թ. մերժեցին դաշնակցության թեկնածու Ա. Սիմոնյանին և անցկացրին իրենց մեջ հարգանք ու համակրանք վայելող Գևորգ Տեր-Կարապետյանին[44]։ Ժողովուրդը ծաղրում էր դաշնակցական ներկայացուցիչներին, որոնք թուրքերին չհամանալով, ընտրվել էին օսմանյան պառլամենտի անդամ։ Այսպես. Վահան Փափազյանին պառլամենտում լուռ ու մունջ նստելու համար անվանում էին «համբր երեսփոխան»[45], իսկ Վռամյանի մասին ասում էին, թե նրա «պես մի շատախոս մարդու համար պառլամենտում սֆինքսային լռություն պահելու պարտավորված լինելը ամենից մեծ պատիժը կլինի»[46]։

Իր վարած արկածախնդրական այդ քաղաքականության հետևանքով դաշնակցությունը արևմտահայության մեջ գնալով կորցնում էր աղդեցությունն ու հեղինակությունը։ Դեռ 1909 թ. հունվարի 17-ին վ.

---

41 Տե՛ս ՌԱՔՍ, ֆ. «Քաղարխիվ», 1910, ց. 482, դ. 544, թ. 78։

42 Տե՛ս «Մշակ», 1911, № 55, մարտի 16։

43 «Բյուզանդիոն», 1909, № 3734, հունվարի 10։

44 Տե՛ս «Մշակ», 1912, № 107, մայիսի 20։

45 Ի դեպ՝ վ. Փափազյանն էլ չէր ժխտում այդ փաստը։ Իր հուշերում նա գրում էր, որ ինքն ու դաշնակցական իր կուսակիցները թուրքերին չհամանալու պատճառով պառլամենտում «լուռ ու մունջ ունկնդրի դերի մեջ էին», չէին հասկանում «մոլլաներու արաբախառն և «դիտումներու» խոսած տաղտկալի ճառերու բովանդակությունը» (տե՛ս նրա նշված աշխ., էջ 91)։

46 «Մշակ», 1912, № 130, հունիսի 17։

Շիրկովը հաղորդում էր, որ Բիթլիսի վիլայեթի հայերի մեծամասնությունը դժգոհում է դաշնակցականներից, բայց վախենալով ահաբեկումներից, կատարում է նրանց կամքը[47]: Նույնն էր հաստատում նաև Օլֆերևը, որը 1910 թ. ապրիլի 10-ին գրում էր. «Իմ մոտիկ շփումը վանի հայերի հետ թույլ է տալիս եզրակացնել, որ դաշնակցականներն արդեն կորցրել են այստեղ իրենց ունեցած ազդեցությունը և համակրանքը: Ես գիտեմ դեպքեր, երբ գյուղացիները անիծելով ու ծեծելով վռնդել են նրանց իրենց գյուղերից ու ավաններից»[48]:

Անգամ դաշնակցության պարագլուխներից մեկը՝ Ռուբեն Տեր-Մինասյանը իր հուշերում հաստատում էր կուսակցության արագ հեղինակազրկումը. «Սահմանադրության առաջին տարին ամեն որոշում կլիներ ըստ դաշնակցության պատգամավորների կամքին, թեպետ անոնք փոքրամասնություն էին: Հովանոց վաճառող, ազդեցիկ երեսփոխան Միհրդատ Հայկազը կկանչեր ընդդիմացողներին:

— Ես, հարիֆ, չսեցիր Շահրիկյան բեյի (դաշնակցության ներկայացուցչի—Ա. Հ.) ըսածները. ալ ի՞նչ կլիուդ դուռ կուտաս:

Երկրորդ տարին ան կը հայտարարեր ընդդիմադիրներին.

— Պատգամավոր էֆենդի, ըսածդ կրնա միշտ ըլլալ, բայց Շահրիկյան էֆենդին այլ կարծիքի է, հաշվի առնելիք է.

Երրորդ տարին ան կըսեր.

— Պարոն Շահրիկյան, ըսածդ միշտ է, բայց ժողովականները համամիտ չեն ըսածիդ:

Իսկ սահմանադրության չորրորդ տարին ան արմատական միջոցներ կառաջարկեր.

— Շահրիկյան, դուն ձենդ կտրե, դուն ղարիբական ես, բան չես հասկնար, հոս ժողով է, հոս է ազգը, թող որ մենք մեր գիտցածը ընենք»[49]:

* * *

Հնչակյան կուսակցության ղեկավարները թուրքական հեղափոխությունից հետո վերամշակեցին իրենց ծրագիրը և 1910 թ. Կ. Պոլսում հրապարակեցին այն՝ «Ծրագիր սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության (Տաճկաստանի համար)» վերնագրով: Ի տարբերություն հին

47 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, դ. 543, թ. 4:

48 Նույն տեղում, 1910, ց. 482, գ. 718, թ. 41—42:

49 Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. 2, էջ 346:

ծրագրի, որտեղ խոսվում էր երեք Հայաստանների մասին (թուրքական, ռուսական ու պարսկական), նոր ծրագրում խոսվում էր միայն Արևմտյան Հայաստանի կամ Տաճկահայաստանի մասին։ Եթե հին ծրագրում խնդիր է դրվում երեք Հայաստանների միավորման, նրանց անկախության հռչակման և դեմոկրատական կարգերի ստեղծման մասին, նոր ծրագրում իբրև մոտավոր նպատակ առաջ էր քաշվում Արևմտյան Հայաստանի ինքնավարության Թուրքիայի կազմում, իսկ իբրև հեռավոր նպատակ՝ սոցիալիզմի հաստատում ամբողջ Թուրքիայում։ Դեռ 1908 թ. ամռանը «Հնչակը» գրում էր. «Մեր պայքարի մոտավոր նպատակը կլինի ինքնավարություն՝ Հայաստանի, Մակեդոնիայի և բոլոր բաղկացուցիչ ժողովուրդների համար։ Մեր պայքարի հեռավոր նպատակը կլինի սոցիալիզմի տիրապետությունը Հայաստանի և ամբողջ Թուրքիայի համար»[50]։ Կուսակցության տեսաբաններից Ս. Սապահ-Գյուլյանը այդ փոփոխությունը բացատրում էր նրանով, որ հին ծրագրի ընդունման ժամանակ Օսմանյան կայսրության մեջ տիրապետում էր Հայկական բուռժուազիան, իսկ այժմ այն տապալված է, և ստեղծված են դեմոկրատիայի զարգացմանը նպաստող «սահմանադրական կարգեր»։

Նոր ծրագրում հայտարարվում էր. «Սահմանադրական Թուրքիա հանդես չխտել ամեն տեսակ անջատողականություն»[51]։ Ապա խնդիր էր դրվում բոլոր քաղաքացիների ու ազգությունների իրավահավասարության, դեմոկրատական ընտրություններ, համայնքների, գավառների ու նահանգների ինքնավարությունների, խոսքի, խղճի և մամուլի ազատության և մի շարք այլ վերակառուցումների մասին։ Այնուհետև նշվում էր, որ յուրաքանչյուր ազգություն պետք է ունենա իր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, որը, կազմելով միջազգային սոցիալ-դեմոկրատիայի բաղկացուցիչ մասը, պարտավոր է պրոպագանդել սոցիալիստական գաղափարներ։

Ի տարբերություն հին ծրագրի, որի մեջ խոսվում էր միայն հողի համայնական օգտագործման մասին, նոր ծրագրում խնդիր էր դրվում «վերացնել ճորտատիրական հարաբերությունների մնացուկները», «աշխատավոր ժողովրդին ամեն պարագայի տակ բռնի խլված հողերը վերադարձնել իրենց նախկին տերերուն», բնակեցնել գաղթականներին կամ մուհաջիրներին ապատ հողերի վրա, սահմանափակել մարարա-

[50] «Հնչակ», 1908, № 6—7, էջ 50։

[51] «Ծրագիր սոցիալ դեմոքրատ Հնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար)», 1910, կ. Պոլիս, էջ 15։

նների շահագործումը, օգնել մանր հողագործներին, մատակարարելով սերմ, պարարտանյութ, գործիքներ ու մեքենաներ, թեթևացնել հարկերն ու տուրքերը, կազմակերպել նրանց գյուղատնտեսական մթերքների վաճառքը, հիմնել գյուղատնտեսական դպրոցներ ու փորձակայաններ և այլն։

Եթե հին ծրագրում Հայաստանի ազատագրման միջոցը համարվում էր ապստամբությունը, նոր ծրագրում մերժվում էր այդ ու առաջ քաշվում պայքարի խաղաղ եղանակները՝ «բարելավենթական գործունեություն, բորբականո, արհեստակցական և գյուղացիական միություններ, գործադուլներ, գործավարական արտադրող և սպառող համագործակցական ընկերություններ, կրթական-կուլտուրական հիմնարկություններ և այլ այն բոլոր միջոցներն ու եղանակները, որք միջազգային սոցիալ-դեմոքրաթիայի պայքարի զենքերը կը համարվին»[52]։

Ի տարբերություն հին ծրագրի, որտեղ հատուկ նշանակություն էր տրվում տեռորին, նոր ծրագրում մերժվում էր այն, գտնելով, որ Թուրքիայում այժմ ստեղծված են նորմալ պայմաններ, որոնք թույլ են տալիս գործելու օրինական, լեգալ ճանապարհներով։

Այդպիսով, ինչպես դաշնակցականները, այնպես էլ հնչակյանները 1908 թ. հեղափոխությունից հետո արևմտահայության ազգային ու հողային խնդիրների լուծման գործում կանգնեցին, ըստ էության, միևնույն դիրքերում և հարմարվելով նոր պայմաններին, ընտրեցին այսպես կոչված խաղաղ զարգացման ուղին։ Նրանք երկուսն էլ արևմտահայ դատի վճռումը համարեցին այժմ Թուրքիայի ներքին գործը, պահանջում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարություն, բայց ոչ անջատում, չէին դնում կալվածատիրական հողատիրության ոչնչացման և հողի ազգայնացման խնդիրները, բավարարվում էին ազանների կողմից բռնագրաված գյուղացիական հողերի վերադարձումով միայն, համաձայնվում էին հողային վեճերը լուծել թուրքական դատարաններում կամ պաշտոնատներում, մերժում էին պայքարի հեղափոխական ուղին և ընտրում ռեֆորմիստականը, բնակչության և հատկապես գյուղացիության դրության բարելավման համար առաջարկում էին մասնակի ձեռնարկումներ, որոնք իրականանալու դեպքում կարող էին օգտակար լինել միայն շահագործող վերնաշերտերին։

Բայց շուտով հնչակյանները, տեսնելով թուրք կառավարիչների ազգայնամոլ ու խաբեբայական վարքագիծը, հրաժարվեցին իրենց նոր

[52] Նույն տեղում, էջ 14։

ծրագրերից և հայկական հարցի լուծումը վերստին կապեցին միջազգային դիվանագիտության կամ մեծ տերությունների հետ։ 1913 թ. սեպտեմբերի 7-ին Ռումինիայի Կոնստանցա քաղաքում հրավիրած իրենց համագումարում հնչակյանները առաջ քաշեցին Հայաստանի ինքնավարության՝ եվրոպական հսկողությամբ (կոնտրոլով) գաղափարը, սկզբում այդ ինքնավարության տակ հասկանալով, ինչպես դաշնակցականները, 1863 թ. ազգային սահմանադրության մասնակի կամ որոշ ընդարձակում։ Հնչակյանները գտնում էին, որ Բուլղարիան կառավարիչների համար հայկական հարցի լուծումը ավելի հեշտ է, քան մյուս ժողովուրդներինը, քանի որ հայերն ունեն ազգային սահմանադրություն։ Հայերին պետք է տալ նաև այն, ինչ չկա այդ սահմանադրության մեջ և դրանով լուծել նրանց հարցը։ Բայց ի՞նչ պետք էր տալ։ Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր, թե անհրաժեշտ է նաև «ճանաչել հայ սահմանադրության մասնակի գործադրական իշխանության իրավունքը, ընդարձակել նրա սահմանները ավելի դեմոկրատական հիմունքներով, Հայաստանի ամբողջ տարածության վրա,—դա ամենադյուրին միջոցը կտար հայկական հարցը լուծելու»[53]։

Հնչակյան կուսակցությունը հեղափոխությունից առաջ խուսափեց երիտթուրքերի հետ համագործակցելուց, իսկ սահմանադրությունից հետո նրանց հանդեպ բռնեց օպոզիցիոն դիրք։ Պատճառ ունենալով նրա դեկավարները մերկացնում էին երիտթուրքերի ներքին ու արտաքին քաղաքականությունը և բնութագրում նրանց որպես հայ ժողովրդի ջարդարարներ։

Հնչակյանները մերձեցան թուրքական «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթիլաֆ») կուսակցությանը, որը, ինչպես արդեն ասվեց, իր սոցիալական բաղադրությամբ ու խնդիրներով համարյա նույնն էր, ինչ իթթիհատը, տարբերությամբ սակայն, որ ստեղծվել էր Անգլիայի հովանավորությամբ և, մերժելով դերմանականը, ընդունել անգլիական կողմնորոշում։ Հնչակյանների մերձեցումը իթթիլաֆականների հետ պայմանավորված էր նրանով, որ սրանք հանդես էին գալիս երիտթուրքերի դեմ և ժողովրդի մեջ հեղինակություն ձեռք բերելու նպատակով արծարծում էին դեմոկրատական ֆրազներ, պահանջելով նույնիսկ ազգային հարցի լուծման ապակենտրոնացման սկզբունքը։ 1912 թ. փետրվարի 7-ին հնչակյաններն ու իթթիլաֆականները համա-

---

[53] «Հնչակ», 1913, № 2, էջ 8։

ձայնությունն կնքեցին, որով պարտավորվում էին հարգել օսմանյան պետության ժողովրդա-պետական սկզբունքները, պաշտպանել նրա ամբողջականությունը, մերժելով անջատման ամեն մի փորձ, հասնել ազգերի իրավահավասարությանը, ժխտելով մեկ ազգի գերիշխանությունը մյուսի նկատմամբ, պաշտպանել արևմտահայերի ազգային սահմանադրությունը, իրավունք տալ Կ. Պոլսի հայոց պատրիարքին շարունակելու ղեկավարել հայկական դպրոցները, բարելավել բանվորների և հողազուրկ գյուղացիների դրությունը, բռնագրաված հողերի հարցը քննել դատարաններում և վերադարձնել այդ հողերն իրենց տերերին, մուհաջիրներին բնակեցնել պետական ազատ հողերի վրա, միանաբար հանդես գալ օսմանյան պառլամենտում և այլն[54]:

Սակայն իթթիլաֆականները 1912 թ. հուլիսի 9-ին, երբ կատարեցին պետական հեղաշրջում և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը, շարունակեցին իթթիհատի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը: Իթթիլաֆականները թշնամական դիրք բռնեցին կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում նաև արևմտահայերի սոցիալական ու ազգային խնդիրների նկատմամբ: 1912 թ. սեպտեմբերի 12-ին «Մշակը» գրում էր. «Այլևս հայուն համար իթթիհատին և իթթիլաֆին միջև նախընտրություն ընելու ժամանակը շատունց անցած է: Ասոնք ամենքն ալ իրար կարժեն և... անընդունակ են որևէ բարենորոգում գործադրելու և հետևաբար հայուն հավատք ներշնչելու, հույս տալու և խանդավառելու, անոր կյանքին, ինչքին և պատվին ապահովություն տալով»[55]: Ըստ էության իթթիլաֆը ոչ թե համագործակցում էր հնչակյանների հետ, այլ խաբում էր նրանց, այնպես, ինչպես իթթիհատը՝ դաշնակցականներին:

Երբ Բալկանյան պատերազմում իթթիլաֆականները խայտառակ պարտություն կրեցին, և երիտթուրքերը 1913 թ. հունվարի 10-ին (23-ին) իշխանությունը կրկին վերցրին իրենց ձեռքը, հաշվեհարդար տեսան «Ազատություն և համաձայնություն» կուսակցության ղեկավարների հետ, դատապարտելով ոմանց մահվան, իսկ մյուսներին տաժանակրության: 1914 թ. մայիսին երիտթուրքերը դատական պատասխանատվության կանչեցին նաև հնչակյաններին, ներկայացնելով նրանց հայրենիքի դավաճանության և Թալեաթի ու էնվերի դեմ մահա-

54 Տե՛ս «Պատմություն սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության 1887—1962», հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 348—349:

55 «Մշակ», 1912, № 217, հոկտեմբերի 2:

վորձ կազմակերպողների շինծու մեղադրանքը։ Իթթիհատի դատարանը ձերբակալեց 22 հնչակյանների, որոնցից 20-ին 1915-ի հունիսին կախաղան բարձրացրեց[56]։

1908-ի հեղափոխությունից հետո հնչակյանները նույնպես Արևմտյան Հայաստանում ծավալեցին որոշ գործունեություն։ Բալուում, Ադանայում, Խարբերդի դաշտում, Մարզվանում, Դիարբեքիրում և այլուր հիմնեցին իրենց կուսակցության մասնաճյուղերը, պրոպագանդեցին նոր ծրագիրը, քարոզեցին արհեստակցական միությունների ու կոոպերացիաների գաղափարը, զբաղվեցին կուլտուր-լուսավորական աշխատանքներով, տարածեցին գիր ու գրականություն և այլն։

Բայց ձեռք բերած արդյունքը համարյա աննշան էր։ Այնուամենայնիվ, հնչակյանները դաշնակցականների համեմատությամբ որոշ գրական գործ կատարեցին։ Նրանք թարգմանում էին մարքսիստական գրականությունը և այս կամ այն չափով պրոպագանդում սոցիալիզմի գաղափարները։ 1910 թ. Կ. Պոլսում հնչակյանները ստեղծեցին իրենց «սոցիալ-դեմոկրատական ուսանողական Միությունը, որն իր... ուժերի չափով և իր ձևով ծավալում էր սոցիալիզմի գաղափարների պրոպագանդան։ Այդ Միության հրատարակած «Կայծ» ամսագիրը (1911—14 թթ.) շոշափում էր սոցիալիստական մտքի ու շարժման մի շարք կարևորագույն հարցեր, ընդ որում Միությունը այս կամ այն չափով կրում էր Անդրկովկասի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը»[57]։

* * *

Թուրքական բուրժուական հեղաշրջումից հետո արևմտահայ իրականության մեջ ձևավորվեց մի նոր կուսակցություն, որն իրեն անվանեց «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն»։ Նրա կազմավորման պրոցեսը սկսվել էր տակավին 1908 թ. առաջ՝ արտասահմանում, երբ Պարսկաստանի արմենականների ղեկավար Գ. Պեոզիկյանը (Ներսեսը) 1906 թ. ուղևորվելով Բուլղարիա, հանդիպել էր վերակազմյալ հնչակյանների կամ «Հեղափոխական միության» պարագլուխներին, և բանակցություններից հետո երկու կուսակցությունները միավորվել էին ու կազմել «Գաղափարակցական միություն»։ 1907 թ.

---

56 Տե՛ս «Հինգմյակ (1887—1937) սոց-դեմոկրատ հնչակյան կուսակցության», Փարիզ, 1938, էջ 295—301։

57 Մ. Վ. Ազամանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., Երևան, 1959, էջ 228—229։

սեպտեմբերին այդ միությանը միացան նաև Եդիպտոսի վերակազմյալ հնչակյանները՝ Միհրան Տամատյանի ղեկավարությամբ, իսկ 1908 թ. հունվարի 1-ին բոլոր արմենականներն ու վերակազմյալ հնչակյանները միաձուլվեցին և ստեղծեցին «Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը»։ Շուտով կազմակերպությունը մշակեց իր ծրագիրը, որը խնդիր էր դնում Եվրոպայի կապիտալիստական խոշոր տերությունների օգնությամբ ազատել Արևմտյան Հայաստանը օսմանյան լծից և ստեղծել այնտեղ սահմանադրական հիմունքներով անկախ կառավարություն։ Ծրագիրը գտնում էր, որ հայերը պետք է ապստամբեն թուրքական պետության դեմ միայն նպաստավոր պայմաններում, իսկ մնացած պարագաներում դիմեն միայն ինքնապաշտպանության։ Այն մերժում էր մասնակի ցույցերն ու ելույթները, հաշարելով դրանք վնասակար։ Ծրագիրը առաջ էր քաշում համիդյան բռնապետությունից տառապող ժողովուրդների համագործակցության գաղափարը, նշելով, թե այդ համագործակցությունը այնպես պետք է վարել, որ պահպանվեն յուրաքանչյուր ազգի ձգտումները, անկախությունն ու լիակատար ազատությունը։ Կազմակերպությունը հայտարարեց, որ գործելու է Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում, ինչպես նաև Կիլիկիայում, իսկ ապստամբության ու ինքնապաշտպանության հարցերը թողեց իր կենտրոնական վարչության հայեցողությանը[58]։ Նորաստեղծ կազմակերպության ծրագիրը շրջանցում էր հողային հարցը և չէր անդրադառնում ապագա հասարակության կառուցվածքին։ Այն բուրժուական ծրագիր էր և խարխափում էր ազատագրական պայքարի բավիղներում։

«Միացյալ հայ հեղափոխական կազմակերպությունը» դեռ նոր էր սկսել իր գործունեությունը, երբ Թուրքիայում կատարվեց բուրժուական հեղափոխություն։ Այն դուրս եկավ ընդհատակից և 1908 թ. հոկտեմբերին Ալեքսանդրիայում հավաքվելով խորհրդակցության, որոշեց այսուհետև իրեն անվանել «Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցություն»։ Ընկերության գործելավայրը հիմնականում վասպուրականն էր։ Կուսակցությունը ստեղծեց մասնաճյուղեր Կ. Պոլսում, Եգիպտոսում, Խարբերդում, Սեբաստիայում, Տիգրանակերտում, Վանում, Կիլիկիայում և նույնիսկ Ամերիկայում[59]։

Կուսակցությունը Գ. Պեռճիկյանի, Մ. Նաֆեանյանի (արմենականներից), Մ. Տամատյանի, Շ. Հովիվյանի և Կ. Գրիգորյանի (վերակազմ-

[58] Տե՛ս Ա. Դարբինյան, նշված աշխ., էջ 185—207։

[59] Տե՛ս «Մշակ», 1913, № 150, հուլիսի 11։

յալ հնչակյաններից) ղեկավարությամբ, հաշվի առնելով Թուրքիայում կատարված քաղաքական անցուդարձը, 1908 թ. հոկտեմբերի 18-ին (31-ին) վերամշակեց իր ծրագիրը, որի մեջ իբրև նորություն նշեց, թե պետք է պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը և աստիճանաբար ընդարձակել «նահանգներու—հետևվաբար նաև հայաբնակ նահանգներու—տեղական իրավասությունները»[60]: Այլ կերպ ասած՝ ակնարկում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը, կոչ էր անում դրամագլխի կամ կապիտալի խրախուսում, ժխտում էր արևմտահայության դասակարգային շերտավորման փաստը, պահանջում էր այնպիսի բարենորոգումներ, որոնք բխեն աշխատավորության շահերից և նպաստեն մանավոր կապիտալի զարգացմանը, գտնում էր, որ պետք է բարելավել հարկային սիստեմը, ոչնչացնել «պնչերու և աղաներու ավատական իրավունքները և համայնական հարկահավաքություննները»[61], պետության հաշվին հող տալ հողազուրկ ու տնտեսապես քայքայված գյուղացիներին, իսկ արտադրաձեռնեներին ու վաճառականներին հայրենիք վերադառնալու հնարավորություն, վերացնել կիսանկախ կամ անկախ իշխանությունները, նստակյաց դարձնել քոչվորներին ու կիսաքոչվորներին, դինաթափել մահմեդականներին, կամ գենք տալ նաև քրիստոնյաներին՝ ինքնապաշտպանության համար և այլն:

Այդպիսով, ինչպես դաշնակցական ու հնչակյան, այնպես էլ ռամկավար կուսակցությունների ծրագրերում առաջ էին քաշվում այնպիսի բուրժուա-դեմոկրատական խնդիրներ, որոնք անլուծելի էին մնացել երիտթուրքերի հեղափոխությունից հետո: Ի տարբերություն դաշնակցականների ու հնչակյանների, որոնք պարզ էին դնում Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը, ռամկավարները մշուշապատ էին դնում այն: Եթե դաշնակցականները շրջանցում էին ֆեոդալական հողատիրության հարցը և հարմարվում երիտթուրքական օրենքներին, ապա ռամկավարները պահանջում էին վերացնել աղաների ու բեյերի ավատական իրավունքները, և նրանց հարկային հարստահարումները: Այդ առումով ռամկավարների ծրագիրը ավելի ձախ էր:

Ինչպես դաշնակցականների ու հնչակյանների, այնպես էլ ռամկավարների ծրագիրը երիտթուրքերի կառավարման տարիներին վո-

---

60 Ս. Դարբինյան, նշված աշխ., էջ 200:

61 Նույն տեղում, էջ 204:

փոխություն կրեց։ Ռամկավարները գնալով ավելի ու ավելի էին լսում հեղափոխության մասին և ընկվում դեպի աստիճանական ղարգացումը։

Արդեն 1913 թ. նրանց օրգան «Վան-Տոսպը» գրում էր. «Ձախաթևիչ ծայրահեղությունը հասարակական կյանքի մեջ նույնքան բացասական երևույթ է, որքան աջամնաց ինքնասպան անշարժությունը. երկու ծայրերն էլ հավասարապես կը խոնավորեն առաջադիմության ընթացքը և կը կասեցնեն անոր աստիճանական բարեշրջումը»[62]։

Ռամկավարները նահանջեցին իրենց ծրագրից նաև հողային հարցում։ Եթե 1908 թ. նրանք առաջարկում էին վերացնել աղանների ֆեոդալական իրավունքները և հարստահարությունները, ապա 1912 թ. լսում էին այդ մասին և գտնում, որ կառավարությունը կլուծի հողային հարցը, հենց որ ավարտի պատերազմը։ Ուստի կոչ էին անում հնազանդ ու սպասել։

Ռամկավարները միաժամանակ խորհուրդ էին տալիս գյուղացիներին՝ դիմել կառավարական հանձնաժողովներին, հավատացնելով, թե նրանք կլուծեն իրենց հուզող խնդիրները[63]։ Բնակչության նյութական վիճակի բարելավման համար ռամկավարներն անհրաժեշտ էին համարում միությունների ու ընկերությունների ստեղծում։ Նրանք մեծ նշանակություն էին տալիս նաև արտադրական գործիքների զարգացմանը, գտնելով, որ ինչքան արագ փոխարինվեն եղներն ու ձիերը մեքենաներով, այնքան արագ տեղի կունենա հասարակության հարստացումն ու զարգացումը։

Ռամկավորները պրոպագանդում էին կապիտալիզմի զարգացումը, որով վերջ կդրվի Թուրքիայի կախվածությանը եվրոպական տերություններից, կվերացվի բնակչության աղքատությունն ու տարագնացությունը, կհարստանա պետության գանձարանը և կհամախմբվեն կրոնական մոլեռանդությամբ տարանջատված ժողովուրդները։ Բայց չցանկանալով մնդադրվել բուրժուական գաղափարախոսության մեջ և ձգտելով արժանանալ աշխատավոր զանգվածների համակրանքին, նրանք ավելացնում էին. «Պուրժուազիին կը գործակցինք չէ թե «պուրժուաններ», «եւոպիմականներ» ըլլալնուս, այլ ներկայիս իր անհրաժեշտությունը լավ հասկցած ըլլալնուս համար. իսկ անոր շահագործող

---

62 «Վան-Տոսպ», 1913, № 1, էջ 2։

63 Տե՛ս «Վան-Տոսպ», 1912, № 15, էջ 250—251։

ախորժակներուն դեմ պիտի կռվի, իհարկե, բանվոր դասակարգը իր կարգին...»[64]։

Ռամկավարները վորձեցին մեծացնել իրենց կուսակցության անդամների թվաքանակը, համախմբելով Թուրքիայում ու աշխարհի տարբեր մասերում ապրող հայերին, սակայն ապարդյուն։ Այդ պատճառով էլ, ինչպես հեղափոխությունից առաջ, այնպես էլ հետո, նրանք գործում էին հիմնականում Վան-Վասպուրականում։ Իրավ է, ռամկավարներ կային նաև Եգիպտոսում, Իզմիրում, Պոլսում և մինչև իսկ Ամերիկայում, սակայն շատ քիչ ու համարյա աննշան գործունեությամբ։ Նեղվելով դաշնակցության հարձակումներից, ռամկավարները դիմում էին պատրիարքարանի պաշտպանությանը և դերադասում քայլել պատրիարքարանի հետից, քան ձուլվել դաշնակցության մեջ։ Նրանք դիմադրավում էին դաշնակցությանը, քննադատում տարբեր առիթներով, դատապարտում նրա վարքագիծը հատկապես Ադանայի ջարդերի ժամանակ։ Ռամկավարներն ասում էին. «Երբ պատրիարքարանն արդարություն կը խնդրեր կառավարութենեն ու ս. պատրիարքն ալ կը հրաժարեր այդ պատճառով, ազգը պետք էր ամբողջովին իրրև մեկ մարմին, իր պատրիարքարանին հետ ըլլար և ոչ թե իր մեկ հատվածը կառավարական գերազոր կուսակցության մը հետ, որպիսին է իթթիհատ վե թերաքին, առանձին համաձայնություն մը կնքելով տկարացներ պատրիարքարանի դիմումին ազդեցությունը»[65]։

«Հայ սահմանադրական ռամկավարների կուսակցությունը» չփորձեց համագործակցել իթթիհատի կամ իթթիլաֆի հետ։ Սակայն առանձին հարցերում պատրիարքարանի միջոցով հաղորդակցվում էր թուրքական կառավարիչներին[66]։

* * *

Արևմտահայ հոգևորականությունը 1908 թ. հեղաշրջումից հետո գրավեց հաշտվողական դիրք։ Մ. Օրմանյանի փոխարեն Կ. Պոլսի պատրիարքական աթոռին բազմած Մատթեոս Իզմիրլյանը 1909 թ. հունվարի 1-ին դիմեց «յուր հոտին» հետևյալ կոնդակով. «Մենք հայերս իբրև օսմանյան պետությունը կազմող կարևոր տարրերեն մեկը, սահմանադրության պարգևած բարիքները վայելելու իրավունքին հետ,

---

64 *«Վան-Տոսպ», 1913, № 3, էջ 88։*

65 *«Բյուզանդիոն», 1910, № 4195, օգոստոսի 12։*

66 *Տե՛ս «Աշխատանք», 1911, № 39, էջ 14։*

պարտավոր ենք մեզ բաժին ընկած օրինաց սահմանին մեջ և խղճի մտոք գործադրել, պահպանելու համար օսմանյան սահմանադրության հարատև գոյությունը, որով միայն պիտի երաշխավորվին ազատական սկզբունքներու անվթար կիրառումը, համերաշխ եղբայրակցության մշտատև շարունակությունը, հավասարության իրական պահպանությունն ու արդարության անվրեպ գործադրությունը, զգուշանալով ա՛յն ամեն ծայրահեղություններեն, որոնք կրնան վնասարեր դառնալ և զրկել զմեզ սահմանադրության ընծայելիք բարիքներեն»[67]։

Այդպիսով, ազգային հարցի լուծման համար պատրիարքարանը առայժմ չէր պահանջում Արևմտյան Հայաստանի ինքնավարություն կամ անկախություն։ Նա խոսում էր միայն կայսրության հայաբնակ գավառներում անձի և գույքի ապահովության ստեղծման ու դավանանքի ազատության մասին և կարծելով, թե սահմանադրությունը կիրագործի այդ երազանքները, շտապում էր զգուշացնել իր հոտին, որ անխոհեմություններով չխանգարի նրան։

Պատրիարքարանի պահանջները չափավոր էին նաև հողային հարցում։ Հավատալով, թե երիտթուրքերի ագրարային օրենքները կլուծեն հայ գյուղացիության հողային խնդիրները, նա «կարմիր սուլթանի» կառավարման տարիներին հայերից բռնագրաված հողատարածությունները որոշելու նպատակով ստեղծեց հատուկ հանձնաժողով Ն. Տաղավարյանի նախագահությամբ և Ռ. Փափազյանի, Ա. Հալաճյանի, Գ. Տեր-Կարապետյանի ու այլոց անդամակցությամբ։ 1910 թ. ապրիլին այդ հանձնաժողովը ավարտեց իր աշխատանքները և կազմեց մի ընդարձակ զեկուցագիր, որի մեջ նշվում էր, որ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին հայերից խլվել են 13 վանք, 27 եկեղեցի, 18 ազգային կալվածք, 16 գերեզմանոց և 7000 կոտր գյուղացիական հող, չհաշված այն հողերը, որոնց տարածությունը 100 արտավարից, կամ արժեքը 100 լիրայից պակաս է[68]։ Անշուշտ, հանձնաժողովի այդ տվյալները թերի էին, որովհետև շատ տեղերում հայ գյուղացիները, վախենալով աղաների վրիժառությունից, չէին հայտնել նրանց բռնագրավումների մասին։ 1909 թ. մայիսին «Բյուզանդիոնը» գրում էր, որ Կարնկանում «նույնիսկ այժմ ալ, երբ Թուրքիան սահմանադրական երկիր դարձած է, երբ ազգային պատրիարքարանը գավառ առաջնորդարանին գրավված հողերու ցուցակն ուղած է, կան գյուղեր, որոնք

[67] «Բյուզանդիոն», 1909, № 3740, հունվարի 26։

[68] Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4681, մարտի 18։

չեն համարձակիր գրել տալ իրենցմն խլված հողերը, որովհետև արյունոտ անցյալը զանոնք դարձուցած է երկչոտ, չափազանց զգույշ, նույնիսկ փոխ-առաջնորդներն ալ զգույշ կվարվին ու չեն համարձակիր հայանի կերպով ցուցակներ պատրաստել, հարցեր ուղղել, և այս պատճառով պատրաստված ցանկերը շատ թերիներ ունին»[69]։ Անգամ այդ թերի տվյալներով հայկական վեց վիլայեթներում ազգաները հայ շինականներից բռնագրավել էին 1.030.000 օրավար կամ 751.900 հեկտար հող։ Առանձին վիլայեթներում այդ բռնագրավումները կազմում էին. Կարնո կուսակալությունում՝ 100 հազար, Խարբերդի՝ 200 հազար, Սեբաստիայի՝ 80 հազար, Վանի՝ 100 հազար, Տիգրանակերտի՝ 200 հազար և, վերջապես, Բիթլիսի կուսակալությունում՝ 350 հազար օրավար[70]։

1911 թ. հուլիսի 7-ին պատրիարքարանը այդ նյութերը ներկայացրեց Թուրքական կառավարությանը, պահանջելով վճարել հայերին այն հողերի համար, որոնք հափշտակված են նրանցից պետական տուրքի, երկրագործական բանկի վարկի, մասնավոր պարտքի փոխարեն և իբր-ված են կեղծ վկայություններով ու փաստաթղթերով, իսկ այն հողերը, որոնք բռնագրավված են իբրև անտեր կամ ուղղակի հափշտակված են, պետք է անհապաղ վերադարձնել նախկին տերերին։ Պատրիարքարանը նշում էր, որ այդ հողերի վերադարձը պետք է կատարել ոչ թե դատարանով, այլ վարչական եղանակով, քանի որ դատարանը կատեզծի քաշքշուկներ և անպղնիվ ճանապարհով կարդարացնի հափշտակումները։ «Պարտավորեցնել հայերը դիմել դատարանին, տեղականից շրջանայինին և ապա վճռաբեկ ատյանին, ստիպել անոնց 5000—6000 կտոր հողերու վերստացման համար մտնել բազմատեսակ դատական և քաղաքային բարդություններու մեջ, կը նշանակե դեղերել զանոնք տասնըհինգ տարի շարունակ դատարաններու դռներուն առաջ և բռնադատել զանոնք հրաժարվիլ իրենց իրավունքներու ետ պահանջումեն»[71], —ասված էր պատրիարքի բողոքագրում (թագրիր)։

Ելնելով երիտթուրքերի հրապարակած հողային օրենքներից, պատրիարքարանը գտնում էր, որ հայրենիք վերադարձողներին պետք է բաժանել երկու կարգի՝ օսմանյան հպատակությունից կամավոր և

---

69 «Բյուզանդիոն», 1909, № 3821, մայիսի 7։

70 Տե՛ս Գ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ, կ. Պոլիս, 1911, էջ 43—44։ 1 օրավարը = է $^{8}/_{11}$ կամ 0,73 հեկտարի։

71 «Դրոշակ», 1913, № 2—3, էջ 36։

բռնությամբ հրաժարվողների։ Վերջիններիս պետք է ճանաչել օսմանյան քաղաքացիներ և վերադարձնել նրանց կալվածքները։ Հայրենիք վերադարձածներին հողի դիմաց փող կարելի է առաջարկել միայն այն դեպքում, եթե գավթիչը հողի արժեքից թանկ չենթեր է կառուցել կամ այլիներ գցել։ «Եթե բռնությամբ ստուգվի,—նշվում էր բողոքագրում,—հայուն հողին հանգիստ տիրացողն այնքան մշակեր է այն հողն և այնքան ծառ ունկեր և շենք կառուցեր է, որ հողին վրա հավելյան հարստությունն հողին արժեքեն ավելի է, այն ատեն, գրավողեն հողին արժեքը մաս առ մաս դանձվելու պայմանով, կառավարությունը կրնա հայուն վճարել հողին արժեքը և կամ անոր համապատասխան մոտակա ուրիշ հող մը տալ ընտրության իրավունքն հայուն թողնելով»[72]։ Երբ հողն ու նրա վրա կառուցած շենքերն ունենային հավասար արժեք, հարցը պիտի լուծվեր կողմերի համաձայնությամբ, հակառակ դեպքում հողն ու շենքերը պետք է վաճառվեին, և դրամը բաժանվեր երկուսի միջև։

Պատրիարքարանը խնդիր էր դնում, որ ընչազուրկ և որևէ պահանջ չունեցող հայրենիք վերադարձողների մասին մատհոգվի կառավարությունը, «մշակության համար հող մը տալով իրենց վաղեմի բնակավայրերուն ըստ կարելվույն մոտ տեղ մը»[73]։

Պատրիարքարանը կտրականապես դեմ էր հողազրկված հայերին այլ վայրերում հողի դիմաց փող կամ նոր հողամաս տալուն։ Նման դեպքում, նշված էր բողոքագրում, «ոչ միայն խնդիրը լուծված չըլլար, այլև տեղական բռնավորները հաստատված կըլլան իրենց կարծիքին մեջ, թե նույնիսկ սահմանադրության օրով արդարություն պիտի չըլլա ղրկյալներուն, թե սահմանադրական կառավարությունը չի համարձակիր նույնիսկ դրամ տալով ետ առնուլ հայոցմե կորզված հողերը, թե ինչպես հին ռեժիմի, անանկ ալ նոր ռեժիմի օրով հայոց կյանքը, պատիվն ու ինչքն հալալ են և հայերը... պիտի վհատին և այլ քաջություն պիտի չունենան երկիր դառնալով աշխատելու, կամ հոն մնալու[74]։

Վերջապես պատրիարքությունը գտնում էր, որ կառավարությունը հայերի հողի հարցը պետք է լուծի ուժի միջոցով, կառավարությունը «ուրկե կվախնա։ Եվ ինչո՞ւ կվախնա... Այս իրկարար շավղին մեջ տե-

---

72 «Բյուզանդիոն», 1912, № 4681, մարտի 18։

73 Նույն տեղում։

74 Նույն տեղում։

րության ցույց տալիք կորովամտությունն ու վարչային դործողությունը թե Թուրքիո մեջ և թե երկրեն դուրս հույժ նպաստավոր ազդեցություն առաջ պիտի բերեն, դրապես ապացուցելով, թե օսմանյան սահմանադրությունը ճշմարտություն մ է և մեծագույն հաղթանակներեն մին կազմելով օսմանյան նոր ռեժիմին»[75]:

Այդպիսով, պատրիարքարանը արևմտահայ դյուղացիության հողային հարցը ձգտում էր լուծել Թուրքական կառավարության միջոցով և նրա հրատարակած հողային օրենքների սահմաններում, առարկելով նրան և հարվածելով աղանների շահերին միայն այնքան, որքան անհրաժեշտ էր այդ հայ դյուղացիների հողերի մի մասը վերադարձնելու համար:

Արևմտահայ հոգևորականությունը դիմեց իթթիհատի պարագլուխներին, պահանջելով անձի և գույքի ապահովություն և հողային հարցի լուծում: Պատասխանը եղավ, որ «պատրիարքարանները միմիայն կրոնական ու կղերական դործերու խառնվին և քաղաքական խնդիրներու համար կառավարության չդիմեն»[76]: *Այդ պատասխանը անսպասելի էր պատրիարքարանի համար, մանավանդ որ դեռ 60-ական թվականներին հայոց ազգային սահմանադրությունը հաստատելիս, սուլթանը պատրիարքին իրավունք էր վերապահել «իր ազգին և տերության միջև հարաբերության միջնորդն ըլլալ, այսինքն՝ հայը ազգովին, խմբովին, ինչ խնդիր որ ունենան տերության մատուցանելու, իրենց պատրիարքարանին միջոցով է, որ կը մատուցանեն զայն»*[77]:

Համենայն դեպս պատրիարքարանը շարունակեց զբաղվել «քաղաքական խնդիրներով» և թագրիր թագրիրի նամից ուղարկելով երիտթուրքական պարագլուխներին, պահանջում էր հայերի ապահովություն ու հողային հարցերի լուծում: Միայն 1913 թ. ընթացքում 176 խընդրագիր ուղարկեց կառավարությանը, բայց ոչ մեկի պատասխանը չըստացավ: Պատրիարքները հաճախ հրաժարականներ էին տալիս, որ այդ կերպ ներգործեն իթթիհատի վրա, բայց արդյունքի չհասնելով, հետևում էին ընդմիշտ, ղեկելով իրենց տեղը նորերին:

Ազդի ղեկավարությունը իր ձեռքում պահելու նպատակով արևմտահայ հոգևորականությունը ակտիվորեն դիմադրավում էր դաշնակցությանը և պայքարում նրա դեմ: Դեռ 1909 թ. սեպտեմբերին պատ-

[75] «Բյուզանդիոն», 1912, № 4681, մարտի 18:

[76] «Բյուզանդիոն», 1909, № 3934, հոկտեմբերի 2:

[77] Նույն տեղում:

[78] «Բյուզանդիոն», 1909, № 3993, դեկտեմբերի 10:

բիարքի ցուցումով Կ. Պոլսի 40 քահանաներ հավաքվեցին խորհրդակցության և կոնկրետ միջոցառումներ մշակեցին այդ կուսակցության հակակրոնական պրոպագանդայի դեմ պայքարելու համար, իսկ նոյեմբերին մայրաքաղաքի կղերականները որոշեցին հակակրոնական հոսանքի դեմ պայքարելու նպատակով «կրոնաթերթ մը հրատարակել»[78]։ Սակայն հաշվի առնելով, որ ընթերցողները խիստ սակավաթիվ կլինեն, հրաժարվեցին այդ մտքից։

1910 թ. ապրիլի վերջերին կաթողիկոսը կարգադրեց արգելել կուսակցականների միտինգներն ու ժողովները եկեղեցիներում կամ վանքերում, և պատրիարքարանը հրահանգ ուղարկեց գավառները, ուր ասված էր. «Փակել եկեղեցիներն ամեն կարգի հավաքումներու և բանախոսություններու դեմ, ինչպես փակված են իսլամ և հրեա աղոթատեղիները, լատին և հույն եկեղեցիները, ամեն կարգի բողոքական եկեղեցիները, և եկեղեցին հատկացնել և ճանչնալ միմիայն իբրև աղոթատեղի, ուր կրոնական պաշտամունք միայն տեղի կունենա»[79]։

* * *

Երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայերի ազգային ու սոցիալական խնդիրների լուծման մասին իրենց տեսակետներով հանդես եկան նաև հայ բուրժուական այլ շրջաններ։ «Բյուզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանը սկզբունքորեն մերժեց հայերի անկախության գաղափարը, գրելով իր թերթում. «Ուրախ ենք, որ մեր քաղաքական կուսակցությունները տարագրութենեն ի Պոլիս դարձած օրերնեն ի վեր խոհեմաբար ի բաց վանեցին ամեն անջատողական ձգտում և հռչակեցին, թե իրենց ամենուն իղձն է թուրք հայրենակիցներուն և օսմանյան ազատ կառավարության հետ ձեռք ձեռքի տալով հետամուտ ըլլալ արդարության, հավասարության և աշխատության դարագլուխ մը բանալու տառապյալ երկրին համար»[80]։

Բ. Քեչյանը չերմորեն պաշտպանեց արևմտահայության ազգային հարցի լուծման ապակենտրոնացման կամ ինքնավարության գաղափարը և իր թերթի 1909 թ. փետրվարի 13-ի առաջնորդողում հայտարարեց. «Մենք հայերս... համոզված չատադովներն ենք ապակենտրոնացման փրկարար սկզբունքին իբրև մեծագույն դյուրացուցիչ միջոցին երկրին ընդհանուր բարվոքման»[81]։ Սակայն նրա կարծիքով այդ

---

79 «Բյուզանդիոն», 1910, № 4171, հուլիսի 14։

80 «Բյուզանդիոն», 1909, № 3733, հունվարի 16։

81 «Բյուզանդիոն», 1909, № 3755, փետրվարի 13։

ապակենտրոնացումը պետք է սպասել վերևից, խորհուրդ չէր տալիս դիմել մասսայական պայքարին կամ անհատական տեռորին, խոսել հայկական նահանգներում հայ կառավարիչներ նշանակելու մասին, որովհետև թուրքերը կհնթադրեն, թե հայերը ցանկանում են վերականգնել իրենց թագավորությունը։ «Բյուզանդիոնի» խմբագիրը առաջարկում էր համբերել ու սպասել և կարծում էր, որ ամեն ինչ կտրվի վերևից։ «Համբերությունը մեր կողմն,— գրում էր նա,— և անկեղծ բարեհոժարությունն անոնց կողմեն, ահա ինչ որ սրտանց մաղթելի է երկուստեք»[82]։

Բ. Քեչյանի կարծիքով, երիտթուրքերի սահմանադրության շնորհիվ Կ. Պոլսում ստեղծվել է այնպիսի ազատություն, ինչպիսին կա Փարիզում, Լոնդոնում կամ Նյու-Յորքում։ Նա դրվատանքով էր խոսում իթթիհատի մասին, նշելով, որ նրա օրով Թուրքիայում վերացան հայկական կոտորածները և ստեղծվեցին խաղաղ ապրելու ու աշխատելու պայմաններ[83]։ Սակայն Ադանայի ջարդերը կարծես սառը ջուր լցրեցին Բ. Քեչյանի գլխին, և նա ահաբեկված սկսեց բարոզել, թե չպետք է դրդռել մահմեդականներին, անհրաժեշտ է եղբայրաբար ու հաշտ ապրել նրանց հետ, միամտաբար կարծելով, թե համերաշխությունն ու համագործակցությունը միայն հայերից է կախված։

Անդրադառնալով հողային հարցին, Բ. Քեչյանը գտնում էր, որ այն պետք է լուծել խաղաղ ճանապարհով՝ կառավարության կազմած հանձնաժողովի միջոցով։ Հրատարակելով արևմտահայ դյուղացիության հողային հարցի մասին 1911 թ. հուլիսի 7-ին թուրքական կառավարությանը ներկայացրած պատրիարքարանի խնդրագրի բովանդակությունը, «Բյուզանդիոնի» խմբագիրը գրում էր. «Հիմա մնչ կմնա սպասել արևելյան դավառները ղրկվելիք հանձնաժողովին քննության ելքին» և կոչ էր անում. «ամեն ոք իր իրավասության կամ իր կարողության սահմանին մեջ, պետք է ջան ի գործ դնե կառավարության գործը դյուրացնելու և արտադրության վերջնական նպատակները ծառայելու»[84]։

Բ. Քեչյանը դեմ էր այն առաջարկությանը, որ հողազրկված հայերին նրանց հանդակների դիմաց պետք է փող տալ։ Նա գտնում էր, որ այդ դեպքում հայերը կլքեն հայրենիքն ու կհեռանան, որը բացա-

82 «Բյուզանդիոն», 1909, № 3778, մարտի 13։

83 Տե՛ս նույն տեղում։

84 «Բյուզանդիոն», 1912, № 4681, մարտի 18։

սական նշանակություն կունենա երկրի զարգացման համար։ Եթե առաջ է քաշվում դրամի հարցը, ապա այն, նրա կարծիքով, պետք է տալ հայերի հողերը այս կամ այն կերպ զավթողներին, քանի որ նրանք շատ հող ունեն։ «Իբր ընդհանուր սկզբունք,— գրում էր նա,— հարկ է համաձայնել, թե հայուն պետք է նա տալ իր հողը, որպես զի օգտակար ըլլա այս երկրին ու տերության զանձուն, իսկ դրամն առավելապես վերապահել պետք է դոհացնելու համար զանոնք, որ մեյ մեկ կերպով տիրեր են հայուն հողին»[85]։

Տեսնելով, որ կառավարությունը չի լուծում հայ շինականների հողային հարցը, 1913 թ. Բ. Քեչյանը առաջ է քաշում այն գաղափարը, թե անհրաժեշտ է հարուստներից հանգանակության կարգով դրամ հավաքել ու կարիքավորների համար հող գնել։ Եթե այս բանը կատարվեր հինգ տարի առաջ, նշում էր նա, ապա մինչև հիմա հայ գյուղացիությունը իր ձեռքին կունենար մեծ տարածություններ. «Համիդի տապալումեն հինգ տարիե ի վեր փոխանակ Բ. Դրան բարեհաճութենեն միայն ակնկալելու հողային խնդրուն կարգադրումը, որ օրե օր առնչվածային, անհնարին փուլերու մեջ կ'մխրճի, կարծես, նիե դրամադլուխ մը մեջտեղ դնելով առևտրական ձևով խնդիրը լուծել ձեռնարկինք, վստահ ենք, որ ցայսօր, հինգ տարիե ի վեր, շատ մը արժեքավոր հողեր նո առնված կըլլային, և կարգ մը ընդունակ հայ երկրագործներ մինչև ցարտ տեղավորված կըլլային մշակելի լավագույն հողերու վրա։ Փոխանակ որոտալի բողոքներու, առանց աղմուկի կարելի էր իսրայելյան ոճով ընտիր կտորներ ձեռք ձգել հոն, ուր հնչուն դրամով հողի վրա գործ խիստ քիչ կպատահի, ուր պլտիկներուն, խնդձերուն, շինականներուն հողերն ավելի վաշխառուության կամ գոնհիկ բռնության ձևով է, որ կանցնին իրենց մոտերը հաստատված աղանեբուն ու պնչերուն ձեռքը»[86]։

Բ. Քեչյանը կարծում էր, թե արևմտահայ գյուղացիության հողային հարցը կարելի է լուծել նաև գյուղատնտեսական ընկերություններ ու միություններ ստեղծելու ճանապարհով, բայց գտնում էր, որ հայ ժողովուրդը այդ աստիճան դեռ չի հասունացել։

Արտադաղթի պատճառը նա համարում էր հողազրկությունը և փորձելով ներկայացնել այն որպես դրական երևույթ, հայտարարում էր, թե տարագիրները լինելով կապիտալիստական երկրներում, կո-

[85] «Ճահվիրա», 1912, № 2, փետրվարի 7։

[86] «Բյուզանդիոն», 1913, № 5131, սեպտեմբերի 9։

վորեն այնտեղ առաջավոր եղանակներ և վերադառնալով, կնպաստեն հայրենիքի բարգավաճմանը[87]։

Այդպիսով, Բ. Քեշյանի հայացքները արևմտահայերի թե՛ ազգային և թե՛ հողային խնդիրների լուծման վերաբերյալ անիրագործելի էին ու պաշտոնական, քանի որ պաշտպանելով երիտթուրքերի քաղաքականությունը, կոչ էին անում աշխատավորությանը՝ հանդուրժել տիրապետող ուժիմը և հարմարվել նրան։

Հողային հարցի լուծման մասին «Բյուզանդիոնում» իրենց կարծիքը հայտնեցին նաև այլ հեղինակներ։ Նրանցից ոմանք առաջարկում էին փոքր-ինչ առաջադիմական միջոցառումներ։ Այսպես, Երզնկայի հայոց թեմական առաջնորդ Սրվանդ վրդ. Փերտահճյանը գտնում էր, որ հայ ու քուրդ գյուղացիների հողային հարցը լուծելու համար կառավարությունը պետք է հող տա նրանց և վաստի «իրենց որջերեն նշանավոր հարստահարիչները, արյունաքամ տղրուկները»[88]։

Սեբաստիայի բնակչության կողմից օսմանյան պառլամենտի անդամ ընտրված Ն. Տաղավարյանը, նշելով, որ հողային հարցը միայն հայկական երևույթ չէ, այն գոյություն ունի նաև թուրքական, քրդական և այլ գյուղերում, գտնում էր, թե հայերի հողերի խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է՝ 1) կորած համարել այն հանդակները, որոնք վաճառված են պետական տուրքի, երկրագործական բանկի ու մասնավոր մարդկանց պարտքերի փոխարեն, 2) նա պահանջել այն տարածությունները, որոնք բռնագրավված են հայերից թափուներ կեղծելով կամ առանց դրան, 3) նա պահանջել այն տարածությունները, որոնց թափուները դեռ գտնվում են հայերի ձեռքին կամ կորել են, 4) նա պահանջել այն հողերը, որոնք յուրացված են այս կամ այն անձանց կողմից իբրև անտեր, վճարելով, իհարկե, կառույցների ու պարտատացման համար որոշ գումար և, վերջապես, 5) նա պահանջել այն հողակտորները, որոնք համարվում են հայոց վանքերի ու եկեղեցիների սեփականություն։ «Ահավասիկ հինգ արդար, տրամաբանական և օրինական որոշումներ, որոնց գործադրությամբ լուծված կըլլա հայոց հողային և կալվածային հարցը, որ իրենց համար մահու և կենաց խնդիր մ է»[89]։

---

[87] Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5143, սեպտեմբերի 23։

[88] «Բյուզանդիոն», 1911, № 4625, դեկտեմբերի 28։

[89] «Ռահվիրա», 1912, № 4, «Բյուզանդիոն», 1912, № 4660, փետրվարի 22։

Վերջապես, որոշ հեղինակներ էլ հայտարարում էին, թե անհրաժեշտ է ընդունել կառավարության պայմանները, հրաժարվել հին հողերը պահանջելուց և հաստատվելով իբթիհատի առաջարկած վայրերում, նոր տնտեսություն ստեղծել։ Այսպես. Հորոն (նշան Ջիվանյանը) հանդես եկավ «Հողային հարցի առթիվ առաջարկ մ ալ մեր կողմե» հոդվածով, որի մեջ գրում էր. «Փոխանակ շատոնց ի վեր մշակված և հոգնած իրենց նախկին հողերուն տիրանալու կամ հողատերի և մշակի հակառակությանց ընկերվարական հարցեր պճռտկելու և այդ անդութ և արյունաքամ բռնավորներուն իշնամությունն իրենց վրա հրավիրելու, փոխանակ անոնց տարիներե ի վեր հարդարած, վրան շինքեր կառուցած հողերուն իրանց վերադարձվելու կնճռոտ հանգույցը լուծելու համար սիրտ և հոգի մաշեցնելու, անոնց փոխարեն լավագույնը չըլլա՞ր, որ այդ սեվասյեն վազ անցնելով միանգամայն ընդմիշտ իրենց հողերուն առավիլ կամ նվազ համանման տարբեր կույս հողեր պահանջեն կառավարութենեն»[90]։ Հեղինակը ընդունում էր, որ խոպանը յուրացնելը դժվար է, բայց նշում էր, որ արդյունքը մեծ կլինի, մանավանդ, եթե գյուղացիները ստանան պետական նպաստ։ Այնուհետև. «Ես կկարծեմ, թե Կովկասեն վերադարձող հայերը փոխանակ երկու-երեք տարին ի վեր իրենց նախկին հողերուն տիրանալու հույսով պարապ սպասելու և անոնց տիրացող իրենց հարևան գյուղերուն իշնամությունը գրգռելու այդպես, անոնց փոխարեն եթե նոր հողեր ստանալու ետամուտ ըլլային և մշակեին, մինչև հիմա տնզավորված և արտի ու հունձքի տեր կըլլային... էականը շրջակա ցեղերուն հետ խաղաղությամբ ապրելով և անցածը մոռնալով լավագույն հարաբերություններ հաստատելն է»[91]։ Հորոյի տեսակետը, անշուշտ, արևմտահայ գյուղացիների հողային հարցի լուծման ամենառեակցիոն տեսակետն էր։

Արևմտահայ բուրժուական որոշ շրջաններ փորձեցին խոսքից անցնել գործի և նյութական միջոցներով օժանդակել գյուղացիներին։ Այդ տեսակետից ուշագրավ էր հայ բարեգործական ընդհանուր միության գործունեությունը, որի կենտրոնը գտնվում էր Կահիրեում։ 1908 թ. հեղափոխությունից հետո Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում (Մուշում, Վանում, Երզնկայում և այլն) այդ միությունը բացեց իր մասնաճյուղերը և տարագնացությունը կանխելու ու քայ-

90 «Բյուզանդիոն», 1912, № 4630, հունվարի 16։

91 Նույն տեղում։

քայլած տնտեսությունները վերականգնելու համար նպաստներ բաժանեց ընչազուրկ ու աղքատացած շինականներին։ Միությունը նպաստները տալիս էր տնտեսությունները բարելավելուց հետո մաս-մաս ետ վերադարձնելու պայմանով։ Այդ կերպ պետք է պահպանվեին ու աճեին միջոցները և ներդրվելով շրջանառության մեջ՝ շարունակեին օժանդակել քայքայված տնտեսությունների վերականգնմանը։

Սակայն այդ միջոցառումը էական արդյունք չտվեց. նախ այն պատճառով, որ գյուղացիներին տրամադրված գումարը աննշան էր։ Այսպես, 1912 թ. Մուշի մասնաճյուղը Սասունի գյուղացիներին օգնելու համար բաց թողեց 160 ոսկի, որը, ժամանակակիցներից մեկի վկայությամբ, «որևէ կշիռ չուներ Սասունի ժողովրդյան համար ու անհրաժեշտ է հիմնական դարման»[92]։ Երկրորդ՝ բարեգործական ընդհանուր միության միջոցները գյուղացիներին բաժանելու անվան տակ յուրացվում էին առանձին անհատների կողմից։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Տեղ տեղ ղրկված նպաստները պահանջված կերպով իրենց նպատակին չծառայեցին և նույնիսկ Մուշ ղրկված գումարներեն ոմանք մնացին անհատներու քով...»[93]։ Կամ՝ հայ հողագուրկներին ուղարկված նպաստները շատ անգամ իրենց նպատակին չեն ծառայում, ավելի առանձնաշնորհյալ անհատներն են օգտվում դրանցից, քան կիսամերկ գյուղացին և այլն[94]։

Արևմտահայության հակառակորդով մտահոգված էին նաև արևելահայ լիբերալները։ «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաբելյանը լիովին համակրում էր սահմանադրական ոամկավարների գործունեությունը և նրանց ծրագիրը համարում կատարյալ ու օրինակելի։ 1911 թ. Կ. Պոլսում արտասանած իր ճառում նա ասաց. «Մեր կարծիքով այս փոքր ազգի համար լավագույն երաշխավորությունն է աշխատել սահմանադրական-ոամկավար ծրագրով, որ ապահովում է փոքր ազգի գոյությունը։ Այս ծրագրով մենք փափագում էինք, որ Ռուսաստանի մեջ հայերը հարևին ռուս սահմանադրական-ոամկավարներին (այսինքն՝ կադետներին—Ա. Հ.)»[95]։ Նա հիացմունքով էր խոսում ռուսական կադետների մասին և հույսեր հայտնում, որ սահմանադրական ոամկավարները զարդանալով կարող են հասնել նրանց մակարդակին։ «Ճիշտ է, դուք դեռ ղորեղ չեք,—հայտարարում էր Թերթում,—դեռ հա-

92 «Ռահվիրա», 1912, № 8, փետրվարի 28։

93 «Բյուզանդիոն», 1913, № 5132, սեպտեմբերի 10։

94 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 4990, մարտի 24։

95 «Մշակ», 1911, № 193, սեպտեմբերի 4։

մարյա նորածին մանուկ եք, բայց ապահով կացեք, որ ապագան ձերն է»[96]։

Իր քաղաքական հայացքները արևմտահայերի ազգային հարցի լուծման մասին Հ. Ասաքելյանը ավելի պարզ արտահայտեց 1912 թ., հայտարարելով, թե Թուրքիայում ազգային վերքերի բուժման միջոցը ատրճանակյան ապակենտրոնացումն է. կենտրոնական կառավարությունը պետք է զբաղվի գերապանծապես երկրի արտաքին քաղաքականությամբ, իսկ ներքին հարցերի լուծումը որոշ չափով թողնի հպատակ ազգերի վարչական հաստատություններին։ Այդ հաստատությունները պետք է մտահոգվեն իրենց ազգային դպրոցների, կուլտուր-լուսավորական այլ օջախների, հիվանդանոցների, ճանապարհների հարցերով և այլն։ «Մշակի» խմբագիրը իր միտքը ամփոփում էր հետևյալ կերպ. «Ատրճանակյան ապակենտրոնացումը նույնն է, ինչ որ, օրինակ, զեմստվային վարչությունը Ռուսաստանում, այն տարբերությամբ, որ այդ սիստեմը գործադրվում է ոչ թե որոշ նահանգների, այլ որոշ ազգությունների վերաբերմամբ, ինչ որ Թուրքիայի պես մի երկրում ամենից հարմարն է»[97]։ Չհավատալով, որ երիտթուրքերը կարող են ապահովել արևմտահայերի անձն ու գույքը և ինքնավարությունը, Հ. Ասաքելյանը անհրաժեշտ էր համարում հայաբնակ նահանգներում մեծ տերությունների հսկողության սահմանումը և նրանց զինումը ինքնապաշտպանության համար։ 1912 թ. սեպտեմբերին նա գրում էր. «Տեղական ավտոնոմիա՝ եվրոպացիների հսկողության ներքո և զենք կրելու իրավունք՝ ինքնապաշտպանության համար—ահա ինչ պետք է պահանջենք բոլոր հայերս Թուրքիայի մեր հայ եղբայրների համար»[98]։

Անդրադառնալով հողային հարցին, «Մշակի» խմբագիրը գտնում էր, որ աղանեն ու մահմեդական ազգաբնակչությունը պետք է նոր վերաբաշխեն հայ գյուղացիներից բռնագրաված հողերը, բայց չէր պարզաբանում, թե ինչ պայմաններով[99]։ Միաժամանակ նա հրապարակում էր այնպիսի հոդվածներ, որոնց հեղինակները գտնում էին, որ հողային հարցի լուծման համար հայաբնակ վայրերում պետք է ստեղծել ռուսական հովանավորությունից օգտվող դրամատներ և դրանով, մի կողմից՝ նպաստել Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանը Արև-

---

[96] «Մշակ», 1911, № 194, սեպտեմբերի 6։

[97] «Մշակ», 1912, № 197, սեպտեմբերի 6։

[98] «Մշակ», 1912, № 202, սեպտեմբերի 13։

[99] Տե՛ս «Մշակ», 1912, № 196, սեպտեմբերի 5։

մըտյան Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ փրկել հայկական հողերը մահմեդական զավթումներից[100]։

Հ. Առաքելյանը մերժում էր արտադրական ընկերությունների կամ միությունների կազմակերպման գաղափարը, դանելով, որ դրա իրագործումը հող չունի հայ ժողովրդի մեջ[101]։

Այդպիսով, 1908 թ. հեղափոխությունից հետո հայ բուրժուազիան հայկական հարցի լուծումը տեսնում էր Թուրքիայի սահմաններում Արևմտյան Հայաստանի ինքնավարության ստեղծման մեջ։ Սկզբում նա սպասում էր, որ այդ ինքնավարությունը կստեղծի թուրքական կառավարությունը, բայց հետզհետե հուսախաբվելով, նրանց դարձրեց և վերստին շարունակեց բախել եվրոպական դիվանագետների դռները։

Վ. Ի. Լենինը ինքնավարությունը գնահատում էր իր դրական ու բացասական կողմերով։ Դրականն այն է, որ ինքնավարությունը «թույլ է տալիս տվյալ պետության սահմաններում բռնի կերպով պահվող ազգին վերջնականապես կազմավորվելու իբրև ազգ, հավաքելու, ճանաչելու, կազմակերպելու իր ուժերը, ընտրելու միանգամայն հարմար մոմենտ, որ հայտարարի...»[102] իր անկախությունը։ Ինքնավարության բացասական կողմն այն էր, որ դա ռեֆորմիստական փոփոխություն էր, այսինքն՝ «այնպիսի փոփոխություն է, որը չի խարխլում իշխող դասակարգի տիրապետության հիմքերը, ինչով միայն մի ջիջում նրան, պահպանելով նրա տիրապետությունը... չի վերացնում իշխող ազգի բոլոր արտոնությունները, լիակատար իրավահավասարություն չի ստեղծում, չի ոչնչացնում ազգային ամեն մի հնշում»[103]։ Արևմտահայ բուրժուազիան առժամանակ հանդուրժում էր այդ անհավասարությունները։ Բայց չէր հասկանում, որ տիրապետող պայմաններում ինքնավարության նպատակին նվիրած իր ձգտումներն անիրագործելի էին։

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1908 թ. հեղաշրջումից հետո Կ. Պոլիս վերադարձան Համիդյան հալածանքներից արտասահման տարագրված արևմտահայ գրականու-

100 Տե՛ս «Մշակ», 1914, № 45, մարտի 1։

101 «Մշակ», 1911, № 194, սեպտեմբերի 6։

102 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 464։

103 Նույն տեղում, էջ 463—464։

թյան ու կուլտուրայի գործիչները, դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները՝ Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), Ռուբեն Զարդարյանը, Զապել Եսայանը, Վահան Թեքեյանը, Ռուբեն Սևակը, Երվանդ Օտյանը և ուրիշներ։ Հավատալով, որ կատարված հեղաշրջումը վերջ է դնելու ազգային հալածանքներին, սոցիալական ճնշումներին և վերակառուցելու է Թուրքիան լայն դեմոկրատական սկզբունքներով, նրանք եկան, որ լծվեն առաջընթացի գործին, եկան, որ օժանդակեն նոր կյանքի ստեղծմանը, արագացնեն լավագույն գաղափարների կենսագործումը։

Արևմտահայ դեմոկրատական մտավորականները խնդիր դրեցին մերկացնել համիդյան բռնապետական սիստեմը, ցույց տալ նրա ավերիչ հետևանքները և պահանջել իթթիհատից արմատախիլ անելու սուլթանական վարչակարգը, փոխարինելով այն իսկական դեմոկրատական կարգերով։ Միաժամանակ նրանք անհրաժեշտ համարեցին համախմբել արևմտահայության ուժերը և բարձրացնել նրա մարտունակությունը՝ արհավիրքներին դիմագրավելու համար։ Արևմտահայ դեմոկրատների այդ դիրքորոշումը որոշակիորեն արտահայտվեց Գրիգոր Զոհրապի հասարակական-քաղաքական գործունեության մեջ։

Վերադառնալով Կ. Պոլիս, 1908 թ. հուլիսի 31-ին Բերայի եկեղեցում կայացած հայ ու թուրք մասնակիցների միտինգում Գ. Զոհրապը հանդես եկավ մի ճառով, որի մեջ խարազանեց սուլթանի արյունոտ ռեժիմը, ցույց տվեց, որ երեսուն տարի շարունակ բռնակալը վարում էր մոլի շովինիստական քաղաքականություն, պատերազմում ազգերի դեմ, հալածելով նրանց լեզուն, հավատը, ավանդույթները։ Նրա այդ քաղաքականության հետևանքով թագավորում էր «ամեն կողմ լռություն, ամեն կողմ մթություն»։ Նա համիդյան Թուրքիան համեմատում էր գերեզմանատան հետ ու նշում, որ բռնակալը կիշխեր այդ գերեզմանատան մեջ և «վախենալով, որ չելլան օր մը մեռելները ողջանան, ամեն տեսակ դյուշական միջոցներ ձեռք առնելե ետ չէր մնար»։ Բայց, չնայած դրան, ազգերն ըմբոստացան, «մեծամեծ կորուստներ ունեցան», «փառք վաստակեցին»[104]։ Զաղկելով սուլթանի շովինիստական քաղաքականությունը, Զոհրապը առաջ էր քաշում ու պաշտպանում ազգերի եղբայրության, հավասարության ու ազատության գաղափարը, «դավանությունիս տարբեր, բայց կրոնքնիս մեկ է, ամենուս ալ կրոնքն ազատությունն է»[105]։

---

[104] «Բյուզանդիոն», 1908, № 3603, օգոստոսի 1։

[105] Նույն տեղում։

Հրապարակախոսը կանգ առավ հատկապես հայ ու թուրք ժողովուրդների հարաբերությունների վրա և նշեց, որ նրանց մեջ սահմանողը համիդյան «խառնակիչ ու խարդախ կառավարությունն էր»[106]։ 1908 թ. օգոստոսի 5-ին Ա. Զոպանյանին հղած նամակում նա գրում էր, որ հեղաշրջման հետևանքով նոր ձանապարհ է բացվել, որով «այսուհետև պիտի քալենք իրարց հետ, փոխադարձ հարգանքով ու փոխադարձապես իրավունքներնիս, պարտքերնիս և արժանիքնիս ճանչնալու հիման վրա»[107]։

Զոհրապը դեռ հավատում էր երիտթուրքերի խոսքերին և կարծում էր, թե Ադանայի ջարդերը անոր ունեցան երկրի «անիշխանության մեկ վայրկյանին»[108], և օսմանյան պառլամենտի ամբիոնից պահանջում էր պատժել հանցագործներին։

Պառլամենտի ռնակցիոն անդամները փորձեցին խեղդել Զոհրապի ձայնը և ծափերով ընդունեցին կառավարության ներկայացուցչի մեղադրանքները հայերի հասցեին[109]։ Բայց նա համառորեն շարունակեց իր պահանջները։ Իսկ հետագայում, երբ իմացավ, որ իշխանությունները մեղավորների հետ ուզում են պատժել նաև անմեղ հայերին, առաջարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին՝ ի նշան բողոքի հրաժարական տալ։ Պատրիարքը կատարեց այդ առաջարկությունը, և անմեղները փրկվեցին։ Այնուհետև, Զոհրապը պահանջեց իթթիհատից՝ հայտարարել, որ Ադանայի գործում հայերը բացարձակապես անմեղ են, անհապաղ պատժել հանցագործներին և նյութապես հատուցել տուժածներին։ Միաժամանակ նա խմբագրեց Պապիկյանի հայտնի «Տեղեկագիրը»[110], որը կարևոր նշանակություն ունեցավ Ադանայի կոտորածների լուսաբանման և կազմակերպիչների հայտնաբերման գործում։ Իթթիհատը հաշվի առնելով դեմոկրատական զանգվածների դայրույթը, հարկադրված կատարեց Զոհրապի բոլոր պահանջները։ Դա բացառիկ երևույթ էր մահմեդականների երկրում, երբ նրանք պատժվում էին քրիստոնյաներին կոտորելու համար[111]։

---

106 Նույն տեղում։

107 «Արևմտահայ դրողների նամականի», Երևան, 1972, էջ 42։

108 «Ատենագրություններ Ազգային ժողովո», Կ. Պոլիս, 1909, էջ 335—336։

109 Տե՛ս «Ատենագրություններ...», 1911, էջ 439—440։

110 Տե՛ս «Անահիտ», 1930, № 3, էջ 8։

111 Տե՛ս Առշակ Ալպոյաճյան, Անհետացող դեմքեր, Դրիգոր Զոհրապ (իր կյանքը և գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 206—207։

Ադանայի դեպքերից հետո Զոհրապը սկսեց քննադատել իթթիհատի ազգային քաղաքականությունը։ 1910 թ. նա ասում էր. «Օսմանյան սահմանադրության հռչակումով երևան եկած հեղափոխությունը կատարյալ գործ մը ըլլալե հեռի է»[112]։ Նա հեգնում էր երիտթուրքերի ոչ թուրք ժողովուրդների օսմանացման կուրսը. «Թուրք մտավորականները իրենց հատուկ հայացքը ունին. անոնք կը կարծեն, թե ազգերը կրնան շինվիլ, ստեղծվիլ և իրենց այս ըմբռնումով կուզեն օսմանյան ազգ մը կազմել, որուն կողմ ուղղված են իրենց ջանքերը»[113]։ Զոհրապը մերկացնում էր իթթիհատի շովինիստական քաղաքականությունը, հայտարարելով, թե այն «կը բաղկանա անոնց (ոչ թուրք ժողովուրդների—Ա. Հ.) նկատմամբ անվստահություն և խստություն ցույց տալե»[114]։ Նա պաշտպանում էր ճնշված ազգերի շահերը։ Զոհրապը նշում էր, որ կառավարությունը բուլղարների ու ալբանացիների ապստամբությունը ճնշում է. և հետո խոսում նրանց երկրներում բարենորոգումներ անցկացնելու մասին։ Արդյոք չէ՞ր կարելի այդ բարենորոգումները նախապես անցկացնել, որ ապստամբություն տեղի չունենար[115]։

1911 թ. իր ելույթներից մեկում Զոհրապը հանգամանորեն խոսեց Թուրքիայում տիրող անձի և գույքի անապահովության մասին, հատկապես ոչ թուրք ժողովուրդներով բնակեցված շրջաններում և եզրակացրեց, որ դա պատահական երևույթ չէ, այլ իթթիհատի կողմից տարվող որոշակի ազգային քաղաքականություն, որի նպատակն է արտամղել տարրերից ոչ թուրք տարրերին և նրանց փոխարեն ուժեղացնել թուրքերի դիրքերը. «Ասիկա քաղաքականություն մըն է, ըստ իս սխալ քաղաքականություն մը... կա թուրք մտայնություն մը, որ իր բարձրացումը իրմե ավելի առաջադեմ եղող տարրերուն փշացումեն կակնկալե, անիկա իթթիհատի մեջն ալ կա, դուրսն ալ, անիկա կուրախանա ներքնապես, երբ այդ տարրերը որևէ աղետի մը կենթարկվին, տիրող մտայնությունն է ասա»[116]։

Շարունակելով իթթիհատի մեծապետական քաղաքականության մերկացումը, Զոհրապը ցույց էր տալիս, որ երկրում գոյություն ունեցող ազգային անհավասարությունն արտահայտվում է ամենուրեք,

---

112 Գ. Զոհրապ, *Հայ պատգամավորի մը հաշվետվությունը*, Կ. Պոլիս, 1910, էջ 27։

113 «*Ատենագրությունք...*», *1909*, էջ *336*։

114 Ա. Ալպոյաճյան, *Նշված աշխ.*, էջ *222*։

115 *Տե՛ս նույն տեղում*։

116 «*Ատենագրությունք...*», *1911*, էջ *445*։

նույնիսկ օսմանյան խորհրդարանում կամ պառլամենտում։ Քրիստոնյա տարրը կազմում է կայսրության աղգաբնակչության 1/3-ը կամ 1/4-ը, մինչդեռ նրա ներկայացուցիչները պառլամենտում կազմում են բոլոր պատգամավորների 1/7-ը։ Բնբէլով այդ աղաղակող փաստը, հրապարակախոսը եղրափակում էր, որ «Օսմանյան խորհուրդը ինքն առաջինը ըլլալու էր անկեղծ հավատարության մը օրինակ տալու ժողովրդին»[117]։

Ջոհրապը ամենագործուն մասնակցությունն ունեցավ հայկական բարենորոգումների նախագծերի մշակմանը։ Դեռ սուլթան Համիդի կառավարման տարիներին նա Կ. Պոլսի ռուսական դեսպանատան խորհրդականն էր։ 1908 թ. հեղաշրջումից հետո նրա կապերն այդ դեսպանատան հետ ավելի սերտացան։ 1912—1914 թթ. Ջոհրապը փաստական տվյալներով ու խորհուրդներով օգնում էր ռուսական դեսպանությանը, որը հայկական բարենորոգումների նախագծի մշակման նախաձեռնությունը վերցրել էր իր ձեռքը[118]։

Ջոհրապը հայկական հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի հետ։ Այսպես. 1912 թ. նոյեմբերի 26-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանը գրում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին, որ արևմըտահայության ներկայացուցիչներ Գ. Ջոհրապն ու Ո. Մարտիկյանը վճռակամնապես հայտարարեցին, թե «Հայ ժողովուրդը այժմ չի սեսնում այլ ելք, բացի Ռուսաստանին դիմելուց, որը միայն կարող է փրկել նրան սարսափելի կացությունից»։ Նրանք նշեցին, որ «Հայ ժողովուրդը իրականում կորցրել է իր հավատը թուրքական բարենորոգումների հանդեպ, անգամ եթե այն լինի եվրոպական վերահսկողության տակ»։ Նրանք գտնում են, որ «հայ ժողովուրդը կարող է փրկվել ավելի արմատական միջոցառումով, այն է՝ հայկական նահանգների ռու-

---

[117] Նույն տեղում, էջ 439։

[118] Ջբավարարվելով դրանով, 1913 թ. Ջոհրապը ֆրանսերեն լեզվով փաստաթից մի գիրք գրեց և ուղարկեց Փարիզ՝ Ա. Ջոպանյանին, որ հրապարակի ու ցրի, նպատակ ունենալով ծանոթացնել արևմտաեվրոպական մտավորականությանը հայկական հարցին և ստանալ նրա օժանդակությունը։ Որոշ նկատառումներով Ջոհրապը խնդրեց, որ այդ գիրքը հրատարակվի ոչ թե իր, այլ որևէ ֆրանսիացու անունով։ Ջոպանյանը կատարեց նրա ցանկությունը, և գիրքը լույս տեսավ նույն թվին՝ Մարսել Լևարտ, «Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ» տիտղոսաթերթով (Marcel Léart, La question armenienn â la lumiere des documents, Paris, 1913)։ Ա. Ջոպանյանը նշում էր, որ այդ գիրքը շատ արժեքավոր էր և նեղդրծեց Փարիզի ու եվրոպայի ընթերցողների վրա (տե՛ս «Անահիտ», 1930, № 3, էջ 3—4)։

սական օկուպացումով, ընդ որում ոչ թե ժամանակավոր, այլ մշտական օկուպացումով...»[119]:

Զոհրապին ծանոթ էր ցարիզմի ազգահալած քաղաքականությունը, սակայն նա կանխատեսում էր Ռուսաստանի պայծառ ապագան և հայկական հարցի լուծումը կապում դեմոկրատական Ռուսաստանի հետ: «Վախենալ ռուսական իշխանության ճնշումներից և նկատի ունենալով այդ ճնշումը, դերադասել Հայաստանի գերծ մնալը Ռուսաստանի ազդեցությունից, անհիմն է,—ասում է Զոհրապը,—ինչպես էլ լինի... մենք այնուհանդերձ՝ ռուսական քաղաքական իշխանության պայմաններում չենք զրկվի զարգացման հնարավորությունից: Բացի այդ, Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագայով պետություն, և այն ճնշումը, որի մասին այնքան շատ խոսում են, միշտ չի տիրապետի Ռուսաստանում»[120]:

Զոհրապը վճռականորեն մերժում էր մի ազգի տիրապետությունը մյուսի նկատմամբ և քարոզում ազգերի հավասարություն ու եղբայրություն: Նշելով, որ ազգամիջյան կռիվները հարատևում են դարերից ի վեր, որ ամենուրեք և միշտ զորեղը ձգտել է ստրկացնել տկարին, նա հայտարարում էր. «Մենք կը մարտնչինք լոկ մտայնության մը դեմ, որ կըսե՝ իրավունքը հզորագույնին»[121]:

Զոհրապը պայքարում էր հողային հարցը դյուղացիության օգտին լուծելու համար: Դեռ 1908 թ. հոկտեմբերի 17-ին նա Ազգային ժողովին ներկայացրեց մի նախագիծ, որը ընդունվելու դեպքում պետք է ներկայացվեր իթթիհատի կառավարությանը: Նախագծով ազնիվ ու արդար, հասարակության մեջ վստահություն ու հեղինակություն վայելող, համիդյան ռեժիմին չծառայած մարդկանցից պետք էր ստեղծել հանձնաժողովներ և ուղարկել գավառները, սուլթանի պաշտոնյաներին պաշտոնաղրկելու, ձերբակալելու և դատելու հանձնարարությամբ: Հանձնաժողովները պետք է վերադարձնեին տերերին նրանցից բռնապրաված հողերը, օգնեին մուհաջիրներին վերադառնալու իրենց հայրենիքը, նյութապես օժանդակեին սովից տառապող գավառներին, խիստ պատժեին «այն ազդեցիկ պետերը, անձերն ու աղանները, որոնք հայերու վրա տուրք կը դնեն և զիրենք տարապարհակ կաշխատեցնեն»[122]:

---

[119] «Геноцид армян...», стр. 214, *Е. К. Саркисян*, Политика османского правительства..., стр. 282.

[120] Գրիգոր Զոհրապ, Նովելներ. լիակատար ժողովածու, Երևան, 1954, էջ VI:

[121] Միհաս Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Երևան, 1957, էջ 345:

[122] «Ատենագրություններ...», 1909, էջ 49:

Դրանք, իհարկե, արմատական-դեմոկրատական միջոցառումներ էին։

1909 թ. մարտի 1-ին Զոհրապը դիմեց Թուրքական կառավարությանը, որպեսզի մայրաքաղաք բերեն ու արդարության «բուռնդակ խստությամբ» պատժեն այնպիսի հանրահայտ հարստահարողների ու ոճրագործների, ինչպիսիք են Քյոռ Հյուսեին փաշան, Շաքիր աղան, Սեիդ Ալին և այլոց, որոնք տասնամյակներ շարունակ պատուհաս են եղել ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական բնակչության համար[123]։

Հետևողականորեն պայքարելով աշխատավոր դյուղացիության շահերի համար, Զոհրապը 1911 թ. նոյեմբերի 11-ին հիշատակագիր ներկայացրեց երիտթուրքական վարչապետին, ուր նշված էր. «Հակառակ անոր, որ սահմանադրության հռչակումեն ի վեր չորս տարի անցած է, Անատոլուի հայաբնակ նահանգներու կացության մեջ բարելավման ոչ մեկ նշան երևցած է, ընդհակառակը՝ վերջին երկու տարվա ընթացքին այդ կացությունը անհանդուրժելի աստիճանի հասած է։ Հիշյալ նահանգներու մեջ ինչքի, կյանքի ու պատվի ապահովություն չէ մնացած, ու ջարդի սպառնալիքները պատճառ եղած են, որ ժողովուրդը ահ ու սարսափի մեջ ապրի... կը հասկցվի, որ հայաբնակ գավառները դարձյալ արյան մեջ պիտի մնան, ինչպես էր առաջն մը»[124]։ Ապա Զոհրապը գրում էր, որ ինքը բազմիցս ներկայացրել է գավառահայության դժընդակ կացությունը համապատասխան մինիստրություններին, բայց, «դժբախտաբար, տեսա, որ իմ այս ձեռնարկներս որևէ արդյունք չըտվին»[125]։ Նա համարձակորեն հայտարարում էր, որ իթթիհատական կառավարությունն իր գործնական քայլերով ձգտում է տնտեսապես քայքայել հայերին, սուլթանի նման ցանկանում է դատարկել Անատոլիայի նահանգները հայերից և պահանջում էր վերջ դնել այդ քաղաքականությանը[126]։

Զոհրապի համառ պահանջով երիտթուրքական վարչապետը ստեղծեց հողային հարցը վարչական եղանակով լուծելու իրավունքով օժտված հանձնաժողով և ներկայացրեց այն օսմանյան պառլամենտի հաստատմանը։ Բայց այստեղ վճռականորեն առարկեցին այդ միջոցառման դեմ և մերժեցին[127]։ Այլ բան չէր էլ կարելի սպասել, որովհետև

---

123 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3768, մարտի 2։

124 Գրիգոր Զոհրապ, Մեր կյանքին, քրոնիկներ, նշմարներ, հրապարակական էջեր, ուղևորի նոթեր, Գահիրե, 1945, էջ 179։

125 Նույն տեղում, էջ 180։

126 Տե՛ս նույն տեղում, էջ 182—189։

127 Տե՛ս «Ատենագրություններ...», 1911, էջ 445։

թիֆիհատաական պառլամենտը, ինչպես արդեն ասվեց, բաղկացած էր գերազանցապես մահմեդական ռեակցիոն հոգևորականության և աղաների ներկայացուցիչներից։

1911 թ. նոյեմբերի 25-ին Ազգային ժողովում անդրադառնալով հողային հարցին, Զոհրապն ասում էր. «Մի կարծեք, որ օսմանյան հայ երեսփոխանները որևէ ջանք չըրին հողային խնդրո համար... փափակեցանք, որ... օրենք մը հրատարակվի... կառավարությունը ... օրինագիծը պատրաստեց և խորհրդարան բերավ, բայց հոն ամենաբուռն ընդդիմության առարկա դարձավ»[128]։

Զոհրապը գիտակցում էր հողային հարցի ամբողջ բարդությունը, գիտակցում էր օսմանյան պառլամենտում հայ պատգամավորի անհանգամանձելի վիճակը, գիտակցում էր նաև արևմտահայ գյուղացիության դժնդակ կացությունը։ Ուստի գտնում էր, որ պետք է վարել նուրբ քաղաքականություն և հեռու պահել ժողովրդին նորանոր աղետներից։ Ազգային ժողովի վերոհիշյալ նիստում նա ասում էր. «Թերևս ըսողներ գտնվին, թե... դուք ձեր ցավերը պարզեցեք բեմեն, եթե ոչ դրական օգուտ մը ձեռք բերելու, գեթ պատմության մեջ անցնելու համար։ Ես անոնց կը պատասխանեմ, թե օսմանյան խորհրդարանին մեջ հայ երեսփոխանը վայրկյան մը իսկ մոռանալու չէ հայ ազգին մասնավոր դիրքը և իր խոսքերուն առաջ բերելիք արդյունքն ալ լավ կշռելու է բնության բանալե առաջ... Բավկոֆ վատահ է, թե անդին Պուլկարիա մը կա, Պուշոն կը մտածե, թե իր պաշտպանած դատին կը հետևի Եվրոպա, Հայաստանի եռև կը տեսնե... ոչ ոք, ընդհակառակը կը տեսնե հոն քյուրտեր ու չի կրնար մոռանալ կոտորածը, որ կիլիկիան արյունլվա ըրավ... հայերն են մենակ, որ այս երկրին մեջ առաջին ցուցումեն կոտորածի վտանգին կը ենթարկվին։ Քաղաքական սխալե ավելի ծանր բան մը, ոհիր մը պիտի ըլլա հայոց դժնդակ ու վտանգավոր կացություն մը ստեղծել մեր ձեռքովը ու խոսքերովը»[129]։

Զոհրապը գտնում է, որ պայքարի եղանակը ընտրելիս, պետք է ելնել արևմտահայության կացությունից, իսկ այդ կացությունը պահանջում է, որ ինչպես ազգային, այնպես էլ հողային հարցերը անհրաժեշտ է լուծել կառավարության հետ բանակցություններ վարելու, նրան սպառնալու կամ նրա վրա ճնշում գործադրելու ճանապարհով։ «Մենք այնպիսի ժամանակի մը մեջ կապրինք,—ասում է նա,—որ ար-

---

[128] Նույն տեղում, էջ 443։

[129] Նույն տեղում։

գարուիյուն ձևոք բերելը դյուրին չէ»[130]։ *Անհրաժեշտ է «սպառնալիքներ ընել դահլիճին, խորհրդարանի առջև հարցապնդում ուղղել իրենն, սպառնալիք ընել, բայց չդործադրել»*[131]։

Այդպիսով, Զոհրապը ձգտում էր լուծել հողային հարցը ֆեոդալական հարաբերությունները վերացնելու ճանապարհով։ Դա, անշուշտ, ագրարային հարցի լուծման ամենադեմոկրատական եղանակներից մեկն էր։ Սակայն այդ բանը նա ուզում էր կատարել իշխիհատական կառավարության միջոցով, նրա վրա սպառնալիքներ կամ ճնշում գործադրելու մեթոդով։ Հարցի նման լուծումը բնորոշվում էր դաժան անհրաժեշտությունից և չի կարող որևէ մեկին հիմք տալ վերագրելու անձնուրաց հասարակական գործիչին լիբերալ հայացքներ։

Պետք է նշել, որ Զոհրապը ինչպես ազգային, այնպես էլ հողային հարցում դուրս էր գալիս ազգային շրջանակներից և մտահոգվում բոլոր ճնշված ժողովուրդների մասին։ Նա հայտարարում էր, որ հողային հարցը միայն հայկական խնդիր չէ, «Հողային հարց օսմանյան պուլկարները, օսմանյան հրեաներն ալ ունին»[132], *«օսմանյան մյուս բոլոր ազգերը և ցեղեր մեննե ավելի հանդիսատ մը տեսած չունին։ Ալպանիոյ մեջ, Մակեդոնիոյ մեջ վիճակը ծանրակշիռ է»*[133]։

---

130 *Նույն տեղում, էջ 444։*

131 *Նույն տեղում, էջ 443։ Ընտրելով ճնշման ու սպառնալիքի գործադրման եղանակը, Զոհրապը իր կուռ սրամտաբանությամբ մերկացնում էր երիտթուրքական պարագլուխների հակաժողովրդական, հատկապես հակահայկական քաղաքականությունը։ Այսպես, Իզմիրի նալագ Տերե գյուղի բնակիչները բողոքում են իրենց հողերը բռնագրավողների դեմ և արդարության հասնելու համար ներկայացուցիչ ուղարկում մայրաքաղաք։ Սակայն պետական խորհրդում պարզ հարցերը դիտավորյալ կնճռոտում են, որ օգնեն հայերի հողերը զավթողներին։ Խմանալով այդ մասին, 1913 թ. մարտի 4-ին Զոհրապը գրեց ներքին գործերի մինիստրին. «Պետական խորհուրդը քմածին կերպով մը գյուղացիներուն իրավունքը ոտնակոխ ընելու միջոց մը ընտրած է։ Պետ. խորհրդի այս որոշումը շատ ցայտուն կերպով կուգա ապացուցանել, թե հինեն ի վեր հետապնդված քաղաքականություն մըն է հայոց սեփական հողերը իրենց չհանձնել և հաստատել, թե միշտ իսլամին պաշտպանություն ընել կը ձգտի կառավարությունը...*

Այդ մտայնությամբ առաջնորդված իշխանության մը վախճանը բնավ կրնար լավ չի կրնար ըլլալ... Եթե կառավարության կողմն հետապնդված քաղաքականության մասին իմ ունեցած համոզմանս մեջ—տա աստված—կը սխալիմ և եթե հայոց համար արդարություն ձևոք բերելու պտիկ կարելիություն մը կա տակավին, կը խնդրեմ, որ իրրև լավագույն սկզբնավորություն մը՝ հաճիք այդ կարելին գործնականապես ցույց տալ սա խնդռ գյուղացիներուն գործին մեջ» (Ս. Ալպոյաճյան, *նշված աշխ., էջ 200*)։

132 *«Ատենագրություններ...», 1911, էջ 442։*

133 *Նույն տեղում, էջ 445։*

Զոհրապը խստորեն քննադատում էր կապիտալիստական բարքերը, բուրժուական այլանդակ հարաբերությունները և պաշտպանում այդ բարքերից տուժող, այդ հարաբերություններին զոհ գնացող հասարակ մարդկանց շահերը[134]: Հարստության կուտակումն առանձին անհատների ձեռքերում նա համարում էր հափշտակության ու կողոպուտի արդյունք և ցույց էր տալիս, որ դրամատերերը տարվելով այդ հարստությամբ, դառնում են մի տեսակ հիվանդներ, ոտնատակ են տալիս մարդկային ու ազգային ամեն մի արժեք, ամեն մի սրբություն: 1910 թ. սեպտեմբերի 12-ին Կ. Պոլսում կարդացած դասախոսության մեջ Զոհրապն ասում էր, որ դրամատիրոջ «դատողության առջև դրամը մեծ ծանրաչափն է մարդկային առաքինություններուն, ոչ Րաֆֆին և ոչ Դուրյանը, ոչ Պարոնյանը և ոչ Նալբանդյանը արժեք ունին իր աչքին առջև... Ձեմ մեղադրեր, հանցավոր չեմ դառներ զիրենք այսպես խորհելուն համար. իրավունք ո՞ւնիմ կույր մը, կաղ մը մեղադրելու, դըժբախտություն մըն է ասիկա և ոչ ուրիշ բան»[135]:

Զոհրապը ցույց էր տալիս, որ բուրժուական հարաբերությունների զարգացման հետևանքով ինչպես Եվրոպայի երկրներում, այնպես էլ Թուրքիայում առաջացել է գործավորների, այսինքն բանվորների դասակարգը, որի ազատագրումը արդի հասարակության հարցերից մեկն է: Նա իրավացիորեն քննադատում էր այդ հարցն անտեսողներին, համարելով նրանց իրականությունից հեռու կանգնած մարդիկ: «Անտեղյակները միայն կրնան ըսել,—գրում էր Զոհրապը,—թե գործավորական հարց չկա Թուրքիոյ մեջ: Թեև «մեծ ճարտարվեստը» (արդյունաբերությունը—Ա. Հ.) գոյություն չունի այս երկրին մեջ, բայց այսուհանդերձ գործավոր դասակարգ մը կա, և երկու միլիոնի մոտ կը հաշվվեն զայն՝ հողային գործավորները միասին առնելով. երկու միլիոն գործավոր արհամարհելի դասակա՞րգ մըն է միթե»[136]:

Զոհրապը նշում էր, որ դրամագլխի (կապիտալի) ու աշխատության (աշխատանքի) միջև տեղի է ունենում ահեղ պայքար, այն ատիճան ահեղ, որ նրանք պատրաստ են «իրարու արյուն խմել»: Նա չէր ասում, թե ինչով կավարտվի այդ պայքարը, սակայն բերում էր Եվրոպայում այդ առթիվ տարածված կարծիքներից երկուսը՝ կամ այդ պայքարը կհանգեցնի կողմերին «իրավահոհության մը», կամ դետին

---

134 Այդ մասին հանգամանորեն տե՛ս Մ. Հյուսյան, նշված աշխ.:

135 Գ. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 10:

136 Նույն տեղում, էջ 25—26, տե՛ս նաև Մ. Հյուսյան, նշված աշխ., էջ 15:

կտապալի դրամագլխին, բացելով նոր հորիզոններ քաղաքակրթության առջև և դնելով հարստության բաշխման գործը արդար հիմքերի վրա[137]։

Հրապարակախոսը այնուհետև նշում էր, որ այդ երկու դասակարգը հակառակ դիրքերում են կանգնած նաև պատերազմի և խաղաղության հարցերում։ Նրանք դրամատերերը պայքարում են հարստանալու, «անհատ շարաշահությունների համար», ապա գործավորները՝ պատերազմը կանխելու համար։ Այդ պայքարում սոցիալիստները կամ, ինչպես ինքն էր ասում, ընկերվարները գործում են բանվորների օգտին, գործում են խաղաղությունը պաշտպանելու օգտին։ Նա մեծ նշանակություն էր տալիս սոցիալիստների պայքարին, դրելով. «Այսօր ամենեն կույրերն անգամ պետք է ճանչնան ընկերվարականներու մատուցած մեծ ծառայությունը խաղաղության դատին, որ քաղաքակրթության դատն է. բանակի դեմ բանակ՝ մին՝ արյուն թափելու և մյուսը թող չի տալու համար»[138]։

Զոհրապը գտնում էր, որ Եվրոպայի օրինակով Թուրքիայում նույնպես պետք է ստեղծել ընկերվարական կազմակերպություններ և նշում էր, որ հայերը, «իբրև ամենեն զարգացյալ», պետք է ակտիվ մասնակցություն ունենան այդ գործին։ Նա իրեն համարում էր ընկերվարական, այն էլ «համոզված ընկերվարական»[139], ելնելով այն բանից, որ ընկերվարները պաշտպանում են աշխատավորների շահերը, խաղաղության շահերը, որ նրանք թույլ չեն տալիս հզորին յուրացնելու տկարի վաստակը, ուզում են հասարակության բարիքները հավասարապես բաշխել արտադրողների միջև։ «Ընկերվարությունը,— գրում էր նա,—ուրիշ բան չէ եթե ոչ արտադրության միջոցներուն և հարստություններուն արդար բաշխումը ընկերության չէջ»[140]։

Զոհրապը գիտեր Ռուսոյին, բարձր էր գնահատում նրան. «Ռուսոն այն մտածողն է, որ ամենեն խորունկ ներգործությունը ըրած է վրաս»[141]։ Նա Մարքսի «Կապիտալը» համարում էր «հոյակապ գործ» և գտնում էր, որ այն դրել է «այսօրվան տնտեսագիտության հիմերը»[142]։

---

137 Տե՛ս Գ. Զոհրապ, *Էջեր ուղևորի մը օրագրեն*, Իզմիր, 1922, էջ 4։

138 Նույն տեղում, էջ 21, տե՛ս նաև Մ. Հյուսյան, նշված աշխ., էջ 336։

139 Գ. Զոհրապ, *Հայ պատգամավորի մը հաշվետվությունը*, էջ 23։

140 Նույն տեղում, էջ 24։

141 Գ. Զոհրապ, *Էջեր ուղևորի մը օրագրեն*, էջ 37։

142 Մ. Հյուսյան, նշված աշխ., էջ 341 (մենք չգիտենք Զոհրապը «Կապիտալի» ֆրանսերեն թարգմանությա՞ն էր ծանոթ, թե թուրքերեն։ Հայտնի է, որ 1908 թ. հեղաշրջումից հետո «Կապիտալը» թուրքերեն նույնպես թարգմանվեց)։

Բայց Թուրքիայի հետամնաց պայմանների պատճառով Զոհրապը չյուրացրեց, առավել ևս՝ չպրոպագանդեց Մարքսի գիտական կոմունիզմը։

Զոհրապը պայքարում էր արևմտահայության ներքին կյանքի, մասնավորապես Կ. Պոլսի Ազգային ժողովի դեմոկրատացման համար։ 1911 թ. հունիսի 13-ին (26) նա մի նամակ հղեց Ազգային ժողովին և պահանջեց վերանայել ազգային սահմանադրությունը, մտցնելով նրա մեջ դեմոկրատական փոփոխություններ։ Նա գտնում էր, որ պետք է փոխել Ազգային ժողովի պատգամավորների ընտրության սկզբունքները և հարմարեցնել այն ազգի մեծամասնության շահերին։ Ցույց էր տալիս, որ մոտ 100.000 հայ բնակչություն ունեցող Պոլիսը ընտրում է 80 պատգամավոր, իսկ շուրջ 1.300.000 գավառահայությունը՝ 40 պատգամավոր։ Մինչդեռ արդարությունը պահանջում է, որ Ազգային ժողովի 120 պատգամավորներից մայրաքաղաքի հայությունն ընտրի 6-ին, իսկ գավառահայությունը՝ 114-ին։ Եթե իրերի դրությունը մնա անփոփոխ, ապա «գավառները անվիճելի կերպով իրավունք ունին բողոքելու այս անարդարության դեմ». մայրաքաղաքի մի բուռ փոքրամասնություն «կիշխի այսօր մեր ազգին ճակատագրի վրա։ Ազգը կառավարելու իրավունքը՝ ազգեն միայն կրնա բխիլ։ Երկնային շնորհի մը droit divin-ի (աստվածային իրավունք—Ա. Հ.) վրա հիմնված աշխարհային իշխանություններու առեն անցած է»[143]։ Նա պահանջեց ստեղծել հատուկ հանձնաժողով և հանձնարարել նրան, որ կազմի ու Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնի ազգային սահմանադրության նոր նախագիծ։

Զոհրապը պայքարում էր արևմտահայության կրթական գործի բարելավման ու զարգացման համար։ 1913 թ. հոկտեմբերի 4-ին Ազգային ժողովին նա մի նախագիծ ներկայացրեց, որի մեջ ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ Ազգային ժողովը վերջին 5 տարվա ընթացքում գեթ մի անգամ չի անդրադարձել կրթական գործին, պետության կրթական բյուջեից հայկական դպրոցների համար բաժին չի պահանջել, ինչպես նաև չի օգտագործել այն հնարավորությունը, որով թույլ է տրվում հայ պատանիներ ու երիտասարդներ ուղարկել Եվրոպա՝ ուսումնառության համար։ Այդ անհոգության ու անտարբերության պատճառով ազգային դպրոցների վիճակը վատթարացել է, ուսման որակն ընկել է, գիտական կադրերի թվաքանակը նվա-

---

143 «Ատենագրություններ...», 1911, էջ 252։

ղել է, օտար լեզու իմացողներ քիչ կան։ Զոհրապը գտնում էր, որ այդ դրությունից դուրս գալու համար անհրաժեշտ է բարելավել ուսուցիչների վիճակը, բարձրացնել նրանց մակարդակը, խորացնել աշակերտների գիտելիքները, ուղարկել նրանց մի մասին սովորելու Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատություններում, գործարաններում, ագարակային տնտեսություններում, հրապարակել կրթական մի հանդես, որի մեջ տեղեկություններ տրվեն զարգացած երկրների արդյունաբերական, երկրագործական ու մշակութային նվաճումների մասին։ Այդ բոլորը կազմակերպելու համար պետք է պատրիարքարանում ստեղծել հատուկ կրթական դիվան, իսկ ծախսերը հոգալու համար բնակչության վրա դնել կրթական տուրք[144]։ Անշուշտ, Զոհրապի առաջարկած միջոցառումները զգալիորեն կարող էին նպաստել արևմտահայության հոգևոր կյանքի առաջընթացին։

Դեռ կենդանության օրոք անվանի գրողի ու հրապարակախոսի հակառակորդները ասում էին, թե իբր նա դաշնակցական է, կամ «Ս.Հ.Բ.Մ.» կազմակերպության անդամ, բայց Զոհրապը ոչ մեկն էր, ոչ էլ մյուսը։ Նա հայտարարում էր. «Ազգը այսօր ունի երկու մեծ կուսակցություններ, որոնց մեջ ո՛չ մեկուն պատկանելու պատիվ ունիմ, որովհետև իմ հոգեբանությունը տարբեր է անոնցմե»[145]։ Մի այլ առիթով նշում էր. «Ես... կը պատկանիմ Պոլսո հայոց պուրժուազի դասակարգին՝ քիչ մը դրական դասակարգին»[146]։ Միանգամայն հասկանալի էր, որ նա նկատի ուներ այդ բառի ոչ թե երկրորդ նշանակությունը (կապիտալիստներ), այլ առաջին իմաստը (քաղաքացիներ)։

1908 թ. հուլիսին վերադառնալով Պոլիս, Զոհրապը փորձեց ստեղծել իր ակումբը կամ կուսակցությունը՝ «Ազատական կազմակերպությունը»[147]։ Սակայն այդ նրան չհաջողվեց. Պոլսահայ մտավորականության քիչ թե շատ աղդեցիկ մասը արդեն ընդգրկված էր հայ բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների մեջ, որոնք այդ օրերին ունեին լուրջ աղդեցություն։ Ապա Զոհրապը ցանկացավ Կ. Պոլսում հրապարակել «Նոր օր» վերնագրով թերթ։ Բայց նյութական մի-

144 Տե՛ս «Ատենագրություն...», 1913, էջ 226։

145 «Ատենագրություն...», 1910, էջ 366։

146 Նույն տեղում, էջ 49—50։

147 Տե՛ս Գ. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 14—15։

ջոցների ու գաղափարապես իրեն հետևող աշխատակիցների բացակայության պատճառով այդ էլ չհաջողվեց[148]։

Այնուհետև, Զոհրապը արևմտահայության ցրված ուժերը համախմբելու և նրա մարտական կարողությունները բարձրացնելու նպատակով հասարակության տարբեր խավերի ու կուսակցությունների ներկայացուցիչներից փորձեց ստեղծել, իր խոսքով ասած, բլոկ, անխախտ ըողնելով յուրաքանչյուրի համոզմունքներն ու սկզբունքները։ Նա նշում էր. «Խնդիրը դանոնք իրարու հետ պայքարեցնելուն մեջ չէ, այլ հաշտեցնելուն»[149]։ Իր նպատակի իրագործման համար 1910 թ. մարտի 26-ին նա բանաձև ներկայացրեց Ազգային ժողովին, որի մեջ ասվում էր, թե ժողովը «կը հրավիրի բոլոր ազգայինները և կուսակցությունները՝ փոխանակ պայքարելու իրարու դեմ՝ եղբայրաբար միանալ ազգային բազմապահանջ ցավերուն առջև»[150]։ Սակայն Զոհրապի այդ ցանկությունը, ինչպես և պետք էր սպասել, նույնպես անհաջողության մատնվեց։ 1910 թ. նոյեմբերի 10-ին Ազգային ժողովում նա հայտարարեց, որ իր ջանքերն այդ ուղղությամբ «որևէ արդյունքի չհանգեցան»[151]։

Զոհրապն անվանի գրող էր, հրապարակախոս, իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ, արևմտահայ Ազգային ժողովի երեսփոխան և օսմանյան երեք պառլամենտների պատգամավոր։ Նա իր հսկայական եռանդը, իր ամբողջ կյանքը ի սպաս դրեց արևմտահայության փրկության ու առաջադիմության գործին։ Ա. Չոպանյանին ուղարկած նամակներից մեկում, նկատի ունենալով հայկական հարցը, նա գրում էր. «Մեր դժբախտ դատին համար կաշխատիմ դիշեր ու ցորեկ»[152]։

Իր դեղարվեստական ու հրապարակախոսական ստեղծագործություններում Զոհրապը խարազանում էր իթթիհատական իշխանություններին ու արևմտահայ մեծահարուստներին և դրա համար վաստակել էր նրանց թշնամությունը։ Նա մաքառում էր խավարի ու հետամնա-

---

148 Նա իր բարեկամներին ուղարկած նամակներում երբեմն գանգատվում էր մենակության։ 1908 թ. օգոստոսի 5-ին գրում էր Ա. Չոպանյանին. «Կ. Պոլսում «մենակ, բոլորովին մենակ եմ...» (տե՛ս «Արևմտահայ գրողների նամականի», էջ 40 և 407)։

149 «Ատենագրություններ...», 1910, էջ 228։

150 Նույն տեղում։

151 Նույն տեղում, 1911, էջ 33։

152 «Արևմտահայ գրողների նամականի», էջ 49։

ցության, բռնության ու հալածանքի դեմ, ձգտում էր կործանել արգելակող ու խոչընդոտող հինը և նորի համար բացել լայն հորիզոններ։ Այս իմաստով հրապարակախոսն իր մասին ասում էր, որ ինքը «ապըստամբության սերնդին կը վերաբերի»[153]։

Զոհրապը սիրում էր իր ժողովրդին, արևմտահայ աշխատավոր չարքաշ զանգվածներին։ 1908 թ. օսմանյան պառլամենտի ընտրությունների օրերին, երբ նրա թեկնածությունը իբրև պատգամավոր առաջ քաշեցին Իզմիրում, Սամաթիայում, Թուփգաբուում և Բերայում, Զոհրապը նախապատվությունը տվեց Սամաթիային, ասելով. «Ես ձեր համեստ ու ավերակ թաղը կը պատվեմ, քան թե ուրիշ շեն արվարձանները մայրաքաղաքիս. անիկա կրակներու բոցեն, ծուխեն և գնդակներեն սևացած, ծակծկված, կատր-կատր եղած դրոշակն է, որուն առջև կը խոնարհվիմ և... երջանիկ կը համարիմ ինքզինքս առաջին ողջույնս ուղղելով իրեն»[154]։ Նա ուզում էր տեսնել իր ժողովրդին ազատված օտարի լծից, դալձած իր հայրենիքի աւերն ու տնօրինը։ Ուստի կոչ էր անում հայ ժողովրդին, հայ երիտասարդությանը՝ «Մինչև վերջին շունչերնիդ ազատասիրտ ու ազատամիտ մնացեք»[155]։

Զոհրապը արևմտահայության մեջ մեծ հեղինակություն էր ձեռք բերել, դարձել էր կենտրոնական դեմք։ Նա ամբողջովին մտահոգված էր ժողովրդի ճակատագրով, պատասխանատվություն էր զգում նրա առաջ։ Պատերազմի նախօրյակին, երբ Թուրքիայում արդեն սկսվել էր հայ մտավորականության ձերբակալումը, Զոհրապի բարեկամներից մեկը՝ Պ. Հակոբյանը, խորհուրդ տվեց նրան հեռանալ Պոլսից, մեկնել արտասահման, բայց նա չհամաձայնվեց, ասելով՝ «Որու թողում ան անտեր ու անգլուխ ժողովուրդը։ Չէ՛, փախչիլ չեմ կրնար, պետք է, պարտքս է մինչև վերջ պատնեշի վրա կենալ»[156]։ Եվ նա մնաց։ Իսկ երբ իթթիհատը 1915 թ. ապրիլին սկսեց գործադրել իր հայաբնաջնջման հրեշավոր պլանը, մայիսի 19-ին Զոհրապը մոտավ Թալեաթի մոտ և հայտարարեց՝ հաշիվ կտաք ձեր ոճրագործության համար։ Թալեաթը այն հեղինակին, թե ով է պահանջելու իրենից հաշիվ, նա պատասխանեց. «Ես, խորհրդարանի մեջ իբրև հայ մեպուս, ձենե հաշիվ պիտի

---

153 Ստեփան Շահապազ, *Գրիգոր Զոհրապ*, Պեյրութ, 1959, էջ 211։

154 Ա. Ալպոյաճյան, *նշված աշխ.*, էջ 196։

155 Գ. Զոհրապ, *Հայ պատգամավորի մը հաշվետվությունը*, էջ 28։

156 Գ. Զոհրապ, *Էջեր ուղևորի մը օրագրեն*, էջ ԺԲ։

պահանջում»[157]: Հետևյալ օրը երիտթուրքական իշխանությունները Զոհրապին վերցրին և տանելով Անատոլիայի խորքերը, գաղանաբար հոշոտեցին:

Զոհրապը արևմտահայ դեմոկրատիայի ներկայացուցիչն էր, արևմըտահայ աշխատավորության շահերի արտահայտիչն ու պաշտպանը: Նրա հայացքները որոշակիորեն տարբերվում էին հայ բուրժուազիայի հայացքներից: Եթե բուրժուազիայի ներկայացուցիչները ազգային հարցի լուծումը տեսնում էին հայկական ինքնավարության ստեղծման մեջ, Զոհրապը այն տեսնում էր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու մեջ, կապելով, իհարկե, նրա ճակատագիրը Ռուսաստանի դեմոկրատական վերակառուցումների հետ:

Դաշնակցականներն ու հնչակյանները համագործակցում էին իթթիհատի և իթիլաֆի հետ, ենթադրելով, որ այդ կուսակցությունների միջոցով կարող են իրագործել իրենց քաղաքական ծրագիրը: Զոհրապը ոչ միայն հեռու մնաց այդ կուսակցություններից, այլև քննադատում էր նրանց անխոհեմ ու սխալ քաղաքականությունը: Եթե դաշնակցականները երիտթուրքերի հետ համագործակցությունը շարունակելու համար աշխատում էին լռել Ադանայի կոտորածների մասին, Զոհրապը հետևողականորեն անդրադառնում էր այդ հարցին և պահանջում պատասխանատվության կանչել հանցագործներին:

Ի տարբերություն հայ բուրժուական շրջանների ու կուսակցությունների ներկայացուցիչների, որոնք խնդիր էին դնում ետ վերադարձնել հայերի բռնագրաված հողերը, Զոհրապը պահանջում էր դրա հետ մեկտեղ աղատել հայ գյուղացիներին աղայական-բեգական կախումից, իսկ այդպիսի պահանջների իրագործումը հնարավոր էր միայն ֆեոդալական հողատիրության արտամղման կամ վերացման դեպքում: Եթե նշված ներկայացուցիչները հանդես էին գալիս համարյա բացառապես հայ բնակչության դրության բարելավման պահանջներով, Զոհրապը հայերի հետ միասին առաջ էր քաշում նաև թուրքական տիրապետության տակ ճնշվող մյուս ժողովուրդների կացության բարելավման հարցը:

Ի տարբերություն հայ բուրժուական ներկայացուցիչների, որոնք անտեսում էին Թուրքիայում բանվորական հարցը, Զոհրապը արձանագրում էր նրա առկայությունը և պահանջում լուծել այն: Եթե քաղա-

---

157 Ա. Ալպոյաճյան, նշված աշխ., էջ 245:

քական կուսակցությունները, մասնավորապես դաշնակցականները պայքարում էին ազգի ներքին կյանքում իրենց դիրքերի ամրապնդման համար, Զոհրապը պայքարում էր դեմոկրատական զանգվածների իրավունքների ընդլայնման համար։

Այդ բոլորի հետ միասին չի կարելի, սակայն, անտեսել, որ Զոհրապը որոշ հարցերի վերաբերյալ ուներ հակասական ու սխալ հայացք։ Այսպես, հիմնականում ձիշտ քննադատելով իթթիհատական կառավարության շովինիստական ու հակաժողովրդական քաղաքականությունը, նա սխալաբար կարծում էր, թե ցանկության դեպքում կառավարությունը կարող է բարելավել արևմտահայության վիճակը և երբեմն նույնիսկ դրական էր արտահայտվում նրա մասին։ Կարեկցելով պաշտոնյաների վարքագիծը պետության ընդհանուր քաղաքականությունից, Զոհրապը ենթադրում էր, որ վատ նահանգապետները կարող են դժնդակ դարձնել ժողովրդի կացությունը, իսկ լավ նահանգապետները բարելավել այն։ Ուստի պահանջում էր, որ հայկական վիլայեթներում նշանակվեն լավ կուսակալներ[158]։ Արհավիրքի նախօրյակին Զոհրապը իրավամբ ձգտում էր համախմբել արևմտահայության ուժերը, բարձրացնել նրա դիմադրողականությունը, բայց կարծում էր, թե այդ նպատակին կարելի էր հասնել՝ պահպանելով հասարակական տարբեր խմբավորումների սկզբունքներն ու համոզմունքները։

Այդ թերություններն աննշան են Զոհրապի այն մեծ գործունեության առաջ, որ նա ծավալել էր իթթիհատական Թուրքիայում արևմտահայության պաշտպանության ու փրկության համար։ Երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայ իրականության մեջ Զոհրապը չունեցավ իր հավասարը։ Սակայն դրականության ու կուլտուրայի որոշ գործիչներ ևս արտահայտում ու պաշտպանում էին դեմոկրատիայի շահերը։

* * *

Արևմտահայ բուրժուազիան ու դեմոկրատիան ազատագրական պայքարում ունենալով իրենց տարբեր շահերն ու խնդիրները, որոշ հարցերում, սակայն, միավորվում էին։ Նրանք միավորվում էին, օրինակ, ազգի գոյությունը պահպանելու, ազգային հալածանքները և ֆեոդալական հարաբերությունները վերացնելու գործում։ Այսպես. 1911 թ.

---

158 Տե՛ս Գ. Զոհրապ, Հայ պատգամավորի մը հաշվետվությունը, էջ 18—21։ Շուտով համոզվեց, որ անհնարին է գտնել լավ կուսակալներ։

նոյեմբերի 2-ին օսմանյան պառլամենտի հայ տարբեր կուսակցությունների ու խմբավորումների ներկայացուցիչներ Համբարձում Պոյաճյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Վահան Փափազյանը, Գրիգոր Զոհրապը, Հակոբ Պոյաճյանը, Պետրոս Հալաճյանը, Վարդգես Սերբենկյուլյանը, Կարո Փաստուրմաճյանը, Հարություն Պոշկեզենյանը ու Ն. Տաղավարյանը կազմեցին հիշատակագիր և ներկայացրին երիտթուրքական մեծ եպարքոսին: Հիշատակագրում պահանջում էին բնակչության անձն ու գույքը պաշտպանելու համար նշանակել պարտաճանաչ կուսակալներ և ավելացնել ոստիկանների ու զինվորների թիվը հատկապես Խարբերդի ու Բիթլիսի վիլայեթներում, պատժել եռսահմանադրական շրջանի ոճրագործներին, պաշտոնազրկել մութեսալիբներին ու ցեղապետերին կամ տեղափոխել նրանց այլ շրջաններ, ձերբակալել ավազակներին ու պարգևատրել նրանց բռնողներին, պատասխանատվության ենթարկել այն պաշտոնյաներին, որոնք չեն կատարում կառավարության որոշումները հանցագործներին ձերբակալելու մասին, ազատել գյուղացիներին խաֆիրության ու այլ ֆեոդալական տուրքերից և «պատժել բոլոր անոնք, որ կը շարունակեն այդ տուրքերը դանձել», գործադրել դատարանի որոշումները հայերից բռնագրավված հողերի վերաբերյալ, և կիրառել կառավարության 1911 թ. հուլիսի 25-ի հողային որոշումը[159]:

Արևմտահայ բուրժուազիան ու դեմոկրատիան միասնաբար էին հանդես գալիս նաև ազգահավաքման գործում: Նրանք փորձեցին կազմակերպել տարագիրների ներգաղթը Արևմտյան Հայաստան: Դեռ 1908 թ. օգոստոսի 1-ին Բիթլիսում համիդյան կոտորածներից փախած հայերին նրանք հավաքեցին ժողովի և քննեցին հայրենիք վերադառնալու հարցը: Կազմվեց հատուկ հանձնաժողով, որի մեջ մտան Ս. Կյուրենկյանը, Ս. Չավարյանը, Ա. Բաստրմաճյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Գ. Կաֆյանը, Հ. Վահանյանը և ուրիշներ: Հանձնաժողովը պետք է պարզեր Արևմտյան Հայաստանում տիրող իրադրությունը, իմանար ինչպիսի՞ ընդունելություն կգտնեն վերադարձողները, կստանա՞ն իրենց հողերը, վճարելո՞ւ են համիդյան շրջանից մնացած տուրքերն ու ապառքները և այլն: Հանձնաժողովը լուծելու էր նաև վերադարձողների անցագրերի հարցը: Ճանապարհածախսը պետք է տրամադրվեր տարագիրների համար դեռ 90-ական

---

159 Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 772, դեկտեմբերի 29:

Բվականներին հանգանակված գումարներից, որոնք պահվում էին հայկական բարեգործական ընկերության և էջմիածնի դրամարկղներում։ Այնուհետև ժողովն առաջարկեց հանձնաժողովին մի շրջաբերական ուղարկել բոլոր «այն վայրերը, ուր կան Թուրքահայ գաղթականներ և առաջարկել նրանց՝ կազմել այդ տեղերում հանձնաժողովներ կանոնավորելու իր տեղում գաղթադարձի գործը և հարաբերություն պահպանելու կենտրոնական հանձնաժողովի հետ»[160]։

Սակայն այդ հանձնաժողովը նյութական միջոցների անբավարարության պատճառով ի վիճակի չեղավ կատարելու իր վրա դրված պարտավորությունները, և այդ գործն իր վրա վերցրեց Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը։ Ընկերության խորհուրդը, Թիֆլիսի Թուրքական հյուպատոսի միջոցով լուծելով անցագրերի հարցը, տարագիրներին երկիր էր ուղարկում խումբ-խումբ՝ հատուկ մարդկանց ուղեկցությամբ[161]։

Գաղթադարձի կազմակերպման գործին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը։ Դեռ 1908 թ. ամռանն ու աշնանը նա թեմական առաջնորդներին առաջարկեց եւ կանչել տարագիրներին, հավատացնելով նրանց, որ սահմանադրության հռչակումից հետո հայրենիքը վերափոխվել է ու բռնել բարգավաճման ուղին։ Պատրիարքարանը հորդորեց նաև պոլսաբնակ պանդուխտներին՝ վերադառնալ հայրենիք։ Կատարելով պատրիարքարանի ցուցումները, թեմական առաջնորդները հատուկ շրջաբերականներով դիմեցին տարագիրներին։ Այսպես, 1909 թ. մարտի 23-ին Վանի առաջնորդ Զավեն վրդ. Տեր-Եղիազարյանը, առենապետ Ն. Գալաճյանը և առենադպիր Գ. Ճիտուչյանը հայտարարում էին Կովկասում հաստատված վաստուրականցիներին, թե իբր «հողային կնճռոտ հարցը վերջապես լուծված է»[162], թե կառավարությունը կարդադրել է կուսակալին՝ վերադարձնել հայերի հողերը և եկած գաղթականները «գրեթե առանց դժվարության արդեն տիրացած են իրենց հողերուն»[163], թե փախստականները թող «չկորսնցնեն ներկա պատեհությունը իրենց դանդաղելով ու անորոշությամբ, այլ փութան օր առաջ դառնալ ու տեր ըլլալ գրավյալ հողերուն ու կալվածներուն»[164], թե վերադառնալիս ձեզ հետ բերեք ան-

160 *«Ջանգակ», 1908, № 24, օգոստոսի 3։*

161 *Տե՛ս «Գործ», 1908, № 22, հոկտեմբերի 7, № 32, հոկտեմբերի 18։*

162 *«Մշակ», 1909, № 80, ապրիլի 19։*

163 *Նույն տեղում։*

164 *Նույն տեղում։*

սուն ու դյուղատնտեսական գործիքներ, քանի որ «էլ չկան զուլումներ, հարստահարություններ»[165] և այլն, և այլն։ Պատրիարքարանը հատուկ մարդկանց հանձնարարել էր դիմավորել հայրենիք վերադարձողներին և կազմակերպել նրանց տեղափոխումն իրենց ցանկացած վայրերը։

Երիտթուրքական հեղաշրջումից հետո ազգահավաքման կոչերով հանդես եկան նաև Սիամանթոն, Դանիել Վարուժանը և մի շարք դեմոկրատ գրողներ ու հրապարակախոսներ։ Նրանք ազգի փրկության գաղտնիքն այժմ տեսնում էին ժողովրդի համախմբման մեջ, հավաքական ամբողջականության մեջ, գտնում էին, որ արևմտահայությունը հավաքվելով ու համախմբվելով, կկարողանա համեմատաբար հեշտ դիմագրել արհավիրքներին։ Ուստի կոչ էին անում տարագիրներին վերադառնալ հայրենիք, վերականգնել ավերված տունը, մշակել հարազատ հողը և շենացնել պապենական օջախը[166]։ Հայրենադարձության ընթացքով Սիամանթոն գրեց մի շարք բանաստեղծություններ («Մայրը իր զավակին», «Եղբայրը իր եղբորը», «Հարսին երազը», «Որդին իր հորը», «Հայ դաշտերուն պաղատանքը» և այլն)։

Արևմտահայ տարագիրներից շատերը, ինչպես ասվեց, հեղաշրջումից հետո վերադարձան հայրենիք, հնթարկվելով ճանապարհին բազմաթիվ զրկանքների ու տառապանքների և թալանվելով ու խոշտանգվելով թուրքական կամ քրդական ավազակախմբերի կողմից։ Բայց ճաշակելով երիտթուրքական բռնությունների ու վայրագությունները, նրանք կրկին վերցրին գաղթականի ցուպը, տանելով իրենց հետ նոր զանգվածներ։

Հայ հասարակական-քաղաքական շրջանները հանդես էին գալիս նաև այդ նոր արտագաղթի դեմ և, նշելով նրա աղետաբեր հետևանքները, փորձում էին կանխել այն։ Սակայն նրանց բարոյական քարոզներն ու միջոցառումները անզոր գտնվեցին արտագաղթի սոցիալ-տնտեսական հզոր պատճառների առջև։

---

165 Նույն տեղում։

166 Տե՛ս Հր. Թամրազյան, *Սիամանթո*, Երևան, 1969, էջ 176։ Հեկտոր Ոշտունի, *Սիամանթո*, Երևան, 1970, էջ 281։

3. ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, ճնշված ժողովուրդների մասին խոսելիս, անդրադարձել են նաև հայ ժողովրդին ու նշել նրա ազատագրման ուղիները։ Տես 1894 թ. նոյեմբերի 25-ին Ֆ. Էնգելսը պատասխանելով Հովսեփ Աբաջեկյանի հայտնի նամակին, գրում էր, թե հայ ժողովուրդը «դժբախտություն ունի ստիպված ապրելու տաճկական բռնակալության Սցիլլայի և ռուսական բռնակալության Խարիբդայի[167] *արանքում, մի ժողովրդի, որի վերաբերմամբ ռուսաց ցարիզմը ազատագրողի դեր է ուզում կատարել և որի ազատագրության համար ասված ամեն մի համակրական խոսք ռուսաց ստրկական մամուլը աշխատում է շահագործել հօգուտ նվաճողական ցարիզմի։ Սակայն իմ անհատական անկեղծ կարծիքն այն է, որ Հայաստանի ազատագրությունը տաճիկների և ռուսների ձեռքից կարող է տեղի ունենալ միմիայն ռուսական ցարի տապալման օրը»*[168]։

Ղեկավարվելով Ֆ. Էնգելսի այդ դրույթով, հայ մարքսիստ-լենինյանները պրոպագանդում էին հայ աշխատավոր լայն զանգվածների մեջ, որ նրանց ազատագրումը կարող է կատարվել միայն համառուսական հեղափոխական պայքարի հաղթականի շնորհիվ։ Նրանք միաժամանակ քննադատում էին բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների սխալ քաղաքականությունը, որոնք փորձում էին արևմտահայերի ազատագրության հարցը կապել իմպերիալիստական Եվրոպայի օգնության հետ[169]։

---

167 *Ըստ հին հունական դիցաբանության, Սցիլան ու Խարիբդան եղել են երկու հրեշներ, որոնք կանգնած լինելով Մեսինի նեղուցի ափերին, կուլ են տվել ծովագնացներին։ «Սցիլայի ու Խարիբդայի միջև» արտահայտությունը փոխաբերական իմաստով նշանակում է գտնվել երկու վտանգների արանքում։*

168 *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 39, ст. 271. *Տե՛ս նաև* Աւտ. Եղիազարյան, *Հովսեփ Աբաջեկյան («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 206—207)։*

169 *Մարքս-լենինյան տեսակետը հայկական հարցի լուծման մասին համառոտակի շարադրված է հետևյալ աշխատություններում. Մ. Վ. Ազգումանյան, Բոլշևիկների գործունեությունը..., Խ. Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, դիրք առաջին, Երևան, 1967, դիրք երկրորդ, Երևան, 1976, Հ. Գ. Վարդանյան, Արևմտահայերի ազատագրության հարցը, Երևան, 1967, Մ. Պ. Աղայան, Նշված աշխ., Վ. Ս. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976։ Դ. Բ. Ղաւիթջանյան, Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Երևան, 1971։ Ս. Ն. Ֆրանգուլյան, Մարքսը և Էնգելսը ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի մասին, Երևան, 1975 և այլն։*

1907 թ. Ա. Ամիրյանը դաշնակցականներին քննադատելիս նշում էր, որ եթե մի ժամանակ բալկանյան ժողովուրդների եվրոպական կողմնորոշումը ճիշտ էր, ապա այժմ դաշնակցականների այդ կողմնորոշումը սխալ է, քանի որ Թուրք ժողովուրդը նույնպես ոտք է դրել հեղափոխական շարժումների բնագավառը և, որ ավելի կարևոր է, «Ռուսաստանի մեջ հեղափոխությունը... գալիս է իր խոսքը ասելու և Տաճկաստանի վերաբերմամբ»[170]: Ուստի դաշնակցությունը, ըստ Ամիրյանի, արևմտահայության բախտը պետք է կապեր ոչ թե եվրոպական տերությունների, այլ Ռուսաստանի հեղափոխության հաղթանակի հետ: «Ռուսաստանի հաղթական հեղափոխությունը,— գրում է Ա. Ամիրյանը,— ձակատագրականորեն նույն ազդեցությունը պիտի ունենա հարևան պետությունների վրա (որոնց թվում Թուրքիայի և Պարսկաստանի), ինչ որ ունեցավ իր ժամանակին ֆրանսիական մեծ հեղափոխությունը Արևմտյան Եվրոպայի պետությունների վրա: Ահա թե ինչու Ռուսաստանի ազատագրումը նշանակում է և Տաճկահայաստանի ազատագրումը»[171]:

Ի տարբերություն դաշնակցականների ու ազգային մյուս կուսակցությունների, բոլշևիկները արևմտահայության ազատագրման կամ նրա կացության բարելավման հարցը չէին կապում երիտթուրքական ռեժիմի հետ: Նրանք գտնում էին, որ 1908 թ. հեղաշրջումը ոչ միայն չի բարելավել Թուրքիայի ազգությունների, այդ թվում նաև արևմտահայերի դրությունը, այլև ավելի է վատթարացրել այն:

1909 թ. մայիսին Բ. Մ. Կնունյանցը գրում էր, որ թուրքական հեղափոխությունը «երկիրը հասցրեց զորքի դերիշխանության, քաղաքական այնպիսի կարգի, երբ ազգը ենթարկվում է զինվորի հրամանին: Ազգաբնակչության լայն խավերը՝ գյուղացիությունը և քաղաքային մանր արհեստավորը առայժմ բոլորովին մի կողմ են քաշված հեղաշրջումից և իրենց պահանջներով հանդես չեն գալիս... Քանի դեռ ժողովրդական մասսաներն անտարբեր են, քանի դեռ սոցիալական խոր պահանջմունքներ չկան, որոնք այդ մասսաներին մղեն պառլամենտի ակտիվ պաշտպանության ուղին, քանի դեռ այդ մասսաները ինքնագործունեության չեն ընտելացել, ժողովրդապետության գաղափարի հաղթանակը կառուցված է խախուտ հիմքի վրա»: Բ. Մ. Կնունյանցն

---

170 Մռավյան, Դաշնակցության կրիզիսը, Վիեննա, 1907, էջ 37:

171 Նույն տեղում, էջ 39:

այնուհետև նշում է, որ «Հեղափոխությունն ինքնին դեռ բնավ էլ չի նշանակում արևելյան բռնապետությունից անցումը եվրոպական պառլամենտարիզմին»[172]։

Ս. Կասյանը 1914 թ. հունվարին «Մեր խոսքը» շաբաթաթերթում հայկական հարցի մասին հանդես եկավ «Հայկական հարցը և հայ դեմոկրատիան» հատուկ հոդվածով։ Յավոք, հրապարակվեց հոդվածի միայն մի մասը, իսկ մնացածը շաբաթաթերթի արգելման պատճառով լույս չտեսավ։ Այնուամենայնիվ, այդ հրապարակված մասից կարելի է կռահել հեղինակի կարծիքը հայկական հարցի լուծման մասին։ Ս. Կասյանը գրում էր, որ հայ ժողովուրդը իր մայր երկրում սրտհված է երեք հատվածի՝ երեք տերությունների (Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի) միջև։ «Յուրաքանչյուր հատվածի բախտը կապված է այն պետության ժողովրդի բախտի հետ, որի սահմանում գտնվում է նա։ Նրա կյանքի պայմանները սերտ կերպով կապվում են պետության կյանքի պայմանների հետ»[173]։ Հայության ամեն մի հատվածի բախտը պետք է լուծել պրոլետարիատի ազատագրության դիրքերից, իսկ պրոլետարիատը նայում է ազգային ազատագրական շարժման հարցին այն տեսակետից, թե «որքան է տվյալ ազատագրական շարժումը տանում դեպի իր դասակարգի, դեմոկրատիայի, հետևապես մարդկության ազատագրությունը, թե որքան է նա համապատասխանում մարդկության ազատագրության տենդենցին։ Նա միայն ցանկանում և ձգտում է տալ այդ ազատագրական շարժմանը նպատակահարմար ընթացք, դեմոկրատական շահերին համապատասխանող ուղի»[174]։ Այդպիսով, Ս. Կասյանը հայկական հարցի լուծումը կապում էր տվյալ երկրի պրոլետարական խնդրի լուծման հետ և դեմ էր նրա առանձին բարձրացմանը, գտնելով, անշուշտ, որ վերջին դեպքում այն դատապարտվում է անխուսափելի կործանման։

Ստ. Շահումյանը բազմիցս անդրադարձել է դաշնակցականների ու հայ ազգային մյուս կուսակցությունների՝ արևմտահայերի ազատագրման հարցի կապակցությամբ ունեցած գործելակերպին և սուր քննադատել։ Նա նշում էր, որ նրանք կտրելով արևմտահայերի ազատագրական ելույթները համաթուրքականից և հակադրելով միմյանց, ավելի են վատթարացնում արևմտահայերի վիճակը, ավելի բարդացնում

172 «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. պիտ., 1963, № 8, էջ 100։

173 Սարգիս Կասյան, Ընտիր երկեր, Երևան 1967, էջ 63։

174 Նույն տեղում, էջ 62։

նրանց ազատագրումը: Ստ. Շահումյանը 1916 թ. «Ազգային հարցը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան» հոդվածում գրում էր. «Այո՛, մենք հակառակ ենք եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականությանը: Մենք ասել ենք նրանց՝ դուք, պարոննե՛ր, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք: Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կորստաբեր են հայ ժողովրդի համար»[175]: Ստ. Շահումյանը գտնում էր, որ պետք է վարել խելոք ու հետևողական քաղաքականություն և հաշտ ապրել հարևանների հետ: Սակայն «մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես դիտմամբ ամեն ջանք գործ էին դնում մեկուսացնելու հայ ժողովուրդը հարևան ազգերից, թշնամացնելու նրա հետ բոլորին և հող պատրաստելու՝ սուլթանի և Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագրները իրականացնելու համար»[176]: Այնուհետև, «Իհարկե, դաշնակցությունը մեղավոր չէ, որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորույն է. ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել: Բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց ազատության ճանապարհով»[177]:

Հայ մարքսիստները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ազգերի ինքնորոշման տեսական դրույթներով, սուր կերպով քննադատում էին բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների ազգային հարցի լուծման ծրագրերը: Նրանք ցույց էին տալիս, որ ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային հարցը պետք է լուծել ոչ թե կուլտուր-ազգային ավտոնոմիայի կամ ավտոնոմիայի ստեղծումով, այլ տիրապետող ազգի ստրկացումից ազատագրելով և նրա համար ինքնուրույն պետականության հռչակումով: Ստ. Շահումյանը գրեց մի շարք աշխատություններ «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» դեմ և ջախջախեց նրա հայ կողմնակիցներին: Նա նշում էր, որ բուրժուական այդ տեսակետը հայ իրականության մեջ պաշտպանում են տիրաերական «Հուվիտը», վաճառականների օրգան «Մշակը», մանրբուրժուական ու քաղբենիական մտավորականության բերան «Հորիզոնը» և ընդհանրապես «չկա մի կուսակցություն՝ կղերական թե

---

175 Ստ. Շահումյան, երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 407:

176 Նույն տեղում, էջ 408:

177 Նույն տեղում:

բուրժուական, «խավարամիտ» ու «ապաազգային», որ կողմնակից չլինի ազգային-կուլտուրական ավտոնոմիային»[178]։

Սա. Շահումյանը ցույց էր տալիս, որ կուլտուր-ազգային ավտոնոմիայի հայ կողմնակիցները փորձում են շեղել հայ աշխատավորներին ճիշտ ուղուց և հակադրելով այլ ազգի աշխատավորներին, խափանել նրանց ազատագրության գործը։ Նա մերկացնում էր Դ. Անանունին, Բ. Իշխանյանին ու սրանց համախոհներին, որոնք բուրժուական «կուլտուր-ազգային ավտոնոմիան» հրամցնում էին հայ բանվորներին որպես մարքսիստական տեսություն։ Շահումյանը նշում էր, որ ազգային հալածանքները չեն կարող վերանալ, քանի դեռ գոյություն ունի կապիտալիզմ։ Ուստի հայերի ազգային հարցի լուծումը ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում կապված է համաժողովրդական շարժման հաղթանակի ու սիբապետող կարգերի տապալման հետ։

Պաշտպանելով ազգերի ինքնորոշման լենինյան տեսությունը, Սա. Շահումյանը միաժամանակ նշում էր, որ Ռուսաստանի ժողովուրդները, այդ թվում նաև հայերը չպետք է անջատվեն—հեռանան ռուս պրոլետարիատից, որովհետև միայն պրոլետարական միասնությունն ու ինտերնացիոնալիզմը կարող են ապահովել նրանց ազատությունը, անվտանգությունը և առաջընթացը։

Ալ. Մյասնիկյանը 1913—1914 թթ. նշում էր, որ մեր կուսակցությունը «կուլտուր-ազգային ավտոնոմիան» մերժել է տակավին 1903 թ. իր 2-րդ համագումարում։ Կանգնելով լենինյան դիրքերում, նա ազգային հարցի լուծման ճիշտ ուղին համարում էր ինքնորոշումը։ Ալ. Մյասնիկյանը գտնում էր, որ այն «մի մտածված կարևոր պահանջ է մարքսիստական ծրագրում»[179], որ այդ ինքնորոշումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին անօրինելու «իր բախտը այնպես, ինչպես դա իրեն ցանկալի է»[180]։

Ալ. Մյասնիկյանը մերկացնում էր նաև ռուսական էսեռների, լեհական նացիոնալիստների, հրեական սիոնիստների, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների, բելոռուսական գրոմադայի ոչ մարքսիստական կեղծ-սոցիալիստական կուսակցությունների 1907 թ. ապրիլյան կոնֆերանսում ընդունած ազգային ծրագիրը, ցույց տալով, որ

---

178 Սա. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 272։

179 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 106։

180 Նույն տեղում, էջ 107։

այն հիմնում է ոչ թե պրոլետարիատի, աշխատավոր ժողովրդի, այլ բուրժուազիայի շահերից։

Ալ. Մյասնիկյանը սուր քննադատության ենթարկեց հատկապես դաշնակցականներին, որոնք պատճառ տալով փոփոխում էին իրենց ազգային ծրագիրը և ընտրելով ավտոնոմիան կամ «կուլտուր-ազգային ավտոնոմիան», մերժում ազգային հարցի լուծման պրոլետարական ուղին։ Ամփոփելով կեղծ սոցիալիստական կուսակցությունների ազգային ծրագրի քննադատությունը, նա գրում էր. «նացիոնալիստները ավտոնոմիա են պահանջում, որ միանգամայն ավելորդ է այսօրվա Ռուսաստանում և վնասակար հետադիմական ու դիտակից պրոլետարիատի տեսակետից»[181]։

Ղեկավարվելով մարքս-լենինյան դրույթներով, հայ բոլշևիկները մերժում էին նաև բուրժուական կուսակցությունների ագրարային ծրագրերը և ցույց տալիս, որ հողային հարցը կարող է լուծվել միայն պրոլետարիատի գլխավորությամբ և գյուղացիության դաշնակցությամբ կատարվող հեղափոխության միջոցով։ Դեռ 1906 թ. Ստ. Շահումյանը գրում էր, որ այդ բանը Անդրկովկասի գյուղացիությունը սկսել է հասկանալ, ուստի «թե՛ անմիջական կռվի դաշտում և թե՛ իր գիտակից ներկայացուցիչների միջոցով ավելի ու ավելի մոտենում է պրոլետարիատին ու արյան դաշն կապում նրա հետ ընդհանուր թշնամու դեմ»[182]։

Շահումյանը քննադատում էր դաշնակցության տեսաբաններին, որոնք ընդգծելով ռուս գյուղացիների նյութական առավելությունները հայ շինականների համեմատությամբ, փորձում էին դա մեկնաբանել միայն ազգային հանգամանքներով։ Նա ցույց էր տալիս, որ ռուս ու հայ գյուղացիների մասին խոսելիս պետք է շեշտը դնել նրանց կացության ոչ այնքան տարբերության, որքան նմանության վրա, որովհետև «ռուս գյուղացին նույնքան խորթ զավակ է ռուս կառավարության համար, ինչքան և հայ, վրացի, թուրք և այլ գյուղացիները»[183]։ Շահումյանը այնուհետև շարունակում էր. «Հայ գյուղացին թշվառ է, աղքատ է, տգետ է ոչ թե այն պատճառով, որ նա հայ է, այլ որովհետև նա ենթարկված է նույն սոցիալական պայմաններին և խեղդված է նույն ռեժիմի հիրաններում, ինչ որ ռուս, վրացի, լեհացի և այլ գյուղացիները։ Ուրեմն չպետք է խոսել հայ գյուղացուն կեղծ ազգասիրական

181 Նույն տեղում, էջ 116։

182 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 162։

183 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 187։

հրգերով, այլ հարկավոր է ցույց տալ նրա աղքատության և տգիտության ճշմարիտ աղբյուրը, իսկական պատճառը, որպեսզի նա իմանա ում դեմ և ում հետ ձեռք-ձեռքի տված նա պետք է կռվի, որպեսզի արժանանա ավելի լավ ապագայի»[184]։

Կանգնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում, Ստ. Շահումյանը պահանջում էր համախմբել ու միավորել ինքնակալության դեմ ծառացած ուժերը։ Նա գրում էր, «Հարկավոր է խոսել ներկայումս ոչ թե առանձին ազգային շահերի, այլ ընդհանուր առմամբ Ռուսաստանի բանվոր և գյուղացի հալածված ժողովրդի շահերի մասին, ոչ թե ազգերի բաժանման և ատելության, այլ համերաշխության և ընդհանուր կռվի մասին»[185]։

Ստ. Շահումյանը մերժեց Գ. Վ. Պլեխանովի ու մենշևիկների հողի մունիցիպալիզացիայի տեսությունը և պաշտպանեց Լենինյան նացիոնալիզացիան։ Իսկ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո խստորեն քննադատելով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների ազրարային հակաժողովրդական քաղաքականությունը, նշեց, որ «հողային հարցի լուծումն Անդրկովկասում պետք է տեղի ունենա միայն նույն ճանապարհով, ինչ ճանապարհով դա տեղի ունեցավ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո... Հողային հարցն իր ամբողջ ծավալով կարող է լուծել միայն ինքը՝ ժողովուրդը, ինքը՝ գյուղացիական կոմիտեների մեջ կազմակերպված աշխատավոր գյուղացիությունը»[186]։

Ս. Սպանդարյանը 1906 թ. հրատարակած «Մեր դերը գյուղում» հոդվածում գտնում էր, որ սոցիալ-դեմոկրատիան պետք է համախմբի գյուղի պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածներին և նրանց շարժումը կապի արդյունաբերական պրոլետարիատի պայքարի հետ։ «Մեր պարտքն է,—գրում էր նա,—հեղափոխականացնել գյուղը ամբողջապես, տանել ամբողջ գյուղացիության վրա, տալով նրան մեր լոզունգը՝ «ամբողջ հողը և ամբողջ ազատությունը»[187]։

Առաջ մղելով գյուղացիական ելույթների կազմակերպման դաշափարը, Ս. Սպանդարյանը պահանջում էր խուսափել տարերային շարժումներից ու հանկարծակի պոռթկումներից, քանի որ դրանք «միշտ

---

184 *Նույն տեղում, էջ 188։*

185 *Նույն տեղում։*

186 Ստ. Շահումյան, *Երկեր, հ. 3, էջ 74—75։*

187 Ս. Սպանդարյան, *Նշված աշխ., էջ 129։*

ջախջախվում են, թողնելով գյուղացու հոգում հիասթափում, անբավականություն, մի տեսակ պեսիմիզմ և մինչև անգամ թշնամական վերաբերմունք դեպի հեղափոխությունը և հանուն հեղափոխության գործող կուսակցությունները։ Ընդհակառակը, գիտակից, պատրաստված և կազմակերպված շարժումը, եթե նա ունենա մինչև անգամ ամենաանհաջող ելք, այնուամենայնիվ անհամեմատ բարձր պիտի դասել, որովհետև մասսան այդ շարժման մասնակցել է գիտակցաբար և նրա պարտությունը ավելի ևս բաց է արել նրա աչքերը, ավելի ևս ավելացրել նրա հեղափոխական էներգիան»[188]։

Ս. Սպանդարյանը գտնում էր, որ սոցիալ-դեմոկրատները գյուղացիությանը քաղաքական պրոպագանդայի միջոցով պետք է հասցնեն այն գիտակցության, որ առանց ցարիզմի տապալման ու իշխանության նվաճման անկարելի է ձեռք բերել հող և ազատություն։ Գյուղացիները պետք է համոզվեն, որ իրենց «դրությունը չի փոխվի անձնավորության փոխելով, այլ պետք է ամբողջ սիստեմը հեղաշրջել ներքևից մինչև վերև»[189]։

Ալ. Մյասնիկյանը 1906 թ. նշում էր, որ Ռուսաստանում հեղափոխությունը կհաղթի միայն այն ժամանակ, երբ գյուղացիությունը դաշնակցի պրոլետարիատի հետ. «Եվ անվեհեր մարտիկների բանակը միմիայն ա՛յդ դեպքում հաղթությամբ դուրս կգա յուր մեծ կռվից»[190]։ *Ալ. Մյասնիկյանը քննադատում էր դաշնակցականների ու հնչակյանների սխալ հայացքները համայնքի վերաբերյալ, այն տեսակետը, թե համայնքը կարող է խաղալ հասարակությունը վերափոխող դեր։ Նա ցույց էր տալիս, որ կապիտալիզմի զարգացման հետևանքով համայնքը դատապարտված է կործանման, և այդ կործանումը ավելի է արագացվում Ստոլիպինի ագրարային ռեֆորմով։ Ալ. Մյասնիկյանը մերկացրեց էսեռների կեղծ, հակաժողովրդական քաղաքականությունը և ցույց տվեց, որ խոսքով նրանք պաշտպանում են գյուղացիների, իսկ գործով՝ բուրժուազիայի շահերը. «Էսեռները որոշակի կերպով վերասերվել ու դարձել են գյուղի վերնախավերի, քաղքենիականության ապահովված խավերի, ունևոր ինտելիգենցիայի կուսակցություն և հարել են խոշոր բուրժուազիային»*[191]։

Ելնելով Լենինյան դրույթներից, Ալ. Մյասնիկյանը խնդիր էր դնում

---

188 *Նույն տեղում, էջ 129—130։*

189 *Նույն տեղում, էջ 131։*

190 Ալ. Մյասնիկյան, *Ընտիր երկեր, էջ 8։*

հողը վերցնել արքունիքից, կալվածատերերից ու վանքերից և հանձնել գյուղացիներին՝ առանց վարձատրության, «կազմակերպված ձևով գյուղացիական դեպուտատների սովետների և գյուղատնտեսական բանվորների դեպուտատների վերահսկողության տակ։ Թույլ չտալ ոչ մի անկարգություն։ Հեղափոխական կարգապահությունն անհրաժեշտ է»[192]։

Յավոր, մարքս-լենինյան դաղափարները ազդային ու հողային հարցերի վերաբերյալ Թուրքիայում և արևմտահայ իրականության մեջ բուրքական հետամնաց կարգերի պատճառով չգտան քիչ թե շատ տարածում ու զարդացում։

4. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՉՈՒԹՅԱՆ ԼՈՒՅԹՆԵՐԸ

1908 թ. հեղաշրջումից հետո լիբերալ-բուրժուական նեղ ու սակավ ելույթների կողքին Օսմանյան կայսրության մեջ ծավալվեցին հեղափոխական-դեմոկրատական լայն ու արմատական շարժումներ։ Երկրի արդյունաբերական կենտրոններում ոտքի ելան բանվորները։ 1908 թ. հուլիս—հոկտեմբեր ամիսներին գործադուլ հայտարարեցին Սալոնիկի ու Բազդադի երկաթուղայինները, Կ. Պոլսի նավահանգստի բանվորներն ու բեռնակիրները, Սամսոնի ծխախոտագործարանների աշխատողները։ Կայսրության այլ շրջաններում հանդես եկան տեքստիլագործները, տաղձագործները, կոշկակարները, հացթուխները և մի շարք այլ մասնագիտության բանվորներ։ Որոշ տեղերում նրանց գործադուլները վեր էին ածվում ղինված ընդհարումների և ավարտվում արյունահեղությամբ։ Օրինակ, 1908 թ. սեպտեմբերին Դեբելիջեթ կայարանում երկաթուղայինները «գնացքներ են խորտակել, կարել են հեռագրաթելը և փորձ են արել ազատել իրենց ձերբակալված ղեկավարներին։ Այդ միջոցին նրանք սպայի վրա կրակ են բացել։ Զինվորները պատասխանել են։ Բազմաթիվ սպանվածներ ու վիրավորվածներ կան»[193]։

Բանվորական շարժումները ընթանում էին սովորաբար իրարից անջատ ու մեկուսի, բայց երբեմն միանում էին, ընդ որում՝ ոչ միայն տարբեր ազգությունների, այլև տարբեր մասնագիտությունների բանվորների ելույթները։ 1908 թ. «Ջանգակը» գրում էր, որ Կ. Պոլսում

191 Նույն տեղում, էջ 179։

192 Նույն տեղում, էջ 150։

193 «Գործ», 1908, № 10, սեպտեմբերի 23։

«Նավահանգստի բանվորները գործադուլ են արել. նրանց միացել են երկաթուղային բեռնակիրները և ծխախոտի մշնավաճառի բանվորները»[194], գործադուլների ժամանակ երբեմն «բոլգար, հայ, հրեա և ալբանցի բանվորները պարմանալի համերաշխություն են ցույց տալիս»[195]։

Թուրքիայում բանվորական շարժումներն ընթանում էին տարբեր պայմաններում, ունեին համարյա բացառապես անտեսական բնույթ և կտրված էին գյուղացիական ելույթներից։

Բանվորական շարժումների ծավալման արդյունքն էր Կ. Պոլսում 1910 թ. սեպտեմբերին կազմակերպված «Օսմանյան սոցիալիստական կուսակցությունը» («Օսմանլի սոցիալիստ ֆըրքասը»), որն իր թերթերում («Մարդկություն»—«ինսանիետ», «Մասնակցություն»—«իշտիրակ», «Սոցիալիսա»—«Սոցիալիսա») և պառլամենտում քննադատում էր երիտթուրքերի ներքին ու արտաքին հետադիմական քաղաքականությունը, պահանջում բարձրացնել բանվորների աշխատավարձը, սահմանել 8-ժամյա բանվորական օր, թույլատրել բանվորներին կազմակերպելու պրոֆմիություններ ու գործադուլներ և այլն։ Այդ կուսակցությունը հիմնում էր բանվորական ակումբներ, կազմակերպում միտինգներ, գործադուլներ և խնդիր էր դնում արգելել անչափահասների, կանանց ու ծերերի աշխատանքն արտադրության մեջ։ Սակայն օսմանյան սոցիալիստական կուսակցությունը մարքսիստական չէր, քանի որ շրջանցում էր պրոլետարիատի դիկտատուրայի, ազգային ու հողային հարցերը և խեղաթյուրելով մարքսիզմը, փորձում էր նույնացնել այն մահմեդականության հետ, հայտարարելով, թե դրանց մեջ «չկա ոչ մի տարաձայնություն»[196]։ Պատահական չէ, որ հետագայում, երբ Թուրքիան պարտություն կրեց առաջին համաշխարհային պատերազմում, կուսակցության ղեկավարներից մեկը՝ Հյուսեյն Հիլմին բարեկամացավ անգլիական օկուպանտների հետ։

Երիտթուրքերը հետապնդում ու ճնշում էին բանվորական շարժումները, հալածում սոցիալիստական կուսակցության անդամներին, արգելում գործադուլները, ձերբակալում ու բանտարկում ղեկավարներին, փակում կուսակցության թերթերը, աքսորում նրա ակտիվ գործիչներին։ 1908 թ. սեպտեմբերին իթթիհատական կառավարությունը օրենք հրատարակեց գործադուլների արգելման մասին, որը 1909 թ. հուլիսին

[194] «Ջանգակ», 1908, № 22, օգոստոսի 1։

[195] «Ջանգակ», 1908, № 20, հուլիսի 30։

[196] Г. З. Аллиев, նշված աշխ., էջ 174։

հաստատվեց պառլամենտի կողմից։ Այնուհետև երիտթուրքերը հրատարակեցին նաև մի շարք այլ հակաժողովրդական օրենքներ։

Սահմանադրության հռչակումից հետո Թուրքիայում ծավալվեցին նաև գյուղացիական ելույթները։ Կենտրոնական ու Արևմտյան Անատոլիայի մի շարք նահանգներում թուրք գյուղացիները պայքարում էին հողի համար, հարկերի ու պարհակների թեթևացման համար։ Ջատագովելով բավարարում, նրանք զավթում էին կալվածատերերի հողատարածությունները, հրկիզում ագարակները, բռնագրավում ունեցվածքը։ Գյուղացիները հրաժարվում էին կալվածատերերի հարկերի ու պարտությունների վճարումներից, իսկ երբեմն սպանում նրանց։ Իրիհատի ձեռնարկած միջոցառումները անկարող էին խեղդել ինչպես բանվորական, այնպես էլ գյուղացիական ելույթները։

Երիտթուրքերի վարչակարգի դեմ մասսայական-դեմոկրատական շարժումներ ծավալվեցին նաև Արևմտյան Հայաստանում։ Այդ շարժումները հիմնականում ինքնաբուխ ու տարերային էին և ծագում էին ամենատարբեր առիթներով։

Վանում 1908 թ. հոկտեմբերին մնծագումար դրամատերերը կրկնապատկեցին ցորենի գները. հայերն ու թուրքերը միաձնաբար ոտքի ելան և պահանջեցին վերականգնել նախկին գները, սպառնալով ջարդել դռներն ու տանել հացահատիկը։ Երկյուղ կրելով այդ սպառնալիքից, կուսակալն առաջարկեց վաճառականներին իջեցնել գները և միաժամանակ Ադլջևազից հացահատիկ տեղափոխել Վան[197]։

1909 թ. հունիսի առաջին կեսին ըմբոստացան հացափուռների աշակերտները, պահանջելով սահմանել հանգստի օր. «...մենք ալ մարդ ենք,—հայտարարում էին նրանք,—և ունենք մարդկային դգացումներ, կարիքներ ու պետքեր...»[198]։ Թուրքական պաշտոնյաները աշակերտներին քաշ տվին դատարան։ Սակայն վերջիններս համառորեն պաշտպանեցին իրենց պահանջները և հասան նպատակին[199]։

1909 թ. հուլիսի 26-ին վանեցիները կրկին ոտքի ելան հացահատիկի սպեկուլյացիայի դեմ և պահանջեցին, որ հացահատիկի պաշարը կենտրոնանա ոչ թե առանձին անհատների, այլ կառավարության ձեռքում։ Բայց իշխանությունները, խուսափելով ավելորդ հոգսերից և

---

197 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 716, թ. 122, «Գործ», 1908, № 35, հոկտեմբերի 22։

198 «Ազատամարտ», 1909, № 20, հուլիսի 15։

199 Տե՛ս «Ազատամարտ», 1909 № 23, հուլիսի 19։

կապված լինելով դրամատերերի հետ, անուշադրության մատնեցին այդ պահանջը[200]։

1911 թ. նոյեմբերին կառապանները երկու օր բանիող հայտարարեցին, պահանջելով նոր տուրքերի վերացում[201], սակայն արդյունքի չհասան։

Վանի բնակիչները հանդես էին գալիս նաև քաղաքական պահանջներով։ Այսպես, 1909 թ. գարնանը, երբ Աբդուլ Համիդի փոխարեն սուլթան հռչակվեց Մեհմեդ V-ը, նրանք մայիսի 1-ին ցույցի դուրս եկան. «Մենք չենք գոհանա Համիդի փոխվելով ու Մուհամեդի նստելով, մենք պիտի ձգտենք թագերի կործանման»[202]։ Հայերն առաջարկեցին թուրքերին՝ միանալ իրենց, սակայն մնացին անպատասխան։ Ընդհակառակը, թուրքերի մի մասը, ընկնելով մոլլաների ազդեցության տակ, թշնամաբար տրամադրվեց հայերի նկատմամբ։

1912 թ. օգոստոսի 22-ին, երբ քաղաք բերեցին երկու տեղացիների դիակներ, որոնք սպանվել էին ճամփորդության ժամանակ, բնակիչները զայրույթով լցվեցին առաջնորդարան և պահանջեցին «կտրուկ ու անմիջական միջոցներ ձեռք առնել տիրող անապահովության վերջ մը դնելու համար»[203]։ Կուսակալը բազմությանը հանդստացնելու նպատակով հայտարարեց, որ կպատժի մարդասպաններին։ Սակայն դա տեղի չունեցավ։

Երկու ամիս չանցած կատարվեց մի նոր եղեռնագործություն. հոկտեմբերի 11-ին Խիզանում, Կարկառում, Սպարկերտում և դրանց հարակից շրջաններում մեծ ազդեցություն ունեցող շեյխ Սեիդ Ալիի հրոսակների (Հաջի Յաղուբ և ուրիշներ) կողմից սպանվեցին քահանա Տեր-Սարգիսն ու Աղթամարի թեմական դպրոցների տեսուչ Ռաֆայել Երիցյանը, որը հանդգնել էր առաջարկել շեյխին դադարեցնել խաղաղ բնակչության տեռորն ու ավերածությունները։

Այս եղեռնագործության լուրը արագորեն տարածվեց Վասպուրականում։ Գավառների ալեկոծված դյուղացիությունը լցվեց Վան և պահանջեց կուսակալ Իզզեթ բեյից պատժել հանցագործներին։ Ակնատեսը գրում էր. «Չորս օրից ավելի է, ինչ քաղաքումս խուժել են հազարից ավելի գյուղացիներ շրջակա գավառներից. սրանք եկել են 2—4

---

200 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 57, օգոստոսի 28։

201 Տե՛ս «Վան-Տոսպ», 1911, № 3, էջ 47։

202 Տե՛ս «Մշակ», 1909, № 119։

203 «Աշխատանք», 1912, № 37—90, էջ 8։

օրվա հեռու ճանապարհից՝ Կավաշից, Կարճկանից, Կարկառից, Խիղանից և Սպարկերտից և օրեցօր դարձյալ գալիս, ստվարանում են։ Վանում պանդոկներ, հյուրանոցներ չկան, ուստի այս հազարավոր անձերի բազմությունը հյուրասիրվել է քաղաքի հայերի տներում, ամեն մի տուն ունի 1—4 հյուրեր... գավառացի հազարավոր ժողովուրդը սպասում է, որ Վանի վալին բանակցելով կենտրոնի կառավարության ու Բիթլիսի վալի Ալի փաշայի հետ՝ բուն ոճրագործ Ալիին ձերբակալե»[204]։

Հոկտեմբերի 17-ին Ռաֆայել Երիցյանի դիակը տեղափոխեցին Վան և իջեցրին կուսակալի դռանը։ Իզիթ բեյը կեղծավորաբար ցավակցություն հայտնեց և խոստացավ հայոց առաջնորդին՝ պատժել հանցավորներին։ Հոկտեմբերի 18-ին ալևկոծված ամբոխը պահանջից վալիից՝ անհապաղ ձերբակալել Սեիդ Ալիին, սահմանել գավառներում զինվորական դրություն, նշանակել պահակներ հայկական գյուղերում, զենք տալ հայերին ինքնապաշտպանության համար և ապատել Կարկառի հայ կալանավորներին։ Կուսակալը փորձեց համոզել, թե ավելորդ է ազգային հավաքական դիմումը, քանի որ արդեն կարգադրել է ձերբակալել ոճրագործներին[205]։ *Սակայն ժողովուրդը չհանդստացավ, հոկտեմբերի 19-ին իր պահանջները ներկայացրեց վիլայեթի զինվորական հրամանատարին, իսկ հոկտեմբերի 21-ին՝ կրկին կուսակալին։ Վերջինս պատասխանեց, որ ժողովուրդը «պետք է իր տեղը վերադառնա, իսկ ինքը պետք եղածը կը կատարե»*[206]։ *Չհավատալով Իզիթ բեյի խոստումին, որն ավելի շուտ մտահոգված էր ցուցարարների ցրումով, քան հանցավորներին պատժելով, ամբոխը դիմեց մայրաքաղաք՝ ներքին գործերի մինիստրին ու Կ. Պոլսի հայոց պատրիարքին։*

Հոկտեմբերի 21-ին Վանի հասարակությունը գավառից եկած գյուղացիների հետ միասին հողին հանձնեց Ռաֆայել Երիցյանին։ Դագաղի ետևից գնում էր շուրջ 10.000 մարդ։ «Վանը,—գրում է ականատեսներից մեկը,—երբևիցե հանդիսատես չի եղած այդպես մեծ ու զգալի հուղարկավորության մը»[207]։ *Այդ սովորական թաղում չէր, այլ քուրքական բռնակալության դեմ ուղղված քաղաքական ցույց։ Այդ Վանի հայության տասնյակ տարիների ցասման բուռն արտահայտությունն*

---

204 «Մշակ», 1912, № 246, նոյեմբերի 4։

205 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 2—98, էջ 1։

206 Նույն տեղում։

207 Նույն տեղում, № 49—96, էջ 2։

էր ընդդեմ բռնության ու կամայականության, ցեղապետերի ու շեյխերի ոճրագործության։

1912 թ. նոյեմբերի 12-ին Վանի հասարակությունն ու շրջակա գյուղացիները, օգտագործելով Երիցյանի հոգևհանգստի կատարման արարողությունը, նոր ցույցեր կազմակերպեցին և նորից պահանջեցին իշխանություններից՝ ձերբակալել Սեյիդ-Ալիին և նրա գինակիցներին, վենք բաժանել այն վայրերի հայերին, որոնք ենթակա էին շեյխի ոտնձգություններին, իրավունք տալ հայերին, որ քրդերի նման վենք կրին[208]։ Սակայն իշխանությունները ոչ միայն չկատարեցին այս պահանջները, այլև ազատ արձակեցին Երիցյանի սպանության մեղսակիցներից մեկին, իսկ մյուս մարդասպանների դատը տեղափոխեցին Բիթլիս, ուր «Սեիդ-Ալիի ազդեցությունը զորավոր էր...»[209]։

Կարկառի գյուղացիները որոշեցին իրենց ուժերով հաշվեհարդար տեսնել ոճրագործների հետ։ Եվ ահա, 1912 թ. նոյեմբերի 26-ին, երբ Հաջի Յաղուբը իր գործակիցներով գնում էր պետական տասանորդը հավաքելու, հարձակվեցին նրանց վրա ու կոտորեցին[210]։ 1913 թ. ապրիլին թուրքական պաշտոնյաները ձերբակալեցին 50 հոգու և նույն թվի աշնանը կանդնեցրին դատարանի առաջ։ Դատարանը 20 հոգու տվեց 10 տարվա ազատազրկում, 2 անչափահասի՝ 2,5 տարվա, իսկ մնացածներին ազատ արձակեց[211]։

Քիչ անց թուրքական իշխանությունները կազմակերպեցին նոր սպանություն։ 1912 թ. դեկտեմբերին, կարք նստելիս, անհայտ անձնավորության կողմից սպանվեց Վանի հայանի հարուստներից մեկը՝ Հայկական բարեգործական ընկերության Վանի մասնաճյուղի նախագահ Պետրոս Գափամաճյանը։ Օգտվելով այն հանգամանքից, որ Գափամաճյանի ու դաշնակցականների միջև կային լուրջ տարաձայնություններ, իշխանությունները լուր տարածեցին, թե նրան սպանել են իր հակառակորդները։ Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերևը, քաջատեղյակ լինելով դեպքերին, անհրաժեշտ էր համարում հայտնել իր դեսպանին, որ Գափամաճյանին սպանեցին ոչ թե դաշնակցականները, այլ թուրքական պաշտոնյաները և սպանեցին այն հաշվով, որ մարտնի իրենց յուրացրած մեծ գումարը, որի մասին գիտեր միայն հանգուց-

208 Տե՛ս «Մշակ», 1913, № 14, հունվարի 20։

209 «Մշակ», 1913, № 38, հունվարի 31։

210 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4924, դեկտեմբերի 21։

211 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5190, նոյեմբերի 18։

յալը[212]: Գափամաճյանի թաղումը նույնպես վերածվեց քաղաքական ցույցի: Ճառախոսները մի անգամ էլ ընդգծեցին հայության անապահով վիճակն ու պահանջեցին իշխանություններից՝ պատժել եղեռնագործներին և ստեղծել գույքյան նորմալ պայմաններ:

Հակառակ վանեցիների այդ պահանջի, կառավարությունը շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը: 1913 թ. օգոստոսի 27-ին ոստիկաններն Այգեստանում ատրճանակի կրակոցով գետին տապալեցին հայտնի ատամնաբույժ Մելքոն Տեր-Սաքոյանին: Դա առիթ ծառայեց նոր ալեկոծման: Բազմությունը դուրս եկավ փողոց և պահանջեց վերջ դնել հայակուլ քաղաքականությանը: Ատամնաբույժի թաղումը վերածվեց նոր ցույցի: Դագաղի ետևից գնում էր շուրջ 5000 մարդ: Մինչև գերեզմանատուն հասնելը նրանք 14 տեղ կանգ առան և ամեն անգամ արտասանեցին քաղաքական հառեր ու կոչեր: Կուսակալը դուրս բերեց 200 ոստիկան ըւ ժանդարմ և փորձեց ցրել ամբոխը: Բայց դրանով ավելի գրգռեց նրան: Հանդուցյալին հողին հանձնելիս վանեցիները, ինչպես հաղորդում է ականատեսը, «կրակ ու բոց խոսքերով բողոքեցին կառավարության ոճրագործ արարքների դեմ»[213]: Ապա բողոքներ հղեցին մայրաքաղաք. բազմահազար ստորագրողները պահանջում էին՝ պաշտոնազրկել կուսակալին, նրա ղինակիցներին, ոստիկանապետին և խստորեն պատժել մարդասպաններին: Այնուհետև նրանք փակեցին իրենց կրպակները, դադարեցրին առևտուրը շուկայում և սպասեցին Կ. Պոլսի պատասխանին: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Թահսիմ բեյը ձերբակալեց ոճրագործին և հանձնեց դատի, ապա փոխեց ոստիկանապետին ու փողոցում նշանակեց պարեկներ: Բայց Վանի հայերը աշխատանքը սկսեցին 5 օր հետո, հավատալով ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյի խոսքին, «թե ինքը կհետաքրքրվի դեպքերով»[214]:

Դիարբեքիրում 1908 թ. դեկտեմբերին հայերն ու թուրքերը պահանջեցին իջեցնել պարենամթերքների գները: Սակայն տեղական իշխանությունները մահմեդական հոգևորականների միջոցով գրգռելով թուրքերին հայերի դեմ, պատակոծին ու ճնշեցին շարժումը[215]: Վեց ամիս անց՝ 1909 թ. հունիսին այդ քաղաքի հայ ու թուրք բնակիչները

212 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 1300, ց. 29, գ. 96, թ. 8:

213 Նույն տեղում, թ. 202, տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1913, № 5161:

214 «Մշակ», 1913, № 205, սեպտեմբերի 18:

215 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, փետրվարի 5:

կրկին ըմբոստացան պարենամթերքների, հատկապես հացահատիկի բանկացման դեմ, պահանջեցին բացել վաճառականների հորերը և մատչելի գներով վաճառել նրանց հացահատիկը։

1914 թ. գարնանը դիարբեքիրցիները նորից ոտքի կանգնեցին, սակայն այս անգամ՝ ընդդեմ կառավարության հարկային քաղաքականության։ Համերաշխվելով այլ բաղաքների բնակիչների հետ, նրանք սոխրեցին իշխանություններին որոշ չափով թեթևացնել հարկային հարստահարումները[216]։

Էրզրումում 1909 թ. փետրվարին Սանասարյան դպրոցի սանները ըմբոստացան դպրոցում տիրող բարքերի դեմ և չներկայացան քննություններին[217]։ Երեք տարի անց՝ 1912 թ. սեպտեմբերին էրզրումի հայ ու թուրք բնակիչները պահանջեցին արմատախիլ անել ավազակությունն ու բանդիտիզմը, պաշտոնալրկել իրենց գործունկցիաները չկատարող կամ չարաշահող պաշտոնյաններին և ստեղծել կյանքի ու գույքի ապահովություն[218]։ Բայց էրզրումի ամենանշանավոր ելույթը բնակչության պայքարն էր կառավարության հարկային հարստահարության դեմ։ 1913 թ. սեպտեմբերին ֆինանսների մինիստրությունը կարգադրեց՝ հարկերը հավաքելիս նիկոլաևյան 100 ռուբլին ընդունել որպես 95 ռուբլի։ Քաղաքի արհեստավորները փակեցին իրենց կրպակները և ցույցի դուրս եկան։ Նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին կուսակալի մոտ և հայտարարեցին, որ եթե նիկոլաևյան դրամը չընդունվի իր լրիվ արժեքով, կառաջանա «մասսայական անկարգություն»։ Երկյուղ կրելով դեպքերի բարդացումից, կուսակալը արագորեն կայսվեց մեծ վնասների հետ և միջնորդեց ֆինանսների մինիստրության վերոհիշյալ կարգադրության վերացման մասին[219]։ Ջանցած երեք ամիս՝ 1913 թ. դեկտեմբերին էրզրումցիները ծառացան կառավարության այն նոր օրենքի դեմ, որով անշարժ ունեցվածքից գանձվող հարկերը մեծացվում էին երեք անգամ։ Սկզբում նրանք դիմեցին գերմանական հյուպատոսին՝ նրա միջամտությամբ վերացնելու հարկային այդ հարստահարումը։ Բայց տեսնելով նրա ցուցաբերած անտարբերությունը, դիմեցին թուրքական իշխանություններին, ապառնալով, որ եթե չվերաց-

---

216 Տե՛ս «Մշակ», 1914, № 64, մարտի 25։

217 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909 № 3751, փետրվարի 9։

218 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 43—90, էջ 8։

219 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, ց. 482, գ. 1648, թ. 163։

վի նոր օրենքը, «կբարձրացնեն հակակառավարական անկարգությունը»[220]։ Կառավարությունը ստիպված եղավ առժամանակ հետաձգել նոր օրենքի կիրառումը։ 1914 թ. գարնանը, երբ երիտթուրքերը նորից փորձեցին խստացնել հարկային հարստահարումը, էրզրումցիները դարձյալ դիմադրեցին, հայտարարելով, որ եթե կառավարությունը չհրաժարվի այդ քաղաքականությունից, կդիմեն Ռուսաստանի օգնությանը։ «Մշակը» գրում էր, որ քաղաքի բնակիչների «այս հայտարարությունը ճնշող ազդեցություն է գործել ղեկավար թուրք շրջանների վրա»[221]։

Խարբերդում դեռ 1909 թ. փետրվարի 18-ին քրիստոնյաներն ու մահմեդականները ըմբոստացան կուսակալ Նասրեդ փաշայի դեմ։ Նրանց մայրաքաղաք ուղարկած բողոքագրի մեջ նշված էր, որ կուսակալը, լինելով համիդյան պաշտոնյա, տակավին շարունակում է նախկին բարքերը՝ չարաշահում է իր պաշտոնը, զբաղվում է կաշառակերությամբ, կամայականորեն պաշտոնազրկում, անգամ բանտարկում է իրեն դուր չեկող անձանց և, ներգործելով դատավորների վրա, որոշել է տալիս իր ցանկացած վճիռը, որ Նասրեդ բեյը քաղաքային մեջլիսի ընտրություններ չի անցկացնում, պաշտոններում նշանակում է իր համախոհներին և այլն։ Բողոքագրի վերջում նրանք պահանջում էին՝ վերջ դնել կուսակալի «ապօրինի արարքներուն» և կարծելով, թե հռչակված սահմանադրությունը նախատեսում է դեմոկրատական լայն վերակառուցումներ, պատրաստակամություն էին հայտնում կյանքի գնով պաշտպանել այն[222]։ 1909 թ. հունիսի 5-ին ոտքի ելան Խարբերդի դաստառներն ու աշակերտները։ Նրանց շարժման մասին գիտենք միայն, որ ծնողները սկզբում դատապարտեցին երեխաների վարքագիծը, իսկ հետո, երբ քաջատեղյակ դարձան անցքերին, կանգնեցին նրանց պաշտպանության դիրքերում[223]։

Սովորողների ելույթն ավելի ցայտուն արտահայտվեց Կեսարիայում, ուր ս. Կարապետ վանքի վարժարանի սանները 1911 թ. մարտի 11-ին դասադուլ հայտարարեցին և պահանջեցին դեմոկրատական իրավունքներ։ Նրանք որոշել էին շարունակել դասադուլն այնքան ժամանակ, «մինչև որ գոհացում գտնեին»[224]։ Կեսարիայի սովորողների

220 Նույն տեղում, թ. 185։

221 «Մշակ», 1914, № 64, մարտի 25։

222 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3771, մարտի 5։

223 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 12, հուլիսի 6։

224 «Մշակ», 1911, № 99, մայիսի 12։

շարժումը տևեց մինչև մարտի 21-ը, բայց անհայտ է, թե ինչով վերջացավ։

Բիթլիսում 1910 թ. սկզբներին բնակիչները հավաքվելով կառավարչատուն, սպառնացին կուսակալին, որ եթե շարունակի իր բռնություններն ու կամայականությունները, ապա կծեծվի ու կվտարվի քաղաքից[225]։ 1912 թ. հունիսին ըմբոստացան կաշեգործները։ Կ. Պոլսի պատրիարքին հղած բողոքներում նշում էին, որ կառավարությունը փակելով գործատները, անտեսապես քայքայում ու աղքատության է դատապարտում նրանց, որովհետև «բազմաթիվ կիսավարտ մոլեր դուրս թափելով պիտի փտին, և մենք ապրուստի միջոցներն պիտի զրկվինք»[226]։

Սվազում 1912 թ. հունիսին «Շարք» ընկերության գործագործական ձեռնարկությունների բանվորները պահանջեցին վերացնել տնտեսական կեղեքումը, քաղաքական իրավազրկությունն ու սանձարձակ բռնությունները։ Նրանց գործադուլը տևեց մի քանի օր։ Գործագործները նյութապես օգնում էին իրար և կուռ պահում դիրքերը։ Սակայն կապիտալիստները, տեսնելով, որ նրանց միջոցները երկար չեն կարող բավարարել, չդիջեցին։ Եվ բանվորները, չգտնելով ուրիշ ելք, հարկադրված եղան կրկին դիմել վերատեսչին, որ սա «գործադուլավորներին նորից իր գործարանի մեջ առնի»[227]։

Երզնկայում 1911 թ. գարնանը մանուսայագործները[228] գործադուլ հայտարարեցին և պահանջեցին աշխատավարձի բարձրացում։ Բայց կապիտալիստները նրանց մեջ պառակտում առաջացրին, բարձրացրին մի մասի աշխատավարձը և լիկվիդացրին շարժումը[229]։ Երեք տարի հետո՝ 1914 թ. գարնանը երզնկացիները պայքարի դուրս եկան կառավարության հարկային հարստահարության դեմ։ «Հորիզոնը» մարտի 26-ին հաղորդում էր, որ Երզնկայում պետական հարկերից հրաժարվելու պատճառով «անկարգություններ են տեղի ունեցել»[230]։ Իսկ «Մշա-

---

225 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4033, հունվարի 28։

226 «Բյուզանդիոն», 1912, № 4774, հուլիսի 9։

227 Ս. Սապահ-Գյուլյան, նշված աշխ., էջ 332։

228 Մանուսան բամբակի զուլավոր կտոր է, որն իր անունն ստացել է Փոքր Ասիայի Մանիսա քաղաքից, որտեղ գլխավորապես դործվում էր (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, Երևան, 1944, էջ 255)։

229 Տե՛ս «Ազատամարտ», 1911, № 608, հուլիսի 21։

230 «Հորիզոն», 1914, № 65, մարտի 26։

կը» նշում էր, որ բնակիչները, բավարարություն չստանալով տեղական իշխանություններից, իրենց բողոքը հղել են մայրաքաղաք[231]։

Ավանցում 1912 թ. օգոստոսի 5-ին բռնկվեց 250 բանվորների գործադուլ, որոնք պահանջում էին նյութական դրության բարելավում և խիստ պատիժ Նեոպաթի օրենքը խախտողներին (համաձայն այդ օրենքի, այն նավն էր շուտ բեռնաթողվում, որը շուտ էր տեղ հասնում)։ Ականատես Մ. Հայկունին գրում էր. «Նավարարները միաձայնությամբ որոշում են մինչև վերջ տանել իրենց գործադուլը»[232]։

Բայազետում 1914 թ. մարտի 10-ին բնակիչները ըմբոստացան ղորակոչի դեմ։ Նրանք 400—500 հոգով հարձակվեցին կայմակամի, մութասարիֆի ու ոստիկանների վրա և ծեծեցին նրանց։ Ալեկոծված ամբոխը ղսպվեց ղորամասերի օգնությամբ։ Ձերբակալվեց 11 հոգի՝ որպես շարժման ղեկավարներ ու առավել ակտիվ մասնակիցներ, և փողոցներում նշանակվեցին պարեկներ[233]։

1909 թ. գարնանը Ակնի բնակիչները բողոքեցին աղանների վայրագությունների դեմ և պահանջեցին կուսակալից ստեղծել անձի ու գույքի ապահովություն։ Բայց կուսակալը ճնշեց շարժումը և պատասխանատվության կանչեց կազմակերպիչներին ու ակտիվ մասնակիցներին[234]։

Նույն թվականի ամռանը Քղզիի քրիստոնյաներն ու մահմեդականները ծառացան հայահատիկի սպեկուլյացիայի դեմ և պահանջեցին իջեցնել գները։ Ականատեսներից մեկը գրում էր, որ եթե կառավարությունը չկանխի, ապա «մեծ-մեծ ցույցեր և խոշոր անտեղություններ անխուսափելի են։ Վաշխառու մյուլթեզիմներ մեծագույն խոհեմություն ըրած պիտի ըլլան՝ տեղի տալով ժողովրդի արդար բողոքներուն»[235]։

Բաբերդում 1910 թ. փետրվարին հայերն ու թուրքերը փորձեցին վռնդել կայմակամին ու նրա տեղակալներին, սակայն կուսակալը ճնշեց այդ ելույթը[236]։

1914 թ. Արճեշի քրիստոնյաներն ու մահմեդականները դիմադրավեցին կառավարության հարկային հարստահարության ստատիստիկա-

---

231 Տե՛ս «Մշակ», 1914, № 64, մարտի 25։

232 «Աշխատանք», 1912, № 39—86, էջ 4։

233 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 149, թ. 28, ՌԱՔՄ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», գ. 1606, թ. 16, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 719, թ. 384։

234 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 36, օգոստոսի 4։

235 «Ազատամարտ», 1909, № 57, օգոստոսի 28։

236 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 10։

նը։ Բայց տեղական իշխանությունները ճնշեցին նրանց շարժումը, մասնակիցների մեջ պատակտում մտցնելու՝ թուրքերի հարկերն իջեցնելու և հայերինը ավելի բարձրացնելու ճանապարհով[237]։

Որոշ դեպքերում Արևմտյան Հայաստանի մի քաղաքի բնակիչների ելույթը արձագանք ու պաշտպանություն էր գտնում մյուս քաղաքների բնակիչների կողմից։ Այսպես, երբ 1912 թ. սեպտեմբերին Շաբին Կարահիսարի հայերը պահանջեցին թուրքական պառլամենտից պաշտոնաղրկել ներքին գործերի մինիստր Դանիշ բեյին, Վանի, Ամասիայի, Բարերդի և այլ քաղաքների բնակիչները պաշտպանեցին նրանց պահանջը և, դիմելով պատրիարքարան, խնդիր դրեցին բարձրացնել այդ հարցը իթիլաֆական կառավարության առաջ[238]։

Անհրաժեշտ է նշել, որ բացի Արևմտյան Հայաստանից, թուրքական բռնությունների դեմ հանդես էին գալիս նաև կայսրության մյուս քաղաքների հայերը։ Այդ տեսակետից աչքի էին ընկնում հատկապես կոստանդնուպոլսեցիները, որոնք օրգանապես կապված լինելով գավառի հետ, հաճախ ցույցեր էին կազմակերպում և պահանջում հայ բնակչության վիճակի բարելավում։ Նրանց ցույցերը ակտիվ բնույթ ստացան հատկապես 1912 թ. ամռանն ու աշնանը, երբ իթիլաֆականների պետական հեղաշրջման հետևանքով երիտթուրքերի իշխանությունը տապալվեց։ Մայրաքաղաքի հայերը սովորաբար դիմում էին պատրիարքարան և պահանջում, որ նա թուրքական կառավարության հետ գործուն բանակցություններ վարելու ճանապարհով հասնի իրենց պահանջների իրականացմանը։ 1912 թ. օգոստոսի 25-ին «Մշակը» գրում էր, որ Կ. Պոլսի «ամեն թաղերեն հավաքված խուռն բազմություն մը, մեծ մասամբ գավառացիներե բաղկացած, եկած էր ազգային ժողովին նիստին ներկա ըլլալու և անկե պահանջելու համար, որ դարման տարվի գավառացի ազգայնոց դժբախտ վիճակին... ժողովրդային հուզման այս նշանը խաղաղ ցույցի մը հանգամանքը առավ, և կը հուսացվի, որ իր ազդեցությունը պիտի ունենա ապահովաբար օսմ. կառավարության վրա»[239]։ Ցուցարարների ճնշման տակ պատրիարքարանը դիմում է ներքին գործերի մինիստր Դանիշ բեյին, որը, սակայն, ցինիկաբար պատասխանում է, թե հարստահարությունները եթե չլինեին, կառավարության կարիքը չէր զգացվի և առաջարկում է նման

237 Տե՛ս «Աշխատանք», 1914, № 20—166, էջ 4։

238 Տե՛ս «Մշակ», 1912, № 206, սեպտեմբերի 19։

239 «Մշակ», 1912, № 194, սեպտեմբերի 2։

խնդրով այլևս չանհանգստացնել իրեն[240]*: Միևիսարի այդ պատասխանն ավելի է պայթացնում մայրաքաղաքի հայությանը, որը հանդես է գալիս նոր ցույցերով: Ուշագրավ է, որ Կ. Պոլսի հայերի այդ ցույցերը արձագանք են գտնում ոչ միայն Բուրբիայի հայաբնակ քաղաքներում, այլև արտասահմանում: 1912 թ. օգոստոսի 30-ին «Մշակը» գրում էր. «Արտասահմանի և գավառի հայերը ավելի սրտապնդող երևույթի մը ականատես ըրին գիտը: Սոֆիայի և Ալեքսանդրիոյ, Ջմյուռնիայի, Պարտիզակի, Օվաջըկի, Ռոստոստոյի միտինգները պատրիարքարանին դիմումներուն մեծապես ուժ կուտային և կը միտեին ապացուցանելու, թե պատրիարքարանին աղմուկը արվեստական չէր, այլ բուն ժողովըրդային պահանջման հետևանք»*[241]*:*

Այդ զանգվածային բողոքներից հետո իթիլաֆական վարչապետ Ղազի Մուխթար փաշայի առաջարկությամբ նիստին գործերի մինիստրը, Վանի, Բաղեշի, Խարբերդի, Կեսարիայի, Նիկոմիդիայի և այլ նահանգների կուսակալների մասնակցությամբ, 1912 թ. սեպտեմբերին հրավիրեց խորհրդակցություն, ուր որոշվեց լուծել Հայերի հողային հարցը ոչ թե դատական, այլ վարչական եղանակով[242]*: Դա, իհարկե, նոր չէր, այլ հին որոշման կրկնություն, որը, ունենալով սոսկ դեմագոգիկ նշանակություն, չիրագործվեց կյանքում:*

Այդպիսով, Արևմտյան Հայաստանի քաղաքների աշխատավորները, պայքարելով հիմնականում Բուրբական կառավարության ազգային ու սոցիալական ճնշումների դեմ, որոշ չափով հանդես էին գալիս նաև ընդդեմ կապիտալիստական շահագործման ու վաշխառուական հնդկությունների: Մի շարք տեղերում այդ շարժումները ստանում էին ինտերնացիոնալ բնույթ, ընդգրկելով տարբեր ազգությունների աշխատավոր զանգվածներին: Սակայն դրանք մասնակի երևույթներ էին: Որպես կանոն արևմտահայ քաղաքային բնակչության պայքարը մնում էր մենակ, բռնկվում էր տարերայնորեն և, հասնելով որոշ հաջողությունների, սովորաբար ավարտվում էր պարտությամբ:

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Երիտթուրքական կարգերի դեմ ըմբոստացավ նաև արևմտահայ բազմահազար գյուղացիությունը: Նրա պայքարն արտահայտվեց ամե-

---

[240] *Տե՛ս «Մշակ», 1912, № 197, սեպտեմբերի 6:*

[241] *«Մշակ», 1912, № 200, օգոստոսի 30:*

[242] *Տե՛ս «Մշակ», 1912, № 205, սեպտեմբերի 16:*

նատարբեր ձևերով՝ բողոքներով ու դանդաղներով, հարկերից հրաժարվելով ու խուսափելով, ակտիվ ընդվզումներով ու ելույթներով։ Դրանցից ամենատարածվածը բողոքներն ու դանդաղներն էին, որոնք աճում էին տարեցտարի և ընդունում ավելի մասսայական բնույթ։ 1910 թ. «Բյուզանդիոնը» նշում էր, որ ժողովրդական արդար բողոքները «հնազհետե սկսած են ծայր տալ արդեն երկու տարիի ի վեր ամենուրեք»[243]։ «Մշակը» 1912 թ. գրում էր, որ մինչև 1910 թ. միայն հողային հարցի մասին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը ստացել է 7000 խնդրագիր, 1911 թ. ստացավ ևս 3000 խնդրագիր. այժմ «այդ թիվը գնալով աճում է»[244]։

Այդ բողոքներում գյուղացիները պատմում էին իրենց դառն անցյալի ու ոչ երջանիկ ներկայի մասին և առաջարկում բարելավել իրենց դրությունը։ Օրինակ, Բիթլիսի գավառի գյուղացիները 1908 թ. սեպտեմբերի կեսերին երիտթուրքական կոմիտեին հղած իրենց բողոքագրում պահանջում էին ոչնչացնել մարաբայությունն ու սալաֆությունը, վերադարձնել սուլթան Աբդուլ Համիդի տիրապետության տարիներին իրենցից բռնագրաված հողերը, պետական միջոցներից գյուղացիներին սերմացու տալ առանց տոկոսների, դադարեցնել հարկերի հավաքումը և թահսիլդարներին ետ կանչել գյուղերից, ոչնչացնել ապառքները, բացել արդյունաբերական ձեռնարկություններ և այդ հանապարհով կանխել հայերի տարագնացությունը, «բացառիկ օրենքով պատժել Ղասըմ բեգը, Րիզա բեգը, շեյխ Սևիդ, Քեռու Հյուսնին փաշաները և նման ավազակները», անհապաղ հանձնաժողով ուղարկել և լուծել հողային հարցը, «տալ վիլայեթներին կարուկ հրահանգներ՝ բացառիկ օրենքով ավազակները, հափշտակիչները, կողոպտիչները, մարդասպանները պատժելու, գրաված թալանը, հողերը ետ դարձնելու, քանի որ դատարանները անկարող են, անկանոն, և ժողովրդի գանգատները մնում են միշտ առանց հետևանքի»[245]։ Դրանք, ըստ էության, հեղափոխական նշանակություն ունեցող պահանջներ էին։

Գյուղացիական շարժումները ավել կամ պակաս չափով տարածված էին Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր գավառներում։ Խոսենք դրանց մասին առանձին-առանձին։

Մուշի գավառում հեղափոխությունից անմիջապես հետո վերա-

---

213 «Բյուզանդիոն», 1910, № 4226, սեպտեմբերի 19։

214 «Մշակ», 1912, № 96, մայիսի 8։

215 «Դործ», 1908, № 28, հոկտեմբերի 14։

դարձած բազմաթիվ տարագիրներ պահանջեցին իրենց հողերը։ 1909 թ. «Ազատամարտը» հաղորդում էր. «Երեսուն հազարն ավելի հայ գաղթականները լեցված են այս պահուս Մուշի և Պուլանըքի շրջանին մեջ, նախկին տերերը այդ երկրին աս ու ան դյուղին ու հողերուն, և կանգնած են՝ ձեռքերնին իրենց ծոցը, մի՛րկ, անո՛թի ու անգո՛ծ»[246]։ Ինքը մի այլ առիթով նշում էր, որ նրանք դիմեցին դատարան, ցույց ավեցին անգամ թափունները, սակայն «միշտ ու ամեն պարագայում «անարդար» ու «անիրավ» կը նկատվին»[247]։

Չնայած դրան, դյուղացիները շարունակեցին պայքարել իրենց հողերի համար։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, նրանք մեկնում էին Թուրքական վարչական կենտրոնները, դիմում իշխանություններին և հայոց հոգևոր առաջնորդարանին։ 1910 թ. դեկտեմբերին Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես Խարախանյանը գրում էր պատրիարքին. «Ձմեռն իր բոլոր խստություններով չկրցավ արգիլել ասկե անկե և օտար երկրներե վերադարձող գաղթական հայեր, որ իրենց հափշտակած տուն ու տեղի, արտ ու այգիի համար չդիմեն առաջնորդարան և պաշտպանություն չխնդրեն իրենց իրավունքը ձեռք բերելու համար»[248]։

Մուշի գավառի Չխուրի նահիևում դյուղացիները ձգտում էին ազատվել Կասըմ բեյի բռնություններից։ Սակայն Թուրքական պաշտոնյաները անտարբերություն էին մատնում նրանց բողոքները։ 1908 թ. դեկտեմբերի 5-ին չխուրցիները գրում էին. «Մեր բողոքը, մեր ճիչն ու աղաղակը Կասըմ բեկի համար երկինք հասավ, իսկ մեր քիի տակ եղած տաճիկ կառավարության ականջին չը հասավ»[249]։

Օգտվելով իշխանությունների անտարբերությունից և հովանավորությունից, Կասըմ և Մուսա բեյերը ավելի սաստկացրին դյուղացիների կեղեքումներն ու հալածանքները։ Բայց նրանց այդ վարքագիծը չընկճեց դյուղացիներին, որոնք շարունակեցին պայքարը նաև հետագա տարիներին։ 1913 թ. օգոստոսի 7-ին «Մշակը» գրում էր, որ մի շաբաթ առաջ «շատ հուդված վիճակ մը կը տիրեր Տարոնո դաշտի Չխուրի մասը... Հայկական բողոքները մասսայական դարձան... Մշեցին և Մուշի առաջնորդարանը խստիվ բողոքել սկսան տեղական կառավարության մոտ։ Չարիքներու վայրի անուղղակի պատասխանա-

246 «Ազատամարտ», 1909, № 128, նոյեմբերի 22։

247 «Ազատամարտ», 1909, № 67, սեպտեմբերի 10։

248 «Բյուզանդիոն», 1910, № 4032, հունվարի 27։

249 «Գործ», 1908, № 89, դեկտեմբերի 27։

տուն տխրահռչակ Հաջի Մուսա և Կասըմ բեյերն են։ Բոլորի համոզմունքն այն է, որ առանց այդ բեյերու դրդման՝ ծառուն տերև մը իսկ չի շարժիր»[250]։ Բնակչության մասսայական բողոքների ճնշման տակ իշխանությունները ոստիկաններ ու պինվորներ ուղարկեցին Չխուր, որոնք, սակայն, ավելի վատթարացրին նրա վիճակը։

Մուշի գավառի որոշ վայրերում գյուղացիները պայքարի պասիվ ձևերից անցնում էին ակտիվ եղանակներին և փորձում իրենց ուժով լուծել հողային հարցը։ Այդպես վարվեցին, օրինակ, Սասունի գավառակի Խութ գյուղախմբի Թաղավանք գյուղի հայերը։ 1911 թ. գարնանը նրանք հրաժարվեցին աղայի պարտուքներից և փորձեցին վնդել նրան գյուղից։ Սակայն աղան մայիսի 11-ին ողջակիզեց քահանա տեր-Սարգսին, գլխատեց ռևսին և մաշկեց ուստա Ջաթոյին, որոնք, կանգնելով իրենց համագյուղացիների պայքարի ավանգարդում և բողոքելով նահանգական պաշտոնյաներին, Բիթլիսից գյուղ էին վերադառնում։ Չբավարարվելով դրանով, աղան սպանեց նաև հորը որոնող քահանայի որդուն՝ նրա հինգ ընկերների հետ միասին և գյուղացիներին ահաբեկելու համար ուղարկեց նրանց բոլորի դիակները Թաղավանք, պատվիրելով հայտնել բնակիչներին՝ «Քանի որ դուք կուզեք ձեր գյուղն մեզ հանել, այս կըլլա ձեր վարձատրությունը»[251]։

Աղայի այդ հրեշավոր ոճրագործությունն ավելի բորբոքեց գյուղացիներին։ 1911 թ. հունիսին նրանք լցվեցին Բիթլիս և պահանջեցին պատժել հանցագործին։ Երիտթուրքական պաշտոնյաները ստիպված կալանավորեցին աղային, փակեցին Բիթլիսի բանտում, ուր նա մահացավ։ Գյուղացիներին թվաց, որ արդեն ազատված են աղայական լծից։ Բայց 1912 թ. հուլիսի 6-ին աղայի պինակիցներից մեկն իր խմբով ներխուժեց Թաղավանք և փորձեց ենթարկել այն իր իշխանությանը։ Գյուղացիները համառորեն դիմադրեցին։ Կռիվը տևեց մինչև ուշ գիշեր։ Եղան մարդկային զոհեր[252]։ Գյուղացիները դիմեցին թուրքական պաշտոնյաների օգնությանը, սակայն սրանք առաջարկեցին կատարել աղայի պահանջները[253]։ Թաղավանքցիները մերժեցին և շարունակեցին պայքարը։ Ի վերջո 1913 թ. պարտվեցին և տեղի տվե-

250 «Մշակ», 1913, № 207, սեպտեմբերի 20։

251 «Բյուզանդիոն», 1911, № 4454, հունիսի 21։

252 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4797, 4809, օգոստոսի 20։

253 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4809, օգոստոսի 20։

ցին[254]: Այդուհանդերձ նրանց պայքարը մի նշանավոր էջ էր Արևմտյան Հայաստանի գյուղացիական շարժումների պատմության մեջ:

Մուշի գավառում աղայական լուծը թոթափելու և իրենց հողերը ետ նվաճելու համար 1910—1914 թթ. ակտիվ պայքար էին սկսել նաև Մաղազում, Ղշլադում, Պաղըքան, Հասանովա, Սրբիոնք, Գրոնք, Մաունիկ, Երիզակ, Սվրան, Սվզոտ, Քրթամանք, Աղբի և այլ գյուղերի բնակիչները: Սակայն նրանց պայքարը Թուրքական իշխանությունների վարած քաղաքականության պատճառով ունեցավ մասնակի հաջողություն[255]:

Սղերդի գավառում գյուղացիական շարժումը ցայտուն արտահայտվեց Ողմում: Այս գյուղն ուներ 100 տնտեսություն և շրջապատված էր բազմաթիվ քրդական բնակավայրերով: Սկսած 15-րդ դարից այն մաքառում էր իր անկախության համար և պայմանների բերումով մերթ հաղթում էր, մերթ պարտվում: Աբդուլ Համիդի կառավարման տարիներին Բարվարի ու Տննիսի (կամ Տինիսի) աղանները վերջապես կարողացան իրենց լուծը դնել ողմցիների վրա[256]:

1908 թ. հեղափոխությունից հետո Ողմի գյուղացիները ոտքի կանգնեցին և վերականգնեցին իրենց ազատությունը: Սակայն աղաները չհաշտվելով կրկվել Ողմից, կազմակերպեցին նրա դեմ երկու արշավանք՝ մեկը 1908 թ. հուլիսին, մյուսը՝ 1909 թ. մայիսին: Առաջին անգամ սպանեցին յոթ մարդ, իսկ երկրորդ անգամ ստացան արժանի հակահարված ու ետ շպրտվեցին: Ողմը պահեց իր անկախությունը: 1909 թ. մայիսի Շատախի Հայտնի ավերիչ Միր Մհեն նոր հարձակում կազմակերպեց Ողմի վրա: Գյուղացիները համառ դիմադրություն ցույց տվին, բայց պարտվեցին և բռնակալի վրեժխնդրությունից խուսափելու համար ցրվեցին Մոկսի գյուղերում: Որոշ ժամանակ անց վերադարձան Ողմ ու ծխացրին պապենական օջախները: Սակայն 1912 թ. ամռանը նրանք ենթարկվեցին Խիզանի տիրակալ շեյխ Սեիդ Ալիի հարձակմանը: Տևողելով թշնամու գերազանց ուժը, գյուղացիները ստիպված իրենց կանանց ու երեխաներին ուղարկեցին Բարվարի

---

254 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 492, դ. 546, թ. 228:

255 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4427, մայիսի 19, 1911, № 4529, սեպտեմբերի 19, 1912, № 4705, 4813, 1913, № 5016, ապրիլի 23, № 5062, հունիսի 18, № 5044, մայիսի 28, «Մշակ», 1913, № 137, 143, 100, 104, «Աշխատանք», 1912, 33—80, էջ 6—7, «Աղաւամարտ», 1914, № 1535, հունիսի 24:

256 Տե՛ս «Հայրենիք», 1923, № 11, էջ 129:

բարեկամ քրդական գյուղերը, իսկ իրենք բարձրացան սարերը, ամրացան կիրճերում ու խորխորատներում և պարտիզանական կռիվ մղեցին շեյխի ուժերի դեմ: Նահանգական իշխանությունները սկզբում վարեցին «չմիջամտելու» քաղաքականություն, ապա տեսնելով, որ շեյխն արդեն թալանել ու ավերել է Ոզմը, հանեցին նրան այնտեղից, իսկ գյուղացիներին նո վերադարձրին: 1913 թ. մայիսի կեսերին շեյխ Սեիդ Ալին նոր հարձակում ձեռնարկեց Ոզմի վրա: Գյուղացիները հերոսաբար դիմադրեցին և մեծ զոհերի գնով պահեցին իրենց անկախությունը մինչև մեծ եղեռնը[257]:

Սղերդի գավառում քուրդ աղաների դեմ պայքարում էին նաև Հողպորն, Հաղզո, Զենզեկ, Ալին, Սիրուս, Ալով հայաբնակ գյուղերը: Նրանք հարյուրավոր բողոքագրեր ուղարկեցին Թուրքական իշխանություններին, ուր ցույց էին տալիս աղաների ոճրագործությունները, բողոքի գնացին գավառական ու նահանգական կենտրոններ, հայտարարեցին, որ նո չեն վերադառնա, «մինչև որ այդ չարագործները չձերբակալվին»[258]: Սակայն արդյունքի չհասան:

Խլղանում գյուղացիները դուրս եկան շեյխ Սեիդ Ալիի դեմ և, մատնանշելով նրա կատարած անթիվ սպանությունները, կեղեքումներն ու հարստահարումները, պահանջեցին ձերբակալել ու աքսորել: Այդ պահանջը Բիթլիսի իշխանություններին ներկայացրին 78 հայկական գյուղերի 80 ներկայացուցիչներ: Նրանք դիմեցին նաև մայրաքաղաք: Ահա թե 1908 թ. նոյեմբերի 8-ին Բիթլիսից ինչ էին հաղորդում. «Սեիդ Ալիի ձերբակալման վրա ամեն կողմից բողոքներ թափվեցան այստեղ, Խլղանի, Շինձորի, Սպարկետի, Մամռատանքի, Նազարի, Խորոսի, Տատիկի և Կարկառի բոլոր հայ գյուղերից. բողոքեցին կուսակալին, դատարաններին, պատրիարքարան, Սելանիկի կոմիտեին, ներքին գործոց նախարարության, բողոքեցին և մամուլի միջոցով: Ջանադան ըվականներու և նույնիսկ սահմանադրության հռչակումից վերջ Սեիդ Ալիի և իր ծառաներու ձեռքով կատարված սպանությունները, թալանն ու կողոպուտը, հափշտակություններն ու բռնի գրավումները մի առ մի անհերքելի փաստերով ապացուցեցին, շաբաթներ շարունակ քաշ եկան կառավարության դռները, սոված, մերկ, անտուն, անբուն: Բայց... ոչ մի պատասխան, ոչ մի արդյունք չունեցավ այս ընդհանուր բողոքը...»[259]: Տեսնելով իշխանությունների անտարբերությունը, գյուղացի-

257 Տե՛ս «Վան-Տոսպ», 1913, № 21, էջ 250, «Հայրենիք», 1923, № 11, էջ 129:

258 «Բյուզանդիոն», 1913, № 5012, ապրիլի 18:

259 «Գործ», 1908, № 66, նոյեմբերի 28:

նները «վերադարձան իրենց տները»։ Սակայն մի բանիսը մնացին Բիթլիսում և շարունակեցին բողոքել։ Այն ժամանակ Թուրքական պաշտոնյաները օգտագործեցին այդ առիթը, շեյխից կաշառք վերցրին 2000 ոսկի, իսկ գյուղացիներին հայտարարեցին, թե չգանվեցին հիմնավոր փաստեր նրա ձերբակալման համար[260]։

Բայց գյուղացիները չհանգստացան և վերսկսեցին պայքարը։ 1911 թ. Մամռատանքի բնակիչ Մարտոն իր համագյուղացիների հետ միասին «հույսը դնելով սահմանադրության վրա, մինչև Բիթլիս գնաց բողոքելու շեյխ Սեիդ Ալիի բռնությունների դեմ»[261]։ Սակայն Բիթլիսի պաշտոնյանները ձերբակալեցին նրանց որպես խռովարարների։ Այս դեպքից հետո գյուղացիները ավելի հիասթափվեցին սահմանադրությունից։ Նրանք Աղթամարի առաջնորդին գրում էին, թե սահմանադրության հռչակումով հայտարարվեց ազգերի հավասարություն ու բռնակալության վերացում, սակայն «բանն դուրս եկավ, որ մենք չափազանց սխալվել ենք, որ երկիրը նախկին քանդված երկիրն է, պաշտոնյան՝ կաշառակեր, պետն ու ազան՝ բռնակալ»[262]։

Տեսնելով իշխանությունների այդ վարքագիծը, Խիլանի գյուղացիները հաճախ իրենք էին կազմակերպում իրենց ինքնապաշտպանությունը։ Այսպես, 1910 թ. ամռանը Թացու կամ Թասու գյուղի հայերը հակահարված հասցրին քուրդ աշիրեթապետին և ոչնչացրին նրա հրոսակներին։ Սակայն Թուրք պաշտոնյանները ձերբակալեցին ութ Թասուցիների։ Երկյուղ կրելով հալածանքներից, բանտարկվածների համագյուղացիները Թողնցին իրենց ծննդավայրը և փախան Գավաշ[263]։

Արճակի գավառում աղայական լծի դեմ ակտիվ ելույթ ունեցան Մանդան գյուղի հայերը։ 1909 թ. ամռանը նրանք ետ պահանջեցին Սայիդ բեյից իրենց հողերը։ Թուրքական իշխանությունները հարցի լուծումը նախ ձգձգեցին, իսկ հետո «մոռացության» տվին։ Այն ժամանակ մանդանցիները վռնդեցին բեյին։ Վերջինս 1912 թ. աշնանը հարձակվեց գյուղացիների վրա և տարավ նրանց հոտերը։ Բայց մանդանցիները հետապնդեցին նրան, սպանեցին աղայի հրոսակախմբի երկուսին, երեքին վիրավորեցին և իրենց հոտերը ետ բերեցին[264]։

260 Տե՛ս նույն տեղում, նաև «Հորիզոն», 1910, № 192։

261 «Աշխատանք», 1911, № 34, էջ 4։

262 Նույն տեղում։

263 Տե՛ս «Մշակ», 1910, № 178, օգոստոսի 3, 1913, № 184, օգոստոսի 3։

264 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3906, օգոստոսի 28, 1911, № 4460, 1912, № 4904, 1913, № 5054, «Աշխատանք», 1912, № 1—97, էջ 8։

Արճակի գավառում աչքի ընկավ նաև խառակոնիսցիների ելույթը։ 1913 թ. Հունիսի 5-ին նրանք պատշաճ հակահարված հասցրին թալանելու նպատակով իրենց վրա հարձակվող աղայական ավազակախմբին։ Գավառի մուդիրի տեղակալը փոխանակ հանցագործներին հայտնաբերելու և պատժելու, ձերբակալեց գյուղացիներին։ Ձայրացած խառակոնիսցիները վերցրին իրենց կանանց ու երեխաներին, մեկնեցին Վան և պահանջեցին. «կամ իրենց զենքերուն ու մարդերուն վրա տարածքը և իրենց կյանքն ու ստացվածքը պաշտպանելու հնարավորություն և կամ գաղթելու միջոց»[265]։ Կուսակալը հրամայեց վռնդել գյուղացիներին։ Սակայն խառակոնիսցիները համառեցին և տուն վերադարձան միայն այն ժամանակ, երբ վալին խոստացավ դրական լուծել նրանց պահանջը, բայց նա չկատարեց իր խոստումը[266]։

Արճակի գավառում իրենց ունեցվածքի պաշտպանության համար կռիվներ մղեցին նաև պողպատիսցիները, հաղթըցիները և ուրիշներ։

Կարճկանում գյուղացիական ամենանշանավոր շարժումը տեղի ունեցավ Ուրանցում։ Այս գյուղը դեռ 80-ական թվականներին իր բարեկեցությամբ գրգռում էր Կեցանի Մուսա բեյի ախորժակը։ Սակայն գյուղացիների համառ դիմադրության պատճառով նա մնում էր ձեռնունայն։ 90-ական թվականների հայկական ջարդերի ժամանակ Մուսա բեյը ավերեց Ուրանցը։ Ականատեսը պատմում է, որ այդ գյուղում «հազարավոր ոչխարներեն հատ մը չմնաց, տավար չի մնաց, ոնեռու մեջ թաղիք, պղինձ, արմտիք, կոտրած տուշտ մը իսկ չմնաց, և, որ ամենածանր հետևանքը ունեցավ, այդ տարի վար ու ցանք չեղավ Ուրանցի արտերու մեջ»[267]։ Չնայած այդ ամենին, Ուրանցը կարողացավ պահել իր անկախությունը նաև 90-ական թվականների հայկական կոտորածներից հետո։ 1902 թ. գյուղն ուներ 100 տնտեսություն, որոնք երկրագործության հետ մեկտեղ զբաղվում էին նաև անասնապահությամբ, արհեստագործությամբ և մեղվապահությամբ։ 1908 թ. հեղափոխությունից հետո քուրդ աղանները, հատկապես Մամոն ու Պրահիմը, Ուրանցը նվաճելու նոր փորձեր կատարեցին։ 1913 թ. նրանք հարձակվեցին գյուղի վրա, բայց ետ շպրտվեցին։ 1913 թ. հու-

---

265 «Բյուզանդիոն», 1913, № 5080, հուլիսի 9, տե՛ս նաև «Վան-Տոսպ», 1913, № 20, էջ 240, «Մշակ», 1913, № 135, հունիսի 22։

266 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5195, նոյեմբերի 24, «Մշակ», 1913, № 162, հուլիսի 26։

267 Մալխաս, Ճամփուս վրա, Հ. Ա, Նյու-Յորք, 1950, էջ 149։

ծնցին հարկահանին ու սպառնացին նրան, թե կսպանեն, եթե փորձի մի անգամ էլ երևալ։ Վախենալով խռովության տարածումից, պաշտոնյանները պատժիչ ջոկատներ ուղարկեցին Զիթող[306]։

Շատ հաճախ գյուղացիները պայքարում էին աշարի իրավունքի աճուրդի դեմ, քանի որ մյուլթեզիմները, վարձակալելով այն, ուղղակի կեղեքում էին նրանց։ Օրինակ, Մուշի ու Բիթլիսի գավառների բազմաթիվ գյուղացիներ 1909 թ. աշնանը պահանջեցին, որ «ասպարիզ չտրվի մյուլթեզիմներու ծանոթ կեղեքումներուն»[307]։ 1913 թ. նույնպիսի պայքար ծավալեցին նաև Վանի գավառի գյուղացիները, պահանջելով իրենց տալ աշարի հավաքման իրավունքը նույն գնով, ինչ որ կապալառուներին։ Սակայն իշխանությունները մերժեցին[308]։

Բացի աշարից, գյուղացիները հրաժարվում էին նաև այլ հարկերից։ 1909 թ. Բաբերդում նրանք չվճարեցին բեդելի ասկերին դինվորական հարկը և հայտարարեցին, որ իրենք դրա փոխարեն պատրաստ են ծառայել բանակում։ Սակայն իշխանությունները ճնշեցին գյուղացիների դիմադրությունը և ձերբակալեցին դեկավարներին[309]։ Այդպիսի ընդվզումներ տեղի ունեցան նաև երկրի այլ շրջաններում։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Երեկ դարձյալ խել մը հետագիրներ և նամակներ հասան պատրիարքարան զինվորական տուրքի խնդրոյ վերաբերյալ... բոլոր գավառներեն նյած խնդիրքը միևնույն ձևն ունի և ամենքն ալ կհայտնեն, թե պատրաստ են զինվոր տալու, բայց տուրք չեն կրնար վճարել»[310]։

Արևմտահայ գյուղացիները ծառանում էին նաև կառավարական պարհակների դեմ։ Նրանք հրաժարվում էին ճանապարհների, կամուրջների և զանազան շենքերի կառուցումներից, վոնդում էին իրենց գյուղերում իջևանող պաշտոնյաներին, ոստիկաններին ու զինվորներին։ 1909 թ. դեկտեմբերին Ալաշկերտի Զեյտիկան գյուղի բնակիչները հրաժարվեցին թուրքական զորամասերի ռազմամթերքների տեղափոխման պարհակից, որի հետևանքով տեղի ունեցավ լուրջ ընդհարում։ Զինվորները ծեծեցին գյուղացիներին[311]։ Կուսակալը պատժիչ ջոկատ

---

306 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1911, գ. 2680, թ. 20, ֆ. «Քաղաքական», 1911, ց. 482, գ. 1647, թ. 23։

307 «Ազատամարտ», 1909, № 45, օգոստոսի 14։

308 Տե՛ս «Մշակ», 1913, № 195, սեպտեմբերի 5։

309 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3763, փետրվարի 24։

310 «Բյուզանդիոն», 1909, № 3776, մարտի 11։

311 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3992, դեկտեմբերի 9։

ցիներն իրենց տուն ու տեղով, տեղս թափված են 8—10 օրե ի վեր»[271]: Յավոք չգիտենք, թե ինչով վերջացավ գյուղացիների պայքարը:

1909 թ. դեկտեմբերի 11-ին Հաջի Հասան աղան, երբ փորձեց բռնագրավել Արճեշի Հասպիսնակ գյուղի հողերը, հանդիպեց գյուղացիների համառ դիմադրությանը: Նրանք ոչ միայն կարողացան պահել իրենց հողերը, այլև ստիպեցին թուրքական պաշտոնյաներին ձերբակալել մի քանի հանցագործ քրդերի[272]: Սուր բնույթ ընդունեց նաև գավառի Չնկրեկ գյուղի բնակիչների ելույթը: 1912 թ. հունիսի 4-ին նրանք կռվի դուրս եկան իրենց անասունները հափշտակող քրդական ցեղապետների դեմ և վռնդեցին նրանց գյուղի սահմաններից[273]:

Ադիլջևազում կամ Ալջավազում գյուղացիները ծառացան տխրահռչակ Քյոռ Հյուսեին փաշայի դեմ, որը համիդյան տիրապետության տարիներին բռնագրավել էր նրանց հողերը: 1908 թ. սահմանադրությունից հետո գյուղացիական բազմաթիվ խմբեր գնացին Վան, բողոքեցին իշխանություններին և պահանջեցին իրենց հողերը: Միաժամանակ նրանք կուսակալին ներկայացրին Հյուսեին փաշայի կատարած բազմաթիվ ոճրագործությունների ցուցակը: 1909 թ. փետրվարի 16-ին «Բյուզանդիոնը» գրում էր. «Բողոքագիրներ տրվեցան ուղղակի դատարանին, ամբաստանելով Հյուսեին փաշան տասնե ավելի մարդասպանության, բազմաթիվ թալանների և հափշտակության և մեծագումար դրամներու, արմտյաց, անասուններու, ինչպես նաև հողերու բռնի յուրացման խնդիրներու մեջ: Հետզհետե ուրիշ բողոքներ ալ կհասնին Վանա ու Կարնո նահանգներուն զանազան գավառակներու հայ, թուրք ու քյուրդ բնակիչներեն, որոնց նախնական քննությունը սկսված է հարցաքննիչ դատավորին առաջ»[274]: Երիտթուրքերը գյուղացիների զանգվածային բողոքների ճնշման տակ, ինչպես ասվեց, ձերբակալեցին Քյոռ Հյուսեին փաշային, սակայն կարճ ժամանակից հետո վերստին աղատ արձակեցին[275]: Իշխանությունների այդ վարքագիծը չընկճեց գյուղացիներին, և նրանք շարունակեցին պայքարը: Աչքի ըն-

271 «Աշխատանք», 1911, № 23, էջ 14:

272 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3998, դեկտեմբերի 16:

273 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4757, հունիսի 19:

274 «Բյուզանդիոն», 1909, № 3787, մարտի 24:

275 «Աշխատանքը» այդ առիթով գրում էր, որ Ադիլջևազի գյուղացիները Հյուսեին փաշայի վրա 270 բողոքագիր ուղարկեցին և մերկացրին նրա գաղանային արարքները, «բայց ինչ օգուտ... հազիվ երկու ամիս բանտարկվելէ հետո անպարտ արձակվեցավ», («Աշխատանք», 1911, № 33, էջ 3):

կան Հատկապես Կոճեր, Գնաղուխ, Վերին Սիփան գյուղերի բնակիչները, որոնք կարողացան եւս ստանալ իրենց հողերի մի մասը։ Սակայն փաշան, օգտվելով իշխիհատական պաշտոնյաների պաշտպանությունից, վերստին զավթեց այն[276]։

Հեղափոխությունից անմիջապես հետո Շատախի գավառի Միծանց գյուղի հայերը հրաժարվեցին Շարիր աղայի հարկերից։ Կատաղած Շարիրը ներխուժեց Միծանց, թալանեց բնակիչներին, սպանեց ութ հոգու և ավերեց եկեղեցին։ Այնուհետև ասպատակեց գավառը և 1910 թ., միայն երկու ամսվա ընթացքում, սպանեց հինգ հայ ու կողոպտեց բազմաթիվ գյուղեր։ Սակայն ոճրագործը չկարողացավ ընկճել գյուղացիների կամքը։ 1912 թ. գարնանը նրանք գնացին գավառակինսրոն՝ Թաղ և պահանջեցին մյուդիրից ձերբակալել հանցագործին։ Ջտատնալով բավարար պատասխան, գյուղացիները դիմեցին կուսակալին, բայց արդյունքի չհասան։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Շատախի կացությունը երթալով ավելի քան կծանրանա... ամբողջ հայ աղգաբնակչությունը ահ ու սարսափի մատնված է։ Ոչխին մինչև Փեսանդաշտ օգնություն կսղաղակեն, դժբախտաբար, ոչ մեկ հույս կա կառավարութիւնեն...։ Գյուղերու ժողովուրդները Թաղ թափված են, ապրելու տեղ որոնելու. աշխատանքի օրեր են, բայց գալումներեն խույս տված գյուղացին, Թողած ամեն բան, տավար, ոչխար, հող, գութան՝ այստեղ թափված կմնա... ժողովուրդը միաբերան կկոչեր. «այլևս անհնարին է մնալ ապրել այսպես»[277]։

Վանի գավառի գյուղացիական նշանավոր շարժումներից մեկը Շահբաղի բնակիչներինն էր։ Դեռ 1884—85 թթ. շեյխ Մեհմեդ Յուրֆեթին գալթել էր նրանց ընդարձակ վարելահողերն ու այգիները։ Շահբաղի հայերը ավելի քան երկու տասնամյակ պայքարեցին կորցրած հողերը եւս ստանալու համար, ծախսեցին շուրջ 15000 լիրա, սակայն ապարդյուն[278]։ 1908 թ. հեղափոխությունից հետո շահբաղցիները նոր թափով շարունակեցին պայքարը։ Չհուսթափվելով իշխանություններից, նրանք փորձեցին սեփական ուժով լուծել հարցը և 1910 թ. դուրս գցեցին շեյխի գութանը իրենց հողից։ Երբ Մեհմեդ Յուրֆեթին ոստիկանների օգնությամբ փորձեց շարունակել վարը,

276 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4688, փետրվարի 20, «Վան-Տոսպ», 1913, № 15, էջ 174։

277 «Բյուզանդիոն», 1913, № 5056, հունիսի 11։

278 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 39, էջ 12։

շահբազինները ընկած դիմադրություն ցույց տվեցին։ Վախենալով դևպքի բարդացումից, շեյխը ստիպված եղավ առժամանակ դիջել։ «Հորիզոնը» նշում էր. «Ընդհարումը քիչ մնաց սուր հանգամանք ստանար, եթե շեյխը տեղիք չտար»[279]։ Թուրքական պաշտոնյաները այնուհետև կանչեցին գյուղացիներին դատարան և սպառնացին՝ չհամաձայնելու դեպքում «օրինական պատժի կենթարկվեն»[280]։ Երբ շեյխը մահացավ, թուրքական դատարանը, տեղի տալով շահբազինների համառությանը, որոշեց հարցը լուծել նրանց օգտին։ Սակայն շեյխի եղբայրը, շարունակելով նրա չարագործությունները, զանազան միջոցներով ձգձգում էր իրենց գյուղացիների հողերը[281]։

Վանի դավառում նման պայքար ծավալեցին Սվանի բնակիչները։ 1911 թ. հոկտեմբերին նրանք դիմեցին կառավարությանը և բողոքելով, որ Հայոց օղլի Շուքրին դեռ սահմանադրությունից առաջ բռնագրավել է իրենց հողերը, պահանջեցին «դուրս հանել այդ չարագործը մեր գյուղից, քանի որ ոչ մի կալվածք չունի»[282]։ Կուսակալը ուղարկեց նրանց բողոքագիրը ոստիկանապետին, որը, սակայն, անուշադրության մատնեց։

1908 թ. հեղաշրջումից հետո իրենց հողերի ետնվաճման համար հատուկ պայքարեցին Խոշաբի Զենիս կամ Զեյնես գյուղի հայերը։ Բայց ազան ոչ միայն չլինչեց, այլև օգտվելով իշխանությունների հովանավորումից ու պաշտպանությունից, վտարեց նրանց «իր» կալվածքներից։ Զեյնեսցիները երկար ժամանակ բողոքեցին և արդյունքի չհասնելով, հարկադրված հաստատվեցին մի այլ քուրդ աղայի հողերի վրա՝ որպես մարաբաններ[283]։

Սահմանադրությունից հետո պայքար ծավալեցին նաև Աղբակի մի շարք գյուղեր, բայց ապարդյուն։ 1913 թ., երբ կուսակալը շրջագայում էր Աղբակում, գյուղացիները վերստին բարձրացրին իրենց հարցը։ 1913 թ. նոյեմբերի 10-ին «Մշակը» գրում էր, որ Թահսիմ փաշան Աղբակով անցնելիս «նրան հարյուրավոր հայեր դիմել են աղերսագրերով, որոնց հողերը բռնագրավվել են քուրդ բեկերից ու խնդրել են

279 «Հորիզոն», 1910, օգոստոսի 6։

280 «Բյուզանդիոն», 1911, № 4535, սեպտեմբերի 27։

281 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 39, էջ 12. «Ազատամարտ», 1909, № 36, օգոստոսի 4։

282 «Աշխատանք», 1911, № 37, էջ 14։

283 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4447, հունիսի 13, «Մշակ», 1911, № 127, հունիսի 16։

վալիից, որ այդ հողերը իրանց վերադարձնի»[284]։ Սակայն կուսակալը անուշադրության է մատնել նրանց բողոքը։

Աղբակի հայ գյուղացիները կռվում էին քրդական հրոսակների դեմ նաև իրենց անձն ու գույքը պաշտպանելու համար։ 1911 թ. գավառի 12 գյուղերի բնակիչները դիմագրավեցին թալանչի Սմկոյին և թույլ չտվին տանելու իրենց անասուններըւ Ականատեսը գրում էր. «Շատ տեղեր դիմադրության հետևանքով երկուստեք սպանություններ ալ եղած են»[285]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում ամենանշանավոր գյուղացիական շարժումներից մեկն էլ Խարբերդի վիլայեթի Չարսանջակ կազայի ելույթն էր։ Դեռ 1860-ական թվականներին 24 մահմեդական աղաներ բռնագրավել էին 25000 բնակչություն ունեցող 60 հայկական գյուղերի հողերը և շինականներին դարձրել մարաբաններ։ Չարսանջակցիները համառ ու տևական պայքար սկսեցին իրենց հողերը հետ ստանալու համար, դիմեցին գավառական ու նահանգական իշխանություններին, ապա մայրաքաղաք, վերջապես հասան այն բանին, որ 1872 թ. թուրքական կառավարությունը հատուկ հանձնաժողով ուղարկեց գործը «քննելու» համար։ Հանձնաժողովի ներկայացրած նյութերի հիման վրա պետական խորհուրդը արդարացրեց աղաների բռնագրավումները, իրավացի չհամարեց միայն այն, որ նրանք հողերի հետ միասին զավթել են նաև գյուղացիների տները, պարտեզներն ու այգինները։ Պետական խորհուրդը գտավ, որ շինականներին պետք է տալ նոր, անմշակ տարածություններ և իբրև «օգնություն» առաջարկեց ձրի ձևակերպել նրանց թափուները[286]։ Սակայն աղաները չհամաձայնվեցին նույնիսկ այդ որոշման հետ և Պոլսում կաշառելով բարձրաստիճան պաշտոնյաներին, չեղյալ պարձրին այն։ Թեպետ պատրիարքարանը բազմիցս բողոքեց, պահանջելով թողնել ուժի մեջ գոնե հին որոշումը, սակայն արդյունքի չհասավ[287]։ Աբդուլ Համիդի կառավարման Հղձավանջայինտարիներին չարսանջակցիները ստիպված լռեցին։

1908 թ. հեղափոխությունից անմիջապես հետո գյուղացիները պահանջեցին վերադարձնել իրենց հողերը։ Նրանց ներկայացուցիչները

---

284 «Մշակ», 1913, № 270, «Բյուզանդիոն», 1911, № 4460, հունիսի 28։

285 «Բյուզանդիոն», 1911, № 4613, դեկտեմբերի 27։

286 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4269, նոյեմբերի 9։

287 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5059, հունիսի 14։

մի քանի անդամ մայրաքաղաք գնացին, դիմեցին թուրքական կառավարությանն ու Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին։ Իրենց հայրենակիցների արդար գործին լծվեցին նաև պանդուխտ ու տարագիր չարսանջակցիները։ Բոստոնում նրանք դիմեցին թուրքական հյուպատոսին, իսկ Ուստրում հանգանակեցին 50 ոսկի, ուղարկեցին պատրիարքին, որ ծախսի չարսանջակցիների հողային դատին[288]։ Սակայն արդյունքի չհասան։ Ընդհակառակը, ավելի վատացավ գյուղացիների դրությունը։ 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր. «Հողային խնդիրներու առթիվ ժողովրդյան կողմե մինչև հիմա կառավարության եղած դիմումներն օգտակար արդյունք մը առաջ չբերելե պատ, ունեցած են իրենց հոռի հետևանքները։ Աղաները, ժժգոհ իրենց դեմ եղած բողոքներեն և բացված դատերեն, խիստ գրգռված են հիմակ և կթելադրեն իրենց ծառաները սեղմել գյուղացիներն ու վառել անոնց՝ գողություններով»[289]։ Թերթը շարունակում էր, որ աղաները «երկրագործներուն կարգիլեն սերմացան կատարել և անոնց լծվար եզները բռնի կգրավեն։ Թշվառությունը կատարյալ է»[290]։

Բռնությունները չընկճեցին գյուղացիներին։ 1910 թ. նրանք վերըստին բարձրացրին իրենց հարցը։ Իշխիհատի պարագլուխները առաջարկեցին նրանց՝ ստանալ պետական դրամարկղից 1000 ոսկի, գնել նոր հող և դադարեցնել բողոքները։ Բայց գյուղացիները վճռականապես մերժեցին[291]։

1911 թ. սկզբներին նրանք կրկին պայքարի ելան։ Նույն թվականի մարտի 22-ին «Բյուզանդիոնը» հաղորդում էր. «Չարսանջակցիները վերստին բազմաթիվ ստորագրություններով հանրագիր մը ղրկած են պատրիարքարան իրենց հողային խնդրուն կարգադրության համար»[292]։ Ջատանալով զոհացուցիչ պատասխան, նրանք սկսեցին ինքնագլուխ վարել իրենց արտերը։ Բայց աղաները դեմ կանգնեցին։ Ընդհարման հետևանքով ծանր վիրավորվեցին մեկ տղամարդ և երեք կին[293]։ Այդ դեպքից հետո չարսանջակցիները 1911 թ. մայիսին մեկնեցին Մեզիրե և բողոքեցին կուսակալին, որ տարիներ շարունակ իրենք փաստորեն

288 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4813, օգոստոսի 24։

289 «Բյուզանդիոն», 1910, № 4060, մարտի 1։

290 «Բյուզանդիոն», 1910, № 4062, մարտի 3։

291 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4172, հուլիսի 15։

292 «Բյուզանդիոն», 1911, № 4391, ապրիլի 4։

293 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4425, մայիսի 17։

*բանտարկված են իրենց տներում, զրկված անգամ չոր հացից։ «Երեսուն հազարն ավելի ժողովուրդ մը այսօր խոտ ուտելու վիճակին հասած է,—շարունակում էին նրանք,—ասոր համար ճարներնիս հատած օլուխ չճուխ դրան նաև ձգեցինք, նկատը, որ ասկն անկն հետզհետե ծախք մը մուրալով վերջին իմացումնիս ընենք կենտրոնի կառավարության բև կամ պետք է որ նիւրատ երթանք բափվինք չաղա չոլուխով, կամ Ռոդոս մնդ, որ կոշիկնիս ալ Թոթվելով գաղթենք հետևանքն ուր որ ալ ըլլար»[294]։ Կուսակալի հարցմանը ներքին գործերի մինիստրը պատասխանեց՝ Ռոդոսի աղաների տիրույթները անձևնմխելի։ Եվ աղաները սկսեցին գործադրել նոր վայրագություններ. Բաղալով գյուղում ծեծեցին կանանց ու աղջիկներին, Կոտաոխիում՝ կտուրից շպրտեցին մի հայուհու, Լուսատավիղում գետին փռեցին 80-ամյա ծերունուն և այլն։ Այս բոլորը նրանք կատարեցին «բուն իսկ դայմագամության աչքի առաջ»[295]։

Աղաների այս բռնությունների դեմ գյուղացիները նոր բողոքագիր ուղարկեցին մայրաքաղաք։ Սակայն 1911 թ. հուլիսի 5-ին մինիստրների խորհուրդը որոշեց աղաների տիրույթները Ռոդոսի անմխաթ, իսկ գյուղացիներին պահել իրենց տեղում։ Այդ որոշումից հետո աղաները ավելի ապատկացրին բռնությունները ու հալածանքները։ 1912 թ. մարտի 4-ին Չարսանջակի հոգևոր առաջնորդի տեղապահ Համազասպ վարդապետը պատրիարքին գրում էր. «Դժբախտ չարսանջակցի հայերուն վիճակը երթալով ավելի վատթարացավ, այլևս հուսալու և համբերելու որևէ միջոց չմնաց. չորս տարի անընդհատ ամեն զրկանքի ու անարդարության հանդեպ կորովի ուժով մը բողոքեց, դիմացավ ու մաքառեցավ։ Սակայն երբեք կարեկցող մը ու լսող մը գտավ իր արդահատելի տառապանաց աղաղակներուն։ Մանավանդ վերջերս նախարարությունն եկած հրաման մը, զոր տեղվույս կառավարությունը աննպաստ կը նկատե չարսանջակցիներու համար, ուղղակի կզրկե զիրենք իրենց արդար իրավունքը եղող տուն, այդի ու պարտեզներուն, և աղաներուն բև ու թիկունքը ըլլալով, կարծես թե ավելի քաջալերանք մը եղավ անոնց անիրավ շահատակությանց։ Այսպես, շաբաթե մը ի վեր է, որ յուրաքանչյուր աղա 5—10 ծառայով կմտնա հայու պարտեզը և այդին կկըտրե ու ավեր կը դարձնե հայու ամեն մեկ իրավունքն ու աշխատանքը։

294 «Բյուզանդիոն», 1911, № 4433, մայիսի 26։

295 Նույն տեղում։

Հետևաբար, ժողովուրդը մեծ հուզման մեջ է, ահ ու սարսափը զինքը պատեր է։ Թեև որևէ միջոցով օգնություն մը չըլլա, տուներեն ալ պիտի հանվին և իրենց դարավոր իրավունքներեն պիտի զրկվին։ Գաղթել պիտի ըլլա միակ իրենց բաժինը»[296]։ Զբավարարվելով բռնություններով ու կեղեքումներով այդ սաստկացումներով, աղաները սկսեցին դուրս քշել դյուղացիներին նրանց գյուղերից ու տներից։ Միայն մի քանի օրվա ընթացքում նրանք վտարեցին ավելի քան 3000 հայ[297]։ Երբ գյուղացիները փորձեցին խոսել երիտթուրքական սահմանադրության ու ազատության անունից, աղաները լկտիաբար պատասխանեցին. «Կեավուրներ, ձեր աղան ալ մենք ենք, ձեր պեյն ալ մենք ենք, ձեր կառավարությունն ալ մենք ենք, ձեր աստվածն ալ մենք ենք, ով ըսավ, թե ազատություն էղեր է ու դուք կալվածատեր պիտի ըլլաք, ձեր հավնած տեղը դիմեցեք, տեսնենք[298]։

Գյուղացիները նորից գնացին Մեզիրե և բողոքեցին պաշտոնյաներին։ Նրանց ճնշումով 1913 թ. ապրիլին կուսակալը առաջարկեց աղաներին՝ թուլլատրել գյուղացիներին ապրելու իրենց գյուղերում։ Երբ Ջարսանջակի կայմակամը փորձեց իրագործել կուսակալի առաջարկությունը, աղաները ոչ միայն դիմադրեցին, այլև հասան նրա պաշտոնազրկմանը[299]։

Այսպիսով, ավելի քան հինսամյա պայքարը, որ սկսվել էր Ջարսանջակում մի բուռ աղաների ու բազմահազար գյուղացիության միջև երիտթուրքերի վարած քաղաքականության հետևանքով, ավարտվեց աշխատավոր զանգվածների պարտությամբ։ Աղաները առաջվա նման մնացին հողատերեր, հայ գյուղացիների մի մասը արտաքսվեց տնից ու տեղից, նրանց փոխարեն հաստատվեցին քրդեր ու թուրքեր, իսկ մյուս մասը հարկադրված եղավ շարունակել մարաբայի չարքաշ կյանքը։

* * *

Երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայ գյուղացիները ըմբոստանում էին նաև թուրքական իշխանությունների դեմ։ Նրանք դիմադրում էին, երբ իթթիհատական պաշտոնյաները բռնագրավում էին իրենց հողերը և տալիս մուհաջիրներին։ Այսպիսի «խռովություն բարձրացրին» Մուշի դաշտի Քյուլիսըգ գյուղի հայերը։ 1910 թ.

---

296 «Բյուզանդիոն», 1912, № 4701, ապրիլի 13։

297 Տե՛ս «Ազատամարտ», 1912, № 1031, հոկտեմբերի 30։

298 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4813, օգոստոսի 24։

299 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5044, մայիսի 28։

Հուլիսին նրանք դիմեցին պատրիարքարան, խնդրելով կառավարության միջոցով առաջարկել պաշտոնյաներին, որ մուհաջիրների օգտին չկրճատեն իրենց արոտատեղիները[300]։ Նման եղույթ ունեցան նաև Վանի գավառի Նորդուզ գավառակի և Ջալկար գյուղի հայերը։ 1912 թ. նրանք կրճատականապես մերժեցին դատարանի այն որոշումը, որով իրենց հողերի մի մասը տրվում էր հարևան քրդերին։ Շնորհիվ համառ պայքարի Նորդուզի ու Ջալկարի բնակիչները հաջողության հասան[301]։

Գյուղացիները պայքարում էին իշխանությունների դեմ, երբ սրանք զինվրագործական բանակի միջոցով խլում էին նրանց հողերն ու ճաուրդի հանում։ 1910 թ. դեկտեմբերի 8-ին Էրզրումի ռուսական զինապետը նշում էր, որ զինվրագործական բանակը արդեն ճաուրդի է հանել Էրզրումի գավառի այն գյուղացիների հողերը, որոնք չեն կարողացել մարել իրենց պարտքերը, որ բանկի վարչության այդ քայլն առաջ է բերել գյուղացիների մեջ լուրջ հուզում։ Նրանք «պատրաստվում են ինչ որ ցույցի»[302]։ Զինվրագործական բանկի նման գործունեության դեմ ծառացան նաև Տարոնի գյուղացիները և բողոքագիր ուղարկեցին ինչպես տեղական իշխանություններին, այնպես էլ հայոց հոգևոր առաջնորդին։ Վերջինս 1912 թ. դիմեց պատրիարքին, խնդրելով միջնորդել կառավարության առաջ, որ դոնն երկու տարով հետաձգի Մուշի դաշտի գյուղացիների հողամասերի ճաուրդը[303]։

Գյուղացիներն ըմբոստանում էին նաև իշխանությունների հարկային հարստահարումների դեմ։ Նրանք հրաժարվում էին պետական հարկերի ու տուրքերի վճարումներից։ Օրինակ, երբ Ճապաղջուրի Զելփիբլի գյուղի բնակիչները 1909 թ. մարտին հրաժարվեցին վճարումներից, կայմակամը ձերբակալեց նրանց ղեկավարներին ու ենթարկեց տանջանքների[304]։ Այդ նույն թվականին պետական հարկերի վճարումից հրաժարվեցին նաև Մուշի դաշտի Առնիստ, Կարկասի, Եղեգիս ու այլ գյուղերի հայերը[305]։ Գյուղացիների հակահարկային շարժումը ավելի սուր բնույթ ընդունեց Օվայի գավառի Ջիթող գյուղում։ 1911 թ. գարնանը նրանք ոչ միայն հրաժարվեցին տուրքերի վճարումից, այլև ծե-

---

300 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4190, օգոստոսի 5։

301 Տե՛ս «Ազատամարտ», 1912, № 915, հունիսի 3։

302 ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1910, գ. 2678, թ. 32։

303 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4800, օգոստոսի 9։

304 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3770, մարտի 4։

305 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3795, ապրիլի 2, № 3918, սեպտեմբերի 13։

ծեցին հարկահանին ու սպառնացին նրան, թե կսպանեն, եթե փորձի մի անգամ էլ երևալ։ Վախենալով խռովության տարածումից, պաշտոնյանները պատժիչ ջոկատներ ուղարկեցին Զիթող[306]։

Շատ հաճախ գյուղացիները պայքարում էին աշարի իրավունքի աճուրդի դեմ, քանի որ մյուլթեզիմները, վարձակալելով այն, ուղղակի կեղեքում էին նրանց։ Օրինակ, Մուշի ու Բիթլիսի գավառների բազմաթիվ գյուղացիներ 1909 թ. աշնանը պահանջեցին, որ «ասպարիզ չտրվի մյուլթեզիմներու ծանոթ կեղեքումներուն»[307]։ 1913 թ. նույնպիսի պայքար ծավալեցին նաև Վանի գավառի գյուղացիները, պահանջելով իրենց տալ աշարի հավաքման իրավունքը նույն գնով, ինչ որ կապալառուներին։ Սակայն իշխանությունները մերժեցին[308]։

Բացի աշարից, գյուղացիները հրաժարվում էին նաև այլ հարկերից։ 1909 թ. Բարերդում նրանք չվճարեցին բեդելի ասկերին դինվորական հարկը և հայտարարեցին, որ իրենք դրա փոխարեն պատրաստ են ծառայել բանակում։ Սակայն իշխանությունները ճնշեցին գյուղացիների դիմադրությունը և ձերբակալեցին ղեկավարներին[309]։ Այդպիսի ընդվզումներ տեղի ունեցան նաև երկրի այլ շրջաններում։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Երեկ դարձյալ խնդ մը հետագիրներ և նամակներ հասան պատրիարքարան զինվորական տուրքի խնդրո վերաբերյալ... բոլոր գավառներեն նյած խնդիրքը միևնույն ձևն ունի և ամենքն ալ կհայտնեն, թե պատրաստ են զինվոր տալու, բայց տուրք չեն կրնար վճարել»[310]։

Արևմտահայ գյուղացիները ծառանում էին նաև կառավարական պարհակների դեմ։ Նրանք հրաժարվում էին ճանապարհների, կամուրջների և զանազան շենքերի կառուցումներից, վռնդում էին իրենց գյուղերում իջևանող պաշտոնյաներին, ոստիկաններին ու զինվորներին։ 1909 թ. դեկտեմբերին Ալաշկերտի Զեյտիկան գյուղի բնակիչները հրաժարվեցին թուրքական զորամասերի ռազմամթերքների տեղափոխման պարհակից, որի հետևանքով տեղի ունեցավ լուրջ ընդհարում։ Զինվորները ծեծեցին գյուղացիներին[311]։ Կուսակալը պատժիչ ջոկատ

---

306 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1911, գ. 2680, թ. 20, ֆ. «Քաղաքական», 1911, ց. 482, գ. 1647, թ. 23։

307 «Ազատամարտ», 1909, № 45, օգոստոսի 14։

308 Տե՛ս «Մշակ», 1913, № 195, սեպտեմբերի 5։

309 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3763, փետրվարի 24։

310 «Բյուզանդիոն», 1909, № 3776, մարտի 11։

311 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, № 3992, դեկտեմբերի 9։

նշանակից Զեյտիկանում, որ «խելքի բերի» նրա հանդուգն բնակիչներին։ Սակայն գյուղացիները շարունակեցին պայքարը, պահանջելով՝ հեռացնել զինվորներին իրենց գյուղից։ Մայրաքաղաք ուղարկած հեռագրում նրանք նշում էին. «Եթե այդ զինվորները չհեռացվին, մեր փրկության համար ուրիշ միջոցի պիտի դիմենք»[312]։ Զինվորական պարտակից հրաժարվելու պատճառով 1914 թ. ընդհարում տեղի ունեցավ նաև Վանի սանջակի Ծվստան գյուղում[313]։

Երկրի մի շարք շրջաններում (Մուշի դաշտի Ավրան, Վանի գավառի Տաշվերան, Բողազքյասան և այլ գյուղերում) գյուղացիները հրաժարվում էին թուրքական ժանդարմներին ու ոստիկաններին կերակրելուց, որոնք իշխանությունների կողմից ուղարկվում էին իբր թե նրանց՝ ավազակներից պաշտպանելու համար։ Գյուղացիները հայտարարում էին այդ «անկոչ հյուրերին»՝ «Դուք հեռու կացեք մեզանից, թող մեր ոչխարներն ու անասունները քյուրդը հափշտակեն, թող մեզ սպանեն, մինչդեռ դուք ամեն օր հափշտակում և սպանում եք, թող ձեզ մնա ձեր մեղքն էլ, ձեր խայթոցն էլ»[314]։

Արևմտահայ գյուղացիությունը տեղ-տեղ ըմբոստանում էր նաև հայ հոգևորականների դեմ։ Նրանք բռնագրավում էին վանքերի ու եկեղեցիների հողերը, հրաժարվում էին հոգևոր հարկերից և տուրքերից կամ զանազան «նվիրատվություններից»։ Սպարկերտի գյուղացիները հայտարարեցին Աղթամարի առաջնորդարանին՝ «այսօր սահմանադրություն է, մենք ապօրինի տուրք, որպիսին է կապալը, չենք ուզեր տալ»[315]։ Ապա ավելացրին, որ եթե հարկադրեն, կթողնեն հող ու ջուր և կհեռանան։ Քըղիի կազայում բնակիչները հրաժարվեցին քահանաների օգտին վճարվող տուրքերից, իսկ Վասպուրականի որոշ վայրերում՝ վանքերի օգտին կատարվող պարհակներից[316]։ «Աշխատանքը» անդրադառնալով գյուղացիների դիմագրավումներին, 1911 թ. նշում էր, որ նրանք հեղափոխությունից առաջ բազմաթիվ տուրքեր էին վճարում վանքերին ու եկեղեցիներին, այժմ հրաժարվում են ոչ միայն դրանցից, այլև չեն ուզում «վճարել հաճախ նույնիսկ կրթական տուրքը»[317]։

---

312 «Բյուզանդիոն», 1910, № 4054, փետրվարի 22։

313 Տե՛ս «Աշխատանք», 1914, № 35—181, էջ 10։

314 «Մշակ», 1913, № 195, սեպտեմբերի 5։

315 «Հորիզոն», 1914, № 37, փետրվարի 20։

316 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, № 4594, դեկտեմբերի 5։

317 «Աշխատանք», 1911, № 552, էջ 11։

* * *

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ի՞նչ եղավ հայդուկային շարժումը սահմանադրության հռչակումից հետո։ Երիտթուրքական հեղափոխության լուրը Տարոնի հայդուկներին հասավ 1908 թ. հուլիսի վերջերին՝ թուրքական զինվորներից։ Այդ զինվորները (12 հոգի) բարձրանում էին Սասուն, որ կենսագործեին մայրաքաղաքի հրամանը՝ Տալվորիկում, Իշխնձորում, Գևիհկուզանում, Սեմալում ու Տափրկում հայկական շարժումների դեմ հիմնված համիդյան ղորանոցները ցրելու և զինվորներին Մուշ տեղափոխելու մասին։ Նրանք հայտնեցին հայդուկներին, որ սուլթանը արդեն սահմանադրություն է տվել ժողովրդին, հայն ու թուրքը եղբայրացել են, իշխանություններն այլևս չեն հալածում ֆեդայիներին, ուստի սրանք պետք է թողնեն պայքարը և անցնեն խաղաղ աշխատանքի։ Բայց հայդուկները չհավատացին, ավելին՝ զինաթափեցին և ետ ուղարկեցին նրանց։ Շուտով ֆեդայիները նամակ ստացան Գևղամ Տեր-Կարապետյանից, որը հաստատում էր սահմանադրության հռչակման լուրը և հայտնելով, թե հայդուկներն այլևս չեն հալածվում, խորհուրդ էր տալիս իջնել սարերից[318]։

Ֆեդայական տարբեր շերտերը տարբեր կերպ վերաբերվեցին հեղաշրջման փաստին։ Դաշնակցության կողմից ուղարկվածները Ռուբեն Տեր-Մինասյանի ղեկավարությամբ թողեցին լեռները[319], գնացին Մուշ և ներկայացան իշխանություններին[320]։ Մուշի մութասարիֆ Սալիհ փաշան ընդունեց նրանց և կեղծավորաբար ամբոխին հայտարարեց. «Ահա ֆեդայիները, մեր աչքերը կապված են եղել, եղբայր եղբոր կուրծքին սվին ենք ուղղել, մեղքը մերը չէ, հին ռեժիմինն էր, կեցցե սահմանադրությունը, կեցցեն հեղափոխականները»[321]։

Բայց հայդուկների մեծ մասը, որոնք գերազանցապես արևմտահայեր էին և չէին բաժանում դաշնակցության վարքագիծը, չհավատացին հեղափոխությանը ու մնացին սարերում։ Համագործակցելով իթթիհատի հետ և կատարելով նրա կամքը, 1908 թ. ամռանը դաշնակցության շեֆերը առաջարկեցին այդ ֆեդայիներին՝ իջնել լեռներից, ցրվել իրենց գյուղերը և անցնել խաղաղ աշխատանքի։ Հասկանալի է, որ կառա-

---

318 Տե՛ս Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. Դ, էջ 384։

319 Նույն տեղում, էջ 395։

320 Նույն տեղում։

321 Նույն տեղում։

վարութիւնը, պահանջելով հայդուկների լիկվիդացում, կամենում էր ոչ թե լծել նրանց պետական կյանքին, այլ հարվածել հայ բնակչության մարտունակությանը, լիովին դինաթափել նրան: Դաշնակցականները հավատացնում էին հայդուկներին, թե իբր Թուրքիան վերակառուցվում է, նախկին բռնությունները վերանում են, հայ ժողովրդի զարգացման համար ստեղծվում են լայն պայմաններ:

Հավատալով դաշնակցականներին, այս ֆիդայիների մի մասը թողեց սարերը և սկսեց որոնել խաղաղ զբաղմունք: Ոմանք բռնեցին մաճը, ոմանք՝ քաղաքի ճամփան, իսկ ոմանք էլ մեկնեցին արտասահման: Պետք է նշել, որ երկրագործության անցած ֆիդայիներից քչերը կարողացան ետ առնել զավթիչներից իրենց ունեցվածքը, իսկ ովքեր կարողացան՝ պայքարով միայն: Այսպես, օրինակ, Տարոնի Գոմս գյուղի բնակիչ Կորյունը, վերադառնալով իր ծննդավայրը, տեսավ, որ այնտեղ հաստատվել են մուհաջիրները: Նա հայտարարեց այդ մուհաջիրներին. «Ասիկա իմ նախահայրերուս շինած գյուղն է, ես այս գյուղի գլավակն եմ, իմ իրավունքիս պաշտպանության համար տված եմ հարյուրավոր ղոհեր, որոնց կարմիր արյունով ներկված է գյուղիս ամեն մեկ քարը, 15 տարի է, որ ֆիդայի եմ, ձեր սուլթանի դեմ կռված եմ և հաղիվ այս օրվան մեր իրավունքին տերը դարձած ենք, և հիմա մեր հայրենի հողին վրա կնցած ենք: Երեք օրվան պայմանաժամ կուտամ ձեզի, որ բոլորդ միասին դուրս գաք մեր գյուղին, և որտեղեն որ եկած եք, նորեն հոն վերադառնաք, հակառակ պարագային՝ բոլորիդ ալ մեծով պզտիկով կ'ոչնչացնեմ: Ահա, ես Մուշ քաղաքը կերթամ հիմա և երեք օրեն կը՝ վերադառնամ»[322]: Մուհաջիրները դիմեցին իշխանությունների պաշտպանությանը: Սակայն նրանք, վախենալով Կորյունի ու նրա համագյուղացիների մարտական տրամադրությունից, չհամարձակվեցին օգնության հասնել: Եվ մուհաջիրները թողեցին Գոմսն ու հեռացան[323]:

Վերջապես, հայդուկների երրորդ մասը չլսեց դաշնակցությանը և մնաց սարերում ու անտառներում: Սրանք գոնում էին, որ եթե իսկական հեղափոխություն է կատարվել ու ազատություն հռչակվել, ապա համիդյան պաշտոնյաները, աղաներն ու այլ պորտաբույծները պետք է պատժվեին հեղափոխության ամբողջ ուժով: Այս հայդուկները շարունակեցին արդար ու անդիջում պայքարը[324]: Նրանք պատվիրակներ

---

322 Սարգիս և Միսակ Բդեյան, նշված աշխ., էջ 231:

323 Տե՛ս նույն տեղում, էջ 232:

324 Տե՛ս Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. Դ, էջ 389—391:

ուղարկեցին գյուղերը և համոզեցին բնակիչներին՝ չխափվել սահմանադրական պատրանքներով, չընկնել Բշնամու ծուղակը, շարունակել պայքարը մինչև իսկական ազատության նվաճումը։ Դաշնակցության ղեկավարներից մեկը, հուշագրելով երիտթուրքական սիրապետության տարիների իրադարձությունները, ստիպված էր խոստովանել. «Կովկասն երկիր մտած արևելահայ հայդուկները դրեթե անվերապահ էին իրենց խանդավառության մեջ։ Կը նմանեցնեին 1905-ի ռուսական շարժումներուն, հավատացած էին, թե օսմանյան սահմանադրությունը մեծ բարիք մըն էր մեր դժբախտ ժողովրդին համար. անկեղծ համերաշխության և համագործակցության պետք էր երթալ թյուրք և քյուրտ աշխատավորության հետ, հաշտեցնել մեր շահերը անոնց շահերուն և ամեն գինով նվիրվիլ սահմանադրական ազատություններու հիմնավորմանը»։ Սակայն արևմտահայ-տեղացի հայդուկների խորհրդածությունները «շատ բացատական էին»։ Նրանք գտնում էին, որ քանի դեռ Աբդուլ Համիդը գահի վրա է, քանի դեռ երիտթուրքերը չեն վերացրել բռնությունները ու ազգային հալածանքները, քանի դեռ չեն իրագործել արմատական վերափոխումներ, չի կարելի հրապուրվել թուրքական հեղափոխությամբ, պինքը ցած դնել և հրաժարվել պայքարից։ Նրանք կոչ էին անում. «Մի հավատաք, ատոծո սիրուն, ամեն բան մի ցուցնեք անոնց, բոլորդ երեան մի ելեք»։ Հուշագրողն այնուհետև եզրափակում էր, թե կարծես «ժողովրդային իմաստությունն կխոսեր անոնց բերանով»[325]։

Հայդուկային շարժման վետերան Անդրանիկը երիտթուրքերի հեղափոխության հաղթանակի օրերին և դրանից հետո գտնվում էր Բուլղարիայում։ Դաշնակցության պարագլուխներ Մալումյանը (Ակնունի), Ռ. Զարդարյանը և ուրիշներ, երբ իմացան սահմանադրության հռչակման մասին, շտապեցին Բուլղարիայից տեղափոխվել Կ. Պոլիս և փորձեցին իրենց հետ տանել Անդրանիկին։ Սակայն Անդրանիկը ոչ միայն չգնաց, այլև խորհուրդ տվեց նրանց ևս մնալ իրենց որոշումից, ասելով, թե իթթիհատի պարագլուխները թակարդ են դրել հայերի համար։ Այնուամենայնիվ, դաշնակցության ղեկավարները մտերմացան Թալեաթին ու Էնվերին և փորձեցին համագործակցել նրանց հետ։ 1909 թ. փետրվարին Անդրանիկը գաղտնի եկավ Պոլիս, որ իր հավաքած հայ ֆիդայական ուժերը հայոց պատրիարքի միջոցով ուղարկի Սասունի ու Մուշի

---

325 Վ. Փափազյան, նշված աշխ., էջ 17։

պարոցներին։ Դաշնակցության պարագլուխները փորձեցին պահել նրան Պոլսում։ Նրանք ուզում էին օգտագործել Անդրանիկի հեղինակությունը իրենց քաղաքական խաղերի համար և այդ նպատակով անգամ խոստացան ընտրել նրան օսմանյան պառլամենտի պատգամավոր։ Սակայն Անդրանիկը պատասխանեց. «Դուք հաշտվեցաք թուրքերու հետ, բայց ինձ թույլ տվեք անհաշտ մնալու։ Ես թուրքի հետ չեմ կրնար հաշտվիլ մինչև իմ մահը։ Բայց ես ձեզ ղպուշություն մը կուտեմ ընել և կուտեմ որ լսեք։ Եթե այս հեղափոխական կարծված թուրքերը օր մը ձեզ չը կախեցին, ես մարդ չեմ։ Օր պիտի գա, որ այս հեղափոխականներն ալ պիտի դառնան սուլթան Համիդի պես գազան մը և բոլորիդ ալ պիտի ՀՈՂՈՏԵՆ»[326]։

Դաշնակցության պարագլուխների այն առարկմանը, թե նոր պայմաններում թուրք կառավարիչները չեն կազմակերպի հայկական ջարդեր, Անդրանիկը պատասխանեց. «Չեմ հավատար, այս գազանները մեզ դարձյալ կը կոտորեն, ըրածնին դարձյալ կեղծիք է. դուք կը խափվիք և կը խաբեք մեր ժողովուրդը։ Ինքնապաշտպանության գաղափարը երբեք մի լքաննք և պատրաստեցնք ժողովրդին ալ այդ ուղղությամբ։ Տիգրանակերտեն մինչև Պարսից սահմանագլուխը 160 հազ. զինված բուրդ կա։ Ժեռն թուրքերը զինաթափ չեն ըներ զանոնք և կը պահեն մեզ հարմար առիթով կոտորել տալու համար»[327]։

Դաշնակցության պարագլուխներից ոմանք այդ առիթով հեղնում էին Անդրանիկին, իսկ Ակնունին անվանում էր նրան հոռետես և ավելացնում. «Երբեք չտեսա, որ քիչ մըն ալ լավատես ըլլայիր»[328]։ Այդ խոսակցությունից մոտ ամիս ու կես հետո, երբ իթթիհատը կազմակերպեց Ադանայի սպանդը, Անդրանիկը Եգիպտոսից հեռագրեց Ակնունուն, որ նա հիմա հասկանա, թե ով է հոռետեսն ու լավատեսը, ապա ավելացրեց. «Երբ առիթը գտնեն ընկեր Բալեաթներ ձեզ ալ կոտորել պիտի տան»[329]։ Դեպքերի հետագա դաժան ընթացքը հաստատեց Անդրանիկի այդ կանխագուշակումը։

Ջերմորեն սիրելով հարազատ ժողովրդին և ապրելով նրա ցավերով, Անդրանիկը անսահման ատում էր նրա թշնամիներին ու կեղեքիչներին։

---

326 «Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը», Պեյրութ, 1932, էջ 166։

327 Արսեն Ժամկոչյան, Զորավար Անդրանիկ կպատասխանի իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 21։

328 Նույն տեղում։

329 Նույն տեղում, էջ 22։

Պոլսում գտնվելու ժամանակ, երբ դաշնակցության ներկայացուցիչներից մեկը՝ Վարդգեսը առաջարկում է նրան ծանոթանալ ոչ հեռավոր անցյալում Սասունն ավերող, իսկ հեղափոխությունից հետո մայրաքաղաքում ոստիկանապետ նշանակված Ալի փաշայի հետ, Անդրանիկը հրաժարվում է ձեռք տալ այդ ոճրագործին և «մնաք բարով» ասելով հեռանում է[330]:

Անգամ Անդրանիկի թշնամիներից շատերը հետագայում ստիպված էին խոստովանել, թե նա «միակ մարդն էր, որ չխաբվեցավ թուրքերեն և չշլացավ պաշտոններեն»[331]:

Լեռներից իջած և խաղաղ աշխատանք որոնող հայդուկներից քչերը կարողացան ստեղծել իրենց համար քիչ թե շատ բարեկեցիկ տնտեսություն: Նրանց մեծ մասը մնաց դարձյալ իրավազուրկ և հին ու նոր կեղեքիչներից հալածված: Նրանք գանգատվում էին դարձյալ թուրքական պաշտոնյաներից ու քուրդ աղաներից, բայց գանգատվում էին նաև «սեփական», այսինքն՝ հայազգի հարստահարիչներից: Այսպես օրինակ, 1909 թ. մայիսի 26-ին նշանավոր հայդուկի՝ Արմենակ Ղազարյանի (Հրայր, Դժոխք, Ուրվական մականվամբ) եղբայր Ղըզըլաղաճցի Մանուկը, որը նույնպես հայդուկ էր և 1908 թ. հեղաշրջումից հետո որոշել էր իջնել սարերից ու հարազատ գյուղում զբաղվել երկրագործությամբ, իր նամակներից մեկում գրում էր. «Ղըզըլաղաճ գյուղացիներէ կարգ մը հարուստ անձնավորություններ թելադրելով գյուղի հասարակությունը՝ ոտք են հանած իմ և մոտ 20 տուն աղքատիկներու դեմ»: Նրանք ձգտում են գրանց բոլորին «գյուղեն դուրս հանել» և այդ նպատակով աղքատներին զրկում են հողից ու անտառից, դնում են ծանր հարկերի տակ: Մանուկը վերջում նշում էր, որ իր եղբայրը զոհվեց աղգի փրկության համար, իսկ «ես կենացս մեծ մասը անցուցի սուլթանի բռնակալության տակ բանկ զոհերով և մեծ վնասներով, այսօր ալ պետք է եղբայրներու (հայերի—Ա. Հ.) բռնակալության տա՞կ ապրիմ»[332]:

Համիդյան դեսպոտիզմի դեմ 10 տարի պայքարող Փիթարցի Մանուկը, որը սահմանադրության հռչակումով թողել էր հայդուկային կյանքը և նույնպես ուղում էր զբաղվել երկրագործությամբ, 1909 թ. մայիսի 30-ին գրած նամակում ինքնապաշտպանության համար ատըր-

---

330 Նույն տեղում:

331 «Ազգային հերոս զորավար Անդրանիկ և իր պատերազմները», Փարիզ, 1953, էջ 170:

332 Ռուբեն Տեր-Մինասյան, նշված աշխ., հ. 2, էջ 64—65:

ճանակ էր խնդրում, քանի որ կեղեքիչները մտադրվել էին ահաբեկել իրենն[333]։

Բնորոշ է, որ բարեկեցիկ կյանքի տիրացած հայդուկներից ոմանք, տեսնելով հարազատ ժողովրդի տառապանքները, այրեցին ու ոչնչացրին իրենց տնտեսությունները և նորից սար բարձրացան։ Այդպես վարվեց, օրինակ, Գոմսեցի Մոսոն։ Սահմանադրությունից հետո երեկվա ընչազուրկ հայդուկը արդար աշխատանքով տնտեսություն էր սանեծնել, հարստացել և նույնիսկ աղա էր անվանվում, բայց «երկու տարի չանցած Մովսես աղան իր տունը իր ձեռքով վառեց, նորից լեռները լնկավ և դարձավ Մոսո»[334]։

Հայդուկները չէին կարող զբաղվել խաղաղ աշխատանքով, քանի որ տիրապետող վարչակարգը, դասակարգային հարաբերությունները մնացել էին անփոփոխ։ Նախկին պաշտոնյաներն ու աղաները առաջվա նման շարունակում էին ճնշել ու ճզմել աշխատավորներին, ձգտում էին բնաջնջել հայդուկներին, որոնք դեռ երեկ պայքարում էին իրենց դեմ։ Փաստորեն սահմանադրությունը եկել էր օգնելու ոչ թե հայդուկներին, այլ կեղեքիչներին։ Ուստի հայդուկները կարճ ժամանակից հետո նրկին թողեցին տուն ու տեղ, միացան իրենց ազատատենչ ընկերներին և շարունակեցին անվիջում պայքարը։ Տարեցտարի կազմվում էին հայդուկային նոր խմբեր, որոնք համալրվում էին նոր ուժերով։

1910 թ. հունիսի 3-ին ռուսական ռազմական դործակալը հաղորդում էր, որ Մուշի շրջակայքում ստեղծվել է հայդուկային խումբ, որ պաշտպանի հայ գյուղացիներին Մուսա բեյի ոտնձգություններից[335]։

1911 թ. հունիսի 3-ին ռուսական դիվանագիտական աշխատողը դրում էր, որ Տարոնում կազմվել է 20 զինված ֆեդայական խումբ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 20 մարդուց[336]։

1912 թ. սեպտեմբերի 12-ին Օլֆերևը զեկուցում էր իր դեսպանին, որ Գավաշում ու Կարճկանում արդեն ստեղծվել է 3 հայդուկային խումբ[337]։

1913 թ. հուլիսի 15-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Շտրիտտերը զկայում էր, որ Էրզրումի սանջակի Քևոփրի-Քևոյ գյուղում հանդես է եկել հայկական խումբ և ծավալել գործունեություն[338]։

---

333 Տե՛ս նույն տեղում, էջ 66—67։

334 Նույն տեղում, էջ 60։

335 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 64։

336 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 58, թ. 39—41։

337 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912, ց. 482, գ. 719, թ. 237։

338 Տե՛ս նույն տեղում, 1912—1914, գ. 1648, թ. 130։

1913 թ. դեկտեմբերին ռուսական ռազմական գործակալը Հաղորդում էր, որ վերջերս «Վանում հայերը նորից կազմակերպել են պարտիզանական ջոկատներ և մահապատժի ենթարկել քրդական մի քանի պարագլուխների»[339]։

Հայդուկային այս խմբերը զգալիորեն ակտիվացրին արևմտահայ ազգային-ազատագրական ու գյուղացիական շարժումները, որոշ չափով ղսպեցին թուրք պաշտոնյաների, քուրդ աղաների ու ազգային հարստահարիչների սանձարձակությունները, իսկ հայկական ցեղասպանության տարիներին հերոսաբար դիմադրեցին ջարդարարներին և բազմաթիվ հայեր փրկեցին թուրքական յաթաղանից։

Այդպիսով, երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայ գյուղացիական շարժումներն ուղղված էին հիմնականում ֆեոդալական շահագործման, ազգային բռնությունների և անձի ու գույքի անապահովության դեմ։ Ի տարբերություն սուլթան Աբդուլ Համիդի կառավարման վերջին տասնամյակի, իթթիհատի տիրապետության ժամանակաշրջանում ազատագրական պայքարի մեջ ներքաշվեցին ավելի շատ գյուղացիական զանգվածներ։ Իրենց ակտիվ պայքարով աչքի ընկան հատկապես Թաղավանքի, Ոզմի, Կարկառի, Ուրանցի, Շահբազի, Ջարոանջակի և այլ վայրերի գյուղացիները։ Չնայած դրան, արևմտահայ գյուղացիների շարժման մեջ տակավին զերակշռում էին պասիվ եղանակները. նրանք կարծում էին, թե սահմանադրության հռչակումից հետո իրենց կենսական հարցերը կարող են լուծվել բողոքներով ու դանդաղներով, իսկ մյուս կողմից էլ զգուշանում էին, թե ակտիվ գործողություններով առիթ կտան հայկական նոր կոտորածների։

Արևմտյան Հայաստանում գյուղացիական ելույթները առաջանում էին զերազանցապես տարերայնորեն և ընթանում մեկուսի։ Ճիշտ է, որոշ տեղերում նրանք միանում էին, ուղղվում մի նպատակի և հասնում նույնիսկ հաջողության, բայց ընդհանուր առմամբ ավարտվում էին պարտությամբ։ Գյուղացիական շարժումները Թուրքիայում ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում նախապատրաստված չէին, քաղաքական պահանջներ չէին առաջադրում և ծավալվում էին պրոլետարական հզոր պայքարի բացակայության պայմաններում։

Երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո արևմտահայ հայդուկային շարժումը զգալիորեն թուլացավ։ Սակայն կարճ ժամանակից հետո այն վերստին ակտիվացավ և առաջվա նման ուղղվեց

339 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 558։

ազգային ու սոցիալական հարստահարումների դեմ։ Մի շարք տեղերում հայդուկները կարողացան պաշտպանել գյուղացիների անձն ու գույքը և, ահաբեկելով հարստահարիչներին, լուծել նրանց վրեժը։

6. ԱՐՎԱՄՏԱՀԱՅԵՐԻ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ

Երիտթուրքերի կառավարման տարիներին տիրապետող կարգերի ու անտանելի բռնությունների դեմ ըմբոստացան նաև հայ զինվորները։ Ջորակոչելով ծառայության, իթթիհատական կառավարությունը ազդարարում էր, թե կայսրության բոլոր այլազգի քաղաքացիները, այդ թվում նաև հայերը, պետք է օգտվեին այն իրավունքներից, ինչ թուրքերը։ Բայց երիտթուրքական ռազմական իշխանությունները, զինվարվելով կառավարության շովինիստական, հատկապես հակահայկական քաղաքականությամբ, հայ երիտասարդներին դրեցին ավելի ծանր կացության մեջ, քան թուրքերին։ Նրանք հայերին արհամարհում էին ու սոորադասում որպես դյավուրներ, ենթարկում ծաղրուծանակի և անհամատեղելի համարում, որ երկվա ստրկական վիճակում գտնվող ռայան այսօր մահմեդականների ու հատկապես թուրքերի հետ հավասար դնեք կրեն և համարվեն օսմանյան Թուրքիայի լիիրավ ռազմիկներ։ Իթթիհատական ռազմական իշխանությունները հայ զինվորներին ավելի վատ էին կերակրում ու հանդերձավորում։ Սպաները վիրավորում էին նրանց ազգային ու կրոնական զգացմունքները, հարկադրում կատարել ամենածանր ու ստորացուցիչ աշխատանքներ, իսկ առարկելու կամ չենթարկվելու դեպքում ծեծում ու բանտարկում էին։ Ականատեսը նշում էր, որ թուրք սպաները հայ զինվորներին անդադար քշում էին գավառից-գավառ, «առանց զգեստի, առանց կոշիկի, նույնիսկ առանց բավականաչափ սնունդի, իսկ սրանց փոխարեն ծեծ ու առատ հիշոցներ, հայհոյանքներ այդ «դյավուրների» հասցեին»[340]։ Հայ զինվորների այս մարմնական տանջանքների վրա հաճախ ավելանում էին հոգեկան ծանր ապրումներ, երբ լսում էին, որ քրդական կամ թուրքական հրոսակները ավերել են իրենց տունն ու տեղը, տարել ունեցվածքը, արատավորել պատիվը։

Օսմանյան զորանոցներում տիրող հակասանիտարական պայմանների պատճառով հաճախ տարածվում էին զանազան տարափոխիկ ու ծանր հիվանդություններ, որոնք գերեզման էին տանում բազմաթիվ

[340] «Մշակ», 1911, № 271, դեկտեմբերի 8։

հրիտասարդների 1913 թ. մոլեգնող տիֆի հետևանքով գարնանը միայն Մուշում մահացան 340, իսկ աշնանը Վանում՝ 1000 հայ զինվորներ[341]։ Մահվան դեպքերը մեծ էին հատկապես Միջագետքում ու արաբական երկրներում, ուր կլիմայական պայմանները նպաստում էին համաճարակների տարածմանը։ Հիվանդները մատնված էին անուշադրության և նույնիսկ մեռնելուց հետո օրերով մնում էին աննկատ։

Հայերը, չտանելով այդ դժնդակ պայմանները, սկսեցին խուսափել բանակից։ Ոմանք ազատվում էին զորակոչից փողի օգնությամբ։ Կառավարությունը այդ խրախուսում էր, քանի որ ստանում էր զգալի նվամուտներ։ 1910 թ. սեպտեմբերի 15-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Շտրիտտերը նշում էր, որ թուրքական իշխանությունները չեն առարկում, եթե հայերը փրկագնով ազատվեն զինվորական ծառայությունից, որովհետև վաստակում են յուրաքանչյուր զինվորից 50 լիրա։ Միայն մեկ շաբաթվա ընթացքում Էրզրումի պետական դանձարանը այդ ճանապարհով մուտք արեց 1500 լիրա[342]։

Հայ հրիտասարդների մի մասն էլ, չցանկանալով ծառայել օսմանյան բանակում, հեռանում էր այլ շրջաններ կամ մեկնում արտասահման։ Թե որքան մեծ էր սրանց թիվը, կարելի է դատել հետևյալ տվյալներից. 1913 թ. կառավարությունը Էրզրումի սանջակից պահանջեց 800-ից ավելի զինվոր, բայց կարողացավ հավաքել միայն 80 հոգի, կամ 10 տոկոս[343]։ Իսկ ծառայողները հաճախ լքում էին թուրքական բանակն ու փախչում, արհամարհելով փախստականների համար սահմանված պատիժները կամ գնորդասելով դրանք բանակի սարսափելի պայմաններից։ Նրանք միտինգներ էին գումարում տիրապետող բռնությունների ու կամայականությունների դեմ, պահանջում ապրելակերպի բարելավում, դավառներում հարազատների նկատմամբ գործադրած վայրագությունների վերացում, հղում էին իրենց բողոքները մայրաքաղաք, սպառնալով, որ հարցերի բացասական լուծման դեպքում որոշել են «գցել զենքը»[344]։

Արևմտահայ ինչպես քաղաքի ու գյուղի աշխատավորների, այնպես էլ զինվորների ընդվզումները բռնկվում էին տարերայնորեն,

---

341 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 369—370։ «Մշակ», 1913, № 173։

342 Տե՛ս նույն տեղում, 1910, ց. 482, գ. 1646, թ. 20։

343 Տե՛ս «Մշակ», 1912, № 89։

344 Տե՛ս «Մշակ», 1912, № 288, դեկտեմբերի 26։

իրարից անջատ-անջատ, ունեին տեղական նշանակություն և ավարտվում էին պարտությամբ։

7. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Երիտթուրքերի կառավարման տարիներին արևմտահայության կացությունը գնալով ավելի ու ավելի անտանելի էր դառնում։ Թուրք կառավարիչների կողմից կիրառվող ազգային ու սոցիալական հալածանքները ոչ միայն անտեսանելս քայքայում էին արևմտահայերին, այլև տանում էին դեպի ֆիզիկական բնաջնջում։ Դրությունից դուրս գալու համար արևմտահայերը, ի թիվս այլ միջոցառումների, դիմում էին նաև ամենայն հայոց կաթողիկոսի օգնությանը։ 1912 թ. օգոստոսի 28-ին Գևորգ V կաթողիկոսը առաջարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարք Արշարունուն ստույգ և կոնկրետ տեղեկություններ ներկայացնել իրերի իսկական վիճակի մասին[345]։ Կատարելով նրա պահանջը, նույն թվականի սեպտեմբերի 4-ին Արշարունին խորհուրդ հարցրեց կաթողիկոսից՝ ինչպես վարվել այսուհետև։ Համաբյա այդ նույն ժամանակամիջոցում Թիֆլիսի հայ լիբերալ մտավորականության ներկայացուցիչները խնդրեցին կաթողիկոսին՝ դիմել ցարին, որ նա պաշտպանի «Թուրքիայի հայ ժողովուրդը անդրադարձն տանջանքներից և իրավազրկումից»[346]։ 1912 թ. հոկտեմբերի 9-ին սկսված թուրք-բալկանյան առաջին պատերազմը ալատագրության հույսեր արթնացրեց հայության մեջ։ Հոկտեմբերի 15-ին Գևորգ V-ը դիմեց Կովկասի փոխարքային՝ միջնորդել ցարին «վերցնելու իր հովանու տակ Թուրքահայաստանում ապրող բազմաչարչար հայ ժողովրդին»[347]։ Կովկասի փոխարքան Գևորգ V-ի այդ խնդրագիրը հանձնեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովին, որը «բարյացակամորեն վերաբերվեց կաթողիկոսի միջնորդությանը»[348]։

Ցարական կառավարության այդ բարյացակամությունը պայմանավորված էր նախ նրանով, որ վախենում էր, թե ազատագրական շարժումները ծավալվելով, կարող են Արևմտյան Հայաստանից թափանցել Ռուսաստան և ոտքի հանել նաև Անդրկովկասի ժողովուրդներին։ Այդ հանգամանքը կարող էր լուրջ անհանգստություն պատճառել նրան,

345 Տե՛ս «Արարատ», 1914, հունվար, էջ 30։

346 «Մշակ», 1912, № 251, նոյեմբերի 10։

347 «Геноцид армян...», стр. 208.

348 «Մշակ», 1912, № 249, նոյեմբերի 8։

մանավանդ, երբ երկրում արդեն տեղի էր ունենում հեղափոխության նոր վերելք։ Երկրորդ՝ ցարական կառավարությունը կարծում էր, որ Թուրքիան դանվելով պատերազմի մեջ Բալկանյան երկրների դեմ, հարկադրված կլինի իր պահանջով Արևմտյան Հայաստանում անցկացնել բարեփոխություններ, իսկ այդ հանգամանքը ավելի կուժեղացներ արևմտահայերի կողմնորոշումը դեպի Ռուսաստանը, կամրապնդեր Ռուսաստանի դիրքերն ու ազդեցությունը Փոքր Ասիայում և հարմար առիթի դեպքում կհեշտացներ Արևմտյան Հայաստանի նվաճումը։ Այս նկատառումով 1912 թ. դեկտեմբերին Սազոնովը Թուրքական կառավարության ուշադրությունը հրավիրեց արևմտահայերի ծանր կացության վրա և առաջարկեց՝ միջոցներ ձեռնարկել այն թեթևացնելու համար։ Միաժամանակ նա հանձնարարեց Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին՝ անգլիական ու ֆրանսիական ներկայացուցիչների հետ միասնական տեսակետ մշակել հայկական հարցի լուծման ուղղությամբ[349]։

Իմանալով, որ ցարիզմը առաջ է քաշում հայկական հարցը, իթթիլաֆականները այն կանխելու նպատակով 1912 թ. դեկտեմբերի սկզբին կազմեցին բարենորոգումների իրենց նախագիծը, որի հեղինակն էր ներքին գործերի մինիստր Ռեշիդ բեյը։ Այդ նախագծով Արևմտյան Հայաստանում շարունակելու էին գործել Թուրքական օրենքները։ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթների կառավարման համար ստեղծվում էր ընդհանուր վերատեսուչի (генеральный инспектор) *պաշտոնը, որը գործելու էր տեղակալի և հանձնաժողովի օժանդակությամբ։ Այդ վիլայեթների առանձնացումը հիմնավորվում էր նրանով, որ դրանք խիստ հետամնաց էին և առավել շատ էին հատկանշվում անձի ու գույքի անապահովությամբ։ Ընդհանուր վերատեսուչը նշանակվում էր կառավարության կողմից՝ երկրին քաջածանոթ օսմանահպատակներից, իսկ տեղակալը կամ օգնականը՝ օտարերկրացիներից։ Ինչ վերաբերում է հանձնաժողովին, ապա նրա անդամները նույնպես նշանակվում էին պետության կողմից՝ երեք մահմեդական, երեք քրիս-*

---

[349] *Հայկական բարենորոգումների մասին տե՛ս* Ն. Վ. Կարապետյան, *Արևմտյան Հայաստանը XX դ. սկզբին («Հայ ժողովրդի պատմություն», հ. 6)*, Վ. Ա. Պարսամյան, *Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1967, «Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում»*, Ե. Գ. Սարգսյան, *նշված աշխ., «Հայ ժողովրդի պատմություն», խմբագրությամբ պրոֆ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972,* Մ. Պ. Աղայան, *նշված աշխ.։ Ст. Степанян,* Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.

տոնյա կազմով, ընդ որում բրիստոնյաներից երկուսը՝ հայ, իսկ մեկը՝ ասորի: Բոլոր այդ պաշտոնյաները նշանակվում էին 6 տարի ժամանակով և այդ ընթացքում ազատվում էին միայն հանցագործության կատարելու դեպքում: Ընդհանուր վերատեսուչը աշխատելու էր հանձնաժողովի հետ միասին, ընդունած որոշումները հաղորդելու էր կուսակալներին, որոնք պարտավոր էին անհապաղ կենսագործել դրանք: Նա կարող էր ազատել ցածրաստիճան պաշտոնյաներին, իսկ բարձրաստիճան պաշտոնյաներին ու մահմեդական հոգևորականներին ազատելիս պարտավոր էր դիմել նորին մեծության մինիստրին և շեյխ ուլ իսլամին:

Ընդհանուր վերատեսուչն ու հանձնաժողովը պարտավոր էին լուծել հողային հարցը «երկու կողմերին որևէ մեկուն դժգոհություն չպատճառող եղանակով»[350]: Նրանք պարտավոր էին նաև հաստատել հավասարություն բոլոր ժողովուրդների մեջ, պաշտպանել յուրաքանչյուր անհատի իրավունքները, բարենորոգել դատական կազմը, վերակառուցել ժանդարմերիան, բարեկարգել հաղորդակցության միջոցները, նպաստել գյուղատնտեսության ու արհեստի զարգացմանը, մշակել միջոցառումներ երկրի օգտակար հանածոները շահագործելու ուղղությամբ, խրախուսել վաչկատունների անցումը նստակեցության և այլն:

Ընդհանուր վերատեսուչը և հանձնաժողովը իրենց տրամադրության տակ ունենալու էին զինվորներ ու ոստիկաններ, որոնց միջոցով իրագործելու էին որոշումները: Նրանք ղեկավարելու էին նահանգների կուսակալներին, ոստիկանության ու ժանդարմերիային: Վիլայեթներից հավաքված եկամուտները ծառայեցվելու էին նրանց տնտեսական ու կուլտուրական կարիքներին: Նախագիծը պարտադրում էր ընդհանուր վերատեսչին՝ վեց ամիսը մեկ հաշվետվություն ներկայացնել կենտրոնական կառավարությանը նահանգների դրության մասին: Իբրև ամսական ռոճիկ ընդհանուր վերատեսչին սահմանվում էր 20.000, իսկ հանձնաժողովի անդամներին՝ 10.000 ղուրուշ: Նրանք նշանակվում էին հինգ տարի ժամանակով և այդ ընթացքում ազատվում միայն բացառիկ դեպքերում:

Նախագիծը ենթադրում էր, որ երբ նշված չորս վիլայեթները իրենց ընդհանուր զարգացումով հասնեն կայսրության մնացած նահանգների մակարդակին, կառավարվելու են «երկրի ընդհանուր նահանգային

350 «Բյուզանդիոն», 1912, № 4914, դեկտեմբերի 23:

օրինքին համեմատ»[351]։ *Այնուհետև, սույն նախագիծը, որ դառնալու էր ծրագիր, դադարելու էր գործելուց*[352]։

Իթիլաֆականների այս նախագիծը, ինչպես դժվար չէ հղրակացնել, պահպանում էր Արևմտյան Հայաստանում թուրքական բարբարոսական բարքերը, չէր վերացնում բազմաթիվ չարիքներ ծնող աղայական հողատիրությունը, չէր լուծում ոչ հողային և ոչ էլ ազգային հարցերը, չէր բավարարում բնակչության նույնիսկ ամենատարրական պահանջները՝ անձի և գույքի ապահովության ստեղծումը։ Նախագծում նշված որոշ միջոցառումներ առաջ էին քաշվում միայն մասսաներին խաբելու և հայկական բարենորոգումների հարցը օրակարգից հանելու նպատակով։ Ինչպես իրավացիորեն նշում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսը, իթիլաֆականների այդ նախագիծը չէր հասնում նույնիսկ երեք տերությունների 1895 թ. մայիսյան ռեֆորմների նախագծին։ Եթե մայիսյան ռեֆորմները ենթադրում էին ստեղծել Բարձրագույն Դռան կից մշտական հսկող հանձնաժողով, որը պետք է կանոնավոր կապ հաստատեր թուրքական կառավարության և տերությունների դեսպանների միջև, Ռեշիդ բեյի նախագիծը լռում էր այդ մասին։ Ի տարբերություն մայիսյան ռեֆորմների, որոնք անհրաժեշտ էին համարում քրիստոնյաների ակտիվ մասնակցությունը վարչական գործերում, Ռեշիդ բեյի նախագիծը շրջանցում էր այդ հանգամանքը։ Եթե մայիսյան ռեֆորմները տարածվում էին հայկական վեց վիլայեթների վրա, ապա Ռեշիդ բեյի նախագիծը՝ միայն չորս վիլայեթների վրա[353]։

Այնուամենայնիվ, 1912 թ. դեկտեմբերի 12-ին մինիստրների խորհուրդը քննության առավ Ռեշիդ բեյի նախագիծը։ Իթիլաֆականները քննարկմանը հրավիրել էին նախկին պատրիարք Մ. Օրմանյանին, վաճառական Կյուլբենկյանին, դոկտոր Ն. Տաղավարյանին, թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանին և կայսրության արտաքին գործերի մինիստր Գ. Նորատունկյանին, հույս ունենալով, որ դրանց օժանդակությամբ ու պաշտպանությամբ կհասնեն հայկական հարցի լուծմանը և դուրս բերելուն միջազգային դիվանագիտությունից։ Սա-

---

[351] *«Բյուզանդիոն», 1912, № 4914, դեկտեմբերի 23, կամ «Մշակ», 1912, № 287, դեկտեմբերի 25։*

[352] *Այդ նախագծի թարգմանությունը տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4914, «Մշակ», 1912, № 287։* „Сборник дипломатических документов, Реформы в Армении" 26 ноября 1912 года, 10 мая 1914 года, Пг., 1915, стр. 17—19, *«Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում», էջ 161—165։*

[353] *Տե՛ս* «Сборник дипломатических документов», стр. 29. *«Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում», էջ 161—162։*

կայն նրանք սխալվեցին իրենց հաշիվներում, քանի որ այդ անձինք այնպիսի առաջարկություններ մտցրին, որոնք ոչ մի կերպ չէին կարող ընդունվել շովինիզմի մոլուցքով տարված թուրքական կառավարության կողմից։ Այսպես, հայ ներկայացուցիչները պահանջեցին կայսրության հայաբնակ կամ հայկական վիլայեթները այսուհետև անվանել Հայաստան, վերացնել վիլայեթը և իբրև վարչական միավոր ճանաչել գավառը, բարենորոգումները տարածել նաև Սեբաստիայի ու Կարնո վիլայեթների վրա, վարչական հաստատություններում գործածել նաև հայերեն ու քրդերեն լեզուները, գավառապետներին կից նշանակել օտարահպատակ խորհրդատուներ, իսկ հանձնաժողովում երկուական հայերից ու թուրքերից զատ ընդգրկել նաև երկու օտարազգի անդամներ։ Հայ ներկայացուցիչները այնուհետև պահանջեցին բարեփոխել հարկային սիստեմը, վերացնել խաֆիրության տուրքը, ցրել համիդիեն, մեծացնել հողային հարցի լուծման համար նախատեսված գումարը, հասցնելով նվազագույնը 200.000 ոսկու կամ 1.600.000 ռուբլու, քննարկել կազմված նախագիծը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում և այլն։

Այդ պահանջներից իթիլաֆականները ընդունեցին միայն մի մասը, այն է՝ տարածել բարենորոգումները նաև Սեբաստիայի ու Կարնո վիլայեթների վրա, պայմանով, որ հայաբնակ վեց վիլայեթները բաժանվեն երկու սնկատրների, դրանցից մեկը ընդգրկի Վանի, Բիթլիսի և Էրզրումի, իսկ մյուսը՝ Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի վիլայեթները։ «Այս երկու շրջաններու մեջ պիտի գործեն միևնույն իրավասարությամբ երկու հանձնաժողովներ—երեք քրիստոնյա և երեք իսլամ անդամներով՝ և օտար նախագահ մը ունենալով— և երկու ընդհանուր քննիչներ»[354]։

Իթիլաֆականները համաձայնվեցին փոխարինել վիլայեթները գավառներով, բարեփոխել հարկային սիստեմը, ինչպես նաև վերացնել խաֆիրության տուրքը։ Մնացած պահանջները նրանք մերժեցին, բերելով անհիմն փաստարկներ։ Նրանք, օրինակ, գտնում էին, որ հայաբնակ վիլայեթները չի կարելի անվանել Հայաստան, որովհետև Օսմանյան կայսրության անցյալում չի եղել այդպիսի վարչական միավոր։ Մերժելին նաև հայերենի ու քրդերենի մուտքը վարչադատական հաստատություններ, պատճառաբանելով, որ թուրքերենը արդեն դարձել է շատերի սեփականությունը, իսկ տակավին չիմացողները կարող են բացատրվել թարգմանիչի օգնությամբ։ Այնուհետև չընդունեցին օտարահպատակների մուտքը հանձնաժողովներում կամ նշանակումը գավառապետի

[354] «Մշակ», 1912, № 288, դեկտեմբերի 26։

օդնական, հայտարարելով, որ դա առիթ կտա նրանց միջամտել Թուրքիայի ներքին գործերին և այլն[355]։

Տեսնելով Թուրք կառավարիչների մերժողական վարքագիծը, 1912 թ. դեկտեմբերի 24-ին ամենայն հայոց կաթողիկոսը դիմից ցարին և խնդրից տերությունների առաջիկա Լոնդոնյան կոնֆերանսում, ուր քննվելու էր Բալկանների խնդիրը, լուծել նաև հայկական հարցը։ Նա գրում էր. «Եթե հայերը հիմա էլ շրջանցվեն, ապա դա հավասարազոր կլինի նրանց վերջնական բնաջնջման»[356]։ Դեկտեմբերի 29-ին կաթողիկոսը եպիսկոպոս Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ և Արթին Յաղուբ փաշայի, Մինաս Չերազի, Հարություն Մոստիճյանի, Գևորգ եպիսկոպոս Յուրուճյանի, Մաղաքյա Օրմանյանի ու այլոց անդամակցությամբ պատվիրակություն ուղարկեց Փարիզ՝ հանձնարարելով հարց բարձրացնել եվրոպական տերությունների առաջ՝ 1878 թ. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի իրագործման մասին[357]։ 1913 թ. հունվարին այդ պատվիրակությունը դիմեց Փարիզի ռուսական դեսպան Իզվոլսկուն, որը պատասխանեց, թե հայկական «հարցը օրակարգի մեջ կմտցվի իսկույն, երբ պատերազմը կվերջանա և քաղաքական վիճակը կորցրած կլինի իր լարվածությունը»[358]։

Շուտով Թուրքիայում տեղի ունեցավ նոր հեղաշրջում. տապալված իթթիհատականների փոխարեն իշխանության գլուխ վերստին կանգնեցին հրիտթուրքերը։ Նրանք նույնպես փորձեցին արևմտահայ քաղաքական շրջանների հետ բանակցություններ վարելու և կեղծ խոստումներ տալու ճանապարհով հայկական հարցը հանել միջազգային դիվանագիտության քննարկումից։ Թալեաթը 1913 թ. փետրվարին տեսակցություն ունեցավ Կ. Պոլսի հայոց պատրիարքի հետ և պահանջեց նրա տեսակետները հայկական բարենորոգումների մասին։ Ստանալով դրանք, նա խորամանկորեն հայտարարեց. «Անընդունելի կետեր չեն պարունակվում անոնք և արդեն Բ. Դուռը նախապես պատմադիր եղած է այդ պահանջները իրագործելու՝ հայ ազգի հետ փոխադարձ համաձայնությամբ»[359]։ Ապա նշեց, թե շուտով արևելյան նահանգներն է մեկնելու հայերից, քրդերից և անգլիացիներից կազմված հանձնաժողով, որը մշակելու է բարենորոգումների վերջնական նախագիծ։ Երիտթուրքերի ղեկավարները առաջարկեցին պատրիարքին առայժմ սպասել և դադարեց-

---

355 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4914, դեկտեմբերի 23։

356 «Геноцид армян...», стр. 222.

357 Տե՛ս «Մշակ», 1913, № 21, հունվարի 29։

358 «Մշակ», 1913, № 3, հունվարի 6։

359 Վ. Փափազյան, նշված աշխ., էջ 194—195։

նել երկրի ներսում ու դրսում հակաթուրքական պրոպագանդան[360]։ Արշաւունին կատարեց նրանց պահանջը, բայց տեսնելով, որ իրերի դրութիւնը մնում է անփոփոխ, շարունակեց հարցի արծարծումը։ Իթթիհատի պարագլուխները այս անգամ նրան պատասխանեցին, թե բարենորոգումներ են նախապատրաստում ամբողջ երկրի համար, որոնք կիրագործվեն նաև հայկական վիլայեթներում։ Դա, իհարկէ, նրանց կողմից նոր փորձ չէր հայկական հարցը քաշքշուկի ոլորտը նետելու և մոռացութեան տալու համար։ 1913 թ. մարտի 11-ին Գիրսը գրում էր. «Ըստ երևոյթին, երիտասարդ թուրքերի կառավարութիւնը խուսափելով նրա համար անցանկալի հայկական ինքնավարութիւնից, վճռել է դիմել նմանօրինակ դեպքերում քանիցս փորձված միջոցին—հայտարարել բարենորոգումներ ընդհանուր պետութեան համար։ Սուլթան Նպաստակի իրագործման համար կառավարութիւնը մտադիր է օգտվելու 1911—1912 թթ. նիստերում պառլամենտական հանձնաժողովի մշակած «վիլայեթների կառավարումը» օրինագծից, որի երկրորդ մասը, համաձայն սահմանադրութեան 36-րդ հոդվածի, հաստատված լինելով անցյալ տարվա ապրիլ ամսում սուլթանի կողմից, մինչև այժմ չի մտել գործնական կյանքի մեջ»[361]։

Իթթիհատի պարագլուխները՝ Թալեաթը, Ջեմալը և մյուսները հանդիպումներ ունեցան դաշնակցութեան ներկայացուցիչների հետ և առաջարկեցին նրանց հետ կենալ հայկական հարցի արծարծումից, քանի որ հայկական վիլայեթներում իրենք անցկացնելու են ռեֆորմներ։ Նրանք նշում էին, որ բարենորոգումների ուշացման պատճառը, իբր թե, եղել է Թուրքիայի ներքին ու արտաքին ծանր դրութիւնը։ Միաժամանակ նրանք ահաբեկեցին դաշնակցութեան գործիչներին, ասելով, թե հայերի համար վատ հետևանք կունենա, եթե նրանք դիմեն արտաքին ուժերի, հատկապես Ռուսաստանի օգնութեանը և առիթ տան նրան միջամտելու իրենց երկրի ներքին գործերին։

Իթթիհատի ղեկավարները փորձեցին բանակցել նաև Օրմանյանի, Տ. Քելեկյանի, դոկտոր Տաղավարյանի և ուրիշների հետ։ Սակայն սրանք մերժեցին, հայտարարելով, որ իրենք պաշտոնական անձինք չեն։

Երիտթուրքերը, այնուհետև, կիրառեցին հայերի հանդեպ ահաբեկման ու բոյկոտի տակտիկան։ Նրանք սկսեցին հայերին պաշտոնազրկել, հրդեհել նրանց ունեցվածքը, դրդել մահմեդականներին՝ առևտուր չանել

360 Տե՛ս «Մշակ», 1913, № 89, ապրիլի 27։

361 «Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում», էջ 171։

հայերի հետ, չգնել նրանց ապրանքները, վարկ չտալ «անվստահելի պյավուրներին» և այլն։

Քաղաքական այդպիսի թոհուբոհի պայմաններում արևմտահայ հասարակական-քաղաքական տարբեր շրջաններն ու կուսակցությունները կազմեցին հայկական բարենորոգումների մի ընդհանուր նախագիծ, որը հայտնի է պատրիարքարանի նախագիծ անունով, և 1913 թ. ապրիլի սկզբներին ներկայացրին Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը։ Այդ նախագծի ստեղծմանը մասնակցել էին Գ. Զոհրապը, Ռ. Զարդարյանը, Վ. Փափազյանը և Ակնունին։

Համաձայն պատրիարքարանի նախագծի՝ հայկական վեց վիլայեթներից կազմվում էր մի վարչական միավոր, որի կառավարման համար եվրոպական մեծ տերությունների կողմից նշանակվում էր ամուր դիրք ու անխախտելի իրավունքներ ունեցող կոմիսար։ Այդ միավորի վարչական բաժանումը պետք է կատարվեր ըստ բնակչության ազգային հատկանիշների և զարգացման մակարդակի։ Նախագիծն այդպիսով բացառում էր նստակյացների ու քոչվորների կամ կիսաքոչվորների համախմբումը մի վարչական տերիտորիայում։ Համիդյան դնդերը միաձուլվում էին կանոնավոր բանակին, իսկ մուհաջիրների կամ այլ մահմեդականների բնակեցումը հայկական հողերի վրա արգելվում էր։ Հողային հարցը լուծվում էր վարչական կարգով, այսինքն՝ առանց դատարանի որոշման հայերին էին վերադարձվում անցյալում նրանցից բռնագրավված տարածությունները։ Յուրաքանչյուր ազգություն պետք է ինքը վարեր իր կրթական ու մշակութային գործերը և ինքը նշանակեր այդ նպատակին ծառայող հարկերի չափերը։ Բոլոր օրենքներն ու կանոնագրերը պետք է հրատարակվեին տեղական լեզուներով, իսկ գավառների վարչական, դատական ու ելևմտական ատյաններում գործածվեին այդտեղ գերակշռող ժողովրդի լեզուն։ Մի խոսքով՝ պատրիարքարանի նախագիծը գոնում էր, որ «հայերու բնակված հողամասը, մնալով հանդերձ Օսմանյան կայսրության ամբողջական մասը, պետք է ենթակա ըլլա սեփական վարչության, որ համապատասխանե տեղական պահանջներուն»[362]։

Նախագծի վերջում ասվում էր. «Հայ ժողովուրդը անգամ մը ևս իր հայացքը կը դարձնե դեպի պետությունները և կոչ կընե Եվրոպայի հանրային խղճին, ո՛չ թե գթություն հայցելու, այլ պահանջելու համար այն, ինչ որ իր արդար իրավունքը ըլլալ կը համարե, իրավունք մը նվիրագործված քանի մը հարյուր հազար զոհերու գնով, անհավասար,

362 Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. 2, Պեյրութ, 1952, էջ 543—583։

դերմարդկային պայքարով մը, որ քսան տարի շարունակ մղված բռնակալութեան և հալածանքի դեմ՝ իրավունք մը նվիրագործված է վերջապես, պետութեանց իրենց իսկ բաղմաթիվ անգամներ կրկնված հանձնառութիւններով»[363]:

Շուտով Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը հանձնարարեց Գիրսին՝ ֆրանսիական ու անգլիական դեսպանների հետ համատեղ մշակել հայկական բարենորոգումների նախագիծ, հիմք ընդունելով 1895 թ. մայիսյան ռեֆորմները: Միաժամանակ նա դիմեց Ֆրանսիային, Անգլիային, Գերմանիային, Ավստրո-Հունգարիային և Իտալիային՝ ձեռնամուխ լինել հայկական հարցի լուծմանը: Ռուսաստանի ակտիվությունը այդ խնդրում արտաքին գործերի մինիստրը հիմնավորում էր նրանով, որ իր երկիրը, լինելով Թուրքիային հարևան ու նրա հետ միասին տիրելով հայ ազգաբնակչությանը, չի կարող անտարբեր մնալ հայկական շարժումների կամ ջարդերի նկատմամբ, որոնք կարող են առաջանալ թուրքական կառավարության քաղաքականության հետևանքով: Միակ միջոցը, եզրափակում էր Սազոնովը, որ կարող է կանխել այդ ամենը՝ տերությունների հսկողության բարենորոգումների կիրառումն է[364]:

Եոյակ միությունը Ռուսաստանի առաջարկությունը ընդունեց մեծ վերապահությամբ: Գերմանիան հայտարարեց, որ հայկական բարենորոգումները անցկացնելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել Թուրքիայի տերիտորիալ ամբողջականությունը[365]: *Ավստրիան ազդարարեց, որ ինքը կմասնակցի ռեֆորմների նախագծի քննարկմանը միայն այն դեպքում, երբ այդ ռեֆորմները չվնասեն Օսմանյան կայսրության անձեռնմխելիությանը և սուլթանի հեղինակությանը*[366]: *Իտալիան պա-*

---

[363] *Նույն տեղում, էջ 583: Կարևոր ենք համարում նշել, որ Հոլրատը ինն մասնակցեց պատրիարքարանի այդ նախագծի ստեղծմանը, բայց չէր բաժանում կուսակցությունների տեսակետը և չէր հավատում նախագծի իրականացմանը: Նա մասնակցեց այդ գործին ազգային ճակատի միասնության պահպանման համար: Ահա թե ինչ էր գրում նա այդ առթիվ 1914 թ. օգոստոսի 18-ին իր օրագրում. «Ես սկզբնե մեր պատրաստած ծրագրին կուսակից չէի, գայն ստանալու հույսը օր մը չունեցա, ես ատենին ընդդիմացա՝ չափազանց հատաջանցյալ պահանջումներու դեմ հարուցվելիք դժվարությունները ճաշակելով, այն ատեն ալ կուսակցությունները հայրենասիրական պահանջներու մեջ զիրար գերազանցելու տենչը իր դերը խաղաց: Իսկ խելքը գլուխը եղողը կընդուներ, որ տեղեկ ավելի մշտական հայկական իղձ մը կը ներկայացնի քան թե իրապես ու գործնապես ձեռք բերվելիք բան» («Նայիրի», 1975, մայիս, № 46—50):*

[364] *Տե՛ս* «Сборник дипломатических документов...», стр. 40.

[365] *Տե՛ս նույն տեղում, էջ 43—44:*

[366] *Տե՛ս նույն տեղում:*

տասխանաց, որ ինքը կբվնարկի ռեֆորմների օգտին այն ժամանակ, երբ պրանք մշակվեն Թուրքական ներկայացուցչի մասնակցությամբ և չխախտեն Թուրքիայի տերիտորիալ ամբողջականությունը[367]:

Երիտթուրքերը, նախ, փորձեցին սրել Անտանտի երկրների ներհակություններն և օգտվել դրանցից: Այդ նպատակով դիմեցին միայն Անգլիային՝ խնդրելով տպաներ տրամադրել Թուրքիային՝ «Փոքր Ասիայում ժանդարմերիայի ստեղծման համար»[368]: *Բայց արդյունքի չհասնելով, հնարվեցին նույակ միության պաշտպանության վրա և ձգտեցին մերժել Ռուսաստանի առաջարկությունը, պատճառաբանելով, թե հայկական հարցի քննարկումը միջազգային մասշտաբով կնսեմացնի Թուրքիայի հեղինակությունը և պահանջեցին իրենց թողնել հայկական բարենորոգումների խնդիրը*[369]:

Սակայն Ռուսաստանը հերթից ինչպես նույակ միության, այնպես էլ Թուրքիայի պատճառաբանությունները: Նա դտավ, որ Թուրքական ներկայացուցչի մասնակցությունը բարենորոգումների նախագծի մշակմանը կձգձգի գործը և իսր հիասթափություն կպատճառի հայերին, անտեղի համարեց երիտթուրքերի անհանգստությունը, հայտարարելով, որ բարենորոգումները նպատակ ունեն ոչ թե ոտնահարել Թուրքիայի շահերը կամ հարվածել նրա հեղինակությանը, այլ հանգստացնել Արևմտյան Հայաստանը: Անդրադառնալով երիտթուրքերի այն հարցադրմանը, թե իրենք կլուծեն բարենորոգումների հարցը, Ռուսաստանը պատասխանեց, որ տերությունները երկար են սպասել, սակայն Թուրքիան ոչ միայն չի լուծել, այլ ավելի է խճճել այն և անտանելի պարծրել հայ բնակչության կացությունը[370]:

Ինչ խոսք, որ տերություններին հետաքրքրողը ոչ թե Թուրքիայի կամ հայերի շահերի պաշտպանությունն էր, այլ իրենց իմպերիալիստական ձգտումները: Նպատակ ունենալով որքան հնարավոր է օգուտներ քաղել Թուրքիայից, նրանցից յուրաքանչյուրը երկյուղ էր կրում Օսմանյան կայսրության մեջ հակառակորդի կամ դաշնակցի դիրքերի ամրապնդումից: Բնորոշ է, որ տերությունները նախապատրաստվում էին լուծել հայկական հարցը՝ առանց հայերի մասնակցության:

Այնուամենայնիվ, կատարելով իր պետության հանձնարարությունը, Կ. Պոլսի ռուսական դեսպանատան առաջին թարգման Մանդելշտամը

---

[367] *Տե՛ս նույն տեղում, էջ 48:*

[368] *«Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում», էջ 179:*

[369] *Տե՛ս* «Сборник дипломатических документов...», стр. 48.

[370] *Տե՛ս նույն տեղում, էջ 49:*

1880 թ. եվրոպական հանձնաժողովի, 1895 թ. երեք տերությունների մայիսյան ռեֆորմների և նույն թվականի հոկտեմբերի 20-ի սուլթանի դեկրետի հիման վրա մշակից հայկական բարենորոգումների նախագիծը և 1913 թ. հունիսին ներկայացրից տերությունների դեսպանների քննությանը։ Պատմական փաստաթղթերում այդ նախագիծը հիշատակվում է «Մանդելշտամի նախագիծ» կամ «Ռուսական նախագիծ» անուններով։ Ավելորդ չենք համարում բերել նրա համառոտ բովանդակությունը։

Հայկական վեց վիլայեթներից (Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի և Սըվասի), բացառությամբ Հնթիարիի սանջակից, Սղերդի սանջակի հարավային վայրերից, Մալաթիայից ու Բշերիկից, ինչպես և Սըվասի վիլայեթի հյուսիս-արևմտյան շրջաններից, կազմվելու էր մեկ մարզ, որը բաժանվելու էր սանջակների, կազանների ու նահիեների։ Այդ մարզի սահմանագծումն ու վարչական բաժանումն այնպես էր կատարվելու, որ նրանց բնակչությունը իր ազգային կազմով, որքան հնարավոր է, լինի միատարր։

Հայկական մարզի գեներալ-նահանգապետը պետք է լիներ օսմանահպատակ քրիստոնյա կամ, որ դերադասելի է, եվրոպացի։ Նա նշանակվելու էր սուլթանի կողմից՝ տերությունների համաձայնությամբ, հինգ տարի ժամանակով։ Լինելով մարզի կառավարիչ, գեներալ-նահանգապետը նշանակելու կամ աղատելու էր բոլոր պաշտոնյաներին և դատավորներին, հրահանգելու էր ոստիկանության ու ժանդարմերիային և անհրաժեշտության դեպքում գործի էր դնելու մարզում տեղավորված զորամասերը։

Գեներալ-նահանգապետի թեև տակ խորհրդակցական իրավունքով գործելու էր վարչական խորհուրդը, որը բաղկացած էր լինելու վարչական մասերի պետերից, կրոնական համայնքների հոգևոր առաջնորդներից, եվրոպական տեխնիկական խորհրդատուներից, ինչպես նաև մարզի խորհրդի կողմից ընտրված վեց խորհրդատուներից (երեքը՝ մահմեդական, երեքը՝ քրիստոնյա)։ Գեներալ-նահանգապետի իշխանության տակ էր լինելու նաև մարզային ժողովը, որը կազմվելու էր կազաների բնակչության կողմից՝ գաղտնի քվեարկությամբ մահմեդականներից ու քրիստոնյաներից հավասարապես ընտրված անդամներից հինգ տարի ժամանակով և հավաքվելու էր նիսաների տարին մեկ, իսկ բացառիկ դեպքերում նաև ավելի անդամ։ Գեներալ-նահանգապետը կարող էր ցրել մարզային ժողովը, մշակել նրա համար օրենքներ, որոնք, սակայն, պետք է հաստատվեին սուլթանի կողմից։

Սանջակների կառավարման համար նշանակվում էին մութասարիֆներ, որոնց իրավասության տակ գործում էին խորհուրդներ՝ բաղկացած սանջակի վարչական մասերի պետերից, կրոնական համայնքների առաջնորդներից, ինչպես և կազայի վարչական խորհրդի կողմից հավասարաչափ ընտրված մահմեդական ու քրիստոնյա վեց անդամներից:

Կազաների կառավարման համար նշանակվում էին վայվակամներ, որոնց կից գործում էին նույնպես խորհուրդներ՝ բաղկացած կազայի վարչական մասերի պետերից, կրոնական համայնքների առաջնորդներից և նահիյաների խորհրդի կողմից հավասարապես ընտրված մահմեդական ու քրիստոնյա չորս անդամներից:

Նահիյաները կազմվում էին միևնույն ազգության պատկանող գյուղերից և կառավարվում մյուդիրի ու բնակչությունից ընտրված խորհրդի կողմից: Բնակիչները նախապես ընտրում էին 4—8 հոգուց բաղկացած խորհուրդ, որի անդամները իրենց միջից առաջ էին քաշում մյուդիրին ու նրա տեղակալին, ընդ որում մյուդիրն ընտրվում էր նահիյի գերիշխող, իսկ տեղակալը՝ երկրորդ մեծությունը կազմող ազգությունից:

Հայկական մարզում, սանջակներում, կազաներում ու նահիյաներում գործելու էին դատարաններ, որոնք զբաղվելու էին քաղաքացիների վեճերի լուծումով: Այդ դատարանների կողքին պահպանվելու էր նաև մահմեդական հոգևոր (շերիի) դատարանը, որը զբաղվելու էր իրեն վերաբերող խնդիրներով:

Մարզի ոստիկանության ու ժանդարմերիայի կորպուսները կազմվում էին մահմեդականներից ու քրիստոնյաներից, իսկ սպաները ընտրվում էին եվրոպացիներից՝ համաձայնելով թուրքական ծառայողներ: Նահիյաներում գործելու էին գյուղական պահապաններ, որոնք նշանակվելու էին նահիյաների խորհուրդների կողմից և ենթարկվելու մյուդիրին: Զորակոչված քաղաքացիները խաղաղ պայմաններում ծառայելու էին մարզի սահմաններում, իսկ պատերազմի ժամանակ՝ ուր կառաջարկի գլխավոր հրամանատարությունը կամ կառավարությունը: Լիկվիդացվելու էին քրդական թևեր հնձելաղորային գնդերը՝ համիդիեները:

Մարզի կուսակալները, մութասարիֆները և կայմակամները նշանակվելու էին նրանց իրավասության տակ գտնվող բնակչության գերիշխող ազգությունից, իսկ մնացած պաշտոնյանները, ներառյալ նաև դատավորները՝ մահմեդականներից ու քրիստոնյաներից հավասար քանակությամբ: Ընտրական իրավունքից օգտվելու էին միայն նստակյաց

երկրագործները։ Կառավարական օրենքները, հրամանագրերը, որոշումները և պաշտոնական այլ գրությունները ժողովրդականացվելու էին թուրքերեն, հայերեն ու քրդերեն, իսկ բնակիչների խնդրագրերը, դիմումներն ու դանգատները գրվելու էին նրանց ցանկացած լեզվով։ Դատարաններում քաղաքացիները կարող էին հանդես գալ իրենց մայրենի լեզուներով, սակայն որոշումները կազմվելու էին թուրքերեն ու թարգմանվելու կողմերի ազգային լեզուներով։

Մարդի յուրաքանչյուր ժողովուրդ կարող էր իր միջոցներով բացել մասնավոր դպրոցների։ Ինչ վերաբերում էր համիդյան բռնությունների տարիներին հափշտակված հողերին, ապա նախագիծը գտնում էր, որ պետք է գեներալ-նահանգապետների գլխավորությամբ կազմել հատուկ հանձնաժողով, քննել հարցը, վերադարձնել հողերը իրենց նախկին տերերին կամ պարտադրել բռնագրավողներին՝ փոխարինը հատուցել դրամով ու այլ արժեքով։

Մանդելշտամի նախագիծը պահպանում էր արևմտահայության 1863 թ. Ազգային սահմանադրությունը, արգելում էր մարդի տերիտորիայում մուհաջիրների բնակեցումը, ենթադրում էր հատուկ կանոնների մշակում՝ Հայկական մարզից դուրս, բայց Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ բնակչության կացության բարելավման վերաբերյալ (հատկապես Կիլիկիայի) և, վերջապես, հայտարարում էր, թե տերությունները կհետևեն որոշումների կենսագործմանը[371]։

Մանդելշտամի այս նախագիծը իթթիլաֆականների նախագծի համեմատությամբ դրական էր, քանի որ ինչ-որ չափով երաշխիք էր տանդծում թուրքական բռնությունների ու կամայականությունների սահմանափակման ու հայերի ազգային կյանքի զարգացման համար։

Իթթիհատի պարագլուխները փորձեցին արտամղել ռուսական նախագիծը դիվանագիտական քննարկումներից և 1913 թ. հունիսին ներկայացրին իրենցը, որի մեջ խոսում էին կայսրության ընդհանուր բարենորոգումների մասին, կանգ չառնելով հատկապես Արևմտյան Հայաստանի վրա։ Նրանք երկիրը բաժանում էին վեց սեկտորների, իսկ Հայաստանը, կամ, ինչպես իրենք էին անվանում, արևելյան վիլայեթները՝ «երկու սեկտորի՝ առանց սրանց սահմանների որոշման»[372]։ Յուրաքանչյուր սեկտորի գլուխ կանգնում էր եվրոպացի ընդհանուր

---

371 Տե՛ս նույն տեղում, էջ 61—69։

372 «Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում», էջ 242։

վերատեսուչը՝ թուրք օգնականով, որոնք նշանակվում էին Թուրքիայի մինիստրների խորհրդի կողմից՝ սուլթանի հաստատումով և առանց մեծ պետությունների համաձայնության։

Վերատեսուչներին իրավունք էր վերապահվում կառավարությանը ներկայացնել նախագծեր տեղական օրենքների փոփոխման, հարկահանության ընթացքի, ժանդարմերիայի գործունեության և այլ հարցերի մասին, իսկ պաշտոնյաներին ազատելը թողնվում էր թուրքական կենտրոնական իշխանությանը կամ կուսակալներին[373]։

Երիտթուրքերի նախագծում խոսք չկար Հայաստանի մասին, ընդհակառակը՝ այդ անունը չշեշտելու համար, ինչպես նշում էր Կ. Պոլսի ֆրանսիական դործերի հավատարմատարը 1913 թ. հուլիսի 6-ին, «Բարձր Դուռը մինչև իսկ վարչական շրջանների աղյուսակում մեկը մյուսից անջատել է արևելյան վիլայեթները և բաժանել երրորդ շրջանի (Էրզրումի, Սըվազի, Տրապիզոնի, Ջանիկի սանջակների կամ Սասունի վիլայեթներ) և հինգերորդ շրջանի (Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Վանի վիլայեթներ) միջև։ Նա չորրորդի մեջ դրել է Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի, Ուրֆայի սանջակների, Զորի և Երուսաղեմի վիլայեթները»[374]։ Ինչ խոսք, որ երիտթուրքերի նախագիծը բխում էր իրենց շովինիստական քաղաքականությունից և ոտնատակ էր տալիս հայ բնակչության կենսական շահերը։

1913 թ. հունիսի 3-ից Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանները քննության առան ռուսական նախագիծը, որի ժամանակ անգլիական ու ֆրանսիական ներկայացուցիչները բավարարվեցին մասնակի պիտողություններով ու շտկումներով, իսկ գերմանական, ավստրո-հունգարական ու իտալական դեսպանները բռնեցին ժխտողական դիրք և պահանջեցին ռուսականի փոխարեն հիմք ընդունել թուրքականը։ Գուլկևիչը, հետագայում անդրադառնալով այդ քննարկմանը, գրում էր. «Թուրքական շահերի պաշտպանության հարցում առանձնապես աչքի ընկավ գերմանական ներկայացուցիչը և եթե երբևիցե Ծնի-Քեոյի հանձնաժողովի արձանագրությունները լույս ընծայվեին, այն ժամանակ հայերն ակնհայտ կերպով կծանոթանային գերմանացիների խնդական ղգացմունքների հետ, որոնք աշխատել են միաժամանակ զրավել հայերին իրենց շողոքորթող խոստումներով»[375]։

---

373 Տե՛ս նույն տեղում։

374 Նույն տեղում, էջ 249։

375 Նույն տեղում, էջ 344։

Տևական վիճաբանություններից հետո ռուսական ու գերմանական դեսպանները 1913 թ. սեպտեմբերին եկան, վերջապես, հետևյալ համաձայնության։ Արևելյան Անատոլիայում կազմվում են երկու սեկտորներ, որոնցից մեկի մեջ մտնում են Էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի, իսկ մյուսի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները։ Նրանք կառավարվում են ընդհանուր վերատեսուչների կողմից, որոնց Բարձրագույն Դուռն պահանջով տալիս է տերություններն։ Վերատեսուչները կարող են հարց բարձրացնել պաշտոնյաների նշանակման կամ աղատման մասին, իսկ Բ. Դուռը ընդառաջում կամ մերժում է նրանց առաջարկությունները։ Յուրաքանչյուր սեկտորում պաշտոնյաները նշանակվում են հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից և այդ նույն սկզբունքով բնակչության կողմից ընտրվում են ժողովներ։ Թուրքական կառավարության կողմից սահմանված բարենորոգումներն իրագործում են մեծ տերությունները՝ Կ. Պոլսի իրենց դեսպանների և տեղական հյուպատոսների միջոցով։ Այդ տերությունները միաժամանակ կարող են մշակել երկու սեկտորների համար այլ բարենորոգումներ[376]։

Այս նախագիծը 1913 թ. սեպտեմբերի 24-ին ընդունվեց նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի կողմից ու հանձնվեց մեծ վեզիրին։ Չնայած այդ նախագիծը ռուսականի համեմատությամբ մեծ քայլ էր դեպի հետ, քանի որ պահպանում էր Թուրքիայի իրական իշխանությունը Արևմտյան Հայաստանում և համարյա բացառում լուրջ ձեռնարկումները, այնուամենայնիվ երիտթուրքերը ձգտում էին չկիրառել այն։ Այդ նպատակով մի կողմից նրանք դիմեցին գործնական որոշ քայլերի՝ համոզելու համար միջազգային շրջաններին, թե արդեն բարելավվում է հայերի դրությունը Արևմտյան Հայաստանում, ինչ-որ չափով սահմանափակեցին ավազակությունը, հետապընդեցին ու սպանեցին տասնամյակներ շարունակ հայերին կոտորող ու թալանող քրդական որոշ աղաների (Շաքիր աղային, Միր Մհեին և այլոց), մի քանի տեղերում վերցրին քրդերի բռնագրաված հայկական հողերն ու վերադարձրին նախկին տերերին[377]։

---

376 Տե՛ս «Сборник дипломатических документов...» стр. 93—94.

377 Օգտագործելով այդ հանգամանքը, թուրքական պաշտոնյաները սկսեցին հայատարել, թե արևելյան նահանգներում հողային հարցն արդեն լուծված է։ Այսպես, Վանի կոտակալ Թահսիմ բեյը 1913 թ. աշնանը հրապարակորեն հայտարարեց. «Վանի նահանգի մեջ հողային խնդիր չէ մնացած գրեթե, բացի Հեքյարիի մեջ եղած աննշան խնդիրներից»։ Դա պարզապես անհեթեթություն էր։ Եվ պատահական չէ, որ Թահսիմ բե-

Երիտթուրքերը, մյուս կողմից, ձգտում էին ավելի սեղմել տերությունների հայկական բարենորոգումների նախագիծը։ Այդ առթիվ 1913 թ. հոկտեմբերի 16-ին (29-ին) Գիրսը գրում էր Սազոնովին. «Դուռը չի կարող ընդունել Եվրոպայի մասնակցությունն ընդհանուր վերահսկողության նշանակման հարցում։ Նա համաձայնվում էր միայն ընդունել Եվրոպական խորհրդականներին տասը տարվա ժամանակամիջոցում, մի պայմանով, որ Դուռն առաջարկության խնդրով դիմի ոչ թե բոլոր մեծ պետություններին, այլ նրանցից որևէ մեկին... Առհասարակ մեծ վնդիրն այժմ ավելի պակաս դիջողություն է ցույց տալիս, քան մեր բանակցությունների սկզբում։ Դուցե նա անձամբ ավելի դիջողաբար վարվի, եթե ենթակա չլիներ երիտասարդ թուրքերի կաբինետի խիստ հսկողությանը, որը գործում է իր դեկավարների շովինիստական զգացումների ազդեցության տակ»[378]։

Ռուսական դեսպանն այնուհետև շարունակում էր. «Ընդհանրապես վերցրած, երիտասարդ թուրքերն աշխատում են թաղել հայկական հարցը, համարելով այն Թուրքիայի ներկա դրության համար ամենավտանգավոր հարցերից մեկը և երկյուղելով, որ հայերին արած ամեն մի դիջողություն կարող է առաջ բերել արաբների համապատասխան պահանջը»[379]։

յի այդ հայտարարությունը առաջ բերեց բուռն ցասում ու զայրույթ։ Մի շարք իրազեկներ հարկ համարեցին մամուլում անդրադառնալ կուսակալի այդ հայտարարությանը և հերքել այն։ «Բյուզանդիոնի» թղթակիցը գրում էր. «Վանա նահանգի մեջ ուրիշ հողային խնդիր մնացած չէ բսելը հողային խնդրոյ անգնտ ըլլալ կնշանակե... հողային խնդիրը մակերևույթային տնօրինությունով լուծված չի կրնար համարվիլ... գրավված են բազմաթիվ հողեր մանավանդ կարճկանի շրջանում։ Նորտուզի, Աղրակի, Արճեշի, Խոշապի բազմաթիվ հայ գյուղերը գաղթած և անոնց հողերը նույն շրջաններու քյուրտ պեյներուն և աղաներուն կողմե գրավված են. ասոնք ե՞րբ արդյոք վերադարձվեցան իրենց տերերուն. ոչ, հողային խնդիրը դեռ շատ հեռու է լուծված ըլլալե և Թող ներողամիտ ըլլա Թահսիմ բեյը, երբ ըսենք, որ ինքը հողային խնդիրը նույնիսկ դեռ չէ կրցած լիովին ուսումնասիրել» («Բյուզանդիոն», 1913, № 3218)։

«Հորիզոնի» թղթակիցը մեջ բերելով կուսակալի վերոհիշյալ հայտարարության բովանդակությունը, բացականչում էր. «Ահա կառավարության ներկայացուցչի մը ափաշքարա տգիտություն կամ ավելի ճիշտ ստախոսություն... Վասպուրականը իր ամբողջությամբ հողային հրատապ խնդրով կը տապլտկի, Արճեշը, Ալճավազ՝ իրենց կարգին, Մոկս, Կարճկան՝ իրենց կարգին, Թիմար, Բերկրի՝ իրենց կարգին, Սարա, Խոշապ և Նորդուզ՝ իրենց կարգին, իսկ Հնթյարին ալ՝ իր կարգին, ամեն տեղ կան ու կը մնան հողային այս անլուծելի ու կնճռոտ խնդիրներ և անոնց երեսեն քանի-քանի օջախներ քանդված ու ցիր ու ցան եղած են» («Հորիզոն», 1913, № 284, դեկտեմբերի 19)։

[378] «Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում», էջ 284։

[379] Նույն տեղում, էջ 285։

Երբ իթթիհատի պարագլուխները շարունակեցին սակարկությունները, 1913 թ. նոյեմբերի 9-ին Սազոնովը պատասխանեց Պետերբուրգի Թուրքական դեսպան Թուրխան փաշային. «...Այժմ մենք հասել ենք մեր դիջողության գագաթնակետին և այլևս նոր զիջումներ չենք անելու»[380]: Ապա ցուցում տվեց Կ. Պոլսի իր դեսպանին. «Բարեհաճեցեք Ձեր բացատրությունների ժամանակ հայտնել մեծ վեզիրին նույնը, ինչ որ ես ասացի դեսպանին, ավելացնելով, որ մեր առաջարկությունների ընդունման ուշացումը կստեղծի Թուրքիայի համար մի դրություն, որը կսպառնա նրան լուրջ հետևանքներով: Եթե հայերը կորցնեն իրենց դրության բարելավման հույսը, այն ժամանակ նրանք ստիպված կլինեն դիմելու ծայրահեղ միջոցների, իսկ մենք բազմիցս նախազգուշացրել ենք Թուրքիային, որ դեպի այդպիսի մի դրության անտարբեր մնալ չենք կարող»[381]:

Բայց իթթիհատը շարունակում էր լարախաղել: 1913 թ. նոյեմբերի կեսերին նա կազմեց մի հանձնաժողով, որի վրա պարտականություն դրեց ուսումնասիրել հայկական հարցը[382]: Այդ նույն թվականի դեկտեմբերին առաջադրեց այնպիսի պայմաններ, որոնք չէին կարող ընդունվել տերությունների, մասնավորապես Ռուսաստանի կողմից: Բարձր Դուռը, օրինակ, պահանջում էր, որ տերությունները հայկական սնկտորների կառավարման համար տան ոչ թե ընդհանուր վերահսկուչներ, այլ խորհրդատուներ[383]. սա ըստ էության նշանակում էր տերությունների ներկայացուցիչների դիմադրկում, նրանց ակտիվ միջամտության չեզոքացում: 1914 թ. հունվարին Թուրքիայի մինիստրների խորհուրդը հրաժարվեց ընդունել մահմեդականների ու քրիստոնյաների թվական հավասարությունը ընտրական ժողովներում[384] և այլն: Վերջապես, 1914 թ. հունվարի 14-ին Սազոնովը առաջարկեց Պետերբուրգի թուրքական դործերի հավատարմատար Ֆահրեդդին բեյին՝ «ժամանակն է վերջ տալ հայկական բարենորոգումներին և խուսափել տարաձայնություններ ու ձգձգումներ առաջ բերելուց...»[385]: Եվ թուրքական կառավարությունը ստիպված եղավ ընդունել Ռուսաստանի

380 Նույն տեղում, էջ 297:
381 Նույն տեղում:
382 Տե՛ս նույն տեղում, էջ 302:
383 Նույն տեղում, էջ 307:
384 Նույն տեղում, էջ 317:
385 Նույն տեղում, էջ 330:

արտաքին գործերի մինիստրի պահանջը։ Հունվարի 26-ին Գուլկևիչը հաղորդեց Սալոնովին, որ ինքն ու մեծ վեզիրն արդեն ստորագրեցին հայկական բարենորոգումների համաձայնագիրը։ Այդ համաձայնագրի բովանդակությունը հետևյալն էր.

Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու սեկտորների. մեկը ընդգրկում էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի վիլայեթները։ Այդ սեկտորների կառավարման համար մեծ տերությունները բարձրագույն դռան պահանջով տալիս են ընդհանուր վերահսկուչներ կամ գլխավոր ինսպեկտորներ, որոնք նշանակվում են 10 տարի ժամանակով, հսկում իրենց սեկտորների պաշտոնեության, դատարանների, ոստիկանության և ժանդարմերիայի գործունեությունը և անհրաժեշտության դեպքում օգտագործում իրենց իրավասության տակ գտնվող տերիտորիաների ռազմական միավորումները։ Ընդհանուր վերահսկուչները իրավունք ունեն պաշտոնազրկել իրենց չարդարացնող անձանց, դատի տալ հանցագործներին, փոփոխել ստորին պաշտոնյաներին, հարց հարուցել կառավարության առաջ բարձրաստիճան պաշտոնյաներին ազատելու կամ փոխելու մասին և այլն։ «Հողային հարցերը վճռում են ընդհանուր վերահսկուչի անմիջական վերահսկողությամբ»։ Պետական օրենքները, հաղորդումներն ու հրահանգները ժողովրդականացվում են տեղական լեզուներով, քաղաքացիները վարչատներում ու դատարաններում հանդես են գալիս իրենց մայրենի լեզուներով, դատարանների որոշումները կայացվում են թուրքերեն և հնարավորության դեպքում թարգմանվում պահանջված լեզուներով։ Յուրաքանչյուր ժողովրդի կրթության գործին հատկացվում է նրա վճարած հարկերին համապատասխան գումար։ Կառավարությունը չի արգելում, որ ժողովուրդները իրենց միջոցներով բացեն ազգային դպրոցներ։ Նորակոչիկները խաղաղ պայմաններում ծառայում են իրենց սեկտորների ռազմական օկրուգներում, բայց ծովային ուժերում ընդգրկվելիս՝ ռազմական իշխանությունների մատնանշած վայրերում։ Համիդիեական գնդերը վերակառուցվում են պահեստային հեծելազորների, սակայն զենքերը պահվում են ռազմական պահեստներում և տրվում միայն զորավարժությունների ու զորակոչի դեպքերում։ Այդ գնդերը կազմվում են օսմանյան բոլոր քաղաքացիներից՝ անկախ լեզվից ու կրոնից և ենթարկվում իրենց շրջանների զորահրամանատարներին։

Սեկտորներում անց է կացվում մարդահամար, որի արդյունքներով որոշվում է «գույություն ունեցող զանազան կրոնների, ադգությունների

և լեզուների իսկական համաչափությունը»։ Վանի և Բիթլիսի վիլայեթներում պլեսավոր խորհուրդների (մեջլիսի—ումումի) և կոմիտեների անդամների ընտրությունները կատարվում են քրիստոնյաներից ու մահմեդականներից հավասար քանակությամբ ներկայացուցիչներ ընտրելու հաշվակով։ Այդ կերպ պետք է կատարվեն նաև էրզրումի վիլայեթի նույն խորհրդի ընտրությունները, եթե մարդահամարը չավարտվի մեկ տարվա ընթացքում։ Ինչ վերաբերում է Սրվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներին, ապա այդ վիլայեթներում ընտրությունները կատարվում են ըստ մահմեդականների ու քրիստոնյաների քանակի։ Նման սկզբունքներով պետք է բաշխվեն նաև սենատորների պաշտոնները[386]։

Համառոտակի այդ էր 1914 թ. հունվարի 26-ի բարեփոխումների բովանդակությունը։

Համեմատելով այդ բարեփոխումները Մանդելշտամի կամ ռուսական նախագծի հետ, պետք է ասել հետևյալը. Մանդելշտամի նախագիծը ստեղծում էր միասնական հայկական մարզ, օժտում նրա կառավարիչին որոշակի ինքնուրույնությամբ, կազմում մարզային մեկ ժողով, ներառնում Հայկական մարզի մեջ գերազանցապես հայաբնակ վայրերը, ոչնչացնում էր համիդեական գնդերը, պահպանում արևմտահայերի 1863 թ. սահմանադրությունը, արգելում Արևմտյան Հայաստանում մուհաջիների բնակեցումը, առաջարկում էր հատուկ բարենորոգումների մշակում Արևմտյան Հայաստանից դուրս գտնվող, բայց Թուրքիայի սահմաններում ապրող հայերի համար և այլն։ Մինչդեռ 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները հայկական հողերը բաժանում էին չորս սենատորների, օժտում նրանց կառավարիչներին չնչին ինքնուրույնություններով, մացնում սենատորների կազմում նաև մահմեդական շրջանները, որ նրանց ազգային դեմքը դարձնեն որքան հնարավոր է անորոշ ու խառնիճաղանջ, չէին ցրում համիդեական գնդերը, լռում էին արևմտահայերի ազգային սահմանադրության պահպանման, ինչպես նաև Թուրքիայի այլ շրջանների հայերի դրության բարելավման մասին, շրջանցում էին Արևմտյան Հայաստանում մուհաջիներ չբնակեցնելու հարցը։

Հետևաբար, Մանդելշտամի կամ ռուսական նախագիծը արևմտահայերի կացության բարելավման համար ավելի բարենպաստ էր, քան 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները։

---

[386] *Տե՛ս* «Сборник дипломатических документов...», стр. 162—165. *«Հայաստանը միջազգային դիվանագիտության...փաստաթղթերում», էջ 339—342։*

Սակայն 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները ունեին որոշ առավելություններ 1895 թ. հոկտեմբերի 8-ի (20-ի) սուլթանի դեկրետի համեմատությամբ։ Եթե սուլթանի դեկրետը հայկական նահանգներում գլխավոր կոմիսար նշանակելիս իրավունք էր տալիս սուլթանին չհարցնել տերությունների կամքը, ապա 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները պարտադրում էին հաշվի նստել նրանց կարծիքի հետ։ Ի տարբերություն սուլթանի դեկրետի, որը լռում էր քրիստոնյաների պինվորական ծառայության մասին, 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները պահանջում էին, որ նրանք նույնպես պինվորական ծառայության անցնեն։ Եթե սուլթանի դեկրետն անփոփոխ էր թողնում համիդիեն, ապա բարենորոգումները մտցնում էին նրանց մեջ ինչ-որ փոփոխություն։ Ի տարբերություն սուլթանի դեկրետի, որը շրջանցում էր ոչ թուրք ժողովուրդների դպրոցական խնդիրը և կրթության նպատակներով նրանցից հավաքած գումարները տրամադրում թուրքական դպրոցներին, բարենորոգումները որոշ պայմաններ էին ստեղծում այդ ժողովուրդների դպրոցական գործի առաջընթացի համար։ Եթե սուլթանի դեկրետով ազգությունների քանակը հաշվի էր առնվում միայն պաշտոնները բաժանելիս, ապա բարենորոգումներով՝ նաև ոստիկաններ ու ժանդարմներ նշանակելիս։

Գերագնահատելով 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումները, Գուլկևիչը գրում էր. «Հունվարի 26-ի վավերագիրը ահագին նշանակություն ունի հայ ժողովրդի ապագա պատմական ճակատագրի համար»[387], «1914 թվականի հունվարի 26-ի վավերագիրը պետք է համարել հայ ազգի պատմության նոր, ավելի բախտավոր դարաշրջանի սկիզբը»[388]։

Իրականում այդ բարենորոգումների ծրագիրը գործնական նշանակություն չունեցող մի փաստաթուղթ էր, որը պետք էր իմպերիալիստական տերություններին ու թուրք կառավարիչներին՝ հայ ժողովրդին ու հայկական հարցով հետաքրքրվող համաշխարհային հասարակայնությանը խաբելու համար։

Վավերագրի ստորագրումից երկու օր անց, 1914 թ. հունվարի 28-ին թուրք կառավարիչները պահանջեցին տերություններից ընդհա-

---

[387] «Сборник дипломатических документов...», стр. 170, *կամ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում», էջ 347։*

[388] «Сборник дипломатических документов...», стр. 173, *կամ «Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում», էջ 350—351։*

նուր վերատեսուչների բնակածությունները և առաջարկված հինգից ընտրելին երկուսին՝ Հոլանդացի Վնատենկին և Նորվեգացի Հոֆին, բայց այդ անձինք Կ. Պոլիս ժամանելիս (1914 թ. մայիս), երբ ուզեցին համաձայնեցնել իրենց անելիքները Թուրքական կառավարության հետ, ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը, Գերմանիայից պաշտպանություն ստանալով, անուշադրության մատնեց նրանց պահանջը, ապա լարախաղելով բանն այնտեղ հասցրեց, որ Վնատենկին ու Հոֆը հարկադրված եղան իթթիհատական խաբեբայի հետ խոսել ուլտիմատումի լեզվով՝ սպառնալով, որ նրա չկատարվեն իրենց օրինական պահանջները, կլքեն Թուրքիան։ Երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, իթթիհատի պարագլուխները փորձեցին օգտագործել այդ առիթը և օրակարգից հանել բարենորոգումների խնդիրը։ Նրանք կնճռ խոստումներ տվեցին Ռուսաստանին, անդամ հայտարարեցին, թե իրենց բանակը կդնեն նրա տրամադրության տակ (Բնպետ արդեն Գերմանիայի հետ կնքել էին ռազմական դաշնակցություն), միայն թե ռուսական կառավարությունը չպաշտպանի հայկական հարցը։ Սակայն Սազոնովը, հավանական է, համոզված լինելով, որ արդեն անկարելի է Թուրքիային խլել Գերմանիայի գրկից, չուզեց խաբվել ավելորդ պատրանքներով և 1914 թ. օգոստոսի 12-ին պատասխանեց երիտթուրքերին, թե Ռուսաստանը կարող է ընդունել նրանց բոլոր պայմանները «բացի հայկական բարենորոգումների հրաժարումից»[389]։

* * *

Հայկական հարցի վերաբացման օրերին հայ քաղաքական կուսակցությունները մեծ հույսեր էին կապում նրա լուծման հետ։ Նրանք գտնում էին, որ միջազգային դիվանագիտությունը, կրկին անդրադառնալով հայկական հարցի քննարկմանը, այժմ կտա գոհացուցիչ վճիռ։ Դաշնակցության օրգան «Հորիզոնը» դեռ 1912 թ. սեպտեմբերի 21-ին հայտարարելով, թե Թիֆլիսի հայության տարբեր խավերի կողմից պատգամավորություն է գնացել կաթողիկոսի մոտ, որ «Կովկասի հայության կողմից միջնորդե կայսեր՝ իր ազդու միջամտությամբ վերջ դնելու տաճկահայոց անապահով վիճակին», գրում էր. «Մենք համոզված ենք, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը ընդառաջ կերթա Թիֆլիսի ժողովի դիմումին և իր հովվապետական գերագույն պարտականությունը կհամարե... նպաստել տաճկահայ տառապող ժողովրդի ապա-

[389] «Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел», М., 1924, стр. 59.

հովության», և որ կաթողիկոսը կարող է լիովին վստահ լինել, որ իր քայլը «համակարանք միայն կը հարուցանեն մեր սահմաններում և երախտագիտության զգացումներ տաճկահայոց սրտերում»[390]: Նույն թվականի նոյեմբերին «Հորիզոնը» այն կարծիքն էր հայտնում, որ արևմտահայերի հարցը կարող է ունենալ երեք լուծում և դրանք բոլորն էլ կապված են Ռուսաստանի հետ: «Եթե Թուրքիան անդամատվի, այն ժամանակ Հայկական բարձրավանդակը կանցնի ռուսներին, քանի որ նրանք են այդ շրջանի անմիջական սահմանակիցները: Եթե հաստատվի միջազգային հսկողություն Թուրքիայի վրա՝ այն ժամանակ հայաբնակ նահանգների հսկողությունը կանցնի ռուսներին նույն հիմնական պատճառով: Եթե մինչև իսկ հայերին տրվի ինքնավարություն, այդ դեպքում էլ նա կը դրվի Ռուսաստանի հովանավորության տակ: Այդպիսով, ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում Թուրքահայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ»[391]:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, Թերթը հորդորում էր Ռուսաստանի հայերին «մի ազգային դիմում ուղարկել ռուսաց պետությանը և խնդրել, որ նա նախաձեռնի հայոց հարցը պետությունների դատարկելիք դեսպանախորհրդի կամ վեհաժողովի առաջ դնելու»[392]: Բայց Թերթը միաժամանակ նշում էր, որ հայոց հարցի բարվոք լուծումը միայն Ռուսաստանից չի կախված: Այն կախված է նաև եվրոպական տերություններից: «Առանց եվրոպական աջակցության... հայոց հարցը կը մնա անվճիռ»: Ուստի դտնում էր, որ «ռուսահայ ժողովուրդը պետք է՝ թույլտվություն առնելով մեր կառավարությունից, դիմե նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրող մյուս մեծ պետություններին, խնդրելով, որ աջակցեն մեր պետության նախաձեռնությանը և նպաստեն հայոց արդար դատի իրական լուծումին»: Ամփոփելով իր ասելիքը, Թերթը գրում էր. «Հայերի պահանջը տարրական բան է. կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն: Թե ինչ քաղաքական ձև կստանա այս պահանջների իրագործումը՝ այդ մեզանից կախված չէ: Մեզանից կախված է միմիայն մի բան. խնդրել այդ ամենը մեր արյունակից եղբայրների համար՝ նախ Ռուսաստանից, իբրև ռուս քաղաքացի, ապա նրա թույլտվությամբ՝ Եվրոպայից, իբրև մի ազգ, որի կեսը տառապում է դարերով անհնարին

---

390 «Հորիզոն», 1912, № 206, սեպտեմբերի 21:

391 «Հորիզոն» 1912, № 259, նոյեմբերի 23:

392 «Հորիզոն», 1912, № 260, նոյեմբերի 24:

նեղությանց մեջ»[393]։ Սակայն 1913 թ. «Հորիզոնը» չէր սահմանափակվում այդ պահանջներով։ Նա արդեն առաջ էր քաշում Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարը։ Թերթը նշում էր, որ միջազգային հարաբերությունները խանգարում են Ռուսաստանին միակցնելու իրեն հայկական վիլայեթները։ Ուստի նա այժմ բավարարվում է աղեցության գոտիների ստեղծումով։ Այդպիսի գոտի Ռուսաստանը կարող է ստեղծել նաև իր ու Բուրքիայի միջև, հռչակելով Հայաստանի ինքնավարությունը։ «Ստեղծելով կիսանկախ հայկական շրջան, հայաբնակ նահանգները դարձնելով ինքնավարություն իր հովանու տակ, Ռուսաստանը դրանով կազատվի շատ գլխացավանքներից։ Այդ ինքնավար երկիրը կանջատի Բուրքիան Պարսկաստանից... իր գոյությունը պարտական լինելով Ռուսաստանին՝ այդ նորաստեղծ ինքնավար երկիրը կապված կմնա մեր պետության հետ անխզելի կապերով, իր կայունությունն ու ապահովությունը այդ կապի մեջ տեսնելով»[394]։

Հայկական հարցի լուծման իր տեսակետն ուներ նաև Հնչակյան կուսակցությունը։ Նրա օրգան «Հնչակը» 1913 թ. գտնում էր, որ Ռուսաստանը շահադրգռված է ստեղծել ինքնավար Հայաստան, քանի որ Գերմանիան ձեռք գցելով Բուրքիայի տնտեսական բարձունքները, շարժվում է դեպի Արևելք, դեպի Իրան։ Նրա առաջխաղացումը կանխելու համար Ռուսաստանը պետք է ստեղծի «ինքնավար Հայաստան այն ծավալով, որ Սև ծովից մինչև Միջերկրական ծովը մի պատավար շինի Փոքր Ասիայից դեպի Միջագետք-Մոսուլ, Բաղդադ, Բասրայի վիլայեթները»։ Թերթը նշում էր, որ ինքնավար Հայաստանը բացի վից նահանգներից, ընդգրկելու է նաև Ադանայի, Մերսինի, Ճեպելը-Պերիքեթի, Գողանի, Մարաշի և Ուրֆայի սանջակները։ Այդպիսի Հայաստանի ստեղծումով թեև շահադրգռված են նաև Անգլիան ու Ֆրանսիան, սակայն այն պետք է գտնվի Ռուսաստանի հովանավորության տակ, քանի որ «այդ իրավունքը ամենից ավելի պատկանում է Ռուսաստանին, որի թևարկությունը երբեք չի հակասում հայ ազգային քաղաքական շահերին»[395]։

Բայց «Հնչակը» շուտով փոխեց իր կողմնորոշումը և Ռուսաստանի հովանավորության փոխարեն առաջ քաշեց եվրոպական կոնտրոլի

---

393 Նույն տեղում։

394 «Հորիզոն», 1913, № 26, փետրվարի 2։

395 «Հնչակ», 1913, № 3, էջ 13։

հարցը, գտնելով, որ ինքնավար Հայաստանի ստեղծման համար պետք է ակտիվ դեր խաղա նաև հայ ժողովուրդը։ 1913 թ. թերթը գրում էր. «Ասում են, թե եվրոպական դիպլոմատիան տրամադիր չէ հայկական խնդրով զբաղվելու։ Դա սխալ է։ Եթե հայ ժողովուրդը պատրաստակամություն ուննա իր դատը ձեռք առնելու, շարժվելու, եվրոպական դիպլոմատիան էլ տրամադրություն կունենա հայկական խնդրով զբաղվելու»[396]։ Հայ քաղաքական կուսակցությունները «պիտի իրենց ուժերը ներդնեն Հայաստանի ազատության կռվի մեջ և այն ժամանակ դիպլոմատիան էլ ստիպված, տրամադրություն կունենա զբաղվելու հայկական խնդրով»[397]։

1913 թ. սեպտեմբերի 7-ին Կոնստանցա քաղաքում գումարած իրենց կուսակցության VII պատգամավորական ընդհանուր ժողովում հնչակյանները կայացրին հետևյալ որոշումը. «Պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը, որպես միակ միջոցը Հայաստանի մեջ ապրող թե՛ հայ և թե՛ մյուս տարրերի հաշտ, խաղաղ, անվրդով զարգացմանը և հառաջադիմությանը, համոզված լինելով, որ դա այն անհրաժեշտ պայմանն է, որով հայ ազգը կարող է ազգային անհատական գոյությունը ապահովել ներքին ու արտաքին ոտնձգությունների դեմ։ Եվ որովհետև թյուրք տիրապետող ազգի և նրա ղեկավարիչ դասակարգերի պատմական ընդհանրությունը և չուզողացությունը այլևս անվիճելի է, ինչպես և որոշ է նաև արտաքին ուժերի հարաբերությունն ու քաղաքական ձգտումները,—պաշտպանել ինքնավար Հայաստանի գաղափարը՝ եվրոպական կոնտրոլով»[398]։ Հնչակյան կուսակցության օրգանը գրում էր, թե ինքնավար Հայաստան ասելով պետք է հասկանալ մի երկիր, որը լինի «Եվրոպայի կոնտրոլի տակ՝ հետու և՛ ռուսական, և՛ թուրքական գիվանքներեն»[399]։

Ռամկավարները պահանջում էին հայ ազգաբնակչության կյանքի ու գույքի պաշտպանություն, նրա կուլտուրական զարգացման ապահովում՝ թուրքական կառավարման սահմաններում։ 1913 թ. փետրվարին ռամկավարների օրգան «Վան-Տոսպը» գրում էր, որ այժմ, երբ հայկական հարցը կրկին բարձրացել է միջազգային ասպարեզ, հայ ազգն ուրիշ պահանջ չունի, ինչ ուներ անցյալում. «Տվեք հայ ազգին իր

396 «Հնչակ», 1913, № 4—5, էջ 12։
397 Նույն տեղում, էջ 13։
398 «Հնչակ», 1914, № 1, էջ 28։
399 Նույն տեղում, էջ 23։

քաղաքացիական տարրական իրավունքները, տվեք մեզ մեր կյանքի, գույքի և պատվի անձեռնմխելիության սրբազան իրավունքը, տվեք դադարում մեր այդքան արդար պահանջին... Ապահովցուցեք մեզ այս անգամ գործնական երաշխիքներով»[400]: *Շաբաթաթերթն այնուհետև շարունակում էր, որ օսմանյան պետության ղեկավարները եկել են հիմա այն համոզման, որ «այս անգամ անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռք առնվին հայի արդարացի դժգոհությանը վերջ տալու և անոր համար տանելի կյանքի պայմաններ ստեղծելու»: Ուստի կոչ էր անում հայ քաղաքական կուսակցություններին առժամանակ մոռանալ իրենց ներքին տարաձայնությունները և համախմբվել «այն հարցի շուրջը, որ կը կոչվի տաճկահայկական հարց»*[401]: *Շաբաթաթերթը նշում էր, որ հայկական հարցի լուծման ամենազորեղ ազդակները, եթե գտնվում են դրսում՝ օսմանյան կառավարության ու եվրոպական դիվանագիտության մեջ, ապա դրանց մեկն էլ «պետք է փնտրենք մեր մեջ—հայության ոգիի մեջ»*[402]: *Թամկավարները գտնում էին, որ հայկական հարցը պետք է լուծել ոչ թե ապստամբությամբ կամ հեղափոխության միջոցով, այլ խաղաղ ճանապարհով: 1913 թ. «Վան-Տոսպը, իր առաջնորդողում գրում էր. «Մի անգամ ընդմիշտ կը հայտարարենք, լավ միտք ըրեք, հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ», թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան «հայ ցեղի ինքնուրույն կուլտուրայի զարգացումը նորոգված ու բարեկարգ օսմանյան պետության մեջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը»*[403]:

Հայկական հարցի վերաբացման օրերին էջմիածնի կաթողիկոսությունը պահանջում էր բարելավել հայերի կացությունը: Այլևս չվստահելով թուրքական կառավարությանը, այն գտնում էր, որ այդ բարելավումը պետք է կատարել դրսի, մասնավորապես եվրոպական տերությունների օգնությամբ: 1912 թ. սեպտեմբերին «Արարատը» գրում էր. «Մենք կողմնակից չենք, առհասարակ, որ պետությունների ներքին անկախությունը վտանգվի արտաքին միջամտությունից, բայց քանի որ Տաճկաստանի անցյալ և ներկա ռեժիմը անկարող և ապիկար է երկրում ամենատարրական կարգ մտցնելու... այդպիսի պետության խոսք

---

400 «Վան-Տոսպ», 1913, № 3, փետրվարի 9, էջ 27:

401 «Վան-Տոսպ», 1913, № 4, փետրվարի 16, էջ 38:

402 Նույն տեղում, էջ 40:

403 «Վան-Տոսպ», 1913, № 2, էջ 14:

հասկացնել կարող է միմիայն ուժը—արտաքին զորեղ և վճռական միջամտությունը»[404]։

1913 թ. մարտին նույն ամսագրում կարդում ենք. «Այսօր ամբողջ աշխարհի համար պարզ է, որ հայկական հարցը համենայն դեպս բուրքերի միջոցով չի կարող լուծվել. նույնքան և պարզ է, որ միայն հայերն իրանք անկարող են վերջ դնել իրանց քաղաքական տերերի և հարևանների անարդար ու ամարդի կառավարությանը։ Հայկական հարցն այսօր քաղաքականության նուրբ ու բազմածալ լաբիրինթի մեջ է և ոչ մի որևէ լուծում կա—այդ դիպլոմատիայից ու քաղաքականությունից է, որ գալու է»[405]։

Ի տարբերություն հայ հոգևորականության ու բուրժուական կուսակցությունների, հայ դեմոկրատական լայն զանգվածների ներկայացուցիչները հայկական հարցի լուծումը կապում էին միայն դեմոկրատական Ռուսաստանի հետ։ Նրանք գտնում էին, որ ցարիզմի կործանումից հետո Ռուսաստանի բոլոր ժողովուրդները կապրեն վերածնունդ և այդ ժողովուրդների հետ միասին իր դարավոր երազանքների իրականացմանը կհասնի նաև հայ ժողովուրդը։ 1913 թ. Հ. Թումանյանը գրում էր. «...Մեր մեջ հավատ կա արմատացած, թե Անգլիան ու Ֆրանսիան եղել են հայկական հարցի բարեկամները։ Ինձ թվում է, մեզ էս քաղցր մոլորության մեջ գցել են Գլադստոնի, Դիլլոնի, Բերարի, Պրեսանսեի նման լավ մարդկանց ճառերը ի պաշտպանություն հայ ժողովրդի, ընդդեմ Թուրքիայի վատթար կառավարության։ Իսկ իրենց պետությունները, որ միշտ եղել են Ռուսաստանի զորացման դեմ արևելքում, դրա հետ միասին միշտ էլ դեմ են եղել հայկական հարցին»[406]։ Բանաստեղծն այնուհետև շարունակում էր. «...Հայ ժողովուրդը պետք է լինի ռուսի հետ և իր կյանքի, գույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապի Ռուսաստանի հաջողության հետ... Եվ էսօր, եթե հայկական հարցը, ինչ ձևով ուզում է լինի—մի լուծում է առնելու, դա լինելու է Ռուսաստանի հաղթանակը կամ նրան փոխադարձաբար արած մի ոչնչումը»[407]։

Վ. Տերյանը 1914 թ. կարդացած «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ ասում էր. «Ես Տաճկահայկական հարցի լուծմանը

---

404 «Արարատ», 1912, սեպտեմբեր, էջ 798։

405 «Արարատ», 1913, փետրվար-մարտ, էջ 267—268։

406 «Հորիզոն», 1913, № 11, հունվարի 16։

407 «Հորիզոն», № 14, հունվարի 19։

Թուրքիայի սահմաններում չեմ հավատում։ Լավագույն լուծումն այդ հարցի համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգներու։ Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձնել, կարող է պատահել, որ այդ հարցը (որ մեր ժողովրդի համար մի ահագին դժբախտություն է դարձել) այլ կերպ լուծվի։ Սակայն լավագույն լուծումը այդ հարցի ես համարում եմ ռուսական տիրապետությունը։ Եթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կզորեղանա այն կուլտուրական հոսանքը, որը փափագելի է ինձ համար. եթե չլինի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացմանը։ Տաճկաստանի վերածնության ես չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է։ Եվ կապելով իմ լավագույն հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»[408]։

Վ. Տերյանը գտնում էր, որ թուրքական բարբարոսների ջարդարարական քաղաքականությունը չի կարող հայ ժողովրդի սրտից հանել նրա տանջված, կոտորածներից արնաքամ եղած, բայց միշտ նվիրական ու սրբություն համարված հայրենիքը. «...եթե անգամ այդ Հայաստան կոչված դժբախտ երկրում ոչ մի հայ չմնա, մենք դարձյալ պիտի այրվենք նույն իղձերով, նույն ցավագին, մեզ համար մի տեսակ կրոնական դունավորում ստացած այդ խնդրով»[409]։

XX դարի սկզբին հեղափոխական շարժումների վերելքը Ռուսաստանում փրկության հավատ էր ներշնչում արևմտահայերին և նրանք իրենց ազատության միակ հույսը կապում էին Ռուսաստանի հետ։ 1912 թ. հոկտեմբերի 13-ին Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես Խարախանյանը գրում էր կաթողիկոսին. «Հայ ժողովուրդը, սկսած հասարակ ռամիկից վերջացրած քաղաքացիով, սկսած անգետից վերջացրած դիտունով... հիասթափվելով կորցրել է ամեն մի հավատ թուրքական կառավարության նկատմամբ։ Նա հառել է իր հայացքը դեպի հյուսիս, սպասելով իր փրկությունը քրիստոնյա մեծ պետությունից»[410]։

1912 թ. դեկտեմբերի 11-ին 3000 վասպուրականցիներ դիմելով կաթողիկոսին, նշում էին, որ թուրքական տիրապետությունը դարերի ընթացքում հալումաշ է արել արևմտահայությանը, պարբերաբար բնա-

---

408 Վահան Տերյան, *Երկերի ժողովածու*, հ. 2, Երևան, 1961, էջ 292։

409 *Նույն տեղում*, էջ 304։

410 «Геноцид армян...», стр. 210. Ծ. Պ. Ադայան, *Նշված աշխ.*, էջ 294։

չնչելով, խստորեն կրճատել է նրա թվաքանակը: Թուրքական կառավարության «բարենորոգմանց խոստումներու վրա հույս դնել այլևս անօգուտ է...»: Հայերը վերստին «կմնան նույն պերության շղթաներու մեջ, և որոնց վրա այսուհետև ևս ավելի պիտի ծանրանա թուրք բարբարոսության լուծը՝ իբրև նոխազ քավության, նիհ քաղաքակիրթ աշխարհը և մասնավորապես Ռուսիան՝ իբրև ավանդական պաշտպան Արևելքի քրիստոնեից չպաշտպանեն զայն ընդդեմ բռնավորին»[411]:

Վասպուրականցիները նույն խնդրանքով դիմեցին նաև Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերևին, որը նրանց խնդրանքը հաղորդելով Ս. Պոլսի իր դեսպանին, գրում էր. «Ներկայումս բոլոր հայերի հույսը միայն Ռուսաստանի վրա է»[412]: *1913 թ. հունվարի 20-ին նա ավելացնում էր, որ արևմտահայերի «առնվազն 90 տոկոսը անկեղծ ու մաքուր սրտով ցանկանում է տեսնել ռուսական դինվորին իրենց հողում»*[413]:

1913 թ. մայիսի 10-ին «Մշակի» թղթակիցը Էրզրումից գրում էր. «Ոչ հնարավորություն է ունեցել մոտիկից շփվելու հայկական նահանգների ու մասնավորապես Էրզրումի վիլայեթի ժողովրդական լայն մասսաների հետ, մտնել գյուղացիների, արհեստավորների, առևտրականների, հարուստների ու բանվորների շրջանակները, նա պարզ կերպով պիտի գիտենա, որ հայ ժողովուրդը չի հավատում ոչ հայկական ինքնավարության ցնորքին և ոչ էլ եվրոպական կոնտրոլի միջոցով երկիրը բարեկարգելու հույսերին: Իսկ Ստամբոլ նստած թուրք փաշաների ծրագրած «բարեկարգությունները» նա առնվազն արհամարհում ու ծաղրում է: Հայ ազգաբնակությունը ունի մի բնաբ հույս. դա ռուսական գրավումն է. հայկական հարցի լուծման կարուկ ձևը»[414]: *Թերթը հուզիչ պատկերներ էր հաղորդում արևմտահայերի ռուսական կողմնորոշման մասին: Մի թղթակցության մեջ գրված է. 1912 թ. վերջերին Վանի վիլայեթի Քիղղի գյուղում ծերունիներից մեկը ամեն առավոտ գյուղից դուրս գալով, նայում է դեպի հյուսիս և սպասում «Մոսկով քեռիներին»*[415], *որ Հայկաննա գյուղում բնակիչներից մեկը մեկնելով հինգ ռուբլիանոցը ռուսական փոխհյուպատոսին, ասել է. «Ես սրանից ավելի լավ բան չունեմ. ես տալիս եմ քեզ՝ ինչ որ ունեմ. վեր առ այս*

---

411 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 43—44:

412 ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», գ. 1605, թ. 55:

413 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 96, թ. 19:

414 «Մշակ», 1913, №. 106, մայիսի 17:

415 «Մշակ», 1913, № 81, ապրիլի 18:

բուբլին և միջնորդիր ռուսաց ցարի առաջ, որ ռուսները շուտով գան այստեղ»[416]:

Ուշագրավ է որ, դարասկզբին, մասնավորապես երիտթուրքերի կառավարման տարիներին, Ռուսաստանի հետ փրկության հույս էին կապում նաև քրդերը: Նրանք սկսում են ավելի հաճախ դիմել Արևմտյան Հայաստանում ռուսական հյուպատոսներին, խնդրելով ճանաչել իրենց ռուսահպատակ, հուսալով այդ եղանակով ազատվել թուրքական ու աղայական բռնություններից: 1913 թ. մայիսի 31-ին Օլֆերևը գրում էր. «Հարկ եմ համարում նշել, որ վերջին ժամանակներս դյուղացի քրդերը սկսել են ավելի ու ավելի հաճախ դիմել մեր հյուպատոսությանը խնդրագրերով, որոնցում գանգատվում են թուրքական իշխանություններից, մի բան, որ առաջներում բնավ չի եղել: Քրդերը ուղղակի հայտարարում են ինձ, որ ուզում են լինել ռուսահպատակ»[417]: *Մեկ տարի անց՝ 1914 թ. հունիսին Ակիմովիչը նշում էր. «Մեր ազդեցությունը քրդերի վրա դնալով աճում է»*[418]:

Ռուսաստանի օգնությամբ ազատվելու հույս ունեին նաև ասորիները: 1912 թ. ապրիլի 10-ին Օլֆերևը հաղորդում էր. «Բոլոր նեստորականները կանգնած են Ռուսաստանի կողմը և ուզում են անցնել նրա իշխանության տակ: Ճիշտ է, անգլիացիներն օգնում են մարշիմոնին փողով, բայց դա քիչ է անհանգստացնում նեստորականներին, որոնք հոլանավորության են որոնում միայն Ռուսաստանի մոտ. եթե պատերազմ լինի Թուրքիայի դեմ, ապա բոլոր նեստորականները կլինեն Ռուսաստանի կողմը»[419]: *Փոխհյուպատոսի վկայությամբ, ռուսական կողմնորոշում ուներ նաև մարշիմոնը, որը խոստովանել է, թե անգլիական միսիոներներին հաշվի է առնում միայն անհրաժեշտությունից դրդված, իսկ ընդհանրապես իր «համակրանքը Ռուսաստանի կողմն է»*[420]:

Այդպիսով, Թուրքիայի ներսում փրկարար ուժ չգտնելով, Արևմտյան Հայաստանի ժողովուրդները ելք էին որոնում դրսի օգնության մեջ, թեքվելով գլխավորապես դեպի Ռուսաստանը: Հասկանալի է, որ եթե նրանց ֆեոդալական ու բուրժուական խավերը ձգտում էին հովանավորություն ու պաշտպանություն գտնել ցարիզմի մոտ, ապա աշխատավոր լայն զանգվածները ապավինում էին դեմոկրատական Ռուսաստա-

---

416 *Նույն տեղում:*

417 *ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 326:*

418 *Նույն տեղում, թ. 394:*

419 *Նույն տեղում, գ. 719, թ. 141:*

420 *Նույն տեղում, թ. 142:*

նին, կապելով իրենց փրկությունը ռուսական պրոլետարիատի հեղափոխության հաղթանակի հետ։

* * *

Այժմ տեսնենք, թե ինչպես արձագանքեցին հայ հասարակական-քաղաքական տարբեր շերտերը 1914 թ. բարենորոգումներին։ Դաշնակցության օրգան «Հորիզոնը» քանի դեռ չէր ստացել բարենորոգումների ծրագիրը, ռուսական պաշտոնական հաղորդումների հիման վրա գնահատում էր այն իր բացասական ու դրական կողմերով և եզրակացնում, որ այդ ծրագիրը «կարող է ստանալ այնպիսի պայմաններ, որոնք անխուսափելիորեն և ոչ շատ հեռավոր ապագայում կտանեն դեպի (հայոց հարցի) լուծումը»[421]։ Բայց երբ ստացավ բարենորոգումների ծրագիրը, հիասթափվեց և ստիպված արձանագրեց, որ «հայկական բարենորոգմանց պահանջներն այնպես, ինչպես նրանք ձևակերպված են հունվարի 26-ի ռուս տաճկական համաձայնության մեջ, ստեղծում են մեզ համար վերին աստիճանի անհաստատ դրություն։ Ոչ մի միջազգային երաշխիք չկա, որ ընդգծված պահանջները իրագործվելու են, հետևաբար և ոչ մի հիմք մեզ համար՝ հայկական խնդիրը հենց թեկուզ անցողական ստադիայի համար լուծված նկատելու»[422]։ Դաշնակցությունը հայկական բարենորոգումների ձախողման պատճառը համարում էր Գերմանիայի իմպերիալիստական քաղաքականությունը։ 1914 թ. ապրիլին «Դրոշակը» նշում էր. «Շատ համեստ ինքնավարության փոխարեն, հայկական ռեֆորմների ծրագիրը, շնորհիվ Գերմանիայի, վերջ ի վերջո դարձավ իր ձևով անորոշ, անբովանդակ հեղհեղուկ, գործնական հետևանքներով չափազանց առեղծվածային մի փորձ, որ բազմաթիվ փորձությունների աղբյուր է դառնալու...»[423]։

Հնչակյանները նույնպես չփառաբանեցին հայկական բարենորոգումների ծրագիրը։ Նրանց կարծիքով, այդ բարենորոգումների ձախողման հիմնական պատճառներից մեկն այն էր, որ շրջանցված էր եվրոպական կոնտրոլը։ «Ինչ գործնական արժեք կարող է ներկայացնել մի նախագիծ, որի միջից բարենորոգումների միակ իրական հիմքը, Հայաստանի աշխարհագրական մխությունը և գործագրության միակ անհրաժեշտ նախապայմանը՝ եվրոպական կոնտրոլը բացակայում

[421] «Հորիզոն», 1914, № 27, փետրվարի 5։

[422] «Հորիզոն», 1914, № 35, փետրվարի 18։

[423] «Դրոշակ», 1914, № 4, էջ 51։

էին»[424]։ Այնուհետև. «...Հայկական հարցը լուծված չէ... հայ ճնշված ու հարատահարված մասսան՝ պատնեշի վրա կանգնած՝ պետք է շարունակի իր ազատագրական պայքարը, մինչև որ իր սիրով փայփայած իղձերի պսակումը — եվրոպական կոնտրոլով ինքնավար Հայաստանի ծրագիրը իրականանա...»[425]։

Ռամկավարները սկզբում դրական վերաբերվեցին բարենորոգումներին և տերությունների ընդունած ծրագիրը բնութագրեցին որպես «հաջող վերջավորություն», նշեցին, թե հայ ժողովուրդը «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի հույսով ու վստահությամբ նայիլ ապագային...»[426]։ Բայց հետո թերահավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ, գրելով, որ Թուրքիան անցյալում շատ է խոստացել բարելավել հայերի վիճակը և չի կատարել. «...Մի գուցե խոշոր հուսախաբություն մըն ալ ներկա ծրագիրն ըլլա և օդուտ մը չտալն զատ մինչև իսկ նոր փորձանքներ բանա մեր դլխուն»[427]։ Ապա կանգնելով չեզոք դիրքում, ռամկավարները, այնուամենայնիվ, չուզեցին վատատես լինել։ «Ազդի» մարտի 18-ի առաջնորդողում նրանք շարունակում էին. «Չենք կրնար դուշակել, թե ինչ ապագա պիտի ունենա, որչափ տոկուն ու տևական պիտի ըլլայ (ծրագիրը), բայց պետք է որ առանց հուսահատության քիչ մը հույսով նայինք անոր վրայ և մեր կողմե աշխատինք դյուրացնելու անոր գործադրությունը»[428]։

Էջմիածնի կաթողիկոսությունը սկզբում ողջունեց բարենորոգումների ծրագիրը, գտնելով, որ այն արևմտահայ բնակչության կացության բարելավման լավագույն միջոցառում է։ 1914 թ. հունվարի 29-ին կաթողիկոսը, պատասխանելով տերությունների կողմից հասցեագրված նախագծի առթիվ Պողոս Նուբար փաշայի շնորհավորանքներին, գրում էր. «Իմ շնորհակալությունս Ձերդ վսեմափայլության Ձեր նուանդուն գործունեության համար Տաճկաստանում բարենորոգումներ մտցնելու առթիվ։ Բախտավոր եմ, որ մեր նպատակները հաջողությամբ է առաջ ընթանում»[429]։ Նույն թվականի ապրիլի 16-ին «Արարատը» գրում էր. «...Հպարտ հույսի արև ծագեց և բարենորոգումների

---

424 «Երիտասարդ Հայաստան», 1914, № 36, հունիսի 9։

425 Նույն տեղում։

426 «Ազդ», № 37, մարտի 4։

427 «Ազդ», № 39, մարտի 18։

428 Նույն տեղում։

429 «Արարատ», 1914, փետրվար, էջ 121։

ծրագիրն հանդես եկավ և որի իրականացման շրջանումն ենք ապրում»։ Ամսագիրն ապա գտնում էր, որ հայ քաղաքական կուսակցությունները պետք է «նպաստեն ամեն կերպ շուտով իրականացնելու ընդունված բարենորոգումները», որ «հայ քաղաքական գործիչների համերաշխ գործունեությունը ամենամեծ գրավականն է «հայկական հարցի» հաջողության»[430]։

Բայց հետագայում էջմիածնի հոգևորականությունը նույնպես հիասթափվեց բարենորոգումների պատրանքներից և առաջ քաշեց Ռուսաստանի հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը։ 1914 թ. օգոստոսի 5-ին Գևորգ V-ը Կովկասի փոխարքային գրած նամակում նշում էր, որ հայկական հարցի լուծման համար անհրաժեշտ է Անատոլիայում ստեղծել անբաժան ու միասնական հայկական մարզ, նրա կառավարման համար Ռուսաստանի կողմից նշանակել Թուրքական պետությանը չենթարկվող բարձրաստիճան մի քրիստոնյա, մարզում մացնել լայն ինքնավարություն, ընտրելով պաշտոնյաներին քրիստոնյաներից ու մահմեդականներից և, վերջապես՝ բարենորոգումների կենսագործման հսկողությունը դնել միայն Ռուսաստանի վրա[431]։

Արևմտահայ դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչ Զոհրապը 1914 թ. հունվարի 31-ին Ա. Չոպանյանին հղած նամակում գրում էր, որ բարենորոգումների ծրագրով ձևոք ենք բերում վարչական, դատական ու ժանդարմական իրավասություններով օժտված եվրոպական հսկողություն, վարչական հաստատություններում ու դատարաններում հայոց լեզվի գործածություն, կառավարման մեջ հայերի մասնակցություն (ըստ նրանց թվի), եվրոպական քննիչների հսկողությամբ հողային հարցի կարգավորում, հայերի վճարած տուրքից նրանց կրթության գործի բարելավման համար որոշակի գումարի առանձնացում, համիդիեական գնդերի միացում Թուրքական կանոնավոր բանակին և այլն, սակայն կորցնում ենք «հայկական բոլոր վիլայեթներին մեկ հայկական նահանգ կազմելը և ասոր հետևանքն ըլլալով մեկ ընդհ. ժողով և մեկ ընդհ. կառավարիչ ունենալու ձևը»[432], *կամ այլ կերպ ասած՝ Մեծ Հայաստանի ստեղծումը։ Ի մի բերելով այդ գնահատա-*

---

430 *«Արարատ», 1914, ապրիլ, էջ 328—329։*

431 *Տե՛ս* «Геноцид армян...», стр. 243—244, 245—246.

432 *«Արևմտահայ գրողների նամակներ», էջ 51։*

կաններըը, Զոհրապը ելրակացնում էր, որ՝ այնուամենայնիվ «ստացվածը մեծ բան է»[433]։

Սակայն Զոհրապը նույնպես սթափվեց այդ պատրանքներից։ 1914 թ. օգոստոսի 18-ին իր օրագրում նա գրում էր, որ իթթիհատի պարագլուխ Ջեմալ բեյը այցելելով դաշնակցության ներկայացուցիչ Վարդգես Սերենկյուլյանին, հայտարարեց, թե տերություննների ներկայացուցիչներ Վեստեննենկն ու Հոֆը հայկական վիլայեթներում պետք է լինեն միայն խորհրդատուներ, իսկ եթե հայերը պնդեն, որ նրանք պետք է լինեն վերահսկողներ, ապա իրենք կկտորվենն։ Նույն բանը Զոհրապին ասաց իթթիհատի մի այլ պարագլուխ՝ Խալիլ բեյը, բայց առանց չարդի սպառնալիքի. «Թուրքերը նախամեծար կը համարեն մնալ, քան թե հայկական խնդրո մեջ որևէ օտար պետության միջամտություն ընդունել, նույնիսկ երկիրն ալ միասին պիտի մնանի։ Ասիկա ամբողջ Թուրքիո համար և իրենց կուսակցության համար վերեսիմի հարց, կենաց և մահու խնդիր մը կը համարեն»[434]։ Տեսնելով, որ բարենորոգումների ծրագիրը ըղձի կարգ մնաց, Զոհրապը եկավ այն եզրակացության, որ արևմտահայության ճակատագիրը կորոշի արդեն սկսված առաջին աշխարհամարտը։

Այդպիսով, հայ բուրժուական շրջանները, որոնք տասնամյակներ շարունակ փրկության հույս էին կապել Եվրոպայի հետ, համոզված էին, թե հայկական հարցը կարելի է լուծել միայն Եվրոպայի միջոցով, գործնականում ճաշակեցին նրա «քաղցրությունը» և հիասթափվեցին, քանի որ եվրոպական տերությունների մշակած հայկական բարենորոգումների ծրագիրը չբավարարեց իրենց անգամ չափավոր պահանջները։ Նրանք չէին հասկանում, որ իմպերիալիստական տերություններն օգտագործելով հայկական հարցը, ճնշում են գործադրում Թուրքիայի վրա՝ իրենց օգտին վիջումներ պոկելու, բայց ոչ երբեք արևմտահայերի կացությունը բարելավելու համար։

---

[433] Նույն տեղում, էջ 52։

[434] «Նայիրի», 1975, № 46—50, մայիս։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔՐԴԵՐԻ, ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՒՐԴ ԱՂԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԱՂԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1908 Թ. ՀՆՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ: 1914 Թ. ԲԻԹԼԻՍԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1908 թ. հնդափոխությունից անմիջապես հետո երիտթուրքերը Արևմտյան Հայաստանի աշխատավոր հոծ զանգվածների մեջ իրենց դիրքերն ամրապնդելու համար ձերբակալեցին տարիներ շարունակ նրանց հարստահարող ու ճնշող քուրդ աղաների մի մասին[1]: Ձերբակալվածներից ոմանց իթթիհատի կառավարությունը արտաքսեց այլ վայրեր, նույնիսկ Հալեպ ու Դամասկոս, ոմանց բախտը թողեց անորոշ, իսկ ոմանց էլ ենթարկեց հրապարակային անարգանքի: 1909 թ. աշնանը Բալուում հայտնի մարդասպան Քևհյի վրից կախեցին «մարդասպանի վիճակն այս է» ցուցանակը և «կալանավորված վիճակի մեջ փողոցն փողոց պատեցնելով բանտ նետեցին»: Ականատեսներից մեկը հաղորդում էր, թե ժողովուրդը պահանջում է պատժել ոճրագործին. «Ընդհանուրի փափաքն է, որ հօրինակ այլոց այն ճիվաղը կախաղան հանվի»[2]:

Ձերբակալությունից ղերծ մնացած աղաներից ոմանք, երկյուղ կրելով հետապնդումներից և վախենալով ժողովրդի վրեժխնդրությունից, թողնցին Արևմտյան Հայաստանն ու մեկնեցին Պարսկաստան: Սահմանն անցնելիս նրանք հեռագրեցին իթթիհատի կառավարությանը, որ Թուրքիան լքում են վանի ու էրզրումի կուսակալների «սահմանադրական արարքներին»[3] դժգոհ լինելու պատճառով: Տանելով իրենց հետ մեծ հա-

[1] *Տե՛ս ՌԱՔԱ, 1908, ց. 482, գ. 1644, թ. 83, գ. 716, թ. 135, 1909, գ. 548, թ. 51: ՍՍՀՄ ԿՊՊՊԱ, ֆ. 2000, գ. 6948, թթ. 234—235, 245, 307, 324, 330:*

[2] *«Բյուզանդիոն», 1909, № 4013, դեկտեմբերի 21:*

[3] *«Բյուզանդիոն», 1910, № 4027, հունվարի 21:*

ըստ էության, այդ աղանները փորձեցին դնել կալվածքներ և հաստատվել Իրանում: Սակայն շուտով նրանք հրաժարվեցին այդ մտքից, համախմբվեցին Մակուի քուրդ նշանավոր տիրակալներից մեկի՝ Սմկոյի շուրջը և սկսեցին սպառնալ երիտթուրքերին ու «սահմանադրությունը բիրող» հայերին: 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ այդ աղանները մտադիր են Իրանում ուժ հավաքել, հարձակվել վասպուրականի վրա և մատնել «նոր արյունահեղությունների»[4]:

Բայց իթթիհատի պարագլուխները երկրում իրենց դիրքերը քիչ թե շատ ամրապնդելուց հետո սկսեցին ետ կանչել փախած աղաներին և ազատ արձակել ձերբակալվածներին, կամենալով օգտագործել դրանց Արևմտյան Հայաստանում տիղական ժողովուրդների, հատկապես հայերի ազգային ու սոցիալական շարժումները ճնշելու և Արևմտյան Իրանում տերիտորիալ նվաճումներ կատարելու նպատակին[5]: Փախած աղաների այն հարցին, թե կպահպանվեն արդյոք իրենց անձի անձեռնմխելիությունն ու կալվածքները, երիտթուրքերը տվին դրական պատասխան և նրանց վերադարձը արագացնելու համար 1910 թ. ապրիլին հայտարարեցին, թե ովքեր չեն վերադառնա մեկ ամսվա ընթացքում, կզրկվեն իրենց տիրույթներից[6]: Եվ աղաները բոնեցին հետդարձի ճամփան: 1910 թ. մայիսի 15-ին «Ազատամարտը» գրում էր. «Մեկ շաբաթ է, որ հետզհետե իրենց տեղերը կը վերադառնան Մակու (Պարսկաստան) ապաստանած փախստական աղա-պեկերը»: Նրանք պահանջում են, որ «իրենց վրա ոչ ոք չխոսի, իրենց կալվածներուն ոչ ոք չդիպչի, ինչ որ իրենց ձեռքն է և կա, պահանջող չըլլա»[7]: Երիտթուրքերն այդպես էլ վարվեցին: Վանի կուսակալը սիրալիր ընդունեց նրանց, կատակելով անվանեց «ֆիրարի փաշաներ» (փախստական փաշաներ») և ուղարկեց իրենց կալվածքները[8]:

Շարունակելով ներման ու համագործակցության քաղաքականությունը, երիտթուրքերը 1913 թ. մայիսին բանակցություններ սկսեցին Դիարբեքիրի ու Սղերդի շրջանների մարդասպանության համար մահ-

---

[4] «Բյուզանդիոն», 1910, № 4027, հունվարի 21:

[5] Երիտթուրքերի նվաճողական քաղաքականության մասին Արևմտյան Իրանում մանրամասն տե՛ս Վ. Ա. Բայբուրթյան, Թուրք-իրանական հարաբերություններում (1900—1914 թթ.), Երևան, 1974:

[6] Տե՛ս ՌՍԴԱ, ֆ. «Քաղարխիվ», 1910, ց. 482, գ. 718, թ. 60:

[7] «Ազատամարտ», 1910, № 283, մայիսի 15:

[8] Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 196:

վան դատապարտված 62 աղանների հետ, խոստանալով ազատություն, եթե չապստամբվին կառավարության դեմ[9]։

Տեսնելով իթթիհատական կառավարության հովանավորման քաղաքականությունը, իրենց հպատակությունը հայտնեցին նրան Խարբերդի, Խոզատի, Տարոնի ու Վասպուրականի մի շարք ըմբոստացած աղաների։ Արտակ Դարբինյանը գրում էր, որ սահմանադրությունից հետո «կարգ մը քյուրտ ցեղապետներ եկան Վան, հավատարմության հավաստիքներ տվին տեղական կառավարությանը»[10]։ Իսկ այնտեղ, որտեղ քուրդ աղաները դեռ շարունակում էին դիմադրավել, երիտթուրքերը հպատակեցրին նրանց ուժով։ Օրինակ, Դերսիմի մասին «Բյուզանդիոնը» հաղորդում էր. այստեղ «զինվորական գործողությունները ավարտվեցին և Դ զորաբանակի հրամանատար Իբրահիմ փաշան երկնկա վերադարձավ»[11]։

Երիտթուրքերը իրենց քաղաքական նպատակներին ծառայեցրին նաև Համիդիեին։ Ճիշտ է, դեռ 1908 թ. հուլիսին նրանք հրաման արձակեցին այդ գնդերի ցրման մասին[12], սակայն չիրագործեցին հրամանը։ Բավական է նշել, որ մինչև 1909 թ. փետրվարը գնդերից հավաքեցին ընդամենը միայն 1000 հրացան[13]։ Բայց իթթիհատականները անհրաժեշտ համարեցին փոխել Համիդիե անունը, քանի որ այն ժողովրդի մեջ թողել էր դառն հիշողություններ և դեռ շարունակում էր առաջ բերել բազմաթիվ բողոքներ ու դանդաղներ։ 1910 թ. նրանք Համիդիեին անվանեցին «Քոչվորներից բաղկացած թեթև հեծելազորային գնդեր» («Աշիրեթ հաֆիֆ սուվարի ալայլարի»[14]) և որոշ փոփոխության ենթարկելով կանոնադրությունը, հրապարակեցին այն «Կանոնադրություն թեթև հեծելազորային աշիրեթական գնդերի մասին» վերնագրով[15]։

Այդ կանոնադրության համաձայն թեթև հեծելազորային գնդերը կազմվում էին քոչվոր ու կիսաքոչվոր քրդական ցեղերից այն սկզբունքով, որ յուրաքանչյուր ցեղ կազմեր մեկ գունդ, իսկ եթե նրանց թիվը չբավարարեր գնդի համար սահմանված քանակին, կներառվեին հարև-

---

9 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 421։

10 Արտակ Դարբինյան, նշված աշխ., էջ 179։

11 «Բյուզանդիոն», 1909, № 3915, սեպտեմբերի 9։

12 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1908, գ. 1595, թ. 76։

13 Տե՛ս նույն տեղում, գ. 1597, թ. 16։

14 ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 31, ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, ց. 482, գ. 1648, թ. 22։

15 Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 521, թ. 20—31։

վան ցեղերն ու համայնքները կամ նրանց որոշ զանգվածները։ Մի քանի գունդ միավորվելով կազմում էին մեկ հրահանգչական (ինսպեկտորական) շրջան, որը կոչվում էր մուֆեթիշլիխ մինթաքսի և ուներ իր համարն ու պլխավոր շտաբը։

Բեթիև հեծելազորային գնդերում հավաքագրվում էին 18 տարին լրացած տղամարդիկ և ծառայում 27 տարի։ Նրանք ազատվում էին որոշ հարկերից ու տուրքերից, սահմանում զինվորական ուսուցում և կրում ռազմական հանգերձանք։ Այն ցեղապետները, որոնք տրամադրում էին մեկ կամ կես գունդ, սահմանում էին բինբաշու կամ հազարապետի աստիճան, իսկ գնդի սպաները՝ այնքան աշխատասեր, որքան թուրքական կանոնավոր բանակի սպաները։ Բեթիև հեծելազորային գնդերը խաղաղ ժամանակ գտնվելու էին իրենց ցեղերի տարածքներում, իսկ պատերազմի դեպքում՝ գործող բանակում կամ պլխավոր հրամանատարության մատնանշած վայրերում[16]*։*

Այդպիսով, երիտթուրքերի ստեղծած Բեթիև հեծելազորային գնդերի կանոնադրությունն ըստ էության նույնն էր, ինչ Համիդիեի կանոնադրությունը։ Բեթիև հեծելազորային գնդերի օգնությամբ երիտթուրքական կառավարությունը կարող էր ճնշել Արևմտյան Հայաստանի ժողովուրդների, հատկապես հայերի ազատագրական շարժումները և ոչնչացնել քրդական ցեղերի կիսանկախ վիճակը, ներդնելով նրանց մեջ օսմանյան վարչակարգը[17]*։*

Սկսած 1910 թ. իթթիհատի կառավարությունը ձեռնամուխ եղավ Համիդիենները Բեթիև հեծելազորային գնդերով «փոխարինելու» գործին։ Այդ «փոխարինման» հիմնական էությունը այն էր, որ սուլթանի անունը կրող գնդերի ղեկավարները պետք է ներկայանային էրզրում, հանձնեին իրենց հին՝ համիդիական դրոշակները և ստանային նոր՝ հաֆիֆ սուվարիի դրոշակները։ Գործը հաջողությամբ առաջ տանելու համար կառավարությունը քրդերի մեջ համապատասխան պրոպագանդա տարավ և նյութական ծախսերի համար բաց թողնց միջոցներ։ 1911 թ. միայն Վանի վիլայեթում այդ նպատակին հատկացվեց 18.000 թուրքական լիրա[18]*։ Երբեմն իշխանությունները քրդերի ցուցակագրվելը Բեթիև հեծե-*

---

[16] *Բեթիև հեծելազորային գնդերի կանոնադրությունը տե՛ս Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 521, թ. 20—31։*

[17] *Համիդիեի կանոնադրությունը տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 1, էջ 83—94։*

[18] *Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՀՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 155։*

լապորային դնդերում վիր էին ածում հանդիսավորության։ Այդպիսի մի բան նրանք կազմակերպեցին 1912 թ., երբ 60 քրդեր խնուսից նկան էրզրում և ցանկություն հայտնեցին մտնել հաֆիֆ սուվարիների մեջ։ Արարողությանը մասնակցեց նույնիսկ կուսակալը[19]։

Թևթև հեծելազորային դնդերը, ինչպես համիդիեն, լիակատար չարիք էին արևմտահայ (և ոչ միայն հայ) աշխատավորության համար։ 1912 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքը Թուրքիայի արդարադատության մինիստրին գրում էր. «Ժողովրդի գլխուն մեծ չարիք մ'են նաև համիտիե հեծելազունդերը, որ բռնապետական ռեժիմի ժամանակ կազմված էին հայաջինջ քաղաքականությամբ։ Ասոնք իրենց արատնյալ դիրքեն կը շարունակեն օգտվել ըստ առաջնույն և կը գտնվին ցարդ հայտնի մյութեկալիսներու և հայտնի ցեղապետներու անմիջական հրամանատարության տակ։ Խորհրդարանի որոշումը, որով անոնք կանոնավոր զորագունդերու վերածվելով և դպրոցական նիզամի սպաներու հրամանատարության ու վինվորական ընդհանուր օրենքին ենթարկվելով զորանոցներու մեջ պիտի մնային, ցարդ չի գործադրված, կառաջարկվի անհապաղ գործադրել հիշյալ որոշումը, այսինքն՝ ենթարկել համիտիեները, առանց խտրության, վինվորական ընդհանուր օրինաց և հետացնել պանոնք իրենց այժմու ազդեցության շրջանակեն»[20]։

Այդպիսով, երիտթուրքերի հեղաշրջումը միայն ցնցից, բայց բնավ չվաթարից քրդական վերնաշերտերի դիրքերը։ Նոր կառավարիչները արագորեն համերաշխվեցին հին աղաների հետ. դա պայմանավորված էր նրանց դասակարգային շահերով։ Բայց չվստահելով իթթիհատին, որը լարախաղում էր հայ-քրդական հակասություններով վրա և ձգտելով ամրապնդել ու ընդլայնել իրենց ավատական դիրքերն ու իրավունքները, քրդական աղաները, Թուրքիայի տիրապետության տակ ընկած մյուս ժողովուրդների բուրժուական շերտերի օրինակին հետևելով, սկսեցին հանդես գալ ինքնավարության պահանջներով։ Նրանց այդ ձգտումները համընկնում էին քուրդ լիբերալ-մտավորականների նպատակներին, քանի որ նրանք ևս պահպանում էին ազգային ինքնավարություն։ Իրենց նպատակին հասնելու համար քրդական շարժման այդ ղեկավարները փորձում էին օգտագործել հավատակից հպատակների կրոնական մոլե-

---

[19] Տե՛ս նույն տեղում, թ. 34ա, տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, ց. 482, դ. 1648, թ. 22։

[20] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 53։

ռանդությունը և եվրոպական տերությունների, մասնավորապես ռուսական ցարիզմի նվաճողական քաղաքականությունը։ Ի տարբերություն աղանների, որոնք ուզում էին անխախտ պահել միջնադարյան հարաբերությունները, լիբերալ-մտավորականները կամենում էին որոշ բարեփոխություններ մտցնել ազգային կյանքում։ Չնայած դրան, նոր առաջացող քրդական լիբերալիզմը դեռ չէր անջատվել ութրապետող աղայական-շեյխական ուղղությունից և գործում էր նրա գերիշխանության տակ։ Քրդական շարժման ավանգարդում կանգնած այդ վերնաշերտերը ոչ միայն չէին արտահայտում աշխատավոր բնակչության շահերը, այլև գործում էին նրանց դեմ։ Դրանում համոզվելու համար համառոտակի ծանոթանանք նրանց ծրագրերին ու գործերին։

Քրդական լիբերալ-մտավորականների դեկավարներից մեկը նշանավոր բեդր-խաններից սերված Աբդուր Ռեզաք բեյն էր։ 1911 թ. ապրիլին վանում ռուսական փոխհյուպատոս Օլֆերևի հետ զրուցելիս նա ասում էր, որ քրդերը ձգտում են թոթափել թուրքական լուծը։ Բայց այդ նպատակին հասնելու համար նախապես անհրաժեշտ է քրդական աղատագրված մի օջախ ստեղծել Թուրքիային սահմանակից Իրանական Քրդստանում։ Նա ենթադրում էր, որ ինքը, միանալով Կոթուրի նշանավոր քուրդ աղա Սմկոյի հետ, կնվաճի Դիլմանը, ապա հնարավոր կուզարկի պարսկական կառավարությանը, առաջարկելով՝ ճանաչել իրեն Ուրմիայի նահանգապետ, խոստանալով դրա դիմաց պաշտպանել Իրանի արևմտյան սահմանները։ Եթե Պարսկաստանը ընդունի իր առաջարկությունը, կլինի շահի խոնարհ ծառան և կզբաղվի Իրանական Քրդստանում կուլտուրական աշխատանքներով, եթե մերժի, ապա կնվաճի նաև Ուրմիան ու Սոուջ-Բուլաղը և ազատելով դրանք Թուրքական տիրապետությունից, սկիզբ կդնի քրդական ինքնավար իշխանության։ Այնուհետև գործունեություն կծավալի Թուրքական Քրդստանում և ապստամբության միջոցով կձգտի հասնել նրա ազատագրությանն ու անկախությանը։ Բայց դա կկատարի այն ժամանակ, երբ Ռուսաստանը պատերազմ սկսի Թուրքիայի դեմ։ Ուրիշ պայմաններում չի դիմի ապստամբության, քանի որ Թուրքիան հեշտությամբ կճնշի այն։

Աբդուր Ռեզաքը միամտորեն կարծում էր, որ Ռուսաստանը Թուրքիայի դեմ պատերազմելիս նպատակ ունի ոչ թե նոր հողեր նվաճել, այլ ձեռք բերել իր համար խաղաղ ու անվնաս հարևան, որպիսին, նրա համոզմունքով, կարող են լինել քրդերը։ Այդ պատճառով էլ պատերազմի դեպքում քրդերը կկանգնեն ռուսների կողմը։ Նա նշում էր. «Թուրքերը Ռուսաստանի թշնամին են, քրդերը՝ Թուրքիայի։ Հետևաբար, Ռուսաս-

տանը ունի մեզ հավատալու բոլոր հիմքերը»[21], ապա ավելացնում. «Ռուսաստանի համար իբրև հարևան ձեռնտու է ունենալ հավատարիմ քրդերին, քան կասկածելի հայերին»[22]։ Աբդուր Ռեզաքը հույս չէր կապում եվրոպական պետությունների հետ, գտնելով, որ նրանք հեռու են և այդ պատճառով չեն կարող օգնել քրդերին։ Ամփոփելով իր մըտքերը, նա եզրափակում էր, որ քրդերը իրենց անկախ իշխանությունը նախապես կստեղծեն Պարսկաստանում, հետո, երբ Ռուսաստանը պատերազմ վարի Թուրքիայի դեմ՝ նաև Թուրքիայում, ապա միավորելով այդ երկու իշխանությունները՝ հիմք կդնեն անկախ Քրդստանի, որը կգտնվի Ռուսաստանի հովանավորության տակ։ «Ահա մեր պլանը։ Եթե մեզ հաջողվի այն իրագործել, լավ, եթե ոչ՝ կպատասխանենք մեր գլխով»[23]։

Օլֆերևը փորձեց դրական տրամադրել իր կառավարությանը Աբդուր Ռեզաքի պլանին, համոզելով, որ եթե քրդական ապստամբությունը պարտվի, այնուամենայնիվ կթուլացնի Թուրքիային, իսկ եթե հաղթի, կկազմալուծի նրան իբրև Ռուսաստանի հակառակորդ։ Ապա նա ղեկուցում էր. «Մեզ համար ավելի շահավետ է մեր կողքին տեսնել քրդական ինքնավար իշխանություն, որն անհրաժեշտությունից դրդված բարեկամություն կփնտրի Ռուսաստանի հետ, քան թուրքական ռազմական ճամբար կամ ինքնավար Հայաստան, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մենք Կովկասում ունենք մոտ 1,5 միլիոն հայ և ընդամենը 130000 քուրդ»[24]։ Նման պարագաներում, եզրափակում էր նա, հայերի պահանջները Ռուսաստանից կարող են լինել շատ ավելի հիմնավոր ու լուրջ, քան քրդերինը։ Սակայն ռուսական կառավարող շրջանները ոչ միայն չունկնդրեցին իրենց փոխհյուպատոսին, այլև Աբդուր Ռեզաքին համարեցին պրովոկատոր ու արկածախնդիր, որի նպատակն էր բարդություններ ստեղծել պարսկա-թուրքական սահմանի վրա՝ «թուրքական հետագա նվաճումներն արդարացնելու համար»[25]։

1911 թ. գարնանը Աբդուր Ռեզաքը շրջում էր Պարսկաստանի ու Թուրքիայի քրդաբնակ շրջանները, կոչ անում պայքարի դուրս գալ թուրքական տիրապետության դեմ և ստեղծել միասնական քրդական պե-

---

21 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911—1914, ց. 482, գ. 719, թ. 50։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, թ. 51։

24 Նույն տեղում, թ. 64—65։

25 М. С. Лазарев, Курдистан и курдская проблема, М., 1964, стр. 158.

տուբյուն։ Իմանալով այդ մասին, իթթիհատի պարագլուխները փորձնին ձերբակալել նրան։ Սակայն նա փախավ Ռուսաստան, առժամանակ հաստատվեց Երևանում, ապա կրկին մեկնելով Պարսկաստան, շարունակեց իր պրոպագանդան։ 1911 թ. վերջերին Սմկոյի և Շամդինանի շեյխ Մահմեդ Սըդըքի որդի Թահայի աջակցությամբ Աբդուր Բեզաքը հրավիրեց քրդական մի շարք ցեղապետների խորհրդակցություն։ Հայտնի չէ, թե ինչ հարցեր արծարծվեցին այդ խորհրդակցությունում, բայց պիտենք, որ շուտով քրդական ցեղապետների խորհրդակցություններ տեղի ունեցան նաև Արևմտյան Հայաստանում։ 1911 թ. դեկտեմբերին «Աշխատանքը» գրում էր, որ Խոշաբում «Իսմայիլ աղայի մոտ կայացավ քուրդ տղաների ժողովը, որուն կը մասնակցեին Սատիմ, Մանասուր, Շյուքրի բեյերը և Հասան ու Իսմայիլ աղանները։ Ժողովի որոշումները խիստ գաղտնի կը պահվին։ Որչափ իմացանք, քրդական շարժումներու պատրաստություն կը տեսնեն։ Մակուն մավզեր, հրացաններ բերել տված են 12—27 լիրայի արժողությամբ»[26]։

1912 թ. գարնանը Թուրքական կառավարությունը Շամդինանում լրտեսների օգնությամբ կարողացավ ձերբակալել Աբդուր Բեզաքին ու շեյխ Թահային, սակայն Վան տեղափոխելիս ճանապարհին Սմկոն հարձակվեց ոստիկանների վրա և ազատեց նրանց[27]։ Հետապնդումներից խուսափելու համար Աբդուր Բեզաքը մեկնեց Ռուսաստան։ Թուրքական կառավարությունը պահանջեց ցարական իշխանություններից արգելել նրա հակաօսմանյան պրոպագանդան, բայց, արդյունքի չհասնելով, դիմեց այլ միջոցի։ 1912 թ. վերջերին հայտարարեց, թե Աբդուր Բեզաքը ներման կարժանանա, եթե թողնի Ռուսաստանը և վերադառնա Թուրքիա։ Աբդուր Բեզաքը համաձայնվեց կատարել այդ պայմանը, եթե երիտթուրքերը կտան իրեն 2000 թուրքական լիրա, կնշանակեն անհատ, ետ կըտան իր հողերը, պաշտոնի կնշանակեն իր հարազատներին, կվերադարձնեն քրդերի վակֆները և կբացեն քրդական դպրոցներ[28]։ Իթթիհատի պարագլուխները մերժեցին Աբդուր Բեզաքի առաջարկությունները, ենթադրելով, որ նա արդեն կապված է ռուսական կառավարող շրջանների հետ և ծառայում է նրանց։ Հետագայում երիտթուրքերը մահմեդական բնակչությանը Աբդուր Բեզաքի դեմ գրգռելու համար սկսեցին նրա դեմ հրապարակել մի շարք հոդվածներ։ Վանի «Ջալդիրան» թերթը լույս

---

[26] *«Աշխատանք», 1911, № 6—53, էջ 15։*

[27] *Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4882, նոյեմբերի 15։*

[28] *Տե՛ս Մ. Ս. Լազարև, նշված աշխ., էջ 204, 213։*

ընծայից «Դավաճանություն» վերնագրով մի հոդված, որի մեջ Աբդուլ Ռեզաին համարում էր դավաճան, նշում էր, թե փողի համար նա ընկել է պյավուրների (ռուսների) դիրքը, վաճառելով նրանց իր հայրենիքը, խիղճը, հավատը, ազգությունը[29]: Զբաղվարտվելով դրանով, հրիտիուրբերը փորձեցին իրենց գործակալների միջոցով Իրանական Քրդստանում սպանել նրան: Սակայն այդ նրանց չհաջողվեց:

Զատանալով բավարարություն հրիտիուրբերից, Աբդուլ Ռեզաքը իր նպատակների իրականացման համար շարունակեց բանակցություններ վարել ցարական իշխանությունների հետ: 1913 թ. վերջերին նա դիմեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, որ Ռուսաստանը Իրանական Քրդստանը դարձնի համաքրդական շարժման կենտրոն և իրեն ճանաչի այդ շարժման ղեկավար: Նա պատրաստակամություն հայտնեց անգամ հրաժարվել Թուրքական քաղաքացիությունից և ընդունել իրանական հպատակություն[30]: Սակայն ցարական կառավարող շրջանները, չցանկանալով լարել իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ, մերժեցին նրա առաջարկությունը:

Աբդուլ Ռեզաքը հավակնություն ուներ դառնալ ապագա քրդական ինքնավարության կամ պետության ղեկավար, բայց հանդիպում էր մի շարք ցեղապետների առարկությանը: Ջգալով վերացնել այդ առարկությունները, նա փորձում էր հավատացնել ցեղապետներին, թե ռուսական կառավարող շրջանները այդ հարցը արդեն լուծել են իր օգտին: 1914 թ. գարնանը Սղնդի սանջակի Շիրվան օկրուգում քրդական ազդեցիկ աղաները հավաքվեցին խորհրդակցության, ուր որոշեցին պատգամավոր ուղարկել Թիֆլիս և ստուգել Աբդուլ Ռեզաքի հայտարարությունը[31]:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ «Ռուսաստանի բարեկամ» Աբդուլ Ռեզաքը, տեսնելով նրա անհաջողությունը, լքեց ռուսներին և քրդական մի շարք ցեղապետների հետ միասին պատրաստվից խլել Թիկունքից: Հետագայում նա փորձեց հերքել դա, բայց ռուսական ռազմական իշխանությունները այլևս չվստահեցին նրան և 1915 թ. ուղարկեցին Թիֆլիս[32]:

Աբդուլ Ռեզաքը լարախաղում էր Ռուսաստանի, Թուրքիայի ու Պարսկաստանի հարաբերությունների վրա, փորձելով լուծել քրդական հարցե-

---

[29] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», գ. 1606, թ. 27—28:

[30] Տե՛ս Մ. Ս. Լազարև, նշված աշխ., էջ 237:

[31] Տե՛ս նույն տեղում, էջ 209:

[32] Տե՛ս նույն տեղում, էջ 330—331:

րը նրանցից որևէ մեկի միջոցով։ Խոշոր իրանագետ ու քրդագետ Վ. Ֆ. Մինորսկին, որն առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ծառայում էր Պարսկաստանում՝ իբրև ռուսական դիվանատան աշխատող, անվանում էր Աբդուր Բեզաքին քաղաքական արկածախնդիր, որը երկդեմ խաղ է խաղում ռուսների ու թուրքերի միջև[33]։

Քրդական լիբերալ մտավորականության ներկայացուցիչներից էր նաև շեյխ Ուբեյդուլլայի որդին Աբդուլ Կադիրը։ Սուլթան Համիդի կառավարման տարիներին նա գտնվում էր աքսորում։ 1908 թ. հեղափոխությունից հետո ազատություն ստացավ և նշանակվեց օսմանյան սենատի անդամ։ Զեռնամուխ լինելով քաղաքական ակտիվ գործունեության, 1908 թ. աշնանը նա հիմնեց «Քրդական փոխօգնության և առաջադիմության ընկերությունը» («Քուրդ թավուն վա թարաքի ջամիատի»), ուր համախմբվեցին սոցիալական տարբեր խավերի և տարբեր հայացքների մտավորականներ։ Նրանք ծրագրում էին քրդաբնակ շրջաններում բացել ազգային դպրոցներ, պաշտոններում նշանակել քրդերին, գործավարությունը կատարել մայրենի լեզվով, հիմնել բարձրագույն ուսումնական հաստատություններ, հրատարակել թերթեր ու ամսագրեր, թուրքական մեջլիսում ունենալ իրենց ներկայացուցիչը, կառուցել արդյունաբերական ձեռնարկություններ և ընդհանրապես ակտիվացնել շինարարական աշխատանքները։ 1908 թ. նոյեմբերին լույս տեսավ ընկերության թերթի առաջին համարը «Քուրդ» վերնագրով։ Այն ուներ կրոնական, դիտական, քաղաքական, գրական բովանդակություն և չէր անցնում լիբերալ-բուրժուական դաղափարախոսության սահմաններից[34]։ Երիտթուրքերը երկյուղ կրելով, որ նշված ընկերությունն ու նրա օրգանը կարող են նպաստել քրդերի ազգային զարթոնքին և ազատագրական շարժումների ծավալմանը, 1910 թ. լիկվիդացրին դրանք։

Քաղաքական կողմնորոշման հարցերում Աբդուլ Կադիրը ևս երկակի խաղ էր խաղում, թևթևելով մերթ Թուրքիայի, մերթ Ռուսաստանի կողմը։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցարական կառավարությունից նա պահանջից 30 դյուզ Իրանական Քրդստանում, չեղոքություն պահպանելու պայմանով և հայտարարից, որ

---

33 *Տե՛ս նույն տեղում, էջ 278—279։*

34 *Տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. VII, Քրդագիտություն, Երևան, 1975, էջ 72—74 (Զալիլ Զալիլ, «Ռոժ քուրդ» ամսագիրը որպես XX դարի սկզբի քրդական հասարակական-քաղաքական մտքի ուսումնասիրման աղբյուր»)։*

Լիի Ռուսաստանը չստեղծի իր դեկավարությամբ ինքնավար Քրդստան, ապա կկազմակերպի հայկական չարդեր[35]: 1917 թ. մայիսին Կ. Պոլսից նա փախավ Մեքքա, իսկ հետագայում մասնակցելով շեյխ Սահիդ ապստամբությանը, 1925 թ. Դիարբեքիրում քիմալական կառավարության կողմից կախաղան բարձրացվեց:

1912 թ. սկզբներին հայտնի հրապարակախոս ու պետական Ռաֆիկ Հնլմի և այլոց նախաձեռնությամբ ստեղծվեց քրդական նոր ընկերություն «Հույս» («Խիլա») անունով, որի մեջ ընդգրկվեցին գերազանցապես մայրաքաղաքի քուրդ ուսանողները: Այդ ընկերության անդամները հասարակական ու քաղաքական կապերով կապված էին արաբական մի շարք նշանավոր գրողների ու գործիչների հետ: Այն իր բաժանմունքներն ուներ Բիթլիսում, Էրզրումում ու այլ քաղաքներում և նույնիսկ արտասահմանում[36]: 1913 թ. հունիսին ընկերությունը Կ. Պոլսում քրդերին ու թուրքերին լեզուներով սկսեց հրատարակել «Քրդի արևը» կամ «Քրդի օրը» («Ռոժա քուրդ») ամսագիրը, ուր տպագրվում էին մի շարք նշանավոր գործիչների, այդ թվում նաև Աբդուլլա Ջևդետի ու Իսմայիլ Հակկի Բաբան զադեի հոդվածները: Սրանք, լինելով հերթուրքական կուսակցության գաղափարախոսներ ու կառավարության անդամներ, աշխատում էին իթթիհատի օգտին, բայց միաժամանակ հարում էին քրդական ազգային շարժմանը: «Քրդի արևը» թափանցում էր կայսրության արևելյան շրջանները, մասնավորապես Քրդստան ու Արևմտյան Հայաստան ու տարածվում բնակչության մեջ: Այն հրապարակում էր գերազանցապես կուլտուր-լուսավորական բովանդակությամբ հոդվածներ[37]: Ամսագիրը պահանջ էր դնում քրդերի համար բացել դպրոցներ, ստեղծել դպրություն, ուսումնասիրել հարազատ ժողովրդի պատմությունն ու բանասիրությունը, զարգացնել ազգային սովորույթներն ու դիտակցությունը, ներդնել քրդերի մեջ եվրոպական կուլտուրան՝ առանց արմատապես փոփոխելու տիրապետող կարգերը: Այդ ամսագիրը ոչ միայն չէր շոշափում դասակարգային հակասությունները, այլև աշխատում էր համահարթել դրանք և քուրդ ժողովուրդը ներկայացնում էր իբրև հասարակական միատարր ամբողջություն[38]: Չնայած դրան, իթթիհատի պարագլուխները «Քրդի արևը» նույնպես համարեցին վտանգավոր և չորրորդ համարի հրատարակումից հետո, 1913 թ. աշնանը փակեցին:

---

35 Տե՛ս Մ. Ս. Լազարև, նշված աշխ., էջ 304:

36 Տե՛ս «Միջնադարյան Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. VII, էջ 74:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 76—78:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 82—88:

Քրդական լիբերալ շարժման մեջ նշանավոր դեր էր խաղում նաև օսմանյան պառլամենտի անդամ Լյութֆի Ֆիքրին։ Նա Կ. Պոլսում ստեղծեց «Վերանորոգում» կամ «Բարեփոխություն» («Մյուջադադ») խմբակը, որի անդամները մտավորականներ էին և իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում սուլթանի գրկումը խալիֆի բացառիկ իրավունքից ու ակնհայտ անջատումը պետությունից[39]։

Քրդական մտավորականության այս ներկայացուցիչների գործունեությունը, անշուշտ, նպաստում էր քրդերի ազգային զարթոնքին ու զարգացմանը, բայց նրա ազդեցությունը, ինչպես իրավացիորեն նշում է Մ. Ս. Լազարևը, ժողովրդի վրա փոքր էր[40], որը պայմանավորված էր քրդերի մեջ գերիշխող անգրագիտությամբ ու խավարով։

Քրդական շարժման մեջ ավելի ակտիվ դեր էին խաղում աղաներն ու բեյերը, որոնք Արևմտյան Հայաստանում ունեին նյութական մեծ ուժ և քաղաքական ազդեցություն։ Դրանցից էր Խիզանի, Սպարկերտի ու Մամռատանքի ժիրակալ շեյխ Սեիդ Ալին, որը 1909 թ. սեպտեմբերին կանչվեց Բիթլիս ու բանտարկվեց[41]։ Այդ լուրը, ինչպես և պետք էր սպասել, զոհունակությամբ ընդունվեց աշխատավոր զանգվածների կողմից։ 1910 թ. սկզբներին «Մշակը» գրում էր. «Տեղական հայ ազգաբնակությունը սահմանադրության հրատարակումից ավելի՝ այդ արյունախում մոլեանդ շեյխի բանտարկության վրա է ուրախացել»[42]։ Բայց Սեիդ Ալին երկար չմնաց բանտում, 1910 թ. փետրվարին ազատ արձակվեց և շարունակեց իր սովորական բռնություններն ու ոճրագործությունները։ Նա հայտարարեց գյուղացիներին. «Դուք բայաներ եք, իսկ մենք տիրողներ, ուստի դուք պարտավոր եք ըստ առաջնույն նորին ձեր տերերու գյուղարան տալ, անոնց անկարեան ընել ու կապալը վճարել. այն որ քյուրտին պարտք ունի և իր հողը գրավ է անոր մոտ, անոր գլխավճարը կամ տարեկան տոկոսը վճարելու է. ես այսչափ վճարած եմ ըսելով վճարումը մերժել չըլլար, սահմանադրություն, հյուրիներ է ըսելով ձեր այսչափ տարիներու պարտավորություններեն ետ մնալը ներելի չէ»[43]։

Սեիդ Ալին ուներ մի շարք արբանյակներ՝ Կարճկանի Մուսա բեյը, Մուշի դաշտի Մուսա ու Կասըմ եղբայրները, Շատախի Շաքիր աղան,

---

39 Տե՛ս Մ. Ս. Լազարև, նշված աշխ., էջ 139։

40 Տե՛ս նույն տեղում, էջ 140։

41 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1908, ց. 482, գ. 542, թ. 65։

42 «Մշակ», 1910, № 32, փետրվարի 12։

43 «Բյուզանդիոն», 1912, № 4871, նոյեմբերի 2։

Նորդուզի Միր Մհենն, Աղբակի Շարաֆ ու Կոպ Մհմմեդ բեյերը, Խարպանի Բշարի Ջաֆոն և ուրիշներ, որոնք գործում էին նրա թելադրանքով և կատարում բազմաթիվ ոճրագործություններ հայ ու քուրդ գյուղացիների հանդեպ։

Կարճկանի Մուսա բեյը, որ մեծ հարստություն էր ձեռք բերել Աբդուլ Համիդի տիրապետության տարիներին, 1908 թ. հետո աշխատում էր ոչ միայն պահպանել, այլև ավելացնել այն։ Ուստի շարունակում էր աստատակել Կարճկանն ու նրա հարակից գավառները։ Համագործակցելով Սեիդ Ալիի հետ, նա նույնպես պրոպագանդում էր ինքնավար Քրդստանի գաղափարը և մերժում հայկական բարենորոգումները։ Նպատակին հասնելու համար, մի կողմից, նա ահաբեկում էր հայերին, իսկ մյուս կողմից՝ սրում հայ քրդական հակասությունները, հայտարարելով. «Հե՛յ քրդեր, խելքի եկեք, քանի ուշ չէ։ Ցարս հինգ տարի վերջը այս երկրին մեջ քրդին այլևս հաց չի մնար։ Ես ձեզի կըսեմ, քրդեր, պատրաստ եղեք... այլևս հայն ու քուրդը քով քովի չեն կրնար ապրիլ»[44]։

Մուսա բեյն ու Սեիդ Ալին, իբր կուլտուրական նպատակներով, քրդական զանազան միություններ ու կազմակերպություններ են ստեղծում Տարոնում ու Վասպուրականում, միաժամանակ զինում են քրդերին և բռնի ուժով ձգտում են քշել հայերին տնից ու տեղից։ 1909 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ քրդական այդ երկու ղեկավարների նախաձեռնությամբ «ամեն տեղ... ռևոլյուցիոնարական միություններ կկազմվին. կարգախոսն ամեն տեղ նույնն է, միություններ քաղաքի մեջ, միություններ գավառի մեջ, որոնց կանդամակցին ամենեն ավելի անվստահելի տարրեր, խավարի մեջ գործող չար ոգիներ, որք անցելոյն մեջ արյան գետակներ հոսեցուցած են և այժմ ալ անոնց այս միությունը կասկածով ու սոսկումով կհամակե հայ ժողովուրդը»[45]։

Իր բազմաթիվ ոճրագործություններով Կարճկանի Մուսա բեյը բորբոքել էր հայ և քուրդ գյուղացիության ատելությունը։ Եվ հայդուկները 1913 թ. օգոստոսին նրան սպանեցին։ Վանի ռուսական փոխհյուպատոսը այդ օրերին հաղորդում էր, որ եղեռնագործի սպանությունը ուրախացրել է «ոչ միայն հայերին, այլև շատ քրդերի»[46]։

Բշարի Ջաֆոն ու նրա եղբայր Ջեմիլը ինչպես հեղափոխությունից առաջ, այնպես էլ նրանից հետո ավերում ու թալանում էին Խարպանի

---

[44] Մալխաս, Ճամբուս վրա, էջ 207—208։

[45] «Բյուզանդիոն», 1909, № 3776, մարտի 11։

[46] ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, գ. 719, թ. 354։

հայաբնակ ու քրդաբնակ գյուղերը և մնում անպատիժ։ 1912 թ. Սղերդի առաջնորդի տեղապահը գրում էր. «Պշարն Ջամո անուն չարագործ մը և եղբայր Ճնմիլ, իրենց ծառաներով գյուղն գյուղ կը պտտին և բռնի ու կամավ գրամ, ոչխար, գառն և նոն կհավաքեն ու գյուղերու վրա գրամ, ցորեն ալն կսահմաններն, չավողը կպտնեն իր պատիժը և իրենց չհնազանդողներուն վրա կձգեն ոճիրներ»[47]։ Այդ եղբայրների ավազակային գործունեության մասին հաղորդում էր նաև Վ. Շիրկովը, նշելով, թե միայն 1913 թ. ապրիլի վերջերին Խարզանում Ջեմիլը թալանեց ու ավերեց 11 հայկական գյուղ, որի բնակիչները ահաբեկված փախան սարերը[48]։

Գյուղացիության մասսայական բողոքների ճնշման տակ երիտթուրքական իշխանությունները երբեմն հետապնդում էին ոճրագործ եղբայրներին, բայց ձերբակալելիս կաշառք էին վերցնում ու ազատ արձակում։ Այդպես վարվեցին նրանք, օրինակ, 1913 թ. հոկտեմբերի 8-ին, երբ հանցագործներին բազմաթիվ ոստիկանների ուղեկցությամբ Բիթլիսից շուրջով ուղարկեցին Խարզան[49]։ Եվ Ջաթոն ու Ջեմիլը, օգտվելով իշխանությունների թողտվությունից ու հովանավորությունից, նոր հանդով շարունակեցին աշխատավորության ահաբեկումներն ու կողոպտումները։ «Բյուզանդիոնը» գրում էր. «Ղարզանի ծանոթ չարագործները Ջաթոյի Պշար ու Ճնմիլ ավազակ եղբայրները, Պիթլիսի կուսակալեն ներում. ստանալն ետք, թե իրենք և թե հարևան քյուրտ աղանները վերստին սկսած են հարստահարել տեղվույն խաղաղ ազգաբնակությունը—քրիստոնյա, մահմեդական, եզիդի։ Անխնա կհավաքին ցորեն, գարի, բրինձ, գրամ ալն, խոստիվ պատվիրելով, որ ոչ որի չխոսին։ Խեղճ ժողովուրդը ստիպված է թե քուրդ ավազակին պահանջը գոհացնել և թե լռել, իր մեջ խեղդելով բողոքի ամեն ձայն»[50]։

Մարղիկցիների ցեղապետ Շարաֆ բեյը, որի դեմ դաշնակցականները կազմակերպեցին մահափորձ դեռ 1897 թ., խանասորի արշավանքի ժամանակ, շարունակում էր իր հարձակումները Աղբակի գյուղերի վրա և կոտորում ու թալանում էր նրանց բնակիչներին նաև հեղափոխությունից հետո։ 1912 թ. աշնանը նա ավերեց նույն գավառի էրնակ հայ-քրդական գյուղը, որի բնակիչները մեծ դժվարությամբ կարողացան նոր տեղանալ

---

47 «Բյուզանդիոն», 1912, № 4839։

48 Տե՛ս ՌԱԲԱ, ֆ. «Քաղաքական», 1914, ց. 482, գ. 546, թ. 130։

49 Տե՛ս նույն տեղում, թ. 228։

50 «Բյուզանդիոն», 1913, № 5190, նոյեմբերի 18։

իրենց հոտերի մի մասը[51]։ Հայկական հարցի վերաբացման օրերին նա կանգնեց Սեիդ Ալիի դիրքերում և սպառնաց բնաջնջել հայերին, եթե նրանք իրագործեն իրենց ցանկությունները։ 1913 թ. ամռանը Բաշկալեի Հասպատան գյուղի բնակիչներին Շարաֆ բեյը հայտարարեց. «Հայե՛ր, դուք մտադիր եք ինքնավարություն ձեռք բերելու, սակայն անօգուտ ջանք է, եթե երբևէ այդ հանգամանքը իրականանա, վստահ եղեք, որ ինչքան կարողություն ունինք պիտի աշխատինք հայությունը անմիջապես բնաջինջ ընելու, ահա այս բանը լավ հասկցեք»[52]։

Շաքիր աղան ու նրա ազգական Միր Մհեն Սեիդ Ալիի ոչ այնքան գաղափարական, որքան ավազակային զինակիցներն էին։ Սկսած 1888 թ. Շաքիր աղան ահի ու սարսափի մեջ էր պահում Շատախի բնակչությանը։ 1908 թ. հեղափոխությունից հետո գյուղացիների համառ պահանջով երիտթուրքերը ձերբակալեցին նրան, բայց 8 օր անց կրկին ազատ արձակեցին[53]։ Այնուհետև նա շարունակեց իր ոճրագործությունները, հաշվեհարդար տեսնելով իրեն դիմադրավողների ու հատկապես իր վրա բողոքողների հետ։ 1913 թ. սեպտեմբերին, երբ իշխանությունները փորձեցին վերստին ձերբակալել, Շաքիր աղան փախավ և հետապնդման ժամանակ սպանվեց։

Իր զազրելի արարքներով Շաքիր աղայից համարյա ետ չէր մնում նրա եղբոր որդի Միր Մհեն։ Լսելով Ադանայի ջարդերի մասին, նա ենթադրեց, թե հայկական նոր կոտորածներ են իրագործվում և Կանուվա գյուղում սպանեց 7, Սիծանցում՝ 8, իսկ Կվերսում՝ 6 հայի[54]։ Հետագայում նա շարունակեց ոճրագործությունները, թալանելով ու սպանելով և՛ քրիստոնյաներին, և՛ մահմեդականներին։ Այդ ավազակի հետ գործարքի մեջ մտած երիտթուրքական պաշտոնյաները 1912 թ. Նորդուզի գյուղացիներից նրա համար նույնիսկ դրամ հավաքեցին, որ գավառը հանգիստ թողնի։ Սակայն Միր Մհեն դրամը վերցնելով, շարունակեց իր գործը։ Թուրքական «Թանին» պաշտոնական թերթի ոչ լրիվ տվյալներով, միայն մի քանի տարվա ընթացքում նա սպանել էր 85 քրիստոնյա, 58 մահմեդական և 53 ոստիկան ու զինվոր[55]։ Վանի սանջակի հասարակության պահանջով, իշխանությունները փորձեցին ձերբակալել Միր Մհեին,

---

[51] Տե՛ս «Աշխատանք», 1912, № 7—103, էջ 7։

[52] «Վան-Տոսպ», 1913, № 21, էջ 248—249։

[53] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1908, գ. 1595, թ. 121, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 716, թ. 135։

[54] Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, №՝ 5177, նոյեմբերի 3։

[55] Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5180, նոյեմբերի 6։

բայց նա փախուստի դիմից և 1913 թ. հոկտեմբերին Շատախի լեռնեբում հետապնդող զորամասերի կողմից սպանվեց։ «Բյուզանդիոնը» գրում էր, որ այդ եղեռնագործի մահը մեծ ուրախություն է պատճառել թե հայերին և թե քրդերին, «որովհետև Շատախի լեռներին մինչև Նորդուզ ու անկե մինչ քաղաք վիրատացող ավազակներուն հույսն ան էր մրնացեր»[56]։

Քրդական աղայական շարժման մեջ մեծ դեր էր խաղում նաև Քյոռ Հյուսեին փաշան։ Սուլթան Աբդուլ Համիդի կառավարման տարիներին նա հռչակվել էր իր բազմաթիվ եղեռնագործություններով ու վայրագություններով, Ադլջևազի ու հարակից շրջանների գյուղացիների հողերի բռնագրավումներով և շարժական գույքի թալանով։ Բնակչության համառ պահանջով 1908 թ. սեպտեմբերին երիտթուրքերը փորձեցին ձերբակալել նրան։ Հյուսեին փաշան, նախապես իմանալով այդ մասին, թաքնվեց Սիփան լեռան ծերպերում և իր հրոսակներով շարունակեց ավազակությունը։ Սակայն տեսնելով, որ այդպես չի կարող երկար ապրել, պաշտոնյաներից մեկի խորհրդով մեկնեց Վան, երդվեց, որ հավատարիմ կծառայի սահմանադրությանը, կվերադարձնի իր բռնագրաված կալվածքները գյուղացիներին և իր բոլոր հանցագործությունները բարդեց Զեքի փաշայի վրա, հայտարարելով, թե դրանք կատարված են նրա թելադրանքով։ Եվ Վանի իշխանությունները ազատ արձակեցին նրան, մանավանդ, երբ մայրաքաղաքից այդ օրերին ցույցում ասացան՝ դադարեցնել հողային միջոցառումները, քանի որ շուտով կհրատարակվեն ագրարային այնպիսի օրենքներ, որոնք իբր թե կբավարարեն բոլորին[57]։

Իշխանությունների այդ վարքագիծը նոր ուժով բորբոքեց գյուղացիության պայքարը։ Ադլջևազի ինչպես հայ, այնպես էլ քուրդ շինականները միաձնաբար ոտքի կանգնելով, ավելի քան մեկ տարի համառորեն պահանջում էին ոչ միայն վերադարձնել իրենց հողերը, այլև պատժել տանտեմյակներ շարունակ իրենց արյունը ծծող ու քրտինքը լափող փաշային[58]։ Էրզրումի կուսակալը ստիպված էր 1909 թ. վերջերին առաջարկել Քյոռ Հյուսեինին բացատրություն տալ իր դեմ հարուցած գանգատներին։ Ենթադրելով, թե արդեն իր կյանքը վտանգի տակ է, Հյուսեին փաշան, իր ազգականներ էմին և Թիմուր փաշաների հետ միա-

---

56 «Բյուզանդիոն», 1913, № 5162, հոկտեմբերի 16։

57 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1908, գ. 1595, թթ. 98—99։

58 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 196, ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1908, գ. 1595, թ. 99, «Բյուզանդիոն», 1909, № 3776, մարտի 11։

սին թողնց Թուրքիան և 1909 թ. դեկտեմբերին անցավ Պարսկաստան ու Հաստատվեց Մակուում[59]: 1910 թ. սկզբներին Քյոռ Հյուսեինը նամակ ուղարկեց Վորոնցով-Դաշկովին, խնդրելով միջնորդել ցարին՝ Քրդստանը վերցնելու իր հովանու տակ և օգնելու իրեն՝ ապստամբվելու Թուրքիայի դեմ: Նամակի վերջում նա ավելացնում էր, որ եթե այդ ամենը անհնարին լինի, ապա իրեն ճանաչեն ռուսահպատակ և թույլատրեն ապրելու Ռուսաստանում: Սակայն ռուսական կառավարող շրջանները, դեկավարվելով Մերձավոր Արևելքում իրենց արտաքին քաղաքականությամբ, հրաժարվեցին նրան օգնելուց, բայց թույլատրեցին ապրել Ռուսաստանում, Երևանի նահանգում:

1910 թ. փետրվարին երիտթուրքերը առաջարկեցին Հյուսեին փաշային՝ վերադառնալ Թուրքիա, խոստանալով ապահովել նրա անձի ու գույքի անձեռնմխելիությունը: Եվ Քյոռ Հյուսեինը նույն թվականի մայիսի 10-ին մեկնեց Վան, իսկ այնտեղից թուրքական պինվորների ուղեկցությամբ՝ դեպի տուն, և հաստատվեց Ջոնիկ գյուղում[60]:

Վերհաստատվելով իր կալվածքներում և հովանավորվելով կառավարության կողմից, Հյուսեին փաշան շարունակեց բանությունները և դաժան հաշվեհարդար տեսավ իրենց իրավունքների համար պայքարող գյուղացիների հետ, խարուիյուն չդնելով ազգությունների միջև: Շուտով նա մտավ «Միության և առաջադիմության» կուսակցության մեջ, իսկ 1911 թ. հուլիսի 10-ին հեռագիր ուղարկեց սուլթանին, որի մեջ հայտնելով իր նվիրվածությունը, նշում էր. «7 միլիոն քրդեր պատրաստ են, անհրաժեշտության դեպքում, թափել իրենց արյունը սահմանադրության պաշտպանության համար և սուլթանի առաջին իսկ կանչով դուրս կգան թշնամու դեմ՝ հանուն հայրենիքի պաշտպանության»[61]:

Բայց այս «նվիրվածությունը» չխանգարեց փաշային, որ տարի ու կես անց՝ 1913 թ. հունվարին հավանություն տար Աբդուր Ռեզաքի ծրագրին՝ թուրքական կառավարության դեմ ապստամբվելու և ինքնավար Քրդստան ստեղծելու մասին: Հատկանշական է, որ երբ թուրքական իշխանությունները ձևոք գցեցին Քյոռ Հյուսեինի նամակներից մեկը և ցանկանում էին ձերբակալել նրան, վերջինս գործադրեց ամեն ջանք,

---

59 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊՄ, ֆ. 2000, գ. 7692, թ. 6:

60 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 196, 215, ֆ. 71, գ. 39, թ. 38, «Մշակ», 1910, № 98, մայիսի 9:

61 ՍՍՀՄ ԿՊՊՄ, ֆ. 2000, գ. 7716, թ. 266:

անդամ վկայակոչեց իր լիակատար անդրադիտությունը և «ապացուցեց», թե նամակի հեղինակը ինքը չէ[62]։

Շարունակելով իր երկդիմի քաղաքականությունը, փաշան մի կողմից ակտիվ մասնակցում էր Թուրքական կառավարության դեմ ապըստամբություն նախապատրաստող խորհրդակցություններին[63], իսկ մյուս կողմից մտերմական հարաբերություններ էր զարգացնում կուսակալների ու իթթիհատական այլ պաշտոնյաների հետ։ Եվ երբ տեղի ունեցավ Բիթլիսի ապստամբությունը, որը ավարտվեց պարտությամբ, 1914 թ. մարտին նամակ ուղարկեց Վանի կուսակալ Թահսիմ բեյին, ուր «իր նվիրվածությունն էր հայտնում Թուրքական կառավարությանը ու նզովում Բիթլիսի ապստամբներին, անվանելով նրանց դավաճաններ»[64]։ Իսկ նույն թվականի ապրիլին, կապ պահպանելով ապստամբության ղեկավարների հետ, կարևորում էր նրանց անհաջողության համար[65]։

Ի վերջո 1914 թ. հունիսին, երկյուղ կրելով, թե երիտթուրքերը կարող են ձերբակալել իրեն, Քյոռ Հյուսեինը դիմեց Վանի փոխհյուպատոս Ակիմովիչին, խնդրելով՝ միջնորդել ռուսական կառավարությանը, որ թույլատրի իրեն անցնել Պարսկաստան կամ Ռուսաստան՝ ցարի հավատարմության տակ։ Ակիմովիչն ընդառաջեց նրան[66]։ Մեր նպատակից դուրս է Հյուսեին փաշայի հետագա գործունեության լուսաբանումը։ Նշենք միայն, որ նա սպանվեց 1929 թ. Սիրիայի սահմանի վրա Մուսա և Կասըմ բեյերի հարազատներից մեկի՝ Նըհոյի ձեռքով։

Հայտնի Ուբեյդ-Ուլլայի թոռ, Մեհմեդ Սըդըքի որդի 22-ամյա շեյխ Թահան 1908 թ. հետո ներքաշվելով քաղաքական շարժման մեջ, պաշտպանեց ինքնավար Քրդստանի գաղափարը։ 1912 թ. նոյեմբերին Օլֆերևի հետ զրուցելիս նա հայտարարեց. «Հասել է ժամանակը, երբ քրդերը նույնպես պարտավոր են մտածել իրենց մասին։ Նրանք այլևս չպետք է մնան Թուրքական լծի տակ և պետք է ազատման նպատակ դառնան ու այնուհետև լինեն ռուսական ցարին հավատարիմ ծառա»[67]։ Բայց Թահան, պայմանների բերումով, զբաղվեց ավելի շատ անձնական, քան քաղաքական խնդիրներով։ Հորեղբայրը՝ Աբդուլ Կադերը վերադառնալով

---

62 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 269։

63 Տե՛ս նույն տեղում, թ. 341։

64 Նույն տեղում, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1912, գ. 1606, թ. 15։

65 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 719, թ. 388։

66 Տե՛ս նույն տեղում, թ. 402։

67 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», ց. 482, գ. 719, թ. 243 բ։

աբսորից, պահանջից երիտասարդ շեյխից բաժին հանել իրեն հայրենական կալվածքից։ Թահան մերժեց, որի հետևանքով հարաբատների միջև 1911 թ. օգոստոսին առաջացավ զինված ընդհարում։ «Մշակը» գրում էր, որ Շամդինանում «պատերազմական դրություն է շեյխ Ուբեյդուլլայի որդի Աբդուլ Կադերի և նրա եղբորորդի Սահիդ Թահայի միջև. սրանք իրար դեմ հարյուրավոր զինված քրդեր են ճակատեցրած ու կռվում են մի ինչ-որ ընտանեկան վեճի կամ ազդեցության ու ժառանգության բաժանման համար. մինչ ցայդ սպանվել են 30-ից ավելի բյուրդեր ու դրանից էլ ավելի վիրավորվել»[68]։ Կառավարության միջամտությամբ ընդհարումն առժամանակ դադարեց։ Աբդուլ Կադերը Անդրկովկասի վրայով մեկնեց Կ. Պոլիս։ Սակայն 1912 թ. գարնանը կռիվը վերսկսվեց շեյխ Թահայի ու Աբդուլ Կադերի որդու միջև։ Երկու կողմերից ընկան յոթը հոգի։ Վախենալով, թե ազգականների միջև ծագած ընդհարումը կարող է վերածվել համաքրդական շարժման, կուսակալը հակառակորդներին բերից վան, բայց չհամարձակվելով դատել նրանց, ուղարկեց մայրաքաղաք։ Աբդուլ Կադերը, օգտագործելով իր դիրքը, ազատեց որդուն, իսկ Թահան փախավ և Անդրկովկասով անցավ Պարսկաստան։ Այնուհետև թուրքական կառավարությունը բազմիցս առաջարկեց Թահային վերադառնալ Թուրքիա, բայց նա, վախենալով հորեղբոր վրիժառությունից և երիտթուրքերի հալածանքներից՝ հրաժարվեց։

Սուլթանն անձամբ պահանջեց որ նա վերադառնա Շամդինան, իսկ իթթիհատի կառավարությունը հատուկ պատգամավորություն ուղարկեց, որ համոզելով նա բերին նրան։ Պատգամավորությունը նույնիսկ խոստացավ, որ այսուհետև կառավարությունը արգելք չի դնի շեյխի ծխախոտի արտահանմանը, որից նա տարեկան ստանում էր 5000—6000 լիրայի եկամուտ։ Բայց Թահան մնաց անդրդվելի։ Այն ժամանակ թուրքական կառավարությունը դիմեց այլ միջոցի. պատճառաբանելով, որ շեյխ Թահան տարիներ շարունակ չի վճարել պետության տուրքը, 1913 թ. նոյեմբերի 20-ին վանի կուսակալ Թահսիմ բեյի միջոցով ավերեց նրա կալվածքը, թալանեց ունեցվածքը և գերեց 14-ամյա եղբորը։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին շեյխ Թահան նույնպես պրսևորից երկդիմի վարքագիծ, թեքվելով մերթ դեպի Ռուսաստան, մերթ Թուրքիա։ Եվ նրբ 1914 թ. աշնանը Թուրքիան մտավ պատերազմի մեջ, նա անցավ Թուրքիայի կողմը։ Շուտով Թահան գերի ընկավ և ցարական իշխանությունների կողմից ուղարկվեց Ռանենբուրգ (այժմ՝ Զապլիդին)։

[68] «Մշակ», 1911, № 235, հոկտեմբերի 14։

Սակայն դերությունից փախած և դերմանական փողերով ստեղծելով քրդական զորամասեր, պայքարից Ռուսաստանի դեմ[69]։

Տխրահռչակ Մուսա բեյը 1908 թ. հեղափոխությունից հետո վերադառնալով Տրիպոլիսի բանտից, ուր փակված էր Տարոնի դյուզացիության համառ պահանջով, նոր եռանդով շարունակեց իր ոճրագործությունները։ Նա սկսեց շրջել Տարոնի դյուղերը և տանել հակաահմանադրական պրոպագանդա, քրդաբնակ մի շարք դյուղերում կազմակերպեց կոմիտեներ և կոչ արեց՝ պայքարել հանուն սուլթանական միապետության վերականգնման։ Մուսա բեյը ուղղակի սարսափում էր ժողովրդից և սահմանադրությունը համարելով ժողովրդի կամքի արտահայտություն, ձգտում էր ոչնչացնել այն։ Բիթլիսի կուսակալ Բահիր փաշայի առաջարկությանը, թև պետք է վերջ տալ այդ ամենին և խաղաղ ապրել, Մուսա բեյը պատասխանեց, որ «ինքը չի ցանկանում ներկա ազատությունը՝ հուրիները, այլ ուզում է կառավարում՝ ըստ շարիաթի»[70]։ *Մուսա բեյի եղբայր Կնասրմ բեյը հեղափոխությունից առաջ ազատ էր։ Չհացնելով իրեն հայդուկների բարեկամ, իրականում ահաբեկում էր նրանց և մատնում կառավարությանը։ Արժանանալով համիդյան իշխանությունների վրատահությանը և հովանավորությանը, նա վայրագ բռնություններ էր ենթարկում իր հպատակության տակ ընկած հայերին և քրդերին։ 1908 թ. հետո ժողովրդական զանգվածների համառ պահանջով երիտթուրքերը այս կեղեքիչին ու մարդասպանին նույնպես ձերբակալեցին, սակայն նույն թվականի հոկտեմբերին ազատեցին բանտից*[71]։ *Ընկերակցելով իր եղբորը, Կասրմ բեյը շրջում էր դյուղերը և նույնպես պահանջում շարիաթի վերականգնում, սպառնալով, թև հակառակ դեպքում «պիտի ջարդեն հայերը»*[72]։ *Իրենց քաղաքական պրոպագանդային զուգընթաց նրանք շարունակում էին ավազակությունը, մարդասպանությունն ու կողոպուտը և այնպիսի սարսափ էին տարածել Մուշի դաշտում, որ «Բյուզանդիոնի» խոսքերով՝ «մյուղիրներն իսկ կդողան»*[73]։ *Չբավարարվելով Մուշի դաշտով, Մուսա և Կասրմ բեյերը անցնում են Բուլանըխ և շարունակելով իրենց ոճակցիոն ու ավազակային գործունեությունը, մշակում են հայկական ջարդերի պլաններ։ 1910 թ. փետրվարին «Մշակը» գրում էր,*

---

69 *Տե՛ս Մ. Ս. Լազարև, նշված աշխ., էջ 331։*

70 *ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1910, ց. 482, գ. 544, թ. 55։*

71 *Տե՛ս նույն տեղում, 1908, ց. 482, գ. 542, թ. 66։*

72 *«Բյուզանդիոն», 1909, № 3824, մայիսի 11։*

73 *«Բյուզանդիոն», 1912, № 4700, ապրիլի 12։*

որ Մուշի ու Բուլանըխի շրջաններում վերջերս «հակասահմանադրական ժողովներ են տեղի ունենում՝ ծրագրելու համար այն միջոցները, որոնցով կարելի լիներ վերականգնել հին ռեժիմը, նախկին սուլթան Համիդին նորից գահ բարձրացնել և հայկական համատարած ջարդեր կազմակերպել։ Այս ռեակցիոն շարժման պարագլուխ.... համարվում են Մուսա բեյն ու Թևլի շեյխը, որոնք, Մուշի շրջանի գյուղերը շրջելով, դրգռում են տեղական իսլամ տարրին քրիստոնյաների և առհասարակ նոր ռեժիմի դեմ»[74]։ Նույնն էր հաստատում նաև Վ. Շիրկովը 1910 թ. մարտի 6-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանին հղած իր զեկուցագրում[75]։ Երիտթուրքական իշխանությունները 1912 թ. ձերբակալեցին երկու եղբայրներին, բայց շուտով, ինչպես ասվեց, ազատեցին և նույնիսկ պաշտոն տվեցին, նշանակելով Մուսա բեյին սահմանը հսկող, իսկ Կասըմ բեյին՝ կայմակամ[76]։ Չնայած դրան, նրանք շարունակեցին պայքարը սուլթանության վերականգնման համար։ 1914 թ. մասնակցեցին Բիթլիսի ապստամբությանը, փակելով «Մուշից օգնության հասնող զորքերի առջև Չխուրի անցքը»[77], իսկ ապստամբության պարտությունից հետո հատուցումից խուսափելու համար թաքնվեցին։ 1915 թ. օգտվելով իրենց համար ըստ ուղծված բարենպաստ վիճակից, նրանք նորից հայտնվեցին Տարոնում և ծառայելով երիտթուրքերին, ակտիվորեն մասնակցեցին հայկական ցեղասպանությանը, Մուշի դաշտում բնաջնջելով բազմաթիվ հայկական գյուղեր[78]։ Մեզ անհայտ է Կասըմի հետագա գործունեությունը, իսկ Մուսա բեյը Քեմալի հեղափոխության տարիներին փախավ Հալեպ, ապա փորձեց վերադառնալ Թուրքիա ու մասնակցել քրդական նոր շարժումներին, բայց ճանապարհին հիվանդացավ և մեռավ Ջեզիրեում 1929 թ.[79]։

Քրդական աղայական շարժման ակտիվ գործիչներից էին նաև Սղնախայի սանջակի Ղուզիջան գավառի ցեղապետ Հայդար բեկը, Դերսիմի ցեղապետ Հայդար աղան և ուրիշներ։ 1908 թ. հեղաշրջումից հետո նրանք հակասահմանադրական ակտիվ գործունեություն ծավալեցին։ Առաջինը ցույցումներ ստանալով Քյոռ Հյուսեյինից, Բարձր Հայքում և Վասպուրականի որոշ շրջաններում իր արբանյակների հետ միասին

---

[74] «Մշակ», 1910, № 43, փետրվարի 25։

[75] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխով», գ. 544, քք. 31—32։

[76] Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4904, դեկտեմբերի 11։

[77] «Վան-Տոսպ», 1914, № 19, էջ 222—223։

[78] Տե՛ս. Анри Барби, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919, стр. 50—51.

[79] Տե՛ս Բենան, Մշո աշխարհ, էջ 183 (ձեռագիր)։

պրոպագանդում էր հին ռեժիմի վերականգնում, հայերի բնաջնջում և երիտթուրքական իշխանությունների տապալում։ «Բյուզանդիոնը» գրում էր, թե նրանց նպատակն է «համաքրդական դաշնակցություն մը կազմելով՝ աշխատիլ բռնապետությունը և Համիդը իրենց վաղեմի դիրքին մեջ դնել և ջարդել հայերն և երիտասարդ Թուրքերը»[80]։ Իսկ երկրորդը լիցքավորվելով Սևիդ Ալիի պրոպագանդայով՝ շրջում էր Արևմտյան Հայաստանում ու Քրդստանում և բացեիբաց հայտարարում. «Է՛յ, քուրդե՛ր, աչքերնիդ բացեք, կառավարությունը մեզ անոթի մեռցնել կաշխատի, մեր սեփական հողերը, մեր հարստությունը ձեռքերնուս առնելով, հայոց պիտի տա, այսպես քյուրդ անունը պիտի չնչի, Տերսիմի մեջ ճամբաներ շինելով ու զորանոցներ հաստատելով, հոն տեղի ամբողջ քուրդերը պիտի աքսորե։ Ժամանակն է կռվելու, եթե ոչ վաղը կհավուրնեին ալ զորք առածին պես քուրդ ցեղն անճիտելու պիտի կլլե»[81]։

* * *

Քրդական աղաները իրենց դործունեության համար օգտագործում էին ինչպես լեզալ, այնպես էլ անլիգալ հնարավորությունները։ Դեռ հեղափոխությունից անմիջապես հետո, արձագանքելով «Միության և առաջադիմության» կուսակցության կոչին, նրանք անդամագրվեցին երիտթուրքական ակումբներին։ Արդեն 1908 թ. դեկտեմբերին այդ ակումբներում հաշվվում էին շուրջ 650 քրդեր, իսկ 1909 թ. մարտի 1-ին՝ ավելի շատ[82]։ Բիթլիսի ռուսական հյուպատոս Ակիմովիչը գրում էր, որ ակումբների բոլոր անդամները «հարուստ քրդերն են ու հայտնի քուրդ ավազակները»[83]։ Շուտով ակումբի անդամներն ընտրեցին իրենց խորհուրդը, որը ներկայացուցիչներ ուղարկեց Մուշ, Սղերդ, Խիզան և այլ տեղեր, հանձնարարելով նրանց՝ հավաքագրել նոր անդամներ և յուրաքանչյուր տասը հոգուն նշանակել մեկ դեկավար[84]։ Աղաներն ու շեյխերը կապմակերպվելով, ցանկանում էին հարմար ատիթի դեպքում դուրս գալ իթթիհատի դեմ։ Ակիմովիչը հաղորդում էր, որ քրդական ակումբը հանդիսանում է «հակահեղափոխական օջախ»[85]։ Կռահելով այդ, երիտթուրքերը 1909 թ. մայիսին փակեցին քրդական ակումբը, իսկ անդամներին առա-

80 «Բյուզանդիոն», 1910, № 4082, մարտի 28։

81 Նույն տեղում։

82 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 7։

83 Նույն տեղում, ց. 482, գ. 542, թ. 71—72։

84 Տե՛ս նույն տեղում, ց. 482, գ. 543, թ. 7։

85 Տե՛ս նույն տեղում։

ջարկեցին՝ մտնել «Միության և առաջադիմության» կուսակցության թուրքական ակումբի մեջ[86]։ Քուրդ աղաներն ու շեյխերը ընդունեցին նրանց առաջարկությունը և կուսակալի հակողությունից խուսափելու համար իրենց կնեղարտնը Բիթլիսից տեղափոխեցին Մուշ։ Այնուհետև հրահանգ ուղարկեցին Էրզրումի, Դիարբեքիրի և Վանի վիլայեթների քրդական վերնաշերտերին՝ «պայքարել սահմանադրության դեմ»[87]։ Վ. Շիրկովի հավաստիացումով, թուրքական ակումբներում անդամագրված քուրդ աղաներն ու նրանց արբանյակները երազում էին վերականգնել հին ռեժիմը, որի ժամանակ գործում էին ազատ ու սանձարձակ[88]։

Աղաներն ու շեյխերը Տիգրանակերտի, Սլիվանի ու Բշնիրիկի գավառներում ստեղծեցին ակումբներ և անվանելով դրանք «Համիդ», նույնպես հանդես էին գալիս «սահմանադրության դեմ, ընդունելով զայն ֆրանմասոններու գործ և ուղղված իսլամ կրոնքի դեմ»[89]։

Քրդական ֆեոդալական վերնախավը հավաքվում էր խորհրդակցությունների և մշակում թուրքական կառավարության դեմ ապստամբելու և հայերին բնաջնջելու պլաններ։ 1909 թ. ապրիլին «Բյուզանդիոնը» գրում էր. «Սղերդի սահմաններին սկսյալ մինչև Խիզան, Կեցան, Կարճկան, Գավաշ գտնված ամբողջ քյուրդերուն մեջ զինակցական խուլ պատրաստություն մը կտեսնվի։ Նույնիսկ Խիզանի շեյխ Սեիդ Ալիի նախագահության ներքև մեծ Քոմիթեի մը հաստատված է, որուն մասնավոր բաժանորդագրությամբ կանդամակցին շատ մը քյուրտեր։ Ոմանց կարծիքն է, թե ընդհանուր քրդական ապստամբություն կսարքվի տերության դեմ, ըսողներ ալ կան, թե քրիստոններից մեջ ջարդեր առաջ բերելու նպատակ ունին հարմար առիթը նղած ատեն»[90]։

Հակահայկական կրքերը բորբոքելու նպատակով աղաներն ու շեյխերը պրոպագանդում էին բնակչության մեջ, թե սահմանադրությունը հայերն են բերել, նպատակ ունենալով ոտնատակ անել շարիաթը և դառնալ մահմեդականներին հավասար քաղաքացիներ։ Նրանք գրգռում էին իրենց հավատակիցներին, թե չի կարելի հանդուրժել, որ երեկվա ռայաները այսօր մահմեդականներին հավասար համարվին[91]։ Եվ մահմեդական խավարամիտ զանգվածները, հավատալով իրենց աղաներին ու շեյ-

---

[86] Տե՛ս նույն տեղում, թ. 16։

[87] ՍՍՀՄ ԿՊՄԱ, ֆ. 2000, գ. 6948, թ. 215։

[88] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 29։

[89] «Բյուզանդիոն», 1910, № 4056, փետրվարի 24։

[90] «Բյուզանդիոն», 1909, № 3798, ապրիլի 16։

[91] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1908, ց. 482, գ. 542, թ. 58։

խնդրին, շատ հաճախ դառնում էին նրանց ձեռքին կույր գործիք ընդդեմ հայերի։ «Բյուզանդիոնը» գրում էր, որ իսլամական ամբոխները «միանգամայն կույր հետևողությամբ հավատացած են, թե... սահմանադրության պատճառը հայերն եղած են... անոնք ամեն ազգերն ավելի մասնավորապես հայ ազգին դեմ ոխակալ են ու պղտիկ պատեհություն մը կսպասեն ամեն օր իրենց ոխն անոնցմեն առնելու համար»[92]։ Երկրի մի շարք քաղաքներում ու գյուղերում մահմեդականները թույլ չէին տալիս հայերին նշելու սահմանադրության տարեդարձը, նրանց քարկոծելով տուն էին քշում փողոցներից, հեռագրեր էին հղում մայրաքաղաք և պահանջում շարիաթի վերականգնում, փորձում էին վռնդել երիտթուրքական պաշտոնյաներին և վերսկսել հայկական կոտորածները[93]։

Քուրդ ազանների ու շեյխերի շարժումը նոր ուժով ծավալվեց 1912 թ. աշնանից, երբ միջազգային դիվանագիտությունը վերստին հրապարակ բերեց հայկական հարցը։ Դեկտեմբերի սկզբներին Էրզրումում Դերսիմի նշանավոր տիրապետներից մեկի՝ Աղա էֆենդիի տանը նրանք հավաքվեցին խորհրդակցության և մշակեցին ապստամբության պլանը։ Խորհրդակցության որոշումով հատուկ գործակալներ մեկնեցին Էրզրումի, Վանի, Բայազետի և Դերսիմի քրդաբնակ շրջանները և ապստամբության կոչ արեցին։ 1912 թ. դեկտեմբերի 28-ին Շտրիտտերը հաղորդում էր. «Ապստամբության նախապատրաստական աշխատանքները ամբողջ թափով առաջ են ընթանում։ Վերոհիշյալ Աղա էֆենդին իր որդուց արդեն տեղեկություն է ստացել, որ Դերսիմի քրդերը պատրաստ են առաջին իսկ կոչից զենք վերցնել։ Բայազետի սանջակի Մանազկերտի օկրուգից նույնպես լուր է ստացվել, որ քրդական ազգային ազատության ու անկախության պաշտպանության համար հաջողությամբ կատարվում է կամավորների հավաքագրում։ Միայն Խասմիկ ոչ մեծ գյուղում ցուցակագրվել են 260 կամավորներ»[94]։ Աղաները զենք էին հայթայթում ու դինում ապստամբներին։ Ձևոք բերած դինամիտերքները նրանք ուղարկում էին Էրզրում, Բիթլիս, Վան և ամբարելով թաքստոցներում, սպասում համապատասխան հրահանգի[95]։

---

92 «Բյուզանդիոն», 1909, № 3848, հունիսի 9։

93 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 543, թ. 13, «Բյուզանդիոն», 1909, № 3921, սեպտեմբերի 16, «Մշակ», 1909, № 76, ապրիլի 15։

94 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, գ. 1648, թ. 50։ Տե՛ս նաև Ս. Պ. Աղայան, նշված աշխ., էջ 291։

95 Տե՛ս նույն տեղում, 1914, ց. 482, գ. 546, թ. 259—260։

1913 թ. օգոստոսի կեսերին Խոյում Աբդուր Ռեզաքը հրավիրեց ավելի ընդլայնված խորհրդակցություն, որին մասնակցեցին նաև Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Դիարբեքիրի ներկայացուցիչները։ Նրանք որոշեցին, որ առաջիկա ապստամբության ժամանակ Հայրիդդին բեյը պետք է ղեկավարի Բիթլիսի, Սիլոն, Միր Մհենն և Սիիդ բեյը՝ Վանի ու Վասպուրականի, Հասան, Ջաֆար և Սադրկ բեյերը՝ Պարսկաստանի սահմանամերձ շրջանների գործողությունները[96]։

1914 թ. հունվարի 26-ին հենց որ Թուրքական կառավարությունը ստորագրեց հայկական բարենորոգումների ծրագիրը, քուրդ աղաները դիմեցին ավելի վճռական քայլի։ Սիիդ Ալիի գործակալները, շրջելով քրդաբնակ գավառները, ապստամբության կոչ արեցին։ Նրանցից աչքի էր ընկնում հատկապես մոլլա Սելիմը, որը ամենուրեք քարոզում էր, որ կառավարությունը «Քուրդիստանը ծախել է պյավուրներին»[97]։ Շուտով խիղանի կայմակամը ձերբակալեց նրան՝ որպես հակակառավարական «շարժման պլխավոր ղեկավարի ու ներշնչողի»[98] և փետրվարի 20-ին ուղարկեց Բիթլիս։ Սակայն Սիիդ Ալին իր 700 ղոլամներով հարձակվեց Թուրքական ոստիկանների ու ժանդարմների վրա և ազատեց նրան։ Փետրվարի 26-ին Սիիդ Ալին պաշարեց Բիթլիսը, իսկ 29-ին ներխուժեց քաղաք և սպառնալով ու վիրավորելով կուսակալին, մարտի 1-ին հեռացավ այնտեղից։ Քաղաքի հայ բնակիչները այդ օրերին փակելով իրենց կրպակներն ու արհեստանոցները, ներքաշվեցին տները։ Նրանց երկյուղը ավելի մեծացավ, որովհետև շկյսի հետ ներխուժած խաժամուժը գոչում էր. «մենք պյավուրական ռեֆորմներ չենք ուզում»[99], կոտորածներով էր սպառնում, իսկ կուսակալը ոչ միայն պաշտպանության միջոցներ չէր ձեռնարկում, այլև կարգադրում էր հավաքել զենքերը։ Այդպիսի ճգնաժամային պահին հայերը դիմեցին վ. Շիրկովի օգնությանը, որը պատասխանից, թե ռուսական հյուպատոսության դռները բաց են նրանց առաջ[100]։

Մարտի 3-ից կառավարությունը Բիթլիսը հայտարարեց պաշարողական դրության մեջ և նրա պաշտպանության համար ուղարկեց 2 գումարտակ, 2 լեռնային թնդանոթ և այլ լրացուցիչ ուժեր։ Մարտի 7-ին և

---

[96] Տե՛ս «Մշակ», 1913, № 184, օգոստոսի 22։

[97] ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», ց. 482, գ. 546, թ. 280, «Մշակ», 1914, № 75։

[98] «Մշակ», 1914, № 75, ապրիլի 11։

[99] Նույն տեղում։

[100] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», ց. 482, գ. 546, թ. 281։

13-ին Վանից ուղարկեց ևս 4 հրանոթ, 4 գնդացիր, 2 գումարտակ, 1 վաշտ ժանդարմ, Մուշից՝ 180 հետիոտն զինվոր, 2 լեռնային հրանոթ, 50 հրաձիգ, իսկ Բայազետից, Ալաշկերտից ու Կարաբլիսանից՝ 2 հետիոտն գումարտակ և 1 հեծյալ էսկադրոն[101]։ Այդ բոլորի դիմաց Սեիդ Ալին դուրս բերեց 8000 մարդ[102]։ Պետք է նշել, որ կառավարական ուժերի զգալի մասը ֆիզիկապես ու հոգեպես կազմալուծված էր. զինվորներից ոմանք հիվանդացել էին տիֆով, մյուսները, լսելով, որ պետք է կռվեն քրդերի դեմ, հայտարարեցին, որ «չեն կրակի իրենց եղբայրների վրա»[103], իսկ Խրգանի կայմակամն ու մյուդիրը վախենալով քրդերի վրիժառությունից, փախան Բիթլիսից։ Ռազմական գործողություններին ավելի վճռական նշանակություն տալու նպատակով կառավարությունն այս օրերին պաշտոնապրկեց Բիթլիսի կուսակալին և կանչելով Պոլիս, նրա պարտականություններն առժամանակ դրեց Սղերդի սանջակի մութասարիֆի վրա։ Մարտի կեսերին հրաման տրվեց՝ շարժվել դեպի Կումաշ, ուր ճամբար էր դրել Սեիդ Ալին։ Սակայն զինվորները հրաժարվեցին հրամանի կատարումից։ Կոտրելով զինվորների դիմադրությունը, թուրքական հրամանատարությունը մարտի 19-ին Կումաշ ուղարկեց 400 զինվոր երկու լեռնային հրանոթներով, բայց Սեիդ Ալին չախչախելով նրանց, ետ շպրտեց. և մարտի 20-ին մտավ Բիթլիս։

Սպասելով կոտորածներ, հայերը պատրաստվեցին դիմադրության, իսկ 360 հոգի պատսպարվեցին ռուսական հյուպատոսարանում։ Սակայն Սեիդ Ալին, ենթադրելով, որ հակառակորդը իր դեմ կուղարկի նոր ուժեր, հենց նույն օրը դուրս հկավ քաղաքից, թողնելով իր զինվորներից 130 սպանված ու վիրավոր։ Թուրքական հրամանատարությունը ամբակոծելով ս. Գևորգ եկեղեցին, ուր կենտրոնացել էին քրդերը, քանդեց նրա կեսը։ Հրամանատարությունը որոշել էր, որ նրն քրդերը շարունակեին մնալ Բիթլիսում, պայթեցնել զինապահեստը, իսկ այնուհետև ամբակոծելով ավերել քաղաքը, հաշվի չառնելով, որ դրանից կբնաջնջվեր նաև խաղաղ բնակչությունը[104]։

Կառավարությունը մարտի 22—23-ին վանից ու Մուշից Բիթլիս տեղափոխեց նոր ուժեր և նրանց հրամանատար նշանակելով Իհսան փաշային, կարգադրեց շարժվել դեպի Խրգան։ Նրա հետևից իբրև

---

101 Տե՛ս նույն տեղում, ց. 283, գ. 719, թ. 383։

102 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 480։

103 ՌՍՔԱ, ֆ. «Քաղարխիվ», ց. 482, գ. 546, թ. 281։

104 Նույն տեղում, թ. 305։

օժանդակության մի քանի հարյուր լիրանոցով խիզան ուղարկեց նաև Իբրահիմ բեյին։ Ապրիլի 1-ին Իհսան փաշան, գերելով Սեիդ Ալիին, վերադարձավ Բիթլիս, իսկ Խիզանում Յողից մի քանի չոկաաններ՝ ապըստամբներին որսալու և պատժելու համար։ Շուտով այդ չոկաանները գրաված Դիադինում թաքնված շեյխ Շահաբեդդինին և մի շարք ապստամբների պարապլուխների հետ միասին բերեցին Բիթլիս։ Ինչ վերաբերում է մոլլա Սելիմին, ապա նա, կանխազուշակելով ապստամբության պարտությունը, դեռ մարտի 20-ին ապաստան խնդրեց վ. Շիրկովից և թաքնվեց ռուսական հյուպատոսարանում։

Ապրիլի 17—18-ին թուրքական իշխանությունները ձերբակալվածներից 44-ին ազատ արձակեցին իբրև անմեղների, 45-ին տարբեր ժամանակներով քշեցին Տրապիզոնի ու Սինոպի բանտերը, իսկ 14-ին մահվան դատապարտեցին։ Այդ վճիռը նրանք ի կատար ածեցին ապրիլի 23-ին և 26-ին[105]։ Սեիդ Ալիին, նրա եղբայր շեյխ Մհմմեդ Շիրինին, շեյխ Շահաբեդդինին, Ֆակի Խալիլին, մոլլա Ջիդին, մոլլա Մախերդինին, Ալի աղային, Խուրշուդին, Մեջիդ Խարջանլիին, շեյխ Հայրոյին և Մհմմեդ Կիրկիլիին գնդակահարեցին, իսկ Սուլեյման աղային, Սելիմ Ֆակիհին և Հաջի Մերխանին կախաղան բարձրացրին, պահելով ի ցույց ամենքին Բիթլիսի հրապարակում մի ամբողջ օր[106]։

Բիթլիսի ապստամբությունը որոշ արձագանք գտավ Մամուռանքում, Կարկառում, Գավաշում, Բերվարում, Մանազկերտում, Խնուսում, Բուլանըխում և քրդաբնակ այլ վայրերում։ Բայց ամենուրեք ճնշվեց։

Այդ ապստամբությունն ուղղված էր Թուրքական կառավարության դեմ[107]։ Բայց այն ուղղված էր նաև հայկական բարենորոգումների դեմ[108]։

Բիթլիսի ապստամբության ղեկավարները քուրդ աղաներն էին, որոնք պայքարում էին իրենց դասակարգային դիրքերի ապահովության ու ամրապնդման համար։ Նրանք չէին ձգտում իրականացնել դեմոկրատական միջոցառումներ։ Այդ պատճառով էլ պաշտպանություն չգտան ժողովրդական լայն զանգվածների կողմից։

Բիթլիսի ապստամբության պարտությունից հետո քուրդ աղաների մի մասը, երկյուղ կրելով կառավարության հետապնդումներից, ցրվեց Արևմտյան Հայաստանի ու Քրդստանի տարբեր շրջաններում։ Այդպես

---

105 *Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 719, թ. 389, գ. 546, թ. 322։*

106 *Տե՛ս նույն տեղում, թ. 321—322։*

107 *Տե՛ս «Դրոշակ», 1914, № 4, էջ 53։*

108 *Տե՛ս «Արարատ», 1914, մայիս, էջ 408։*

վաբվեցին, օրինակ, Քյոռ Հյուսին փաշան, Օսման աղան, Մալա Մահ-մադ բեկը և ուրիշներ[109]։ Աղաների մի մասն էլ անցավ Պարսկաստան։ «Վան-Տոսպը» գրում էր. «Կը տեղեկանանք, թե Ասպաղայի քյուրտ պե-յերեն՝ Մուստաֆա պեյը և որդիներ Յուսուֆ և Սալիհ պեյերը, Իբրահիմ պեյը, Յուսուֆ Ապտուլ աղան և յուր եղբայր Մահմեդ աղան, գեղանի Սալիհ աղան և յուր հորեղբոր որդի Ահմետ աղան, Ասմանցի ցեղեն Ջնդի աղան, իրենց ծառաներով միասին հունիսի 22-ին մեկնած են դե-պի Պարսկաստան»[110]։

Իսկ մի մասն էլ, մնալով Արևմտյան Հայաստանում, փորձում էր նախապատրաստել նոր ապստամբություն։ 1914 թ. հունիսի 12-ին հայ-դարանցի աղաներից մեկը՝ Ագջկալի շեյխ Աբդուլ Ազիզը, իմանալով, որ վ. Շիրկովը հրաժարվել է մոլլա Սելիմին հանձնել թուրքական իշ-խանություններին և համարելով հյուպատոսի այդ քայլը Ռուսաստանի համակրանքը քրդերի նկատմամբ, այցելեց Էրզրումի ռուսական գլխա-վոր հյուպատոսին և խնդրեց, որ Ռուսաստանը պաշտպանի քրդերի ապստամբությունը թուրքական կառավարության դեմ և այնուհետև Քուր-դստանը վերցնի իր հովանավորության տակ։ Նա հայտարարեց, որ մոլ-լա Սելիմը, որին ինքը համարում է «քրդերի փաթիշահը», հանձնարարել է իրեն շրջել քրդաբնակ շրջանները և նախապատրաստել ցեղապետնե-րին, որ աշնանը ապստամբվեն։ Նրա կարծիքով, այդ ապստամբությունը պաշտպանություն կգտնի նաև թուրքերի կողմից, քանզի երիտթուրքերը երկրում մոցնում են նրանց կրոնական ղեգամունքները ոտնահարող և ղուրանի դոգմանները մերժող նորմեր, որ էրզրումից ինքը մեկնելու է Նարիման, ուր հանդիպելու է Քյոռ Հյուսեին փաշային և նրանից ստանա-լու է ավելի կոնկրետ ցուցումներ։ Աբդուլ Ազիզը այնուհետև ասաց, թե իբր հայերը նույնպես կմիանան իրենց ապստամբությանը, եթե այն ընդգրկի ամբողջ Քրդստանը և քրդական բոլոր ցեղերը։ Նա, վերջապես, խնդրեց, որ եթե Ռուսաստանը չի կարող օգնել ու օժանդակել քրդերի ապստամբությանը, թեկուզ թույլատրի իրեն իր 1000 տնտեսություններից բաղկացած ցեղակիցների հետ միասին արտագաղթել Անդրկովկաս։ Ռուսական գլխավոր հյուպատոսը առաջարկեց նրան դիմել Կ. Պոլսի ռուսական դեսպանին[111]։

Քուրդ աղաներից ոմանք էլ արդեն անցել էին պրակտիկ գործունեու-

---

109 Տե՛ս «Մշակ», 1914, № 129, հունիսի 15։

110 «Վան-Տոսպ», 1914, № 26, էջ 314։

111 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, դ. 2685, թ. 72—73։

թյան, ձեռնարկելով նորանոր ելույթներ իթթիհատական կառավարության դեմ։ Դրանցից էր Բշարե Ջաթոն, որը, վ. Շիրկովի 1914 թ. հուլիսի 4-ի հազորդման համաձայն, ծառանալով իշխանությունների դեմ, սպանել ու վիրավորել էր 16 զինվոր։ Թուրքական պաշտոնյաները նրա դեմ ուղարկեցին թարմ ուժեր, սակայն Ջաթոն ոչ միայն մնաց անորսալի, այլև դերելով ժանդարմական բինբաշի Քյազիմ է՝ննդուն, նրա երկու զապթիեների հետ միասին կախեց Սղերդում[112]։ Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում աղանների նախաձեռնությամբ 1914 թ. գարնանն ու ամռանը ստեղծվեցին հատուկ ջոկատներ, որոնք ահաբեկում էին Բիթլիսի ապստամբության ժամանակ կառավարությանը օժանդակած անձանց[113]։ Այսպիսի մթնոլորտում վրա հասավ առաջին աշխարհամարտը, և իթթիհատը քուրդ աղաներին ճարպկորեն շրջեց արևմտահայերի դեմ ու օգտագործեց նրանց իր հայաբնաջնջման ծրագրի իրականացման համար։

Աղաների պայքարը քրդական ինքնավարության կամ անկախության համար կարող էր նպաստել քրդերի համախմբմանն ու ազգային դիտակցության զարգացմանը։ Սակայն նրանց ղեկավարությամբ ու տիրապետությամբ ինքնավար Քրդստանի ստեղծման պլանը ուտոպիական էր ու ընդհանուր առմամբ հետադիմական, քանի որ այն պահպանում էր ֆեոդալական կարգերը, ուժեղացնում գյուղացիության միջնադարյան շահագործումը, մերժում ժողովուրդների համագործակցությունը, սրում էր հայ-քրդական հակասությունները, որովհետև ինքնավար Քրդստանի ստեղծումը նախատեսվում էր ոչ միայն քրդական, այլև հայկական հողերի վրա։ Քուրդ աղաները կատաղի պայքար էին տանում հայկական. բարենորոգումների դեմ և դրանց տապալմանն ու քրդական ինքնավարության կամ անկախության հաստատմանն ուղում էին հասնել անդամ հայերի ցեղասպանության գնով։

2. ՔՈՒՐԴ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Արևմտյան Հայաստանի քրդերի լիբերալ, ռեակցիոն-աղայական շարժումներից զատ տեղի էին ունենում նաև գյուղացիական ելույթներ, որոնք ուղղված էին թուրքական պետության և տեղական ֆեոդալական հարստահարումների դեմ։ Երկրի տարբեր շրջաններում այդ ելույթներն

112 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», ց. 482, գ. 546, թ. 341—342։

113 Տե՛ս նույն տեղում, գ. 719, թ. 408։

ընդդիմում էին գյուղացիական տարբեր զանգվածներ և արտահայտում տարբեր ուժով: Վասպուրականի Ինկիրի գյուղի բրդերը առհմանադրության հաշվման հենց առաջին օրը պահանջեցին իրենց հողերը: Սակայն ցեղապետ Հյուսին բեկը ոչ միայն չվերադարձրեց, այլև հանդգնության համար իր տիրույթներից վտարեց 25—30 ընտանիք:

Ավելի ակտիվ պայքար ծավալեցին շեմսկի բրդերը, որոնք իրենց հողերը նախ նվաճելու նպատակով հարձակվեցին Սատան աղայի վրա և ջարդեցին նրա ղուլամներին: Աղան, սակայն, ձնշեց շեմսկիների ելույթը և սպանեց երկուսին: Հեղափոխությունից անմիջապես հետո նման դեպքեր տեղի ունեցան նաև Կարճկանում, ուր բինկանցի բրդերը ծեծեցին Յաղուբ աղային և նրա մարդկանց[114]: 1910 թ. շեմսկի բրդերը նորից ոտքի կանգնեցին և սկսեցին վարել աղայի կողմից հափշտակված իրենց հողերը, որի հետևանքով տեղի ունեցավ լուրջ ընդհարում և սպանություն: Այդ նույն թվականին, երբ բակուրցիների ցեղապետ Հյուսեինի բեկը թափուռով իր վրա ձևակերպեց գյուղացիների հողերը և առաջարկեց նրանց աշխատել իր մոտ որպես մարաբաններ, բրդերը ըմբոստացան նրա դեմ և հրաժարվեցին վճարել «պեկի զուպարան և հազար ու մեկ տեսակ տուրքերը»[115]: Չհայրանալով գյուղացիների անհնազանդության վրա, բեկը վտարից նրանց իր կալվածքներից: Բրդերը դնացին Վան, բախեցին պաշտոնյանների դռները և պահանջեցին իրենց հողերը:

Ադիլջևազում քուրդ գյուղացիները դեռ 1908 թ. ծառացան Քյոռ Հյուսեինի փաշայի դեմ և պահանջեցին իրենց տարածությունները: Միջոցում ստանալով, նրանք ոտքի կան և 1911 թ. ներկայացուցիչներ ուղարկեցին մայրաքաղաք: Իմանալով այդ մասին, փաշան ինքն էլ Կ. Պոլիս ուղարկեց իր ներկայացուցիչներին, որոնց յուցում տվեց՝ պատմել իթթիհատի պարագլուխներին, թե «գյուղացիներն են, որ ոտնձգություն կընեն և իրեն վնաս կհասցնեն»[116]: Նեղբին գործերի մինիստրը հետաձգեց հարցի լուծումը: Բայց բրդերը շտկեցին և նորից բարձրացրին իրենց խնդիրը: Երբ երիտթուրքական պաշտոնյանները հայտարարեցին, որ նրանց հողային վեճը կլուծվի երկրում հողային հարցի ընդհանուր կարգավորման հետ միասին, նրանք պահանջեցին՝ վճռել այն հենց հիմա, առանց հետաձգելու: Սակայն իթթիհատական պաշտոնյանները կրկին անուշադրության մատնեցին նրանց պահանջը: 1913 թ. մայիսին բրդերը

114 Տե՛ս «Աշխատանք», 1913, № 12—108, էջ 2:

115 «Աղաւոամարտ», 1911, № 658, օգոստոսի 18:

116 «Բյուզանդիոն», 1911, № 4470, հուլիսի 10:

նորից ըմոստացան և ներկայացուցիչներ ուղարկեցին Վան։ Փաշան, սակայն, իմանալով այդ մասին, իր հրոսակների միջոցով ճանապարհին սպանեց նրանց և այդպիսով առժամանակ լուծեց իր դեմ ծավալված շարժումը։

Վանի սանջակի քրդերը հանդես էին գալիս նաև իրենց անձի ու գույքի պաշտպանության համար։ 1910 թ. սեպտեմբերին Կեճան գյուղի բնակիչները հակահարված հասցրին իրենց հոտերը թալանող հրոսակներին, գերեցին հինգին և սպանեցին երկուսին։ Սակայն ավազակների հետ կապված թուրքական պաշտոնյաները ձերբակալեցին նրանց իբրև մարդասպաններ[117]։ 1912 թ. նոյեմբերի 19-ին հրոսակների դեմ պայքարի դուրս եկան նաև Եկմալ գյուղի քրդերը, որոնք, ինչպես նշում էր «Աշխատանքի» թղթակիցը, «3—6 ժամ տևող կռվէ հետո հաջողեցան փախցնել ավազակները»[118]։ Երբեմն քրդերը, չկարողանալով սեփական ուժերով ապահովել իրենց ինքնապաշտպանությունը, դիմում էին թուրքական պետական մարմինների օգնությանը, սակայն դրանով ավելի էին վատացնում իրենց դրությունը։ 1911 թ. Դերջամենի ռեսը Օլֆերևի հետ զրուցելիս ասաց. «Քուրդ ավազակների և թուրք ասկարների միջև տարբերություն չկա»[119]։

«Ազատամարտը» խոսելով Վասպուրականի քրդական շարժումների մասին և բերելով կոնկրետ փաստեր, եզրափակում էր. «Այդպիսի երևույթներ մեկով-երկուքով չեն, որ Վասպուրականի մեջ երևան կուգան, տասնյակներով, հարյուրներով կը համրվին»[120]։

Բացի Վասպուրականից, քրդական գյուղացիական շարժման կարևոր օջախ էր նաև Տարոնը, մասնավորապես Մուշի գավառը։ Քրդերը ծաուացան այստեղ Մուսա բեյի դեմ, որը 1908 թ. վերադառնալով աքսորից, սկսեց բռնագրավել գյուղացիների հողերը և թալանել նրանց ունեցվածքը։ Ակտիվ դիմադրությամբ աչքի ընկան հատկապես Չխուրի քուրդ բնակիչները, որոնք, օգնություն ստանալով իրենց հարևաններից, 1912 թ. փետրվարին չախչախեցին Մուսա բեյի ավազակային հորդաներին և ներկայացուցիչներ ուղարկելով Մուշ, բողոքեցին նրա թալանչիական գործունեության դեմ[121]։ Քղվի Հազստան գյուղի քրդերը 1909 թ.

117 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4261, հոկտեմբերի 31։

118 «Աշխատանք», 1912, № 6—102, էջ 7։

119 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 719, թ. 118։

120 «Ազատամարտ», 1911, № 658, օգոստոսի 18։

121 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, № 4716, մայիսի 1։

ամռանը երկու օր շարունակ դիմադրավիճին Հայդար բեյին, որը պաշարելով գյուղը, հարկ էր պահանջում։ Չկարողանալով սեփական ուժերով հնազանդել չարիքը, նրանք դիմեցին թուրքական պաշտոնյաներին, սակայն արդյունքի չհասան։ Հայդար բեյի հրոսակները փորձեցին ներխուժել նաև քրդական Ցեմ գյուղը, բայց ստանալով հակահարված, նա շպրտվեցին[122]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին քրդական գյուղացիական շարժումներ ծավալվեցին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում։ Դոկտոր Ն. Տաղավարյանը, 1911 թ. շրջագայելով կայսրության արևելյան վիլայեթներում, գրում էր. «Այս տարի Արևելյան Անատոլիի մեջ ըրած ճանապարհորդութիւնս առթիվ շատ տեղերու խնդճ գյուղացի քուրդ ժողովուրդն ինձ դիմելով իրենց հողերի գրավումը պատմեց... և անոր դարման մը ձեռք բերելու աշխատիլս հայցեց»[123]։ Իրենց կենսական խնդիրների լուծման համար քուրդ գյուղացիները դիմում էին նաև Տարոնի հայ հոգևոր առաջնորդին, խնդրելով՝ ահազանգել մայրաքաղաք և հայցել օգնություն[124]։ Բայց նրա միջամտությունը նույնպես չէր օգնում գործին։

Արևմտյան Հայաստանի քրդերը ծառանում էին նաև թուրքական կառավարության հարստահարումների ու ճնշումների դեմ։ Նրանց հակակառավարական շարժումները հաճախ ընդունում էին սուր բնույթ և ավարտվում պաշտոնյաների ծեծով ու սպանությամբ։ Այսպես, Բարվարի գավառում խասխերի կայմակամը 1913 թ. փետրվարի 4-ին, երբ մեկնեց քրդական Խնուկ գյուղը հարկ հավաքելու, բնակիչները «բռնելով գայմագամը իր ոստիկաններու հետ աղեկ մը կը ծեծեն»[125]։ Այդ նույն թվականին նման մի դեպք էլ տեղի ունեցավ Բերկրի գավառի Պընչական գյուղում, ուր քրդերը ծեծեցին ոչխարների գլխաքանակը գրի առնող պաշտոնյային և նրան ուղեկցող անձանց։ Երբ ոստիկանները ձերբակալեցին կազմակերպիչներին ու տարան բանտ, բնակիչները հարձակվեցին նրանց վրա և ազատեցին իրենց համադյուղացիներին[126]։

---

122 *Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 21, հուլիսի 16։*

123 *«Ռահվիրա», 1912, № 4, փետրվարի 9։*

124 *1913 թ. «Բյուզանդիոնը» հաղորդում էր. «Մշո Դըվնիկ գյուղացի քյուրտերն առանձին խնդրանքով մը դիմած են առաջնորդ Տարախանյան եպիսկոպոսին խնդրելով, որ կառավարության մոտ ազդու դիմումներ կատարի զիրենք ազատելու համար Իսրահիմ պէկի սպառնալիքներեն» («Բյուզանդիոն», 1913, № 5126, օգոստոսի 21)։*

125 *«Աշխատանք», 1913, № 16—112, էջ 3։*

126 *Տե՛ս «Վան-Տոսպ», 1913, № 10, էջ 114։*

Բաշկալեում քուրդ գյուղացիները 1913 թ. մարտին հրաժարվեցին Աղնամուհամի վճարումից, իսկ Գավաշի Պախվան գյուղում նրանք վռնդեցին հարկահաններին։ Տեղական իշխանությունները իմանալով այդ մասին, ոստիկաններ ուղարկեցին Պախվան, որոնք գյուղացիներից մի քանիսին ծեծեցին, իսկ մյուսներին դատի հանձնեցին[127]։

Վարդոյի գավառի Խրրպախուի գյուղում 1913 թ. գարնանը թուրքական հարկահանի գնդծումներից գաղաղած բնակիչները սպանեցին նրան։ Այդ նույն ժամանակամիջոցում նման դեպքեր տեղի ունեցան նաև Մուշի պաշտի Խարթոս և Խիզանի գավառի Պաժաուխրթապ գյուղերում։

Երզնկայի սանջակում քրդերը ըմբոստացան զինվորական պարհակի դեմ։ 1912 թ. դեկտեմբերին Լերթիկի քրդերը սպանեցին զինակոչիկներ պահանջող երիտթուրքական ժանդարմներից մեկին, իսկ մյուսներին պատվիրեցին. «Վերադարձեք տուն և պատմեցեք ձեր պետերին այն, ինչ տեսաք այստեղ։ Մենք չենք ճանաչում թուրքական իշխանություններին և չենք տա նորակոչիկներ»[128]։

Մոսկանում հարկային քաղաքականության դեմ ուղղված քրդերի շարժումը 1913 թ. աշնանը այնպիսի չափերի հասավ, որ պաշտոնյաները նրանց զսպելու համար ուղարկեցին պատժիչ ջոկատներ, իսկ Վանի սանջակում Խրկանց գյուղի քրդերի ելույթը ճնշելու համար սպանեցին 12 հոգու[129]։

Դերսիմում և Խնուսում 1911 թ. քուրդ գյուղացիները ծառացան կառավարության հարկային հարստահարման սաստկացման դեմ։ Էրզրումի իշխանությունները նրանց հպատակեցնելու համար ուղարկեցին 300 զինվոր և լեռնային թնդանոթներ[130]։

Թուրքական իշխանությունների և քրդերի միջև լուրջ ընդհարումներ եղան նաև Դերջանում, ուր 1914 թ. մարտին Հաջի Համզա գյուղի բնակիչները սպանեցին հարկահանին և բռնագրավեցին նրա զենքերը։ Երբ պաշտոնյանները ուղարկեցին նոր հարկահան, որը ոստիկանների օժանդակությամբ հավաքելով 200 ոչխար, դուրս եկավ գյուղից, քրդերը հարձակվեցին, վիրավորեցին նրան և սպանեցին երկու ոստիկանի։ Էրզրու-

---

127 Տե՛ս «Վան-Տոսպ», 1913, մարտի 23, էջ 99։

128 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 390։

129 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, № 5139, սեպտեմբերի 18։

130 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 1667, թ. 18։

մի գլխավոր հյուպատոսը այդ առթիվ գրում էր. «Հարկահանների ու քրդերի միջև արյունալի ընդհարումները դնալով մեծանում են»[131]:

Հաշվի առնելով քուրդ դյուղացիության ըմբոստ տրամադրությունը, Թուրքական կառավարությունը մեծացրեց հարկահավաքներին ուղեկցող ոստիկանների թիվը: 1914 թ. մարտի 15-ին նույն հյուպատոսը հաղորդում էր իր դեսպանին. «Թուրքական կառավարությունը... յուրաքանչյուր հարկահավաքի անձը պաշտպանելու համար ժանդարմների հետ միասին ուղարկում է նաև չորս կանոնավոր զինվոր, մի բան, որ մինչև հիմա երբեք չի կիրառվել»[132]: Բայց այդ միջոցառումը չկարողացավ կանխել քուրդ դյուղացիների սոցիալական շարժումները: Նրանք ամենուրեք դիմադրություն էին ցուցաբերում Թուրքական իշխանություններին և որոշ տեղերում պահպանում իրենց կիսանկախ գոյությունը: 1911 թ. հուլիսի 20-ին Օլֆերևը գրում էր, որ Վանի վիլայեթի Բեյթուլ-Շեբաբ գավառակում քոչվոր քրդերը «համարյա չեն ճանաչում Թուրքական իշխանություններին: Նրանք հարկերը չեն վճարում և չեն մասնակցում համիդիական զնդերի կազմավորմանը»[133]: Քրդական որոշ համայնքներ իրենց կիսանկախությունը պահպանում էին նաև Դերսիմում ու Տարոնում:

Երիտթուրքերի կառավարման տարիներին ազգային ու սոցիալական դժվարին պայքար էին մղում նաև եզիդիները: Նրանք արդեն համոզվել էին, որ կատարված հեղաշրջումը ոչ միայն չի բնաջնջել, այլև ավելի է ծանրացրել իրենց դրությունը: 1912 թ. Սարայի Դերջամետ դյուղում Օլֆերևի հետ զրուցելիս, եզիդիները հայտարարեցին. «Ապրելով Թուրքիայում, մենք երբեք վստահություն չունենք վաղվա նկատմամբ: Մեզ տվել են սահմանադրություն և խոստացել լրիվ հավասարություն, իսկ իրականում դուրս եկավ, որ սկսեցինք ավելի վատ ապրել, քան նախկին սուլթանի օրոք»[134]: Իրենց դավանանքով ու սովորություններով տարբեր, կղզիացած քրդերից, եզիդիները հարկադրված էին շատ հաճախ պայքարել մեկուսի և պարտվելով, արտագաղթել Ռուսաստան կամ դաշնակցել հայերի հետ, որ համատեղ պայքարեն բռնությունների դեմ: Այդ նպատակով նրանք ցանկացան ընդունել հայ լուսավորչական հավատը և անցնելով պրակտիկ գործի, նույնիսկ դիմեցին Կ. Պոլսի հայոց

---

131 Նույն տեղում, Ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1914, գ. 2685, թ. 36:

132 Նույն տեղում:

133 ՌԱՔԱ, ֆ. «Քաղաբխիվ», 1911, ց. 482, գ. 719, թ. 77:

134 Նույն տեղում, թ. 185:

պատրիարքին։ Սակայն վերջինս, վախենալով թուրքական կառավարությունից, մերժեց նրանց։ 1910 թ. օգոստոսի 25-ին Օլֆերևը գրում էր. «Եղիդիական մի քանի համայնքներ ցանկություն են հայտնել հայ լուսավորչականության ընդունելու մասին։ Վերջերս նրանց ցանկությունը պաշտոնապես քննվեց Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովում և մերժվեց։ Դրա պատճառը թուրքական կառավարությունից ունեցած երկյուղն էր, որը կարող էր հայերին մեղադրել եղիդիների շրջանում չարագույն պրոպագանդա վարելու գործում և սկսել նրանց հանդեպ սովորական հալածանքներ»[135]։

Բայց եղիդիների մեծ մասը շարունակեց պայքարը թուրքական կառավարության դեմ և որոշ դեպքերում հասավ հաջողության։ Այսպես, 1913 թ. իթթիհատը, երբ փորձեց Վանի վիլայեթի նրանց գյուղերում բնակեցնել մահմեդական քրդական զանգվածներ, հանդիպեց լուրջ դիմադրության և հարկադրված «նա կեցավ իր մտադրությունը գործադրելեն»[136]։

Արևմտյան Հայաստանում քրդական գյուղացիական շարժումները կազմում էին երիտթուրքական վարչակարգի ու ազանների դեմ ուղղված բազմահազար զանգվածների ընդհանուր պայքարի բաղկացուցիչ մասը։ Մի շարք տեղերում նրանք աչքի էին ընկնում իրենց համախմբվածությամբ ու ակտիվությամբ։ Բայց, չնայած դրան, քրդական գյուղացիական շարժումները նույնպես անկազմակերպ էին ու տարերային և, իբրև կանոն, ավարտվում էին պարտությամբ։

3. ԹՈՒՐՔԵՐԻ ԴՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Վարելով շովինիստական քաղաքականություն, երիտթուրքերը հենվում էին հիմնականում պաշտպանում ու արտահայտում էին թուրքական բուրժուազիայի ու ազանների շահերը և ամեն չէին տալիս նրանց դժգոհելու։ Սակայն թուրք գյուղացիության նկատմամբ նրանք տանում էին դասակարգային դիմ, հարստահարում ու կեղեքում էին, չէին պաշտպանում նրանց անձն ու գույքը ազանների ավազակային հարձակումներից։ Եվ թուրք գյուղացիները իրենց կեղեքողների դեմ հանդես էին գալիս ակտիվ պայքարով։

---

135 Նույն տեղում։

136 «Բյուզանդիոն», 1913, № 5103, օգոստոսի 6։

Երկրի համարյա բոլոր շրջաններում նրանք դիմադրում էին աղայական ավազակախմբերին և պաշտպանում իրենց ունեցվածքը։ Այսպես, 1909 թ. Դիարբեքիրի կուսակալությունում Բուրք գյուղացիները բողոքեցին իշխանություններին աղանների հրոսակային գործողությունների դեմ, որոնք հարձակվելով տարազգի, այդ թվում նաև թուրքական, քան գյուղերի վրա, սպանել էին հիսուն մարդ և հափշտակել 20.000 ոսկու արժողությամբ ապրանք։ Սակայն Բուրք գյուղացիների բողոքը, կամ ինչպես նշում էր «Բյուզանդիոնը», նրանց «ողբն ու կոծը տեղական կառավարության կողմն անլսելի կմնա»[137]։

Աղանների ավազակային գործունեության դեմ ծառացան նաև Սեբաստիայի վիլայեթի Ենի-Ափարատի գյուղի թուրքերը, բայց իշխանությունները ցինիկորեն պատասխանեցին, որ բերնի հանցագործներին, մենք կը պատժենք։ Երբ ենիափարացիները կատարեցին նրանց այդ պահանջը, պաշտոնյանները ազատ արձակեցին ավազակներին, հայտարարելով, թե դրանք ճամփորդներ են։ Գյուղացիները դիմեցին մայրաքաղաք, բողոքելով, որ տեղական «կառավարությունը նրանց (իմա՝ ավազակներին—Ս. Հ.) կանչեց, կաշառեց առավ, ազատ արձակեց, մեզ էլ հանդիմանեց»[138]։ Ենիափարացիները կարծում էին, որ Կ. Պոլսի բարձրաստիճանավորները կլինեն արդարադատ, սակայն նրանց հույսերը չարդարացան։ Սրբելմն Բուրք գյուղացիները կազմակերպում էին ինքնապաշտպանություն և հաճախ հասնում հաջողության։ Օրինակ, Բասենի Ջևրմուկաս գյուղի բնակիչները, 1913 թ. ամռանը ընդդիմակայելին իրենց գյուղի վրա հարձակվող ավազակներին և վռնդեցին։ Ընդհարման պատճառով երկուստեք նաև վիրավորներ[139]։

Թուրք գյուղացիները ըմբոստանում էին նաև կառավարության հարկային հարստահարման դեմ։ Բասենում 1911 թ. սկզբներին նրանք դիմեցին մայրաքաղաք, պահանջելով չհավաքել երեք տարվա ապառքները և չհարկադրել ջրաղացները, բաղնիսներն ու բարվանսարաները։ Բասենցիների օրինակին շուտով հետևեցին Բորթոմի, Նամրվանի, Խնուսի ու Մանազկերտի Բուրքերը, որոշելով վռնդել ոչխարը հաշվելու եկող պաշտոնյաններին։ Խուսափելով մթնոլորտի շիկացումից, կառավարությունը ստիպված տեղի տվեց և հրահանգեց էրզրումի կուսակալին՝ «չդժգոհեցնել բնակիչներին»[140]։

137 «Բյուզանդիոն», 1909, № 3798, ապրիլի 6։

138 Ս. Սապահ Գյուլյան, նշված աշխ., էջ 343։

139 Տե՛ս «Մշակ», 1913, № 131, հունիսի 18։

140 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, գ. 1647, թ. 30։

1912 թ. Թուրք գյուղացիները մասսայաբար դիմագրավեցին կառավարությանը, երբ սա պատերազմի մտնելով Իտալիայի դեմ, 25 տոկոսով ավելացրեց հողային կամ կալվածական տուրքը։ «Մշակը» գրում էր, որ կառավարության այդ քայլը «Իսլամ ժողովրդին մեջ մեծ հուզում առաջ բերած է և հայտնի չէ, թե հետևանքը ինչ պիտի ըլլա»[141]։

Կառավարության հարկային հարստահարումների դեմ Թուրք գյուղացիներն ըմբոստացան նաև հետագա տարիներին։ Բասենում 1913 թ. ապրիլին Թուրքերը ոչ միայն մերժեցին, այլև բազմաթիվ ստորագրություններով բողոքագիր ուղարկեցին կուսակալին հարկերի և ապառքների վճարման դեմ։ Նրանք հայտարարեցին, որ եթե իրագործվի կայմակամի պահանջը, ապա հարկադրված կլինեն կամ ապստամբվել կառավարության դեմ, կամ արտագաղթել այլ գավառ։ Համառ պայքարի արդյունքը եղավ այն, որ կուսակալը չեղյալ հայտարարեց կայմակամի կարգադրությունը և առժամանակ հետաձգեց հարկերի հավաքումը[142]։

Թուրքական գյուղացիական շարժումները նույնպես տարերային ու անկազմակերպ էին։ Բայց ի տարբերություն արևմտահայ գյուղացիական շարժումների, որոնք ուղղված էին հիմնականում իշխանությունների ու աղանների դեմ, Թուրքական գյուղացիական շարժումներն ուղղված էին գերազանցապես իշխանությունների դեմ։ Թուրքական գյուղում աղայական կեղեքումներն այնպես տարածված չէին ու դաժանությամբ չէին արտահայտվում, ինչպես հայկական գյուղում։

* * *

Երիտասարդ Թուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում ծավալվեցին նաև Թուրք գինվորների հուզումներ։ Անցնելով իշխանության գլուխ, նոր կառավարիչները առաջվա նման Թողեցին գինվորներին իրավազուրկ ու չարքաշ պայմաններում, ամիսներ շարունակ նրանց ռոճիկները չէին վճարում, իսկ վճարելիս ապօրինի պահումներ էին կատարում։ Գինվորներին տալիս էին կիսամաշ ու պատառոտված շորեր, կերակրում ցածրորակ սննդամթերքներով, վիրավորում ու ծեծում էին և ժամկետը լրանալիս ձգձգում զորացրումը։ Թուրք գինվորներից մեկը 1908 թ. դեկտեմբերին Վանում կայացած հայերի ու Թուրքերի համատեղ միտինգում այսպես նկարագրեց իրենց դրությունը. «Մենք, օսմանցի գինվորներս, ամենեն լքված տարրը կկազմենք. ո՛չ մեր կերած

---

141 «Մշակ», 1912, № 127, հունիսի 13։

142 Տե՛ս ՌԱՔՀԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912—1914, ց. 482, գ. 1648, թ. 160։

կերակուրը կերակուր է, ոչ ալ մեր հագած հագուստները հագուստ են... կապրինք կես կուշտ, կես անոթի, և մեր զգեստներուն կտորները լեռներուն և դաշտերուն մեջ կմնան ու պատճառ կըլլան մեր ֆիզիկական անկումին, այնպես որ երբ բախտ ունենանք մեր տուները դառնալու, այնչափ կայլափոխվինք, որ դժվար կճանչցվինք մեր սիրելիներուն, թեև մեզմե շատերն այս բախտն ալ չեն ունենար, և մեռնելով, հավիտ, առանց պատանի կը թաղվին անծանոթ վայրերու մեջ։ Մեզի համար որոշված թոշակները բոլորովին անբավական ըլլալե վերջը, ժամանակին ալ չեն վճարվիր, այնպես որ հավիտ կստիպվինք մեր ոսկիկը կազմող նկանակներուն[143] *մաս մը մեր բերնեն կտրելով ծախել և այս կերպով հոգալ անհրաժեշտ պետքերնիս։ Երբ մեր պինդորական շրջանն լմընցնալով կհասնի մեր ազատագիր (Բեղքերե) առնելու օրը, այնչափ կ'ձգձգեն, որ երբեմն տարիի մը կմոտենա, և հազիվ կուտան մեզի նույն գիրը, որով մենք մեր որոշված շրջանն ավելի մնալով պինդորության մեջ, պարապ տեղը ժամանակ կանցնինք, զուրկ մնալով մեր հայրենիքին, սիրելիներուն և աշխատությունեներուն, ամեն կերպ վնասվելով»*[144]։

Ցառանալով այդ կացությունը, Թուրք պինդորները բռնում էին պայքարի ուղին։ Նրանք հրաժարվում էին զորակոչից, լքում բանակն ու փախչում, բողոքում էին անտանելի պայմանների դեմ։ 1909 թ. մայիսի սկզբներին Էրզրումում Թուրք պինդորները, ինչպես նշում էր Ն. Սկրյաբինը, ապստամբություն բարձրացրին և համարյա մեկ ամիս քաղաքը պահեցին իրենց ձեռքում։ Զինվորական հրամանատարությունը մեծ դժվարությամբ ճնշեց խռովությունը, ձերբակալեց զեկավարներին ու դատի հանձնեց[145]։

1913 թ. աշնանը Թուրք պինդորական ընդվզումներ տեղի ունեցան նաև Երզնկայում ու Սղերդում։ Սղերդում պինդորները հրաժարվեցին ներկայանալ պարապմունքի։ Չկարողանալով ճնշել պինդորական ելույթը, տեղական իշխանությունները դիմեցին Վանի զորախմբերի օգնությանը Թուրքական բանակի հրամանատարները, երբ փորձեցին ձերբակալել ու բանտ նետել «խռովարարներին», հանդիպեցին համառ դիմադրության։ Կատաղի հրացանաձգության հետևանքով եղան զոհեր, որոնց թիվը իշխանությունը թաքցրեց։ Ի վերջո, հրամանատարները մեծ դժվարու-

---

143 *Հաց, բլիթ։*

144 *«Ռյուզանդիան», 1909, № 3747, փետրվարի 4։*

145 *Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1909, ց. 482, գ. 1645, թ. 116։*

թյամբ ճնշեցին շարժումը, կալանավորեցին զինավարներին և նոյեմբերի 6-ին վերադարձան Վան[146]։

1913 թ. դեկտեմբերին թուրք դինվորների հուզումներ առաջացան նաև Վանում։ Կուսակալն օժանդակ ուժերի օգնությամբ միայն կարողացավ ճնշել դրանք[147]։

Թուրք դինվորների ելույթները կտրված էին թուրք գյուղացիների ընդվզումներից ընդհանրապես և ոչ թուրք, հատկապես հայ գյուղացիական շարժումներից՝ մասնավորապես։ Ավելին՝ երիտթուրքական դինվորական իշխանությունները օգտագործելով թուրք դինվորների հետամնացությունը, ծառայեցնում էին նրանց որպես գործիք Արևմտյան Հայաստանի ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրական պայքարի ճնշման համար։

4. ԱՍՈՐԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1908 թ. հեղաշրջումից հետո Արևմտյան Հայաստանում ծավալվեցին նաև ասորական շարժումները։ Ասորի մտավորականները ձգտելով իրենց հայրենակիցների համար ստեղծել համընդհանուր հոգևոր կյանք և հաղորդակից դարձնել նրանց ժամանակի քաղաքակիրթ աշխարհին, Բաղդադում, Բասրայում, Մոսուլում, Դիարբեքիրում, Մարտինում, Սղերդում և մի շարք գյուղերում բացեցին դպրոցներ ու սկսեցին դասավանդել ասորերեն, հայերեն (առանձնապես գրաբար), արաբերեն, թուրքերեն, անգլերեն ու ֆրանսերեն։ Զբաղվարտվելով դրանով, նրանք հրատարակեցին նաև թերթեր։ Ելնելով այն փաստից, որ ասորիների զգալի մասը պատմական հանգամանքների բերումով չէր տիրապետում իր մայրենի լեզվին, ասորի մտավորականությունը սկսեց թերթեր հրատարակել նաև օտար լեզուներով։ Բաղդադում ու Մարտինում լույս տեսան արաբերեն «Բաբելոնի արձագանքները», «Իմաստություն», Դիարբեքիրում՝ թուրքերեն «Շեփոր», ԱՄՆ-ում՝ անգլերեն «Ազդարար», Ուրմիայում՝ արամերեն տարբեր անուններով չորս թերթեր և այլն[148]։

Չունենալով մեր ձեռքի տակ այդ թերթերից որևէ մեկը, մենք չենք կարող ասել, թե ինչ էր պահանջում ասորական մտավորականությունը և ինչ վերաբերմունք ուներ իթթիհատը նրա պահանջների հանդեպ, սա-

---

146 Տե՛ս նույն տեղում, 1912—1914, ց. 482, գ. 546, թ. 239—240։

147 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, գ. 369։

148 Տե՛ս «Աշխատանք», 1914, № 22—168, էջ 4։

կայն կասկածից վեր է, որ նրանք արծարծում էին դեմոկրատական խնդիրներ, որոնք հաղիվ թե կարող էին ընդունելի լինել իշխիհատի կողմից[149]։

Երիտթուրքերի իշխանության տարիներին Արևմտյան Հայաստանում բռնկվում էին նաև ասորական գյուղացիական հուզումներ։ Այսպես, 1910 թ. Հնթիարիում նրանք հրաժարվեցին պետական հարկերի ու տուրքերի վճարումներից և դիմադրավեցին նրանց հլուժը ճնշելու նպատակով կառավարության ուղարկած զինվորներին[150]։ Խիզանի գավառի Գնձիկ գյուղում 1913 թ. մայիսին ասորիները ըմբոստացան աղայի գաղանությունների դեմ և իրենց քահանային ուղարկեցին գավառակնատրան, որ «բողոքի կառավարության մոտ անոր գործած չարիքներու դեմ և իրենց անտանելի կացության մասին անկե դարման խնդրե»[151]։ Սակայն ապա Մեհմեդ էմինը իմանալով այդ մասին, ննջգաբար հրավիրեց քահանային իր տունը և սպանեց նրան։ Ապա սպատնաց ասորիներին, թե այդ բախտին կարժանանան բոլոր նրանք, ովքեր կհանդգնեն բողոքել իր վրա։ Որոշ դեպքերում ասորիներին հաջողվում էր հակահարված հասցնել ավազակներին և վռնդել իրենց գյուղերից։ Օրինակ, Սեֆիբեկ գյուղի բնակիչները 1913 թ. սեպտեմբերին միասնաբար ոտքի կանգնելով ետ շպրտեցին իրենց վրա հարձակվող հրոսակներին[152]։

Ասորական գյուղացիական շարժումներն իրենց մասշտաբով փոքր էին, բայց ընդհանուր նմանություններ ունեին արևմտահայ գյուղացիական շարժումների հետ։ Եվ դա հասկանալի էր. ասորիները նույնպես ենթարկվում էին այնպիսի ազգային ու սոցիալական հալածանքների, ինչպես արևմտահայերը։

Երիտթուրքական տիրապետության տարիներին իրենց հարստահարողների դեմ պայքարում էին նաև Արևմտյան Հայաստանում բնակվող այլ ազգերի գյուղացիները։ Նրանք պաշտպանում էին իրենց հողը աղաների զավթումներից, հրաժարվում պետական ու կալվածատիրական

---

149 Պետք է նշել, որ մխիթարները ասորերեն հրատարակեցին մի քանի թերթեր։ Այսպես. կաթոլիկները լույս ընծայեցին «Ձշմարտության ձայն», իսկ ուղղափառները՝ «Սուրիական եկեղեցի», «Ասող» թերթերը։ Անկախ մխիթարների հետապնդած նպատակներից, նրանց թերթերն այսպես թե այնպես նպաստում էին ասորական կյանքի քաղաքական ու մշակութային զարթոնքին։

150 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1910, ց. 482, գ. 719, ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 196—198։

151 «Վան-Տոսպ», 1913, № 21, էջ 245—246։

152 Տե՛ս «Մշակ, 1913, № 223, հոկտեմբերի 9։

պարտավորություններից, ահաբեկում թուրքական պաշտոնյաներին ու աղաներին։ Այսպես, 1912 թ. էրզրումի վիլայեթի Հեղինք (Հելլենք) գյուղի հայները համառորեն դիմադրեցին իրենց հողը բռնագրավող աղաներին։ Չկարողանալով անփական ուժով պաշտպանվել, նրանք դիմեցին կուսակալի, ինչպես և ռուսական դվխավոր հյուպատոսի օգնությանը։ Երվանդ վրդ. Փերտահճյանը ականատես լինելով այդ պայքարին, գրում էր. «Տարաբախտ քրիստոնյանները բավական դիմադրեցին, հետո հնազանդեցան, կուսակալի ոտքերը իրենց արցունքներով լվացին, բայց իզուր, ապա դիմեցին Կարնո ռուս հյուպատոսին։ Չեմ գիտեր, ի վերջո այդ վայրագ գործն ինչ վախճան ունեցավ. ես մեկնած էի»[153]։

Այդպիսով, Արևմտյան Հայաստանի բոլոր ազգությունների գյուղացիները համարյա ամենուրեք պայքարում էին միևնույն նպատակի համար՝ հողի, ֆեոդալական ճնշումներից ու կեղեքումներից ազատվելու, երիտթուրքական ազդային հալածանքներից փրկվելու, անձի ու գույքի ապահովության համար։ Այդ պայքարում գերակշռող դերը խաղում էին հայ գյուղացիները. դա պայմանավորված էր նրանց ստվարությամբ և սոցիալ-տնտեսական ու քաղաքական առավել ծանր կացությամբ։ Արևմտյան Հայաստանի գյուղացիական նկույթներն ընթանում էին տարնրայնորեն, իրարից անջատ ու մեկուսի և ավարտվում էին ընդհանուր առմամբ պարտությամբ։

---

153 «Բյուզանդիոն», 1912, № 4643, փետրվարի 1։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԽԱՎԵՐԻ ՀԱՄԱԴՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ

Երիտթուրքական կառավարությունը իր շովինիստական քաղաքականության Արևմտյան Հայաստանում անցկացնելու և ազգային-ազատագրական շարժումները կանխելու կամ ճնշելու համար զեկավարվում էր «բաժանիր, որ տիրես» սկզբունքով և լարախաղում էր հայ-քրդական հակասությունների վրա: Մերթ նա միրձհնում էր քրդական վերնաշերտերին, մերթ հայ քաղաքական կուսակցություններին, գլխավորապես դաշնակցությանը և օգտագործելով մեկին մյուսի դեմ, աշխատում էր չեզոքացնել նրանց: Տեսնելով թուրք կառավարիչների այդ վարքագիծը, դաշնակցականների ու քրդական աղանների առանձին ներկայացուցիչներ երբեմն փորձում էին համերաշխվել և ընդհանուր հակատով դուրս գալ իթթիհատի դեմ: Այդ նպատակով նրանք պատգամավորներ էին ուղարկում իրար մոտ և բանակցություններ վարում: Դեռ 1908թ., այսինքն՝ հեղափոխությունից անմիջապես հետո դաշնակցականները փորձեցին ընդունել իրենց կուսակցության մեջ քրդական աղաներին, բայց քչերն արձագանքեցին նրանց կոչին, իսկ ովքեր մտան դաշնակցության մեջ, դիմեցին այդ քայլին գերազանցապես իրենց հակառակորդներից վրեժ լուծելու նպատակով: Այնուհետև, դաշնակցականները կամեցան Դիարբեքիրի վիլայեթում ստեղծել կուսակցության մասնաճյուղը և ներառել նրա մեջ նաև տեղի քուրդ աղաներին, բայց դարձյալ արդյունքի չհասան: 1909 թ. դաշնակցության ներկայացուցիչները փորձեցին հաշտության ու համագործակցության բանակցություններ վարել Ադլջևազի ազդեցիկ տիրակալներից մեկի՝ Քյոռ Հյուսեին փաշայի հետ, սակայն ապարդյուն: 1913 թ. դաշնակցության վաստուրականի և Տարոնի կոմիտեները առաջարկեցին խիղանի նշանավոր շեյխ Սեիդ Ալիին ստեղծել

հայ-քրդական միության թուրքական տիրապետության դեմ և ստանալով նրա համաձայնությունը, ներկայացուցիչ ուղարկեցին բանակցությունների համար: Այդ ներկայացուցիչը, վանից մեկնելով Կարճկան և հանդիպելով Սեիդ Ալիի ու նրա եղբայր շեյխ Ռաշիդի հետ, կնքեց պայմանագիր, որ ասվում էր. «Քյուրդերու ու հայերու միացյալ ուժով Արեվկյան նահանգները հռչակել անկախ, որ պիտի կառավարվի երկրի երկու բնիկ ազգերուն կողմե»[1]: Սակայն այդ պայմանագիրը մնաց թղթի վրա և գործնական նշանակություն չունեցավ:

Դաշնակցականները փորձեցին առնչվել նաև քրդական լայն շրջանների հետ և այդ նպատակով 1909 թ. Կարինում քրդերի համար ստեղծեցին հայատառ այբբենարան, ապա հրատարակեցին Հայկական բարձրավանդակի քրդերի մեջ տիրապետող կուրմանճի բարբառով ընթերցարան, «Ազատամարտում» տեղ հատկացրին քրդալեզու հոդվածների ու հաղորդումների և որոշ դյուղերում փորձեցին հիմնել քրդական դպրոցներ[2]: Սակայն դաշնակցականների այդ ձեռնարկումները նախ՝ քուրդ իրականության մեջ տիրապետող բռնությունների ու խավարի պայմաններում արդյունքի չհասան, երկրորդ՝ սոսկ առանձին դրվագներ էին իրենց գործունեության մեջ, իսկ որպես կանոն նրանք թե՛ սահմանադրությունից առաջ և թե՛ հետո անջատում էին արևմտահայ շարժումները թուրքական տիրապետության դեմ մղվող ազատագրական համընդհանուր պայքարից: 1911 թ. դաշնակցության ղեկավարներից մեկը՝ Ռ. Դարբինյանը գրում էր, որ դաշնակցությունը «դժբախտաբար տակավին լուրջ փորձեր չէ ըրեր դուրս գալու իր գործունեության ներկա ազգային շրջանակեն, անմիջապես ազդելու, կրթելու համար ոչ հայ տարերն ևս, որոնցմե իրոք կախված է պետության բախտը»[3]:

Երիտթուրքերի կառավարման տարիներին քրդական աղաները ևս կատարեցին հայ-քրդական համագործակցության որոշ փորձեր, ձգտելով, իհարկե, ծառայեցնել այդ համագործակցությունն իրենց դասակարգային նպատակներին: Այդ տեսակետից աչքի ընկավ Շամդինանի շեյխ Ուբեյդ-Ուլլայի որդի Աբդուլ Կադերը, որը դեռ 1909 թ. ապրիլին,

---

[1] Կ. Սասունի, *Քյուրդ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները*, Պեյրութ, 1969, էջ 212—213: Տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 328:

[2] Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 51, օգոստոսի 21, «Աշխատանք», 1911, № 1—48, էջ 12:

[3] «Ազատամարտ», 1911, № 489, հունվարի 28:

Ադանայի ջարդերի օրերին, հետագրեց Արևմտյան Հայաստանի քրդերին՝ չկոտորել հայերին և պահպանել նրանց հետ բարիդրացիական հարաբերություններ[4]։ Աբդուլ Կադերը նույն թվի աշնանը մեկնեց Վան, հրավիրեց հայ, թուրք և քուրդ ևևելիների խորհրդակցություն և առաջարկեց բարեկամություն ու համերաշխություն։ Խորհրդակցության մասնակիցները հայտարարեցին, որ իրենք հավատարիմ կմնան հայրենիքին, սահմանադրությանն ու ժողովուրդների եղբայրությանը։ «Մշակը» այդ խորհրդակցության մասին գրում էր. «Տեսարանը հետաքրքրական էր ու շշմեցնող. այնտեղ իրար հետ կողք կողքի նստել և եղբայրություն, համերաշխություն էին ուխտում իսլամ և քրիստոնյա կրոնապետները՝ իրենց կանաչ ու ճերմակ փաթթոցներով և սև գլխանոցներով, այնտեղ էին նաև քյուրդ փաշաներ, բեյեր, աղաներ, որոնք դարերից ի վեր սպանել, թալանել են հայերին, և հայ վաճառականներ, պաշտոնյաներ, այնտեղ էին վալին և թուրք ազդեցիկ էֆենդիներ, կառավարության պաշտոնյաներ, որոնց թվում քիչ չէին նրանք, որոնք շար խորհուրդ էին տածում հայերի հանդեպ։ Երեք ազգություններից էլ խոսողներ եղան ազգությունների միաբանության... վրա»[5]։

Ուշագրավ է, որ այդ խորհրդակցության ժամանակ քուրդ աղաներն ու ցեղապետները ստորագրեցին մի հավաքական դրություն, որով խոստացան հայերին՝ «այսուհետև եղբոր պես ապրել... վատերին, սպանողներին, թալանիչներին չպահպանել, օգնել արդարության գործին, առաջավելն մինչև առաջիկա գարնանը հանձնել հայերին՝ նրանցից գրաված հողերը և կալվածները»[6]։

Սակայն 1912 թ. աշնանը, երբ միջազգային դիվանագիտությունը վերստին առաջ քաշեց հայկական հարցը, Աբդուլ Կադերը նույն թվականի վերջերին թուրքական կառավարող շրջաններին (գուցե և այդ շրջանների խրախուսանքով) ներկայացրեց Քրդստանի ինքնավարության ծրագիրը, որը տերիտորիալ առումով հակառակ էր հայկական հարցի լուծմանը։ Այդ կապակցությամբ Թալեաթ բեյը նրան հայտարարեց, թե հայկական հարցի լուծման դեպքում քրդերը կոչնչանան։ Աբդուլ Կադերը պատասխանեց, որ քրդերը չեն կապում իրենց հակատագիրը հայերի հետ։ Նրանք «պատրաստ են իրենց արյունը թափել թուրք որևէ կառա-

---

[4] Տե՛ս Հակոբ Շահպազյան, *Քյուրդո-հայ պատմություն*, Կ. Պոլիս, 1911, էջ 160։

[5] «Մշակ», 1909, № 251, նոյեմբերի 12։ Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1909, № 3973, նոյեմբերի 17, № 3996, դեկտեմբերի 1։

[6] «Մշակ», 1909, № 251, նոյեմբերի 12։

վարության համար, որ ուշադրության առնի քյուրտ ազգության օրինական շահերը»[7]։

Աբդուլ Կադերի հակահայկական հայացքները որոշակի դրսևորվեցին նաև 1913 թ. «Բյուզանդիոնի» թղթակցի հետ զրույցում հայ գյուղացիների հողերի մասին։ Ըստ նրա, հայերի հողերը անցել են քրդերի ձեռքը իբր «կանոնավոր գնումների ճամբով», այն ժամանակ, երբ կոտորածների պատճառով հայերը թողել են իրենց հողերն ու փախել, իսկ կառավարությունը վաճառել է դրանք քրդերին, որոնք այդ հողերի համար «ձեռքներին ունին կանոնավոր սեփականաթղթեր (թափու)»[8]։ Այնուհետև նա նշում էր, որ քրդերը կարող են ետ վերադարձնել միայն այն տարածությունները, որոնք հայերի տարագրությունից ու փախուստից հետո մնացել են անտեր ու անմշակ և նվաճվել նրանց կողմից իբրև այդպիսին։ Բայց այդ տարածություններն էլ վերադարձնելու համար պետք է ստեղծել հանձնաժողով և ոչ թե հարց հարուցել դատական մարմինների առաջ, քանի որ «դատական մարմիններով համաձայնությունն անկարելի է»[9]։ Աբդուլ Կադերը դեմ էր նաև հայերի հողերը վարչական կարգով ետ վերցնելուն, գտնելով, որ այդ դեպքում կառաջանան ընդհանուր դժգոհություն ու խառնաշփոթություն, որոնց ընթացքում «քյուրտեր ամեն ինչ պիտի ընեն իրենցմե առնված հողերը վերստին ձեռք բերելու համար»[10]։ Վերջում Աբդուլ Կադերը նշում էր, որ քրդերն ուզում են հայերի հետ հաշտ ապրել ու բարեկամներ մնալ, ըստ երևույթին, այդ բարեկամության տակ հասկանալով ձիու և ձիավորի ընկերությունը։

Մի այլ առիթով՝ 1913 թ. օգոստոսին, պատասխանելով «Իքտամի» խմբագիր Ալի Քեմալ բեյի հոդվածին, Աբդուլ Կադերը ասում էր, որ հայերն ու քրդերը ավելի քան հազար տարի է ապրում են կողք-կողքի, հանդիսանալով իրար հարևաններ ու բարեկամներ։ Նրանց համերաշխությունը խաթարվեց այն ժամանակ, երբ հայերը, տեսնելով Բալկանների ազատագրական շարժումը, իրենք էլ ոտքի կանգնեցին։ «Այս տեսակ հակումի մը դոյությունը քյուրտերուն և հայերուն միջև ցրտություն առաջ բերավ և կարգ մը տեղեր ալ ծանոթ թելադրությանց հետևանքով անցյալ ցավալի դեպքեր տեղի ունեցած են»[11]։ Այդպիսով՝ Աբդուլ Կադերի հայ-քրդական համագործակցությունը սահմանափակվում էր քըր-

---

7 «Բյուզանդիոն», 1913, № 4935, հունվարի 16։

8 «Մշակ», 1913, № 114, մայիսի 28։

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում։ Տե՛ս նաև «Բյուզանդիոն», 1913, № 5041, մայիսի 11։

11 «Բյուզանդիոն», 1913, № 5134, սեպտեմբերի 12։

դական աղայական շահերի պաշտպանությամբ, հետապնդում էր հայկական խնդիրը քրդական շահերին ծառայեցնելու նպատակ և այդ պատճառով ուներ դեկլարատիվ նշանակություն։

Հայ-քրդական համագործակցության հայտարարություններով հանդես եկավ նաև քրդական շարժման մի այլ ներկայացուցիչ՝ Աբդուր Ռեզաքը։ Համարելով հայերին մի կողմից իր բարեկամները և դաշնակիցները թուրքական կառավարության դեմ, մյուս կողմից նա խորհուրդ էր տալիս իր գինակիցներին՝ «եթե հայերը չենթարկվեն, կոտորեք բոլորին», «ջարդել մինչև վերջին հայը», քանի որ նրանք «շատ են տնկել իրենց թիթը»[12]։

1913 թ. հրապարակված իր թուղթիկներից մեկում Աբդուր Ռեզաքը մերժում էր հայկական ինքնավարությունը և այն համարում քրդերի համար կործանարար։ «Երբ հայերին տրվելիք ինքնավարությունը վավերացվի,— ասվում էր թուղթիկում,— դրանից վերջ քրդերը ուրիշ բան չեն կարող անել, եթե ոչ նստել ու լաց լինել»։ «Մենք՝ քյուրդիս ամենից ավելի իրավունք և արժանիք ունենք վայելելու ինքնավարությունը»։ Նպատակ ունենալով դրավել ասորիներին իր կողմը, Աբդուր Ռեզաքը թուղթիկում, այնուհետև, շարունակում էր. «Ոչ մենք և ոչ էլ մեր ասորի հայրենակիցները չենք ընդունում հայերին տրված շնորհները»[13]։ Նա ուղղակի ահաբեկում էր քրդերին հայկական ինքնավարության կենսագործումով, հավատացնելով, որ եթե Եվրոպան այն իրագործի, ապա քրդական բոլոր շեյխերն ու աղանները կզինաթափվեն և կբնաջնջվեն, «իսկ դրանից վերջ ո՞վ պիտի պաշտպանի անվնաս և օրենքից անտեղյակ քյուրդերի հողային և անհատական իրավունքները պիտությունով հզորացած... հայերի դեմ»։

Ուստի նա կոչ էր անում քրդերին համախմբվել՝ անկախ կրոնից ու դասակարգային պատկանելությունից և ծառանալ հայկական բարենորոգումների կենսագործման դեմ։ Իսկ եթե անհնարին լինի դրա կանխումը, ապա պետք է պահանջել, որ քրդերին նույնպես տրվի ինքնավարություն։ Աբդուր Ռեզաքը դիմելով քրդերին, նշում էր. «Քյուրդիստանի վեց նահանգները հայերուն տրվելուց վերջ, դուք էլ անոթի ու անպատսպար պիտի մնաք... այն ժամանակ ձեր կանայք ու զավակները փողոցի քարերի վրա պիտի նստին առանց հացի ու ապրուստի. և դու, ո՛վ քրդական ազգ, պիտի վռնդվիս հայրենիքիդ և գաղթականության

---

12 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 2000, գ. 7413, թ. 290—291։

13 «Մշակ», 1913, № 246, հոկտեմբերի 5։

հանապարհի վրա մատնվիս կորուստի ու անհետացման։ Այն ժամանակ մեր մզկիթները, սրբավայրերը ու տները, մեր պալատները թշնամու ոտների տակ սիտի պղծվին ու փոշի դառնան»[14]։

Հայ-քրդական համագործակցության օգտին հրբեմն խոսում էր նաև շեյխ Սեիդ Ալին և, ինչպես արդեն ասվեց, 1913 թ. դաշնակցության ներկայացուցիչների հետ նույնիսկ այդ ոգով պայմանագիր կնքեց։ Բայց հենց որ սկսեցին որոշակի քայլեր կատարվել հայկական բարենորոգումների կենսագործման ուղղությամբ, նա հանդես եկավ դրանց դեմ և, հրատարակելով «Այս հողը մեր հողն է» թերթը, փորձում էր հիմնավորել, թե Բիթլիսի նահանգը և նրա հարևան կուսակալությունները պատկանում են քրդերին, որոնք այդ վայրերը պետք է համախմբեն և ստեղծեն իրենց ինքնավար Քրդստանը[15]։

1914 թ. հունվարի 26-ի բարենորոգումների ծրագրի հրապարակումից շուրջ մեկ ամիս անց իր հրոսակներով շեյխը ներխուժեց Խարպան և հայաստաբնակ հայերին, թե բոլորին կբնաջնջի, եթե սահմանվի եվրոպական վերահսկողություն. «Մենք իսլամ ենք և միայն ու միայն իսլամ կը ճանչնանք», պնդեց, որ ինքն ու իր համախոհները պաշտում են սոսկ շարիաթը, իսկ «կոնտրոլ-մոնտրոլ չպիտի ճանչնան ու արյան գնով պիտի իրագործեն իրենց երդումը»[16]։

Բացի նշված աղաններից հայ-քրդական համագործակցության հայատարարություններով հանդես էին գալիս նաև այլ ազդեցիկ փաշաներ ու բեկեր (Քյոռ Հյուսեին փաշան, Մուսա բեյը, Շաքիր աղան և այլք)։ Նրանք փորձում էին հավաստիացնել, որ թուրքական տիրապետության տապալումից հետո կստեղծվի հայ-քրդական իրավահավասար պետություն, կվերադարձվեն հայերից բռնագրաված հողերը և շարժական գույքը[17]։ Սակայն այդ խոստումները աղանները տալիս էին հայերին խաբելու, իրենց շարժմանը ծառայեցնելու, իսկ այնուհետև ֆեոդալական լուծը նրանց վզին կամ ավելի ամրապնդելու կամ ուղղակի ֆիզիկապես բնաջնջելու հաշիվներով։ Անդրադառնալով քուրդ աղանների շարժումներին, 1913 թ. ապրիլի 20-ին Օլֆերևը գրում էր, որ նրանք թեպետև հայատարում են, որ իրենց շարժումն ուղղված է թուրքական կառավարության դեմ, բայց չի կարելի անտեսել նրանց թշնամությունը նաև գյա-

[14] Նույն տեղում։

[15] Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1911, ց. 482, գ. 545, թ. 143։

[16] «Մշակ», 1914, № 65, մարտի 26։

[17] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 558—559։

վուրների հանդեպ[18]։ Իսկ Վ. Շիրկովը 1914 թ. հունվարի 14-ին հաղորդում էր, որ քուրդ աղաները զինվելով, մի կողմից, ցանկանում են ապստամբվել կառավարության դեմ և ձեռք բերել ինքնավարություն, իսկ մյուս կողմից՝ բնաջնջել հայերին։ Նրանք «զինվում են հայերի դեմ»[19]։

Հանրահայտ է, որ բուրժուական ու ֆեոդալական ղեկավար ուժերը օրգանապես անընդունակ են հաստատել ազգերի հավասար համագործակցություն և իրենց վարքագծով ավելի շուտ հեռացնում են աշխատավոր զանգվածներին իրարից, քան մոտեցնում։ Հասարակական-քաղաքական միակ ուժը, որ կարող է կանգ ու կոփել ազգերի իսկական համագործակցությունն ու եղբայրությունը, տանել նրանց դեպի ազատություն ու բարգավաճում, պրոլետարիատն էր ու նրա կուսակցությունը, որոնցից մեկը սակայն Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում պատմական կոնկրետ պատճառներով դեռ թույլ էր ձևավորված, իսկ մյուսը չէր առաջացել։

Սակայն քուրդ աղաների մեջ կային այնպիսինները, որոնք, իրոք, ցանկանում էին ամրապնդել հայ-քրդական բարեկամությունը և ընդհանուր ուժերով դիմագրավել երիտթուրքական բռնություններին։ Դրանցից էր Մոկսի մյուդիր Մուրթալլա բեյը։ Դեռ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին նա հանձնչվել էր իր հայասիրական գործունեությամբ և այդ վարքագիծը շարունակում էր նաև սահմանադրության հետո։ Մուրթալլա բեյը համարձակորեն խարազանում էր քուրդ աղաների վայրագությունները, դատապարտում նրանց գաղանային գործողությունները և հանդես էր գալիս երկու ժողովուրդների բարեկամության ու համագործակցության օգտին։ 1909 թ., երբ Աբդուլ Կադերը վանում անցկացրից հայ, քուրդ և թուրք հեղափոխների խորհրդակցություն, Մուրթալլա բեյն այդ խորհրդակցությունում դատապարտեց քուրդ աղաների դաժանությունները հայերի նկատմամբ և հայտարարեց, որ նրանք եղել են Աբդուլ Համիդի «որսի շները»[20]։

Մուրթալլա բեյի հայասիրական գործունեության արտահայտություններից մեկն էլ նրա օգնությունն ու օժանդակությունն էր Հովսեփ Օրբելուն՝ Մոկսի աղգաբնակչության բարբառը, ֆոլկլորը, աղգագրությունը և պատմական հուշարձաններն ուսումնասիրելու գործում։ 1912 թ.

---

18 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, ց. 482, գ. 719, թ. 310։

19 Նույն տեղում, 1914, ց. 482, գ. 546, թ. 265—266։

20 «Մշակ», 1909, № 251, նոյեմբերի 12։

ամռանը, երբ Օրբելին ժամանեց Մոկս, Մուրթալլա բեյը նրան ընդունեց մեծ հյուրասիրությամբ և պահեց իր մոտ ավելի քան մեկ տարի։ Օլֆիերևը իր գնկուցագրերից մեկում նշում էր, որ շնորհիվ նրա օգնության, Օրբելին կապվեց Մոկսի քրդերի հետ, կազմեց նրանց լեզվի քերականությունն ու բառարանը։ Հատկանշական է, որ երբ Օրբելին չկարողացավ վերջացնել իր աշխատանքները Մոկսում, Մուրթալլա բեյը նրա հետ ուղարկեց իր ազգական Ալի աղային, որ օգնի գիտնականին շարունակելու իր ուսումնասիրությունները Վանում։ Շուտով Ալի աղայի հետ Օրբելին այնպես մտերմացավ, որ Թիֆլիս վերադառնալիս, նրան վերցրեց իր հետ իբրև պատվավոր հյուր։ 1912 թ. հուլիսի 10-ին Օլֆիերևը գրում էր. «Մուրթալլա բեյը ուղղակի հրաշալի մարդ է այս տեղերի համար։ Նա կանոնավորության, բարիության ու խելացիության օրինակ է։ Նա լավ է խոսում հայերին, անաչառ է վերաբերվում քրիստոնյաների նկատմամբ։ Հայկական կոտորածների ժամանակ Վանի վիլայեթում նա հզակին էր, որ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեց քրիստոնյաներին փրկելու համար... Քրդերի մեջ մյուդիրը ունի մեծ ազդեցություն, որի խոսքը նրանց համար օրենք է։ Օրբելին ու իր կինը արժանացան այդ քրդի տանը... բացառիկ հյուրասիրության ու ուշադրության։ Նրանք հիացած էին քրդական այս բեկով»[21]։

Բացի Մուրթալլա բեյից, հայ-քրդական բարեկամությանն ու համագործակցությանը անկեղծորեն ծառայում էր նաև խորմկցիների առաջնորդ Զեյնալը։ Դեռ սահմանադրությունից առաջ ըմբոստանալով համիդյան բռնությունների դեմ, նա հարկադրված թափառում էր էրզրումի ու Դիարբեքիրի վիլայեթներում։ 1908 թ. հեղափոխությունը հանգիստ չբերեց նրան, քանզի այժմ էլ խուլս էր տալիս երիտթուրքերի հետա-

---

[21] *Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թ. 195—196։ Ցավոք, մենք ստույգ չգիտենք, թե ինչ նվաճ Մուրթալլա բեյի ճակատագիրը։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները հակասական տեղեկություններ են հաղորդում նրա մասին։ 1913 թ. սեպտեմբերին «Բյուզանդիոնը» գրում էր. «Մոկսի մեջ սպանված է հայանի Մուրթալլա պեկը, անձնավորություն մը, որ հռչակված էր իր ազդեցությամբ ամբողջ շրջաններու մեջ։ Սպանիչները, ինչպես կհաստատեն, անցած են Խիզան» («Բյուզանդիոն», 1913, № 5156)։ Նույն բանն էր հաղորդում նաև «Մշակը». «Սպանված է Մոկսի (Վան) նշանավոր Մուրթալլահ քուրդ բեկը... երեք վաշտ զինվորներ ու ոստիկաններ հետապնդում են սպանիչներին» («Մշակ», 1913, № 206, սեպտեմբերի 19)։*

Բայց 1914 թ. մայիսին Վանի ռուսական փոխհյուպատոս Ակիմովիչը գրում էր. «Մոկսի մյուդիր Մուրթալլա բեյը, որ չարդերի ժամանակ հանդիսանում էր հայերի հայտնի պաշտպան, հրաժարվեց ծառայությունից և շուտով կը մեկնի Կ. Պոլիս» (ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1914, ց. 482, գ. 719, թ. 398)։

պնդումներից, որոնք, հարուցելով նրա դեմ քրեական անհիմն մեղադրանք, պնդհատակել էին պլսից: Չնայած տարբեր ժամանակներում եղավ Արևմտյան Հայաստանի զանազան վայրերում, անցավ Անդրկովկաս, վերադարձավ ևս և շարունակեց իր մաքառումները, բայց 1910 թ. նա ընկավ երիտթուրքերի պնդակից Բյուրակնյան (Բինգյոլ) լեռներում[22]:

1908 թ. հեղափոխությունից հետո հայ-քրդական բարեկամության ու համագործակցության օգտին ակտիվ գործունեություն ծավալից նաև քուրդ-եզիդիների հոգևոր առաջնորդ Բեյա-Ամիր Ասլան Բեկ զադե Միր Իսմայիլ-բեկը: Շրջելով Թուրքիայում ու Անդրկովկասում, նա մերկացնում էր թուրքական ռեակցիոների մարդակեր քաղաքականությունը և այցելելով հայոց թեմական առաջնորդին ու ամենայն հայոց կաթողիկոսին, բանակցություններ վարում երկու ժողովուրդների դաշնակցության համար: Նա միաժամանակ կոչ էր անում քրդերին, մասնավորապես եզիդիներին՝ կապել իրենց բախտը Ռուսաստանի հետ[23]:

* * *

Երիտթուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում հայ ու քուրդ գյուղացիների ինքնաբուխ ու տարերային համատեղ ելույթներ և համագործակցության որոշ փորձեր: Ապրելով հարևան, իսկ հաճախ նաև միևնույն գյուղում, նրանք բարեկամացել էին և կիսում էին իրենց տխրությունն ու ուրախությունը: Երկրի մի շարք շրջաններում հայերն ու քրդերը համատեղ հանդես էին գալիս իրենց հարստահարողների ու կեղեքողների դեմ: Ահա այդ երկու ժողովուրդների համատեղ պայքարի մի քանի փաստեր. Մուշի դաշտում 1910 թ. սկզբներին հայկական Մուշաղբյուր և Գյոլբաշ և քրդական Միրզոկ, Զևբկիսե ու Պալե գյուղերի բնակիչները միասին դիմեցին Բիթլիսի իշխանություններին, որ նա վերադարձնեն աղաների կողմից բռնագրաված իրենց հողերը: Մնալով անպատասխան, նրանք լքեցին իրենց բնակավայրերը և տեղափոխվեցին այլ շրջան: Երբ իշխանությունները փորձեցին նա դարձնել, կտրականապես հրաժարվեցին[24]:

---

22 Հայ-քրդական համագործակցության մասին հետաքրքիր փաստեր են բերվում նաև սովետական մի շարք պատմաբանների աշխատություններում:

23 «Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ժողովուրդները», հ. VII, Քրդագիտություն (Կարլեն Ջաշանի. Արժեքավոր վավերագրեր հայ-քրդական բարեկամության կապերի պատմությունից), Երևան, 1975, էջ 226—232:

24 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաբխիվ», 1910, ց. 482, գ. 544, թ. 56:

Մոտ տարի ու կես անց՝ 1911 թ. Հունիսին Մուշի դաշտի բազմաթիվ հայ ու քուրդ գյուղացիներ ընդհանուր բողոքագիր պատրաստեցին, որ ուղարկեն մայրաքաղաք և կենտրոնական իշխանությունների միջամտությամբ ետ ստանան իրենց հողերը, թևթևացնեն հարկային բեռը և սահման դնեն աղայական բռնություններին: Սակայն տեղական պաշտոնյաները, իմանալով այդ մասին, ոչնչացրին նրանց բողոքագիրը և պատժեցին կազմակերպիչներին: Հայերն ու քրդերը նոր բողոքագիր պատրաստեցին և հղեցին Կ. Պոլիս: Նրանք պահանջում էին՝ պաշտպանել սահմանադրությունը, պատժել հանցագործներին, վերադարձնել իրենց հողերը և նշում, թե կհետևան այլ շրջան, եթե այդ պահանջները չբավարարվեն[25]:

Հայ և քուրդ գյուղացիները համառ պայքարի դուրս եկան նաև Շատախում, ուր խնդիր դրին՝ հետացնել Շաքիր աղային ու նրա արբանյակներին, որոնք «իբրև կոշմար ճնշում են երկրի հայ և քուրդ աղգաբնակության»[26]: Նոամյա համառ պայքարի (1909—1912) արդյունքը եղավ այն, որ թուրքական պաշտոնյաները հարկադրված ձերբակալեցին ավազակապետին:

Գավաշում հայ ու քուրդ գյուղացիները ընդվզեցին իրենց հողերը բռնագրավող աղանների դեմ: 1910—1913 թթ. նրանք լցվեցին Վան և ստիպեցին թուրքական դատարաններին որոշել՝ «պեյները իրավունք չունեն գյուղացոց հողերուն տիրապետություն ընելու և վար ու ցանքը արգելելու»[27]:

Երևնկայի գավառում հայ ու քուրդ աշխատավորները պահանջեցին մայրաքաղաքի իշխանություններից՝ վռնդել Խալիլ աղային, որը ապօրինաբար գավթել էր նրանց հողերը դեռ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին: Նրանց համառ պահանջով Խալիլը 1910 թ. կանդնեց դատարանի առաջ և փող առաջարկելով, փորձեց պահել իր բռնագրաված հողերը: Բայց գյուղացիները մերժեցին: Նրանք չբավարարվեցին միայն իրենց հողերի ետ ստացումով: 1912 թ. խնդիր դրին աղատել իրենց այդ «զուլումքյարին ճիրաններեն, որովհետև ալ դիմանալու ճար չմնաց»[28]:

Բղղիի գավառում քրդերը 1913 թ. լցվեցին կառավարչատուն և պա-

---

[25] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 249:

[26] «Մշակ», 1911, № 59, մարտի 20:

[27] «Աշխատանք», 1913, № 28—124, էջ 7:

[28] «Աղատամարտ», 1912, № 940, հուլիսի 18:

հանչեցին՝ նա վերադարձնել ավազակների կողմից տարված իրենց հարևան հայերի հոտը և արժանվույնը հատուցել նրանց[29]։

Հայ և քուրդ գյուղացիների համատեղ պայքարը դրսևորվեց նաև Ջիսուրում, Մանազկերտում, Բաբերդում (1910 թ.) և այլ վայրերում։ Մայրաքաղաք ուղարկած բողոքագրում նրանք նշում էին, որ իրար մեջ որևէ հակասություն չունեն, պայքարում են միայն իրենց հյնամիների դեմ։ Երկու հարևանները պայքարի ընթացքում արհամարհում էին կառավարության «դեղ աչքը», որը տևանելով բրդերի հոգատարությունը հայերի նկատմամբ, «սկսավ զանազան ձևերու տակ ճնշել, նույնիսկ պատուհասել բյուրներու այս հանդգնությունը»[30]։

Հայ ու քուրդ բատրակները փոխադարձ համերաշխությամբ ու պայմանավորվածությամբ կարողանում էին որոշ չափով բարձրացնել իրենց աշխատավարձը։ Ա.-դոն 1909 թ. իր շրջագայության ժամանակ ականատես է եղել, որ «վանում քուրդ հնձվոր մշակները հայ մշակների հետ կիրակի օրերը բանիող են լինում, խմբվում են Արարուց Թաղի հրապարակը և այդտեղ միասին որոշելով դալիք շաբաթվա օրավարձի չափը, երկուշաբթի միասին գնում են աշխատելու»[31]։

Փոխադարձաբար պաշտպանելով միմյանց, հայերն ու քրդերը թույլ չէին տալիս թուրք պաշտոնյաներին, քուրդ աղաներին կամ հայ ազդայնականներին պղտորելու իրենց հարաբերությունները և հաճախ ծառանում էին նրանց շովինիստական ու նացիոնալիստական քարոզների դեմ։ Այսպես, 1912 թ. իթթիհատական պաշտոնյաները երբ փորձեցին իրար դեմ դրդռել Բայազետի գավառի էրզապ գյուղի հայ ու քուրդ բնակիչներին, հանդիպեցին լուրջ հակահարվածի։ Գյուղացիները բողոք ուղարկեցին մայրաքաղաք և պահանջեցին պաշտոնազրկել ազգամիջյան կռիվներ հրահրող տեղական կառավարիչներին։ Իրենց բողոքագրում գրում էին. «Մինչև հիմա եղբայրաբար ապրող տեղվույս հայ և իսլամ բնակչությունը իրարու ձգող մեր կառավարիչը նեղ շուտով փոխվի, հավանական ծանրակշիռ դեպքերը կարգելվին»[32]։

Սղերդում հայերն ու քրդերը ըմբոստացան սեր Գևորգի դեմ, հայտարարելով, որ նա է «քյուրդերու և հայերու միջև սիրող ցրտության

---

[29] «Բյուզանդիոն», 1913, № 5046, մայիսի 30։

[30] «Բյուզանդիոն», 1911, № 4625, դեկտեմբերի 28։

[31] Ա.-Դո, նշված աշխ., էջ 346։

[32] «Բյուզանդիոն», 1913, № 5167, հոկտեմբերի 22։

պատճառը»[33]։ Ուշքիլիսեի Յոնջալու գյուղում նրանք հանդես եկան տեր Հովհաննեսի դեմ, նշելով, որ նա խանգարում է իրենց անդորրը, գրգռում է հայերին մահմեդականների դեմ, այն մարգիանց դեմ, որոնց հետ «եղբայրաբար կը վարվի հայ ժողովուրդը»[34]։

Հատկանշական է, որ հրթռիթորքերի կառավարման տարիներին որոշ դեպքերում համատեղ պայքարում էին նաև հայերն ու թուրքերը։ Նրանք դիմագրավում էին պաշտոնյաներին, աղաներին, ավազակներին և համատեղ պայքարի շնորհիվ երբեմն հասնում հաջողության։ Հայ ու թուրք գյուղացիները համերաշխ պայքար մղեցին էրզրումի սանջակի Բաբերդի կազայում։ 1910 թ. «Ազատամարտը» գրում էր, որ նրանք, իբրև տարբեր ազգությունների շինականներ, «որևէ հակասություն չունին իրարու հանդեպ և թե ի հարկին կը միանան իրարու հետ՝ բողոք բառնելու համար հասարակաց թշնամի՝ աղա-պեկերուն դեմ»[35]։ Մայրաքաղաք ուղարկած բողոքագրում գյուղացիները նշում էին, որ աղաները դեռ Համիդի տիրապետության տարիներին բռնագրավելով իրենց հողերը, այժմ ոչ միայն ետ չեն վերադարձնում, այլև փորձում են կատարել նորանոր զավթումներ։ Երբ մայրաքաղաքն անտարբերության մատնեց գյուղացիների բողոքը, 1911 թ. ամռանը նրանք ներկայացրին այն բարերդ ժամանած իթթիհատական նախարար Ճավիտ բեյին։ «Բյուզանդիոնը» այդ առթիվ գրում էր. «Գյուղացիները քանի մը աղերսագիր տվին Ճավիտ բեյին, ամենքն ալ հողային վեճերու համար, կգանգատեին հողերու գրավմանց, կեղեքմանց, անիրավությանց և կառավարության անհոգությանն մասին»[36]։

Հայ ու թուրք գյուղացիները համատեղ պայքարում էին նաև Քղիի, Դերջանի, Բասենի և այլ կազաներում։ Քղիի կազայի Մղտատու գաշտի բնակիչները տեսնելով, որ գանգատներով ու բողոքներով ոչ մի արդյունքի չեն հասնում, ծեծելով վռնդում են Իսմայիլ բեգի պահակներին և ետ խլելով իրենցից հափշտակած ոռոգող ջուրը, օգտագործում իրենց արտերի համար։ Երբ բեգը լսում է այդ մասին, «վրա կհասնի, կը պոռա, կը պոռչկտա, զանազան սպառնալիքներով», սակայն գյուղացիները արհամարհում են նրան։ Պայքարը տևական է լինում։ Վերջապես էրզրումի

---

33 «Բյուզանդիոն», 1911, № 4443, հունիսի 8։

34 «Բյուզանդիոն», 1913, № 5195, նոյեմբերի 24։

35 «Ազատամարտ», 1910, № 321, հուլիսի 13։

36 «Բյուզանդիոն», 1911, № 4537, սեպտեմբերի 29։

պատարանը որոշում է, որ Իսմայիլ բեգն ու գյուղացիները համատեղ պետք է օգտվեն ոռոգող ջրից[37]։

Երիտթուրքերի տիրապետության տարիներին իրենց հարստահարողների դեմ համատեղ պայքար էին վարում նաև թուրքերն ու քրդերը, քրդերն ու ասորիները և այլ ազգեր։ 1911 թ. վանի նահանգի Տոսկան գյուղի քուրդ ու ասորի բնակիչները պահանջեցին կուսակալից իջեցնել իրենց վրա դրված հարկերի չափերը։ Սակայն կուսակալը կարգադրեց հարկահաններին ու ոստիկաններին անհապաղ հավաքել սահմանված հարկերը։ Այդ ժամանակ գյուղացիները միասնաբար դիմադրեցին, խլեցին նրանց զենքերը և քշեցին գյուղից։ Իմանալով այդ մասին, վանի իշխանությունները 1911 թ. դեկտեմբերի 28-ին նոր ուժեր ուղարկեցին Տոսկան՝ շարժումը ճնշելու և կազմակերպիչներին պատժելու։ «Աշխատանքը» գրում էր. «Ժողովուրդը մեծ հետաքրքրությամբ կը հետևի այս խնդրի վերջավորությանը»[38]։

Ասորիներն ու քրդերը համատեղ պայքարի էլան նաև Ջուլամերիկի գավառի Արճի գյուղում և 1912 թ. սեպտեմբերի 29-ին «երկար դիմադրութենէ հետո կը կարողանան վերջապես իրենց տավարը նո բերել»[39]։

Յավոր, Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների համատեղ պայքարը սովորաբար ավարտվում էր պարտությամբ։ Պատմական կոնկրետ պայմանների հետևանքով այդ ժողովուրդներին տարանջատող ուժերը ավելի հզոր դուրս եկան, քան միավորող։ Այդ պատճառով էլ նրանք ինչպես անցյալում, այնպես էլ իթթիհատի տիրապետության տարիներին չկարողացան միասնական ճակատ ստեղծել իրենց ճնշողների ու կեղեքողների դեմ և համընդհանուր ուժերով տապալել նրանց լուծը։

* * *

Այդպիսով, դեռ 1908 թ. հեղափոխությունից առաջ երիտթուրքերը խոստանում էին Թուրքիայի տիրապետության տակ ընկած ժողովուրդներին, իշխանության ևլաճռումից հետո, համագործակցելով նրանց հետ, երկիրը վերակառուցել նոր սկզբունքներով։ Բայց անցնելով իշխանության գլուխ, նրանք դրժեցին այդ խոստումը, առաջ քաշեցին ոչ թուրք ժողովուրդների ձուլման (օսմանացման) քաղաքականությունը և ավելի սաստկացրին նրանց ազգային հալածանքներն ու ճնշումները։

---

37 Տե՛ս «Նոր Դեղի Ազգագրական Հանդես», Ա մաս, «Հին Քղի», 1962, էջ 16։

38 «Աշխատանք», 1911, № 6—53, էջ 12։

39 «Աշխատանք», 1912, № 47—94, էջ 7։

Երիտթուրքերը չլուծեցին նաև հողային հարցը: Ինչպես կայսրության այլ շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում հողերի մեծ մասը թողնցին աղաների ու դյուղական հարուստների ձեռքում, իսկ դյուղացիության ճնշող մեծամասնությունը շարունակեց տառապել հողազրկությունից ու սակավահողությունից: Այդ հիմքի վրա ոչ միայն պահպանվեցին, այլև ավելի ուժեղացան դեռ Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ գոյություն ունեցող ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները: Երիտթուրքերը չմեղմեցին նաև աշխատավոր դյուղացիության հարկային հարստահարումները, ընդհակառակը՝ զանազան ճանապարհներով ավելի խստացրին դրանք, դատապարտելով անմիջական արտադրողներին աղքատության ու ֆիզիկական բնաջնջման:

Բնական է, որ նման պայմաններում Թուրքիայում շարունակվելու էին ազգային ու սոցիալական շարժումները: Իթթիհատական բռնությունների դեմ հանդես եկան արաբները, հույները, մակեդոնացիները, բուլղարները և ուրիշներ, որոնք ազգային խնդիրների հետ միասին ձրդտում էին լուծել նաև սոցիալական հարցերը:

Երիտթուրքերի վարչակարգի դեմ ոտքի ելան նաև արևմտահայերը: Հեղաշրջումից անմիջապես հետո նրանց ազգային ու սոցիալական շարժումները զգալիորեն թուլացել էին: Արևմտահայերը սպասում էին, որ իթթիհատը կը բարելավի իրենց դրությունը: Բայց տեսնելով հակառակը, նրանք շարունակեցին ազատագրական մաքառումները, ընդ որում երիտթուրքական բռնությունների, ֆեոդալական-միջնադարյան ռեակցիոն կարգերի դեմ մղված պայքարում արևմտահայ բուրժուազիան ու դեմոկրատիան որոշ հարցերում միավորվում էին: Բայց այդուհանդերձ նրանք ունեին իրենց դասակարգային որոշակի շահերն ու խնդիրները:

Արևմտահայ բուրժուազիան, որի շահերն արտահայտում էին բուրժուական կուսակցությունները, պատրիարքարանն ու լիբերալ շրջանները, ազգային հարցի լուծումը տեսնում էր Թուրքիայի սահմաններում Արևմտյան Հայաստանի ինքնավարության ստեղծման մեջ, իսկ հողային հարցի լուծումը՝ Աբդուլ Համիդի տիրապետության տարիներին հայ դյուղացիներից բռնագրավված հողերը նոր վերադարձնելու մեջ: Այդ պահանջների կենսագործումը կարող էր նպաստել արևմտահայերի ազգային զարգացմանը և որոշ չափով բարելավել նրանց տնտեսական դրությունը: Սակայն երիտթուրքական տիրապետության և իմպերալիստական ուժերի՝ Թուրքիայում վարած գաղութային քաղաքականության պայմաններում դա անիրագործելի էր: 1914 թ. հունվարի 26-ի այս-

պես կոչված հայկական բարենորոգումները գործնականում այդ ապացուցեցին։

Արևմտահայ դեմոկրատիան, բազմահազար աշխատավոր զանգվածները ձգտում էին ազգային հարցը լուծել Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու միջոցով։ Հայկական հարցը կլանել էր ողջ հայության ուշադրությունը։ Նրա լավագույն զավակները լրջորեն մտահոգված էին այդ հարցի ճիշտ վճռումով։ Հ. Բումանյանը, Վ. Տիրյանը, Գ. Զոհրապը և ուրիշներ, արտահայտելով հայ ժողովրդի կամքը, արևմըտահայերի ճակատագիրը կապում էին ոչ թե ցարական, այլ դեմոկրատական Ռուսաստանի հետ։ Նրանք հավատում էին ռուս ժողովրդի կենսունակությանը, գտնում էին, որ նա, վերածնվելով, վերջ կդնի ցարական կարգերին և զարդացման լայն հորիզոններ կբացի Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար։ Արևմտահայ դեմոկրատիայի ռուսական կողմնորոշումն ըստ էության ճիշտ էր, քանի որ նա անկասկած ուժերով չէր կարող լուծել իր կենսական խնդիրները, Թուրքիայի ճնշված ժողովուրդները չկարողացան ստեղծել հակաիմպերիալիստական միասնական ճակատ, թուրքական պրոլետարիատը դեռ հեռու էր այն մակարդակից, որ կարողանար կազմակերպել ու գլխավորել բոլոր կեղեքվողների պայքարը և ավարտել այն հաղթանակով։ Արևմտահայ դեմոկրատիան հողային հարցի լուծումը տեսնում էր տգեղներին պատժելու (կամ ֆեոդալական հողատիրությունը արտամղելու) և գյուղացիներին միջնադարյան շահագործումից ազատագրելու մեջ։ Հարցի այդպիսի լուծումը, ինչ խոսք, մեծ գարկ կտար արտադրողական ուժերի զարգացմանը և անհամեմատ կբարձրացներ անմիջական արտադրողների կենսամակարդակը։ Այդ արմատական վերակառուցումը նույնպես կարող էր կատարվել դեմոկրատական Ռուսաստանի օգնությամբ։

Արևմտահայ դեմոկրատիայի ներկայացուցիչները, ելնելով ժողովրդի բացառիկ ծանր կացությունից, խուսափում էին զինված ապստամբության կամ հեղափոխության կոչերից։ Նրանք գտնում էին, որ քանի դեռ Արևմտյան Հայաստանը գտնվում է Թուրքիայի տիրապետության տակ, ինչպես ազգային, այնպես էլ ագրարային խնդիրները պետք է լուծել իմպերիալիստի վրա ճնշում գործադրելու ճանապարհով։ Բայց երկրի մի շարք շրջաններում ժողովրդական զանգվածները, գյուղացիությունը, չհանդուրժելով թուրքական իշխանությունների ու քուրդ աղաների բռնությունները, ակտիվ պայքարով հանդես էին գալիս նրանց դեմ և ձգտում ազատագրվել։ Այդ տարերային տեղական նշանակություն ունեցող պայքարը երբեմն պսակվում էր մասնակի հաջողությամբ։

Թուրքիայում ազգային ու ագրարային հարցերը կազմում էին ազատագրական շարժումների առանցքը։ Նրանց արմատական լուծումը հնարավորություն կտար հնշտությամբ վճռելու նաև բազմաթիվ այլ խնդիրներ։ Այդ հարցերը կայսրության տարբեր ժողովուրդների մոտ կարող էին ունենալ տարբեր նշանակություն։ Թուրքերի համար գլխավորը հողային հարցն էր։ Բայց արևմտահայության համար այդ երկու հարցերն էլ ունեին առաջնակարգ նշանակություն և պետք է լուծվեին միաժամանակ, որովհետև շահագործող ֆեոդալական դասակարգը պատկանում էր ուրիշ ազգության։ Գործնականորեն անհնարին էր հռչակել Արևմտյան Հայաստանի անկախությունը, կամ նույնիսկ ինքնավարությունը, պահպանելով թուրքական կառավարության հենակետերը հանդիսացող, հայ ազատագրական շարժումների դեմ պայքարող և այդ շարժումները ճնշող բնկերին ու աղաներին։ Ինչպես այլ երկրներում, այնպես էլ Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում ազգային ու հողային խնդիրների միակ ճիշտ լուծումը և աշխատավորության իսկական ազատագրումը կարող էր կատարվել պրոլետարական հեղափոխության հաղթանակի և աղայական աղտեղության վերացման հետևանքով։

Անձնանունների ցանկ

Աբդուլ Ազիզ 270
Աբդուլ Բաքի 46
Աբդուլ Կադեր 53, 54, 252, 260, 261, 285—287, 290
Աբդուլ Համիդ 13, 16, 22, 25, 28, 31, 42, 43, 56, 62, 65, 66, 84, 90, 92, 94, 101, 131, 173, 183, 186, 204, 207, 252, 258, 263, 264, 290, 293, 295, 297
Աբդուլ Ջևդեթ 253
Աբդուր Բևզաք բեյ 248—252, 259, 267, 288
Ադամով Ա. Ա. 40, 41, 46, 98
Ա.-Դո (Տեր-Մարտիրոսյան Հովհ.) 10, 59, 70—72, 75, 84, 87, 89—101, 294
Ադոսիդես Ա. 32
Աթարեկյան Հ. 162
Ալի ապա 269, 291
Ալիշան-վարդ 59
Ալի փաշա 28, 174, 205
Ալի Քեմալ բեյ 287
Ալիև Գ. Զ. 5, 50, 106, 108, 171
Ալ-Կահտանիա 106
Ալպոյաճյան Ա. 144, 145, 150, 156
Ակիմովիչ 23, 238, 260, 264, 291
Ակնունի (Մալումյան) 203, 204, 217
Ահմեդ ապա 270
Ահմեդ Ռիզա բեյ 14, 31
Աղա էֆ. 266
Աղայան Ծ. Պ. 6, 33, 34, 41, 162, 211, 236
Աղայան Ղ. 159
Աղբյուր Սևրոր 21
Ամիրյան Ա. 163
Անանուն Դ. 166
Անդրանիկ 203, 205
Առաքելյան Հ. 141, 142
Ավետիսյան վ. Ա. 162
Ավերյանով Պ. Ի. 14
Ավոյան Ա. 81
Արզումանյան Մ. 6, 126, 162
Արթին Յաղուբ փաշա 215
Արխիմեդ 56
Արշարունի 210, 216

Բահիր փաշա 262
Բայրուրթյան վ. Ա. 244
Բասարմաճյան Ա. 159
Բարբի Հ. 263
Բարսեղյան Խ. Հ. 162
Բարոս 86
Բդեյան Սարգիս և Միսաք 65, 74, 202
Բևկդուլյանց Ռ. 10, 84, 87
Բենան 263
Բերար վ. 235
Բշարե Ջաբռ 59, 185, 255, 256, 271
Բորյան Բ. Ա. 5
Բուտաև Ի. 5, 67

Գարիդուլին Խ. Զ. 5, 15, 50
Գալաճյան Ն. 160
Գափամաճյան Պ. 54, 175, 176
Գիրս 213, 216, 218, 225

Գլադստոն 235
Գոլոբորոդկո Ի. Ի. 95, 96
Գոմսեցի Մոսո (Մովսես) 206
Գորդլևսկի Վ. 88
Գրիգորյան Կ. 127
Գուլկևիչ 223, 227, 229
Գուրկո-Կրյաժին Վ. Ա. 5, 67, 84
Գևորգ V կաթող. 30, 210, 241

Դանիշ բեյ 181
Դանցիգ Բ. 5
Դավո 116
Դարբինյան Արտ. 21, 23, 127. 128, 245, 285
Դարվիշ աղա 59
Դիլեն է. 235
Դոդո օղլի 60
Դուրյան 151

Եղիազարյան Ա. 162
Եսայան Զ. 143
Երամյան Հ. 29
Երիցյան Ռ. 173—175

Զավարյան Ս. 32, 35, 159
Զարգարյան Ռ. 143, 203, 217
Զնյնալ 291, 292
Զնբի փաշա 258
Զիյա բեյ 14
Զոհրապ Գ. 143, 144—159, 217, 218, 242, 298

Էմին փաշա 162
Էնգելս Ֆ. 162
Էնվեր փաշա 13, 125, 203

Թալեաթ փաշա 13, 17, 38, 125, 156. 176, 203, 215, 216, 230, 286
Թահա շեյխ 250, 260, 261
Թահսիմ բեյ 176, 193, 224, 225, 260, 261
Թամրազյան Հր. 161
Թևլի 263
Թերզյան Հ. 32, 35

Իլբեյան վ. 143
Իմմուր փաշա 258
Իորոսյան Շ. Տ. 33
Իոփչյան Ե. 119
Իումանյան Հ. 235, 298
Իուրխան փաշա—226

Ժամկոչյան Ա.—204

Իբրահիմ բեյ 269, 270, 274
Իբրահիմ փաշա 245
Իզզեթ բեյ 54, 78, 174
Իզմիրլյան Մ. 130
Իզվոլսկի 215
Իհսան փաշա 268, 269
Ինճիկյան Հ. Գ. 5, 18
Իշխանյան Ռ. 166
Իսահ բեգ 59
Իսմայիլ աղա 250
Իսմայիլ Հակկը Բարան զադե 253

Լաղարև Մ. Ս. 5, 107, 249—254, 262
Լենին վ. Ի. 7, 11, 16, 142, 165
Լեարտ Մարսել 146
Լիբկնեխտ Կ. 162
Լյուբսիմբուրդ Ռ. 162
Լյուիֆի Ֆիքրի 254

Խալիլ աղա 60, 242, 293
Խաչետյաշն Մ. Ռ. 14
Խարախանյան Ն., արքեպ. 76, 184, 236, 274
Խորեն քահանա 58
Խուրշուդ բեյ 269

Ճավիտ բեյ 95, 295
Ճեմիլ աղա 81
Ճիզմեճյան Մ. 43
Ճիտաճյան Գ. 54, 160

Կասըմ (Ղասըմ) բեյ 59, 183, 185, 254, 260, 262
Կասյան Ս. 164
Կարապետյան Ն. Վ. 5, 211

Վորոնցով-Դաշկով 251

Տաղավարյան Ն. 138, 159, 213, 216, 274
Տաճատ 116
Տամատյան Մ. 127
Տերյան Վ. 235, 236, 298
Տեր-Եղիազարյան Զավ. վրդ. 160
Տեր-Կարապետյան Գ. (Գևորամ, Տատրակ) 10, 62, 68, 78, 79, 120, 131, 132, 159, 201
Տեր-Հովհաննիսյան Գ. 159
Տեր-Մինասյան Ռ. 26, 112, 121, 201
Տեր-Սարգիս 173, 185
Տեր-Սաթոյան Մելքոն 176
Տիապ աղա 59
Տվերտինովա Ա. Ս. 5, 18

Բաֆֆի 151
Բեյս-Ամմի ապտե Բեդ զադե Միր Համայիլ-բեդ 292
Բիզա բեդ 183

Ուրնեյեդ-Ուլլա 53, 252, 260, 285

Փաստարմաճյան Կ. 159

Փափազյան Ռ. 131
Փափազյան Վ. 13, 120, 203,
Փերատունյան Ե. 138, 283
Փիլիպոսի Մանուկ 205

Քարամյան Կ. Ն. 6
Քելեկյան Տ. 213, 216
Քելեշ 243
Քեմալ Մուսթաֆա 263
Քեչյան Բ. 99, 135, 138
Քյոռ Հյուսեին փաշա 35, 55, 59, 95, 148, 183, 191, 258, 260, 263, 270, 272, 284, 289

Օլփինին 46
Օլֆերև Ս. Պ. 23, 24, 29, 46, 113, 118, 121, 175, 206, 237, 238, 248, 249, 260, 273, 276, 277, 289, 291
Օսման բեգ 59
Օսման փաշա 39, 270
Օտյան Ե. 143
Օրբելի Հ. Ա. 290, 291
Օրմանյան Մ. 53, 130, 213—215

Ֆահրեդդին բեյ 226
Ֆրանգուլյան Ս. Ե. 162

Շահարեդդին շեյխ 269
Շահումյան Ս. 164—168
Շահպազ Ստ. 156
Շահպազյան Հ. 286
Շահրիկյան Ա. (Ատոմ) 65, 67, 121
Շարաֆ բեյ 255, 256, 257
Շարիր աղա 35, 59, 148, 254, 257, 289, 293
Շիրկով Վ. 20, 23, 25, 29, 53, 121, 256, 264, 265, 267, 269, 271, 289
Շյուրրի բեյ 250
Շպիլկովա Վ. Ի. 5, 14
Շտրիտտեր 209, 266
Շուրրի Հաջի օղլի 193

Ջաչանի Կ. 6, 292
Ջոպանյան Ա. 144, 146, 155, 241

Պապիկյան Հ. 37, 144
Պավլով (Բավլոֆ) 149
Պարոնյան Հ. 151
Պարսամյան Վ. Ա. 5, 32, 211
Պետրիկյան Գ. 126, 127
Պետրոսյան Յու. Ա. 5
Պլեխանով Գ. Վ. 168
Պողոսյան Հ. Մ. 6, 32
Պողոս Նուբար փաշա 215, 240
Պոյաճյան Հ. 159
Պոչկոզենյան Հ. 159
Պրահիմ 189
Պրեսանսե 235
Պուշո 149

Ջալիլե Ջալիլ 6, 252
Ջաֆար բեյ 267
Ջեմալ Նուրի բեյ 19
Ջեմալ փաշա 17, 216, 242
Ջեմիլ բեյ 255, 256
Ջիվանյան (Հորո) 139
Ջնդի աղա 270
Ջնդի մոլլա 269

Ռաշիդ շեյխ 235
Ռաֆիկ Հելմի 253
Ռեշիդ բեյ 211, 213
Ռշտունի Հ. 161
Ռուսսո Ժ. Ժ. 152

Սադրկ բեյ 267
Սազոնով 210, 218, 225, 226, 227
Սաիդ շեյխ 253
Սալե աղա 270
Սահակյան Ռ. 8
Սապահ-Գյուլյան Ս. 64, 65, 69, 95, 122, 124, 179, 278
Սասունիկ 285
Սատան աղա 272
Սատիմ բեյ 250
Սարգսյան Ե. Գ. 5, 8, 33, 35, 37, 63, 82, 83, 147, 211
Սաֆար 81
Սեիդ Ալի 35, 59, 81, 95, 148, 173—183, 186—188, 254, 255, 257, 264—267, 269, 284, 285, 289
Սեիդ բեյ 25, 55, 188, 267
Սեիդ խաիմա 60
Սելիմ մոլլա 267, 269, 270
Սերնկյուլյան Վ. 159, 242
Սիամանթո (Ատոմ Յարճանյան) 143, 161
Սիմոնյան Ա. 120
Սկրյարին Ն. 23, 31, 279
Սմիկո 194, 244, 248, 250, 267
Սպանդարյան Ս. 116, 117, 168, 169
Ստեփանյան Ստ. 5, 211
Սուլեյման աղա 269
Սուլեյման Նաֆիզ էֆ. 45
Սուրմենյան Գ. 36
Սևակ Ռ. 143

Վահանյան Հ. 159
Վահն Հայկ 75
Վարդանյան Հ. Գ. 162
Վարդես 205
Վարուժան Դ. 143, 161
Վեստենենկ 230, 242
Վիշնևսկի 80
Վլախով 67

Վորոնցով-Դաշկով 251

Տաղավարյան Ն. 138, 159, 213, 216, 274
Տաճատ 116
Տամատյան Մ. 127
Տերյան Վ. 235, 236, 298
Տեր-Եղիազարյան Ջավ. վրդ. 160
Տեր-Կարապետյան Գ. (Գեղամ, Տատրակ) 10, 62, 68, 78, 79, 120, 131, 132, 159, 201
Տեր-Հովհաննիսյան Գ. 159
Տեր-Մինասյան Ռ. 26, 112, 121, 201
Տեր-Սարգիս 173, 185
Տեր-Սարոյան Մելքոն 176
Տիապ աղա 59
Տվերսկոյ Ա. Ս. 5, 18

Բաֆֆի 151
Բեյս-Ամի ապտի Բեգ զադե Միր Խամայիլ-բեգ 292
Բիզա բեգ 183

Ուրևլիդ-Ուլլա 53, 252, 260, 285

Փաստարմաճյան Կ. 159
Փափազյան Ռ. 131
Փափազյան Վ. 13, 120, 203,
Փերտաճյան Ե. 138, 283
Փիլարցի Մանուկ 205

Քարամյան Կ. Ն. 6
Քելեկյան Տ. 213, 216
Քելեշ 243
Քեմալ Մուսթաֆա 263
Քեչյան Բ. 99, 135, 138
Քյոռ Հյուսեին փաշա 35, 55, 59, 95, 148, 183, 191, 258, 260, 263, 270, 272, 284, 289

Օլիվնին 46
Օլֆերև Ս. Պ. 23, 24, 29, 46, 113, 118, 121, 175, 206, 237, 238, 248, 249, 260, 273, 276, 277, 289, 291
Օսման բեգ 59
Օսման փաշա 39, 270
Օտյան Ե. 143
Օրբելի Հ. Ա. 290, 291
Օրմանյան Մ. 53, 130, 213—215

Ֆահրեդդին բեյ 226
Ֆրանդույան Ս. Ե. 162

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արագած 59, 270
Ադանա 32, 38, 42, 110, 126, 144, 145, 157, 204, 232, 257, 286
Աղլջնազ (Ալջավազ) 55, 59, 61, 71, 172, 191, 225, 258, 270, 272, 284
Աղրիանապոլիս 20
Ալաշկերտ 98, 199, 268
Ալբանիա 108, 150
Ալեքսանդրետի ծովածոց 34
Ալեքսանդրիա 127, 182
Ախալքի 42, 57
Ախպուար 96
Ախն 114, 180
Ակրակ 25
Աղբակ 55, 58, 193, 194, 225, 255, 256
Աղրի 186
Ամասիա 32, 181
Ամերիկա 20, 44, 47, 127, 130, 281
Այգեստան 35, 99, 176
Այնթափ 115, 120
Անատոլիա 54, 55, 95, 148, 172, 224, 241, 274
Անգլիա 12, 124, 218, 219, 224, 232, 235
Անդրկովկաս 126, 167, 210, 261, 270, 292
Աշուտա 25
Առնիստ 198
Ասիա 11, 18
Ավան 193
Ավանց 180
Ավզոտ 186
Ավով 187
Ավստրո-Հունգարիա 106, 218, 224
Ավրան 70, 186, 200
Արարկիր 39
Արդ 87
Արթիոնք 186
Արծափ 97
Արծվիկ 77
Արճակ 27, 55, 68, 115, 188, 189
Արճեշ 58, 59, 63, 180, 191, 225
Արճի 296
Արմտան 71
Արևելյան Թրակիա 20
Արևմտյան Հայաստան 6—11, 25—27, 35, 36, 39, 46, 56, 62—68, 73, 81—84, 90, 91, 94, 101, 109, 110, 114, 122, 123, 126—128, 131, 139, 142, 157, 159, 172, 181—183, 194, 207, 210—213, 219, 222, 224, 228, 238, 241—246, 250—254, 264, 269, 270, 271, 274, 277, 279, 281—283, 286, 292, 296—299

Բաբերդ 31, 42, 63, 71, 180, 294, 295
Բարշեն 28
Բալկաններ 16, 20, 48, 65
Բալու 126, 243
Բախչե 34, 70
Բաղալով 196
Բաղդադ 170, 232, 281

Բայազետ 42, 46, 96, 114, 180, 266, 268, 294
Բայկալ 19
Բաշկալե 55, 257, 275
Բասյանս 87
Բասին 278, 279, 295
Բասրա 107, 232, 281
Բարվար 186, 269, 274
Բեյթուլ-Շեբար 276
Բեյրութ 223
Բեչնր 21
Բեռլին 215, 231
Բերա 156
Բերդ 72
Բերկրի 59, 225, 274
Բիբլիա (Բաղեշ)—9, 20, 21, 23—25, 27—29, 31, 32, 53, 55, 56, 61, 68, 76, 77, 81, 82, 89, 95, 99, 103, 104, 121, 132, 159, 174, 179, 182, 185, 187, 188, 199, 211, 214, 220, 223—228, 253, 254, 256, 260—271, 289, 292
Բյուզանդական կայսրություն 83
Բյուրակն (Բինգյոլ) 292
Բշերիկ 220, 265
Բոլոմեր 60
Բողաղբյասան 200
Բոստան 195
Բոսֆոր 12
Բուլանըխ 23, 57, 65, 86, 99, 184, 262, 263, 269
Բուլղարիա 20, 65, 108, 126, 149, 203
Բուխարեստ 108

Գավաշ 69, 78, 119, 174, 188, 206, 265, 269, 275, 293
Գևաղուխ 192
Գելիեկուզան 201
Գենջ 30
Գերմանիա 19, 218, 230, 239
Գիտրիս 73
Գյապուլան 86
Գյոլբաշ 292
Գնձիկ 282
Գողան 232
Գումեր 73
Կոմս 190, 202
Գյուվենց 81

Դամասկոս 223, 243
Դանուբ 19
Դարդանել 12
Դերելիզեբ 170
Դևրենց 72
Դևրջամեբ 273, 276
Դևրջան 72, 275, 295
Դևրսիմ 59, 245, 263, 264, 266, 276
Դրվնիկ 274
Դիադին 269
Դիարբեքիր (Տիգրանակերտ)—26, 32, 36, 40, 42, 44, 53, 56, 66, 68, 76, 81, 82, 89, 120, 126, 127, 132, 176, 211, 214, 220, 223, 224, 227, 228, 244, 265, 267, 278, 281, 291
Դիլման 248

Եալադ Տերե 150
Եգիպտոս 44, 127, 130
Եղեգիս 198
Ենի-Ալիարտի 278
Եվրոպա 11, 18, 44, 47, 127, 149, 151, 153, 163, 217, 220, 225, 231, 233, 242, 288
Երզնկա 31, 36, 71, 114, 138, 179, 245, 263, 275, 280, 293
Երիզակ 186
Երուսաղեմ 223
Երևան 9, 259
Եփրատ 196

Զեկերեկ 191
Զեյնիս 61, 193
Զեյտկա 199, 200
Զենղեկ 187
Զմյուռնիա 115, 182
Զոնիկ 259
Զորի 223

Էջմիածին 160, 234, 240, 241
Էրզաղ 294
Էրզրում (Կարին) 9, 21, 22, 23, 26, 27, 31, 34, 35, 40, 42, 44, 46, 58, 64, 68, 71, 75, 89, 95—97, 132, 177, 191, 198, 209, 214, 220, 223, 224, 227, 228, 237, 243, 253, 258, 265—267, 275, 278, 279, 283, 285, 291, 295
Էրմանց 25
Էրուն 59

Թաղ 192
Թաղավանք 78, 185, 207
Թաղվու 83
Թացու 188
Թիմար 68, 225
Թիֆլիս (Թրիլիսի)—9, 46, 159, 160, 210, 230, 251, 291
Թլկատին 75
Թորթում 278
Թուիդարու 156
Թորատ 31
Թուրքիա 9, 11—14, 16, 18, 20—21, 24—25, 31, 37, 47, 52, 62, 65, 66, 76, 82, 83, 99, 105—111, 122, 127, 128—131, 134, 141—143, 151—153, 157—159, 163, 164, 166, 171, 172, 182, 202, 207, 208, 210, 211, 215, 216, 218, 219, 222—232, 235, 237, 240, 242, 243, 247—252, 259, 261, 263, 276, 292, 296—299։

Իղմիր 130, 156
Ինկիզ 272
Ինջիրլիկ 34
Իշխանձոր 201
Իտալիա 218, 224, 279
Իրան (Պարսկաստան) 11, 16, 47, 126, 163, 164, 232, 243, 244, 248—252, 259—261, 267, 270
Իրաք 106, 107

Լափաշլի 34
Լենինդրադ 9
Լերիկ 275
Լիրանան 106
Լոնդոն 20, 211
Լուսատավիզ 196

Խառնի 34
Խասդյուղ 39
Խասխեր 274
Խամիկ 266
Խարբերդ 26, 32, 36, 40, 43, 53, 56, 68, 75, 126, 127, 132, 178, 182, 194, 211, 214, 220, 224, 227, 228, 245
Խարզան 255, 256
Խարիոս 275
Խըրպախաչ 275
Խլղան 59, 78, 79, 95, 173, 174, 186—188, 190, 254, 264—269, 275, 282, 291
Խնուկ 274
Խնուս 30, 247, 269, 275, 278
Խողաթ 60, 245
Խոյ 267
Խոյիթ (Խութ) 76, 83, 185
Խոշար 193, 225, 250
Խորդում 118
Խորոս 187
Խրկանց 275

Միծանց 192, 257
Մվստան 200
Մում 72

Կաղան 19
Կահիրե 106, 139
Կանովա 257
Կաշա 25
Կարահիսար տե՛ս Շաբին Կարահիսար
Կարաբլիխան 268
Կարկառ 78, 79, 174, 187, 207
Կարկաս 198

Կարճկան 61, 78, 104, 174, 189, 190, 206, 225, 254, 255, 265, 272, 285
Կեճոն 273
Կենս 34
Կեսարիա 178, 182
Կեցան 189, 265
Կիլիկիա 32, 34, 127, 149, 222
Կինճ 21
Կողոլակ 34
Կոթուր 248
Կոճեր 192
Կոնստանցա 124, 233
Կովկաս 20, 36, 47, 48, 55, 62, 65, 160, 210, 241
Կոտաոիճ 196
Կորվու 61, 77
Կ. Պոլիս 9, 19, 20, 22, 28, 53, 54, 58, 63, 70, 76, 84, 106, 118, 121, 125—127, 130, 134, 135, 140, 142—144, 146, 151, 153, 154, 156, 160, 170, 171, 173, 174, 176, 181, 182, 183, 194, 195, 203, 205, 210, 213—219, 223—226, 230, 237, 247, 253, 254, 261, 263, 268, 270, 272, 276, 278, 291, 293
Կվերս 257
Կրիտե 107
Կումաչ 268

Հապտան 273
Հաղվան 73
Հաղող 187
Հալեպ 34, 69, 223, 243, 263
Հաճըն 34, 35
Հայասա 34
Հայաստան 9, 37, 71, 122—124, 127, 149, 214, 222, 223, 232, 233, 236, 240
Հայոց Ձոր 68, 69
Հաչի Համզա 275
Հառվանց 72
Հասան-Բեյլիկ 34, 35
Հասանովա 186
Հասպիանակ 191
Հատպատան 257
Հավաթանց 72
Հելլենք (Հնոլենք)—283
Հեր 73
Հերյարի 220, 224, 225, 282
Հըլվըլի 72
Հնդկաստան 11
Հող 187
Հունաստան 20, 108

Ձիթող 198, 199

Ղշլադում 186
Ղուպիչան 263

Ճապաղչուր 198

Մադան 77
Մալաթիա 44, 57, 220
Մակեդոնիա 13, 22, 150
Մակու 244, 259
Մաղազում 186
Մամուտանք 78, 79, 187, 188, 254, 269
Մանազկերտ 99, 102, 266
Մանդան 188
Մառնիկ 186
Մարաշ 232
Մարգվան 32, 117, 126
Մարկանց 73
Մարտին 281
Մեզիրին 58, 195, 197
Մերսին 232
Մերքա 253
Միկոկ 292
Միջագետք 51, 52, 209, 232
Միջերկրական ծով 34, 107, 232
Մոխրաբերդ 69
Մոկս 71—73, 78, 79, 186, 225, 290, 291
Մոնղոլիա 19
Մոսկվա 9
Մոսուլ 232, 281
Մուտկան 76, 81, 83, 275
Մուշ 21—23, 27, 30, 36, 39, 42, 55,

64, 71, 74, 75, 83, 96, 104, 119, 139, 140, 184—186, 197—201, 203, 206, 209, 254, 262, 265, 268, 273, 275, 292, 293
Մուշաղշեն 292
Մուսուն 96

Յունջալու 295

Նաղարի 187
Նամրվան 270, 278
Նիկոմիդիա 182
Նորդուզ 83, 87, 88, 198, 225, 255, 257, 258

Շարին կարահիսար 59, 181
Շահբաղ 192, 207
Շահդիլդի 84
Շամդինան 59, 250, 261, 285
Շատախ 27, 39, 61, 78, 83, 186, 192, 254, 257, 258
Շալդեր 34, 35
Շար-Ղշլաղ 64
Շնչխալրիմ 75
Շինձոր 187
Շիրվան 77, 251

Ողիմ 186, 187, 192, 207

Չալկարա 198
Չարսանջակ 42, 59, 61, 194—197, 207
Չելթիբլի 198
Չերնոդորիա 20
Չիլքան 98
Չինաստան 11, 19
Չխուր 25, 59, 184, 185, 263, 273, 294
Չոր-Մարսվան 34

Պաղրքան 186
Պաժառխբեթապ 275
Պախվան 275
Պաղտադի-Սքունս 87
Պալե 292
Պարսից ծոց 107
Պարտիզակ 182
Պետերբուրգ (Պետրոգրադ) 9, 12, 226
Պնչկան 274
Պոսնիք 63
Պորն 187

Ջանիկ 223
Ջերկի-Բերեքեի 34, 232
Ջերկիսան 292
Ջեղիրն 263
Ջերմուկաու 278
Ջուլամերկ 25, 296

Ռանեներուրգ (Ջապլիգին) 261
Ռևսնա 13
Ռոստոստո 182
Ռումինիա 20, 124
Ռուսաստան 9, 12, 21, 44, 47, 140, 141, 146, 147, 157, 163, 164, 166, 178, 206, 210, 211, 218, 219, 230—232, 235—238, 241, 248, 249—253, 259—262, 270, 276, 292, 298

Սալոնիկ 13, 170
Սամաթիա 156
Սամսոն 170
Սառուցյալ օվկիանոս 19
Սասուն 28, 69, 77, 78, 83, 140, 185, 201, 203, 223
Սարա 27, 55, 225, 276
Սելանիկ 38, 187
Սեմալ 201
Սեպ 73
Սերբիա 108
Սերեբեկ 282
Սըպկանց 73
Սըվաղ (Սեբաստիա) 20, 26, 32, 40, 42, 43, 56, 60, 64, 65, 68, 69, 127, 132, 138, 214, 220, 223, 224, 228, 278
Սինոպ 269
Սիս 34, 35
Սիրիա 106, 107, 260

Սիրուս 187
Սիփան 258
Սլիվան 61, 265
Սխկա 96
Սկանդինավյան լեռներ 19
Սղերդ 59, 99, 186, 187, 220, 244, 251, 256, 264, 265, 268, 271, 280, 281, 294
Սոֆիա 182
Սոուչ-Բուլաղ 248
Սպաղանք 28
Սպարկներտ 78, 79, 173, 174, 187, 200, 254
Սև ծով 12, 232

Վան 9, 21—27, 29, 35, 40, 42, 44—46, 53, 54, 56, 60, 61, 66, 68, 78, 81, 84, 95, 99, 103, 113, 120, 127, 130, 132, 139, 160, 172—175, 181, 182, 189—193, 198, 200, 207, 209, 211, 214, 220, 223, 224, 228, 237, 243, 244, 250, 255, 257—261, 265—268, 272—281, 285, 286, 291, 296
Վասպուրական 58, 72, 80, 84, 115, 127, 200, 225, 244, 245, 255, 263, 267, 272, 273, 284
Վարդո 23, 275
Վերին Շամաքաո 87
Վերին Սիփան 192
Վերս 72

Տալվորիկ 201
Տաճկաստան 121, 122, 163, 234, 236, 240
Տաշվերան 200
Տարոն 20, 28, 30, 39, 58, 64, 65, 70, 74, 76, 79, 84, 120, 184, 198, 200—202, 206, 236, 245, 255, 262, 263, 273, 274, 276, 284
Տարսոն 34, 198, 201, 206
Տափըկ 201
Տնեխ (Տինխ) 186
Տրեբիզոն 19
Տոսկան 296
Տրապիզոն 223, 224, 227, 228, 262, 269

Ուչբիլիսն 295
Ուստր 195
Ուրանց 189, 190, 207
Ուրմիա 248
Ուրֆա 120, 223, 232

Փարիզ 12, 37, 146, 211, 215
Փարխանդի 77
Փեսանդաշտ 192
Փիկանց 190
Փոքր Ասիա 211, 219 232
Փսանք 69, 83, 87

Քևմախ 25
Քեոփրի-Քեոյ 206
Քղզի 71, 72, 101, 180, 200, 273, 293, 295
Քիղի 237
Քյուլիսրդ 197
Քյուրդավան 25
Քրդստան 248, 249, 251—253, 259, 260, 264, 267, 269—271, 286, 288
Քրիստանք 186

Օղվանց 190
Օսմանիկ 34
Օսմանյան կայսրություն (Օսմանյան Թուրքիա) 13, 19, 25, 83, 106—108, 122, 128, 218
Օվա 198
Օվաջըկ 182

Ֆրանսիա 218, 224, 232, 235
Ֆնիկ 214

ՀԱՅԿ. ԱՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓԱՌՆԱՀԱՎԱՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին

Երիտթուրքերի ազգային ու հողային հաղաքականությունն Արևմտյան Հայաստանում 11

1. Երիտթուրքերի ազգային քաղաքականությունը 11

2. Երիտթուրքերի հողային քաղաքականությունը և գյուղացիության դրությունը . 48

Գլուխ երկրորդ

Արևմտահայերի ազատագրական շարժումները 106

1. Հայ քաղաքական կուսակցությունների և լիբերալ շրջանների հասարակական քաղաքական դիրքորոշումը 1908 թ. հեղափոխությունից հետո . . . 106

2. Արևմտահայ դեմոկրատական մտավորականության դիրքորոշումը . . . 142

3. Մարքս-Լենինյան տեսակետը արևմտահայերի ազգային ու սոցիալական ազատագրության մասին 162

4. Քաղաքային բնակչության ելույթները 170

5. Գյուղացիական շարժումները 182

6. Արևմտահայերի զինվորական հուզումները 208

7. Հայկական բարենորոգումների հարցը 210

Գլուխ երրորդ

Քրդերի, թուրքերի և ասորիների հասարակական–քաղաքական շարժումները Արևմտյան Հայաստանում 243

1. Երիտթուրքերի քաղաքականությունը քուրդ ազանների նկատմամբ: Ազանների դիրքորոշումը 1908 թ. հեղաշրջումից հետո՝ 1914 թ. Բիթլիսի ապստամբությունը 243

2. Քուրդ գյուղացիության շարժումները 271

3. Թուրքերի գյուղացիական և զինվորական շարժումները 277

4. Ասորիների շարժումները 281

Գլուխ չորրորդ

Արևմտյան Հայաստանի ննշված ժողովուրդների տարբեր խավերի համագործակցության փորձեր 284

Անձնանունների ցանկ 300

Տեղանունների ցանկ 305

II
A61875

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.
220061875